





A <sup>111</sup> | Unbeantwortet  
818 | Unbeantwortet  
Hauptstadt  
von West i 1824

1597



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЯЗЫКА

Г. АЧАРЯН

**ПОЛНАЯ  
ГРАММАТИКА  
АРМЯНСКОГО ЯЗЫКА**

**В СРАВНЕНИИ  
с 562  
ЯЗЫКАМИ**

**ТОМ  
I**

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН ~ 1952

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

491.99-5  
Ա-50

Հ.ԱՃԱՌՅԱՆ

ՍԵՆՏԱԿՆԵՐ Է 1981 թ.

ԼԻԱԿԱՏԱՐ  
ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՆԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ  
562  
ԼԵԶՈՒՆԵՐԻ

Հասոր  
I



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ — 1952

Handwritten vertical text on the left margin, possibly a library or collection identifier.

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի  
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Գտնատեսքը ստագրության պրոֆ. էգ. ԱՂԱՅԱՆ  
Подготовил к печати проф. Э. Б. АГАЯН

A  $\frac{\text{III}}{818}$

## Ա Ռ Ա Ջ Ա Ք Ա Ն

1950 թիվը լեզվաբանության պատմության մեջ մեծ հեղաշրջման տարի հանդիսացավ: Ընկեր Ստալինի հանճարեղ լեզվաբանական աշխատությունները հանեցին սովետական լեզվաբանությունը լնացման վիճակից, նոր հունի մեջ դրին այն, և, ինչպես ընդհանուր լեզվաբանական, այնպես էլ աշխարհի բոլոր լեզուների մարքսիստական ուսումնասիրությունների հաստատուն հիմք դարձան: Լուծելով լեզվաբանության կարևորագույն տեսական պրոբլեմները՝ ընկեր Ստալինը նշեց սովետական լեզվաբանության զարգացման ուղիները: Ի. Վ. Ստալինը միաժամանակ նշեց նաև կոնկրետ լեզուների իրական փաստերի ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Սույն գիրքը, որ կազմում է մեծավաստակ հայագետ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հրաչյա Անառյանի «Իսկապատար ֆեռականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» բազմահատոր աշխատության առաջին հատորը, մի փորձ է բազմաթիվ լեզուների փաստական նյութի ուսումնասիրության: Այս հատորն ընդգրկում է խոսքի մասերից երկուսը՝ ածականը և թվականը: Նյութի ուսումնասիրությունը հեղինակը կատարում է հետևյալ սկզբունքով. նախ ֆենության է առնում լեզվական ավյալ երևույթը համեմատվող բազմաթիվ լեզուներում և դրանով իսկ ամբողջական գաղափար տալիս այն մասին, թե ավյալ երևույթը ի՛նչ դրսևորումներ ունի աշխարհիս լեզուներում. սա աշխատության ընդհանուր լեզվաբանական մասն է, որ յուրաքանչյուր բաժնի առաջին գլուխն է կազմում: Այդ ընդհանուր լեզվաբանական մասին հաջորդում է այն գլուխը, որտեղ ֆենության է առնվում նույն երևույթը հնդեվրոպական լեզուների մեջ, որ և կազմում է համեմատական ֆեռականության բաժնի-



նր: Այնուհետև հեղինակն անցնում է հայերենին՝ բննության առնելով նույն երևույթը պատմա-համեմատական մոտեցմամբ, այսինքն՝ նախ հայերենի տվյալ երևույթը բննում է ճեղքվորպական լեզուների համեմատությամբ և ցույց տալիս այդ կետում եղած ընդհանրությունները և տարբերությունները, ապա՝ ամենայն մանրամասնությամբ բննում է տվյալ երևույթը իր բոլոր դրսևորումներով՝ գրաբարում, միջին հայերենում, հայերեն բարբառներում և ժամանակակից հայերենում: Այսպիսով, աշխատության բոլոր բաժիններն էլ բաղկացած են երեք մասից՝ ընդհանուր լեզվաբանություն, հեղքվորպական լեզուների համեմատական ֆերականություն և հայերենի պատմա-համեմատական ֆերականություն: Նույն սկզբունքով էլ կազմված է սույն հատորը: Հեղինակը բննության առնելով աշխարհիս 562 լեզուներ, համապատասխան գլուխներում ցույց է տալիս ածականի ու բվականի բազմազան դրսևորումները, օգտվելով այն ծովածավալ փաստական նյութից, որ նա կուտակել է երկար տարիների մեղվաշան գիտական աշխատանքի ընթացքում: Անդրադառնալով հայերենին, հեղինակը մեծ հմտությամբ ուսումնասիրում է ածականն ու բվականը իրենց պատմական զարգացման մեջ՝ սկսելով 5-րդ դարից և հասցնելով մինչև մեր օրերը: Այսպիսով, սույն հատորը լիակատար ուսումնասիրությունն է հանդիսանում ածականի և բվականի՝ իրենց բոլոր ձևերով ու դրսևորումներով՝ աշխարհիս 562 լեզուների մեջ, դրան ավելացրած հայերենը (գրաբար, միջին հայերեն, բարբառներ, աշխարհաբար):

Իր հանճարեղ լեզվաբանական աշխատությունների մեջ ընկեր Ստալինը բացահայտեց լեզվի ֆերականության ուսումնասիրության նշանակությունը լեզվաբանության համար: Ընկեր Ստալինը ցույց տվեց, որ ֆերականությունը «դատարկ ձևականություն» չէ, ինչպես այդ պնդում էին Մառը և նրա հետևորդները, որ ֆերականությունը և բառային հիմնական ֆոնդը լեզվի հիմքն են կազմում: Ստալինյան այս հիմնարար դրույթից էլ, անհա, անմիջականորեն բխում է լեզվի ֆերականության գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այս տեսակետից էլ պրոֆ. Ն. Անաոյանի՝ սույն

աշխատությունը մի արժեքավոր ներդրում է հանդիսանում հայերենի ֆեռականական ուսումնասիրության բնագավառում: Փաստական առատ նյութը, որ բերված է սույն հատորում և նյութի բազմակողմանի ֆենությունը իրավունք են տալիս ասելու, որ այս աշխատանքը մեծապես կօգնի ոչ միայն հայագետներին՝ հայոց լեզվապատմության ու տեսության հարցերն ավելի խոր ուսումնասիրելու համար, այլև բնդհանուր լեզվաբանության հարցերով զբաղվողներին, որոնք հարուստ նյութ կգտնեն այս հատորում՝ ածականի և բովականի մասին:

Շուրջ քառասուն տարի աշխատելով այս աշխատության վրա և ամբողջացնելով այն, հեղինակը արդեն իսկ այն պատրաստ էր համարում հրատարակության, երբ լույս տեսան բնկեր Ստալինի լեզվաբանական հանճարեղ աշխատությունները: Սովետական Միության բոլոր գիտնականների հետ սույն զբի հեղինակն էլ մեծագույն երախտագիտությամբ ու ոգևորությամբ դիմավորեց սովետական լեզվաբանության հիմքը հանդիսացող այդ աշխատությունների հրատարակությունը և խորին ծերության մեջ, բայց երիտասարդի եռանդով ձեռնամուխ եղավ այդ աշխատությունների ուսումնասիրությանը: Բնական է, որ հենց ուսումնասիրության ընթացքում հեղինակն զգաց, որ անհրաժեշտ է վերանայել ու վերամշակել սույն աշխատությունը ստալինյան լեզվաբանական ուսմունքի լույսի տակ: Սակայն հեղինակի զառամյալ հասակը, վատառողջ վիճակը և մանավանդ տեսողության ծայրանեղ տկարությունը զրկում էին նրան անձամբ այդ աշխատանքը կատարելու հնարավորությունից: Այդ պատճառով էլ հեղինակը հանճնարարեց կազմողին՝ կատարել անհրաժեշտ փոփոխություններն ու հավելումները ստալինյան լեզվաբանական ուսմունքի լույսի տակ, որ և կատարվել է հրատարակության հանճնելուց առաջ: Այդ բոլորի հետ պետք է, այնուամենայնիվ, անել որոշ վերապահություններ մի քանի կետերի մասին: Հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար պետք է հիշել, որ ֆենության առնված լեզուների մի մասին վերաբերող նյութերը հեղինակը ֆաղել է զանազան աշխա-

տություններից և ո՛չ իր սեփական ուսումնասիրությունից: Իսկ սա անխուսափելիորեն պահանջում է որոշ զգուշավորություն՝ բերված փաստերն օգտագործելու ժամանակ, հետևյալ պատճառներով.

1) Ասիական, աֆրիկյան, ամերիկյան ու օվկիանոսյան լեզուներից շատերն ուսումնասիրված են եվրոպական միսիոնարների կողմից՝ գաղութակալական նպատակներով: Հասկանալի է, որ այդ պայմաններում ու այդ նպատակներով կատարված ուսումնասիրությունների մեջ արտահայտված է ռասայական տենդենց: 2) Ուսումնասիրությունների մի զգալի մասը կատարված է անցյալ դարում, որ իր ներքին նշանակում է, թե արձանագրված փաստերն էլ վերաբերում են այդ ժամանակին: Այսպես, օրինակ, թվականի մասին խոսելիս, հիմնվելով եղած ուսումնասիրությունների վրա, հեղինակը ավստրալիական, աֆրիկյան ու ամերիկյան բազմաթիվ լեզուներից տվյալներ է բերում այն մասին, որ այդ լեզուներում կան միայն մեկից մինչև հինգ կամ մինչև չորս թվականներ: Այդ, իհարկե, հիշտ է անցյալ դարի համար, իսկ մեր դարում այդ լեզուներով խոսող ցեղերից շատերը ստեղծել են ավելի մեծ թվականներ (տասնավորներ, հարյուրավորներ և այլն): Ուստի և՛ երբ ասվում է, թե այսինչ լեզվում այս թվականները կան և ուրիշները չկան, պետք է ընդունել պայմանական կերպով և չմոռանալ, որ խոսքը վերաբերում է անցյալ դարին: 3) Ոչ բոլոր ուսումնասիրողներն են եղել մասնագետ լեզվաբաններ, որի հետևանքով էլ հիշված աշխատություններից ոչ բոլորն են լեզվաբանորեն լիակատար ու վստահելի: Ավելին. նրանցից շատերը լեզուն նոր սովորելով, ոչ միշտ են կարողացել հիշտ կերպով յուրացնել նրան հատուկ արտասանությունը և հետևաբար, ոչ միշտ են գրանցումներն ու տառագրությունները հիշտ կատարել: Այս բանը ցայտուն կերպով երևում է այն դեպքերում, երբ միեւնույն լեզուն ուսումնասիրվել է տարբեր մարդկանց կողմից, և սույն գրքի հեղինակը համեմատել է այդ ուսումնասիրությունների տվյալներն իրար հետ (տես, օրինակ, թվականների գլխում Թրիլիլիդի և Կիկերոսի տվյալները՝ Ավստրալիայի նարրիեյերի լեզվի թվերի մասին):

Ահա այս վերապահությունները պետք է անել զբոսով բերված տվյալների մասին:


Վերջապես, պետք է նշել, որ ածականի ու բովականի պատմական զարգացման մասին հեղինակի արտահայտած կարծիքների մեջ կան վիճելի կետեր, որոնք գիտական հասարակայնության բննարկման առարկա կդառնան և երջտ լուծում կստանան հենց հեղինակի կուտակած հարուստ նյութի ուսումնասիրության հիման վրա:

Այս բոլորը, սակայն, չեն նսեմացնում սույն գրքի արժեքը, գիրք, որը խոշոր ներդրում է ոչ միայն հայերենագիտության, այլև բնդհանուր լեզվաբանության ասպարեզում:

\* \* \*


Սույն գիրքը, բոս նախնական դասավորության, կազմում էր «Վիակատար ֆերականության» շորորդ հատորը: Սակայն, նախորդ հատորները հրատարակության պատրաստելու հետ կապված որոշ դժվարություններ նկատի ունենալով, ինչպես և՛ աշխատության տպագրությունն արագացնելու համար նպատակահարմար համարվեց ա՛յս գիրքը հրատարակել որպես առաջին հատոր:

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԱԾԱԿԱՆ



**ԱՄՍԿԱՆԸ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ**

Հին ժամանակներում ածականը գոյականից չէին բաժանում և երկուսը միացնում էին անուն կոչման տակ, 19-րդ դարից սկսած՝ քերականները ածականը գոյականից տարրերում են: Որոշ դեպքերում էլ, թեև գոյական և ածական անունները հավասարապես կոչվում են անուն (имя существительное, имя прилагательное), բայց քերականության մեջ, խոսքի մասերի շարքում, նրանք անջատ տեղ ունեն (В. В. Виноградов, Русский язык, 1947, էջ 48, 182):

Ածականը գոյականից անջատ ըմբռնելու գործնական նշաններից լավագույնն է գոյականի և ածականի սեռն ու վերջավորությունը: Այն լեզուների մեջ, որոնք սեռ ունեն, գոյականը միայն մի սեռ ունի և միշտ նույն սեռով է գործածվում. օրինակ՝ ռուս. стена «պատ» բառը իգական է, միայն իգական և միշտ իգական. իգական սեռը այդ բառի սեփական հատկությունն է. իսկ большой «մեծ» բառը արական է, որի իգականն է большая և չեզոքը большое. սեռը այստեղ բառին հատուկ չէ, այլ այն բառին (գոյականին), որին կցվում է: Կան լեզուներ, որոնց մեջ ածականը սեռ ցույց տվող նշան չունի, ինչպես՝ հյ. մեծ. բայց կան լեզուներ էլ, որոնց մեջ ածականը սեռ արտահայտող նշան ունի (ինչպես վերևում հիշատակված ռուս. բառերում) և սրանով էլ ցույց է տալիս, որ ածական է՝ գոյականից անջատ խոսքի մաս:

Ածականի, որպես ինքնուրույն խոսքի մասի, ինչպես և մյուս բոլոր խոսքի մասերի բնորոշման տեսական հիմունքը տվել է ընկեր Ստալինը: Խոսելով քերականության մասին, ընկեր Ստալինը ասում է. «Քերականության տարբերիչ գիծն այն է, որ նա տալիս է բառերի փոփոխություն կանոնները, նկատի ունենալով ոչ թե կոնկրետ բառերը, այլ ընդհանրապես բառերը, առանց որևէ կոնկրետություն. նա կանոններ է տալիս



նախադասություններ կազմելու համար, նկատի ունենալով ոչ թե ինչ-որ կոնկրետ նախադասություններ, ասենք, կոնկրետ ենթակա, կոնկրետ ստորոգյալ և այլն, այլ ընդհանրապես ամեն տեսակ նախադասություններ, անկախ այս կամ այն նախադասության կոնկրետ ձևից: Հետևաբար, արտարանվելով մասնավորից և կոնկրետից, ինչպես բառերի, այնպես էլ նախադասությունների մեջ, քերականությունը վերցնում է այն ընդհանուրը, որը կազմում է բառերի փոփոխությունների և նախադասությունների մեջ՝ բառերի կապակցության հիմքը և դրանից կառուցում է քերականական կանոններ, քերականական օրենքներ: Քերականությունը մարդկային մտածողության երկարատև, արտահանող աշխատանքի արդյունքն է, մտածողության վիթխարի հաջողությունների ցուցանիշը» (Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951, էջ 53—54): Կոնկրետից ու մասնավորից վերացման, մտածողության արտահանող աշխատանքի արդյունք է նաև խոսքի մասերի առաջացումը լեզվի մեջ: Վերանալով առանձին բառերի կոնկրետ իմաստներից՝ խոսքի մասերը վերցնում են այն ամենաընդհանուրը, որ կա բառերի իմաստների մեջ. այսպես՝ վերանալով սեղան, քար, փայտ, տուփ և նման բազմաթիվ բառերի կոնկրետ բառիմաստից, նկատի է առնվում այն ընդհանուրը, որ այդ բոլոր բառերն էլ արտահայտում են առարկաների հասկացություններ, այսինքն՝ բոլորն էլ գոյականներ են: Անդրադառնալով այս գլխի առարկան հանդիսացող խոսքի մասին՝ ածականին, տեսնում ենք, որ նա էլ, որպես խոսքի մաս, արտահայտում է նույնպիսի արտահանված հասկացություն: Վերանալով բառերի արտահայտած կոնկրետ հատկանիշների հասկացություններից՝ ածականը տալիս է հատկանիշի գաղափար ընդհանրապես: Այս տեսակետից ածականը միանգամայն նման է բային, որը նույնպես հատկանիշի գաղափար է արտահայտում: Սակայն, այդ ընդհանրությամբ հանդերձ, ածականը որոշակիորեն տարբերվում է բայից, իբրև առանձին, ինքնուրույն խոսքի մաս: Բայն արտահայտում է փոփոխվող հատկանիշի ընդհանուր հասկացություն (օրինակ՝ կարմրել, հոսել, կանաչել և այլն), մինչդեռ ածականը արտահայտում է կայուն հատկանիշի գաղափար, նկատի չունենալով նրա փոփոխելիությունը (օրինակ՝ կարմիր, հոսուն, կանաչ և այլն):

Հին քերականները ածականը բաժանում էին հինգ տեսակի. որակիպիսի, քվիպիսի, ցուցիպիսի, ստացիպիսի և ամորոշ:

Միջին երեքը ոմանք միացնում են մի անվան տակ և կոչում են որոշիչ (դետերմինատիվ)։ որակականը անում է առանձին, իսկ անորոշը անում է երկու լամբերի միջև։ Այս երկուսի տարբերությունը հետևյալն է. որակականը ցույց է տալիս առարկայի մի հատկությունը կամ որակը, որով այն առարկան (և իր անանները) բաժանվում են մյուսներից և մի առանձին խումբ են կազմում (մասնավորվում են)։ օրինակ՝ կարմիր գլխարկ, որ գանազանվում է սև, կապույտ և սպիտակ գլխարկներից։ Իսկ որոշիչ ածականը ավելի նա մասնավորում է առարկան և վերածում այս ինչին կամ այն ինչին։ օրինակ՝ այս գլխարկը, իմ գլխարկը, ճիճ գլխարկ։

Մենք այս գլխում խոսում ենք միայն որակական ածականի մասին։ մյուսները տես թվականի և դերանունների բաժիններում։

Ըստ կազմության ածականը հինգ տեսակ է լինում.

1. պարզ. — սև, մեծ, լայն.

2. բարդ. — մեծատուն, արծաթասեր, հորդառատ.

3. նախամասնիկով. — անմիտ, չտես, դժգույն, ընդարձակ, հզոր.

4. հետամասնիկով. — հոգևոր, կարմրավուն, զորեղ, գեղեցիկ և այլն.

5. բայից կազմված. — սիրելի, սիրեցյալ.

Լեզվի նախնական վիճակում ածականը բնականաբար այսպիսի բարդ կազմություններ չուներ. նա բոլորովին նույն էր պարզ գոյականի հետ։ Այսպես, օրինակ՝ աննամերեն՝ k'uy «ապուշ», yai «խենթ», yu «չար», non «փափուկ», yeu «հիվանդ»։ Ձավայերենի մեջ ածականը գոյականից ոչ մի տարբերություն չունի. միևնույն բառը կարող է մերթ իբր գոյական և մերթ իբր ածական գործածվել. ածականը որոշվում է դիրքով. երբ դրված է լինում գոյականից հետո, ածական է. օրինակ՝ wit hađikih «ծառփաքրիկ»։

Ամերիկյան միվով լեզվի բարբառներում գույն ցույց տվող միավանկ ածականները վերջից կրկնվում են և ստանում ի մասնիկը. օրինակ՝

yoj-oj-i	կարմիր
tuh-uh-i	սև
gul-ul-i	սև
gel-el-i	սպիտակ
wet-et-i	կարմիր և այլն։

Նույն լեզվի մի ուրիշ բարբառում կրկնութունը ամբողջական է. ինչպես՝

mul-u-mul      սև  
ava-ava        կարմիր

Ուրիշ բարբառներում ուրիշ ածականներ էլ են կրկնվում. ինչպես՝

wel-wel        լավ  
teu-teu-i      քաղցր  
ut-ut-i        մեծ  
koi-koi        դառն և այլն:

Կովկասյան ուրիշներեն լեզվի մեջ ածականը շատ անգամ զրվելով գոյականից հետո, նրա հետ մի բարդ բառ է կազմում, իր վրա է վերցնում գոյականի հոլովը, իսկ որոշիչ հոգը զրվում է գոյականի սկիզբը. ինչպես՝

a-t'it'-gizā } = այրն մեծ  
ն այր մեծ }  
za-t'it'-gizā } = այր մի մեծ  
մի այր մեծ }

հոլովված ձևերով՝

a-t'it'-gizān, a-t'it'-giz-ónə և այլն:

Եգիպտացիներենում ածականի վրա գնելով wy մասնիկը՝ արվում է նրան բացազանչական նշանակություն. օրինակ՝ nfr «գեղեցիկ», nfr wy pr pn «ի՛նչ գեղեցիկ է այս տունը»:

Ղեզուներ կան, որոնք ածական չունեն: Այսպես են աֆրիկյան բանտու լեզուներից շատերը: Այնպիսի անկախ ածականներ, որոնք արմատական ձև ունեն, ինչպես հյ. մեծ, փոքր, լայն, սև, կարմիր, հարմար, պատշաճ, դատարկ և այլն, գոյութուն չունեն այդ լեզուներում: Այսպես շոնա կամ զեզուրու լեզվի մեջ (բանտու խմբից) կա միայն 24 արմատական ածական:

Ավելի աղքատ է նույն խմբից ոռնգա լեզուն, որ ունի միայն 13 անկախ ածական: Դարձյալ բանտու խմբից սենա լեզուն ունի շուրջ 7 ածական, որոնք են մեծ, փոքր, մոր, ամբողջ, կամաչ, արու, էգ: Ուրեմն ինչպե՞ս են վարվում այդ լեզուները գոյականի հատկությունը ցույց տվող բառերը դուրս բերելու համար:

Նրանք իրենց ածականները կազմում են զանազան ածանցական կամ քերականական ձևերով:

Օրինակ՝ նույն ոտնգա լեզվի մեջ իբրև ածական են գործածվում. 1) բայի կատարյալ ժամանակի ձևը, 2) հատկություն ցույց տվող գոյականները՝ սեռական հոլովով, 3) բայի անորոշ դերբայը (աներևույթը) առնելով իբրև գոյական:

Երկրորդ ձևը նույն է նաև հին հայերենի հետ, ուր ունենք բուն ամենդուրեան բանաբանը.

Բանասու խմբից յաունդե (jaunde) լեզվում նույն իսկ գոյականը գործածվում է իբրև ածական, ինչպես՝ ayon «կրակի տաքությունը» և mwit «կեղտ» բառերից՝

mendib yon տաք ջուր.  
mongo mwit կեղտոտ մանուկ.

Սուներերենում ածականը գոյականից և բայից ձևով ոչ մի զանազանություն չունի, ինչպես՝ gig «հիվանդ», silim «առողջ», sag «ընդարձակ», sig «կանաչ» և այլն.

Ամերիկյան կատո լեզվում ածականը կարող է բայի նման խոնարհվել և ստանալ բայական ժամանակները, շատ ածականներ միանում են գոյականի հետ և կազմում են բարդ բառ:

Ամերիկյան յուկի լեզվում ածականը իրապես բայ է. բայի նման նա ստանում է անորոշի և ներկայի—ik մասնիկը. երբ զուտ ածական է, չի ստանում այս մասնիկը:

Ամերիկյան հուպա լեզվի մեջ ածականը շատ սերտ կապ ունի բայի հետ. բայի նման խոնարհվում է և իր ներքին փոփոխությամբ ցույց է տալիս ոչ միայն իրեն վերաբերող գոյականի թիվը, գեմքը, այլև այն, թե այդ գոյականը երբ է այդպես (այժմ, անցյալում, թե ապագայում).

Աֆրիկյան պապուաս լեզուներից կատե (kate) լեզվում, ուր նույնպես չկան արմատական անկախ ածականներ, ածականները ստացվում են.

1) Գոյականի վրա ավելացնելով -ne մասնիկը. օրինակ opā «ջուր», opāne «ջրոտ».

2) Կրկնելով բայի արմատը. ինչպես gāpāle «սևանալ» բայից՝ gāgāpāc «սև»:

3) Կրկնելով բայարմատը և նրա վրա ավելացնելով նույնպես -ne մասնիկը. ինչպես՝ nā «ուտել» բայից՝ nānāne «ուտելի»:

4) Կրկնելով այն գոյականները, որոնք այս ինչ կամ այն ինչ հատկությունն են ներկայացնում. ինչպես՝ qag «սպիտակ կակադու» բառից՝ qagqag «սպիտակ». bāgey «ինչ որ օր-լիդեի մի տեսակը» բառից՝ bābāgey «դեղին»:

5) Գործածելով առարկայի մի հատկությունը ցույց տվող մի բառի շարքում հոլովը. ինչպես՝ *tâpili եուծ», tâpili-hec «ուծեզ»*. *soc «արյուն»*, *soc-hec «արյունոտ»*. *mafa «իր, իրեզեն»*, *mafa-hec «հարուստ, բնչեղ»*. (Ածական կազմելու այս ձևի հետ հմմտ. հյ. շնորհքով, տեսող, խելոք, ուժով և այլն):

6) Գործածելով բայի անցյալ ժամանակի (präterit II) եզակի երբորդ դեմքը. ինչպես *tqālināpe «հում ուտելի», որ բառացի նշանակում է «հում պիտի ուտեմ»*:

Եթովպական բարեա լեզվում, ուր արմատական ձևով ածական չկա, ածականը կազմվում է գոյականից կամ բայարմատից՝ *ko, -ku, -go, gu* մասնիկներով. ինչպես՝ *sur «կեղտ» բառից՝ surko, surgo «սև», šoi «կարմրություն» կամ «կարմրել» արմատից՝ šoi-ko «կարմիր»*. Այսպես նաև *si* մասնիկով, որով կրավորական անց. դերբայ է կազմվում. ինչպես՝ *kore-si «վախեցած»* և այլն:

Աֆրիկյան ագնի (*agni*) լեզվում ածական չկա. բայի ներկա եզ. երբորդ դեմքը գործածվում է իբրև ածական: «Հիվանդ մարդ» տեսլու փոխարեն ասում են «մարդ նա հիվանդ է»:

Եթովպական սահո լեզվում, ուր նույնպես ածական չկա, բայերը իբրև ածական են գործածվում. բնդհանրապես բայի եզ. երբորդ դեմքը նաև ածական է համարվում. ինչպես՝

*nab-a*            մեծ է, և  
*nab-āferā*      մեծ մատ (բույծ):

Աֆրիկյան սարա լեզվում, ուր ածականների թիվը շատ քիչ է, բայի ներկա ժամանակի եզ. երբորդ դեմքը, նույնիսկ աներևույթը, ածական է համարվում. ինչպես՝

*bise bo*            շուն անոթենալ } հավասարապես նշանակում  
*bise ne bo*        շուն անոթի է } }

են «քաղցած շուն»:

Աֆրիկյան բանդա լեզվում, ուր անկախ և իրական ածական քիչ կա, ածականը բնդհանրապես կազմվում է որակ կամ հատկություն ցույց տվող բայերից: Ածականը կազմվում է նաև վերացական գոյականներից. ինչպես՝

*ogbolo odo «մանուկ ծուլության» (այն է՝ «ծուլ տղա»)*;  
*yeburu se de maran «այժ ամուլթյամբ» (այն է՝ «ամուլ ալծ»)*:

Հաճախ մակբայն է, որ իրրև ածական է գործածվում. ինչպես՝ *awan se nji* «ճանապարհը ուղղակի է» (այսինքն՝ ուղիղ է): «Մարմինը սպիտակաբար է» (մակբայ. այսինքն՝ սպիտակ է): կամ նաև բայի միջոցով. ինչպես՝ «գեղեցկացած է, չորանում է» (այն է՝ «գեղեցիկ, չոր»):

Երբեմն էլ՝ բայը և նրա վերացական գոյականը իրար հետ միացած. ինչպես՝

«Այս տղան բարկացած է բարկութուն» (այն է՝ «այս տղան բարկացելու է»): *le pagne* «որ գեղեցիկ է գեղեցկութուն», այն է՝ «գեղեցիկ»:

Սուղանի մուբի լեզվում շատ ածականներ կազմվում են ՚ վերջավորութամբ. ինչպես՝

<i>namat</i>	շատ	<i>bogot</i>	սև
<i>rawat</i>	ցուրտ	<i>dilit</i>	քաղցր
<i>renet</i>	կարմիր	<i>feret</i>	սպիտակ
<i>aiwat</i>	գեղեցիկ		և այլն:

Աֆրիկյան բանտու ընտանիքից լուենյորու լեզվում իսկական ածական հազվադեպ է. եղած ածականները բայի այս կամ այն ձևն են և կամ գոյականից են կազմված զանազան մասնիկներով:

Աֆրիկյան գանգ լեզվում իսկական ածական չկա. բոլորն էլ բայի հարաբերականով կազմված ձևն են ներկայացնում. օրինակ՝ փոխանակ ասելու «բարի», ասում են «որ բարի է»:

Աֆրիկյան յաո լեզվում (բանտու) իսկական ածական շատ քիչ կա. եղածները հետևյալներն են. գեղեցիկ, դժվար, չոր, սուտ, բարձ, մեծ, փոքր, ծանր, կենդանի, արու, էգ, շատ, ծեր, սև, կարմիր, սպիտակ, կարճ, երկար: Բոլոր մնացյալները կազմվում են բայի դերբայական ձևից և գոյականից:

Բանտու լեզուներում առհասարակ անկախ ածական քիչ կա. ընդհանրապես նրանք ածականը կազմում են բայից և կամ սեռական հոլովից: Այսպես, օրինակ, ջազգա լեզվով *mwakafu mbofa* «առատության տարի» = առատ տարի, ուժի մարդ = ուժեղ մարդ, 2. բայից՝ ածական. *vifa* հասունանալ > *vifi* հասուն, *nana* մեծ լինել > *nene* մեծ, *titya* փոքր լինել > *tutu* փոքր:

Աֆրիկյան բարի լեզվում արմատական ձևով անկախ ածականներ թիվը երկու տասնյակ է. մնացյալները կազմվում են հետևյալ ձևով.

ա) Բազմաթիվ ածականներ կազմվում են ար. 10-կամ իգ. na-նախամասնիկով՝ զանազան այնպիսի ածականներից, որոնք սակայն չեն գործածվում առանց այդ մասնիկների. ինչպես՝

lódit ար. nădit իգ. փոքր  
lóron » náron » չար:

բ) Ավելի շատ են այն ածականները, որոնք կազմված են բայից և այն էլ կրավորական բայից. ինչպես՝ «կոտրված, սրված (սուր), հագեցված (կուշտ)» և այլն:

գ) Մի խումբ ածականներ էլ կազմված են գոյականների վրա ավելացնելով ko «հետ» բառը. ինչպես՝ ko-kore «ծարավ» (ծարավով), ko-magor «քաղցած» (քաղցով) և այլն: Կազմության տեսակետից սրանք կարելի է համեմատել հյ. շնորհքով, խելք, տեսոք ածականների հետ:

Բերրերական կարիլ լեզվում էլ ածական չկա. եթե կան մի խումբ բառեր, որոնք այժմ իբր որակական ածական են գործածվում, դրանք էլ այժմ կորած հին բայերի մնացորդներն են. Այժմ ածականների փոխարեն գործածում են բայական մի ձև. այսպես՝ չեն ասում «Ես ունեմ մի սև ձի», այլ ասում են՝ «Ես ունեմ մի ձի, սև է կամ նա մի սև է». չեն ասում «Ես գնեցի մի մեծ տուն», այլ ասում են՝ «Ես գնեցի մի տուն, նա մեծ է».

«Նա ունի մի մեծ սպիտակ տուն» դառնում է՝ «Նա ունի մի տուն. նա մեծ է, նա սպիտակ է»:

Կարելի է նաև դնել ուր հարաբերականը. ինչպես՝

«Ծախեց իր սև ձին» դառնում է՝ «Ծախեց իր ձին որ սև է»:

Ճիշտ այսպես է կարիլ լեզվին ցեղակից բերրերական տամաղեկ լեզվում էլ, որ չունի անկախ ածական, այլ ածականի տեղ գործածում է դերբայը, որ ածականի պես համաձայնեցվում է գոյականի հետ, օրինակ՝

«Ունեմ մի գեղեցիկ զամբիկ» դառնում է՝ «Բնձ կա մի զամբիկ լինելով գեղեցիկուհի».

«Գնեցի սև ձին» դառնում է՝ «գնեցի ձին այն որ սև եղած».

Նուրբերենում ածականներ քիչ կան. նրանց փոխարեն գործածվում են զանազան դարձվածքներ. ինչպես՝

Ես իմաստություն ունեմ = իմաստուն (եմ).

մարմինս ջերմում է = հիվանդ (եմ).

քաղցը ուտում է ինձ=քաղցած (եմ)։

իրեն աճապարանքի մեջ է դցում=շտապ (է)։

Աֆրիկյան վոլոֆ լեզվում պարզ որակական ածական չկա կամ քիչ կա. սրանց փոխարեն դնում են բայ. օրինակ՝ բարի մարդ— մի մարդ, որ բարի է. բազմաթիվ ձկներ=ձկներ, որ բազմաթիվ են։

Աֆրիկյան վաի լեզվում ածականները կազմվում են գոյականից կամ բայից ma կամ re մասնիկով. ինչպես՝

musu	կին	musuma	էգ
do	քիչ լինել	doma	քիչ
gbē	սպիտակել	gbēma	սպիտակ
doya	քչու թյուն	doyare	քիչ
te	ջարդել	tere	ջարդված (կրավորական ձևի ածական)։

Աֆրիկյան յորուբա լեզվում ածականը բայի հենց անորոշ դերբայն է. ինչպես՝ tobi մեծ լինել, kere փոքր լինել, gun երկար լինել, kuru կարճ լինել, նաև ածական են. կարելի է ածական կազմել նաև անորոշ դերբայի առաջին վանկի կրկնությամբ. ինչպես՝

kere	փոքր լինել	kekere	փոքր
gun	երկար »	gugun	երկար, բարձրահասակ
kuru	կարճ »	kukuru	կարճ
ommo	kekere	փոքր տղա	
okonri	gugun	բարձրահասակ մարդ	
obiri	kukuru	կարճ կնիկ։	

Մոնղոլերենը ունի շատ մեծ քանակություններ ածականների, որովհետև այս լեզվում ածականները միայն որակ չեն ցույց տալիս, այլև սեփականություն, պարունակություն և այլն. օրինակ՝ ոսկի ունեցող, ջրաշատ, ատամնավոր, մազավոր, միջուկավոր, ձի ունեցող և այլն։

Աֆրիկյան մինիական լեզվում անկախ արմատական ածական չկա. որովհետև այս լեզվի բոլոր արմատները բայական են, ուստի ածականներն էլ կազմվում են բայերից՝ որևէ բառով կամ մասնիկով։ Ամենաշատ գործածվածն է folo «կրող» բառը. օրինակ՝ fya «վախենալ» բայից > fyarafolo «վախկոտ», sã «ծուլանալ» բայից > sãfolo «ծուլ» և այլն։



Այսպես է նաև Աֆրիկյան աֆար լեզվի մեջ, ուր անկախ ածական չկա և բոլոր ածականները դերբայ են:

Բերբերական գհատ բարբառը, ուրիշ բերբերական լեզուների նման, չունի անկախ ածական և բայական զանազան ձևերով նկարագրում է առարկայի հատկությունը կամ որակը:

Աֆրիկյան դահոմե կամ ֆոնգհե լեզուն չունի կամ շատ քիչ ունի անկախ ածական. նրանց փոխաբեն դիում է բայաձև ածականը. ինչպես՝ ֆե դեդեցիկ լինել. կամ կազմում է կրկնականներ. ինչպես՝ gaga մեծ, vivi համեղ, wewe ճերմակ:

Բոլոր բանտու լեզուների նման սուկումա լեզվում (բանտու) էլ անկախ ածական քիչ կա. եղած ածականները մեծ մասամբ բայերից են ածանցվում. շատ անգամ էլ կազմվում են սեռականով. ինչպես՝ ṅwanik'i wa widza աղջիկ գեղեցկություն = գեղեցիկ աղջիկ. munhu wa bubu մարդ չարություն = չար մարդ:

Բանտու լեզվախմբի թոնգա-շոնգա լեզուն էլ շատ քիչ քանակությամբ անկախ ածական ունի. մի բարբառում կա 16, մյուսում՝ 18 անկախ ածական: Մյուս ածականները կազմվում են հետևյալ ձևերով.

ա) գոյականի սեռական հոլովը կցելով իրեն. օրինակ՝ munhu wa matimba մարդ ուժեղություն (= ուժեղ մարդ):

բ) գոյականին միացնելով բայի անորոշը, օրինակ՝ vanhu va ku tala մարդիկ առատանալ (= շատ՝ առատ մարդիկ):

գ) դնելով անանցողական բայի անցյալ ժամանակը, որ վերջավորվում է ile (= յալ) մասնիկով. օրինակ՝ wanuna loyi u lehile այս մարդը բարձրահասակ է (ku leha բարձրահասակ լինել) բայից):

դ) ni «միասին, հետ» նախադրությամբ. օրինակ՝ ho is ya tiko leri yi ni mana «այս երկրի իշխանը բարկությամբ է» (= բարկացկոտ է):

Վերջինիս նման է նաև Աֆրիկյան օնո լեզուն, ուր ածականները կազմվում են «ընկերական» հոլովով. ինչպես՝ րեթե սրություն — րեթե սրությամբ = սուր, kibine «զարդարանք» — kibine-rop «զարդարուն»:

Աֆրիկայից բացի Ասիայում նույնպես կգտնենք նման երևույթներ: Դրավիդյան բրահուի լեզվում թեև կան ածականներ, բայց իսկական ածականի դեր չեն կատարում, այն է՝ գո-

յականի հետ չեն գործածուում, այլ միայն բայի հետ՝ իբրև ստորագելի: Նույնիսկ այսպիսի մի խոսք՝

«Մի աղքատ մարդ ասաց իր ծերունի մորը՝ պետք է ասել՝

asi	bandayas	nēstgār	assaka
մի	մարդ	աղքատ	էր
lumma-ta	pīr	assaka	pārēta
մայրը	ծեր	էր	նա ասաց նրան.

Դրավիդյան տուլու (tulu) լեզվումն էլ իսկական ածական շատ քիչ կա. ածականները կազմում են ընդհանրապես դերբայից և կամ գոյականից՝ որևէ մասնիկով. ինչպես՝ տանջալից, մթությունավոր (=մութ) և այլն:

Մոն-քմեր ընտանիքի լասոի լեզվում ածականը կազմվում է միշտ ba մասնիկով. ինչպես՝ bhā բարություն, ba-bhā բարի, snīw վաաություն, ba-snīw վատ, eh կարծրություն, ba-eh կարծր.

Բիրմանական լեպխա կամ ոտնգ լեզվում ածականը կազմվում է բայադատից՝ սկզբից ավելացնելով ā, և եթե բայը վերջանում է ձայնավորով, վերջն էլ դնելով m. օրինակ՝ dū սպիտակել, ā-dū-m սպիտակ: Ուրիշ ածականներ էլ կազմվում են bo մասնիկով. ինչպես՝ ryām-bo գեղեցիկ:

Հիմալայան լիմբու լեզվում ածականը կազմվում է վերջում ավելացնելով ար. pā, (bā) իգ. mā մասնիկը. ինչպես՝ nō-bā բարի ար. = իգ. nō mā:

Որոշ լեզուների մեջ ածականը այնպիսի սերտ կապ ունի գոյականի հետ, որ դրվելով գոյականից հետո, իր վրա է վերցնում այն նախադրությունը կամ նաև հոլովական վերջավորությունը, որ պիտի ստանար գոյականը. օրինակ՝

պրս. <sup>۱</sup>خانۀ بزرگ. xanéi buzurg-ra գտուն մեծ:

Հնդկական նագա լեզվով՝

ōntang	sāpo-lo
ծառ	բարձր վրա =
բարձր ծառի վրա:	

Նույն նագա լեզվով՝ հոգնակիի մասնիկն է-ko. ինչպես՝ mithu-ko կովեր, te-fuh-ko շներ. բայց ածականով՝

vākrū	kačā	harfū-ko
հավ	սպիտակ	այս-ք
այս սպիտակ հավերը:		

Հիմալայան յաքա լեզվում ածականները կազմվում են hā կամ nā մասնիկով:

Մելանեզյան ուտուպուա լեզվով որակական ածականները սկսվում են միշտ a ձայնավորով. ինչպես՝

au լավ. ate վառ  
amunu մեծ, լայն  
abugo փոքր,  
abauo անվերջ, հավիտենական:

Մելանեզյան ոովիանա լեզվով ածականը երրեմն կազմվում է դոյականի կրկնությամբ. ինչպես՝

binu մարջան, binubinu մարջանե  
patu քար, patupatu ապառաժուտ, քարքարոտ:

Աֆրիկյան ակասելե (akasele) լեզվում ածականները կազմվում են բայերից՝ կրկնությամբ. օրինակ՝

bo սևանալ bombo սև  
ya գեղեցիկ լինել yaya գեղեցիկ  
dyo բարի լինել dyo dyo բարի:

Աֆրիկյան գանգ լեզվում էլ հաճախ ածականը կազմվում է կրկնությամբ. ինչպես՝ popo նոր, pipi կարմիր, bibi սև և այլն:

Աֆրիկյան էվե լեզվում էլ ածականները հաճախ կրկնավոր են. ինչպես՝

koko բարձր fafa զով  
lolo մեծ keke լայն:

Հնդկական մունդարի լեզվի մեջ Կժվար է ասել, թե գոյություն ունի ածականը, ինչպես ասում է մունդարի քերականության հեղինակ Հոֆֆմանը: Այն բառերը, որ ածական են, նաև գոյական և բայ են: Արմատը թե բայ է, թե գոյական, և թե ածական. Օրինակ՝ hende ասություն, սև, սևացնել: Բայց, ասում է հեղինակը, լեզվի մեջ սկսել է արդեն տարբերացումը: Գոյականը և ածականը տարբերելու համար կան հետևյալ ձևերը.

1) Որակ ցույց տվող գոյականի առաջին ձայնավորից հետո մուծում են n «այս» ցուցականը և ապա ձայնավորը կրկնում. ինչպես marang «մեծ» ma-n-arang «մեծություն»:

ձեք դեռ ընդհանուր տարածում չի ստացել, բայց, ըստ հեղինակի, սկսում է ձևանալ և հետզհետե տարածվում է:

2) Կա երկու սովորական բայ՝

bugi «առողջ լինել, լավ լինել, խնամել, լավ անել» և etka «վատ լինել, վատ վարվել, հափշտակել», որոնցից այժմ սկսել են կազմել ածական՝ Ուայս սուցականով: Այսպես՝ bugi-n sadom լավ ձի (բուն նշ. «լավ այս ձի»), etka-n hoթo «վատ մարդ» (բուն նշ. «վատ այս մարդ»):

Այսպիսով՝ տարբերացմամբ ունենում ենք՝

bugi	բայ	«լավ լինել»
bugi-n	ած.	«լավ»
bun-ugi	գյ.	«լավություն»
etka	բայ	«վատ լինել»
etka-n	ած.	«վատ»
enetka	գյ.	«վատություն»

3) Ավելի սովորական ձև է դնել ստացականի ան մասնիկը որակ ցույց տվող գոյականի և կամ ամեն տեսակ կենդանի և անկենդան բաներ նշանակող բառերի վրա. ինչպես՝

seppan	իմաստություն	seppan-ān	իմաստուն
taka	դրամ	taka-ān	փողավոր, հարուստ.
merom	այծ	merom-ān	շատ այծ ունեցող»:

4) Ածական կազմում են նաև mená «ունենալ» և banó «չունենալ, զուրկ լինել» բայերով:

5) Ածական կազմում են նաև դերբայական ձևով. այն է՝ բայարմատի վրա դնելով -akan մասնիկը. սրանով ստացվում են անդլ. pointed, wounded բառերի ձևով ածականներ:

6) Սովորական է նաև վերոհիշյալ mená և banó բայերի վրա ավելացնել գործիական հոլովի te վերջավորությունը և ուցականը. ինչպես՝

menáten և banóten  
taka menáten hoթo փող ունեցող մարդ  
poé banóten sadom թերություն չունեցող ձի:

Բայց ավելի սովորական է ասել՝

taka mená hoթo  
poé banó sadom.

Առաջին ձևի օգտագործումը ցույց է տալիս լեզվի՝ առան-  
ձին ածականներ ունենալու ձգտումը:

Կորեական լեզվում ածականները անփոփոխ են և ընդհան-  
րապես վերջանում են *ի-ով*. Ինչպես՝

nukur	ծեր	ōrir	երիտասարդ
nurur	դեղին	kamur	կապույտ:
aramtaor	գեղեցիկ		

Սուգանական շիլլուկ լեզվի մեջ ածականները ընդհանրա-  
պես ունեն երկու ձև. ա) այն, որ ցույց է տալիս աստիճանա-  
կան մուտք մի վիճակի մեջ կամ՝ զարգացում մի վիճակի մեջ.  
բ) այն, որ արդեն եղած վերջացած է. ինչպես՝

dono	մեծացող	duon	մեծ
reno	վատացող	rač	վատ
leno	տաքացող	let	տաք:

Ֆիննական լապպերեն լեզվի մեջ էլ ածականը ունի երկու  
ձև. պրեդիկատիվ և ատրիբուտիվ. երկուսն էլ կազմվում են  
բնից՝ զանազան մասնիկներով.

Օվկիանիայի լեզուների մեջ էլ ածականի կազմության  
դրությունը գրեթե նույնն է:

Խաղաղ օվկիանոսի հարավում տոնգա կղզիների լեզվով՝  
1) գոյականը անփոփոխ գործածվում է նաև իբրև ածական.  
օրինակ՝ lille բարի» և բարություն»: 2) Գոյականը կրկնվե-  
լով դառնում է ածական. ինչպես՝ lolo «յուղ», lolo-lolo «յուղոտ»:  
3) Գոյականի վրա դնելով ia կամ ea մասնիկը ստացվում է  
ածական. ինչպես՝ mafanna «տաքություն», mafannaia «տաք»:

Օվկիանիայի սամոա լեզվում ածականը կազմվում է հե-  
տևյալ ձևերով. 1) գոյականի ծայրին ավելացնելով a ձայնա-  
վորը. 2) գոյականը կրկնելով և միաժամանակ ծայրին ավե-  
լացնելով կամ չավելացնելով նույն ձայնավորը. 3) բայը ան-  
փոփոխ գործածվում է նաև իբրև ածական. ինչպես՝ tafe հոսել,  
o le vai tafe հոսուն ջուր. 4) որևէ նյութ ցույց տվող գոյա-  
կանները կրկնությամբ կամ առանց կրկնության դառնում են  
ածական. ինչպես՝

o le eleele	կեղտ	eleelea	կեղտոտ
o le fatu	քար	fatufatua	քարոտ
vanu	ճեղք	vanuvanu	ճեղքված
o le uamea	երկաթ	o le pusa uamea	երկաթյա արկղ:

Գույն ցույց տվող ածականները ընդհանրապես կրկնությամբ են կազմվում. օրինակ՝

samasama	դեղին
ulfuli	սև
enaena	թուխ
sinasina	սպիտակ.
paepae	

Սրանք, երբ գոյականի հետ դործածվեն, միայն մի անգամ են դրվում. ինչպես՝

o le puao uli սև խոզ:

Ավստրալիայի նարինյերի լեզվում անկախ կամ արմատական ածական քիչ կա. ընդհանրապես ածականները կազմվում են բայից:

Օվկիանյան տահիտի լեզվով անկախ ածականներ կան, ինչպես՝ maitai «լավ», ino «վատ», rahi «մեծ» և այլն. բայց բայը ածական դարձնելու ձևերից մեկն է՝ բայից առաջ դնել taata բառը, ինչպես՝ taero «հարբել», taata taero «գլխով, հարբած», իսկ բայից հետո դնելով raa, կատացվի գոյական, ինչպես՝ amu raa «ուտել», amu raa «ճաշ»:

Նոր-Գվինեայի յարեմ լեզվում թեև կան շատ ածականներ, որոնք անկախ և արմատական բառեր են, ինչպես հ.յ. «մեծ», «փոքր», «կարճ», «երկար» և այլն, բայց կան նաև շատ ածականներ, որոնք ներկայացնում են նախորդ էջերում հիշված ածականների դրությունը: Այսպես՝ 1) Կան բառեր, որոնք թե գոյական են, և թե ածական. ինչպես malu «բուլբուլ», բուրմուռնք, անուշահոտություն» և «հոտավետ, անուշահոտ»: 2) Կան բառեր, որոնք թե բայ են, և թե ածական. ինչպես mogin «գալարել», «գալարուն»: 3) Կազմվում են գոյականից կրկնությամբ. ինչպես so «ասեղ», soso «սրածայր». այսպես նաև՝ kwalam-kwalam «սպիտակ», yuyu «կապտագույն կանաչ», kokoc «կարմիր» (այս բառերը կազմված են այնպիսի մի առարկայի անունից, որ ունի համապատասխան հատկությունը): 4) Կազմվում են գոյականի վրա ավելացնելով ղա նախամասնիկը. օրինակ՝

dani	թավուտք	ɟadani	թանձր
lemoɟ	տիղմ	ɟalemaɟ	ցեխոտ, փափուկ, կակուղ
mata	աչք	ɟamata	սուր, սրածայր
têkwa	ոսկոր	ɟatêkwa	փշփշոտ.

818  
A  
C. 1. 1. 2.



5) Նույնը՝ նաև to նախամասնիկով. ինչպես՝

dek	արյուն	todec	արյունալի
bu	ջուր	tobu	ջրոտ
wae	հոչակ	towae	անվանի:

Ամերիկյան մայա լեզվում ածական չկա. իբրև ածական գործածված ձևերը իրապես անանցողական բայեր են. ինչպես՝

keel	ցուրտ է կամ սառն մի բան
keel winik	ոսոն է մարդը կամ սառն մարդը
kehan winik tun tal	մարդը հիվանդ է, նա գալիս է = հիվանդ մարդը դալիս է
le na boš	այս տունը սև է կամ սև տունը
uq na	մի լավ տուն կամ տունը լավ է:

Աֆրիկյան փոյլն կամ ֆուլլան լեզվում ածականը այն հատկութունը ունի, որ դրվելով գոյականից հետո, ոչ միայն վերցնում է իր վրա գոյականի վերջավորութունը, այլև փոխում է իր նախածայնը, գոյականի վերջածայնի համեմատ. օրինակ՝ go տեկ՝ բառը, որ ածական է համարվում, հետևյալ գոյականների հետ այսպիսի ձևեր է ստանում:

bingel gotel	տղա մի
hore wore	գլուխ մի
mbala ngola	ոչխար մի
famuru woru	կատու մի
čeigal gotal	բադ մի
wileo woto	(թռչունի) թև մի
mbagu ngotu	թմբուկ մի:

Ամերիկյան արավակ լեզվում անկախ ածական չկա. ընդհանրապես ածականը կազմվում է բայից և ձևով դերբայ է: Մինչև սոնգամ ածականի բաղադրական աստիճանը կազմվում է այս ձևով. օրինակ՝

ipirruben	մի քիչ մեծ լինել
ipirrubessabən	մի քիչ ավելի մեծ լինել և սրանից էլ՝
ipirrubettu	մի քիչ մեծ
ipirrubessabutu	մի քիչ ավելի մեծ:

Ամերիկյան բակաիբի լեզվում ածականները մեծ մասամբ կազմվում են բայերից, որոնց սկիզբը դրված է չցուցականը.

բառ այսմ այս լեզվի մեջ ածականներէ մեծ մասը սկսվում է  
 (-ով. օրինակ՝

éparayu	կանգ առնել	taparaye	ուզիղ
ewani	ցավել	tawani	ցավագին.

Այսպես է նաև ամերիկյան տենսայ լեզվով, ուր իսկական  
 ածական չկա, և ածականները կազմվում են բայից՝ դերբայի  
 ձևով. օրինակ՝ kewa «բարի լինել, լավ լինել» բայից՝ դերբայի  
 kewar լավ գեղած = լավ», kinyo «հոգնել» բայից դերբայի՝ kinyori  
 «հոգնած». որ է նաև ածական (Ֆրանս. ասվում է las, որ ածա-  
 կան է. իսկ հյ. հոգնած նույնպես դերբայ է):

Ամերիկյան խիկիտա լեզվում էլ սովորական ածականների  
 թիվը շատ քիչ է. ամենամեծ մասամբ բայերն են, որ նաև  
 իբրև ածական են գործածվում. սրանք ունեն նաև նախամաս-  
 նիկով կազմված հոգնակի, ինչ որ չունեն գոյականները:

Ամերիկյան կրի լեզվում բոլոր ածականները բայ են և  
 ներկայացնում են բայի եզ. երրորդ դեմքը. դերանունները  
 փոխելով կարելի է և խոնարհել. ինչպես՝ miyosin «գեղեցիկ»,  
 որից ni miosin «ես գեղեցիկ եմ», ki miosin «դու գեղեցիկ ես»,  
 miyosiw «նա գեղեցիկ է» և այլն: Ածականները ունեն 31 տեսակ  
 վերջավորութուն, որոնք ցույց են տալիս ածականների զանա-  
 զան տեսակները. ինչպես օրինակ՝

— asiw	քամու ազդեցության ենթարկված	
— asuw	արևի	»
— ačiw	ցրտի	»

և այլն:

Ամերիկյան լեզուների մեջ այնպես է տարածված ածականի  
 այսպիսի ձևը, որ Մ. էդելը, որ ուսումնասիրել է ամերիկյան տիլ-  
 լամոկ լեզուն, համարձակվում է ասել ոչ միայն այս լեզվի  
 համար, այլ ընդհանրապես Ամերիկյան շատ լեզուների համար,  
 թե ածականը նրանց մեջ առանձին մասունք բանի չէ, այլ «բա-  
 յական մի ձև»: Այսպես նաև Կրոյբերը, խոսելով յոկոնց լեզվի  
 մասին, հայտարարում է, թե բոլոր ամերիկյան լեզուների  
 մեջ ածականը անսովոր և անգործածելի մի բան է. իսկական  
 ածական շատ քիչ կա: Թվում է, թե երևույթը չափազանցված է:

Շատ լեզուներ ածական արտահայտելու մի ուրիշ եղանակ  
 էլ ունեն. փոխանակ հատկութունը առանձին արտահայտելու,  
 միացնում են առարկայի անվան և մի բառ են կազմում: Այս  
 երևույթը մոտավորապես նույն է մեր լեզվի այն հատկության



հետ, որով կենդանիները սեռը արտահայտելու ժամանակ, փոխանակ ռարու» և «էգ» ածականները դործածելու, դնում ենք մի ամբողջական բառ. օրինակ՝

ձի — զամբիկ — հովատակ  
ոչխար — մաքի — խոյ:

Այսպես Պոլինեզյան հավաքի լեզվում կան երկու տեսակ բառեր. 1) վերացակամ (արստրակտ), որ ցույց է տալիս մի հատկութուն, առանց մի մասնավոր առարկայի անուն տալու. 2) քանձրացյալ (կոնկրետ), որ հատկության հետ նաև այդ հատկությունը ներկայացնող առարկան է միացնում. օրինակ՝

elemakule մի ձեր մարդ  
luwahine մի ձեր կին  
halau մի երկար տուն  
oopa մի կաղ մարդ:

Նման օրինակներ աֆրիկյան քաֆիր կամ հաուսա լեզվից.

imfama կույր մարդ  
ihlwempu աղքատ մարդ  
isidengo խենթ մարդ և այլն:

Աֆրիկյան կինյամուեսի լեզուն էլ, որ բանտու խմբին է պատկանում, ածականների թերին լրացնում է նման դոյականներով. ինչպես՝

muhöfu կույր մարդ  
muimi ժլատ մարդ  
kimūhu լուրիկ մարդ  
mōwa վախկոտ մարդ  
mtuwo որկրամուլ մարդ  
mnyamihēhe դատարկ մարդ  
mlenzi քաջ մարդ  
mussēwa ազդեցիկ մարդ  
muila առատածեղն մարդ  
munamika ազատ մարդ  
muhannahanna արդարասեր մարդ  
muayega ուրախ մարդ  
mssätsi խենթ մարդ  
mkenagusi անամոթ մարդ:

Սրտնից դուրս այդ լեզուն ուրիշ միջոցներ էլ ունի ածականներ կազմելու համար, այն է՝

ա) Գոյականը դնում է սեռական հոլովով. ինչպես՝ ngusu բուժ, բառից՝ X-a ngusu բուժի X», այն է բուժեղ X».

բ) Նույնը -ene մասնիկով. ինչպես՝ X-ene ngusu բուժեղ X».

գ) Կամ թե ku-wa na բունենալ՝ բայով, ինչպես՝ a-li na ngusu բուժ ունեցող, ուժեղ»:

դ) Շատ բայեր էլ կան, որ ածականը իրենց մեջ են ամփոփում. օրինակ՝

- zōwēka հոգնած լինել, հոգնել
- umīka չորացած լինել, չորանալ
- woneka տեսանելի լինել
- sayika տխրել.

Մասսաչուզեթի լեզվով (Ամերիկա) ածականները ունեն երկու ձև. շնչավոր և անշունչ. այդ տարբերությունը որոշվում է համաձայն իրենց գոյականի. անշունչների ածականը վերջավորվում է i կամ e, իսկ շնչավորներինը՝ es, esu. օրինակ՝

- wompi սպիտակ — wompesu
- nōčumwi տկար — nōčumwesu:

Այսպես նաև թվական անունները, որոնք այդ լեզվում ածական են համարվում:

Ընդհանրապես ածականները միանալով գոյականի հետ՝ կազմում են բարդ բառ. ինչպես՝

- womposketomp սպիտակ մարդ
- mōosketomp սև մարդ
- menuhkošketomp ուժեղ մարդ:

Այս վերջին դրության հետևում է նաև միկրոնեզյան տրուկ լեզուն. ածականը դրվում է գոյականից հետո և նրա հետ միանալով կազմում է մի բարդ բառ. օրինակ՝

- tam երկար mot կարճ

որոնցից՝

- nutam երկար կոկոս
- numot կարճ կոկոս

կամ՝ im տուն pap տախտակ, metä երկաթ,

որոնցից՝

- imepap փայտյա աուն
- imemetä երկաթյա տուն

կամ ik ձուկ parapar կարմիր  
որով՝ ikeparapar կարմիր ձուկ:

Ավստրալիայի մինյուզ լեզվում բառերը բաժանվում են 3 կարգի. արական և իգական անձեր, 2) տեղի և անասունների անուններ. 3) իրեր: Սա կարևոր է նրա համար, որ դերանունները, թվականները և ածականները ըստ այդ կարգերի տարբեր մասնիկներ են ստանում: Օրինակ՝ kumai ածականը նշանակում է «մեծ, խոշոր»։ սա ընդհանուր ձև է. արական անձի հետ կլինի kumai-bin, իգական անձի հետ կլինի kumai-na-gun, անասունների և տեղի անունների հետ՝ kumai, իսկ իրերի հետ՝ kumai-nyon.

Նույնպես kujin, «կարմիր», ար. անձի հետ՝ kuj-arim, իգանձի հետ՝ kuj-ari-gun, անասունների և տեղի անունների հետ՝ kuj-ari, իսկ իրերի հետ՝ kujin-na:

Արականի համար գործածվող մասնիկներն են՝—bin,—gin,—jara,—rim,—ri,—li,—gari,—gal, իսկ իգականի մասնիկն է՝gun:

Ածականների պակասը լրացնելու համար լեզուները իրենց զարգացման ընթացքում ստեղծում են զանազան ածանցներ ու վերջավորութուններ, որոնց միջոցով կազմվում է ածականը՝ գոյականից կամ բայից. Օրինակ՝ կորեական լեզուն չունի պարզ ածականներ. այնպիսի ածականներ, ինչպիսիք են «մեծ, փոքր և այլն», փոխ են առնված չինարենից: Այդ լեզվում սեփական ածականները կազմվում են գոյականներից ու բայերից. այսպես՝ գոյականի վրա դնում են seurepta, tapta, haopta մասնիկները, որոնք համապատասխանում են հյ.-ելի,-ալի մասնիկներին, և կազմում են ածական. ինչպես՝ sil «ճշմարտութուն», siltapta «ճշմարիտ»: Բայերի վրա դնում են այնպիսի վերջավորութուններ, որոնք նշանակում են «կարող, արժանի» և այլն, և ստանում են դարձյալ ածական:

Ճապոներենի մեջ ամեն ածական ունենում է i վերջավորութունը կամ մասնիկը. ինչպես՝ yorošii «լավ», samui «ցուրտ», ii «զեղեցիկ»: Նրբ ածականը գործածվի բայի հետ, կդառնա մակբայ և այն ժամանակ i մասնիկը վերացվելով՝ կդրվի ku. այսպես՝ yorošiku, samuku, iku: Նույնիսկ «ցուրտ չէ» ստելու համար դրվում է մակբայի ձևը, քանի որ ածականը բայի հետ է միացած: Որպեսզի ածականը մակբայի ձև չստանա, բայց իբր մակբայ գործածվի, հնարվել է մի այլ միջոց.—mono «իր, բան» բառը կրճատվելով՝ դարձել է no, n և իբր մասնիկ

կցվում է ածականին. այսպիսով ածականը դրվում է գոյականի մոտ և մակբայ համարվելուց ազատվում է. ըստ այսմ ասում են samui no des կամ samun des «ցուրտ է» (իրը թե ցուրտ բան է): Այսպիսով ածականը ստանում է ո վերջավորութիւնը կամ մասնիկը.

Շատ անգամ ճապոնեերենի մեջ գոյականը ստանում է սեռականի ո no վերջավորութիւնը և դառնում է ածական. այսպես են հատկապես տեղ, երկիր կամ նյութ ցույց տվող բառերը. ինչպես՝ nihon no «ճապոնական», šina «չինական», kin no «սուկեղեն», gin no «արծաթյա» և այլն. Գոյականը կարող է նաև ստանալ na «եղած, լինել», yō «կերպ, եղանակ, ձև», sō «երևութ» մասնիկները և դառնալ ածական. ինչպես՝ baka «խենթ մարդ, դիժ» (գյ.), baka na «խենթ» (ած.), rikō «իմաստութիւն», riko na «իմաստուն». rikōsō na «իմաստուն երևացող».

anata-no yō na hito

Դուք սեռ.—կերպ մարդ=դուք-ի կերպ մարդ, այն է՝ «Ձեզ պես մարդ, ձեզանման մարդ»:

Կովկասյան լակերեն լեզվում ամեն տեսակ բառ և բայարմատ ստանալով—ssa մասնիկը դառնում է ածական. ինչպես՝

na	ես, սեռ.	ttul	որից՝	ttulssa	իմ, իմային
ca	մեկ	cassa	միակ		
duku	հեռու	dukuassa	անցյալ տարվա		
dyāntu	միջև	dyāntiussa	միջին:		

Նույն—ssa մասնիկի տեղ դնելով ma մասնիկը, ստացվում է «նա որ այնպես է» նշանակութիւնը. օրինակ՝

Iuḥe-ssa սև, Iuḥe-mā նա որ սև է.

atilma նա որ թաց է:

Ամերիկյան զոք լեզվում ամեն ածական վերջանում է միշտ pue բառով, որ նշանակում է «բան». ինչպես՝ poo-pue «սպիտակ (բան)», yec-pue «սև (բան)», oye-pue «լավ (բան)»: Ածականը այս լեզվում կազմվում է նաև գոյականից՝ ավելացնելով նրա վրա casi «վրա» բառը կամ se «ինչպես». բառը: Երկու դեպքումն էլ գրվում է նաև pue «բան» բառը. ինչպես՝

nas-casi-pue	tia	երկրային բան
trap-casi-pue	tia	երկնային բան
yepue-se-pue		սրա նման, տյսպիսի
yopue-se-pue	atove	նման այս մարդու:

Այս նույն երևույթի հակադարձը տեսնում ենք այնու լեզվում. այստեղ ամեն ածական, որ վերջանում է ձայնավորով, ստանալով ք բաղաձայնը՝ դառնում է գոյական. օրինակ՝

aškanne	մաքուր	aškanne	մաքուր մի բան
ičakkere	կեղտոտ	ičakkere	կեղտոտ մի բան
aekatnu	համեղ	aekatnu	համեղ մի բան
atomte	կսկիկ	atomte	կոկիկ մի բան

Այս ք կրճատված է քe բրան, մի բան» բառից.

Ածականների համար մի շատ զարմանալի երևույթ տեսնում ենք ամերիկյան կարիբի բնտանիքին պատկանող կիպեա և ձուրուկուա լեզուների մեջ: Այս լեզուներում թիվ, չափ, գույն ցույց տվող 22 հաս ածական կա, որոնք ստանում են դրանց համար գոյություն ունեցող 12 մասնիկներից մեկն ու մեկը, նայելով թե հաջորդ գոյականը ինչ տեսակի է պատկանում. թե՛ 22 ածականների, և թե՛ մասնիկների մասին մանրամասն կխոսենք ստորև:

Հնդեվրոպական լեզուներում էլ ածականը ոչ մի մասնիկով կամ ձևով չէր զանազանվում գոյականից. ամեն գոյական կարող է գործածվել նաև իրրև ածական, և ամեն ածական կարող էր գործածվել նաև իրր գոյական: Ածականը հնդեվրոպական լեզուներում հորովվում էր ճիշտ գոյականի պես և երկուսի մեջ բնի կամ վերջավորության որևէ զանազանություն չկար: Միակ բանը, որ հնդեվրոպական լեզուների մեջ զանազանում էր ածականը գոյականից, այն էր, որ գոյականը ուներ միայն մի սեռ (արական, իգական կամ չեզոք), որ հատուկ էր միշտ իրին, իսկ ածականը ուներ միաժամանակ երեք սեռ, որ ստանում էր համաձայն հարակից գոյականի:

Ավելի ուշ՝ ցեղակից լեզուներում առաջացան գոյականը ածականից տարբերելու զանազան միջոցներ, շատերի մեջ-en-on մասնիկը դարձավ գոյականի հատկանիշ, իսկ այդ մասնիկը վերացնելով՝ ստացվեց ածական, օրինակ. հն. στραβων εγγυλοβιον, στραβος εγγυλο φωνων εγγυλο, φωλος εγγυλο, գնդ. marətan «մահկանացու էակ», marəta «մահկանացու» լիտ. rudū սեռ. rudens-առուն, rjdas «գորշա-կարմիր», բալթիկ-սլավոնականում և զերմանականում-ko- մասնիկը որոշում էր գոյակտնը, որը հանելով՝ ստացվում էր ածական. օրինակ՝ հսլ. novakū լիտ. naujōkas «նորեկ», հսլ. novū լիտ. naujas նոր. հռգ. arming «աղ-

քատ մարդ», arm ատղքատ»: Սլովեներեն լեզվում ածականը որևէ վերջավորութիւն չունի. բայց ստանալով ik, ec, ez և իզ. ila, kai, akinja մասնիկները՝ դառնում է գոյական. ինչպես՝ boien Եհիվանդ» (ած.), bolnik Եհիվանդ» (զյ.), tuj Ետտար» (ած.), tujec Ետտարական» (զյ.) և այլն:

Հայերենում գրաբարը շարունակում է հնդեվրոպական վիճակը. այստեղ էլ գոյական և ածական միևնույնն են և երկուսը կարող են միշտ փոխանակել իրար. օրինակ՝

1. Առն ուրումն մեծատն ետուն անդք տոհմական. ՂԿ. Ժբ, 16:

2. Ոչ վիշապք զտոհմական արդեանց կրեն. Եզն.

3. Թագաւորն մեծ տոհմական. Մծբ. Ժթ.

4. Աբրամ էր մեծատուն յոյժ անասնով. Ծն. Ժգ 2.

5. Ի փշրանացն որ անկանէին ի սեղանոյ մեծատան. ՂԿ. Ժգ. 21.

6. Մեծն ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր.

7. Ո՞վ իցէ ի մէնջ մեծ յարքայութեան երկնից. Մտթ. Ժբ. 1.

8. Ի ձայն մեծ աղաղակեաց և սսէ. Յհ. Ժա. 43.

Այս 8 օրինակների մեջ ունենք մեծ, մեծատուն և տոհմական բառերը փոխ առ փոխ գործածված իբր գոյական և իբր ածական. մեծ գոյական է 6-րդ օրինակում և ածական է 7, 8-րդ օրինակներում. մեծատուն գոյական է 5-րդ օրինակում և ածական է 1-ին, 4-րդ օրինակներում. տոհմական գոյական է 1-ին, 2-րդ օրինակներում և ածական է 3-րդ օրինակում:

Երբ գոյականը գործածված է իբր ածական, քերականական լեզվով կոչվում է ածականաբար առնված գոյական. իսկ երբ ածականն է գործածված իբր գոյական, կոչվում է գոյականաբար գործածված կամ առնված ածական: Սրանից հետևում է, որ գոյականը և ածականը էապես տարբեր են իրարից. օրինակ՝ հայր գոյական է, թեև կարող է իբր ածական էլ առնվել. սև ածական է, թեև կարող է իբր գոյական էլ առնվել: Բայց երբեմն լինում են դեպքեր, երբ անկարելի է որոշել, թե բառը էապես ինչ լսոսքի մաս է. օրինակ՝ ոսկի թե գոյական և թե ածական է, ինչպես՝

Անդ ուր ոսկին է և ոսկի երկրին այնորիկ ազնիւ. Ծն. Բ.12:

Եւ մանեակ ոսկի ի պարանոցի քում. Առ. Ա. 9: Աշխարհաբար՝ մի ոսկի տուր: Ոսկի մազեր ունի:

Մենք թագավոր բառը ըմբռնում ենք իրր զոյական. ինչպես՝  
 Եւ թագաւորք ի քէն իցեն. Մն. Ժէ, 16:  
 Առակք Սողոմոնի՝ որդւոյ Դաւթի՝ թագաւորի Խորայելի.  
 Առ. Ա. 1: Բայց ահա ածական գործածությամբ ունենք՝  
 Եթէ գայ ինձ ի ձեռն երբէք այր թագաւոր, ես ոչ սպա-  
 նանեմ զայր թագաւոր. Բուզ. 203:  
 Ածականը և զոյականը երբեմն այնպես են միացել և նույ-  
 նացել իրար հետ, որ ժողովուրդը նրանք իրարից զանազանելու  
 համար կարիք է զգացել մի նոր ձև հնարելու: Այսպես են՝ սխալ.  
 ած. Սխալ խոսք: Ասածգ սխալ է:  
 Սխալ. գյ. Երկու սխալ ունես: Սխալները բռնեցի.  
 Ժղ. ձևով՝ սխալություն:  
 Նախանձ. ած. Նախանձ մարգ է (գրականի նախանձոտ ձևի  
 փոխարեն).  
 Նախանձ. գյ. Նախանձից է ասում այս խոսքերը.  
 Ժող. Նախանձություն:  
 Այստեղ գնում ենք հայերենի արմատական ածականների  
 ցուցակը: Յուցակի մեջ չեն մտնում այն ածականները, որոնք  
 կազմված են որևէ մասնիկով, ածանցմամբ, կրկնությամբ և  
 բարդությամբ: Փակագծի մեջ կամ հարցականով դրել ենք այն  
 ածականները, որոնց համար կարելի է կասկածել, թե ածանցա-  
 կան են: Միասին ենք առել նաև այն ածականները, որոնք գո-  
 յականից են առաջացել և հայտնի չէ, թե զոյական է ածակա-  
 նաբար առնված, թէ՛ ընդհակառակը: Յուցակիս մեջ առնված ա-  
 ծականների գումարն է 697:

Ա ծ ա կ ա ն

Ազահ	ակահ	ամբարտաւան
ազան	ահեակ	(ամբողջ)
ազապ	աղկաղկ	ամեթ
ազատ	(աղճատ)	ամեհի
ազնիւ	(աղու)	ամենայն
աժան (էժան)	(աղուաշ)	ամուլ
ախերակ	աղջաղջ	ամուր
ախմար	աղքատ	ամուրի
ախնթոր	ազոտ	ամոք
ախորժ	ամայի	ամփոփ
ախցիփեսց	ամբարիշտ	այլ

այրի	արադ, երագ	զարշ
անագան	արբշխ	զերմակ
անագորոյն	արբուն	զէջ
(անապակ)	արգաւանդ	զէշ
անգ, անկ	արգար	զէր
անդրանիկ	(արդի)	զձուձ
անձուկ	(արթուն)	զմիբ
անճոռնի	արժան	(զնչու)
անոյշ	արի	զողի
անոշտ	արհամարհ	զու
անոպայ	արձակ	զոհ
անոստ	արու	զող
անջատ	արուգ	զողտր
անսուադ	արջն	զոնջ
անքաա	աւագ	զոո
անքոյթ	աւելի	զոռոզ
անօթի, նօթի	աւեր	զորշ
անօսր, նօսր	բագում	զուլ
աշխէտ	բամբ (ձայն)	զունդ
աշխոյժ	բարակ	զուզ
աշտուճ	բարաշխ (պինդ)	զօշ
(ապալեպ)	բարբարոս	զօս
ապալեր	բարգաւաճ	դագ
ապախտ	բարդ	դաժան
ապահով	բարի	դալար
ապահում	բարկ	դահ
ապատ	բարձր	դանդադ
(ապիկար)	(բաց)	դաշն
ապիրատ	բեկ	դառն
ապստամբ	բերրի	դատարկ
աջ	բիրտ	դեղբ
առաջոգ	բոլոր	դեղին
առապար	բոկ	դեղձան
առատ	բորբ	դերև
առաքինի	բութ	դժխեմ
առոյգ	բուն	դժնդակ
ատակ	զաղտ	դժնի
ատոք	զանգուր	զժուար



դժպիւրհ	Թասուն	լոյծ
դիւր	(Թարմատար)	լորտ
դոյզն	(Թաց)	լուռ
դուժ	Թաւ	լուրթ
դուն	Թեթև	լուրջ
եղծ, գեղծ	(Թերի)	լլիւրծ
եղկ	Թթու	լլիւրշ
երահիկ	Թիւր	խած
երանիկ	Թմուր	խախուտ
(երէզ)	Թնջուկ	խակ
երէց	Թշնամի	խաղաղ
երիտասարդ	Թշուառ	խամ
երկայն	Թոթով	խանգար
երկար	Թոյլ	խառն
երջանիկ	Թոնձ	խարբ
զագիւր	Թուխ	խարդախ
զածած	Թունդ	խարխուլ
(զանազան)	Թուպ	խարտեաշ
(զառնաւուխտ	Թուրծ	(խաւար)
(զգոյշ)	Թուրմ	խեթ
զեղխ	Թուրջ	խեղ
զերծ	Թօշ	խեղճ
զիւ	Ժանտ	խենէշ
զոյգ	Ժիտ	խենթ
զուարթ	Ժիր	խեռ
զուարճ	Ժլատ	խէթ
զուսպ	Ժուռ	խիզախ
զուտ	Ժպիւրհ	խիստ
զուր	լայն	խիտ
զուրկ	լաւ	խնծուղ
զօշ	(լեղի)	խոժոռ
ըմբոն	լեղկ	խոլոր
(ըմբոսա)	լեպեշտի	խոխոզ
թաթախ	լերկ	(խոհեմ)
թանկ	լի	խոհարհ
թանկուզի	լիբբ	լոռնաւ
թանձր	լկտի	խոնջ
թառամ	լոկ	խոշոր

խոսական	կարմիր	հաշմ
խոռ	կարոտ	հաշտ
(խոտան)	կեղծ	հասարակ
խոտոր	կեռ	հաստ
խոր	կիրթ	հարազատ
խորթ	կից	հարթ
խուժ	կծիծ	հարստի
խուլ	կծծի	հաւան
խուժար	կոկ	հաւասար
խուն	կոկոզ	հաւաստի
խունն	(կոճատ)	հաւաք
խռով	կոյր	հեզ
խրախ	կոշտ	հեղզ
խրթին	կոպիտ	հեշտ
խրոխա	կոր	հեռի
խօթ	կորդ	հեսա
խօլ	կորճայ	հերետիկոս
ծածուկ	կուզ	հերձ
ծայթ	կունդ	հէզ
ծանծաղ	կուշտ	հին
ծանր	կուռ	հիւանդ
ծաւի	կուրտ	հնազանդ
ծեր	կսկուծ	հոլանի
ծոյլ	(կրճատ)	հոծ
ծուռ	կրտսեր	հով
կազմ	կցիլ	հում
կալաշ	հակիրճ	հուսկ
կակազ	հաճ	հպատակ
կակուղ	համակ	(հպարտ)
կաղ	համառոտ	ձախ
կայաառ	համբակ	ձաղկ
կանաչ	համեմատ	ձառ
կանուխ	համեստ	ձոյլ
կապոյա	համր	ճակ (թաց)
կապրաշ	հանգուշն	ճահ
կարծր	հանդարտ	ճաղատ
կարկամ	հանդոյրժ	ճամարտակ
կարճ	հաշ	ճամուկ

ճապաղ	յամբ	նման
ճապուկ	յայտ	նողկ
ճարտար	յայրաս	նոր
ճեղ (ճաղատ)	յանդուգն	նուազ
ճերմակ	յատուկ	նուաղ
ճիղմ	յար	նուաստ
ճիշգ	յարմար	նուրբ
ճղճիմ	յեղց	նպերտ
ճշգրիտ	յեռ (շառած)	նսեմ
ճշմարիտ	յեց	նօթի
ճոխ	յիմար	նօսր
ճոռոմ	յղի	նօտր
մազդ	յիղկ	շաղփաղփ
մախազ	յալով	շամբուշ
մախիզ	յոխորտ	շատ
մած	յողդողդ	շեղ
մակոնատ	յոյլ	շեպ
մանկ	յոյր	շէկ
մանր	յոռի	շէն
մաշ	յօրդ	շիւ
մատաղ	յօրդօր	շիկն
մարմանդ	յուռթի	շիտիտի
մաքուր	յոտակ	շլոռոս
մեծ	յոժար	շմօր
մեղկ	նախատ	շոգ
մեղմ	նամէտ	շոգմոգ
մեղմեխ	նայ	շոդ
մերկ	նանիւր	շոդոմ
մէտ	նարմ	շողոքօրթ
(մոլի)	նեխ	շոյտ
մորոս	նեղ	շորիկ
մութ	նենգ	շուայտ
մունջ	ներգէ	շուար
մռայլ	(նժդեհ)	շուկատ
մրգուզ	նիազ	շուտ
յագ	նիհար	շուայլ
յաղթ	նկահ	շտապ
յաման	նկուն	շփոթ

ոլոր	(պարծ)	սերտ
ողորկ	պարկեղտ	սէգ
ողորմ	պերճ	(սթափ)
ողոք	պիղծ	սին
ողջ	պինդ	սինլքոր
ոյծ	պիտակ	սիր (մեղկ)
ոչոգի	պիրկ	սխալ
ոստին	պլուզ	սկայ
որբ	պղերգ	սոթ
որձ	պղտոյ	սոնթ
սրոշ	պոռոտ	սոնք
ուղիղ	պօզ	սոսկ
ունայն	(ջախջախ)	սովոր
ուշ	ջամբրակ	սուղ
ուլրախ	ջանգ	սուլն
ուլրիշ	ջատագով	սուտ
ուլրոյն	ջեր	սուլբ
չարուրուկ	ջերմ	սուբբ
չոր	ջինջ	սուք (ամուլ)
չուտո	ջիրդ	սպիտակ
չքնաղ	ջոկ	ստահակ
պակաս	ջոջ	ստամբակ
պաչ	ջուխտ	ստերջ
պաճոյճ	ռակայ	ստէպ
պայծառ	(ռամիկ)	ստոյգ
պանդոյր	ռատ	ստոր
պանդուխտ	ռիշտ	ստուար
պառակ	ռոշնա	ստրուկ
պատեն	սարա	սրիկայ
պատիր	(սակաւ)	սօս (գույն)
պատկան	սաղապ	վակասիր
պատկառ	սայթաք	վաղ
պատշաճ	սապշար	վայել
պատրաստ	սառն	վառ
պարապ	սեաւ	վառ (ձայն)
պարար	սեղմ	վաւաշ
պարարտ	սեպ	վատ
պարզ	սեռն	վատթար

վարար	տեղեակ	փարտ
վարժ	տխեղծ	փարփառ
վարկպարագի	տխմար	փափուկ
վաւեր	տխուր	փեցի
վեհ	տկեղտ	փլիթ
վեհեր	տկուտ	(փնթի)
վեռ	տոկ	փոյթ
վերտ	տոււայտ	փոր
վզան	տուկատ	փորձ
վզըուկ	տտիպ	փուխր
վէս	տրամ	փուղձ
վէսա	տրմուղ	փուտ
վիթխարի	տրուպ	փոքր
(վիթագ)	տրտում	փոցուն
վհաս	ցած	քակ
վճիտ	ցամաք	քաղթնատ
վսեմ	ցան	քաղցր
վսեր	ցանցառ	քանասար
վստահ	ցիւր	քաջ
վտիտ	ցնոր	քարձ (ց)
վրէպ	ցուրտ	քարուակ
տաժան	ցոփ	քեց
տաղտուկ	փակ	քիւ (քսու)
տամուկ	փաղ	քիչ
տապզէ	փաղաքուշ	(քծնի)
տար (հեռու)	փանաքի	քնքուշ
տարած	փասքուս	քուի
տարտամ	փարատ	քրքիր
տափ (ակ)	փարաք	(օժանդակ)
տաք	փարթամ	օտար <sup>1</sup>

Ինչպես շատ լեզուներում, այնպես էլ հայերենում ածականը հորովվում է ճիշտ գոյականի պես. այն բոլոր բներն ու վերջավորութիւնները, որոնք հատուկ են գոյականին, հատուկ են նաև ածականին: Այսպես՝ դրաբար՝

ի հլ.	ի—Ա հլ.	Ո հլ.
ճմարիտ	ճմարիտք	հին—հինք
ճմարիտ	ճմարիտս	հին—հինս

<sup>1</sup> Յուրաքանչեւ կարմեւ է իմ աշխատակցութեամբ ասպիւրանտ Աշոտ Սուքիասյանը:

ճշմարտի	ճշմարտից	մեծի—մեծաց	հնոյ—հնոց
ճշմարտէ	ճշմարտից	մեծէ—մեծաց	հնոյ—հնոց
ճշմարտիւ	ճշմարտիւք	մեծաւ—մեծաւք	հնով—հնովք

Ու հորովում  
 սակաւ—սակաւք  
 սակաւ—սակաւս  
 սակաւու—սակաւուց  
 սակաւէ—սակաւուց  
 սակաւու—սակաւուք

Ն հորովում  
 դառն—դառինք  
 դառն—դառինս  
 դառին—դառանց  
 դառնէ—դառանց  
 դառամք—դառամքք

Ը հորովում  
 համը—համերք  
 » համերս  
 համեր—համերց  
 » »  
 համերք—համերքք

Ը հորովում  
 փոքը—փոքունք  
 » փոքունս  
 փոքու—փոքունց  
 փոքուէ—փոքունց  
 փոքումք—փոքումքք

Այս նույնութեան պատճառով է, որ մենք այստեղ չենք խոսում ածականների հորովման մասին և հղում ենք ընթերցողին ընդհանուր հորովման բաժինը:

Միակ տարբերությունը, որ կա գոյականների և ածականների հորովման մեջ, այն է, որ՝

1. Մի խումբ բարդ ածականներ հետևում են ի հորովման, թեև նրանց կազմիչ գոյականը հետևում է տարրեր հորովման. ինչպես անգործ, դրծ. անգործի, թեև՝ գործ, սեռ. գործոյ:

2. Ն հանգող բառերով կազմված բարդերից ոմանք թեև եզակիի մեջ կանոնավոր, բայց հոգնակիում փոխում են բնի ձայնավորը. ինչպես՝ անձն—անձինք, բայց միանձն, միանձուներ.

գաւտարկանձն,	գաւտարկանձուներք
ազն—ազինք, բայց՝ սկայազն,	սկայազուներք,
	դիւցազն,
	դիւցազուներք.
բեռն—բեռինք, բայց՝ մեծաբեռն,	մեծաբեռուներք
	թեև՝ ծանրաբեռն,
	ծանրաբեռինք:

Մանթութիւն.— Գիտենք, որ շատ գոյականների հորովումը մեզ ավանդված չէ հին մատենագրութեան մեջ. բայց այդ նույնը ավելի մեծ չափերով պետք է ասել ածականների համար, որովհետև ածականները ավելի քիչ հարմար առիթ էին ներկայացնում հորովման: Դրա համար էլ շատ ածականների հորովումը մենք չգիտենք:

Միջին և նոր հայերենում ածականների հոլովման ձևափոխությունը գնում է ձեռն ի ձեռն գոյականների հետ. ածականները ավելի շուտ են ազատվում գրաբարի հոլովական օրենքներից, որովհետև թե միջին հայերենում, թե բարբառնեցում, և թե ժամանակակից գրականում ածականի համաձայնության օրենքը վերացված է, և ածականը շատ ավելի քիչ առիթներ է ներկայացնում հոլովման: Աշխարհաբարում ածականը կարող է հոլովվել միայն այն դեպքում, երբ գոյականաբար է առնված. *ինչպես՝*

*Սևին սապոնն ինչ անի, խեին՝ խրատը:*

*Սևով սիպտակով խառն:*

*Սևից էլ տո՛ւր, սիպտակից էլ:*

*Թացը չորի հետ կվառվի:*

*Մեծերը փոքրերից շոկիր:*

Բոլորն էլ պատկանում են աշխարհաբարի առաջին հոլովման. մյուս հինգ հոլովումները ածականների համար բոլորը ջնջված են՝ զանազան պատճառներով.— երրորդ հոլովումը գոյությունն չունի. որովհետև ութիւն վերջացող բառերը չեն կարող լինել ածական.— չորրորդ հոլովումը (-վան) ժամանակ ցույց տվող բառերի համար է, որոնք բոլորը գոյական են. քառորդ բառը թեև ածական, բայց միայն մի ժամի քառորդ ցույց տալու դեպքում դառնում է քառորդված (այդ էլ անսովոր), իսկ ուրիշ բաների համար հետևում է առաջին հոլովման (քառորդի գինը, քառորդի չափ).— հինգերորդ և վեցերորդ հոլովումները (քույր, հայր) մասնավոր բառերի համար են և եթե նույնիսկ հարկ լինի գործածել անհայր, անմայր, անտեր, անընկեր, անկից, ինչպես նաև անժամանակ, անձմեռ, անամառ և նման ածականներ, ավելի լավ է համարվում նրանց մոտ մի պատշաճ գոյական ավելացնելով՝ անհոլով թողնել նրանք, կամ հոլովել առաջին հոլովման համաձայն, քան թե հոլովել 4-րդ, 5-րդ, 6-րդ հոլովմամբ. օրինակ՝

*Երկու անհայր երախայի տեր եմ:*

*Անժամանակ եկողին այսքանն էլ շատ է:*

*Անընկեր մարդու վիճակը դառն է:*

*Անտերին ո՞վ տեր կկանգնի:*

*Տերովին տերն է տարել,*

*Անտերին գելն է տարել:*

(Բայց ոչ թե՛ երկու անհոր տեր եմ, անժամանակվա, անընկերոջ, անտիրոջ և այլն:)

Արայն Ի վերջացող ածականներն են, որ ժամանակակից հայերենում պահում են դեռ երկրորդ հոլովումը. ինչպես՝ սիրելի-սիրելու (այսօր իմ սիրելուս տոսա). բայց ինչպես որ արևմտյան աշխարհաբարում այս կարգի բառերը հեռացել են երկրորդ հոլովումից (սիրելիիս՝ փոխանակ սիրելույս) և նույնիսկ ժամանակակից հայերենում Ի վերջացող գոյականներն անգամ արդեն սկսել են հեռանալ երկրորդ հոլովումից (Բաֆֆիի, փոսրում հաճախ մեծ շփոթություն է ծագում այս ածականների սեռականի և համապատասխան դերբայի միջև. օրինակ՝

սիրելի—սիրելու (այն է՝ սիրելիի, սիրելույ) և  
սիրել —սիրելու (սիրելույ):

Գալով վերջապես ածականի սեռի հարցին, որ հատուկ է բազմաթիվ հնգեվորոպական լեզուների, գոյականի սեռի ճանաչողություն հետ վերացավ հայերենից. Այս մասին մի քանի նկատաստություններ տես համապատասխան հատորում՝ սնտուց և սնտեաց, օտաբացուց և օտաբոտեաց, Արշակունց և Արշակունեաց, քաղաքացուց և քաղաքացեաց, շորքոտանց և շորքոտանեաց ձևերի առթիվ:

Ահա ածականի այն բոլոր երևույթները, որոնք քիչ թե շատ ընդհանուր են բոլոր լեզուներին: Բացի սրանցից ածականը ներկայացնում է նաև մի քանի մասնավոր երևույթներ, որոնց մասին ուզում ենք խոսել այստեղ համառոտակի:

Ա. Ածականի նշանակած հատկությունը մշտական կամ տեակամն է, թե պատահական կամ առժամանակյա:

Գովկասյան լակերեն լեզվում ածականը կարող է ստանալ երկու ձև. մեկը ցույց է տալիս, թե այդ հատկությունը պատահաբար կամ առժամայես միայն ունի, իսկ մյուսը՝ թե այդ հատկությունը տեական ու մշտական է. առաջինը կազմվում է -ssa մասնիկով, երկրորդը՝ -nassa մասնիկով. օրինակ՝ մարդը kun-ssa (մեծ) է, իսկ երկիրը kun-nā-ssa (մշտապես մեծ) է. օդը լավ (kin-ssa) է, եթե խոսքը այսօրվա մասին է միայն, իսկ օդը լավ (kin-nā-ssa) է, թե մի երկրի կլիմայի մասին է խոսքը: Ըստ այսմ, երբ ունենք՝

ššinal	bācussa	gungume	lasi
լրով	լիքը	կուժը	բեր



ուրեմն կուժը դատարկ էր, որ պետք է ջրով լցնի և բերի. իսկ երբ ասենք՝ *ššinal būcunassa gungume lasi*—ուրեմն կուժը ջրով լիքն է, որ ուղղակի պիտի վերցնի և բերի:

Լակերեն լեզվի այս հատկությունը առաջնորդում է մեզ ածականի ժամանակի մասին խոսելու, որի վերաբերյալ տես բային նվիրված հատորում:

#### Դասաձևերը ածականի վրա

Ներածությունից հայտնի է մեզ, որ կան լեզուներ, որոնք գոյականները բաժանում են դասերի. ընդամենը լինում է 8—10 դաս և յուրաքանչյուր դասի համար կա մի դասանիշ, որ անհրաժեշտաբար պիտի կցվի նույն դասին պատկանող բոլոր գոյականների վրա: Երբ գոյականը ունենում է իր հետ մի որևէ ածական, այդ ածականն էլ ստանում է նույն դասանիշը: Այսպիսով ունենում ենք գոյականի և ածականի համաձայնության մի նոր երևույթ: Այսպես օրինակ՝ ամերիկյան սվահիլի լեզվի մեջ *-kombe* «բաժակ» և *-su* «դանակ» բառերը պատկանում են երրորդ դասին, որի հոգնակիի դասանիշն է *vi*-մասնիկը. ուստի և եթե դենք այս բառերի վրա *Zuri* «զեղեցիկ ածականը» և *wili* «երկու» թվականը, անհրաժեշտաբար նույն մասնիկները կցելով նաև այս բառերի վրա, պետք է ասենք՝

<i>vikombe</i>	<i>vizuri</i>	<i>viwili</i>	երկու գեղեցիկ բաժակներ
բաժակք	զեղեցիկք	երկու(ք)	
<i>visu</i>	<i>vizuri</i>	<i>viwili</i>	երկու գեղեցիկ դանակներ:
դանակք	զեղեցիկք	երկու(ք):	

Կան լեզուներ, որոնց մեջ գոյականը դասանիշ չունի, և ընդհանրապես ածականն է, որ ըստ գոյականի դասի՝ ստանում է նրա դասանիշը:

Դասանիշներով համաձայնության այսպիսի մի ձև ներկայացնում է, օրինակ, ամերիկյան կարրիեր լեզուն, որ թեև գոյականների համար դասանիշներ չի դնում, բայց ածականների վրա դնում է: Այսպիսով, միևնույն ածականը ստանում է 7 ձև, նայելով թե այդ ածականը ինչդասի գոյականի հետ է գործածվում.

1-ին ձև. հատուկ է այնպիսի առարկաների, որոնք առանձին ձև կամ մեծություն չունեն, ինչպես՝ թուղթ, ուտելիք, դանակ, մեքենա, անասուններ, շիշ, անձեր և այլն:

2-րդ ձև. կլոր կամ գնդաձև իրեր, ինչպես՝ գնդակ, խրնձոր, երես, գլուխ, աչք, գետնախնձոր և այլն:

3-րդ ձև. երկար կամ ծանր իրեր և ձայն ցույց տվող բաներ, *ինչպես՝ ծառ, ճյուղ, տերև, քար, հրացան, երգ, ձայն, բառ և այլն:*

4-րդ ձև. տեղ, միջոց կամ տարածություն ցույց տվող բաներ:

5-րդ ձև. առարկաների ներսը կամ միջին մասը ցույց տվող բառեր. *ինչպես՝ շորը (ներսի կողմից), տուն կամ մասան, ամանները (ներսից) և այլն:*

6-րդ ձև. (2-րդ և 3-րդ ձևերի գումարն է). *կլոր և երկար բաների համար, ինչպես՝ օղակ, հանգույց, թակարդ, չվան, ուռ-կանի ծակերը և այլն:*

7-րդ ձև (4-րդ և 3-րդ ձևերի գումարն է). *ձայներ՝ տարածության գաղափարի հետ միացած. ինչպես՝ օդ, բերան և այլն:*  
Ահա օրինակ՝ «փոքր» ածականը 7 ձևի տակ.

1. ուֆուլ (նցուլ)
2. ունֆուլ
3. մուֆուլ
4. հուֆուլ
5. փուֆուլ
6. մուֆուլ
7. հուֆուլ

Դասանիշի կիրառության այլ ձև ունի ածականը կովկասյան ավարերեն լեզվի մեջ: Այստեղ միայն 3 դաս կա (ս, ի, օ, հոգ. 1). ածականը, ըստ այդ կարգերի, ստանում է դասանիշը բառավերջում. միայն թե ածականի առանձին գործածվելիս վերջածայնը կրկնվում է, իսկ գոյականի հետ միացման ժամանակ կրկնություն չկա. *ինչպես՝*

kudiyay	ճի	մեծ մարդ
kudiyal	ճիշու	մեծ կին
kudiyab	ճու	մեծ ձի
հոգն. kudiyal	X	մեծ X-եր

Առանձին լինում է.

- kudiyay-v-a-y
- kudiyay-yal
- kudiyab bab
- հոգն. kudiyab-lal.

Ամերիկյան կիրիբի լեզվի մեջ մի խումբ ածականներ ներկայացնում են զարմանալի մի երևույթ. նրանք ստանում են առանձնահատուկ նախամասնիկներ՝ նայելով թե իրենց որակած գոյականը ինչպիսի իմաստ ունի:

Այդ ածականները հետևյալներն են.

Թիվ ցույց ավող. bihe «մեկ», wačani «երկու», wačanidikie «երեք», yo «չատ»:

Չափ կամ ձև ցույց ավող. pi կամ pinete «փոքր», ye «մեծ», mu կամ munete «կարճ», չի «երկար», .kempe «նուրբ», բարակ», tu «հաստ», to կամ toto «կոշոր».

Գույն ցույց ավող. cu «սպիտակ», cotzo «սև», he «կարմիր», cutzu «մսագույն», era «կանաչ, դեղին», crucu «կապույտ», kenke «ճերմակ, պայծառ», dzodzo «փայլուն», ne կամ nu «պայծառ»:

Այլ ածականներ. cra «չոր», tza «կարծր»:

Բոլորի գումարն է 22:

Ահա և այն նախամասնիկները, որոնք ըստ տեղիույն կըցվում են հիշյալ ածականներին. be, bu, cro, cru, cpru, he, ho, ya, mu, nu, ro, woro (ընդամենը 12):

Այս նախամասնիկները կցվում են վերոհիշյալ 22 ածականներին, համաձայն հետևյալ օրենքների.

Եթե այս ածականներին պատկանող գոյականը ցույց է տալիս լեռ կամ սար, ափօե, ծովի տակ, ժայռ և այլն, ածականը ստանում է be- նախամասնիկը: Օրինակ՝ «մեկ սար, փոքր սար, սպիտակ սար» ասելու ժամանակ, գործ են ածում ոչ թե bihe «մեկ», pi «փոքր» և cu «սպիտակ» պարզ ձևերը, այլ, սրանց վրա ավելացնելով be նախամասնիկը, ասում են bebihe, bepi, becu և այլն:

Եթե գոյականը ցույց է տալիս տուն, նետ, ամանեղեն, հասկ և կամ շնչավոր մի առարկա (բացի թռչունից), ածականը ստանում է bu- նախամասնիկը: Այս կարգի գոյականներին վերաբերող ածականը չի ասվում օրինակ՝ պարզապես չի «երկար», cu «սպիտակ», tza «կարծր», այլ bu նախամասնիկի հավելմամբ՝ buči, bucu, butza:

Cro նախամասնիկը կցվում է նույն ածականներին, եթե նրանց վերաբերող գոյականը նշանակում է թռչուն, քար, ասող: կլորակ մի բան, պտուղներ, անտառապտուղ, աչք և այլն: Չի ասվում օրինակ՝ պարզապես pi «փոքր», ye «մեծ», kenke «ճերմակ» և այլն, այլ cro նախամասնիկով՝ cрпи, croye, krokenke և այլն:

Cru նախամասնիկը գործածվում է հեղուկների և գետերի անունների համար. ասում են՝ cruye, crune, cruhe, փխ. ԿԵՒՅԵՑ, ne սպայծառ, he սկիւրմիր և այլն:

Epru նախամասնիկը գործածվում է կապոց, տրցակ, ողկույզ նշանակող բառերի համար. ինչպես՝ epruye (փխ. ԿԵՒ):

He նախամասնիկը գործածվում է փայտի, փայտից շինված իրերի և ոսկորի համար. օրինակ՝ heyē, hetu, hecra փխ. ԿԵՒՅԵՑ, tu ճհաստ, cra շոր:

Ho կամ hoi նախամասնիկը գործածվում է չվանի, մագըլցող բույսերի, թելի և օձի տեսակների համար. ինչպես hobihe, hoimu, փխ. bihe, ճհեկ, mu սկարճ:

Ya նախամասնիկը կցվում է երկաթե, ոսկրե կամ սրածայր բաների համար. օրինակ՝ yane սպայծառ, yacu սսպիտակ:

Mu կամ mui նախամասնիկը՝ ուտելի արմատների համար. օրինակ՝ muiči սերկար, muicu սսպիտակ:

Nu նախամասնիկը գործածվում է ջրհորի, անցքի, բացվածքի, դաշտի և ցանկապատի համար. օրինակ՝ nuyē ճհեճ, nuči սերկար, nucu սսպիտակ:

Ro նախամասնիկը գործածվում է շորերի, մորթեղենի համար. օրինակ՝ roco սսպիտակ, royē ճհեճ:

Woro նախամասնիկը գործածվում է խոսակցութան, ճառի և պատմվածքի համար. օրինակ՝ woroči սերկար, woroyē ճհեճ, և այլն:

Ըստ այսմ՝ այս 22 ածականները հաստատուն ձև չունեն, այլ նրանցից յուրաքանչյուրը միացնում է իրեն մերթ այս և մերթ այն նախամասնիկը՝ ըստ այն գոյականի, որին վերաբերում է (Gabelenz, Grammatik der Kiriri-Sprache, Leipzig, 1852, էջ 29):

Հեղինակը չի կարողանում պարզել, թե թնչ է այս երևույթի պատճառը: Ըստ իս սրանք բանտու լեզուների նման նախկին դասանշալոր գրության վերջին մնացորդներն են:

Նման երևույթ գտնում ենք նաև ամերիկյան նավահո լեզվի մեջ: Այն ածականները, որոնք ցույց են տալիս անբաժանելի կամ մշտական մի հատկութուն և կամ մի այնպիսի հատկութուն, որ դժվար ջնջելի է, ստանում են Ո նախամասնիկը: Այսպես են տարածութուն, մաքրութուն, կարծրութուն կամ փափկութուն և այլ հատկութուն ցույց տվող ածականները. ինչպես՝ ntlai ճհալիկ, nzad ճհոռ, nižuni սգեղեցիկ, ncuil

«տգեղ», ntsa «լայն, խոշոր» և այլն: Երկրի, հողի, ճամբի հատկությունների վերաբերյալ ածականները ստանում են ո՞՞՞ նախամասնիկը, ինչպես՝ xidältxo, «սահուն, լլործուն», xodowoli «անհարթ» (տեղ), xoltsai «անջրդի, չոր» (ճամբա) և այլն: Մրանց նման կան ուրիշ շատ նախամասնիկների թի՛ւ ածականների, և թե՛ մակբայների համար:

### Ածանցյալ ածական

Ամեն լեզվի մեջ էլ կան զանազան տեսակ ածանցյալ ածականներ, ինչպես օրինակ՝ հյ. ժամանակավոր, զորեղ, փոխաբերական, և այլն: Բայց սլավոնական լեզուների մեջ կան ստացողական (possessif) և պարագայական (circonstanciel) կոչված մի խումբ ածանցյալ ածականներ, որոնք կազմվելով գոյականից, նախադրությունից կամ մակբայից՝ զանազան մասնիկներով, գործածվում են իբր համապատասխան ուրիշ լեզուների սեռականին: Ստացողական ածականը ցույց է տալիս, թե գոյականը որին է պատկանում. օրինակ՝ չեխ. sousedův dům «հարեվանի տունը», sousedova zahrada «հարևանի պարտեզը», sousedovo pole «հարևանի արտը», ռուս. папин дом «հոր (հայրական) տուն», львов зев «առյուծի բերան», львиная доля «առյուծի բաժին»: Պարագայական ածականը ցույց է տալիս տեղ, ժամանակ, նյութ, նպատակ. ինչպես՝ ռուս. сегодняшний урок «այսօրվա դասը», здешний театр «այստեղի թատրոնը». այսպես նաև չեխ. «ետևի սենյակը, երեկվա թերթը, զբելու մեքենա» և այլն: Այս բոլոր դեպքերում ուրիշ լեզուներ գործ են ածում սեռական հոլով, բայց սլավոնական լեզուները դնում են ածանցյալ ածական, որ սեռով ու թվով էլ համաձայնվում է գոյականին, ինչպես ցույց են տալիս վերի օրինակները. այսպես, օրինակ՝ лъвиный зев նշանակում է բուն «առյուծային բերան» և ոչ թե՛ առյուծի բերան:

Սլովեներենում ստացողական ածականը ավելի մանր ներբություններ էլ ունի. երբ ստացողը եզակի է և որոշյալ, ստացողական ածականը ստանում է արական և չեզոք ստացողների համար ov, ova, ovo (կամ ev, eva, evo) վերջավորությունները՝ ըստ ստացյալ առարկայի սեռի, և իզական ստացողի համար in, ina, ino վերջավորությունները՝ դարձյալ ըստ ստացյալ առարկայի սեռի. օրինակ՝

pastirjev nož	հովվի դանակը
pápeževa paiáča	պապի պալատը
sestrin pr'stan	քրոջ մատանին
tétino pólje	հորաքրոջ արտը
gospódova hiša	պարոնի տունը:

Իսկ երբ ստացողը հոգնակի է կամ ընդհանուր է, ածականը ստանում է արական և չեզոք ստացողների համար ski, ska, sko և իգական ստացողների համար ji, ja, je, ինչպես՝

kmètsko dèlo	դուռղացիների աշխատանք
bratovska ljubézen	եղբայրական սեր
óvčje mléko	ոչխարի կաթ
kravji pastir	կովարած (կովի հովիվ):

Ածականի լի և սուղ ձևերը

Սլավոնական լեզուներին հատուկ է նաև ածականի լի և սուղ ձևերի գործածությունը: Ածականը ըստ պաշտոնի լինում է որոշիչ կամ ստորոգելի. որոշիչ է, երբ կցվում է գոյականին (օրինակ՝ քաջ զինվոր) և ստորոգելի է, երբ գործածվում է էական բայով (օրինակ՝ զինվորը քաջ է): Որոշիչ լինելու դեպքում ածականը ստանում է ուրիշ վերջավորություն (լի կամ երկար), ստորոգելի լինելու դեպքում ուրիշ (կարճ կամ սուղ). օրինակ՝ ոռու. добрый отец բարի հայր», отец добр «հայրը բարի է», молодая девица «երիտասարդ աղջիկ», девица молода «աղջիկը երիտասարդ է», այսպես նաև չեխերեն՝ «քաջ զինվոր» առելու դեպքում՝ «քաջ» ունի երկար կամ լի ձևը, «զինվորը քաջ է» առելու դեպքում՝ կարճ կամ սուղ ձևը:

Բայց ածականի ամենակարևոր գործածությունը նրա համեմատության աստիճաններն են, որին նվիրում ենք հաջորդ գլուխը:

**ԱԾԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ**

Որակական ածականը կարող է լինել բացարձակ կամ համեմատական. բացարձակ է ածականը, երբ ներկայացնում է առարկայի հատկությունը անկախաբար, առանց մի ուրիշ առարկայի հետ համեմատության դրվելու. օրինակ՝ այսօր ցուրտ է, այսօր շատ ցուրտ է: Իսկ հարաբերակիտ է, երբ մի կամ մի քանի ուրիշ առարկաների հետ համեմատության մեջ է դրված:

Համեմատությունը կարելի է կատարել երկու և ավելի առարկաների միջև:

Երբ համեմատությունը կատարվում է երկու առարկայի միջև, կարող է մեկը մյուսից որոշ հատկությամբ ավել, կամ պակաս և կամ հավասար լինել: Առաջին դեպքում համեմատության արդյունքը նշանակող ածականը կոչվում է առավելական բաղադրական, երկրորդ դեպքում՝ նվազական բաղադրական, և երրորդ դեպքում՝ հավասարության բաղադրական: Իսկ երբ համեմատություն չկա, առարկայի պարզ վիճակը հայտնող ածականը կոչվում է դրական:

Երբ համեմատությունը կատարվում է երկուսից ավելի առարկաների միջև, եթե բոլորը հավասար չեն միմյանց, մեկը որոշ հատկությամբ գերազանցում է բոլորից: Այս վիճակը հայտնող ածականը լինում է գերադրական:

Բայց գերազանցությունը կարող է լինել ոչ միայն մի քանի առարկաների համեմատությամբ, այլև առարկան ինքնին անկախաբար վերցրած՝ առանց համեմատելու ուրիշների հետ: Առաջին դեպքում գերադրականը կոչվում է հարաբերական, երկրորդ դեպքում՝ բացարձակ, օրինակ՝ ամենից մեծը. շատ մեծ: Ուրեմն ածականը ունի երեք աստիճան. դրական, բաղադրական և գերադրական:

Ածականի դրական աստիճանը ամեն լեզվի մեջ էլ արտահայտվում է ածականի սովորական ձևով, որ լինում է արմա-

տական կամ բարդ և կամ ածանցյալ բառ. ինչպես՝ տունը մեծ է. եղբայրս աշխատասեր է. սենյակը փոքրիկ է:—Բարբի է այրն, Չար է մարդն այն. Ծանր քար: Որդի իմաստուն:

1. ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Առավելական բաղդատականը ամենակարևորն է բաղդատական աստիճանի երեք տեսակներից, այս պատճառով էլ առհասարակ պարզպես բաղդատական ասելով հասկացվում է առավելական աստիճանը:

Բաղդատականը կազմվում է զանազան ձևերով.

ա) Ամենապարզ ձևն է կազմել երկու նախադասությունների, որոնց մեջ համեմատության որոշ նշան չկա, բայց ածականների հակադրությունից բխում է ինքնին համեմատությունը: Այսպես, օրինակ, երբ հայերեն ասենք՝

Նա մեծ է, սա փոքր.

Նա գեղեցիկ է, սա տգեղ.

Ոսկին թանկ է, արծաթը էժան

(այսինքն ոսկին արծաթից թանկ է):

Բաղդատականի այս ձևը շատ սիրելի է չինարեն լեզվի մեջ. օրինակ՝

Cung<sup>1</sup>—kuo<sup>3</sup> tá<sup>4</sup>, Te<sup>2</sup>—kuo<sup>2</sup> Ćiao<sup>3</sup>

Չինաստանը մեծ է, Գերմանիան փոքր (==Չինաստանը ավելի մեծ է Գերմանիայից):

Ամերիկյան կիպես և ձուբուկուա լեզուներով ասում են՝  
«այս լավ է, նա վատ է» (սա նրանից լավ է):

Օվկիանիայի սամոա լեզվով էլ միևնույն ձևով ասում են՝

e leli lenci ae leaga lena

լավ այս վատ այն

«այս լավագույն է քան այն». այսինքն սա լավ է ոչ թե ինքնին իր համար վերցրած, այլ համեմատությամբ մյուսի, որ վատ է.

Համեմատելի եզրը վատաբանելու այս ձևը ունի նաև Մարքիզյան կղզիների լեզուն. օրինակ՝

Mea meitai te popoi, mea pe te faraoa

լավ պատեղը վատ հացը



Պաստեղը լավ բան է, հացը վատ բան է:

= Պաստեղը հացից լավ է:

Ավստրալիայի նոր-պոմբերանյան լեզվում ածականների համեմատութունը կատարվում է 6 ձևով. այսպես՝ «Ես քեզանից փոքր եմ» միտքը արտահայտելու համար կարելի է ասել.

ա) au a kilik, u pata

ես փոքր դու ոչ

բ) au a kilik, u pata bulu

ես փոքր դու ոչ այնքան

գ) au a kilik, ma u a ngala

ես փոքր բայց դու մեծ

դ) u a kilik, ma iau a ikilik tuna

դու փոքր, բայց ես փոքր շատ

ե) iau a ikilik tador

ես փոքր երկուսից

զ) u ngala tador

դու մեծ երկուսից:

Այս բոլորի մեջ ամենից ավելի հարգի ձևը երկրորդն է: Գերադրականը կազմվում է կրկնությամբ.

a ngalangala na dawai

շատ մեծ

ծառ:

բ) Համեմատելի առարկան դրվում է առանձին նախադասությամբ (կամ դերբայի հետ), որից հետո գալիս է ածականը դրական ձևով. այսպես, եթե հայերեն ասինք՝

Եթե նայենք սրանց, սա լավ է:

Տեսնելով սրանք, սա լավ է:

Թողած սրանք՝ սա լավ է:

Մեր լեզվում այսպիսի ձևերը չեն կարող քերականական համարվել. բայց գործածական են դրավիդյան լեզուների մեջ. օրինակ՝

adei-p-pārkilum idu nalladu

դրան նայելով սա լավ է

adei vida idu nalladu

դրան թողած սա լավ է:

դ) Հակադրութիւնը կազմվում է «ոչ» բառով. օրինակ՝  
ամերիկյան մոսկիտո լեզվով համեմատութեան առաջին եզրը  
դրական է, երկրորդը ստանու. է apia «ոչ» բառը. օրինակ՝

Jan almuk, Samuel almuk apia  
Հովհաննեսը ծեր, Սամվելը ծեր ոչ.  
այսինքն՝ Հովհաննեսը Սամվելից ծեր է:  
baha karra woama, yung apia  
այս ավելի երիտասարդ, ես ոչ.  
այսինքն՝ «ոս ինձնից ավելի երիտասարդ է»:  
Նույն է նաև ամերիկյան անտո լեզվով. օրինակ՝  
iota-chiri-ni abiro te i-nquem-bete Petro

որ բառացի նշանակում է «չառ գիտուն ես, ոչ ինչպես Պետ-  
րոսն (է)», այսինքն՝ «չու Պետրոսից ավելի գիտուն ես»:

Մեկանեզյան մոտա լեզվում կա համեմատութեան հետևյալ  
ձևը.

iloke we wia, ilone we tatas  
սա է լավ, նա է վատ  
այսինքն՝ սա նրանից լավ է (իբր թե զուր ասաց, որ նա  
վատ է):

Աֆրիկյան բենդա (բանտու) լեզվով.

Komba n' Ugula, Komba n' utodu  
Կոմբա և Ուգուլա, Կոմբան է ծեր

(այսինքն, եթե համեմատենք Կոմբային և Ուգուլային, Կոմբան  
ավելի ծեր է). բայց սրանք ավելի ասելու տոնով և ելևէջով են  
զանազանվում, որ անկարելի է գրել.

զ) Այսպիսի բարդատականի մի քիչ ավելի զարգացած ձևն  
է այն, երբ համեմատված առարկան ստանում է հենց համեմա-  
տութիւն հայտնող մի բառ կամ մի ձև. օրինակ՝

Աֆրիկյան սվահիլի լեզվով՝

Saa hii nje ma kuiko ile  
Ժամացույցը այս լավ ճրտեղ է նա.

ուզում է ասել. այս ժամացույցը լավ է. իսկ նա որտեղ է. այս-  
ինքն, այս ժամացույցը ավելի լավ է քան այն:

Կամ թե (նույն լեզվով)

hapa papana pa pita pale  
 այս վայրը լայն գերազանցել այն

ուզում է ասել. այս վայրը լայն է՝ գերազանց քան այն. այսինքն՝ այս վայրը ավելի լայն է քան այն:

Զինարեն լեզվով՝

Ce<sup>4</sup>-ko Šan<sup>1</sup> pi<sup>8</sup> na<sup>4</sup>-ko kao<sup>1</sup>  
 այս սարը համեմատած այն մեծ է.

Նույնիսկ պրս. nisbet be-digerān bihter est

համեմատությամբ այլոց լավ է:

Ամերիկյան չիկիտա լեզվով բաղդատականը կազմվում է շատ և համեմատ (ininana) նախադրությամբ. օրինակ՝

oxima-ni apaezo ininana-tii  
 գեղեցիկ (եմ) ես ավելի համեմատ նրա.

Եթե պահենք միայն apaezo «շատ» բառը և չդնենք «համեմատ» նախադրությունը, կստացվեր գերադրական: Այսպես՝

oxima—ni գեղեցիկ եմ  
 oxim—ni apaezo ininana ավելի գեղեցիկ եմ  
 oxima—ni apaezo շատ գեղեցիկ եմ:

Ածականի աստիճանը բարձրացնելու համար կարելի է նաև բայի մեջ դնել զանազան սաստկական մասնիկներ. օրինակ՝ zoo ինչպես՝

neenaxico հարուստ եմ  
 neenaxi-zoo-ca շատ հարուստ եմ:

Աֆրիկյան կարանգա (բանուռ) լեզվով բաղդատությունը հետևյալ ձևերով է լինում.

nidi ri mu kuru, u ri mu duku  
 ես մեծն եմ, դու փոքրն ես  
 ndi ri mu kuru wa ko  
 ես քո մեծն եմ:

Կամ դնում են kuna, pana «մոտը, համեմատությամբ» նախադրությունները.

biza i guru pane m'bongoro  
 ձին մեծ է համեմատած գումեջը:

Կամ գնում են «անցնել, գերազանցել» բայը:

Սուգանի կուսասի լեզվով բաղդատականը կազմվում է gat  
 «գերազանցել» բայով. օրինակ՝

u—gat—em . ne kpem  
 նա գերազանց է զի ով տարիք  
 = նա ինձնից տարիքոտ է:

Աֆրիկյան բասա(կամերուն) լեզվով էլ բաղդատականը կազմ-  
 վում է lo կամ yembe «գերազանցել» բայով.

Մեկանեզյան լեզուներից լիֆու լեզուն համեմատական աս-  
 տիճանը կազմելու համար ածականի վրա դնում է hune, huò  
 բառերը, որոնք նշանակում են «չազաթ», վերև»:

Մեկանեզյան կվամերա լեզվով համեմատական կամ գերա-  
 դրական աստիճանը կազմում են կրկնությամբ. օրինակ՝ apusan  
 «ճերմակ», apusan mapusan «ոչ շատ ճերմակ», բայց շեշտելով՝  
 apusan mapusan «շատ ճերմակ»:

Մեկանեզյան տասիկո լեզվով համեմատական աստիճանը  
 կազմելու համար դնում են taulu «անցնել, գերազանցել» բառը:

Մեկանեզյան ուրիպիվ լեզվով համեմատական աստիճանը  
 կազմում են uomo «առաջ» բառով. ավելացնելով ne նախադրու-  
 թյունը. օրինակ՝

mauren elep uomo ne nanen  
 կյանքը մեծագույն է քան ուտելիքը:

Աֆրիկյան վիամ-վիամ կամ ազանդե լեզուն ածականի բաղ-  
 դատական աստիճանը կազմում է ti բառով, որ նշանակում է  
 «համեմատությամբ». ինչպես՝

ga bolomu bombu ni kikiha, ti ga Azande  
 Մպիտակի տունը մեծ է համեմատությամբ Ազանդեի:

Աֆրիկյան ոոնգա (բանտու) լեզվով բաղդատականը կազ-  
 մվում է երկու ձևով. ա) համեմատելի առարկայի վրա դնելով  
 ku, որ նշանակում է «համեմատած». բ) ավելացնելով ku tula,  
 որ նշանակում է «գերազանցել»:

Նուբիերենում բաղդատական աստիճան կազմելու առանձին  
 ձև չկա. տալիս են միայն առանձին դարձված. ինչպես՝ twe  
 «վրա», watu «մոտ բառերով». օրինակ՝

tomur uninin-dwe uginin  
 մեղուները ճանճերի վրա մեծ են.

a watu      batunun  
քեզ մոտ    փոքր է:

«Գերազանցել» ձևը բաղդատական ածական կազմելու շատ սովորական ձևերից մեկն է: Այսպես են օրինակ՝ ամերիկյան տարասկ լեզուն, որ բաղդատականի համար դնում է «գերազանցում է» իմաստով հետևյալ երկարաձևից բառերը. hucamani, vanāndamahpēmani, vanandatzehpēmani, hatzistahpemani.

Աֆրիկյան բենգա (բանտու) լեզուն՝ «գերազանցում է» (ke-baka) կամ «առավելում է» (wa) բառերով:

Աֆրիկյան բարի լեզվով՝ bia «ավելի» բառով կամ tongum «գերազանցում է» բայով:

Այնու լեզուն թեև ունի համեմատական և գերադրական կազմելու սովորական ձևերը, բայց գործածում է նաև akkari «գերազանցում է», eitasa «առավելում է», maškinno «գերազանցորեն» և kasu no «գերազանցում է» ձևերը:

Աֆրիկյան բիրա (բանտու) լեզվով բաղդատականը կազմվում է yena բառով, որ նշ. «գերազանցել»:

Աֆրիկյան կենյան (բանտու) լեզուն՝ ča «գերազանցել» կամ fued «ավելի առողջ գնալ» բայով:

Մելանեզյան յաբեմ լեզվով բաղդատականը կազմվում է lëlêc «գերազանցել» բայով:

Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզվով բաղդատական կազմելու համար դնում են fata «գերազանցել» բայը, եթե խոսքը առարկայական ու ֆիզիկական հատկանիշների մասին է, իսկ եթե խոսքը բարոյական գերազանցության մասին է, դնում են p'ala բայը:

Աֆրիկյան խասու լեզվով բաղդատականը կազմում են ku-kela, kuveča բայերով, որոնք նշանակում են «առաջ անցնել, գերազանցել» օրինակ՝

muntu uu ni mbaha      kukula ula  
մարդ այս            մեծ գերազանցել այն.

Մելանեզյան ֆիու լեզվով ածականի համեմատական աստիճանը կազմվում է liu «անցնել», tasaa «գերազանցել» բայերով:

Աֆրիկյան հասարակական լեզվով բաղադրված կազմելու համար դնում են ֆի լեզվագրության լինելը բայը:

Ամերիկյան նախահո լեզուն, որովհետև իր ածականները բայից է կազմում և բայական ձևով է դործածում, չգիտե համեմատական աստիճանի քերականական ձևերը: Ուստի երկրորդական ձևերով փորձում է հասնել այդ նպատակին: Դնում է մակերայական մասնիկներ, կամ այնպիսի բառեր, ինչպես՝ «շատ, յոյժ, մի քիչ, ոչ ճիշտ ու ճիշտ, ոչ բոլորովին, հավասարաչափ և այլն», և կամ այնպիսի նախադասություններ, ինչպես՝ «Մա կարճ է, այն ոչ բավական երկար. սա անհարթ է, նա ողորկ է. սա ավելի երկար է (քան պետք է), շատ երկար է և այլն»:

Եղբայրացիները ածականի համեմատական աստիճանի համար առանձին ձև չունեն, այլ ածականի հետ դնում էր ԴՕ նախադրությունը, որ նշանակում է «ավելի քան»:

դ) Համեմատություն ցույց տվող այսպիսի բառերի գործածությունն է, որ ժամանակի ընթացքում վերածվում է մի կողմից բաղադրական ածականի ետամասնիկի, մյուս կողմից համեմատելի բառի վրա դրված նախդիրի (քան, que և այլն): Երկու դրույթյան միջև կանգնած անցման ձևեր են ներկայացնում, օրինակ, ասուրերենը, կովկասյան արչի լեզուն:

Ասուրերենում բաղադրականը կազմվում է պարզ ածականով. միայն համեմատելի եզրի վրա դրվում է eli, որ ծագում է eli «վեր, վրայ, վերև» բառից և այստեղ համապատասխանում է մեր քան նախդիրին:

Համարյա նույնն է նաև վրացերենը, ուր բաղադրականը կազմվում է պարզ ածականով, միայն համեմատելի եզրը դնելով գերադրական (սուպերետիվ) հոլովով. որ նշանակում է «վրա». օրինակ՝

ელობა հვენ-ზედ ლამაზი ა  
 Eliza čven-zed lamazi a  
 Ելիզան մեզ վրա գեղեցիկ է:

Կովկասյան արչի լեզվով համեմատությունը կատարվում է դարձյալ պարզ ածականով, միայն համեմատելի բառից հետո դրվում է k'ilau բառը, որ համապատասխանում է հայերենի «ավելի» ձևին. օրինակ՝

un daz zon k'ilau  
 դու մեծ ես քան:

Օվկիանյան տահիթի լեզուն անականների մի քանի աստիճանները զանազանելու համար ստեղծել է զանազան մասնիկներ. օրինակ՝ rahi «մեծ» բառի աստիճանները.

rahi ae	մի քիչ ավելի մեծ
„ adu	մի բանի հետ համեմատած ավելի մեծ
„ roa	շատ մեծ
„ roa adu	էլ ավելի մեծ
„ ino	չափազանց, անհամեմատ մեծ:

Աֆրիկյան յաո լեզվով (բանտու) նույն նպատակի համար դնում են na (ne, ni և այլն), որ նշանակում է «հետը» և այստեղ ստանում է «քան» նշանակությունը. ինչպես՝

Mandanda genu gali gamawisi ni gangu  
Ձվերը ձեր թարմ քան իմը:

Մալայան մենտավայ լեզվում անականի համեմատական աստիճանը կազմելու համար դնում են mitya կամ bitya, որ նշանակում է «էլի մի անգամ, մի անգամ էլ», և գործածվում է «իբր, ավելի» նշանակությամբ:

Հնդկական նագա լեզվի լիտա բարբառով բազդատական կազմելու համար դնում են wō «գնացած» բառը. ինչպես՝

Aiyō ni sapō—wō  
Ես դուք բարձրահասակ գնացած  
«Դուք ինձնից բարձրահասակ եք»:

Նոր-Հիբրիդյան (Մելանեզիա) վեսաիսի լեզվում անականները ունեն բազմաթիվ աստիճաններ. օրինակ՝ «լավ» անականից կա ութ աստիճան.

tauver	լավ
tauvera	» միայն ինքը
tauveribus	» ինքնին
tauveragen	շատ լավ
tusauverien	ոչ լավ
tauver-akaku	մի քիչ լավ
tusauveribukien	ոչ շատ լավ
tauveramatig umei	լավ միայնակ:

Նոր-Հիբրիդյան ֆուտուլմա լեզվով անականի աստիճաններն են.

erufie fakasisiana	մի քիչ լավ
" fakasore	շատ լավ
sa	չափազանց լավ
esore	մեծ
esöre	շատ մեծ
esoresu	շատ շատ մեծ
esore tapu	շատ մեծ
esore su tapu	չափազանց մեծ:

Աֆրիկյան պապուաուսյան խմբից կատե լեզուն ունի ածականների համար վեց աստիճան՝ հետևյալ ձևով.

zolicne	երկար
zozolicne	ոչ շատ երկար
zolic zolicne	մի քիչ ավելի երկար
zozozolicne	միայն մի քիչ ավելի երկար
zolilicne	շատ երկար
zolicne zola	շատ (ավելի) երկար:

Ածականի աստիճանները ցույց տալու համար կա նաև dgau նախամասնիկը, որ նշանակում է՝ «ուղիղ, ճիշտ» և mocwâc «էլ ավելի».

dgau — mâtegne	ուղղակի ցուրտ
" — biagne	իսկը գեղեցիկ
" — lokacne	իսկը թույլ
mocwâc kâcdgene	էլ ավելի ուժեղ:

Ե) Բաղդատական կազմելու քերականական ձևերից ամենապարզն է ածականը դնել դրական աստիճանով, իսկ համեմատելի առարկան բացառական հոլովով. այսպես են, օրինակ՝ թուրքերենը, պարսկերենը, լազերենը, աֆղաներենը, արաբերենը, երբայեցերենը, մոնղոլերենը, տուստուգերենը, նաև ուզբո-ֆիննական լեզուները՝ վոզուլ, զիրյեն, վոտյակ, օստյակ, մորդվեն, չերեմիս. օրինակ՝

Թրք. senden böyük, benden küçük «քեզնից մեծ, ինձնից փոքր».

պրս. az in buzug ast «սրանից մեծ է».

բրդ. sirkä baláš ži hingivi šrinter e «քացախ ձրի՝ մեղրից քաղցր է».

աֆղ. spuk la bana «թեթև՝ փետուրից».

լազ. aya ayašen didi ren «սար սրանից մեծ է».

Հինգուստանի՝ lomfi kutte-se čhoči hai

«աղվեսը շն-ից փոքր է».



մոնղոլ. žonó noxoyos léxe *գոյալն շնից մեծ (է)»*.  
 տուրքուզ. seget sülakiduk tamaši *սամուլըը աղվեսից  
 թանկագին (է)»*.

մորզվ. alašada taza *աձիուց ուժեղ»*.

զիրյ. meys' vulun *սինձնից բարձր»*.

Կորեական լեզուն էլ չունի ածականի բաղդատական աս-  
 տիճանի համար առանձին ձև, և այդ նպատակով օգտագործվում  
 է բացառական հոլովը. օրինակ՝

I sur - can i ca - wan-isya kuntai  
 Այս գինու բաժակը այս թեյի բաժակից մեծ (է).

օստյակ. tau sagariwet keres  
 ձին կովից մեծ (է):

Կարելի է նաև դնել օՏ «ավելի» բառը.

Tem ai tem os ai  
 Սա փոքր (է) սա ավելի փոքր (է):

Գերադրականի համար՝ patlâgīwet *բերուրից»*:

Մունդա խմբից կոլի լեզվում բաղդատական աստիճան կազ-  
 մելու համար ոչ մի մասնիկ չկա. գոյակաւը բացառական հոլո-  
 վով է դրվում, և այդ բավական է:

Տիրեթերենում բաղդատական աստիճանի համար առանձին  
 մասնիկ չկա. բացառական հոլովը, որ կազմվում է՝ las հետա-  
 դրությամբ, բավական է. ինչպես՝

Bdag - las khyod čeho  
 Ինձ - նից դու մեծ (ես).

զ) Դրական աստիճանի վրա կարելի է ավելացնել «ավելի»  
 բառը. իսկ համեմատելի առարկան կարող է մնալ ուղղական,  
 կարող է լինել դարձյալ բացառական հոլովով. այսպես՝ եթե  
 ասեինք՝ սա մեծ է, նա ավելի մեծ է: Այսպես է չինարենում.

Ce<sup>4</sup>-ko kao<sup>1</sup> na<sup>4</sup>-ko kəng<sup>4</sup> kao<sup>1</sup>  
 Սա մեծ (է) նա ավելի մեծ:

Բացառականի ձևով են՝ օրինակ՝ թրք. o senden daha  
 böyük, sen benden daha küçük *եսա քեզնից ավելի մեծ, դու  
 ինձնից ավելի փոքր»*:

կազ. aya ayašen dido (կամ op'ša) didi ren *սա սրանից  
 ավելի մեծ է»*. կամ՝

aya ayašen daha (կամ daa) skūa ren *սա սրանից ավելի  
 դեղեցիկ է»*.

իտալ. più grande del mio (սեռ.) libro  
հին ֆրանս. il est plus grand de moi.

է) Համեմատելի առարկան փոխանակ բացառական հոլով գրվելու, ստանում է համեմատության եզր ջուլյց ազոզ մի նախդիր. գրական ածականը կարող է ստանալ և ավելի բառ. այսպես են նորալատին լեզուները, ինչպես՝ պորտ. mais honitos que... ավելի սիրուն քան...

Ֆրանս. cheval est plus grand que l'âne Եձին էշից մեծ է.  
իտալ. il sole è più grande ce la luna Եարևը ավելի մեծ է քան լուսինը.

ռուս. mai plăcut Եավելի հաճելի՝ դուրեկան:

Այս ձևն ունեն նաև ամերիկյան և աֆրիկյան զանազան լեզուներ՝ ինչպես ամերիկյան կարիբի ընտանիքից կիպես և ձուբուկուա լեզուները, որոնք ածականը պահում են դրական աստիճանով և միայն համեմատելի առարկայի վրա դնում են bo Եքան նախդիրը, բայց կարող են նաև դրականի վրա դնել mui-mañ Եավելի բառ. ինչպես՝

կիպես լեզվով.

He-chi era tupa bo s-era ware

Աստուա տունը բարձր (է) քան տուն քահանայի.

Ձուբուկուա լեզվով՝

Ârodse-kie-bo ipadzu bo di-nura

Ծեր չէ հայրը քան որդին (=հայրը ավելի ծեր չէ քան իր որդին).

Mulmañê i-cangri i-bo

Ավելի լավ է քան նա:

ը) Այս սովորական ձևերից դուրս կլինեն նաև մի քանի անսովոր ձևեր, որոնք յուրահատուկ են այս կամ այն լեզվին միայն: Օրինակ՝ ջավայերենում բաղդատական աստիճան կազմելու համար ածականը դնում են գոյականից առաջ, մինչդեռ այդ լեզվի մեջ ըստ ընդհանուր կանոնի ածականը գոյականից հետո պիտի գրվեր:

Օրինակ՝ hagəng kapal kulā

մեծ ձի իմ

որ նշանակում է իմ ձին ավելի մեծ է:

Մալայան պլե-տեմեր լեզվում բաղդատականը կազմվում է merin բառով, որ նշանակում է լավ, ինչպես՝ cəkei Վսոշոր,

cəkei merln *եավելի խոշոր», բուն՝ «լավ խոշոր»։ Ուզրո-Ֆիննական ընտանիքի ուղմուրտ՝ (վոթիրեն) լեզվի մեջ կանոն կա, որ եթե գոյականը իբր ածական գործածվի, չի կարող համեմատական աստիճան ընդունել։*

Սուդանական շիլուկ լեզվի մեջ ածականը համեմատական աստիճան չունի. հասարակ ձևով ասում են. սա մեծ է, սա մեծ չէ, կամ քիչ մեծ է։ Իսկ եթե ուզենան ածականի իմաստը ավելացնել, ապա ա) ածականի ձայնավորը կերկարեն, բ) կամ տոնը կրարձարացնեն, գ) կամ այս երկուսը միասին կգործադրեն, գ) կամ ածականը կկրկնեն, ե) կամ ածականի վրա կդնեն ma նախգիրը, ինչպես՝ duon «մեծ», maduon «շատ մեծ», kwāro «կարմիր», makwāro «շատ կարմիր», mæt «քաղցր», mamet «շատ քաղցր», զ) վերջապես դնում են զանազան սաստկացուցիչ բառեր. այն է՝ rač «վատ, դեշտ», wok «դուրս», čar «շատ, հույժ», xodo «զերազանցել»։ օրինակ՝ rač kidoč «վատ լավ, այսինքն՝ շատ լավ»։

Ավստրալիայի ավարակալ լեզուն ածականը կրկնելով, «շատ» գաղափարն է արտահայտում. օրինակ՝

murrarag	լավ	murrarag-murrarag	շատ լավ
kauwal	մեծ	kauwal — kauwal	շատ մեծ։

Բաղդատական կազմելու համար ածականներից մեկը կըրկնում են վերի ձևով, իսկ մյուսը հակադրում նրան՝ հետևյալ ձևով.

Kekal-kei unni	kauwal-kauwal	keawai unnoa
Քաղցր	այս շատ մեծ	ոչ այն=

սա նրանից քաղցր է։

Սիամերեն լեզվով շատ հաճախ ածականը կրկնվում է իմաստի սաստկութունն արտահայտելու համար. ինչպես՝ թեթև թեթև=շատ թեթև։

Աֆրիկյան ջազգա լեզվով համեմատական աստիճանը կազմվում է կրկնությամբ. ինչպես՝ ndžia ndžifui-fui «ավելի կարճ ճանապարհ», k'idi k'ileše-leše «փայտի ավելի երկար կտոր»։

Բիրմաներենում ածականի համեմատության ցածր աստիճանը կազմվում է կրկնությամբ. օրինակ՝

khyo	քաղցր	khyokhyo	քաղցրավուն
kha	դառն	khakha	դառնավուն։

Բաղդատական աստիճանը կազմելու համար դնում են t'a «զերազանցել», t'a rwe «զերազանցել քան», lwon «զերազան»։

ցել», Iwon rwe «գերազանցել քան» բառերը: Երբ ասվում է «այս մարդը գերազանցում է և լավ է», դա նշանակում է «այս մարդը նրանից լավ է»:

Գերադրականը կազմում են ɕun (ցուն) մասնիկով, որ բուն նշ. «վերջ, կատար»։ Ինչպես՝ koung ɕun ամենալավ:

Կարելի է նաև գոյականի վրա դնել ածականը՝ կրկնությամբ և գոյականի ու ածականի միջև դնելով t'au Իբր հոդակապ. Ինչպես՝

koung-koung t'au-t'au ամենալավ անձը:

Կամ նաև tay «նշմարիտ» և rwe «գերազանցել» բառերով. tay-koung-t'au-t'au կամ tay-rwe-koung-t'au-t'au ամենալավ մարդը:

Շատ հետաքրքիր է ջավայերենը, որ բաղդատականի իմաստն արտահայտում է երկու գոյականի միջև դնելով «և» շաղկապը (kalih, sartā, təkā և այլն). Ինչպես՝

ɕuwung bibrah kalih wahos

դաշույն փչացած և նիզակ=

դաշույնը ավելի ֆլասաված է քան նիզակը:

Աֆրիկյան սարա լեզվով ածականի բաղդատական աստիճանը կազմվում է սովորական ածականի կրկնությամբ. օրինակ՝ aŋga «մեծ» բառից՝

Sunda Mara aŋga, Sunda ma aŋga aŋga

Ձի Մարայի(ի) մեծ (է), ձի իմ մեծագույն(է)

(Իմ ձին Մարայի ձիուց ավելի մեծ է):

Այս ձևով է նաև գերադրականը.

Nyel-ge nyele, bele nyele nyele

Թռչուն-ք գեղեցիկ, թութակ գեղեցիկ գեղեցիկ

«Թութակը թռչուններից ամենագեղեցիկն է»:

Ավստրալիայի բնիկների լեզվով ածականի բաղդատական աստիճանը կազմվում է ավելացնելով -intyerla մասնիկը. Ինչպես՝

karra բարձր karraintyerja ավելի բարձր

yakki խոր yakkintyerla ավելի խոր

Մալայա-Պոլինեզյան բոնտոկ իգորոտ լեզվի մեջ բաղդատական աստիճանը կազմվում է ածականի կրճատ կրկնությամբ. Ինչպես՝

ančo բարձր, anančo ավելի բարձր

amamaak ավելի ծեր

ongongaak ավելի երիտասարդ

napalidpalid ավելի սուր:

Դրավիդյան տուլու լեզվով համեմատական, ինչպես և դերադրական աստիճանը կազմվում են տրականով կամ ներգոյականով, ինչպես՝ իմ ձիուն քո ձին մեծ է (քո ձին իմ ձիուց մեծ է), բոլոր ձիերում իմ ձին մեծ է (իմ ձին բոլոր ձիերից մեծ է): Դրավիդյան կուրուի լեզվումն էլ խնդիրը կարող է դրվել ներգոյական հոլովով. օրինակ՝ իր եղբայրների մեջ մեծը սա է:

Հրո Երկրի Օնա-շելկնամ լեզվի մեջ ածականի բաղադատական աստիճանը կազմելու համար ածականի վրա դնում են kar «շատ» բառը. ինչպես՝

Pená	telk	tulolčen,	kamer	kar
Այս	տղայքը	լավ (են),	նրանք	շատ (ավելի)
		tulolčen		
		լավ (են):		

Գերադրական կազմելու համար էլ kar բառը ավելի ուժեղ են հնչում, իրր k'ar և k' հնչյուննի պայթեցման ուժգնության համեմատությամբ բաղադատության աստիճանն էլ ավելանում է. ծայրահեղ աստիճանին աչքերը փակում են և գլուխը կռացնում:

թ) Ածականը ինքը ստանում է որոշ ձև, որ կազմվում է որևէ մասնիկի կցումով: Բնականաբար մասնիկը կարող է կցվել բառի սկզբից, կամ վերջից (օրինակ հյ. մեծագույն), և կամ սկզբից ու վերջից միաժամանակ. այսպես է վրացերենում, ուր ածականը բաղադատականի վերածվելու համար ստանում է ս նախա-մասնիկը և es հետամասնիկը. օրինակ՝

მშვენიერი	mšvenieri	«գեղեցիկ»
უმშვენიერესი	umšvenieresi	«ավելի գեղեցիկ»:

Ամերիկյան տիմուկվա լեզվով բաղադատականը կազմվում է ko մասնիկով, որ միևնույն ժամանակ կազմում է գոյականի առավելական ձևը, իսկ կրկնվելով վերածվում է գերադրականի. օրինակ՝

tiko	նավակ	tikoko	մեծ նավակ
tera	լավ	terako	լավագույն
		terakoko	շատ լավ:

Գիրգիզական լեզվով ածականի բաղադատական աստիճանը կազմելու համար ավելացնում են-raq,-reka մասնիկները, որոնց համապատասխան ձևերը կան ուրիշ թուրք-թաթարական լեզուների մեջ:

Ուլգուր լեզվով էլ ունենք՝

yaxši	լավ	yaxšraq	ավելի լավ
arzan	էժան	arzanraq	ավելի էժան
kičik	փոքր	kičikraq	» փոքր:

Նույնը կա նաև չուվաշերեն՝ *rax* ձևով. օրինակ՝

<i>āšā-rax</i>	ավելի տաք
<i>yāvap-ta-rax</i>	ավելի ծանր:

Ղազախերեն լեզվով՝ *rak*, *rek* ինչպես՝

*ǰaksə* լավ, *ǰaksərak* ավելի լավ:

Բաշկիրերեն լեզվում համեմատականի մասնիկն է *raq* կամ *rāk*. ինչպես՝

<i>qəðələraq</i>	ավելի կարմիր
<i>qararaq</i>	ավելի սև:

Կումուլերեն լեզվով նույն մասնիկը լինում է *rak*, *rek* «մի քիչ ավելի» ինչպես՝

<i>alašarak</i>	մի քիչ ցած
<i>tengrek</i>	ավելի հարթ:

Շոռ լեզվով՝ *araq*. ինչպես՝

*qizil-araq* կարմրորակ:

Ուզբո-ֆիննական ընտանիքի վեպս կամ չուզ լեզվում բաղդատականը կազմվում է *-emh* վերջավորությամբ. օրինակ՝ *vanh* «ծեր», *vanhemb* «ծերագույն», *puhtas* «մաքուր», *puhtasemb* «ավելի մաքուր»:

Նույն ընտանիքի կոմի-պերմերեն լեզվով բաղդատականը կազմվում է *-žek* մասնիկով. ինչպես՝ *lunsa kuržek oy* «ցերեկները երկարագույն են գիշերվանից»:

Կան լեզուներ, որոնց մեջ բաղդատական աստիճան ընդունում են ոչ միայն ածականները, այլև ուրիշ խոսքի մասեր: Այսպես, չուվաշերենում բաղդատական կարող են դառնալ գոյականը, բայը, մակբայը, կամ նախդրությունը. այս պարագային բառը կարող է ստանալ հոլովական մասնիկներ. ինչպես՝ *korāk* «խոտ», *korāk-rax* «ավելի խոտ» (ավելի խոտանման, խոտավուն), *šala* «ներս», *šala-rax* «ներսագույն», է՛լ ավելի ներս», *uy* «դաշտ», *uya-rax* «դաշտի մեջ ավելի հեռուն», *ayalta* «վար», *ayalta-rax* «ավելի վար», *ayaltaraxra* «դեպի ավելի վար», *ayaltaraxran* «է՛լ ավելի վարից», *vesʹentven* «նրա ծայրից», *vesʹ-entʹenrexren* «նրա է՛լ ավելի ծայրից» (այն է՛ ծայրին ավելի մոտիկ եղող տեղից), *sta* «ձև», *staraxra* «ձև» (ձր տեղին

ավելի մոտիկ), kunta «այստեղ», kuntarax «այստեղին ավելի մոտիկ (իբր թե՛ աստագույն, այսրագույն), vātan «ամաչել», vātanarax «ավելի ամաչելով», tar «կանգնել», tararax «մի քիչ կանգնելով»:

Ուզրո-Ֆիննական լեզուների մեջ բաղդատականի մասնիկ կարող են ստանալ նաև գոյականներն ու մակբայները. օրինակ՝ հունգ. rōkà «աղվես», rōkābb «աղվեսագույն» (իմա՝ շատ խորամանկ):

Ֆինն. ranta եզերք rannempa-na եզերքին ավելի մոտիկ  
հունգ. kőzäl մոտ kőzä:ilab ավելի մոտ

Ֆինն. tuonne այնտեղ tuonnempa է՛լ ավելի այնտեղ գըտ-  
նըվող:

Զիրյեներեն լեզվում էլ ոչ միայն ածականը կարող է ստանալ համեմատական աստիճան, այլև մակբայը և գոյականի հոլովները. օրինակ՝ ավելի դեպի եզերքը, ավելի հեռավորության մեջ և այլն:

Առավելագույնի հակառակ է նվազակամ բաղդատական աստիճանը. մի առարկա կարող է մի ուրիշի համեմատությամբ լինել պակաս որակով. այս վիճակը կարելի է բացատրել «նվազ, պակաս, քիչ» և այլ բառերով. ինչպես՝

Ֆրանս. mon cheval est moins noir que le vôtre  
իմ ձին է պակաս սև քան ձերը:

Թե առավելականը, և թե նվազականը կարող են ունենալ դանազան աստիճաններ, որոնք բացատրվում են «քիչ, մի քիչ, բավական, շատ» և այլ բառերով. օրինակ՝ քիչ հաստ է, մի քիչ հաստ է, բավական հաստ է, մի քիչ ավելի հաստ է, է՛լ ավելի հաստ է, բավական ավելի հաստ է, շատ հաստ է, շատ ավելի հաստ է և այլն:

Մի քիչ նույն է ինչ որ ֆրանս. un peu, իտալ. un poco, թուրք. bir az, պրս. yek kem, գերմ. ein wenig, անգլ. a few և այլն, և ներկայացնում է ավելի տկար աստիճան քան քիչ համտ. քիչ հաստ է. — այո, մի քիչ հաստ է:

Նույն բառերը կարելի է դնել նաև նվազական բաղդատականի վրա. ինչպես՝ քիչ պակաս հաստ է, մի քիչ պակաս հաստ է, բավական պակաս հաստ է, շատ պակաս հաստ է և այլն:

Ինչպես առավելական, նույնպես և նվազական աստիճանի համար՝ լեզուները, բացի վերոհիշյալ սովորական դարձվածներից:

կարող են ներկայացնել նաև առանձին մասնիկներ, որոնք կըցվելով ածականին՝ տալիս են նրան թեթև աստիճան. օրինակ՝

Թուրքերենի մեջ կան յօզ, յաջօզ, rek (rak), msə, թաթարերեն՝ su, simal, շիդեմ, չուվաշ. rax, rex մասնիկները. ինչպես՝ թուրք. daraջօզ *տնեղլիկ*, ajəmsə *գրանավուն*, tatləmsə *քաղցրավուն*, soujaq, soujajak *պաղուն*, eskirek *հնագուն*, alðak-rak *սցածրագուն*, թթր. kizil-su կամ kizil-simal *կարմրորակ*, sarə *գրեղին*, sarշիդեմ *գրեղնավուն*։

Պարսկերենի մեջ ունենք -ak *-իկ* նվազական մասնիկը, որ կցվում է բաղդատական աստիճանի վրա, ինչպես՝ bih *լավ*, bihter *լավագուն*, bihterek *ամի քիչ ավելի լավ*, xoš *լավ*, քաղցր, xošter *լավագուն*, xošterek *ոչ այնչափ լավագուն*, pišter և pišterek *առաջագուն*։

Վրացերենի մեջ ունենք մո (mo) նախամասնիկը. օրինակ՝ մոծոծոծո (modidro) *բավական մեծ*, մոտոցոտո (mothethro) *բավական սպիտակ*։

Ռուսերենի մեջ ունենք по- նախամասնիկով կամ -енкий, -оватый հետամասնիկներով կազմված ձևեր. ինչպես՝ похуже *ամի քիչ ավելի վատ*, поранше *ամի քիչ ավելի շուտ*, беловатый *սպիտակավուն*, беленкий *ճերմակիկ*, простенький *պարզուկ*։ Սրանց հետ համեմատել՝ լեհերեն -awy մասնիկով կազմված ածականները. ինչպես՝

czarnawy	սևագուն
sfodkowy	քաղցրավուն։

Լեթթերենում ածականի և նրա առավելական մասնիկի միջև դրվում է in նվազականը. ինչպես՝ mass *փոքր*, masinaks *ամի քիչ ավելի փոքր*, փոքրավուն։

Գերմաներենի մեջ ունենք lich, ֆրանսերենի մեջ՝ -âtre մասնիկներով կազմված ձևեր. ինչպես՝

գերմ. schwarzlich	սևավուն	susslich	քաղցրավուն
ֆր. blanchâtre	ճերմակավուն	rougâtre	կարմրավուն

և այլն։

Նկատելի է, որ այս կարգի բառերը, երբ առանձին են գործածվում, նշանակում են որակի փոքր կամ պակաս աստիճանը, իսկ երբ համեմատություն են դրված մի ուրիշի հետ, ընդհանուրապես, նշանակում են նրանից մի քիչ ավելի. օրինակ՝ կապտավուն նշանակում է՝ *ամի քիչ կապույտ*, իսկ՝ *սա նրանից կապտավուն է* =



«սա նրանից մի քիչ ավելի կապույտ է» կամ «բավական կապույտ է»: *Саша* այս *по-* նախամասնիկը, որ ուսուցանում նվազական է, բուլղարերենում սովորական բաղադատական մասնիկ է. *ինչպես՝ добъръ* «լավ», *по-добъръ* «լավագույն», *Дунавъ е по-широк от Янтра* «Դանուբը Յանտրից լայն է»:

Առավելական և նվազական աստիճանների միջինն է հավասարության բաղադատականը, սր կարելի է մի բառով կոչել հավասարակամ (*aquativ*). մի առարկա մի ուրիշի համեմատությամբ լինում է նրան հավասար. այս վիճակը սովորաբար արտահայտվում է «այնքան, նույնքան» բառերով. *ինչպես՝*

Ֆրանս. *mon cheval est aussi noir que le votre*  
իմ ձին է այնքան սև որքան ձերը:

Կան լեզուներ, որ այստեղ էլ հնարել են առանձին ձև. այսպես, օրինակ՝ հին իսլանդերենում՝

*dian* «շտապ», *deinithir* «այնքան շտապ, որքան»:

Բաղադատականի կազմության վերը հիշված բոլոր (ա-ը) ձևերից ութը ներկայացնում են համեմատական աստիճանի կազմության այն վիճակը, երբ համեմատությունն արտահայտվում է նկարագրական ձևով: Բաղադատականի բուն քերականական ձևն է վերջինը (ը), որ և իրապես կոչվում է ածականի բաղադատական աստիճան:

Հնդեվրոպական լեզուները ներկայանում են մեզ այս վերջին վիճակի մեջ. այստեղ բաղադատականը կազմվում է հետևյալ մասնիկներով.

ա) —\*yes-, որի ձայնդարձն է -yōs. երկուսն էլ նաև -īyes-, -īyos ձևով. ստորին ձայնդարձը՝ -is, որի վրա ավելանում է նաև -e/on երկրորդական մասնիկը՝ թեք հոլոֆերում:

բ) -tero-, ձայնդարձը՝ *toro*, -tro—. օրինակ՝ \**newoteros* «նորագույն», \**senoteros* «հնագույն»:

Ցեղակից լեզուները պահել են այս երկու մասնիկներից մեկը՝ կամ մյուսը և կամ երկուսն էլ միաժամանակ. այսպես՝ սանսկրիտը և հունարենը ունեն կրկին ձևերը, լատինն ու զենդերենը միայն առաջին ձևը, պարսկերենը, իր հետ նաև բելուջերենը՝ միայն երկրորդ ձևը և այլն:

Առաջին ձևը պահելու դեպքում էլ լեզուներից ոմանք ընդհանրացրել են ուղ-հայցականի *yes* ձևը՝ բոլոր հոլոֆերի մեջ (այսպես են արիականը և լատինը), մյուսները ընդհանրացրել

են թեք հոլովների is- e/0n ձևը (այսպես են գերմանականը և հունյ բարբառների մեծագույն մասը). ատտիկյան հունարենը պահում է նախնական վիճակը, այն է՝ ուղիղ հոլովների մեջ yes, թեք հոլովների մեջ՝ e/0n-ով աճած ձևը, Այսպես՝ ունենք ուրեմն՝ սանս.-yas, -iyas-, զնդ.-yah-, հն. Իա, Լա. Իor, գոթ.-iz-an, լիտ. ės-nis:

Սանս. nav-yas «նորագույն» vas-yas «լավագույն», vár-iyas «լայնագույն», dáv-īyas «հեռագույն», svād-īuas «քաղցրագույն» (սեռ. svādiyāsas), máhi-yas «մեծագույն»:

Ղնդ. vanh-yah «լավագույն», nazd-yah- «ավելի մոտիկ», mazyah «մեծագույն»:

Հն. ἤδιον «քաղցրագույն» (հյգ. ἡδιῶ սեռ. ἡδιῶνος), χαλ-λιῶν «գեղեցկագույն»:

Հուլ. bol-je «մեծագույն», nove-jī (սեռ. Ijša) «ավելի նոր»:

Իոլ՝ māo «մեծագույն» (\*mō-yōs):

Լատ. suāu-ior «քաղցրագույն» (սեռ. suāuiōris), sen-ior «ծերագույն», nov-ior «նորագույն», maior «մեծագույն» (<\*mag-yōs):

Գոթ. hard-iz-an «կարծրագույն» = գերմ. hart-er = անգլ. er, ինչպես՝ longer «ավելի երկար»:

Լիտ. saldėnis (\*sald-yes-ni), «քաղցրագույն»:

Երկրորդը դառնում է՝ սանս. զնդ. tara-, պհլ. պրս.-tar, հն. -τερο-, ինչպես՝

Սանս. mahat-tara «մեծագույն», guru-tara «ծանրագույն», kṛṣṇa-tara «գորշագույն», amā-tara «հմագույն», ավելի հում»:

Ղնդ. aka-tara «ավելի վատ», hubaoiditara «ավելի անուշահոտ»:

Պհլ. vehtar «լավագույն», vadtar «վատթար», bālātār «բարձրագույն»:

Պրս. mih-tar «մեծագույն», bih-tar «լավագույն», bad-tar «վատագույն»:

Բելուջ. šar-tir «լավագույն»:

Օսս. ŋrs-tār «սպիտակագույն», sau-dār «սևագույն»:

Հն. ἡδύ-τερος «քաղցրագույն» ὠμό-τερος «հմագույն», ավելի հում», νεώτερος «նորագույն»:

Հյուս.	spakr	խելոք	spakare	ավելի խելոք
Հնորմ.	nāenn	մոտիկ	nānare	ավելի մոտիկ

Հնորվ.	heilagr	սուրբ	helgare	սրբագույն
Նորվ.	flink	ճարպիկ	flinkere	ավելի ճարպիկ:

Կրկին մասնիկներից հնագույնը առաջինն է, որ կցվում էր ոչ թե դրական ածականի, այլ անմիջապես արմատի վրա. այսպես՝ սանս. nāv-yas «նորագույն» կազմված է ոչ թե nava «նոր» ածականից, այլ nav-արմատականից. հն. 𐎡𐎠𐎢𐎠𐎠 «քաղցրագույն» կազմված է ոչ թե 𐎡𐎠𐎢 «քաղցր» ածականից, այլ 𐎡𐎠-մատից:

Ածականի բաղդատական աստիճանը հին բարձր գերմաներենում ունի ir և ðr մասնիկները, որոնց համապատասխանում են գոթ.-iz և ðz. սրանց գործածության համար ստույգ կանոն չկա. օրինակ՝

engi-engiro  
hōh-hōhiro, hōhōro  
reht-rehtiro, rehtōro  
heiz-heiziro  
slēht-slēhtiro  
lang-lengiro և այլն:

Լատիշերենի մեջ բաղդատական աստիճանը կազմվում է ար. āks, իգ. āka ձևով. օրինակ՝ labas «լավ», labaks «ավելի լավ», իսկ իգ. laba, որից՝ labaka իգ. «ավելի լավ»:

Սրանից հետևում է, որ նախապես այս ձևերը ոչ թե իրապես բաղդատական էին, այլ սաստկական. այսպես՝ վեդ. yāy-īyas-նշանակում է «շատ լավ զոհաբերող»: Այս պատճառով էլ թե՛ սանսկրիտի, և թե՛ հունարենի մեջ այս մասնիկով կազմված բաղդատականները կազմությամբ անկանոն և թվով էլ սահմանափակ են. չի կարելի ամեն մի ածականի կամ արմատի վրա նույն մասնիկը ավելացնելով՝ բաղդատական աստիճան կազմել: Սանսկրիտի մեջ կան նույնիսկ այնպիսի բաղդատականներ, որոնց դրականը կորել է կամ բնավ գոյություն չի ունեցել մեզ ավանդված շրջանում. այսպես՝ çreyān «լավագույն», jyāyān «մեծագույն, երիցագույն» և այլն: Այսպիսի ֆոնոլոգիաներ են նաև պրս. bih (<պհլ. veh, զնդ. vahyah) «լավ», kih (<պհլ. kēh < kēs, զնդ. kasyah) «փոքր», mih (<պհլ. mēh, mēs, զնդ. masyah) «մեծ»:

Երկրորդ մասնիկը՝-tero-կազմված է to+ero մասնիկներից և նախապես ցույց էր տալիս երկու առարկաների հակադրու-

թյունը. այսպես՝ \*uperos «այն որ վերն է գտնվում և ոչ՝ վարը», \*ndheros «որ վարն է գտնվում և ոչ՝ վերը». հմմտ. սանս. aṣvata-  
tara «շորի», այսինքն՝ մի այնպիսի անասուն, որ նման է ձիու  
և հակադրվում է նրան, հն. ὄρεο-τερο-ς «լեռնային» (այսինքն՝  
հակադրություն դաշտավայրի), լատ. mater-tera «մորաքույր»  
(այսինքն՝ այն կինը, որ հակադրվում է մորը) և այլն: Երկու  
առարկաների հակադրության, կամ որ նույն է՝ համեմատության  
գաղափարն է, որ հետո մասնիկը վերածեց բաղդատականի:

Կան նույնիսկ բառեր, որոնք երկու անգամ են մասնիկ  
ստացել (yes-և tero-). օր. զնդ. vairyastāra, հն. αριστερόσ, լատ.  
sinister, հբգ. winistar (բույսերն էլ նշանակում են «ձախ» և ստա-  
ցել են բաղդ. yas, is + գերադ. tero մասնիկները). սանս. crestha-  
aras «ավելի գերազանց», հն. ὑπερτερό-τεροσ «ավելի վերագույն»,  
լատ. inter-ior «ներքին», գոթ. aūhumists «բարձրագույն»:

## 2. ԲԱՂԴԱՏԱԿԱՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒԾ

Հայերենի մեջ, ճիշտ նման աֆղաներենի, ոչ -yes-մասնիկն է  
պահված, և ոչ էլ-tero-վերջինիս ներկայացուցիչներն են հյ. ըն-  
դերք = հն. ἐντερον, որ կազմված է նույն մասնիկով, և իրանյան  
-tar ձևը անցած հայերենի -թար ձևով՝ -վաթար «ավելի վատ»  
բառի մեջ, բայց այս էլ ոչ թե հայերենում անկախաբար կազ-  
մված մի ձև է, այլ ամբողջությամբ փոխառյալ իրանյանից (պհլ.  
vattar, պազենդ. vadtar, պրս. badtar). ուրիշ խոսքով՝ թար իրա-  
նյան մասնիկը իբրև առանձին բաղդատականի մասնիկ հայոց  
մեջ գոյություն չի ունեցել, և հայերը նույնիսկ գիտակցու-  
թյուն չեն ունեցել, թե վաթար համեմատական աստիճան է,  
որի համար էլ կազմել են վաթարագույն բաղդատականը: Նոր  
ժամանակի բառ է քալանթար «գյուղապետ», որ պրս. kalāntar  
բառն է, որը kalān «մեծ» բառի բաղդատականն է:

Գրաբարի մեջ բաղդատականը կազմվում է դրականի վրա  
ավելացնելով -ա-գոյն մասնիկը. համեմատելի առարկան ստա-  
նում է քան նախադրությունը՝ հայցական հոլովով. օրինակ՝

Որոց իբրև լուսից է իմաստունն իմաստնագոյն լիցի. Ա-  
ռակ., Ա, 5.

Զի՞նչ հզորագոյն քան զառեծ.

Որ զկնի իմ գայ, հզորագոյն է քան զիս.

Զի՞նչ վատթարագոյն քան զլուռն և զմուկն կայցէ. Եզն.

Այս քան գայն յոլովագոյն էր. Ոսկ. մ. ա. 15.

Ոչինչ տկարագոյն է սորա անձնիշխանութիւնս քան զնորայն. Եզն.

Տեսանիցէ զերեսս ձեր արտմագոյնս քան զայլոց մանկանցն. Դան. ա, 10.

Գեղեցկագոյն է նա քան զարեգակն. Իմ. է. 29.

(Զօր բառից ունենք՝ զօրագոյն, իսկ վաղ մակրայից՝ վաղագոյն).

Հայանի չէ, թե այս գոյն մասնիկը կապ ունի՞ գոյն ճեբանդ՝ բառի հետ, որ պարսկական փոխառութիւն է. պատահական և այն էլ ոչ ամբողջական նմանութիւն ունի բասկերենի go մասնիկը, որ կազմում է բաղդատական աստիճան. ինչպես՝ ederragu «գեղեցիկ», ederrago «գեղեցկագույն», otz «ցուրտ», otzago «ցրտագույն».

Գրաբարում -գոյն մասնիկով կազմված այս ձևի հետ միասին գործածական էր նաև պարզ դրական ձևը՝ քան նախադրությամբ, որ այս պարագային տալիս էր նրան բաղդատականի արժեք. ինչպես՝ Ոչ է ծառայ մեծ քուն զտէր իւր և ոչ առաքեալ՝ մեծ քան զայն որ առաքեացն զնա՝ Յճ. ԺԴ, 16. Եղբայրս դորա կրտսեր՝ եղիցի մեծ քան զդա. Մեծ ևս ինչ ուրախութիւն քան զայս ոչ ունիմ:

Ապացուցելու համար, թե պարզ դրականը ոչնչով պակաս չէր բաղդատական ձևից, բավական է հիշել հետևյալ օրինակը. Յայնժամ երթայ և առնու ընդ իւր եւթն այլ այսս չարագոյնս քան զինքն և մտեալ բնակէ անդ. և լինի յետինն՝ մարդոյն այնորիկ չար քան զառաջինն. Մտթ. ԺԲ. 45:

Միջին դարում երկու ձևերը կողք կողքի գործածվում էին. բայց թվում է, թե -գոյն վերջավորությամբ բաղդատականները ավելի վերամբարձ էին, իսկ քան նախադրությամբ ձևերը ավելի պարզ ու սովորական. Այսպես, օրինակ, Եղիշեն գրում է. Մեծ ոմն զինքն կարծեր քան զքնութիւն հայրենի կարգին. մինչդեռ ճամարտակ հեղինակները երևան են բերում ավելի -գոյն մասնիկով ձևեր. ինչպես՝ մեծարուսագոյն, մեծածայնագոյն, մեծամասնագոյն, մեծաղանագոյն, մեծավայելչագոյն, մեծառնագոյն և այլն և այլն:

Միջին կամ հիլիկյան հայերենում -գոյն մասնիկը վերացավ և նրա փոխարեն դրվեց այլ «ավելի» մակրայը՝ դրական ածականի վրա. իսկ համեմատելի բառը ստանում է քան, քանց նախադրութիւնը. օրինակ՝ Ես այլ հին եմ ճես ավելի հին եմ», այլ կանուխ, այլ մեծ, այլ աղէկ, այլ զօրաւոր, այլ թանձր,

այլ թեթե, այլ ծանդր, այլ ուժով, այլ սուր, այլ սպիտակ, այլ պակաս, այլ ավելի, այլ շոտաով, այլ յառաջ, այլ ի յետոյ, այլ շատ, այլ կարճ, այլ յուշ, այլ անուշ, այլ աւագ քավելի մեծ», այլ խիստ, այլ հարուստ, այլ ցած:

Եթե ոք տուն վարձէ տարոյ և կամ ամսոյ պոննով, և վարձ-վորն այլ կանուխ ուզենայ որ ելնէ.

Իմ սիրելին այլ հին է քան զայլ անսիրովորացդ.

Քան զիւր զինին այլ ազէկ.

Քանց ոսմորչեքն այլ իրք չտան.

Արդի բարբառները -գույն սասնիկով բաղդատականները իսպառ ջնջել են և բաղդատականի համար գործ են ածում հետե-վյալ ձևերն ու մասնիկները.

ա. Ածականը գրվում է դրական աստիճանով, իսկ համեմատելի առարկան գրվում է բացառական հոլովով. ինչպես՝

Երև. էս տունը էն տնից մէծ ա.

Ղրբ. էս տունը էն տնան մըէծծ ա.

Մզր. ոս տունը ան տընէն մօծ ա.

Ազլ. հօկ տունը հօկ մուլնից միծ ա «այս տունը նրանից մեծ է».

Ջդ. էս տղէն էն տղից մեծ ա.

Պլ. աս տունը ան տունէն մէնձ է.

Մրզ. էտ տունա էն տունէն ճուշ ր: էս տորմէն ճուշը.

Ննխ. աս տունը ան տունէն մեծ է.

Վն. էսա տուն էնա տնից մէծ ի.

Համշ. իսա տունը րն տընըն մէձ ա.

Իմաստի սաստկացման համար կարելի է ավելացնել ածա-կանի վրա ալ, ավելի կամ դաճա, իսկ ավելի սաստկաց-նելու համար ալ ավելի ձևը (չի գործածվում ալ դաճա). օրինակ՝

Իսա տունը րն տընըն ավելի մէձ ա.

» » » » ալ » »

» » » » դահա » »

Իսա տունը րն տընըն ալ ավելի մեծ ա:

Սվեդիայի բարբառում ածականի բաղդատական աստիճանը կազմելու համար նույնպես բավական է համեմատելի առարկան դնել բացառական հոլովով. ինչպես՝ Գօնը դուգյտնին մինձ է քտունը խանութից մեծ է»:

Լիւր դոփին բ'ունձ'ը է շինը բլուրից բարձր է՝  
 Համեմատությունը ավելի ցայտուն զարձնելու համար կարելի է ածականի վրա ավելացնել ավիլա կամ դաճա, զրեա բառը. ինչպես՝

Դօնը դուգյունին տվիլա (դահա, դըհա) մինձ է,

Լիւր դոփին տվիլա (դահա, դըհա) բունձը է.

Բարբառիս մեջ ավելի սովորական է հին հայերենի քան գ-  
 >քանրգ ձևը. ինչպես՝

Իս քունրգ քէ մինձ իմ (= իս քինն մինձ իմ).

Իս քունրգ քե ավիլա (դահա, դըհա) մինձ իմ ես քեզանից ավելի մեծ եմ՝.

Դօնը քանրգ դուգյունը մինձ է.

Լիւր քանրգ դափան (թրք. depe, tepe «բլուր») մինձ է  
 (կամ) տվիլա (դահա, դըհա) մինձ է:

Ջեյթունի բարբառով՝

Օսօ դունը օնօ դունէն մինձ է:

Փոխանակ բացառականի, կարելի է դնել նաև զանդ բառը,  
 որ համապատասխանում է դրաբարի քան գ ձևին. ինչպես՝

Օսօ դունը զանդ օնօ դունը մինձ է:

Իմաստի սաստկացման համար կարելի է ածականի վրա ավելացնել դաճա (ձաճա «ավելի») բառը, իսկ ավելի սաստկացնելու համար կարելի է կրկնել այս զահա բառը, ինչպես՝

Օսօ դունը օնօ դունէն դահա մինձ է:

Օսօ դունը զանդ օնօ դունը դահա մինձ է:

Օսօ դունը օնօ դունեն դահա դահա մինձ է:

Օսօ դունը զանդ օնօ դունը դահա դահա մինձ է:

Վանի բարբառում բազմատական ածական կազմելու ամենահասարակ ձևն է համեմատելի առարկան դնել բացառական հոլովով. օրինակ՝

Բարդից ուրից պեցքը ի «բարտին ուռենուց բարձր է»:

Կարելի է նաև համեմատելի առարկայի վրա դնել վէք «վրա» կամ շանձ «քան զ» բառերը. օրինակ՝

Բարդին վէք ուռին պանցը ի.

Բարդին շանձ ուռին պանցը ի:

էն չանց զի ճոշ ի շնա քան զիս մեծ է»:

Բաղդատականը սաստկացնելու համար կարելի է նաև ավելացնել նրա վրա կամ ավելի ասվելի, առավել» բառը և կամ գնա բառը, որ թրք. daha ասվելի, էլ, դեռ» ձևից է սղված:

Օրինակ՝ էսա տուն էսա տնից ավելի (դհա) պանցր ի, դհա աղէկ ի:

Բաղդատական ածականի թուլացման համար կա երկու միջոց. առաջինն է գոյն > Իճն բառը, որ իբրև մասնիկ միանում է գույն ցույց տվող մի քանի ածականներին վրա. այն է՝ կարմրակճն, սևակճն, սիվտրկակճն, սպիտակագույն, կապուտակճն, կապտագույն, պղնձակճն, բաճակճն, բեթակճն, բեթակճն, մանիշակագույն, զգորջագույն, կանչակճն, կանաչագույն, ամբակճն, կապտագույն, խողակճն, հողակճն, մամուլակճն և մամուլի գույնով):

Երկրորդն է մուլո շնշան, կերպարանք, օրինակ, որ իբրև մասնիկ կցվում է բազմաթիվ ածականների վրա. օրինակ՝

Կարմրքանքմուլո կարմրավուն, սեվանքմուլո սևավուն, տեղանքմուլո տեղնավուն, սիվտրքանքմուլո սպիտակավուն, կանչանքմուլո կանաչավուն, կապուտանքմուլո կապտավուն, բոզանքմուլո բոզանքմուլո, մոնանքմուլո մեծավուն, պրսականքմուլո փոքրավուն, խաստանքմուլո հաստավուն, երկնանքմուլո երկարավուն, կանոնանքմուլո կարճավուն, պարականքմուլո բարակավուն):

Բայց նույն մասնիկը կարելի է դնել նաև գոյականների վրա, որոնք այս դեպքում ածականաբար են առնված. ինչպես՝

Պղնձանքմուլո պղնձանման, էրկրթանքմուլո երկաթանման, քարանքմուլո քարանման, մարթանքմուլո մարդանման, մրանքմուլո շրջ ջրակ, խողանքմուլո հողանման գույնով, մոխրանքմուլո մոխրանման, կավանքմուլո կավանման):

Բարբառներում գործածվող բացառականով համեմատության այսպիսի ձև չկա գրաբարի մեջ: Սակայն բացառականով համեմատությունը, ինչպես տեսանք, մի շատ բնական ձև է. նույնիսկ սանսկրիտը, որ գիտե բաղդատականի երկու տարբեր ձև, համեմատելի առարկան դնում է բացառական հոլովով. ինչպես՝ Indrāt mahattarāh ամեծ քան զինդրա<sup>1</sup>: Լատիներենում թեև կա բաղդատականի առանձին ձև, որ համեմատելի եզրի հետ կապ-

<sup>1</sup> Սանս. ghytat svādīyas Կարագից քաղցր, այսպես նաև զնգ. akāt ašyō Կատից վառ):



վում է quam Քբան» բառով, բայց կա նաև իսկական բացառական հոլովով համեմատութուն. օրինակ՝ Paulus est major quam Petrus կամ Paulus major est Petro և այս վերջինը ավելի հին և նախնական ձևն է: Գրաբարի մեջ էլ, թեև բաղադատականի համար չկա բացառական խնդրառութուն, բայց նույնը կա գերադրականի համար. ինչպես՝

Մեծն ի ձենջ եղիցի ձեր սպասաւոր:

Բայց նույնիսկ գոյն ձևով՝ Յայտ արարեալ թէ յերկոցունց վերագոյն է: Մրանցից կարելի է հետևցնել, թե միջին հայերենում բաղադատականի այս ձևը ինքնին է առաջացել:

Մեզ հետ գրեթե նույն ընթացքն է ցույց տալիս հունարենը.—այստեղ հին լեզվի մեջ բաղադատականի եզրը տրվում էր սեռական հոլով կամ Պ Քբան» շաղկապով. օրինակ՝

Օ ֆիλιոս Եւալ մեգալէտերոս տիս սելիցի կամ

» » » » ֆի ֆ սելիցի

Արեգակը է մեծագույն քան զլուսին:

Իսկ նոր հունարենը սիրում է գործածել բացառական հոլովով, որ կազմում է απὸ նախդիրով. այսպես՝

Օ ֆիλιոս Եւալ մեգալէտերոս απὸ τὸ φεγγάρι.

բ. Համեմատութունը կատարվում է նույն ձևով, իսկ դրական ածականի վրա կարելի է ավելացնել առավելութուն հայտնող զանազան բառեր. ինչպես՝ ավելի, էլ (շեշտված).

Մրդ. էս տարմեն ավելի ճուշ ր:

Ձդ. էս տղեն էն տղից էլ մենձ ա:

Ագլ. Հօղ տօնը նօղ մուլնից ալ միծ ա կամ ավելի միծ ա:

Ննիս. աս տունը ան դունէն ավելի մեձ է կամ դահա մեձ գուն մ'ալ ունիմ (այսպես նաև Պլ.).

Պլ. սա տունը ան տունեն դահա մենձ է:

Գրեթե նույն գարձվածք կա նաև գրաբարում, ուր գրվում է ևս առավելականը. օրինակ՝

Վիայութիւն մեծ ևս քան զՅովհաննոս.

Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունիցի.

Մեծամեծս ևս քան զսոյնս ցուցանէ նմա զգործս.

Քան զհայր ևս զթած է ի վերայ մեղաւորաց.

Եւ անդ ևս չար զոփայցէ և աշխարիցէ. Ոսկ. Ես.

Քան զՀերակղես, ասէ, ևս զօրագոյն էր. Եւս. քր.

Ձևս սքանչելիսն հանէ զնշանն. Ոսկ. մտթ. Բ. 25:

Յուցանիմք թէ ևս քաջ պատերազմող է ձի քան զնա և վարազ ևս զօրագոյն և նապաստակ առաւել ևս արագագոյն և սիրամարգ կարի ևս գեղագոյն և փօր բնաւ քաջաձայն և փիղ յոյժ յազթանդամ և արծուի քաջատես և ամենայն իսկ թռչունք ևս առաւել մեծատունք են քան զնա. Ոսկ. մեկ. Պօշ. (այս բոլորի դեմ հուշնն ունի պարզ բաղդատական ածականներ):

Ինչպես այս օրինակներից երևում է, ևս առավելականը կարող է դրվել ածականից թե առաջ, և թե հետո. բայց նոր լեզվի ու բարբառների մեջ միշտ նախագաս է:

բ) Բաղդատականի փոխարեն ածականը դրվում է դրական, իսկ համեմատելի գոյականը ստանում է գրաբարի քան նախդիրի այս կամ այն ձևափոխությունը: Ընդամենը ունենք Յ ձևափոխություն, որոնք են՝ քանզ, քանջ, քանց, քինչ, քանս, չանձ.

Քանզ- առաջանում է գրաբարի քան նախդիրի ձուլմամբ հաջորդ գոյականի զ նախդիրի հետ. գործածական է Նոր-Ձուղայի բարբառում. օրինակ՝ էս տունն էլ բանցր ա քանզ էմինը (քան մյուսը):

Քանց առաջանում է նույն ձևից՝ զ ձևափոխվելով ց-ի. գործածական է Նոր-Ձուղայի, Ղարաբաղի և Մեղրու բարբառներում. ինչպես՝

Ղրբ. իմ ապըէրը հլիվօր ա քանց քու ապըէրը:

Քանս առաջացել է քանզ ձևից, գ-ի խլացումով. գործածական է Մեղրու բարբառում, օրինակ՝ Ձա տօնը օքուտ ա քանս տմինը ռայս առնը լավ է, քան մյուսը»: Ավելի հաճախ գործածվում է քե շաղկապի հետ (քանս թէ):

Քինչ առաջանում է քան ինչ ձևից՝ սղմամբ ու կրճատմամբ. գործածական է Նոր-Ձուղայի բարբառում, բայց ավելի քիչ քան թե քանզ և քանջ ձևերը: Ինչպես՝

Քինչ քեզ առոխչ... (ո՞վ կա քեզանից ավելի առողջ):

Քանջ առաջացել է քանզ և քինչ ձևերի խառնուրդից. քինչ ձևը անշուշտ նախ դարձել է քանջ և հետո թրթուուն զ ձայնի

ազդեցութեամբ դարձել է թրթռուն ջ: Գործածական է միայն նոր-Ջուղայի բարբառում. ինչպես՝

էս աղեն էլ պատիկ ա քանջ էսմինը.

էս ճոթն էլ խասա ա քանջ էն օր շանց տվիր:

Չունձ առաջացել է դարձյալ նույն քանզ ձևից, ք > շ և զ > ձ փոփոխութուններով, գործածական է Վանի բարբառում.

դ) Փոխանակ քան ինչ նախդիրի՝ գործ է ածվում պարզապես ինչ ձևը, որ Ղարաբաղի բարբառում դառնում է հինչ և ավելի գործածական է քան թե քանց ձևը. ինչպես՝

Իմ ձին վրէննապէնդ ա հինչ քունը շիմ ձին ավելի արագտն է քան քոնը:

ե) Բաղդատական կաղմող մասնիկ է ավուն, որ գործածական է Երևան, Ղարաբաղ, Նոր-Ջուղա, Մեղրի՝ ավուն, Մարաղա՝ ավրին, Ագուլիս՝ ավուն, ավուն ձևերով, և դրական ածականին կցվելով տալիս է նրան նվազական նշանակություն, այն է՝ Վճի քիչ ավելի կամ բավական: Ամեն բառ անխտիր չի կարող ստանալ այս մասնիկը, այլ որոշ բառեր միայն, և հատկապես դույն ցույց տվող բառերը. ինչպես՝

Կարմրավուն. Երև. Ջղ. կարմրավուն, Ղրբ. կրմրբրավուն, Ագլ. կրմրբրավան, Մղր. կրմրբրավուն.

սևավուն. Երև. Ջղ. սեվավուն, Ղրբ. սըվավուն. Ագլ. սըվավուն, Մրդ. սիվավրին, Մղր. սըվավուն.

նեքմակավուն. Ջղ. նեքմակավուն.

դեղնավուն. Երև. դեղնավուն, Ջղ. դեղնավուն, Ղրբ. արդեավուն, Ագլ. դրդեավան, Մղր. դրդեավուն.

պստկավուն. Ջղ. պստկավուն, Մղր. փի՛ստի՛կավուն.

հաստավուն. Ջղ. խոստավուն, Ղրբ. հստավուն, Ագլ. հստավան, Մղ. հրստավուն.

լայնավուն. Ջղ. լեճնավուն, Ղրբ. լինձվուն, Ագլ. լեա՛վուն. Մրդ. լեճնավրին, Մղր. լի՛նձ՛վուն.

նեղավուն. Ջղ. նեղավուն, Ղրբ. նղավուն, Ագլ. նղավան, Մրդ. նեղավրին, Մղր. նրղավուն.

կաքնավուն. Ջղ. կաքնավուն, Ղրբ. կքնավուն, Ագլ. կոճնավան, Մրդ. կաոճնավրին, Մղր. կքրճնավուն.

մեծավուն. Ջղ. մեճնավուն, Ղրբ. մձավուն.

երկայնավուն. Ղրբ. բրգրճնավուն, Մրդ. երկեճնավրին, Մղր. բրկրճնավուն.

սպիտակավուն. *Ղրբ.* սրպտրեկավուն, *Ազլ.* հսպրտրեկավուն, *Մրդ.* սիպտոկյավրին, *Մղր.* սրպտկավուն.

այարգավուն: *Ղրբ.* պրբգավուն, *Մղր.* պրբգավուն.

պնդավուն. *Ղրբ.* պրնգավուն, *Մղր.* պրնդավուն.

կանաչավուն. *Ղրբ.* կրնրնչավուն, *Ազլ.* կրնրնչավան, *Մղր.* կրնրնչավուն.

կապտավուն. *Ղրբ.* կրպտավուն, *Ազլ.* կրպտավան, *Մղր.* կրպտավուն.

ծիգավուն. «*ժի քիչ ավելի երկար*» > *Ազլ.* ձիգավան.

բարձրավուն. *Ղրբ.* պրբրրավուն, *Ազլ.* բրձրրավան, *Մղր.* բիձրավուն.

շոշավուն. «*ավելի մեծ*» *Մրդ.* նուշավրին:

*Գույների համար Պլ. ունենք՝ կարմիրի գարնող և այլն. (հմմտ. Ֆր. tirant sur le jaune):*

զ) *Այս կարգի բաղդատականների հետ էլ համեմատելի առարկան դրվում է միշտ բացառական. Նոր-Ջուղայում կարող է ստանալ քանջ նախդիրը. երբեմն ավելանում է առավելությունը ցույց տվող բառ. իսկ Ղարաբաղում կարող է լինել նաև կրկնական. ինչպես՝*

*Ջղ. էս աղեն էն աղից մենձավունն ա.*

*Ջղ. էս տղեն էն աղից էլ մենձավունն ա.*

*Ջղ. էս ձոթն էլ խաստավունն ա քանջ էն օր շանց տվիր:*

*Ղրբ. իմ մաշառը քունան կրճավունն ա. էս ծառը էն ծառան ըրգընավունն ա. էս տանձէրը նրանցանա մըծմըծավունն ըն:*

*Բոլոր բարբառներում չկա այս -ավուն մասնիկը. օրինակ՝ Սվեդիայի, Ջեյթունի, Պոլսի և այլ հարակից բարբառներ չունեն:*

*-Ավունն մասնիկի ծագումը հայտնի չէ. անշուշտ չի կարելի համարել հին հայերենի -ա-գույն մասնիկի ձևափոխությունը, որովհետև գ>վ ձայնափոխության համար ուրիշ օրինակ չունենք բարբառներում: Հնագույն վկայությունը գտնում ենք Դրնդ. 503. գիժ և գժավուն և աղաւաղ ձայնէին (ժէ դար):*

զ) *Դրական ածականի վրա դրվում է-կեկ(կակ) մասնիկը, որ կազմում է նվազական աստիճան, համապատասխան նախորդավուն մասնիկին: Գործածական է կը ճյուղի բարբառներում, հատկապես Պոլսի բարբառում, ինչպես նաև Եվդոկիայի, Նոր-Նա-*

խիջևանի, Արարկիրի, Մանխասյի և այլ բարբառներում: Հնչվում է գազ, գեզ: Այս մասնիկն էլ բնականաբար չի կարող կցվել ամեն մի ածականի վրա. եղած օրինակներն են՝

Կարմիրկեկ, կապուտկեկ, ճերմակկեկ, կանաչկեկ, սևկեկ (Այսու էջ 28 գրում է սևկակ), երկայնկեկ, լայնկեկ, հաստկեկ, խոշորկեկ, մեծկեկ (Ննխ. Իսկ Պլ. մէնձգագ=մեծկակ), ճեղկեկ, կարեկեկ, ածամկեկ, ամուրկեկ, անուշկեկ, մամբկեկ, ծամբկեկ, կլորկեկ, շատկեկ, ծերկեկ, ճիճկեկ, կամուխկեկ, ուշկեկ, ջոշկեկ (Վն. Մշ.), վարկեկ, բարակկեկ, բարձրկեկ (այլ. բարբառգեզ), դեղիճկեկ, մութկեկ, ցածկեկ, ճորկեկ, քացիկեկ, բուկկեկ:

Նույնիսկ գոյականները իբրև ածական առնվելու ժամանակ կարող են ստանալ այս մասնիկը և դառնալ բաղդատական. օրինակ՝ լուսկեկ (լուսավոր), երեսկեկ (ածանծաղ): Օտար բառերն էլ կարող են ստանալ անխտիր այս մասնիկը, ինչպես՝ Պոլսահայ բարբառում՝ թուրքերենից անցած գայիֆկեկ (հիհար), շիշմանկեկ (գիրուկ), դիզկեկ (հարթ), էսմերկեկ (մի քիչ թուխ) (թուրք. zayıf, şişman, düz, esmer բառերից):

Այս բարբառի մեջ կեկ մասնիկը տալիս է (մի քիչ ավելի) կամ բավականա՞նշանակությունը:

Նոր-Նախիջևանի բարբառով են՝ մէձգեզ (մեծկակ), ձանդրոգեզ (ածանրկեկ), բացըռոգեզ (բարձրկեկ), խօշորոգեզ (խոշորկեկ), հասագեզ (հաստկեկ), ձէրոգեզ (ծերկեկ), բարագեզ (բարակկեկ), էրգանգեզ (երկայնկեկ), գարոգեզ (կարճկեկ), կարմիրոգեզ (կարմիրկեկ), մութոգեզ (մութկեկ), ցանգեզ (ցածկեկ), լուսոգեզ (լուսակեկ):

Գրեթե ամեն ածականի վրա կարելի է այս մասնիկը դնել, մինչև անգամ կա քօշագեզ (մի անկյուն). քօշա (պրս. کوشا kuša) բառը գոյական է, բայց իբր ածական առնվելով՝ ստացել է բաղդատականի մասնիկը: Ասվում է, քօշագեզ դէզ մը բավելի անկյուն ընկած՝ բավական առանձնակաց մի տեղ:

Սվեգիայի բարբառն էլ գիտե -կակ-կեկ մասնիկը, որով ունենք հետևյալ բառերը.—բրդ՝դ՝ըվ՝տգ բավական թթու, ճառք՝տգ բավական հաստ, իրք՝տնգեթօգ բավական երկայն, սիվ՝գեթօգ բավական սև, ըսրըդգեթօգ բավական սպիտակ (ուր երկու կ-երից մեկը զեղչված է):

Սրանց հետ կա նաև -ուկ մասնիկը նույն իմաստով. ինչպես՝ սիվեթօգ (սևուկ), երք՝տնեթօգ (երկայնուկ), դ՝իղնեթօգ (գեղնուկ):

Համշենի բարբառում ևս կա -ուի մասնիկը, որ դարձել է -ուի և կազմում է բազմաթիվ առարկանքներ. ինչպես՝ պարագուգ բառի բարակ, գայրուգ սկարճավուն, մեծուգ բեծավուն, հաստուգ հաստավուն, տեղուգ տեղնավուն, գեղուգ գեղնավուն, ձօնգրուգ ձօնրավուն, ցածուգ ցածավուն, լընուգ բառի լայն, մեղուգ բառի մեղ, կրկրուգ, որ և կրկրիգ բառի կրկր և այլն:

Գույն ցույց տվող ածականները ավելի հաճախ ստանում են՝ ուս>-իդ ձևը, իսկ մյուս որակական ածականները ավելի շատ-ուի>-ուգ ձևը:

Ջեյթունի բարբառը լմաստի կողմից մի փոքր տարբերություն է մտցրել այս -կեկ,-կակ մասնիկների մեջ, այսպես՝ կեկ>գէգ մասնիկը տալիս է բառի քիչ ավելի նշանակությունը, իսկ երկրորդը, որ ստացել է այսպեղ կուկ>գուգ ձևը, տալիս է բառի քիչ պակաս նշանակությունը և փաղաքշական է. ինչպես՝

կարմիր—գամբըգէգ, գամբըգուգ

կանաչ—գենէչգեգ, գենէչգուգ

սեալ—սիվգեգ, սիվգուգ

դեղին—դէղինգէգ, դէղինգուգ

ճերմակ—ջիմօգգէգ, ջիմօգուգ (մի գ-ով) ✓

լայն—լէնգէգ, լէնգուգ

հաստ—հասոգգէգ, հասոգուգ

մեծ—մինձգէգ

նեղ—նէղգէգ, նէղգուգ

ցած—ցաձգէգ, ցաձգուգ

մանր—մանդընգէգ, մանդընգուգ:

Նույնպես նաև թուրքերենից անցած բառերով. ինչպես՝

քէլէշ ստրուն—քէլէշգեգ, քէլէշուգ ստրունիկ:

Կեկ մասնիկի ծագումը ըստ իս պետք է դնել իկ>եակ կրկին նվազականների գրամարից, իբր թրգմ. յաթգ, յեթիկ ձևի, որ կրկին նվազականների գումարն է կարծել, թեև ներկայացնում է յա+թգ նվազականը. օրինակ՝ suթaթգ պաղուկ, uzun-թaթk բերկայնկեկ:

Ուրիշ մասնիկներ են՝

իկ>Մրգ. իկ, ինչպես՝ պարալիկ, բարակուկ, բավական բարակ, խառալիկ հաստլիկ, կառնիկ սկարճիկ:

—Սու, որ գործածական է Մարաղայի բարրառում և սրանով է կազմված էրկեմսու բրավական երկարք:

Մոտավոր գույն ցույց տալու համար պոլսահայ բարբառում կա թուրքերենից անցած իմսի մասնիկը, որի համար Թեոդիկ (էջ 1872) օրինակ է տալիս կարմիրիմսի «կարմրավուն» բառը:

Երկուսի միջին ճանապարհն է ներկայացնում օրինակ՝ մեղկուճուկ, որ է մեղկուճուկ, և համապատասխանում է թրք. da-rajəq հոմանիշին. հայերենը կազմված է ուկ նվազականով, որին կցվել է թրք. բառի jəq նվազականը:

է) Դրականի վրա ավելացնում են —ոտ մասնիկը, որ կազմում է նվազական աստիճան, համապատասխան —ավուն մասնիկին: Ինչպես՝

Կարմրոտ, սևոտ, ներմակոտ, դեղնոտ, կանաչոտ, պզտկոտ «ավելի փոքր», մաքրոտ, խոջրոտ, հաստոտ, բարակոտ, ցածոտ, բարձրոտ, ձգոտ, քլոտ, լեճոտ «ավելի լայն», մեղոտ «ավելի նեղ», կարճոտ, երկարոտ, թացոտ, չորոտ, պազոտ, հմուտ «ավելի հում», մեծոտ «ավելի մեծ»:

Օտար բառերով՝ գայիֆոտ «բրավական նիհար», գեմիշոտ «լայնավուն»:

Այս ձևերը գործածական են Կարնո բարբառում (Ախալցըխա, Լենինական) և Նոր-Ջուղայի բարբառում (նաև Թեհրան). Պոլսի բարբառում ունենք միայն ներմկոտիկ, որ առաջանում է ներմկոտ ձևից, բայց ոչ ներմկոտ անկախ ձևը, և ոչ էլ ուրիշ բառ —ոտ մասնիկով գոյություն չունեն: Այս —ոտ մասնիկը չունեն նաև Ջեթյուն, Սվեգիա և այլն:

Համշենի բարբառում որակական ածականները առհասարակ կտրոզ են բաղադատականի վերածվել նույն —ոտ մասնիկով, որ այստեղ վերածվել է էօդ կամ այժմ ավելի սովորական էդ ձևին. ինչպես՝ գարմըրէդ «մի քիչ ավելի կարմիր», սէվէդ, ջերմըգէդ, գէղէդ «կանաչավուն», գարուդէդ կամ գարդէդ «կապտավուն», տէղմէդ «դեղնավուն», յէշիլէդ «կանաչավուն» (թրք. յեշիլ «կանաչ» բառից), պարագէդ «բարակավուն», հաստէդ, գայջէդ «կարճավուն», մէձէդ «մեծավուն», ձօնդոէդ «ավելի ծանր», պըլօրէդ «ավելի կտր», ցածէդ «ավելի ցած», լըմէդ «լայնավուն», մէղէդ «նեղավուն» և այլն:

—Ու՛ ա մասնիկով կազմված օրինակներ Նոր-Ջուղայի բարբառից.

Կարմրոտ, սեվոտ, ճարմակոտ, դեղնոտ, պստկոտ, խաստոտ, լենոտ, մեզոտ, կարնոտ, մենձոտ:

Բաղդաստական կազմելու բոլոր այս ձևերն էլ Նոր-Ջուղայի բարբառում կարող են գործածվել կամ պարզ բացառականով, կամ էլ մասնիկով, և կամ քանզ, քանջ նախադրությամբ. օրինակ՝

էս տղեն էն տղից մենձավուն (կամ մենձոտ) ա.

էս տղեն էն տղից էլ մենձավուն (մենձոտ) ա.

էս ճօթն էլ խաստավուն (խաստոտ)ա քանջ էն օր շանց տվիլը:

Ավերիայի բարբառն ունի բաղդաստական կազմելու մի նոր ձև, այն է -լա, որ ուրիշ բարբառում չեմ գտել: Այսպես՝

Գարմբլա սկարմրավուն, կարմիրկեկ, դեղնլա եղեղնավուն, դեղինկեկ, ըսբբգբլա սսպիտակավուն, ուրիշ օրինակներ առ այժմ ինձ ծանոթ չեն:

Այս -լա մասնիկը, ըստ ձայնական օրենքների, ծագած պիտի լինի լի ձևից. սուտի ենթադրում է հյ. կարմրալի, դեղնալի, սպիտակալի (կարմրով լի, դեղինով լիքը) ձևը, իսկ եթե այդպես չէ, ապա պետք է կարծել, որ մտել է որևէ այլ լեզվից, գուցե և թուրքերենից:

Թեհրանի հայոց բարբառում պարսկերենից փոխառությամբ կա tar մասնիկը միայն մի քանի հայերեն բառերում, ինչպես լավթոթ, մէծթոթ, շուդթոթ (ուրիշ օրինակ մեզ ծանոթ չէ):

Առտիալի բարբառումն էլ, մյուս բարբառների նման, ածականի դրական աստիճանը ածականի սովորական ձևն է: Սահայն հաճախ այս ածականը ստանում է որոշիչ հոգ (ը կամ ն). օրինակ՝

Սլ. բ'արցըն է բարձր է՞.

Լն. ձանդրն է ճճանր է՞.

Լն. աղեգնը ձ'էռաց ճճարպիկ՞.

Լն. աղէքը գ'էղան լլավ գյուղեր՞:

Երևանի բարբառումն էլ հաճախ գործածվում է նույն ձևը. ինչպես՝

Ինչ մեծն է, ինչ լավն է:

Բաղդաստական աստիճանը կազմելու համար ածականի վրա ազնլացնում են ալ, ալա ճավելի՞ բառը. օրինակ՝



Լհ. ալ մեձ Վալելի մեծ», որ և ալա մեձ.

Լհ. ալ խոջա Վալելի հարուստ, շատ հարուստ».

Լհ. ալ անգան Վալելի ուշ».

Սչ. ալ վեր Վալելի վերև».

Սչ. ալ չուսգ Վալելի արագաշարժ»:

Ղարարադի բարբառում կան նաև հետևյալ ձևերը.

Մի քանի բառեր կան, որոնք ունեն-նախիկ մասնիկը (որ է՝-ոտիկ). օրինակ՝ ըրկընուտիկ ավելի երկայն.

Այս գեպքում կարելի է կցել ածականին՝ սաստիկության համար, նաև տուռ էրառը, որ նշանակում է Վալելի, էլ ավելի»:

օրինակ՝

տուռ էրկան Վալելի երկայն».

տուռ է ըրկընավուն էլ ավելի երկայն».

տուռ է խելունք Վալելի խելոք».

տուռ է խըլընքավուն էլ ավելի խելոք»:

Թ) Այս բոլորի վրա ավելացնենք նաև այն, որ բարբառ-ներում՝ համեմատելի առարկան, բացի բացառական հոլովից կամ քան, քանզ, քանց նախադրությունից, կարող է ստանալ նաև վրա նախադրությունը՝ բոլոր գեպքերում էլ. օրինակ՝

Սա նրա վրա մեծ է.

Սա նրա վրա մեծավուն է և այլն:

Այս ձևը առաջին ակնարկով թվում է թարգմանություն վրացականի, ուր նույնպես բաղդատականը ստանում է -zed «վրա» բառը (տես էջ 49) և անշուշտ այդպես կարելի էր կարծել Թիֆ-լիսի հայոց բարբառի մասին, բայց իրոք այդպես չէ, որովհետև նույնը գտնում ենք նաև Երևանի բարբառում, և հատկապես Վանա բարբառում, որ վրացերենի ազդեցության տակ չի գտնվել. հմմտ.

Էն վէր զի ճոչ ի ճնա ինձնից մեծ է». կամ նաև Պոլսի բարբառով՝ Չորս աղջիկներուն վրա պզտիկն էն տեսքոտն է:

Աշխարհաբարը օգտվելով մի կողմից գրաբարի ժառանգությունից և մյուս կողմից բարբառներից, բաղդատականը կազմում է հետևյալ ձևերով.

1. Պարզ դրական ածականը գործածելով բացառականի հետ. սա նրանից մեծ է. Լուսինը արևեն փոքր է:

2. Դրական ածականի վրա ավելացնելով ավելի մակբայը.

իսկ համեմատելի առարկան դնելով բացառական հոլովով. օրինակ՝ սա նրանից ավելի մեծ է: Լուսինը արևեն ավելի փոքր է:

3. Երբ մի քանի համեմատություն հաջորդում են իրար, մեկը մյուսից ավելի աստիճանով, այս դեպքում առաջին համեմատությունը դրվում է պարզ բացառականով, երկրորդ համեմատությունը ավելի բառով, իսկ եթե կա մի երրորդ համեմատություն ևս, ավելացվում է նաև ե՛լ (ալ) բառը: Օրինակ՝ էջմիածինը Օշականից մեծ է, Լենինականը ավելի մեծ է, իսկ Երևանը էլ ավելի մեծ է:

Եվրոպան Ավստրալիային մեծ է, Ափրիկեն ավելի մեծ է, Ասիան և՛լ ավելի մեծ է:

Ծանոթություն.— Այս դեպքում ե՛լ (ալ) բառի վրա անհրաժեշտ է շեշտ դնել՝ չշփոթելու համար էլ (ալ) ընակ շաղկապի հետ:

4) Դրականի վրա դրվում է -գույն մասնիկը, իսկ համեմատելի առարկան անում է բացառական. օրինակ՝ Սրանից կարևորագույն հարցեր էլ կան: Այստեղ էլ կարելի է դնել ավելի, էլ ավելի մակբայները. ինչպես՝ Արանից ավելի կարևորագույն հարցեր էլ կան, բայց նա՛ էլ ավելի կարևորագույն է:

Ծանոթություն.— Ամեն ածական չի կարող ստանալ -գույն մասնիկը. օրինակ՝ կարելի է ասել բարձրագույն, մեծագույն, փոքրագույն, լավագույն, ազնվագույն, գեղեցկագույն և այլն, բայց չի կարելի ասել՝ շատագույն, սրատեսագույն, մոտիկագույն, դժգունագույն և այլն: Ընդհանրապես -գույն մասնիկով կազմված բաղադրականները գրաբարից ավանդված ձևեր են. բուն ժողովրդական և գավառական բառերը, ինչպես նաև օտար փոխառյալ բառերը, սովորաբար չեն ստանում -գույն մասնիկը. օրինակ՝ չի կարելի ասել աղեկագույն, աղվորագույն, գեշագույն, պղտիկագույն, պաղագույն, չաղագույն, նորմալագույն (վերջերս սովորական դարձավ խոշորագույն). Ուր որ չի կարելի -գույն մասնիկը գործ դնել, դրվում է ավելի մակբայը, որ կարող է ամեն դեպքում էլ գործածվել. օրինակ՝ վերի բառերի հետ՝ ավելի չաղ, ավելի նորմալ, ավելի շատ, ավելի սրատես, ավելի դժգուն, ավելի աղեկ, ավելի աղվոր, ավելի գեշ, ավելի պղտիկ, ավելի պաղ, և այլն:

5. Ածականը կարելի է դնել դրական կամ բաղդատական աստիճանով, իսկ համեմատելի առարկան քան կամ քան քե նախադրությամբ. օրինակ՝

Մասիւր ավելի բարձր է քան Արագածը.

Մագաղաթը ավելի դիմացկուն է քան թե թուղթը.

Սա լավագույն է քան այն:

6. Բարբառների մեջ գործածված մյուս ձևերից — ավուն և -կեկ երևում են երբեմն նաև գրական լեզվի մեջ, բայց ժողովրդագրական բնույթ ունեն.

7. Անցյալ դարում գործածական էր նաև ալ ձևը (արևմբտյան գրականում), բայց հիմա խափանված է. Ալ ազեկ, ալ մեծ, ալ պիտուական և այլն: Մնում է միայն ալ ավելի (=էլ ավելի) ձևը:

8. Մի քանի ածականներ անկանոն ձևով են կազմում իրենց բաղդատականը. այսպես է՝

ընտիր—ընտրելագույն

ավելի—առավելագույն:

Հավասարության բաղդատական կազմելու համար հայերենը առանձին ձև չունի (ոչ հին լեզու և ոչ նորը): Գրաբարում նա ձևանում է սովորական դրական ածականի ձևով, միայն համեմատելի առարկայի վրա դնելով իբրև (հայցական խնդրով). ինչպես՝

Լոյծ է օդ իբրև զշուր.

Եղբայր քո խորագէտ է իբրև զքեզ.

Եղերուք այսուհետև խորագէտք իբրև զօձս և միամիտք իբրև զաղաւնիս. Մտթ. Ժ 16:

Հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև զլոյս (կամ իբրև զձիս). Մտթ. Ժե, Զ և Մրկ. Թ. Զ.:

Աշխարհաբարում դնում ենք պես, շափ նախադրությամբ. օրինակ՝

Նրա չափ մեծ է.

Քեզ պես խորամանկ է.

Օձի պես չար ես:

Այս բոլորը կարելի է վերածել նվագականի՝ ըայր դնելով բացասական. այսպես՝

Գրբ. Եղբայր քս չէ խորագէտ իբրև զքեզ:

Աշխ. Քո եղբայրը քեզ պես խորագետ չէ:

3. ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Հարաբերական գերադրական կազմելու ամենապարզ և ամենատրամադրական ձևն է «ամեն, բոլոր» նշանակող բառի հարադրությունը: Ածականը կարող է դրվել գրական և կամ բարբառական աստիճանով, բայց միշտ որոշյալ ձևով (եթե լեզուն գիտե հոգ), իսկ «ամեն, բոլոր» բառը կարող է դրվել կամ բացառական հոլովով կամ որևէ համեմատական նախդիրով:

Բազմաթիվ են այն լեզուները, որոնք իրենց գերադրականը կազմում են այս ձևով. շատերից հիշում ենք հետևյալ օրինակները՝ բառացի թարգմանությամբ.

Թրք. Bu hepsinden eyi dir.

Սա բոլորից լավ է:

Քրդ. Au mirov ž-homi kanjtir a.

Այս մարդը բոլորից լավագույնն է:

Լազ. mte'liše noson on.

Բոլորից իմաստունն է:

Հինդուստանի. Yah ghar sah-se qca hai.

Այս տունը բոլորից բարձր է:

Լեթթ. Tas wis-labakais ամենալավը

Ta wis-labaka (իգ.) » »

wis նշանակում է «ամեն, բոլոր»:

Պորտ. A mais linda de todas.

Ամենա գեղեցիկը բոլորից:

Բելուջ. Ē ač drustēn mardumān šartir int.

Նա ի բոլոր մարդիկ լավագույնն է:

Տունգուզ. Upkattuk beki.

Բոլորից ուժեղ:

Բուրյաթ. Maryenoho yike temē, barnaha

Ձիուց մեծ (է) ուղտը, բոլորից:

Բաղդաստականի նման այստեղ էլ կարելի է դնել «էլ, ավելի» և նման բառեր. ինչպես՝

Սա բոլորից ավելի (էլ ավելի) մեծ է:

Լազ. { Mt'elise op'za nosoni  
Telišen dido nosei  
daha.

*Բոլորից ավելի իմաստուն.*

Մունգա խմբից ուրի լեզվումն էլ գերադրականը ոչ մի մասնիկ չունի, այլ դրվում է ածականը *Շամենից* բառի հետ, և այդ բավական է.

Պրովանսալ լեզվի մեջ համեմատական աստիճանը կազմվում է mai կամ pu *Շավելի* բառով, իսկ սրա որոշյալ ձևն էլ գերադրական է, *ինչպես՝*

Sabent *Շգիտուն*, mai sabent *Շավելի գիտուն*, lou mai sabent *Շամենագիտուն*. La rose es mai (pu) bello que lou jaus-semi վարդը ավելի գեղեցիկ է քան համբիկը:

Գերադրականի մի առանձին ձև է ածականի վրա ավելացնել *Շոր չգիտեմ* արտահայտությունը. *ինչպես՝*

Un aucalet poulit que-noun sai

*Մի թռչնակ այնքան սիրուն որ չգիտեմ:*

Ածականի իմաստը ավելացնելու կամ խստացնելու համար գնում են as մասնիկը, իսկ փոքրացնելու կամ նվազեցնելու համար et, au, aulet, oun, inéu, inastre մասնիկները. *ինչպես՝* pauvre *Շխեղձ*, pauret *Շխեղձուկ*, pauras *Շշատ խեղձ*, verd *Շկանաչ*, verdau *Շկանաչավուն*, verdoulet *Շկանաչիկ*, groumand *Շազահ*, groumandoun *Շքիչ ազահ*, groumandas *Շշատ ազահ*, rouge *Շկարմիր*, rouginèu *Շկարմրավուն*, rougas *Շշատ կարմիր*, doucinastre *Շքաղցրավուն* և այլն:

Ամերիկյան զոք լեզվով *ինչպես* որ բազդատականը կազմվում է *Շավելի* բառով, գերադրականն էլ կազմվում է *Շավելի բոլորից* ձևով. *ինչպես՝*

chis-pue *փոքր*

ue-chis-pue *ավելի փոքր*

ue-angustucu-chis-pue *ամենափոքր*

*կամ նաև cocetec-pa Շգերազանցել* բայով:

Աֆրիկյան կենյան (բանտու) լեզուն էլ, *ինչպես* որ բազդատականը կազմում է Շa *Շգերազանցել* բայով, գերադրականն էլ կազմում է նրա վրա ավելացնելով nkem *Շբոլորից* բառով: Կոնգոյի չիլուբա (բանտու) լեզվով բազդատականը և գե-

բարբառականը կազմվում են ku-tamba և ku-pita գերազանցել» բայերով:

Աֆրիկյան լու-գանդու (բանտու) լեզվով էլ գերադրականը կազմվում է singa գերազանցել» բայով:

Օվկիանիայի տոնգա լեզվի մեջ համեմատական աստիճանը ստանալու համար գրվում է ange «հակառակ, նման, համեմատած» բառը, իսկ գերադրականի համար՝ obito «չափազանց» օրինակ՝ lille ange «լավագույն», lille obito «ամենալավ»:

Սահայն գերադրականի սովորական ձևը հետևյալն է. «Բոլոր առանցքները վատ են, այս առանցքը միայն լավ է» այս առանցքը ամենալավն է»: Այդ լեզվի ուսումնասիրողը (Ջ. Մարտին) գտնում է, թե բավական անմիտ բռն է ասել, թե բոլոր առանցքները վատ են, և միևնույն նախադասության մեջ ասել, թե սա միայն լավ է»: Սահայն ըստ իս ավելի անմիտ է մեկին լավ ասելու համար բոլորին վատ ասել:

Գերադրականը գորացնելու համար կարելի է կրկնել և երեք-կնեղ obito բառը. օրինակ՝

Coe togì coeni gua lille obito, obito, obito «այս առանցքը ամենալավն է»: Բայց զարմանալի է նախորդի ձևով ասել. «այս բոլոր առանցքները obito (չափազանց) վատ են, և միայն այս առանցքը լավ է չափազանց, չափազանց»:

Եթովպական հարար լեզվով ածականի թե համեմատական և թե գերադրական աստիճանը կազմվում է -le կամ -be մասնիկով. ինչպես՝

bazzina-bē մեծագույն կամ ամենամեծ:

Աֆրիկյան բոնգո լեզվում գերադրական կազմելու համար գործածում են.

1) կրկնական ձևը. ինչպես՝

djibe մութ —dīdibe  
lambe շատ —lalambe  
agui կարճ —agagui

2) դնում են damu «շատ», damu gudi «միակ», bōyole «վատ, գեղ», kikin «սոսկալի» բառերը. օրինակ՝

yabun bayin bōyole  
նավակը արագ վատ!  
(նավակը շատ արագ է գնում):

Կան լեզուներ, որոնք չեն դնում հատկապես բաժնի, բոլոր բառը, բայց համեմատելի բառը հիշում են այնպիսի մի ձևով, որ ամբողջության՝ գազափարը տալիս է: Այսպես՝ դրավիդյան լեզուների մեջ գերադրական կազմելու համար համեմատելի առարկան գրվում է հոգնակի ներգոյական հոլովով, իսկ ածականը սովորական դրական աստիճանով. ինչպես՝

Vilangugalil vāngel koḍidu  
Յանասունս վագրը կատաղի  
(բոլոր անասուններից ամենակատաղին վագրն է):  
Avattr-il idu nalladu  
Սրանց մեջ սա լավ է)  
(սա այս բոլորից լավագույնն է):

Բացարձակ գերադրական կազմելու ամենապարզ ձևն է ածականի կրկնությունը առանձին կամ բարդությունը (հարաբարդ). այս ձևը այնքան շատ է տարածված լեզուների մեջ, որ կարելի է համարել համընդհանուր երևույթ: Հնդեվրոպական լեզուներից դուրս այդ երևույթը գտնում ենք՝ ավստրական, դրավիդյան, ալթայական, իբերո-կովկասյան, սումերական, սեմական և այլ լեզուների մեջ: Այսպես՝

Ջավայերեն՝ hagəng-hagəng բաժնի, շատ մեծ:  
Դրավիդյան՝ թամիլ լեզվով periya-periya շատ մեծ:

Ալթայական լեզուներից՝ չուվաշերեն՝ šura սպիտակ, šura-šura բաժնի, yəvar բաժնի, yəvar-yəvar բաժնի:

Ադրբեջաներեն՝ яхши-яхши гулләр բաժնի, совук-совук сулар շատ սառ ջրեր:

Կովկասյան լեզուներից վրացերեն՝ დიდ-დიდი (did-didi) շատ մեծ, მდიდრ-მდიდრი (maḡal-maḡali) շատ բարձր, մինգրել. მდიდრ-მდიდრი (maḡal—maḡali) շատ մեծ:

Սումերերեն՝ gal բաժնի, gal-gal շատ մեծ:

Այսպես է նաև արդի եթովպական լեզվում:

Ամբրիկյան տարասկ լեզվով.— mimi-mimixes շատ իմաստուն:

Ավստրալիայի դիպիլ լեզվով՝ talbur բարձր, talbur-talbur շատ կարճ:

Աֆրիկյան բարի լեզվով՝ rigwo rigwo շատ ուղիղ:

Նոր-Չեկանդիայի լեզվով՝ e mea nohi nohi *ամի շատ փոքր, ամենափոքր բան», e mea nui nui* *ամենամեծ բանը».*

Ամերիկյան բահահրի լեզվով՝ iwakulu *ալավ, սիրուն», iwakulukulu* *շատ սիրուն»:*

Աֆրիկյան բիրա (բանտու) լեզվով

Bausu bapidopido babali

Ձկների ամենափոքրիկ երկու

(երկու ամենափոքր ձուկ):

Մեկանդյան յարեմ լեզվով գերադրականը նույնպես կազմվում է կրկնութամբ. *ինչպես՝ kapōēn* *ամեծ», kapōēn kapōēn* *շատ մեծ», selec* *ամաքուր», selec-selec* *շատ մաքուր», կամ* *թե goc* *տիրոք», gosū* *տարտասավոր, չափազանց մասնիկներով:* *օրինակ՝* *ḡayām* *ալավ», ḡayamgoc* *շատ ալավ», ḡandaḡ* *տաք», ḡandaḡ-gosū* *շատ տաք»:*

Աֆրիկյան սեչուանա (բանտու) լեզվով բաղդատականի համար գնում են *bogolo go* *տավելի քան», որ գերադրականի մեջ կրկնվում է և կամ ստանում է thata* *հավելվածը և էլի կրկնվում. այսպես՝*

bogolo bogolo

„ thata

„ „ thata

„ bogolo thata:

Նուբիերենում գերադրական կազմելու համար կամ բան է կրկնվում կամ միջին բաղաձայնը. *ինչպես՝ battunun* *շատ փոքր», daddin* *շատ երկար».*

Šar kele kele be eIngale

Շատ կարմիր մի բան գտա.

Տիրեթերենում գերադրական կազմելու համար ածականը կրկնում և երկուսի միջև գնում են *hyang, hang, yang.* *օրինակ՝* *ḡe hang ḡe* *շատ մեծ», mdses hyang mdses* *շատ գեղեցիկ» (ds=ձ), ring yang ring* *շատ երկար»:*

Մալայերենի մեջ գերադրական կազմելու ձևերից մեկը կրկնութունն է. *օրինակ՝ tinggi-tinggi* *ամենաբարձր»:*

Շատ հարմար մի ձև է ստեղծել ամերիկյան կահիտա լե-



դուն, որ բաղդատականի համար գործածում է չեսա «ավելի» բառը, իսկ նրա կրճատ կրկնական ձևն էլ՝ գերադրականի համար (երկուսն էլ իբրև նախամասնիկ). օրինակ՝

tuuri «լավ», չեսատuuri «ավելի լավ», չեճեսատuuri «ամենալավ», huuena «վատ», չեսահuuena «ավելի վատ», չեճեսահuūena «ամենավատ».

Bači tuuri, չեճեսատuuri trigo.

Լազուտը լավ է, ամենալավն է ցորենը:

Մանջուրերենում բաղդատական աստիճանը կազմվում է միայն բացառական հոլովով. ինչպես՝

Manju gisun-či nikan gisun mangga.

Մանջու լեզվից չին լեզուն դժվար է):

Բայց կարելի է նաև ածականից առաջ դնել geli «նույն-քան», dabali «չափազանց», tulgyien «դուրս», etenggi «գերազանց» և lakčame «խորտակող, հեռացող» բառերը. ինչպես՝

Minči lakčafi mangga jiderengge-bi

ինչնից խորտակող (=ավելի) ուժեղը պիտի գա:

Ըստ այսմ գերադրականն էլ կազմվում է gerenči «բոլորից», teni «բարձրապես», սյui «գլխավորապես» բառերով:

Լազերենում գերադրական իմաստ տալու համար կրկնությունը կարելի է կատարել երկու ձևով. 1) ածականի նախաձայնը կրկնության մեջ դարձնելով մ. ինչպես՝ ծիաներ—միաների զշատ վազեմի, շատ հին»:

2) կամ ածականի ձայնավորը փոխելով ու դարձնելով ու. ինչպես՝ մջվեշի—մջվուշի զշատ հին»:

Աֆրիկյան յորուբա լեզվում բայերի անորոշը միաժամանակ ածական է. սրա վրա ավելացնելով ju և lo մասնիկները, ստացվում է բաղդատական և գերադրական. ինչպես՝

tobi «մեծ լինել» կամ «մեծ», tobiju «ավելի մեծ», tobi-julo «ամենամեծ»:

Բայց ածականը կարելի է կազմել նաև կրկնությամբ. ինչպես՝ kekere «փոքր», gugun «երկար», kukuru «կարճ», սրանք համեմատական աստիճան չեն քնդունում, այլ միայն սաստկական, այն է՝ գերադրական, որի համար նախամասնիկը պետք է կրկնել վերջում. ինչպես՝ kekereke «շատ փոքր», kikiniki «քիչ», kikiniki զշատ քիչ»:

Մարքիզյան կղզիների լեզվով գերադրական կազմելու ձևերից մեկն է ածականը կրկնել մինչև 4 անգամ.

Mea òa, mea òa, mea òa, mea òa.  
«Շատ հեռու»

Pe oko, pe oko, pe oko, pe oko.  
«Շատ վատ»

Momo momo momo momo.  
«Շատ փոքր»

Kumi kumi kumi kumi.  
«Շատ հեռու».

Կարելի է կրկնել ածականի մի կամ մի քանի վանկը. ինչպես՝ manini «քաղցր», maninini «շատ քաղցր» kava «դառն», kavakava «շատ դառն».

E kea nui                      e kea nunui  
Մի քար մեծ                      մի քար շատ մեծ:

Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզվով գերադրական կազմելու համար ածականի վրա դնում են gagolo «շատ, հույժ» մակբայը կամ կրկնում են ածականի արմատը.

Հնդկական նեպալի լեզվով բաղդատական կազմելու համար դնում են bhandā, որ նշանակում է՝ «ասելիս, հիշելիս», բայց գործածվում է իբր «քան».

Kēṭō bhandā kēṭī              rāmri  
Տղան հիշելիս աղջիկը գեղեցիկ է:

Գերադրական կազմելու համար դնում են sah bhandā «քան բոլոր».

Sabai kēṭā-haru bhandā Rāmīāi      rāmro  
Բոլոր տղա-ներին հիշելիս Ռամլալը գեղեցիկ է(է):

Պոլինեզյան հավաի լեզվում բաղդատությունը զանազան աստիճաններ ունի. օրինակ՝ poko «կարճ», poko iki «մի քիչ կարճ», poko ae «ավելի կարճ», poko iki ae «է՛լ ավելի կարճ», poko loa «ամենակարճ»:

Ուղմուրտ (վոթերեն) լեզվի մեջ գերադրական կարելի է կազմել նաև կրկնությունով. Օրինակ՝ gord «կարմիր», gordles՝ no gord «կարմիրի կարմիրը».

lek	չար	lekles <sup>y</sup>	no lek	չատ չար
zeč	բարի	zečles <sup>y</sup>	no zeč	չատ բարի
českət	քաղցր	českətles <sup>y</sup>	no českət	ամենաքաղցր

բայց նակ՝	gord-gord	կաս-կարմիր
	zeč-zeč	չատ բարի
	vož-vož	չատ կանաչ:

Ավստրալիայի բնիկների լեզվով գերադրականը կազմվում է ածականի կրկնությամբ. *ինչպես՝*

bikabika	փափուկ
madlomadlo	մոլթ
winkowinko	սոսկալի:

Այս բոլորը գերադրական են:

Թրեկիլիդը (էջ 45) ասում է, թե ավստրալիական լեզուները ածականների մեջ համեմատություն չունեն. բայց դիյերի լեզուն ունի և կազմում է հետևյալ ձևով.

wordu	կարճ
wordu-murla	կարճագույն
wordu-mut'u	ամենակարճ.

Նույն հեղինակը (էջ 51) ասում է, թե Ավստրալիայի արևմրտյան մասի մի լեզվով բաղդատականը կազմվում է կրկնությամբ, իսկ գերադրականը -իil մասնիկով. օրինակ՝

gwabba	լավ
gwabba-gwabba	լավագույն
gwabba-իil	ամենալավ:

Հնդեվրոպական լեզուների մեջ նման օրինակներ ավելի շատ են. այսպես են՝

Ռուս. ВЫСОКИМ ВЫСОКО	չատ բարձր
красным-красно	չատ կարմիր
Վեդա. mahāmahās	չատ մեծ
Սանս. bhītabhītas	չատ սարսափած
alpālpas	չատ փոքր
Պարս. xandān xandān	չատ խնդալով
mālāmāl	լեփ լեցուն
հուն. Ξεστὰ Ξεστὰ κολλούρια	
չատ տաք	

είσι πολύ πολύ κακό:

շատ վատն ես

Իտալ. un ragazzo piccolo piccolo

մի տղա շատ փոքր

Բրետ. uheluhel շատ բարձր

iselisel շատ ցածր

tomtom շատ աաք

braobrao շատ գեղեցիկ

Բրետոներենի մեջ այս ձևը շատ սովորական է).

Լեթթ. masa masa meitina

շատ փոքր աղջիկ:

Կրկնութիւնը կարելի է կատարել հոլովված ձևով (եզակի կամ հոգնակի՝ սեռական կամ բացառական), և այն ժամանակ ստացվում է գերադրականի մեծագույն աստիճանը. ինչպես՝

Ռուս. злее злого

շատ չար

добрее доброго

շատ բարի

Պրս. bihtar-i bihtarin

ամենալավերի լավագույնը

faqir-i faqiran

շատ աղքատ.

Չուվաշ. (բացառական հոլովով)

āslāran āsla

ալավից լավ:

Հնդկական ոինդի լեզվով՝ uḥḥ-khā uḥḥ

ալվից լավ.

Ույղուրերեն լեզվով՝

oḥuqtin oḥuq

ամենահայտնի

(Իբր թրք. aḥḥdan aḥḥq)

yaxšidin yaxši

ալավից լավ, ամենալավ.

Թրք. eyiden eyi

ալավից լավ.

Նբր. բիմաստունների բիմաստունը.

Նույնը ունենք նաև հայերենում՝ գրաբարի մեջ հայցա-

կան, աշխարհաբարի մեջ սեռական կամ բացառական հոլովով.

գրաբ. ևս քան զևս, առաւել քան զառաւել.

աշխ. բիմաստուններից բիմաստուն,

խելոքներից խելոք:

Սրանց հետ համեմատել գոյականների մեջ հատկացուցչի ձևով՝

երգ            երգոց  
 թագաւոր    թագաւորաց  
 տէր            տէրանց,

որոնց բոլորի իմաստը գերադրական է:

Կրկնության մի ուրիշ երևույթն է նույն ածականից կազմ-  
 ված մի ուրիշ ածականով կրկնությունը. օրինակ՝

պրս. pak ū pākīze շատ մաքուր:

Ռուսերենը գերադրական է կազմում -хонький մասնիկով.  
 ինչպես՝

белехонький	շատ սպիտակ
краснехонький	» կարմիր
синехонький	» կապույտ
пестрехонький	» լրայտարդեա
молодехонький	» մատղաշ
чернехонький	» սև
голехонький	» մերկ:

Կամ пре—մասնիկով կազմված ձևեր՝ սլարզ ածականի  
 կրկնությամբ. ինչպես՝

зеленый-презеленый	կափ-կանաչ
теплый-претеплый	շատ տաք
холодный-прехолодный	շատ ցուրտ
горячий-прегорячий	շատ տաք
жаркий-прежаркий	»    »
темный-претемный	» մութ:

Կրկնությամբ գերադրական ստանալու մի այլ եղանակն է  
 դործածել նույն ածականից կազմած նոր կրկնական ձևեր, որոնք  
 կարող են լինել նաև շինծու և հետևաբար առանձին ու անկախ  
 դործածություն չունենալ. ինչպես՝

պրս. hāsān bāsān	շատ գեղեցիկ
kaž ū maž	ծուռ ու մուռ
tar ū tūr	շատ մութ
dīvāne mivāne	շատ խենթ:

Եթովպական տիգրինա լեզուն գերադրականի համար մի  
 քանի ձև ունի. ա) ածականը կարելի է արտասանել մի առան-  
 ձին ձևով (անօգուտ աշխատանք պլտի լիներ փորձել նկարա-

գրելի այս արտասանութիւնը). բ) կարելի է նաև 2—3 անգամ կրկնել ածականը. զ) ավելացնել bēzūh կամ fēssūm բառերը, որոնք նշանակում են «շատ», «չափազանց», և կրկնելով 2—3 անգամ, կամ նաև kēndéy, որ նշանակում է «0», որքան»:

Վերջապես գերադրական կարելի է ստանալ նաև կցելով այնպիսի բառեր, որոնք իմաստով ու ձևով նույն են և հետևաբար կարող են կրկնական համարվել. ինչպես՝

Պրս. xos ū xurram «շատ ուրախ»:

Պոլսահայ բարբառով՝

թեմիզ-փաք «շատ մաքուր»

փիրի-փաք «բոլորովին մաքուր»:

Նոր-Նախիջևանի բարբառով՝

շուտ մը-թեզ «շատ շուտ»:

Ամերիկյան յուրակարն լեզվով գերադրական կազմելու համար կրկնում են ածականի առաջին վանկը և վերջուսն էլ կարող են ավելացնել lele մասնիկը. օրինակ՝

yeta	լավ	ye-g-yeta-lele	ամենալավ
emnete	վատ	egemnete	ամենավատ
sigua-sigua-ti			շատ ստախոս
limie	վերջին	liglimie	ամենավերջին:

Աֆրիկյան փոյլի կամ ֆուլլահ լեզվով ածականների համեմատական և գերադրական աստիճանների համար առանձին ձևեր կան, որոնք նրանք ընդհանրապես այնքան քիչ են գործածվում, որ շատերին անծանոթ են» (Steane, էջ 6):

Կրկնութամբ գերադրականից զարգացած մի ձև է նախամասնիկներով կազմված գերադրականը, որի ամենապարզ ձևը ներկայացնում են մոնղոլերեն, բուրյաթերեն և չուվաշերեն լեզուները: Այս լեզուների մեջ ածականի բացարձակ գերադրականը կազմելու համար, փոխանակ կրկնելու ամբողջ բառը, կրկնում են ածականի առաջին վանկը (այն է՝ առաջին ձայնավորը, եթե կա առաջին բաղաձայնը), և նրա ու բառի միջև ավելացնում են ք բաղաձայնը. այսպիսով, յուրաքանչյուր ածականի համար ստացվում է մի առանձին մասնիկ, որ բաղապես է լինում. երեք ձայնից, եթե բառը սկսվում է բաղաձայնով, և երկու ձայնից, եթե բառը սկսվում է ձայնավորով. առաջին ձայնն է բառի առաջին բաղաձայնը, երկրորդ ձայնն է բառի առաջին ձայնավորը և երրորդ ձայնն է միշտ ք. այսպես՝

մոնղոլ.	xap-xara	սեփ-սե
	çap-çavan	ճեփ-ճերմակ
	ap-arigun	ամենամաքուր
բուրյ.	sap-sagan	ճեփ-ճերմակ
	xap-xaran	սեփ-սե
	up-ulang	շատ կարմիր
չուվաշ.	šop-šora	ճեփ-ճերմակ
	tür-türe	բուրբուրին ուղիղ
	xur-xura	սեփ-սե
	tip-tipe	չոփ-չոր:

Գերադրակունի այս ձևը կա նաև յակուտերենում, ուր մասնիկը միշտ ք վերջավորությամբ է: Ահա մի խումբ օրինակներ.

ür-ürüg	ճեղ-ճերմակ
map-magan	" "
kəp-kəhəl	կաս-կարմիր
kür-küðq	կափ-կանաչ, կաս-կապույտ
ep-erien	շատ խայտաբղետ
ep-eder	շատ մատղաշ
səp-səlās	շատ տաք
kup-kugas	շատ շեկ
təp-təmnə	շատ ցուրտ
ip-iti	շատ տաք
qap-qara	շատ սև
səp-səgənyraq	շատ մերկ:

Սրա մի ուրիշ ձևն ունի մոնղոլարի լեզուն, ուր գերադրական կազմելու համար քառի առաջին ձայնավորից հետո ներմուծում են ք և նրանից հետո կրկնում ձայնավորը. այսպիսով ստացվում է ճիշտ այնպիսի մասնիկ, ինչ որ մոնղոլերեն, բուրյաթերեն և չուվաշերեն լեզուների մեջ, պակաս առաջին բաղաձայնը. ինչպես՝

marang մեծ	maparang շատ մեծ
šiling երկար	šipiling շատ երկար
moto խոշոր	mopoto շատ խոշոր:

Մոնղոլերենի այս ոճը ավելի է այլափոխվել թուրք-թաթարական լեզուների մեջ. նախամասնիկը կազմվում է բուրբուրվին նույն ոճով, բայց վերջին ք բաղաձայնի տեղ թաթարերեն

նում գրվում է *թ, մ, իսկ թուրքերենում՝ սրանց հետ նաև s, r. այսպես՝*

ep-eyi	շատ լավ	qos-qoʃa	շատ մեծ
qap-qara	սևի-սև	dos-dovru	բոլորովին ուղիղ
ap-aq	ճեփ-ճերմակ	düm-düz	բոլորովին հարթ
sap-sarə	դեփ-դեղին	söp-sovuk	շատ ցուրտ
qəp-qərməzə	կաս-կարմիր	sim-siyah	սեփ-սև
dop-dolu	լեփ-լեցուն	yam-yaşəl	կափ-կանաչ
yap-yalənəz	միս մենակ	bom-beyaz	ճեփ-ճերմակ
ap-ansəz	հանկարծ	bom-boş	բոլորովին դատարկ
bes-bellə	շատ հայտնի	səm-səqə	շատ սեղմ
büs-bütün	բոլորովին	bām-bārک	շատ ամուր
mas-mavi	կաս-կապույտ	sər-səqlam	թափ-թաց
mos-mor	» »	çər-çəplaq	շատ մերկ:

Այս բոլորի մեջ նկատելի է, որ՝ 1) նախամասնիկը կցվում է ոչ միայն բուն թուրքերեն, այլ և փոխառյալ բառերին. ինչպես՝ *bem-beyaz* (արար.), *sim-siyah* (պրս.):

2) Ամենից ավելի գործածական է *թ* ձևը, ամենից քիչ՝ *ր* ձևը (երկու օրինակ):

3) Կան բառեր, որ առնում են թև այո, և թև այն բաղաձայնը. ինչպես՝ *yam-yaşəl* կամ *yap-yaşəl*, *düm-düz* կամ *düp-düz* և այլն:

4) Ըստ այսմ, ոչ մի կանոն չկա որոշելու համար, թե մասնիկի վերջին բաղաձայնը ինչ պետք է լինի. միմիայն *b-ով սկզբից բառերի մոտ լինում է միշտ m և ոչ թե ր*:

5) Կա մինչև անգամ երկավանկ մասնիկ, ինչպես ունի *qarma-qarəş* «բոլորովին խառնակ» բառը:

Այս բոլորից հետևում է, թե թուրքերենի գերադրականի այս ձևը մի բոլորովին անկանոն երևույթ է և յուրաքանչյուր բառի համար կա մի առանձին մասնիկ. մի բառի համար մի մասնիկ !!!

Նույնը գտնում ենք նաև զազախերեն լեզվի մեջ, ուր ավելացած բաղաձայնն է միշտ *թ*. ինչպես՝

kəp-kəzəl	շատ կարմիր
up-uzun	շատ երկար
kap-kara	շատ սև
žap-žaksə	շատ լավ:



Նույնպես և բաշկիրերեն լեզվի մեջ, ուր ավելացնում են միշտ ք բաղաձայնը. օրինակ՝

qap--qara	սեփ-սև
qəp-qəðəl	կաս-կարմիր
yäp-yäsel	կափ-կանաչ
tüp-tünaräk	կըս-կըլոր
küp-kük	կաս-կապույտ:

Ուլղուր լեզվով՝

app-aq	շատ ճերմակ
qap-qara	սեփ-սև
qip-qizil	կաս-կարմիր
köm-kök	շատ կապույտ կամ կանաչ
top-tola	լեփ-լեցուն:

Կոմուխ լեզվում հավելյալ մասնիկների վերջաձայնն է միշտ ք, թեև մյուս թուրքական լեզուներում լինում է բացի ք-ից նաև m, s:

Հայերենում էլ ասում են.

սեփ-սև = թրք.	qap-qara
դեփ-գեղին »	sap-sarə
ճեփ-ճերմակ »	ap-ag և այլն:

Գերադրական կազմելու մի ուրիշ ձև է ածականը երկար արտասանել. ինչպես՝

ռուս. Мво́гоі	խիստ շատ
Кра́сный	շատ կարմիր:

Կովկասյան լակերեն լեզվով՝ luḥessa «սև», luḥessa «շատ կամ բոլորովին սև», kunssa «մեծ», künssa «շատ մեծ»:

Ամերիկյան կարաիբ լեզվի մեջ գերադրական կազմելու համար ածականի առաջին վանկը երկարում է մինչև 3 վանկի տևողությամբ. ինչպես՝ iroponti «լավ», ihiroponti «շատ լավ»:

Հայերեն էլ ասում ենք՝ շատ կարմիր (նիխ) և այլն, նույն-իսկ կա օրինակ, երբ հեղինակը նույնը արտահայտում է երկարության նշանով. օրինակ՝

Որմե կերևի, թե շատ գործածակաճ և շատ ծանոթ թվական մ'էր այն (Դուրյան, Ուսումն. և քնն., էջ 153):

Շատ բառը այստեղ դրվելով գործածակաճ և ծանոթ ածականների մոտ, կազմում է արդեն գերադրական. իսկ ստանա-

լավ երկարութեան նշանը, ինքն էլ ստանում է «շատ» իմաստը, իբր՝ խիստ շատ:

Գերադրական կարելի է կազմել նաև զանազան դարձվածներով. ինչպես՝

ռուս. Что ни было лучших солдат բոլոր լավագույն զինվորները.

ты куда добрее его դու նրանից շատ ավելի բարի ես:

Ձավայերենում ածականից հետո դնում են piyambak կամ déwé «ինքը» բառերը, և ստացվում է գերադրական աստիճան:

Մեկանեզյան տասիրիկի լեզվով գերադրական կազմելու համար ածականի վրա դնում են nasa «միակ» բառը:

Մեկանեզյան վանիկոլ լեզվով գերադրական կազմելու համար ածականի վրա գնում են fisale «վատ, գեշ, հոգի» բառը, օրինակ՝

igane fisale

շատ լավ (բուն՝ վատ լավ)

pwenefisale

շատ խոշոր (բուն՝ վատ խոշոր).

Այսպիսի ձևեր առաջացած են լինում նախապես բացասական բառերից և հետո ընդհանրացած. օրինակ՝ կատաղի—գեշ կատաղի=շատ կատաղի:

Գերադրական կազմելու համար դնում են այնպիսի բառեր, որոնք ցույց են տալիս մեծություն, բարձրություն, առավելություն. ինչպես՝

Ձին գրվում է ting<sup>3</sup> «գազաթ» բառը. օրինակ՝

ting<sup>3</sup> kao<sup>3</sup> ամենաբարձր:

Ձուվաշերենում՝ tep «արմատ» բառը. օրինակ՝

tep ašlax mar ոչ բոլորովին խելոք:

Պարսկերեն՝ xeyli «շատ», bisyar «շատ, բազում», pur «լիքը», digar «ուրիշ», nīk «լավ», saxt «խիստ, կարծր», beyāyat «սաստիկ», bešiddat «սաստիկ», և այլն. օրինակ՝

xeyli xūb շատ լավ

bisyar xub բազումս լավ:

Ճապոներեն՝ ičiban «առաջին» բառը:

Օլրոտերեն լեզվով գերադրական է կազմում deze «սես» բառը. ինչպես՝

At deze, at ձի սեսս, ձի = շատ լավ ձի:

Mašina deze, mašina *ամեքենա ասես, ահա մեքենա* = շատ լավ մեքենա»:

Նույն լեզվով գոյականի վրա դնելով ճա մասնիկը, կստացվի համեմատության գաղափարը. օրինակ՝

Սյ atča dyan

Կողը ձիու համեմատությամբ խոշոր է.

իսկ գոյականի վրա դնելով dəy մասնիկը, կստացվի «նրա չափ» իմաստը. ինչպես՝

Bozu kulundəy

Հորթը քուռակի չափ է

Ol ayudəy bökö

Նա արջի չափ ուժեղ է:

Բաղկիրերեն լեզվում գերադրական կազմելու համար ածականի սկիզբը դնում են iŋ, bik, utā նախամասնիկներից որևէ մեկը. ինչպես՝

iŋ ŋaqšə *ամենալավ*

bik » *շատ լավ*

utā qəðəl *չափազանց կարմիր:*

Կումուխերեն լեզվով՝

kör yaxšə *շատ լավ:*

kör bek ariv *խիստ շատ գեղեցիկ:*

Աննամերենում գերադրական կազմելու համար գործածվում են բազմաթիվ բառեր և արտահայտություններ. հիշենք նրանցից մեզ համար ավելի տարօրինակները. n'üt «առաջին», yu «չար», huŋ «կատաղի», kva sük «բոլոր ուժից վեր», kva dok «այն կողմ», het sük «բոլոր ուժով», tçet «մեռնել» (իմա մահու չափ, մեռնելու չափ), t'ay me «տեսնել մորը» (իմա այնքան սաստիկ, որ մեռած մոր ուրվականը կտեսնիս). օրինակ՝

kə huŋ *դժվար կատաղի* = շատ դժվար

met tçet *հոգնած մեռնել* = շատ հոգնած

man<sup>y</sup> t'ay me *սաստիկ տեսնել մայր* = շատ սաստիկ

çə het sük *հեռու ամբողջ ուժով* = շատ հեռու

mat n<sup>y</sup>üt *զով առաջին* = շատ զով:

Կոմի-պերմերեն լեզվով գերադրականը կազմվում է med բառով, որ ածականի հետ միանալով մի բարդ բառ է կազմում. ինչպես՝

medvəna	ամենաուժեղ
medžočkom	ամենասպիտակ
medkuzu	ամենսերկար:

Բացարձակ գերադրականի մի սուանձին, ձև է այն, որ կազմվում է ածականը բարդելով այնպիսի մի գոյականի հետ, որ տվյալ հատկության իբր տիպար է սոսմում: Ամեն լեզվի մեջ էլ, շատ հաճախ, ածականները պատկերամաս բացատրությամբ նմանեցվում են այս կամ այն արտահայտին. օրինակ՝ երեսք նորա իբրև զարեգակն և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև զլոյս (կամ իբրև զձիւն) Մտթ. Ժէ, Զ և Մրկ. Թ. Զ. Աշխ. Ուսի պես ճերմակ. բամբակի պես ճերմակ. արծուի պես սև. սաթի պես սև. կրակի պես փայլուն և այլն. Բայց բարդությամբ գերադրական կազմելու ձևը հատուկ կարող է լինել միայն այնպիսի լեզուների, որոնք ճոխ բարդություն ունեն. այսպես՝ սանսկրիտը, հունարենը և այլն. գերադրականի այսպիսի օրինակներ առանձնապես շատ է տալիս գերմաներենը. ինչպես՝

baumstark	շատ ուժեղ (ծառի պես)
blutarm	շատ աղքատ
blutjung	շատ երիտասարդ
eiskalt	շատ սուր (սառույցի պես)
essigsauer	շատ թթու (քացախի պես)
federleicht	շատ թեթև (փետուրի պես)
feuerrot	շատ կարմիր (կրակի պես)
grasgrün	շատ կանաչ (խոտի պես)
grundfalsch	շատ սուտ (հիմքի պես)
himmelhoch	շատ բարձր (երկնքի չափ)
kolchschwarz	շատ սև (ածուխի պես)
nagelneu	շատ նոր (եղունգի կամ գամի պես)
pechschwarz	շատ սև (ձյութի պես)
rabenschwarz	» » (ագռավի պես)
schneeweiss	ձյունասպիտակ (ձյունի պես)
steinhart	շատ կարծր (քարի պես)
steinreich	շատ հարուստ ( » » )
stockblind	բոլորովին կույր (կոճղի պես)
stohdürr	շատ չոր
weltbekannt	շատ ծանոթ (աշխարհածանոթ)
wunderschön	շատ գեղեցիկ (հրաշագեղ)

նման ձևեր կան նաև անգլերենի մեջ. օրինակ՝	
brand-new	բոլորովին նոր (դրոշմի պես)
span-new	» » (թիզի պես)
snow-white	ձյունասպիտակ
stone-blind	բոլորովին կույր (քարի պես):

Նույնիսկ այն լեզուների մեջ, ուր կո գերադրականի առանձին մասնկալոր ձև, այս ձևը բավական ուժեղ չի համարվում և իմաստը սաստկացնելու համար կարիք են զգում ավելացնելու սաստկութուն արտահայտող զանազան մակրայների, որոնք կարող են միանալ թե՛ պարզ ածականին, և թե՛ ածականի մասնկալոր գերադրական ձևին. ինչպես՝

Պրս. bisyār bihtar	շատ լավագույն
dīgar badtar	այլպես վատագույն, խիստ վատագույն
nīk šīrīntarīm	լավ ամենաքայքայր՝

Հուն. λιαν μέγα αἰματ մեծ», πολὺ μείλων αἰματιել մեծադույն», σφοδρὰ ἀδίκως αἰματ անարդար».

Լատ. maxime fidelis αἰμαտ հավատարիմ», magis severus «ավելի խիստ», valde lenis αἰμαտ մեղմ»:

Այդպես և ֆրանսերենում ավելացվում են՝ très «չափազանց», tout à fait «բոլորովին», terriblement «սոսկալի կերպով», furieusement «կատաղաբար», grandemen «մեծապես», և այլն բառերը:

Ռումիներենում՝ foarte, prea «հույժ», deosebit «հատկապես», peste măsură «չափազանց», ne mai auzit «չլսված», extraordinar «արտասովոր», groaznic «սոսկալի», de tot, cu desăvârșire «բոլորովին» բառերը:

Իտալերենում՝ molto «շատ», oltre modo «ուրիշ եղանակով» (այլպես), fuor di misura «չափից դուրս», singolarmente «եզակիորեն» և այլն:

Գերմաներենում՝ furchtbar «սոսկալի», schrecklich «սարսափելի»:

Կարելի է ասել օրինակ՝ furchtbar schön կամ schrecklich schön «սոսկալի գեղեցիկ, սարսափելի գեղեցիկ»

Ռուսերենում՝ гораздо	շատ ավելի
очень	շատ
весьма	շատ, խիստ
самый	ամենա:

**Ժողովրդական խոսակցական լեզվում՝**

ужас	սարոսփ
страх	սարոսփ
смерть	մահ
до смерти	ցմահ
больно	ցավագին՝ որ իբր մասնիկ է գործածվում:

Արարերենում՝ Jiddan «խոհապես», kaṣīran «շատ», առավել-լապես», lilyāyati «չափազանցությամբ», aṣadd «սաստիկազույն», aqall «ամենաքիչ», ṣarr «հոռեզույն», xayr՝կամ afdal «լավագույն», akdar «ամենաշատ, առավելագույն»:  
Բրբ. ՅՕԻ «հույժ» բառով՝

tieretere	ավելի կուշտ
zor tieretere	ամենակուշտ:

Թալիշերեն լեզվով բաղադրական կազմելու համար դրվում է veh բառը (որ է պրս. bih «լավ» և հյ. վեհ), իսկ գերադրականի համար սրա հետ չնակ ճօզ, որ թրբ. ճօզ «շատ» բառն է. ինչպես՝

veh ṣin	քաղցրագույն
veh ճօզ ṣin	ամենաքաղցր:

Ֆիննական վեպս կամ չուգ լեզուն գերադրական կազմելու համար թեև ունի սեփական մի ձև, այն է lujas մակրայը, բայց ավելի հաճախ գործածում է ռուսերենից փոխառյալ samii բառով կազմվող ձևը, որ համապատասխանում է մեր ամենա- ձևին. օրինակ՝ samii kuiv «ամենաչոր»:

Այսպիսի սաստկացուցիչ մակրայները հաճախակի գործածությամբ մաշվելով ձևացնում են զանազան գերադրական նախամասնիկներ: Այսպիսի նախամասնիկներից կարելի է հիշել՝ ռուս. наи-, пре-, բուլգ. нај-, օրինակ՝ добъръ «լավ», најдобъръ «ամենալավ», սերբ. нај-, օրինակ՝ најприметнији «ամենախմաստուն», прѣ-, օրինակ՝ прѣвелик «շատ մեծ, ահագին», прѣвисок «շատ բարձր», važna i prěvažna stvar «կարևոր և շատ կարևոր բան»:

Իտալ. tra-, stra-, arci-. ինչպես՝  
strabello, arcibellisimo «հույժ գեղեցիկ»

Չեխ. nej-, pre-, vše-, vele-, pra-, ինչպես՝  
předrahý «շատ թանկ»:

Գրաբարի մեջ գերադրական կազմելու մի ձև է ածականի վրա ավելացնել հուսկ բառը. *ինչպես՝*

հուսկ կրտսերն *ամենից փոքրը*

հուսկ յետինն *ամենից վերջինը*։

Տրված օրինակները հնդեվրոպական նոր լեզուներից էին. բայց նույն երևույթը կարող ենք գտնել նաև տարբեր լեզվախմբերի մեջ։ Այսպես՝

Արաբ. *թե՛ բաղդատականը, և թե՛ գերադրականը կազմվում են a նախամասնիկով. օրինակ՝ akbar ամեծագույն»*. աստիճանի տարբերությունը որոշվում է ըստ քերականական գործածության. *եթե որոշյալ է՝ համարվում է գերադրական. օրինակ՝ al-akbar ամենամեծը»*. առանց հոգի բաղդատական է և ստանում է բացառական հղով։

Թեև ծագումը մեզ հայտնի չէ, բայց վրացերենն էլ իր բաղդատականն ու գերադրականը կազմում է յ (u) նախամասնիկով, առաջինի համար մի անգամ դնելով, երկրորդ գեպքում՝ կրկնելով. *օրինակ՝*

მშვენიერო	(mšvenieri)	գեղեցիկ
უმშვენიერესი	(umšvenieresi)	ավելի գեղეցիկ
უუმშვენიერესი	(uumšvenieresi)	ամենագեղეցიკ

Մեն-քմեր խասի լեզուն բաղդատականը կազմում է kham նախամասնիկով, իսկ գերադրականը՝ ավելացնելով նաև tam մասնիկը. *օրինակ՝ eh Եկարծրություն», ba-eh Եկարծր», ba-kham-eh Եավելի կարծր», ba-kham-eh-tam Եամենակարծր»*։

Ինչպես բաղդատականը ունի նվազական ձև, նույնպես և գերադրականը ունի առավելական ձև, որ արտահայտում է շրջափակում իմաստը. *այսպես, օրինակ՝ ռուսերենում-ХОНЬКИЙ մասնիկով կազմված ձևերը, ինչպես՝*

белехонький	բոլորովին սպիտակ
смирнехонький	» խաղաղ

Թնականաբար ամեն տեսակ ածական չի կարող ունենալ բաղդատական ու գերադրական աստիճան. միայն որակական ածականներն են, որ ընդունակ են համեմատություն աստիճաններ ստանալու։ Սակայն նույնիսկ որակական ածականները, հաճախ, երբ նշանակությունը թույլ չի տալիս աստիճանավորումներ մտցնելու, չեն ստանում բաղդատական ու գերադրական աս-

տիճան: Օրինակ՝ դերբայ-ածականներից շատերը զուրկ են այս աստիճաններից. չի կարելի ասել ավելի ամուսնացած, ավելի մեռած, ամենից ամուսնացած, ամենից ավելի մեռած և այլն, բայց կարելի է ասել ավելի զարգացած, ամենից ավելի զարգացած:

Անշուշտ, քերականության մեջ չի կարելի դնել զանազան կանոններ՝ բացատրելու համար, թե որ ածականներն են, որ կարող են ստանալ համեմատական աստիճաններ և որոնք ոչ. դա ավելի բառարանական կամ ոճաբանական հարց է: Բայց կան լեզուներ, որոնք համեմատության աստիճանների բարդ կազմություն ունենալու պատճառով, կարևոր են համարել քերականության մեջ էլ այս առթիվ զանազան կանոններ մտցնել:

Այսպես են, օրինակ, սլավոնական լեզուները. Այս լեզուների քերականությունների մեջ նշվում են, օրինակ, թե համեմատության աստիճան չեն կարող ունենալ՝

1) Նյութ կամ առարկայի ինչ նյութից շինված լինելը ցույց տվող ածականները. այսպես՝ ոսկյա, փայտյա, արծաթյա և այլն.

2) Ազգ ցույց տվող ածականները. ինչպես՝ հայ, ռուս, թուրք, գերմանացի և այլն:

3) Ստացողական ածականները. ինչպես՝ ռուս. братский «եղբայրական» (եղբոր) և այլն:

4) Բնական հատկություն կամ վիճակ ցույց տվող ածականները. ինչպես՝ ռուս. немо́й «համր», լեհ. glychy «խուլ», bosy «բոսիկ», nagі «մերկ» և այլն:

5) Թվականներից աստիճան կարող է ստանալ միայն «առաջին» բառը, ինչպես՝ ռուս. первейший «ամենաառաջին».

Ինչպես ասացինք, սրանք ավելի ոճաբանական երևույթներ են, որոնք ազգից ազգ և լեզվից լեզու կարող են տարբեր լինել: Այսպես, օրինակ՝ մինչդեռ սլավոնական լեզուների մեջ, ինչպես ասվեց, կաղ կամ խուլ չունեն համեմատական աստիճան, հայերենի մեջ կարող ենք երկուսն էլ աստիճանավորել թե հին, և թե նոր լեզվով. այսպես՝

Ո՞վ ոք խլագոյն քան զՊօղոս. այլ տես, զիարդ վազվազակի լուաւ յօրինակ հեթանոսաց. Գէ, ես.

Երազագնաց ընթացք մերոյ գիտութեանս յոյժ կալագոյն գտանին հասանել կալ ի վերայ հաստատեալս բնութեանց, վեցօր. ա.



Մի խնդրեր դու զզօրութիւն բանից՝ որ կաղազոյնք իցեն..  
Եփր. համար.

Աշխարհաբարում կարող ենք ասել ոչ միայն՝

Այս ահանջս մյուսից ավելի խուլ է.

Այս մարդը նրանից ավելի կաղ է.

այլև՝

Պապից ավելի պապական է:

Ձանազան պատճառներով համեմատութեան այս կամ այն եզրը կարող է ջնջվել կամ սովորական չդառնալ և հետո փոխանակվել մի ուրիշ ձևով. արդյունքն այն է լինում, որ երբեմն համեմատութեան եզրերը կարող են լինել բոլորովին առանձին բառեր. ինչպես՝

Գերմ.	gut	besser	viel-mehr
	լավ	ամենալավ	շատ-ամենաշատ
Լատ.	bonus	melior	omptimus
	լավ	ավելի լավ	ամենալավ
	malus	pejor	pessimus
	վատ	ավելի վատ	ամենավատ
	parvus	minor	minimus
	փոքր	ավելի փոքր	ամենափոքր

Հն. ἀγαθος ἀμείνον ἀρίστος — լավ, ավելի լավ, ամենալավ  
Իսպ. alto superior supremo բարձր, ավելի բարձր, ամենաբարձր  
bueno mejor optimo լավ և այլն

Պորտ. muito շատ, mais ավելի շատ, ամենաշատ  
pouco քիչ, menos » քիչ, ամենաքիչ

grande	մեծ	maior	ավելի մեծ, ամենամեծ
pequeno	փոքր	menor	» փոքր, ամենափոքր
bom	լավ	melhor	» լավ, ամենալավ
mão	վատ	peior	» վատ, ամենավատ
alto	բարձր	superior	ավելի բարձր
baixo	ցած	inferior	ավելի ցած
		supremo	ամենաբարձր
		infimo	ամենացած.

#### 4. ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵՁՈՒՆԵՐՈՒՄ

Գերադրականի հնդեվրոպական մասնիկն էր - istho - (կամ is—to), որ կաղմված է բաղդատական -yes-(is-) մասնիկի

վրա ավելացնելով -tho- մասնիկը: Յեղակից լեզուների մեջ պահպանված է հնդ-իրանական, հույն և գերմանական խմբերում. սանս. -iṣtha-, զնդ. -iṣṭa-, հն. -ιστο-, հրգ. -isto, գոթ. -ist-, -ōst-. գերմ.-ste, անգլ. -est, ձևերով. հմմտ. սանս. svād-iṣ-ṭhas «ամենուրեք», զնդ. maziṣṭa «մեծագույն», հն. ἤδ-ιστος.

Գոթ. sūtists «ամենաբազր», mānagists «ամենաշատ», armōsts «ամենաաղքատ».

Հրգ. suoz-isto, հնյուս. spakastr «ամենախելոք», հ. նորվ. nā-nastr «ամենամոտիկ», helgastr «ամենասուրբ».  
Գերմ. kleinste «ամենափոքր», անգլ. longest «ամենաերկար».  
Նորվ. klogest «ամենախիմաստուն»:

Պարսկերենը թեև կորցրել է այս մասնիկը և իր գերադրականը ուրիշ ձևով է կազմում, բայց իբր մնացորդ հնուլթյան, պահել է մի քանի քարացած ձևեր. ինչպես՝ պհլ. vahišt «լավագույն», փարսի՝ vahest նույն նշ., պրս. bihišt «գրախոս». պհլ. kamest «ամենապակաս», balast «ամենաբարձր», mahēst «փարս. mahēst «մեծագույն», պրս. mahist «բարձրարժան», պրս. nuxust «առաջին» (հմմտ. հյ. նախ):

Հին բարձր գերմաներենում գերադրականը կազմվում է -ist կամ -ōst մասնիկով, որոնց գործածուլթյան համար ստույգ կանոն չկա, ճիշտ ինչպես բաղդատականի -ir և -or մասնիկների համար. օրինակ՝

hōhīsto կամ hōhōsto  
slēthīsto, lengīsto, jungīsto և այլն.

Հույանդերենում բաղդատականը կազմվում է -er, գերադրականը՝ -st մասնիկով. օրինակ՝ hoog «բարձր», hooger «ավելի բարձր», hoogst «ամենաբարձր»:

Մի քանի լեզուներ նույն գերադրական -istho -ձևի մոտ կամ առանձին կազմել են ուրիշ գերադրական մասնիկներ. այսպես՝

1) Հնդ-իրանական ճյուղում հնդեվր. \*-tama-, որ տալիս է սանս. -tama-, զնդ. -təma-. այս մասնիկը համարվում է -tara- ձևով բաղդատականի գերադրականը, մինչդեռ -istho- համարվում է -yes- ձևով բաղդատականի գերադրականը. օրինակ՝

Սանս. amá-tama	հումագուլյն, ամենահում
զնդ. mazišta	ամենամեծ, բայց՝
hubaoiðitəma.	ամենաանուշաբույր.

Պարսկերենը կորցրել է այս մասնիկը, բայց պահպանվել են և փարսին պահում են -tum ձևով. ինչպես՝ փարսի՝ xurdatum «ամենափոքր» (Spiegel.Gr.pars. էջ 57), պհլ. vadtum «ամենավատ», tištām «ամենատրագ», ðšōmandtum «ամենազորավոր, ամենուժեղ»:

2) Լատինական և կելտական ճյուղերում ստեղծվել է հընդ-եվր. -s-րո- մասնիկը, օրինակ՝

հնդեվր. auks-րո > լատ. Auximum, կելտ. Uxuma բարձրագույն.

լատ. maximus ամենամեծ  
oxime ամենաարագ  
proximus ամենամոտիկ  
pessimus ամենավատ:

Նույնը նաև \*-is-րո -ձևով, որից էլ՝

Հլատ. plisimo > լատ. plurima(\*plēis-րո-) խիստ շատ  
լատ. pulcherrimus(\*pulcrisemos) ամենագեղեցիկ  
լատ. facillimus(\*facilisemos) շատ հեշտ

գալլերեն Oðçisámη, (քաղաքի անուն) «շատ բարձր».

հ.- գալլ. hinham «շատ ծեր» (\*senisamos):

3) Դարձյալ Լատինականում՝-issimus. օրինակ՝ novissimus «նորագույն, ամենավերջին». սրանից են առաջանում իտալ.-issimo, իսպան. -isimo, պորտ. -issimo, և ֆրանս. -issime (վերջինս հազվագյուտ) մասնիկները. օրինակ՝ իտալ. grandissimo «ամենամեծ», bellissimo «ամենագեղեցիկ», buonissimo «ամենալավ», իսպան. importantísimo «ամենակարևոր», պորտ. friíssimo «ամենացուրտ», ֆրանս. grandissime «ամենամեծ», généralissime (գոյ.) «գերագույն հրամանատար»:

4) Հունարեն -τατος. օրինակ՝ ὠμότεος «հումագույն, ամենից ավելի հում»:

5) Լիտվաներենի գերադրական մասնիկն է ար. -iausias, իգ.-iausia, որ առանձին ձև է հնդեվրոպական լեզուների մեջ և իրեն մերձավորն ունի հալ. -uchū ածականի վերջավորության մեջ:

6) Պարսկերենում բուն գերադրականի ձևը կորել է, և

ստեղծվել է մի նոր ձև. բաղդատական -tar մասնիկի վրա ազե-  
լացնում են -in մասնիկը. օրինակ՝ badtarin «ամենավատ», mihta-  
rin «ամենամեծ», բայց այս -in մասնիկը կարող է նաև առանձին  
գործածվել. ինչպես՝ bar-in «ամենավերին, գերազույն», pas-in  
«ամենավերջին»: Սրանից հետևում է, որ -tar-in գերադրականը  
կրկին մասնիկների գումարն է: Սրան նման է օտերեն լեզուն,  
որ նույնպես կորցրել է բուն գերադրականի ձևը և իր գերա-  
դրականը կազմելու համար կրկնում է բաղդատականի մասնիկը.  
ինչպես՝

sau-dār սևագույն sau-dār-dār ամենասպիտակ  
urs-tār սպիտակագույն urs-tār-tār ամենասպիտակ:

7) Կելտական վելլ լեզուն ածականների համեմատության  
աստիճանները չորսի է հասցրել՝ ավելացնելով նախորդների վրա  
նաև հավասարական (equative) աստիճանը. օրինակ՝

դրական հավասարական բաղդատական գերադրական  
glân մաքուր glaned glanach glanaf  
tlawd աղքատ tloted tlotach tlotaf  
budr կեղտոտ butred butrach butraf

8) Հին պրուսերենի բաղդատական աստիճանը անստույգ  
է, իսկ գերադրականը կազմվում է դրական ածականից առաջ  
գնելով ucka բառը. ինչպես՝ ucka kuslainsin «ամենաթույլ, ամե-  
նատկար»:

9) Լատիշերենում գերադրական կազմելու մասնիկներն են  
ար. -ākais, իգ. -ākā, օրինակ՝ visgudrakais vīrs «ամենաիմաս-  
տուն մարդ», visskaistakā eka «ամենագեղեցիկ շենք»:

Ֆրանսերեն ժողովրդական լեզվում կա մինչև անգամ «կովի  
չափ, Պլ. կովերու պես», որով կազմում են գերադրական. ինչ-  
պես՝ Je suis vachement fatigué «շատ (կովի չափ) հոգնած եմ».  
Il est vachement fort «կովի չափ (շատ) ուժեղ է»:

### Ճ. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՓՈՓՈՅՈՒԹՅՈՒՆԸ

Տեսանք բաղդատականի և գերադրականի այն ձևերը,  
որոնք սկսելով մի պարզագույն և հասարակ վիճակից և հետզհե-  
տե զարգանալով, հասնում են առանձին նախամասնիկների և  
ետամասնիկների: Այս վիճակին հասնելուց հետո, լեզուների մեջ  
կատարվում է հակառակ երևույթը. մասնիկները շատ գործած-  
վելով թուլանում են, զժգունանում են, կորցնում են իրենց  
սաստկական ուժը. և այն ժամանակ, լեզուն, որ փնտրում է

միշտ ուժգին ու որոշակի արտահայտության ձևեր, մի կողմից ավելացնում է ասոսկալի, հրաշալի, զարհուրելի, սարսափելի... քառերը ածականի վրա, մյուս կողմից՝ ջնջելով բաղդատականի և գերադրականի մասնիկները՝ անցնում է արտահայտության նախնական սովորական ձևերին: Օրինակներ.

Հատիներենը ունի բաղդատականի և գերադրականի ասոսնձին ձևեր, բայց շատ գործածվելուց՝ այս ձևերը կորցրին իրենց ուժը. ուստի ավելի արտահայտիչ մի եղանակ փնտրելով՝ նորալատին լեզուները հնարեցին մի նոր ձև. Իսպանիան, Գասկոնը և Արևելքը սկսեցին գործածել լատ. magis «ավելի» բառը, իսկ Իտալիան և Գալլիան՝ plus «ավելի» հոմանիշը:

Ֆրանսերենը լատինական գերադրականից միայն մի քանի բառ ժառանգեց. հին ֆրանսերենում, մինչև ԺԲ դար, ասում էին դեռ saintisme «ամենասուրբ», altisme «բարձրագույն» և այլն. ԺԴ դարում արդեն սրանք անհետացան և նրանց տեղ սկսեց գործածվել բաղդատականի համար plus «ավելի», գերադրականի համար՝ նույնը որոշյալ հոգով (le plus), ինչպես՝ plus grand «ամեծագույն», le plus grand «ամենամեծ»: Իտալերենում թեև մինչև այժմ կա-issimo վերջավորությամբ գերադրականի ձևը, բայց նրա հետ գործածական է նաև piu «ավելի», il più «ամենա...» բառերով կազմվող ձևը. ինչպես՝ grande «մեծ», più grande «ավելի մեծ», grandissimo կամ il più grande «ամենամեծ», buono «լավ», buonissimo կամ il piu buono «ամենալավ»:

Ռետոռոման լեզվով grond «մեծ», pli grond «ամեծագույն», ilg pli grond «ամենամեծ»:

Իսպաներենում բաղդատականը կազմելու համար դնում են mas «ավելի». գերադրականի համար թեև կա -ismo մասնիկը, բայց ավելի լավ է համարվում կամ բաղդատականի վրա ավելացնել որոշիչ հոդը և կամ դնել muy (նույժ) բառը. օրինակ՝ importantísimo կամ may importante «ամենակարևոր»:

Կատալան լեզվով բաղդատական՝ mes alt «ավելի բարձր», գերադրական՝ el mes alt «ամենաբարձր»:

Պորտուգալերենում բաղդատականի համար դնում են mais «ավելի», իսկ գերադրականի համար, թեև կան -issimo կամ-errimo մասնիկները, բայց ավելի լավ է համարվում բաղդատականի վրա ավելացնել որոշիչ հոդը. Օրինակ՝

frio ցուրտ, friissimo շատ ցուրտ.

celebre նշանավոր, celeberrimo ամենանշանավոր, բայց

A minha espingarda é bonita, a tua é mais  
 Իմ հրացանը է գեղեցիկ, քոնը է ավելի  
 bonita, a sua é a mais linda de todas.  
 գեղեցիկ, նրանը է ամենա գեղեցիկը բոլորից.

Ռուսներենում բաղադատականի համար դնում են mai «ավելի» բառը, իսկ գերադրականի համար ավելյանում է սրա վրա cel որոշիչը. օրինակ՝ mai plăcut ավելի դուրեկան cel mai plăcut ամենադուրեկան:

Նոր հնդկական սինդհի լեզուն էլ մյուս բոլոր հնդկական լեզուների նման կորցրել է բաղադատականի և գերադրականի կազմության հին ձևը և նրա փոխարեն առաջինը կազմում է պարզ բացառական հոլովով, երկրորդը՝ «ամեն» բառով.

Հին հունարենն էլ ունի բաղադատականի և գերադրականի համար առանձին մասնիկավոր ձևեր: Միայն այն դեպքում, երբ ածականը իր սեփական բաղադատական և գերադրական աստիճանները չունի, նրանց փոխարեն կողքին դնում են «ավելի» և «քիչ, սակավ» բառերի աստիճանները. օրինակ՝

μάλα շատ, μάλλον ավելի շատ

μάλιστα ամենաշատ

ὀλίγον քիչ

ἥττον ավելի քիչ

ἥμισυ ամենաքիչ:

Նոր հունարենը թեև բաղադատականի հին ձևը պահում է դեռ, բայց սրա հետ միասին գործ է ածում նաև «ավելի» նշանակող բառով կազմվող ձևը, իսկ գերադրականը կազմում է որոշիչ հոլով՝ ὄριζον φράσεωνների կամ այլ նորալատին լեզուների պես. օրինակ՝ ὄριζονος «գեղեցիկ», ὄριζοντερος «ավելի գեղեցիկ», ὁ ὄριζοντερος «ամենագեղեցիկ», καλός «լավ», πῶς καλός «ավելի լավ», πῶς καλός «ամենալավ», πεπαιδευμένος «կրթված», μάλλον πεπαιδευμένος «ավելի կրթված», ὁ μάλλον πεπαιδευμένος «ամենակրթված»: Նոր հունարենը սիրում է այս նոր ձևը և միշտ այն է գործածում.

Գերմանական ճյուղը ավելի հավատարիմ է հին մասնիկավոր ձևին, բայց այստեղ էլ սկսվել է փոփոխությունը. գանիերենը ունի բաղադատականի համար -ere և գերադրականի համար -est մասնիկները (օրինակ՝ rig «հարուստ», rigere «հարստագույն»,

rigest «ամենահարուստ»), բայց շատ ածականներ բաղդատականը կազմում են mere և գերադրականը՝ mest բառերով: Այսպես և շվեդերենը, որ թեև բաղդատականի համար ունի -re և գերադրականի համար -st մասնիկները, բայց շատ ածականներ ստանում են բաղդատականի համար mera և գերադրականի համար mest բառերը և ուրիշ նման բառեր:

Լեհերենը ունի բաղդատական կազմելու առանձին ձև, բայց կան բառեր, որ չեն ստանում այդ ձևը, և նրանց վրա դնում են bardziej կամ więcej «ավելի» բառը:

Լեթթերենը ունի բաղդատականի առանձին ձև, որ կազմավորվում է -ak- մասնիկով. օրինակ՝

labs լավ, labaks լավագույն  
tumschs մութ, tumschaks մթագույն:

Բայց ավելի գործածական են jo և wairak «ավելի» բառերով կազմված ձևերը. ինչպես՝

bagats հարուստ, jo bagats ավելի հարուստ  
miltains ալյուրոտ, wairak miltains ավելի ալյուրոտ:

Սլովեներենը ունի իր բաղդատական ու գերադրական մասնիկները. այսպես՝ ejši, eji բաղդատականի համար, որոնց վրա ավելացնելով naj- կազմում է գերադրականը, բայց հատկապես ժողովրդական լեզուն սիրում է սրանց փոխարեն գործածել bōlj «ավելի» և najbōlj «շատ ավելի» մակբայներով կազմված ձևերը. ինչպես՝ rdeč «կարմիր», bolj rdeč «ավելի կարմիր», najbolj rdeč «ամենակարմիր»:

Լեզուներ էլ կան, որ հին բաղդատական և գերադրական մասնիկները կորցնելուց հետո, չեն ստեղծել վերոհիշյալներին նման մի նոր ձև, այլ դիմել են ամենանախնական ձևին, այն է՝ շամեմատոթյան բացառականով կազմվող եղանակին: Այսպես են, օրինակ՝ սանսկրիտի ժառանգ մարաթի լեզուն, որ բաղդատականի և գերադրականի փոխարեն պահում է միայն բացառական հոլովը. աֆղաներենը, որ հնդեվրոպական և իրանական բաղդատական և գերադրական բոյոր մասնիկները կորցրել է և բաղդատական աստիճանը կազմում է պարզ բացառականով, իսկ գերադրականը «մյուսներին» ձևով. ինչպես՝

spuk tar-baṇa «թեթև փետուրից», ուր tar- բացառականի մասնիկն է.

Այլ լեզվախմբերից էլ մի օրինակ տալու համար հիշենք վրացերենը, ուր թեև կա բաղդատականի և գերագրականի առանձին ձև, բայց կարելի է նաև գործածել պարզապես *up'ro* «ավելի» և *yuélaze* «ամենա-» ձևերը. օրինակ՝

*up'ro didia čemze*  
ավելի մեծ է ինձնից  
*yuélaze lamazia*  
ամենից գեղեցիկ է:

### 6. ԳԵՐԱԴՐԱԿԱՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ինչպես բաղդատականի -yes- և -tero- մասնիկները, նույնպես և գերագրականի -isto- մասնիկը անհետ ջնջված է հայերենում. (պիտի տար հյ. -խտ, ինչպես ցույց է տալիս հնդեվր. *vesti* > հյ. — գգեստ ձևը): Ուրեմն գրաբարը որևէ առանձին մասնիկ չունի գերագրականի համար. նա իր գերագրականը կազմում է հետևյալ ձևերով.

1) Պարզ դրական ածականը դնելով որոշիչ հոգով՝ հոգնակի բացառական խնդրով. օրինակ՝

Մեծն ի ձէնջ եղիցի ձեր սպասաւորը.

2) Նույնը ամեմայն բառի հետ գործածելով.

Մեծ է սէրն հայրենեաց քան զամենայն մեծութիւնս երկրաւորս.

3) Ածականը ինքը իրանով կրկնելով. ինչպես՝

մեծամեծ, չարաչար, ջերմաջերմ, ժանտաժուտ.

4) Դրական ածականի վրա ավելացնելով կարի, հույժ, անհնարիմ մակբայները. ինչպես՝

Կարի չար առնէ.

Եւ էր հեծելագօրն կարի յոյժ.

Կարի զօրաւորք են յոյժ.

Կարի զօրաւորագոյն քան զմեզ եղեր.

Մի կարի արգար լինիր:

Ածականը զորացնելու ձևերից մեկն էլ նրա մոտ երիցս բառը ավելացնելն է. օրինակ՝ երիցս անիծեալ, երիցս նղովեալ և այլն: Հոռնարենի մեջ էլ կա նման երևույթ:



Այսպիսի մի իմաստ ունի նաև յակուտերեն ՈՏ երեքք՝ բառը doydu աշխարհ, երկիր՝ բառի հետ գործածելու ժամանակ. օրինակ՝ ոճ doydu «ամբողջ աշխարհ, ամբողջ երկիրը»։ (Այս բացատրությունը նրա համար է, որ տիեզերքը բաժանել են երեքի. երկինք, երկիր և նրանց միջև եղած տարածությունը)։

Ծ) Ածականը բարդելով ամեն բառով, որ այո դեպքում ծառայում է իբրև գերադրականի նախամասնիկ. ինչպես՝ ամենաբարդ, ամենամեծ և այլն։

Գերադրականի այսպիսի ձև գոյությունն չունեն մետրոպոլիտան շրջանում. այդ շրջանի հայերենը արդարև կազմում էր ամեն բառով բարդություններ, բայց միայն բայարմատով (և ոչ թե ածականով). այնպես որ նրանց մեջ ամեն նշանակում էր «ամեն բան» և ծառայում էր իբրև խնդիր բայարմատի. այսպես՝ ամենաբարդ «ամեն բանի բավող», ամենատես «ամեն բան տեսնող», ամենազէտ «ամեն բան գիտցող», ամենաբեր «ամեն բան բերող», ամենագիտ, ամենակալ, ամենուսույց, ամենազոր, ամենավաք, ամենսփիւռ, ամենալից, ամենալցոյց, ամենակեցոյց, ամենաշիջոյց և այլն։

Հինգերորդ դարի կեսից հետո այս կարգի բառերը գերադրականի նշանակություն ստացան. ամենազէտ նշանակեց «ամենից ավելի գիտուն» և այլն, որով սովորություն դարձավ ոչ միայն բայարմատները, այլև ամեն մի ածական բարդել ամեն բառով. ահա այս ժամանակի ծնունդ են՝ ամենաբաղձ «ամենքին բաղձալի, ամենափափագելի», Փարպ. ամենաբարի «շատ բարի» Փիլ. ամենագեղեցիկ «ամենից ավելի գեղեցիկ» Փիլ. Գիտ. ամենաբարևոք, ամենաբաղում, ամենաճշմարիտ, ամենապանծալի, ամենագովելի, ամենասիրելի, ամենաքանչելի, ամենափափագելի, ամենածայրագոյն, ամենագերագոյն և այլն, և այլն։

Հայկազյան բառարանում ամէն- բառով կազմված բառերի ամբողջ թիվը է 330 (երեքը հավելվածում), իսկ ԱԲ ունի 383 բառ, որոնցից միայն 67-ն է վկայված Ծ-րդ դարի առաջին կեսից, թեև Թագյալի մեջ էլ կան մի քանի այնպիսի բառեր, որոնք կազմված են այդ շրջանի ոճով և կարող են վկայված լինել։ Այսպես, օրինակ՝ ամենայուշ. Ոսկ. պոզ. Ա, 529 և ամենակարող Հակոտ. էջ 46 և։

Հինգերորդ դարի առաջին կեսի կազմությունից այս վերջին (ամենա-ձևով) կազմությունը անցնելու ճանապարհը, միև-

նույն ժամանակ զբանց զանազանությունը ցույց տալու համար կարող ենք հիշել հետևյալ բաները.

Ամենայարմար, կազմված է յարմարիլ բայից և նշանակում էր «ամեն բան հարմարող, ճարտարարվեստ»։ այս իմաստով է գործածված Ոսկ. «Ամենայարմար իմաստութեամբ աւետարանեաց»։ 5-րդ դարի կեսից հետո ամենայարմար կազմված կարծեցին հարմար ածականից, որով բառը նշանակեց բարոյրովին հարմար» և այս նշանակութեամբ ունի օրինակ՝ Նար. Ինչպես՝ ամենայարմար սրահ:

Ամենաշնորհ, կազմված է շնորհել բայից և նշանակում էր «ամեն բան շնորհող»։ այս իմաստով է գործածված Ազաթ. «Որում և պարզեւէր իսկ վիճակն յամենաշնորհն Աստուծոյ»։ Հետագայում ամենաշնորհ կազմված կարծվեց շնորհ գոյականից, որով և բառը նշանակեց «ամենայն շնորհօք լի» և այս նշանակութեամբ կան ամենաշնորհ պատկեր (Սարկ.)։ ամենաշնորհ երևեալ Մարութա (ճառընտ.), ամենաշնորհ Դաւիթ անյաղք (Տօնակ.): Երջեսիք գտարածամ փոխեցեալն զամենաշնորհն զՄարգարէ (Արձ. Նանա Թագուհու՝ ԺԲ դարից՝ Յովհաննավանքում, Այրարատ 175) և այլն:

Ուշ շրջանի գրիչները ոչ միայն հնարեցին այսպիսի բաներ, այլև հաճախ իրենց ընդօրինակությունների միջոցին մշտցըրին նաև մեսրոպյան շրջանի գրվածքների մեջ, որով մի կողմից այն գրվածքների լեզուն անհարապատ նորամուծություններով խաթարվեց, և մյուս կողմից այժմ մեր մեջ այն սխալ կարծիքը կազմվեց, թե հին շրջանում էլ այդպիսի բաներ կային, թեև «ասոնք ընտիր լեզուի մեջ շատ ցանցառ են և ոչ երբեք սովորական» (Չալքի. էջ 184): Ուշադիր քննիչների գործն է եղել գանել այսպիսի սխալները և ավելի հարազատ ու վստահելի ձեռագրերի վկայութեամբ ուղղել: Օրինակի համար՝ Սիրաք ԻԶ, 20, կարդում ենք. «Նաև շնորհք ի վերայ շնորհաց կին ամաւթդած, և ոչ է կշիռ ամենաժուժկալ անձին նորա»։ Այստեղ ամենաժուժկալ անհարազատ է և իրոք որ հունարեն բնագրերում չկա. նձի, նույնը նաև Վարդանյան (Բառաք. դիտ. Ա. 15) սրբագրում է ըստ հունարենի «Ոչ է կշիռ ամենայն՝ արժանի ժուժկալ անձին»:

Մերերիանոսի տպագրված օրինակում (էջ 4 և 6) կարդում ենք. «Ամենասուրբ Հոգին... մի Հոգի ամենասուրբ», որոնք ի հարկե հարազատ չեն. և ահա Վիեննայի մատենադարանի № 515

և № 217 ձեռագրերում գտնում ենք հարազատ ընթերցվածը, որ է պարզապես սուրբ (Վարդանյան, անդ, էջ 15—16)։

Այսպիսի անհարազատ նորմուծության շատ լավ մի օրինակ է ըստ իս ամենաշնորհող բառը Կորինթի մեջ. «Որում պարգևէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ»։ Ամենաշնորհ բառը բոլորովին բավական է «ամեն բան շնորհող» իմաստը տալու համար և բոլորովին ավելորդ է ող մասնիկը։ Բայց որովհետև հետիններէ մոտ ամենաշնորհ ստացել էր «ամենայն շնորհօք լի» իմաստը, ուստի գրիչները փոխել են բառը և սրբագրել ամենաշնորհող։ Թե նախնական հարազատ ընթերցվածն էր ամենաշնորհ, ցույց է տալիս Ագաթանգեղոսը, որ նմանապես ունի նույն հատվածը. «Որում և պարգևէր իսկ վիճակն յամենաշնորհն Աստուծոյ»։ Մեր ասածը գործնական կերպով էլ հաստատվում է այժմ էջմիածնի մի ճառընտիրում գտնված Կորյունի մի ընտիր օրինակով, ուր նույն բառը ունի ամենաշնորհ ձևը։

Եթե այսպես է, մենք կարող ենք ընդունել, որ նաև Կորինթի ամենապարզևող բառը, որ Ագաթանգեղոսի մեջ ամենապարզև ձևն ունի, նույնպես հետին սրբագրության արդյունք է։

Այսպես և ուրիշ բառեր։

Ստորև դնում եմ ցանկը այն բառերի, որոնք ՆՀԲ-ի տված վկայությունների համեմատ Ծ-ըդ գարի առաջին կեսից են, բայց բայարմատով չեն կազմված։

ամենազարդ Ոսկ. յհ. Բ. 12.

ամենագեղ Մծբ. ԺԹ.

ամենազարդ Ոսկ. ես.

ամենաժանդ Ոսկ. մ. բ. 7.

ամենալաւութիւն Ոսկ. բ. կոր.

ամենածագիկ Սերբեր. գ.

ամենակերակրիչ Իմ. Ժգ. 25

ամենահաստիչ Ագաթ.

ամենահեշտ Ագաթ.

ամենահատակ Ոսկ. ես.

ամենաշատ Ոսկ. ա. թես.

ամենաչար Եզն.

ամենապայծառ Ոսկ. Մտթ.

ամենապիղծ Ոսկ. Մտթ.

ամենատեսչութիւն Վեցօր. ը.

ամենափրկիչ Ազաթ. Կորիւն.  
ամենադից Եւս. քր.  
ամենիշխող Ոսկ. յն. բ. 11.

6) Կարելի է նաև բաղդատական ածականը գործածել այնպիսի ձևով, որ գերադրականի իմաստ տա. օրինակ՝

Հոգնակի սեռական խնդրով՝

Ամենայն թագաւորացն մերոց հարստագոյն Տիգրան.

Հոգնակի ներգոյական խնդրով՝

Ոքոզիաս կրտսերագոյն յորգիս Յովրամայ,  
Ամենայն բառի հետ՝

էր պատուականագոյն քան զամենեսեան՝ որ ի տան հօրնորա էին:

7) Այսպես լինելուց հետո՝ անսպասելի չէր, որ որևէ ճամարակ հեղինակ- գույն վերջացող ածականի վրա ավելացներ նաև ամենանախդիրը. այսպես, ունենք հրկու օրինակ.

ամենայարմարագոյն Փիլ. լին.  
ամենավեհագոյն ԱԲ.

(այլ են՝ ամենադոյն, ամենագերագոյն, ամենածայրագոյն):

8) Հիշենք վերջապես գերադրականի այն ձևը, որ ստացվում է գոյականը կրկնելով իր հոգնակի սեռականով. օրինակ՝

Ամենայն պարծանաց պարծանք խոնարհութիւն է (ամենամեծ պարծանքը կամ ամենապանծալի բանը խոնարհությունն է).

Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է. Ժդ. ա. 2.

Մնտիք սնտեաց.

Ոհ, կարի է առասպելս, այլև առասպելաց առասպել. Խոր. Բ. ք.

Մահուց մահունս մեռանին (ամենաչարաչար մահով մեռնում են):

Միջին հայերենում բաղդատականի նման՝ գրաբարի գերադրական ձևերն էլ ջնջվեցին. վերացավ նույնիսկ ամենաձևը և բոլորի փոխարեն սկսեց գործածվել նոր բաղդատականի այլ ձևը՝ որոշիչ հոդով (Karst, էջ 395), օրինակ՝ այլ աղեկն ռամենալաւը».

Բացարձակ գերադրականի համար գործածվում է խիստ, որի հնագույն վկայութիւնը ունի Մամիկ. էջ 48, բայի հետ գործածված.

Խիստ վաստակեցաւ Սմբատ յաւուրն յայնմիկ.

Ավելի ուշ, 12—13-րդ դարերից, ունենք՝

Այս օրինակս՝ խիստ նման է.

Բերդն Կիզիստոէ խիստ ամուր.

կամ թե բայի վրա՝

խիստ ուրախացաւ.

խիստ սիրէաք զիրար (Այտն., էջ 28):

Գերադրականի այս ձևին ճիշտ համապատասխան են գալիս պրս. saxt և թրք. pek, որոնք նշանակում են էսպես Վարծրը, խիստ», բայց գրվելով ածականի վրա՝ կազմում են գերադրական. այսպես՝ պրս. saxt suxt «խիստ թույլ», saxt niğ «շատ բարի», թրք. pek eyi «շատ լավ», pek gözəl «շատ գեղեցիկ»: Նկատի ունենալով գործածութեան հնութիւնը հայերենի մեջ (է դար), չի կարելի ասել, թե այս ձևը թարգմանված է թուրքերենից:

Բարբառների մեջ նույնպես ջնջված է գերադրականի մասնիկավոր ձևը (ամենա-), և նրա փոխարեն տարածված է մի կողմից վերլուծական ձևը և մյուս կողմից՝ օտար լեզուների հետեւողութեամբ կամ նմանութեամբ և կամ պարզ փոխառութեամբ առաջացել են բացարձակ գերադրականի նորանոր ձևեր.

Վերլուծական ձևն է ամեն բառի գործածութիւնը բացառական հոլովով, և կամ քանց նախադրութեամբ. օրինակ՝

Երև. սա ամէնից մէծն ա.

Ղրբ. սա լոխչունց մըէծծ ա. Լոխչու մըէծծը, ըմէնան պըէնդը. լոխչու ըրկընավունը. Աոռէ լոխչու ըրկընավունը (Քնն. Ղրբ. էջ 157):

Պ. ամմէնէն մէնձը վօ՞վ է ամենամեծը ո՞վ է՞.

Պ. ամմէնքէն խօլէքը սա դղան է ամենահանգարտը այս տղան է՞.

Պ. սա ամէնէն մէնձ է.

Մրդ. էտ զըմմըրինէն աղէկ ի, զըմմըրինէն ճուշը.

Ձգ. մեր տունն վոխչից մենձ ա.

Վն. չանձ հըմէն կսկծավոր յես եմ վիրավոր, չանձ հըմեն խոոված յես եմ տրօրված, իրացած ու մրկած:

Համշենի բարբառում գերադրական կազմելու համար դրական ածականին կցվում է՝

1) Ըմբնըն կամ ըմբնացմըն «ամենքից» բառը.

2) Կամ թրք.-էն (en) մասնիկը, որ ստանում է Մալայում -էն և շանիկում՝ -հրն ձևը.

3) Կամ պիմդ > բիմդ բառը. օրինակ՝ Ըմբնըն մէձը «ամենամեծը», ըմբնացմըն մէձը, հէն միձը (Մալա) = հըն մէձը (Շանիկ), բինդ մէձը:

Զեյթունի բարբառում ածականի գերադրական աստիճանը կազմվում է հետևյալ ձևերով.

ա) Դրական ածականը կցելով ալայիմն (թրք. բռուրից) բառին, որի հետ դրվում է նաև գառնդ (= քան զ) բառը. օրինակ՝

Օսո գոնդ ալայինտ մինձ է

» » » անուշ է.

Կամ նաև ավելացնելով դառա բառը.

զանդ ալայինտ դահա անուշ է.

բ) Դրական ածականի վրա դնելով խը՛նձ բառը, որ նշանակում է «խիտ», հուշձ.

Օսո դունը խը՛նձ մինձ է.

Օսո խէնձիւը խը՛նձ անուշ է

«այս խնձորը խիտ անուշ է»

Օսո զտնդ ալայինտ խը՛նձ մինձ է «այս բուրբից խիտ մեծ է».

դ) Ամեն ածականի սկիզբը դնելով ավէնա բառը. ինչպես՝

ամէնամինձը

ամէնահօսդը

ամէնաբայօզը

ամէնախյզօնը

ամէնախիւշիւյը

ամէնաը՛նդը

դ) Ածականի սկիզբը դնելով շեշտյալ թրք.-տն (տ en) մասնիկը. ինչպես՝

տն մինձը, տն հօսդը, տն բայօզը.

ե) Նախամասնիկավոր ձևը, որի մասին տես ստորև:

Վանի բարբառում գերադրական կազմելու համար ածականին կցում են հան (<թրք. en «ամենա-») մասնիկը և կամ հըմմէնից (գ. զըմմէնից) բառը. ինչպես՝ հտն պանցը բամենաբարձր, հըմմէնից (զըմմէնից) պանցը բամենքից բարձր:

Ղարաբաղի բարբառում գերադրական աստիճանը կազմվում է բմբռնեան կամ լօխու (<լօխ բուրբ) բառերով. օրինակ՝

լօխու մբբծծը ամենամեծը.

բմբռնեան պբբնդը ամենապինդը.

լօխու բրկբնավունը ամենից ավելի երկարը.

առնէ լօխու բրկբնավունը բուրբից ավելի երկարը.

բմբռնեան խբբնքավունը ամենից ավելի խելոքը.

(առհասարակ բմբռնեան ձևի հետ առնէ բառը չի գործածվում):

Սվեդիայի բարբառում գերադրական աստիճանը կազմելու համար ածականին կցում են թրք. ալայ բուրբ կամ թրք. en, eng > էնքը մասնիկը. ինչպես՝

Աս քան զալայը մինձն է.

Աս քան զալայը ավիլա (դահա, դըհա) մինձ է աս բուրբից մեծ է.

Աս ենքը (eng) մինձն է աս ամենամեծն է:

Բացարձակ գերադրականի համար գործածված ձևերն են՝

1. Մակբայական կազմութուն.

2. Նախամասնիկավոր կազմութուն.

3. Թուրքերենից փոխառյալ մակբայներ.

#### Ա. Մակբայական կազմութուն

Ածականի վրա դրվում է շատ, խիստ, պինդ. օրինակ՝ շատ բարակ, շատ աղվոր, շատ կարմիր, խիստ աղէկ, խիստ տէսօք, խիստ կարմիր (շատ գործածական է Ղրիմի և Նոր-Նախիջևանի բարբառում). Ջեյթունի բարբառով դարձել է խիմց. օրինակ՝ խիմց մեծ շատ մեծ: Ննխ. խիստ դէսօք շատ գեղեցիկ:

Պինդ աղէկ, պինդ առաջ, պինդ մեծը (գործածական է Նիկոմիդիայի շրջանում, Համշեն, Սիվրի-Հիսար և այլն):

Նոր-Նախիջևանի բարբառում կա և հրաշալի ձևը. ինչպես՝ հրաշալի աղտոտ է շատ աղտոտ է:

#### Բ. Նախամասնիկավոր կազմութուն

Յուրաքանչյուր բառի համար հնարված է մի նախամասնիկ, որ կազմվում է բառի առաջին բաղաձայնից, եթե կա, + առաջին ձայնավորը + փ, ա, մ բաղաձայններից որևէ մեկը. այսպես են՝

նոփ-նոր (Ննխ. նրիփ-նոր, Պլ. կա և նոփ-գ-նոր).  
 սեփ-սե զոմ-զորդ կաս-կարմիր  
 չոփ-չոր քամ-քաք կըս-կըլոր  
 դեփ-դեղին կաս-կապույտ  
 քափ-քար  
 ճեփ-ճերմակ (Ախք. ճեր-ճերմակ) Ննխ. ճիփ-ճերմակ  
 լեփ-լեցուն միս-մինակ  
 կափ-կանաչ կաս-կանաչ (Արբ.)  
 թափ-թաց նըս-ման (Այվազյան, Առակք  
 ջուփ-ջուր Գոբլովի, 1896, էջ 57)  
 ձուփ-ձուն պասս-պարապ (Արբ.):  
 լուփ-լուս  
 կափ-կարմիր (Տր.):

Նախամասնիկավոր գերադրականի ամենից կանոնավոր ձևը քառնում ենք պոլսահայ բարբառում. օրինակներն են՝

ս-ով	փ-ով	մ-ով
կասկ-կապույտ	էփ-էրկան	քամ-քաք
կաս-կարմիր	թափ-թաց	
միս-մինակ	կափ-կարճ	
կըս-կըլոր	կափ-կանաչ	
բաս-բարակ	դեփ-դեղին	
տաս-տավակ	սեփ-սե	
լըս-լըման	ճեփ-ճերմակ	
աշատ նման»	շիփ-շիտակ	
	լեփ-լեցունիկ	
	նեփ-նեղ	
	նոփ-նոր	
	(նոփըզնոր)	
	չոփ-չոր	
	քափ-քար	
	ջուփ-ջուր	
	սուփ-սուր	
	լուփ-լուս	
	ձուփ-ձուն	

Թեոդիկ (էջ 11) ունի նաև ավի-անուշ, ավի-աղտոտ, ավի-աւման, ավի-աւսուղջ բառերը, որոնք ինձ անծանոթ են:



Սվեդդիայի բարբառն էլ ունի գերազրականի նախամասնի-  
կավոր ձևը, որի օրինակներն են՝

գոս-գտրմէր	«շատ կարմիր»
դ'իփ-դ'իղէն	«շատ դեղին»
սիփ-սիվ	«շատ սև»
գտփ-գանաչ	«շատ կանաչ»
բաս-բորոբ	«շատ պարապ»
բ'իւս-բ'իւլիւր	«շատ կոլոր»
բ'ոս-բ'որիւզ	«շատ բարակ»
դոս-դոփիւզ	«շատ տափակ»
թուփ-թուց	«շատ թաց»
դափ-դարջ	«շատ կարճ»
նիփ-նիղ	«շատ նեղ»
նիփ-նիւր	«շատ նոր»
չիւփ-չի'ր	«շատ չոր»
իփ-իւղիւրդ'	«շատ ճիշտ»
քուփ-քուր	«բոլորովին քար դարձած».
սուփ-սիւր	«շատ սուր»
քիւմ-քիւք	«քամ-քաք, բոլորովին ապականված».

ինչպես ցուցակից երևում է, երևույթը շատ կանոնավոր է և մի քանի հատ էլ նոր օրինակներ են ավելացած. մի քանի սա-  
կավաթիվ օրինակներում միայն բառի ձայնավորը ճիշտ չէ պահ-  
ված, այն էլ՝ իւ ձայնի համար:

Ննխ. բարբառում նախամասնիկները կազմվում են ածակա-  
նի նախածայն բաղաձայնից, + ձայնավոր + ս, մ, կամ փ բա-  
ղաձայնը: Նախածայն բաղաձայնը բնականաբար գոյություն չի  
ունենա, եթե բառը սկզբի ձայնավորով: Մասնիկի ձայնավորը  
զանազանվում է բառի առաջին վանկի ձայնավորի համեմատ:  
Եթե ածականի առաջին վանկի ձայնավորն է ա, մասնիկի ձայ-  
նավորն էլ լինում է ա. եթե ը է, լինում է ը, եթե ի է, լինում է  
ի, եթե ե է՝ լինում է ի կամ է. եթե ո = օ է, լինում է ի կամ օ.  
եթե ու է, լինում է ու:

Այսպես ունենք՝

Ա—գաս-գարուզ բոլորովին կապույտ», գաս-գարմիր բո-  
լորովին կարմիր», թափ-թաց, թամ-թաց (բայց ավելի թիփ-  
թաց) բոլորովին թաց», գափ-գանանչ բոլորովին կանաչ», բաս-  
բարբառ բոլորովին պարապ», թաս-թափազ բոլորովին տափակ»:

ն, է—դիփ-դէղին բրուրովին դեղին», սիփ-սէվ բրուրովին սև», ջիփ-ջէրմադ բրուրովին ճերմակ», մէս-մէնադ բրուրովին մենակ:

Ը—զբփ-զբլօր բրուրովին կլորակ:

Ի—շիփ-շիդադ բրուրովին շիտակ», իփփ-իլինք բրուրովին իքքը»:

Ո—նիփ-նօր բրուրովին նոր», չիփ-չօր բրուրովին չօր» (որի ազդեցութեամբ էլ անկանոն կերպով ասվում է թիփ-թաց):  
Ու—գուփ-գուլոր բրուրովին կլոր»:

Այս բուրրի մեջ նկատելի է իփփ-իլինք ձևը, որ կազմված է բաղաձայնի կրկնութեամբ՝ անշուշտ իմաստի սասակութեան համար: Կրկնութեանը հնարավոր է եղել հաջորդ ձայնավորի պատճառով: Մյուս բառերի մեջ ձայնավոր չկա և հետևաբար կրկնութեանն էլ հնարավոր չէր:

Երկու առանձին ձևեր էլ կան, որոնք իրենց նմանները չունեն. սրանք են՝ լաս-գարուդ բրուրովին կապույտ», և խումբ-խընդմընդամ շշատ ուրախ»: Առաջինը գործածական է բարբառում գաս-գարուդ ձևին կից, երկրորդը դառնում ենք գործածված Պատկանյանի մօտ (հտ. Բ, 441) և այժմ անծանոթ է:

Չալթրի շրջանում այս բուրր ձևերը անփոփոխ նույնն են. միայն սև և դեղին բառերը գերադրական մասնիկի մեջ ի ձայնավորը ջնջելով՝ լինում են սրփ-սէվ, տրփ-տէղին:

Նույն հրևույթը նկատելի է նաև Ղրիմի բարբառում, ուր ունենք՝ բօմ-բօջ բրուրովին պարապ», չբփ-չբփլախ (Չլ. ճրս-ճիպլախ) բրուրովին մերկ», թիփ-թեմիզ բրուրովին մաքուր», փիս-փիթին բամբուջապես», էփ-էջդարէ շշատ ակներև», բէս-բելի շշատ հայտնի», թաս-թամամ բրուրովին կատարյալ», սիմ-սիյահ բրուրովին սև», մօս-մօռ բրուրովին կապույտ»:

Նախամասնիկավոր գերադրականի այս ձևը, որ շատ սովորական է արևմտահայ բարբառներում, որոնց թվում նաև Ղրիմի և Նոր-Նախիջևանի բարբառում, չկա Երևանի, Ղարաբաղի և այլ արևելահայ բարբառներում, որոնց հետ նաև վանի և Առախարի բարբառում (Մուշավա, Լեհաստան):

Չեյթուների բարբառում նույն ձևով կազմված են՝

սև—սիփ-սիվ

ճերմակ—ջիփ-ջիմօզ

կարմիր—գաս-գայմըյ  
 մաքուր—մաս-մաքուրյ  
 կանաչ—գէփ-գէնոչ  
 դեղին—դ'էփ-դ'էղան  
 նեղ—նիփ-նեղ  
 նոր—նիւփ-նիւյ  
 չոր—չիւփ-չիւյ  
 սուր—սուփ-սույ  
 կապույտ—գաս-գաքուդ  
 կլոր—գ'իւս-գ'իւլիւյ  
 բարակ—բ'աս-բ'այոգ  
 մենակ—միս-մենովիւյ (մես-մենավոր)  
 տափակ—դաս-դափոգ:

Նաև գոյականների հետ. ինչպես՝  
 քոմ-քօք բոլորովին կեղտոտ, փչացած: Նույնպես և՛ զուտ  
 թուրքերեն բառերի հետ.

մաս-մավը բոլորովին կապույտ  
 սիփ-սիվյի բոլորովին սրածայր  
 մօս-մօո եկաս-կապույտ  
 դիփ-դիյի բոլորովին առողջ  
 էփ-էյի շատ բավականին:

Նախամասնիկավոր գերադրականի ձևը կա նաև Համշենի-բարբառում, բայց շատ սակավ չափով. Այստեղ մնում են՝ գաս-գարմիր, տէպ-տէղին, նեպ-նեք, շատ նոր», գաս-գաքուդ, մըս-մընեագ բոլորովին մենակ», շիպ-շիդագ բուրդակի» ձևերը: Այս ձևերին էլ հազիվ կարելի է պատահել խոսակցության մեջ: Այս ձևով գերադրականը անշուշտ սովորական է եղել Համշենի հին բարբառում, բայց այժմ ջնջվել է ջիփ (ջիպ) մասնիկի պատճառով, որ բռնել է հաջողությամբ նախորդի գրաված բոլոր տեղերը: Սրա ամենից հայտնի օրինակն է ջիփ-ջէքմագ, որ նախորդ ձևով պիտի լիներ ջէփ-ջէքմագ: Ազատորեն կարելի է ասել՝ ջիփ-սէվ, ջիփ-էրգը'ն, ջիփ-լըն, ջիփ-ջիդագ, ջիփ-խօշէք շատ խոշոր» և այլն, և այլն. Այսպես և՛ ամեն որակական ածական: Կարմիր բառի դեմ գափգարմիր ձևը գտնում ենք «Արարատում» (1892, էջ 445), բայց Համշենցոց մեջ չի գործածվում: Կա միայն գաս-գարմիր:

Գույների գերադրականը կազմելու համար մի քանի բա-

ցառիկ ձևեր էլ կան. այսպես՝ վրո-գարմիր, որ կարծես թե «վառ-կարմիր» բառից է, զրո յէջի «շատ կանաչ», վրո յէջի «շատ կանաչ» (որ հրկուսի խառնուրդով է կազմված) և ձի գարմիր, որ անշուշտ թրք. զի կըրմըզի հոմանիշ ձևի վրայից է կազմված՝ նմանեցնելով հյ. ձի «ծիլ» բառին: Իմ այս բացատրութեան ապացույց է ձըր՝ն վիր գարմիր («ծիլից ի վեր կարմիր») արտահայտութեանը, որ նշանակում է նույնպես «շատ կարմիր»:

Ինչպես նկատելի է, վերոհիշյալ ցանկերի մեջ կան դեպքեր, ուր գերադրականի մասնիկը գոյականի վրա է դրված. այդ լինում է այն պարագային, երբ գոյականը առնված է իբր ածական կամ ածականի նշանակութեան ունի: Այսպես են՝

Քաղի-քար «բոլորովին քարացած, այսինքն՝ կարծր».

Ղուփ-Ղուր «1. բոլորովին ջրալի. 2. դասը բոլորովին լավ սովորած, ջրի պես գիտցած».

լուփ-լուս «բոլորովին լուսավոր»

ձուփ-ձուն «բոլորովին սպիտակ»

քամ-քաք «բոլորովին վատ՝ փչացած»:

Գերադրականի այս ոճը թուրքական լեզուներից է անցել, ուստի և գործածական է միայն այն բարբառներում, որոնք ապրում կամ ապրել են թուրքական բունակալութեան տակ՝ ենթակա լինելով թուրքական բունապետութեան ասսիմիլատորական քաղաքականութեան:

Ինչպես թուրքերենում, նույնպես և հայերեն այն բարբառներում, որոնք ունեն գերադրականի այս ձևը, ոչ մի կանոն չկա իմանալու համար, թե ո՞ր ածականը ինչ բաղաձայն պետք է ավելացնի նախամասնիկի մեջ (փ, ս, թե՛ մ):

Վերի համեմատութեանները ցույց են տալիս, որ հայերենը այս հավելումները կատարել է, ընդհանրապես, նայելով, թե նույն բառի հոմանիշ թուրքերենը ինչ բաղաձայն է ավելացրել:

Մարաղայի բարբառը, որ թուրքական ազդեցութեան չափազանց շատ ենթարկված մի բարբառ է, նույնպես ունի գերադրականի այս ձևը, բայց մյուս բարբառներից մի քիչ տարբեր եղանակով է կազմում իր նախամասնիկները: Մենք գիտենք, որ գերադրականի այս ձևի առաջին և նախնական տիպարը ներկայացնում են մոնղոլերեն, բուրյաթերեն և չովաշերեն լեզուները (էջ 90), որոնք ամեն բառի համար էլ գործ են ածում ք վերավորութեանը, մինչդեռ թաթարերենում ունենք ք, մ, իսկ

թուրքերենում ք, օ, ս, ռ: Մեր բարբառները ընդհանրապես դնում են փ, օ ձայնները և քիչ անգամ մ. չի դորժածվում ք. իսկ Մարաղայի բարբառը պահելով նախնական ձևը, ամեն բառի հետ էլ գործ է ածում փ ձայնը. այսպես ունենք (քնն. Մրդ. 181).

## Մրդ.

կափ-կամոճիք	սիփ-սիլ
տէփ-տէղին	սիփ-սիպտոկ
կափ-կանտնչ	թափ-թաց
լիփ լինջ'տ	չուփ-չուր
խափ-խաստ	կըփ-կլօրակ

Ուրիշ բարբառներում կարող են գտնվել անշուշտ ուրիշ նախամասնիկներ էլ, որոնք կազմված լինեն այս կամ այն ձևով և չհամապատասխանեն վերի կանոնին. այսպես է, օրինակ՝

լեռ—կապույտ Սվ. «կաս-կապույտ, բոլորովին կապույտ».  
խումբ—խնդմեդան Ննխ. «շատ ուրախ, բոլորովին խնդում».  
ծնկ—դեղին Սվ. «բոլորովին դեղին».  
Մրդ. կա նաև մեծ-մեծակ բոլորովին մեծակ»:

## Գ. Օտար մակբայներ

Հայտնի է, որ լեզուների մեջ մասնիկներ շատ սակավ դեպքերում են փոխառվում: Արևմտահայ բարբառների մեջ թուրքերենից մտած մակբայական մասնիկները և, մանավանդ, գերագրականի նախամասնիկավոր ձևի պատճենումը այդ տեսակետից ուշագրավ են նրանով, որ ցույց են տալիս, թե ինչ հետևանք է ունեցել թուրքական բունապետութայն ասսիմիլատորական քաղաքականութունը հայերի նկատմամբ: Խոսելով լեզվի դիմացկանութայն մասին՝ ընկեր Ստալինը «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանութայն մեջ» իր հանճարեղ աշխատութունում ասում է. «Հարյուրավոր տարիներ թուրքական ասսիմիլատորները ջանք էին թափում աղճատելու, խորտակելու և ոչնչացնելու բալկանյան ժողովուրդների լեզուները: Այդ ժամանակամիջոցի ընթացքում բալկանյան լեզուների բառային կազմը ենթարկվեց լուրջ փոփոխութունների, յուրացվեցին ոչ-քիչ թուրքական բառեր ու արտահայտութուններ, եղան նաև «մերձեցումներ» ու «հեռացումներ», սակայն բալկանյան լեզուները դիմացան և ապրեցին: Ինչհետև: Որովհետև այդ լեզուների քերականական կառուցվածքը և բառային հիմնական

Ֆոնդը հիմնականում պահպանվեցին» (Ի. Ստալին, «Մարքսիզմը և լեզվաբանություն հարցերը», էջ 58): Ստալինյան այս հանճարեղ լուսարանությունը լիովին վերարերում է նաև հայերեն բարբառների և թուրքերենի փոխարարերությունը: Բոլորին հայտնի է, թե ինչպես թուրքական ու պարսկական աստիճիլատորները ամենավայրագ միջոցներով ջանք էին թափում ոչնչացնելու հայերին ու հայերենը, ինչպես նաև ուրիշ ժողովուրդների: Հարյուրավոր տարիների աստիճիլատորական այդ քաղաքականության արդյունքն է եղել այն, որ արևմտահայ բարբառների մեջ շատ բառերի հետ մտել է նաև զերագրականի կազմության նախամասնիկավոր ձևը: Սակայն, ինչպես առանձին բառերի, այնպես էլ այդ ձևի յուրացումը չի աղճատել ու ոչնչացրել այդ բարբառների քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը, որոնք հիմնականում հայերենին հարազատ կերպով պահպանվել են: Ծիշտ այսպիսի երևույթ մենք տեսնում ենք նաև թվականների մեջ: Դիտենք, որ թվականները, մանավանդ փոքր թվականները, նույնպես սակավ դեպքերում են փոխառվում ուրիշ լեզուներից: Դրան հակառակ, արևմտահայ մի քանի բարբառների մեջ, ինչպես կտեսնենք գրքիս երկրորդ մասում, մտել են որոշ թվականներ՝ թուրքերենից. Հասկանալի է, որ այստեղ էլ նույն երևույթն է, նույն պատմական պատճառներով: Հասկանալի է նաև, որ ինչ էլ որ լինեն այդ փոխառություններն ու յուրացումները, այնուամենայնիվ նրանք չեն աղճատել, չեն խորտակել հայերենը, որը հիմնականում պահպանել է իր քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը: Ավելին. այդ փոխառությունները կատարվել են միայն բարբառների մեջ և մուտք չեն գործել զրական լեզու, իսկ մյուս կողմից, այժմ բարբառներն էլ յուրացնում են մեր զրական լեզվի բառերն ու քերականական հարազատ մասնիկները, և մաքրվում այդ խորթ ու օտար մասնիկներից ու բառերից: Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև, չնայած որ ... պարսկական ու թուրքական աստիճիլատորները հարյուրավոր տարիներ ծվատում, խոշտանգում ու բնաջնջում էին հայ և վրացի ազգերին, բայց նրանք ոչ միայն չկարողացան ոչնչացնել այդ ազգերին, այլ—ընդհակառակը—հարկադրված եղան նույնպես տեղի աալու» (Ի. Ստալին, Երկեր, հ. 11, էջ 395):

Թուրքական աիբակալության շրջանում արևմտահայ բարբառների մեջ թուրքերենից մտել են փէք, էն, լափ մակբայնե-

ըր, որոնք նախամասնիկի ձևով գործածվում են ածականի հետ:

Փեք, թրք. pek «պինդ, ամուր» բառն է, որ սովորական է Պոլսի բարբառում. ինչպես՝ փեք աղէկ, փեք աղվոր, փեք բարակ փեք հաստ և այլն, կարելի է գործածել ամեն ածականի հետ անխտիր (սրանից թարգմանված ձև է պիեզ, որ տես էջ 113—114):

Այս թրք. բառը իբրև գերադրականի մասնիկ մտել է նաև լազերենի մեջ. ինչպես՝ փեղի նոսոնի հեուլժ իմաստունն, փեղի քչե արուորովին սպիտակա:

Կե (շեշտված) նախամասնիկը, որ արևմտահայ բարբառներում այս ձևն ունի, Ղրիմում և Նոր-Նախիջևանում կեկ (eng) ձևով է նույնը. անցել է թուրքերենից: Այսպես՝

թրք. en böyak հյ. էն մեծ (ամենամեծ)

en küçük հյ. էն պզակ (ամենափոքր):

Ամեն ածական անխտիր կարող է այս մասնիկը ստանալ: Ննի. էնգ աղէգ ամենալավա:

Չալթրի շրջանում հավասարապես գործածական են նաև կեգէ, կեգը (թոփոսի՝ կեգի) ձևերը. ինչպես՝ էնգէ պածըռ, էնգը պածըռ, էնգի պածըռ, էնգ պածըռ ամենաբարձրա:

Գործածվում է նաև իբր մակբայ՝ «բոլորովին» իմաստով:

Առտիալի բարբառում էլ գերադրական կազմելու համար համեմատական աստիճանի վրա ավելացնում են ըեգ՝ մասնիկը, որ համապատասխանում է Ղրիմի կեգ և Պոլսի կե համազոր մասնիկներին և համընկնում է թրք. en (հին eng) ձևին. օրինակ՝

լհ. ալ շադ ամելի շատա.

լհ. ընգ՝ շադ կամ ընգ՝ ալ շադ ամենաշատա.

լհ. ընգ՝ ալ մեծ ամենամեծա:

Գիտենք, որ թուրքերենում մասնիկները ունեն միշտ երկու ձև՝ ծանր և քեթև, համաձայն բառի ձայնավորի ծանրության և թեթևության: Բայց այս մասնիկը բացառություն է կազմում և միշտ թեթև է: Մասնիկի հին ձևն է eňg (ինչպես և գրվում էլ է և) բայց Պոլսի թուրքերը, ըստ որում չունին կոկորդական ո՛ ձայնը, հնչում են նույնը en ձևով: Այս պատճառով էլ արևմտահայ բարբառներն է մտել նույնը կե ձևով (օրինակ՝ Պլ. կե սեվը ամենասեղ), մինչդեռ Ղրիմ—Նոր Նախիջևան կեկ ձևով է:

Անցյալ դարում այս մասնիկը ժողովրդական բարբառներից բացի շատ սովորական գործածություն ուներ արևմտյան

հատվածում նաև գրականության մեջ. նորերը, իբր թուրքական ազդեցության, վերջ տվին այս ձևի գործածության: Բայց ոմանք դեռ գործածում են երբեմն: Ահա մի այնպիսի գրող, ինչպիսին է Բարգեն Ժյ. Կյուլենբերյան և մի այնպիսի գիտական աշխատության մեջ՝ ինչպիսին է Եղիշեի ուսումնասիրությունը (Վիեննա, 1909), գործածում է այս ձևը. «Պատմագրին նկարագրությունը էն սքանչելի էջերեն է իւր գործին» (էջ 106):

Արևելյան բարբառներից Երևանի բարբառը ընդհանրապես չգիտի այս մասնիկի գործածությունը. կան միայն հետևյալ բացառիկ դեպքերը.

ան առաջը բամենառաջը»

ան վերջը

ան վերի ծաղիկն ես (=վերի արտի ցորենն ես),

Զգանվելով բարբառներում, չի մտել նաև ժամանակակից գրական լեզվի մեջ:

Ինչպես թրք. pek փոխառյալ է լազերենում իբրև բացարձակ գերադրականի մասնիկ (էջ 122), նույնպես նաև՝ թրք. en մասնիկը Աթինայի լազերեն բարբառում, ուր շատ սիրված ձև է համարվում, օրինակ՝ էն մորգերի բամենից երեց»:

Լափ գերադրական մասնիկը անցել է թուրքական լեզուներից. սրա հնագույն ձևն է մոնղոլերեն lab «ստուգիւ, ճշտիւ», որից թաթարերեն lap «ճիշտ, պարզ, հստակ, ճիշտ ու ճիշտ, անտարակույս»: Գիրգիզերենի մեջ նույնը գրվելով բայերի սկիզբը, նշանակում է ճշտ կամ հանկարծ: Հայերենի գործածության հետ բոլորովին նույնն է ադր. лап բոլորովին», ինչպես՝ лап яхшы բոլորովին լավ, հույժ լավ», ачыгым лап тутди բոլորովին զայրացա»: Այս ձևը փոխառության մեջ անցել է արգի ասորերեն լեզվին (համտ. ն. ասոր. lap բոլորովին) և արևելյան հայերեն բարբառներին (Երևան, Ագուլիս, Ղարաբաղ). քանի որ տաճկերենի մեջ գոյություն չունի, ուստի արևմտյան բարբառներում էլ չկա: Մարաղայի բարբառում ունենք լափ. օրինակ՝ լափ աղեկ, լափ եռւչ:

Գերադրականի lap մասնիկը գիտե նաև թաթարերեն լեզուն. ինչպես՝ lap bulund ճշտ բարձր», lap murda բոլորովին մեռած»:

Ճիփ կամ ճիպ. գործածական է Ախալցխայում. օրինակ՝ ճիպ պզտիկը, ճիպ կարմիրը: Նույնը նաև բայի հետ. օրինակ՝ սեխը



ճիշի ճապավ: Նույնը նաև կրկնությամբ՝ ճիշի-ճիշի ձևով ունի վն. և գործ է ածում բոլորովին՝ իմաստով, իբր մակբայ. ինչպես՝ ճիշի-ճիշի միճակ մնացեր է:

Ազուլիսի բարբառում գերադրական կազմելու համար դնում են դիփննից, դիփուննից, դիփնոնց, շօա, լափ բառերը. ինչպես՝ շօա միծ օ, լափ միծը, դիփնուց (դիփունուց, դիփնոնց) միծն օ: Կարելի է նաև կազմել ամէնա- մասնիկով բառեր. ինչպես՝ ամէնամիծ, ամէնալին ամենամեծ, ամենալայն, ամէնահաստ և այլն:

Ածականի գործածության հետաքրքրական ձևերից է Մարադայի բարբառում հոգ. բացառական հոլովը. օրինակ՝ խալաուքիբէն ի սհալարտներից է, հալարտ է», ճուշիբէն ի ամեծ է», կաշախքիբէն ի սփախստական է»:

Նոր-Նախիջևանի բարբառում գերադրական կարելի է կազմել նաև ածականի առաջին վանկի վրա ուժգին և երկար մի շեշտ դնելով. ինչպես՝ է՛րգան շշատ երկար», գամբիբ շշատ կարմիր», ամ՛ղեգ շշատ լավ», մէգադ գէ՛է՛շ շուն ունի սմի շատ գեշ շուն ունի»:

Գերադրականի այս ոճը փոխառյալ է ուսերենից, ուր ունենք նույն ձևով՝ КРАСНЫЙ շշատ կարմիր», ДОЛГО շշատ երկար»:

\* \* \*

Աշխարհաբարը զրաբարի, միջին հայերենի և բարբառների ընդունած այս զանազան ձևերից ընտրել և գործածության է դրել հետևյալ ձևերը:

Ա. Վերլուծական ձև

Համեմատական գերադրականի ամենասովորական ձևն է, որ ընդհանուր է ամեն ածականի համար. կազմվում է ամեն բառի բացառականով՝ ածականի վրա դնելով որոշիչ հոգը. օրինակ՝

ամենից մեծը—ամենեն մեծը.

ամենից գեղեցիկը—ամենեն գեղեցիկը:

Ժամանակակից զրականում կարելի է դնել նաև բոլոր բառը.

Բոլորից մեծը, բոլորից գեղեցիկը:

Սրանց վրա կարելի է ավելացնել նաև ավելի բառը. ինչպես՝ ամենից ավելի մեծը—ամենեն ավելի մեծը.

ամենից ավելի գեղեցիկը—ամենեն ավելի գեղեցիկը.

բոլորից ավելի մեծը—բոլորից ավելի գեղեցիկը.

կամ՝ նաև -գույն ձևով. ինչպես՝

Ամենից մեծագույնը — ամենեն ավելի զորավորագույնը.  
Ամենից ավելի մեծագույնը:

Օրինակները ցույց են ապրիս, որ արևմտահայ գրականում ամենեն բարձր անպատճառ հոգ պիտի ունենա, մինչդեռ ժամանակակից ազգային հայերենում ամենից, բոլորից բառերը հոգ չունեն: Սակայն արևմտահայ գրականն էլ ունեցել է առանց հոգի ձև. Օրինակ՝ Ա. Տիւմա, «Բօլիս» վեպի թարգմանության մեջ (Չմիւռնիա, 1872) կարգում ենք.

էջ 95. Ամենէ անլուր դեպքերու տեսարանը եղած էր.

էջ 97. Իմ բնակարանը ամենէ ամբողջն էր.

» » Ամենէ ապահով դեղթափը կերևէր.

98. Ամենէ այլանդակ ձևերը կտար.

102. Ամենէ սաստիկ տկարութեան ամենէ մեծ քաջասըրտութիւնը կհաջորդեցնէ:

**Բ. Մակրայական ձևեր**

Հատուկ են բացարձակ գերադրականին:

Ամենից ավելի տարածվածն է շատ. ինչպես՝ շատ գեղեցիկ, շատ նպատակահարմար, սա նրանից շատ գեղեցիկ եւ ալ:

Հաճախ, ավելի սաստկություն տալու համար, գործածվում են՝ խիստ շատ, շատ ավելի, շափազանց, ամբողջովին, բոլորովին, սաստիկ, որոնց նվազական աստիճանը կարելի է կազմել ոչմասնիկի միացմամբ:

Խիստ շատ բազմաթիվ:

Շատ ավելի մեծ է քան ալ:

Չափազանց ծանր է վիճակը: Ոչ-չափազանց ծանր:

Ամբողջովին կարմիր է: Ոչ-ամբողջովին կարմիր:

Բոլորովին սև: Ոչ-բոլորովին սև:

Մաստիկ ցավալի եւ ալ:

Կարելի է գործածել նաև խիստ ձևը. ինչպես՝

Խիստ գեղեցիկ է. խիստ մեծ է:

Պիեղ ձևը, որ գործածական էր անցյալ գարում արևմտահայ գրականության մեջ, այժմ բոլորովին վերացված է:

Հետևելով ուսուցիչին օրինակին, այժմ գործ են ածում նաև ավելի սաստկացնող մակրայներ. ինչպես՝

Սոսկալի—սոսկալի շատ է:

Ջարհուրելի—ղարհուրելի հաստ ձայն ունի:

Ահեղի—ահեղի դաժան մարդ է:

Աներևակայելի—աներևակայելի ուժեղ մկաններ ունի:

Այլապես—այլապես գեղեցիկ:

Վերը (էջ 95.—96) տեսանք բացարձակ գերադրականի մի առանձին ձև, որ կազմվում է ածականը բարդելով հատկանշական մի գոյականի հետ:

Հայերենի մեջ գերադրականի այսպիսի ձև շատ տարածված չէ, բայց այնուամենայնիվ ունենք օրինակներ. ինչպես՝

ձյունասպիտակ

հրակտրմիր

աշխարհածանոթ

հրաշագեղ

աշխարհահոշակ


լուսապայծառ:

#### Գ. Նախամասնիկավոր ձևեր

Մասնից ավելի ընդունված է ամեմա- ձևը. ինչպես՝ ամեմամեծ, ամեմազեղեցիկ, ամեմաբարձր, ամեմախոնարհ և այլն. Մեսրոպյան շրջանի հայերենի խտրությունը բայաբմատի և ածականի գործածության մեջ աշխարհաբարում բոլորովին վերացված է: Անցյալ դարում քերականությունը ուսուցանում էր, թե ամեմա- մասնիկը կարող են ստանալ միայն բուն գրաբար բաները, իսկ գավառական ու բուն աշխարհաբար բաները չեն կարող օրինակ՝ չէր կարելի ասել՝ ամեմապրստիկ, ամեմաաղվոր և այլն: Այժմ այսպիսի արգելք չկա. այժմ ոչ միայն կարելի է ասել ամեմապղտիկ, ամեմաաղվոր, ամեմազեղ, ամեմազեղ, այլև ամեմանամիտ, ամեմանահարմար, ամեմաներջանիկ, ամեմանախմաստ, ամեմանախան, ամեմանախմաստուն, ամեմանառարասեր և այլն, և այլն, բաներ, որոնք գրաբարի համար աններելի սխալներ են: Արդարև, գրաբարի ոգու համաձայն ա-ից հետո մի ուրիշ ձայնավորի հանդիպումը կարելի չէ, ուստի ձայնավորով սկսվող բաները բարդության ժամանակ չեն ստանում ա հոդակապը: Մինչդեռ այս ձևերի մեջ ոչ միայն մյուս ձայնավորները, այլև ա ընդունում է հոդակապը, որով և կրկնվում է: Այս բոլորը ցույց են տալիս, որ աշխարհաբարի մեջ ամեմա- բոլորովին սովորական դարձած մի նախամասնիկ է:


Մյուս նախամասնիկներից են (էն գեղեցիկ, էն մեծ), ինչպես և ճեփ-ճերմակ, սեփ-սև, լեփ-լեցուն ձևերը, հազիվ երբեմն գործածական են արևմտահայ գրականության մեջ և ուր որ էլ պատահեն՝ համարվում են գավառաբանություն:

Վերջապես պետք է հիշել սեռականով կրկնության ձևը, որ նույնպես ընդունված է աշխարհարարի մեջ. օրինակ՝ իմաստունների իմաստունը, գեղեցիկների գեղեցիկը, կամ նաև բացառականով՝ իմաստուններից իմաստուն, գեղեցիկներից գեղեցիկ և այլն.



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ.

Թ Վ Ա Կ Ա Ն



## Թ Վ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

Թվական անունները ցույց են տալիս առարկաների քանակային հատկանիշը: Թեև իրենց պատմական առաջացմամբ թվերը, ինչպես կտեսնենք, կապված են կոնկրետ առարկաների, մեծ մասամբ մարդու ձեռքի ու ոտքի մատների կոնկրետ քանակի հետ, բայց լեզվի ու մտածողության հետագա զարգացման ընթացքում նրանք հանդես են գալիս որպես քանակային բացարձակ մեծություններ, առանց նկատի առնելու կոնկրետ առարկաները: Այս տեսակետից թվական անունների մեջ առավել ցայտուն կերպով է երևան գալիս քերականության այն առանձնահատուկ գիծը, որով նա, ինչպես հանճարեղ կերպով ցույց է տալիս ընկեր Ստալինը, նմանվում է երկրաչափությանը: «...Աբստրահավելով մասնավորից և կոնկրետից,—ասում է ընկեր Ստալինը,— ինչպես բառերի, այնպես էլ նախադասությունների մեջ, քերականությունը վերցնում է այն ընդհանուրը, որը կազմում է բառերի փոփոխությունների և նախադասությունների մեջ՝ բառերի կապակցության հիմքը և դրանից կառուցում է քերականական կանոններ, քերականական օրենքներ: Քերականությունը մարդկային մտածողության երկարատև, արստրահոդ աշխատանքի արդյունք է, մտածողության վիթխարի հաջողությունների ցուցանիշը:

Այդ տեսակետից քերականությունը հիշեցնում է երկրաչափությունը, որը տալիս է իր օրենքները, արստրահավելով կոնկրետ առարկաներից, առարկաները դիտելով որպես կոնկրետությունից զուրկ մարմիններ և նրանց հարաբերությունները որոշելով ոչ թե որպես ինչ-որ կոնկրետ առարկաների կոնկրետ հարաբերություններ, այլ որպես ամեն մի կոնկրետությունից զուրկ մարմինների հարաբերություններ ընդհանրապես» (Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951, էջ 53—54): Մյուս կողմից՝ առարկաների քանակային հատկանիշի՝ թվականի առաջացումը ենթադրում է միաժամանակ նաև վերացում, արստրահոլում առարկայի մյուս հատկանիշներից, սրովհետև, ինչպես ցույց է տվել Ֆրիդրիխ Էնգելսը՝ «Հաշվելու հա-



մար ոչ միայն թվարկման ենթակա առարկաներ են հարկավոր, այլև հարկավոր է ունենալ ընդունակութուն, որպեսզի այդ առարկաները դիտելու ժամանակ ուշադրութունը բեռի դրանց թվի վրա, անուշադրության մատնելով դրանց մնացած մյուս հատկանիշները,—իսկ այս ընդունակութունը պատմական մի երկարատև, փորձառական զարգացման արդյունք է՝ (Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, 1936, էջ 53):

Այդ բոլորից ելնելով էլ, այս գլխում նախ պետք է քննենք, թե աշխարհիս այս հազարավոր լեզուները հաշվական ինչ դրութուններ ունեն, ինչ տեսակ մտածողությամբ և ինչպիսի բաղադրությամբ են կազմում մեծ ու փոքր թվերը՝ սկսելով ամենից ավելի նախնական շրջանից, ուր մարդ դեռ իր աջ ու ձախը չի կարող զանազանել, և հասնելով մինչև ներկա բարձրագույն շրջանը, ուր թիվը անհուն է և անսահման. մի խոսքով՝ մարդու հաշվական կարողության զարգացման պատմութունը:

### 1. ՄԱՐԴԿԱՆՅ և ԱՆՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Մարդկութունը իր ամենից ավելի նախնական վիճակում հաշվական կարողության կողմից չէր կարող շատ բարձր մի դիրք ունեցած լինել: Արդի ամենից ավելի զարգացած ցեղերն ու ժողովուրդներն էլ նախապես մեկից մինչև երեք թվականներն էին միայն ճանաչում: Այս նախնական վիճակի մեջ էին գտնվում դեռ մինչև անցյալ դարի վերջերը Աֆրիկայի և Ամերիկայի բնիկներից զանազան ցեղեր: Հարավային Ամերիկայի մոքոս կոչված ցեղերից մի քանիսը այս կողմից ամենից ավելի տարրական վիճակն ունեին: Ըստ Լիխտենշտայնի՝ բուշմենները երկուսից ավելին համարել չգիտեին: Նույն բանը հաստատում են Սպիքսը և Մարցիուսը Բրազիլիայի հնդիկների համար: Լիխտենշտայնն ասում է, թե կուսսա (kussa) կաֆրերի մեջ շատերը բնավ համարել չգիտեն, բայց եթե իրենց հարյուրավոր ոչխարներից մեկը պակասի, իսկույն կիմանան, ոչ թե հաշվով, այլ մի ծանոթ դեմք պակաս գտնելով:

Ամերիկյան չիկիտոսները (Բոլիվիա)՝ թվական չունեին և հաշվել չգիտեին: Թվի գաղափարն արտահայտելու համար միայն 5 բառ կար, այն է՝

ominatubo	քանի՞
etama	մեկ

ominama	մի քանի, քիչ
anciri	շատ
anaana	բոլորը:

Ըստ այսմ իբր թվական կար միայն «մեկ» բառը: Թիվը ցույց տալու համար ցույց էին տալիս մատները և ասում էին omina hane «այս մատների չափ»։ Հաշվել չիմանալով՝ դրա փոխարեն գործ էին ածում զանազան ձևեր: Բայց այժմ այս բոլորը վերացել է, որովհետև սովորել են հաշվել իսպաներեն: Իրենց հին դասականներից մնացել են միայն co-cinitana «առաջին» և itaquirus «վերջին», որոնք բայական ձևեր են:

Ըստ Գարելենցի (Beitrag, էջ 502) պապուուսները հաշվելու ժամանակ ամեն մի մատին ասում էին be. Կրբ 5 մատը վերջանում էր, ասում էին ibon be (ձեռք մի). սկսում էին հաշվել մյուս ձեռքը, դարձյալ ամեն մի մատին ասելով be. երբ այս ձեռքն էլ վերջանում էր, ասում էին ibon ali (ձեռք երկու). ապա անցնում էին մի ոտքին, որ երբ վերջանա, կլինի samba be (ոտք մի), իսկ երկրորդ ոտքն էլ վերջացնելուց հետո, կլինի samba ali (ոտք երկու). Երբ հարկ լիներ 20-ից ավելի հաշվել, գնում էին, մի ուրիշ մարդ գտնում և հաշվում նրա ձեռքերն ու ոտքերը: Քիչ մարդ կար, որ հաշվել իմանար: Շատ շատերը հաշվել չգիտեին. հաճախ իրենց ասածը իրար չի համապատասխանում:

Ըստ Բլիկի (էջ 65) բուշմենները ունեն միայն երկու թիվ (1, 2), որոնք բնիկ բուշմեններն են. 3 նշանակող բառը վերցրել են նամա լեզվից, բայց լավ ծանոթ է իրենց. մյուս թվականներն էլ փոխ են առել նույն լեզվից, բայց քիչ են ծանոթ և չեն գործածվում: «Բուշմենները հաշվելու բան չունենալով, նրանց կարիքը չեն զգացել», ասում է հեղինակը:

Հարավային Աֆրիկայի բուշմենները «մեկ» թվի համար ունեն oai, երկուսը կոչվում է ku. երեքը բացատրելու համար գործ են ածում մի բառ, որի բուն նշանակությունն է «շատ», բազմաթիվ»: Բրազիլիայի մի քանի ցեղերի համրանքը հետևյալ ձևով է կատարվում. kuai «մեկ», makuai «երկու», uai «երեք». բայց այս վերջինիս էլ բուն նշանակությունն է «շատ», բազմաթիվ»: Նույն երկրում ըոտոկուգոս կոչված ցեղը գիտի kinam «մեկ», hentiata «երկու», այնուհետև՝ uruhu, որ նշանակում է «շատ, բազմաթիվ»: Հարավային Ավստրալիայում էնկունաեր Բայի (Enkounter Bai) շրջակայքը բնակվող ցեղերը երեքից ավել

լի չէին ճանաչում: Սրանից դեպի արևելք, այսինքն Բրիտանիի հյուսիսային կողմը, այն է՝ Մորեոտոն Բայի շրջակաների բնակիչները և ուրիշ բազմաթիվ ավստրալիական ցեղեր էլ նույն աստիճանի մեջ էին: «Երեք» և «շատ» գաղափարների նույնության համար արդեն խոսել ենք. այստեղ ավելացնենք, որ ժողովուրդների նույնիսկ շատ ավելի մեծ զարգացումից հետո էլ նույն բառը կարող է մնալ. այսպես, սումեր. eše, կրճատ՝ eš նշանակում է «շատ», բայց նաև «երեք», հետո էլ բայի մեջ հոգնակիի նշան է դարձել:

Ավստրալիայի մուրրավարի ցեղի լեզվով՝  
yaman 1, kubbo 2, murrabiri 3 և ավելի:

Ամերիկյան Ձուբակուա լեզվով կար միայն երեք թիվ. 1 bihe, 2 witane, 3 witadenike, ավելին չունեին: Ամերիկյան կիպեա լեզվով՝ 1 bihe, 2 wachani, 3 wachani-dikie, որից հետո ամեն ինչ կոչվում է yo «շատ»: Ամերիկյան տուպի լեզվով՝ 1 jepe, 2 mokōin, 3 mozopipa, որից հետո կար՝ 4 yrun dy, որ թվում է, թե նույնպես «շատ» է նշանակում:

Ավստրալիայի Նարրինյերի լեզվի համար Թրեյկիլդը (IV, էջ 39) տալիս է հետևյալ թվերը.

- 1 yammalai
- 2 niḡgeḡk
- 3 neppaldar

Մնացած բոլոր թվերը կոչվում են gruwar, որ նշանակում է «շատ» (հմմտ. ստորև՝ Կիկերսի տվյալները, էջ 138-ում):

## 2. ՄԻՆՁԵՎ ՀԻՆԳ ՀԱՄԱՐՈՂՆԵՐ

Վերոհիշյալ ցեղերին մոտ, բայց մի քիչ ավելի զարգացած վիճակ ունեին Մակարիա լճի շրջակայի բնակիչները (Ավստրալիա, Սիդնեյից մի քիչ ավելի դեպի հյուսիս), որոնք հաշվում էին այսպես, wakal «մեկ», bula, buloara «երկու», yoro «երեք», waran «չորս». այնուհետև գործ էին ածում kauwal-kauwal, որ նշանակում է «մեծ մեծ»: Գվարանիների լեզվով 4-ից բարձր ամենինչ կոչվում էր ndipapahabi, որ նշանակում է «անթիվ, անհամար»: Այսպես նաև շատ ավստրալիական ցեղեր չորսից ավելին չէին ճանաչում. նրանց մեջ հինգ և ավելի մեծ թվերը նշանակում են «մեծ», բազմաթիվ» բառերով: Սեյլանի Վեդդաները կարողանում էին հաշվել մինչև հինգ.

գրանցից այն կողմ թիվ չէին իմանում: Թասմանացիք հաշվում էին մինչև չորս. հինգը սրանց լեզվով կոչվում էր *չորս + մեկ*:

### 3. ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑԻԸ

Շատ հետաքրքրական է նկատել թե ինչպես մարդիկ այս կետից սկսած կամաց կամաց և զանազան ուղղությամբ ձգտում են հասնելու մի ավելի զարգացած հաշվական վիճակի: Նախ և առաջ բազմաթիվ առարկաների մեջ առաջին երեք հատից բացի ուրիշ երեքների գոյությունը մարդու մտքում արթնացրեց թվերի կանոնավոր աճման գաղափարը: Այնուհետև մարդը, որ երեքից ավելի առարկաների մեջ հախուռն և անկանոն մի բազմություն էր միայն նկատում, իմացավ, թե այդ հախուռն ու անկանոն բազմությունն էլ իր կարգին պարունակում է 1, 2, 3, դարձյալ՝ 1, 2, 3 և դարձյալ՝ ուրիշ 1, 2, 3, և այսպես շարունակաբար՝ կանոնավոր կերպով: Մարդը այս կանոնավոր աճումը նկատում էր մանավանդ իր ձեռքի և ոտքի մատների մեջ, որոնք միասին մինչև 7 անգամ առանձին առանձին երեքներ էին պարունակում: Ձեռքի և ոտքի մատերի վրա դարձնելով իր ուշադրությունը՝ մարդը հղացավ այնպիսի մի մեծ գաղափար, որ քիչ ժամանակում և մտածման ամենափոքր ճիգով պիտի առաջնորդեր նրան հազարներ ըմբռնելու կարողության: Այս բեղմնավոր գաղափարն էր առարկաների թիվը մատներով նշանակելու կամ մատների վրա հաշվելու մտածումը:

Այս մտածման առաջին արդյունքը եղավ թվերի նյութական, բայց ոչ վերացական և անջատաբար ըմբռնումը, այսինքն այն, ինչ որ մաթեմատիկայի մեջ այժմ կոչվում է *բազմաթիվ*: Անցման այս շրջանում մարդը թեև ճանաչում է 4, 5, 6, բայց միայն իր մատների վրա. ուրիշ խոսքով նրանք համար առանձին առանձին անուններ չունի, այլ բոլորն էլ *չատ*, բազմաթիվ չեն, կամ երեքի և չորսի տեսակներ: Այսպես՝ Հարավային Աֆրիկայի նույն բուշմենները 1, 2, 3 թվերի համար առանձին բառեր ունեին, ինչպես վերը տեսանք, բայց գրանցից ավելին՝ 4, 5, 6 և այլն մատներով էին միայն ցույց տալիս, առանց որևէ անուն տալու: Ըստ Լիխտենշտայնի՝ բեկտյունները հաշվելու համար մատները բարձրացնում էին, առանց մի որևէ անուն տալու. շատերը թվական անուն չունեն և բավականանում են միայն նշաններով: Անդամայան լեզուներով հաշվում էին առանձին

անուաներով մեկ և երկու. մնացած բոլոր թվերի համար մատը բարձրացնելով ասում էին *anka* «այս էլ»։ 5 թիվը լրանալուց մի ձեռքը ցույց տալով ասում էին *ordura* «բողորը», նույնպես՝ նաև 10 թիվը լրանալիս։

Մի քիչ ավելի զարգացած էին Բրազիլիայի մի քանի ցեղեր, որոնք գիտեին *kuai* «մեկ», *makuai* «երկու», *uai* «երեք»։ սրանից ավելի մեծ թվերը ցույց էին տալիս իրենց ձեռքի մատները՝ վրա, ամենքի վրա էլ կրկնելով *uai*։ Այսպես նաև վերը հիշված Բոտոկուդոսները 3 բառի հատուկ սրսիս անունը տալիս էին նաև 4, 5, 6 և ավելի թվերին՝ միայն մատները վրա ցույց տալով նրանք։ Մակարիա լճի շրջաբնակներն էլ, որ ճանաչում էին մինչև չորսը, չորսից այն կողմ ամեն թիվ կոչում էին *kauwal-kauwal* «մեծ մեծ», մի բառ, որ հատուկ է նաև հինգին։ Ավստրալիայի հարավակողմում նարրինյերի ցեղի լեզվով՝ *yam-male 1, nīgkaingk 2, nepaldar 3, iusik rūwar 4* և ավելի թվերն էր ներկայացնում։

Շատ հետաքրքրական է, օրինակ, Ավստրալիայի Դամմարու ցեղի հաշվական սովորութիւնը, որի նկարագիրը տալիս է մեզ Գալտոնը (տես Lubbock, *Les origines*, էջ 428—431)։ Մրանք մինչև երեք ունեին թիվ արտահայտող բառեր. երբ հասնում էին չորսին, գործածում էին իրենց մատները, որոնք իրենց համար ծառայում էին իբր հաշվետախտակ կամ հաշվիչ մեքենա։ Երբ հասնում էին 5-ից այն կողմ, մնում էին շփոթված, որովհետև չունեին մի ավելորդ ձեռք, որ մատները իբր միութիւն բռնի և հաշվի։ Առևտուրը կատարվում էր առանձին առանձին հաշվելով. օրինակ՝ մի եզան գինն էր 10 գլան ծխախոտ. վաճառողը փոում էր իր ձեռքերը գետնի վրա, գնորդը նրա յուրաքանչյուր մատի վրա դնում էր մի գլան ծխախոտ, և երբ տասը մատները գլաններով ծածկվեցին, վաճառողը հավաքում էր գլանները և տալիս մի եզ։ Հետո մյուսը և այլն։ Գալտոնը մի անգամ ուզում է գնել 2 ոչխար. յուրաքանչյուրի գինն էր 2 գլան ծխախոտ. նա տալիս է 4 գլան. վաճառողը չի կարողանում հաշվել և կարծելով, թե գնորդը ուզում է խաբել, առևտուրը դադարեցնում է։ Այն ժամանակ Գալտոնը տալիս է 2 գլան, առնում է մի ոչխար, հետո նորից տալիս է 2 գլան և առնում է երկրորդ ոչխարը։ Վաճառողը այժմ գիտի, որ հաշիվը ճիշտ է։

Բրազիլիայի կորոագո ցեղը հաշվում էր ավելի տարօրինակ ձևով. այստեղ իբրև թիվ էին ծառայում ոչ թե մատները,

այլ մատների ստորին արանքները. այսպիսով նրանք կարող էին հաշվել միայն երեք թիվ, որից ավելին կոչվում էր mony:

Հարավային Աֆրիկայում բերդդամա ժողովուրդը հաշվում էր հետևյալ ձևով. նախ հաշվում էին ձախ ձեռքի մատները, սկսելով ճիւղթից, հետո՝ աջ ձեռքը, հետո՝ ձախ ոտը, հետո՝ աջ ոտը. ոտքի և ձեռքի հինգ մատների համար հինգ տարբեր անուն ունեին. Ուրիշները հաշվում էին զույգ-զույգ և մատների յուրաքանչյուր զույգը բունելիս ասում էին շայս երկուսը, իսկ երբ թիվը զույգ չէր, մի մատ էլ բունելով՝ ասում էին շայս մեկը, Բերդդամներից օմանք էլ հաշվում էին միայն մինչև 6 թիվը, իսկ այնուհետև ցույց էին տալիս մի առ մի մատները՝ ասելով շե այս էլ, և այս էլ:

Ինչպես տեսնում ենք, սրանք արդի ըմբռնումով իրապես համբանք չեն. համբանքը կամ հաշվական կատարելության առաջին աստիճանը սկսում է այն ժամանակ, երբ մարդ փոխանակ նույն uai, uruhu, kauwal-kauwal, mony բառերով անվանելու բոլոր երեքից ավելի մեծ թվերը, մտածում է դարձյալ մեկից սկսելով հաշվել մնացած մատների վրա: Բայց որովհետև մարդու երկու ձեռքի տասը մատներն ունեն մի քանի ավբողջ բաժանարարներ, այն է՝ 2 ( $\times$  հինգով), 5 ( $\times$  երկուսով) և 10 ( $\times$  մեկով), ըստ այսմ էլ մարդկանց այս կամ այն ընտրություն համեմատ, ծագեցին հաջորդ հաշվական դրությունները:

#### 4. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Երկրորդական դրության մեջ միությունը երկուսն է. այսպես՝ մեկ, երկու, բայց դրանից հետո՝ երկու մեկ (3), երկու երկու (4), երկու երկու մեկ (5) և այլն. Այսպես էին Ավստրալիայի Յորքի գլխի բնակիչները, որոնք հաշվում էին հետևյալ կերպով.

- 1 netat
- 2 naes
- 3 naes-netat (2+1)
- 4 naes-naes (2+2)
- 5 naes-naes-netat (2+2+1)
- 6 naes-naes-naes (2+2+2):

Նույն բանն է ասում Գաբելենցը Յորքի գլխից հյուսիս-արևելք գտնված երկու կղզիների (Էրրուբ և Մայեր) բնակիչ-

ների մասին, որոնք ճանաչում էին միայն երկու քիվ և սրանցով հաշվում էին մինչև վեց, Սյդ թվերն են՝

- 1 nität
- 2 neis
- 3 neisa-netat
- 4 neisa-neis
- 5 neisa neisa netat
- 6 neisa neisa neis.

Սրանց հետ նույնն են Մելանեզիայի Murray Island-ի լեզվի թվերը՝

- 1 netat
- 2 neis
- 3 neis a nerut
- 4 neis a neis
- 5 neis a neis a nerut

և այսպես շարունակաբար։

Սրանից մի քիչ աղքատ ձև ունեւր ամերիկյան արազայր (arazaire) լեզուն, որ հաշվում էր՝

1 nunčina, 2 butah, 3 butah-nunčina, 4 butah-butah. Իսկ ավելի բարձրը կոչվում է huakana, որ նշանակում է «շատ»։

Նոր-Գվինեա կղզու մերավրե կոչված լեզվի մեջ կային միայն 1 և 2 թվերը, որից հետո.

- 3=2+1
- 4=2+2
- 5=2+2+1:

Իսկ 5-ից հետո ամեն թիվ կոչվում է «շատ». հիմա 6—10 թվերը փոխ են առել մալայերենից։

Ավստրալիայի հարավային կողմը՝ նարբինյերի ցեղի լեզվով.

- ki մեկ
- kukko 2 (զույգ)
- kukko ki 3
- kukko kukko 4
- kukko kukko ki 5
- kukko kukko kukko 6
- kukko kukko kukko ki 7 (հիմա. վերը՝ էջ 134):

Դարձյալ հարավային Ավստրալիայում Ադելայդայի շրջանային բնակիչները չորսը կոչում են «երկու զույգ», հինգը՝ «երկու զույգ մեկ» և այլն:

Ավստրալիայի մինյոզ լեզվով.

- 1 yaburu
- 2 bula
- 3 bulai-yaburu
- 4 bula-bula
- 5 bula-bulai-yaburu.
- 6 bula-bula-bula:

### 5. ԵՐՐՈՐԴԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Երրորդական դրության հիմքը երեքն է. առանձին անուններ կան 1, 2, 3 թվերի համար, իսկ մնացյալը կազմվում է սրանց գումարումով:

Այսպես, Ավստրալիայի կամիլարոյ ցեղի լեզվով ունենք՝

- 1 māi
- 2 būlār
- 3 gūliba
- 4 būlār-būlār
- 5 būlār-gūliba
- 6 gūliba-gūliba:

Սրանց նման, բայց մի քիչ տարբեր ձևով էին հաշվում Ավստրալիայի բնիկներից Ադելայդա, Էնկաունտերբայի և Պոմունգայի ցեղերը: Առաջինները հաշվում էին 1 kunna, 2 parlaitye, 3 monkutye, 4 purlaitye-purlaitye, որ է 2+2. Դրանից ավելի թիվ չունեին: Երկրորդները հաշվում էին՝ 1 yammuli, 2 neiyey, 3 maalda, 4 kukar-kukar, որ ցույց է տալիս, թե երկուսը առաջ կոչվել է kukar, որ հետո փոխանակվել է neiyey բառով: Սրանից այն կողմ թիվ չունեին: Վերջապես երրորդները հաշվում էին՝

- 1 yamalaitye
- 2 neiyeyi
- 3 maalda

4 kukar-kar կամ kiγgaruy, որից այն կողմ թիվ չկար: Սրա և նախորդի համեմատությունը ցույց է տալիս, որ 1, 2, 3 թվերը ձևով ու ծագմամբ նույն են. 4-ը նույն kukar (2) թվի կրճատ



կրկնությունն է, որ ջնջվելով՝ ստեղծվել կամ փոխ է առնվել կիցարսյ ձևը:

Ավստրալիայի գիպիլ ցեղը նմանապես ուներ առանձին անուններ 1—3 թվերի համար, բայց 4—ն է՝ 2+2, հինգը՝ 2+2+1. այսպես՝

- 1 kälim, kinyara
- 2 būllar
- 3 kurbunta, boppa
- 4 būllar-gira-būllar
- 5 " " " kälim

### 6. ԱՆՅՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Նրկրորդական և հաջորդ հինգերորդական շրջանների միջև կան երկու անցման շրջաններ, որոնց մեջ էվոլուցիան միայն կիսովին է կատարված. այս շրջաններում միությունը թե՛ երկու է, և թե՛ հինգ, հետևյալ կերպով.

Առաջին շրջան.—1, 2, 2+1, 2+2, 5, 5+1 և այլն. այսպես՝ ըստ Բիվերիշի՝ Մուլրայի հարավային կողմի բնիկները հաշվում էին հետևյալ ձևով.

- 1 ryup
- 2 politi
- 3 politi-ryup (2+1)
- 4 politi-politi (2+2)
- 5 ryup marnangin.

Այս վերջինի բուն նշանակությունն է «մի ձեռք», որից հետո՝

- 6 ryup-marnangin-ryup (1 ձեռք+1)
- 7 ryup-marnangin-politi (1 ձեռք+2)
- 10 politi-murnangin (2 ձեռք)
- 13 politi-murnangin-politi-ryup (2 ձեռք+2+1):

Միևնույն էր նաև Ավստրալիայում Դալի գետափի ցեղի ձեզվով, ուր ունենք՝

- 1 yepak
- 2 veren
- 4 veren veren (2+2)
- 5 nanyiik yepak (ձեռք մի)
- 10 " veren ( " 2)

15 nanyilk veren madan *yenak* (ձեռք 2+ոտք մի)  
 20 " madan veren (ձեռք ոտք 2):

Սրա հետ զուգընթաց էր Ավստրալիայի արևմտյան մասի մի լեզվով՝

- 1 gain
  - 2 gudjal
  - 3 warh-rag
  - 4 gudjal-gudjal
  - 5 marh-յim bağa (կես ձեռք)
  - 10 belli belli marh-յim bağa
- «Երկու կողմից կես կես ձեռք»:

Երկրորդ շրջան.—1, 2, 2+1, 4, 5, 5+1, 5+2, 5+2+1, 5+4 և այլն. անցման այս շրջանին է վերաբերում հայ գնչուների բարբառը, որ համրում է հետևյալ եղանակով՝

- 1. ակ.
- 2. լուի.
- 3. լուի-ակ (2+1).
- 4. չդար.
- 5. աթ մը (ձեռք մի).
- 6. աթ մ'ու ակ (ձեռք մի ու մեկ).
- 7. աթ մ'ու լուի (ձեռք մի ու երկու).
- 8. աթ մ'ու լուի-ակ (ձեռք մի ու 2+1) և այլն:<sup>1</sup>

### 7. ՉՈՐՐՈՐԴԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Կան լեզուներ, որոնց մեջ հաջվական դրությունը հիմնված է 4-ի վրա. ըստ այսմ.

- 5=4+1
- 6=4+2
- 7=4+3
- 8=4+4 կամ 2×4<sup>o</sup>
- 9=2×4+1
- 16=4×4 և այլն.

Այս դրությունը բավական հազվագեպ է. նրան են հետեւում, օրինակ, Կալիֆորնիայի սալինա և խումաշ կոչված լեզուները և այլն:

<sup>1</sup> Այս բառերը մեզ հաղորդել է Ս. Բասաջյանը:

Կրոյրերը (էջ 368) ասում է, թե Կալիֆորնիայի յուկի լեզուն էլ չորրորդական, ավելի ճիշտ՝ ութերորդական (oktonary) դրության է հետևում, բայց չի տալիս թվերի ցուցակը:

### 8. ՀԻՆԳԵՐՈՐԴԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Հինգերորդական դրության մեջ միությունը հինգն է. թվերը կազմվում են հետևյալ եղանակով.

1, 2, 3, 4, 5, 5+1 (6), 5+2 (7), 5+3 (8), 5+4 (9), 2×5 (10), 2×5+2 (12), 4×5+4 (24) և այլն.

Այսպես են հաշվում Մադագասկարի մի քանի ցեղերը, ինչպես նկատել է այս տողերի գրողը՝ իր Փարիզ եղած ժամանակ՝ հարցուփորձելով այստեղ գտնվող մադագասկարցիներին, որոնք առաջին չորս թվերին առանձին առանձին անուններ տալուց հետո հինգերորդը կոչում էին gūrom և հետո շարունակում էին gūrom+մեկ, gūrom+երկու և այլն.

Հինգերորդական դրության է պատկանում Ամերիկայի տլինգիա լեզուն, ուր ունենք՝

1. l°ēq
2. dēx
3. naçk
4. daqūn
5. kējīn:

Վերջինը նշանակում է բուն kē «վեր» jīn ձեռք. և այս բառը գտնում ենք նաև jīnkat «տասը» բառի մեջ: Բայց 5 բառի տեղ եղել է անշուշտ dušū ձևով մի բառ, որ հետո կորել է և որից ունենք՝

- 6 l°ēdušū (1+5)
- 7 daxadušū (2+5)
- 8 naçkudušū (3+5):

Ունենք նաև l°ēqa 20, որ է l°ēg 1+մարդ, kējīnka 100, որ է՝ 5 մարդ:

Հինգերորդական դրության հետևում էր նաև Հրո Երկրի օնա-չեկվնամ լեզուն: Այստեղ կային նախապես միայն առաջին հինգ թվերը.

- 1 sos, 2 soke, son, 3 sauke  
 4 koni-soke (կրկին երկու)  
 5 kes-mar-ei (mar «ձեռք» բառից):

Այո էր իրենց հաշվական զարգացման վիճակը: Գաղութաբարենների միջոցով ծանոթանալով ավելի բարձր թվերի, հնարեցին նոր բառեր, որոնք 3 տարբեր քննիչները մոտ տարբեր ձևեր ունեն. նո ջոկում եմ նրանցից ավելի պատշաճ ձևերը, այն է՝

- 6 koni-sauken (զույգ 3)  
 7 karreik wiwai šouke (մյուս ձեռից 2)  
 8 " " šauke (" " 3)  
 9 akkiai (շատ) կամ kauč-kismareī (?+5)  
 10 karikei-kismareī (զույգ 5)

կամ koni-tčen-win (երկու ձեռք)

- 20 soke čoon ketčen win (ինչպես ձեռքերն երկու մարդու):

Հինգերորդական գրության է հետևում նաև ամերիկյան կարրիեր լեզուն. այսպես՝

- 1 i hlo, 2 najk'e, 3 t'a, 4 teyge, 5 kwollai,  
 6 h lket'a կազմված է h l—«մի ուրիշն էլ», +ke «վրա» + t'a «երեք» բառերից և նշանակում է՝ «երեքի վրա մի ուրիշն էլ»:  
 7 h l t'akanči  
 8 h lket'eyge որ է h l. «մի ուրիշն էլ» +ke վրա +teyge չորս. այն է՝ չորսի վրա մի ուրիշն էլ.  
 9 i hlo huleri նշանակում է՝ մեկ պակաս (գրությամբ՝ երկու ձեռքից կամ տասից).  
 10 hwonizyai:

Հինգերորդական գրության է հետևում նաև ամերիկյան ֆուլ լեզուն, որի թվանշաններն են 1 goto, 2 dido, 3 tato, 4 nay, 5 djoy, իսկ 5-ից հետո՝ 6 djeg (5+1), 7 djedidi (5+2), 8 djetati (5+3), 9 djenay (5+4):

Հինգերորդական գրության է հետևում նաև աֆրիկյան գինկա լեզուն, որ իր թվերը հաշվում է հետևյալ ձևով 1 tok, 2 rou, 3 dyak, 4 nguan, 5 wdyech, որից հետո՝  
 6 wdetem (5+1), 7 wderou (5+2)

- 8 bet (անկախ ձև)  
 9 wdenguan (5+4)  
 10 wtyer (5×2):

Մալայան լեզուներից պլե-տեմեր լեզուն էլ մինչև հինգը ունի առանձին արմատներ. 1 nēi, 2 nar, 3 ne, 4 rōb-pedox, 5 leba. ավելի հաշվել չգիտեին. զարմանալի է, որ այս ժողովուրդը թեև մատները վրա էր հաշվում, և բոլոր մատները առանձին առանձին անուններ ունեին, բայց այդ անունները իբրև թիվ չէին գործածում:

Մելանեզյան կվամերա լեզվով 1—5 թվերը հետևյալներն են. 1 iti 2 karu, 3 kahar 4 kefa, 5 karirum սրանցից վեր բարձրանալու համար ասում են.

- |    |    |     |    |                          |       |         |
|----|----|-----|----|--------------------------|-------|---------|
| 6  | me | ke  | ya | nekare                   | ragak | iti\    |
|    |    |     |    | և գնա իմ մյուս ձեռքը 1 } |       |         |
| 7  | me | ke  | ya | nekare                   | ragak | karu    |
| 8  | "  | "   | "  | "                        | "     | kahar   |
| 9  | "  | "   | "  | "                        | "     | kefa    |
| 10 | "  | "   | "  | "                        | "     | karirum |
| 11 | "  | "   | "  | "                        | neruk | eti\    |
| 12 | և  | գնա | իմ | մի                       | ոտքը  | 1 }     |
|    | "  | "   | "  | "                        | "     | kari    |

մինչև karirum, որ անում է 15:

Հինգերորդական դրության է պատկանում դարձյալ Ավրստ-բալիայի յունգար լեզուն, որ իր թվերը հաշվում է հետևյալ ձևով.

- |    |                              |        |              |
|----|------------------------------|--------|--------------|
| 1  | gad                          |        |              |
| 2  | gud'al                       |        |              |
| 3  | mardin                       |        |              |
| 4  | gud'al-gud'al                |        |              |
| 5  | mardin bangga (ձեռքերի կեսը) |        |              |
| 6  | mardin banəa gud'ir gan      |        |              |
|    | 5                            | և      | 1            |
| 10 | belli belli mardin           |        | banəga       |
|    | երկու կողմ ձեռքերի           |        | կես          |
| 15 | mardin belli belli           | gud'ir | d'ina banəga |
|    | ձեռքեր երկու կողմ            | և      | ոտքի կես:    |

Կարող է պատահել, որ հինգերորդական դրուժյան հետե-  
վող մի լեզու կորցնի իր 1—4 կամ 5 թվականների նախնական  
ձևերը, բայց պահած լինի 6—10 թվականների մեջ: Նման դեպ-  
քերում կարելի է ստուգել միայն ցեղակից այն լեզուների հա-  
մեմատություններ, որոնք պահել են նախնական ձևերը: Այսպես՝  
աֆրիկյան բարի լեզուն իր առաջին 10 թվանշանները հաշվում  
է հետևյալ ձևով.

1 tu, 2 òri, 3 yala, 4 unguan, 5 kanat, 6 bukér,  
7 burya, 8 budòk, 9 bunguân, 10 puòk.

Այստեղ 6 bukér, 7 burya, 8 budòk, 9 bunguân բա-  
ները իրենց bu-նախավանկով իսկույն զգալ են աալիս, որ 5  
բառի ածանցներ են, բայց ոչ հինգն է կոչվում bu և ոչ էլ մյուս  
վերջավորություններն են հայանի. հայանի է միայն 9 bunguân,  
իրևև ածանց 4 unguan թվի:

Բայց իսկույն յոթ և ութն էլ կպարզվեն, հենց որ համե-  
մատության առնենք ցեղակից աֆրիկյան գինկա լեզուն: Այս-  
տեղ 2 կոչվում է rou, 3-ը՝ dyak, որով 7 hurya (5+2), 8 budòk  
(5+3).

Ամերիկյան տակելմա լեզուն էլ հինգերորդական է, բայց  
բուն նախնական ձևերը լավ չի պահել: Այսպես՝

1 mis, mĩsga, 2 gãm, aãp'ini, 3 xibini (հմմտ. 8),  
4 gamgam (2×2), 5 dehal, որից հետո ունենք՝ 6 haĩmĩs  
(haĩ ձեռք+1), 7 haĩgam (haĩ ձեռք+2), 8 haĩxin (ձեռք+3),  
9 haigo (ձեռք+go, որ երևի առաջ նշանակում էր 4), 10 ixdĩl  
ինթադրում է ix ձեռք+dil երկակի մասնիկով.

Չարմանալի է ամերիկյան կոոս լեզուն, որ թեև 6 և 7  
կազմում է հինգերորդական դրուժյամբ, բայց 8 և 9 կազմում  
է ինչ որ անսովոր ձևով. այսպես՝

- 1 yixēi'
- 2 yuxwā'
- 3 yi'psən.
- 4 héclil
- 5 kat'ə'mĩs
- 6 yixēi'wĩeq ( 1 ձեռքում)
- 7 yuxwā'wĩeq (2 ձեռքում)
- 8 yixēi'ahāł (1 ?)
- 9 yuxwā'ahāł (2 ?)
- 10 zep'qānĩ:

Մեզ հայտնի չէ, թե ինչ է ներկայացնում *ahäl* բառը, որով կազմվում են 8 և 9 թվերը:

Աֆրիկյան օնո լեզուն սկզբում երկրորդական է եղել, հետո հինգերորդականին է անցել: Սկզբում 40-ից ավելի չեն կարողացել հաշվել. ասել են՝ *lontne, mayo dapotki goiake?* «չճտ, մի պիտի հաշվի և դա ամեն ինչ պիտի լինի» («viel, wer wird es zählen, und es wird alle werden»):

Այսպես էին ասում մեծ քանակի համար: Այժմ ծեփերը միայն հին համրանքը գիտեն. նորերը անգլիերեն են հաշվում.

չին համրանքը հետևյալն է.

1 veku, 2 etke, 3 etke so mane կամ karewe, 4 etke so etke

5 mete mane

ձեռք մի (մի ձեռք)

6 mete mane so zitne veku

ձեռք մի և մատ մեկ

7 mete mane so zitne etke

8 " " " " karewe

9 " " " " etke so etke

10 " etke (ձեռք երկու)

11 ձեռք երկու և ոտք մատ մեկ... և այսպես շարունակվում է մինչև

nei mane kie mete korop

մարդ մի ոտք ձեռք ամբողջ

կամ  
nei mane korop  
մարդ մի ամբողջ = 30.

Հինգերորդական դրության մեջ տարօրինակ պիտի լիներ անշուշտ, եթե ա ձեռքի 5 մատները հաշվելուց հետո, ք ձեռքի 5 մատներին էլ նույն անունները տրվեին: Այսպիսի զարմանալի մի երևույթ ենք գտնում ամերիկյան ցիմշիան լեզվում, ուր ունենք՝

1 k'ēel և 6 qāel

2 t'epxa (t) և 7 t'epxa

և անհարիր ձևով՝

5 k<sup>u</sup> stēns և 9 k<sup>u</sup> stemāš:

Չարմանալի է Սուդանի բարգու լեզվի թվարկությունը. այս լեզուն հինգերորդական դրության է հետևում և 6-ից մինչև 10 չունի անկախ թիվ. բայց 10-ից հետո ունի անկախ թվեր թե տասնյակների, և թե հարյուրավորների համար՝ առանձին: Այսպես՝

1 tia, 2 yīru, 3 ita, 4 nne, 5 nobu, 6 nobu ga tia, 7 nobu ga yīru, 8 nobu ga ita, 9 nobu ga ne

- 10 wōkulu
- 11 wokulu ka tia և այլն
- 20 nedu
- 30 tena
- 40 weru
- 50 weru ka wōkulu
- 60 wata
- 70 wata ka wōkulu
- 80 nwene
- 90 nwene ka wōkulu
- 100 nwonabu
- 200 gobu
- 300 gobu ka nwonabu
- 400 neru
- 500 neru ka nwonabu
- 600 nata
- 700 nata ka nwonabu
- 800 nene
- 900 nene ka nwonabu
- 1000 norobu:

9. ՎԵՑԵՐՈՐԴԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս գրության մեջ միությունը վեցն է, որի շարունակությունը և ավելի զարգացած վիճակն է 12-ական գրությունը և որ բոլոր գրությունների մեջ ամենից կատարյալն է համարվել, որովհետև ամենից ավելին 12 թիֆն է, որ տալիս է առանց ֆազորդի բաժանարարներ: Այս գրությունը շատ հազվագյուտ է. գտնվում է Նյուս. արևմտ. Աֆրիկայի, Սենեգամբիայի, նաև՝ հետքեր Ֆերնանդո Պոյի լեզուներում: Բայց ամեն տեղ էլ անհետացել է այս գրությունը, տեղի տալով տասնորդականին և մնում է միայն իբրև վերապրուկ:

Օրինակ՝ Համբուրգերը նկատում է, որ շատ աֆրիկացիներ վեցմատնյա են, ինչ որ պատճառ է դառնում ինարկե 6-ով և 12-ով հաշվելու (BSL 29, № 88, էջ X): Բայց 12-ով հաշվելու հիմք ծառայել է նաև մի ուրիշ հանգամանք, այն, որ որոշ ցեղեր հաշվում են ոչ թե մատների վրա, այլ մի ձեռքի չորս



մատների 3 հոդերի (Ֆալանգների) վրա, որով գումարը լինում է 12 (անդ, էջ IX)։

Վեցերորդական դրության զարմանալի հետք գտնում ենք ամերիկյան մոսկիտո լեզվում. այստեղ 1—5 թվերը ունեն առանձին անուններ.

1 kumi, 2 wal, 3 yumpa  
4 wal-wal (այն է 2+2),

5 mata-sip, որ թվում է, թե կազմված է mata արմատից, քանի որ 6-ը կոչվում է matlalkabi.— Այնուհետև 7—9 կազմվում են 6-ից՝ միավորների հավելումով. այսպես՝

6 matlalkabi  
7 » pura kumi  
8 » » wal  
9 » » yumpa.

Իսկ 10 կոչվում է mata-wal-sip, որ կազմված է 2 բառը ներմուծելով 5 mata-sip բառի մեջ։

Մի ուրիշ ամերիկյան լեզու էլ կար (անտի կամ կամպա), որ հաշվական կարողութամբ գտնվում էր բավական նախնական վիճակում և գիտեր հաշվել մինչև վեց։ Այսպես՝ 1 aparo, 2 apite, 3 mahua, 4 apite-huacay (որ անշուշտ նշանակում է «երկու զույգ»), 5 apacoro և 6 apipacotero։ Մրանից վերև թիվ չունեին. ցույց էին տալիս մատներով և ասում՝ tuggenga «շատ»։

Ամերիկյան պանեց լեզուն 1—6 թվերը կանոնավորապես և անկախ բառերով հաշվելուց հետո (1 yas, 2 enz, 3 tec, 4 panz, 5 tanz, 6 sanqui), 7-ից մինչև 9 կազմում է 6-ի գումարումով, բայց ամեն մեկի վրա մի թիվ ավելի. այսպես՝

7 enz-sanqui (=2.6)  
8 tec » (=3.6)  
9 panz » (=4.6)։

Այս զարմանալի ձևը բացատրում եմ նրանով, որ այստեղ պետք է առնել ոչ թե գումարում, այլ շարք, այսինքն 7=վեցերորդից հետո երկրորդ մաս, 8=վեցերորդից հետո երրորդ մաս և 9=վեցերորդից հետո չորրորդ մաս։

10. ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Մեկ ձեռքի վրայի հինգ մատները համարելուց հետո՝ համարանքը շարունակելու համար երկու միջոց ունի մարդ. կամ վերստին սկսել հաշիվը նույն ձեռքի մատների վրա և կամ շարունակել մյուս ձեռքի մատների վրա. Առաջինը հինգերորդական գրությունն է, որ արդեն բացատրեցինք, երկրորդը տասնորդական գրությունն է.

Հաշվական գրությունների մեջ ամենից ավելի տարածվածն է այս գրությունը, որ հատուկ է ոչ միայն հնդեվրոպական լեզվախմբին, այլև սեմականին և Ռւրալ-Ալթայականին, չինարենին, ջավայերենին, աննամերենին, հոտենդոտերենին, սվահիլիին: Այս գրության մեջ միությունը տասն է, այսինքն՝ երկու ձեռքի մատների գումարը. 1—10 թվերը կոչվում են առանձին արմատներով, 11—19, 21—29 և այլն՝ հավելումով, իսկ 20—30 և այլն՝ բազմապատկությամբ. այսպես՝ ի մեջ այլոց, հայերեն՝ մետասան (1+10), չորնքտասան (4+10), քսան (2×10), հիսուն=հինգսուն (5×10), վաթսուն=վեցսուն (6×10) և այլն:

Տասնորդական գրությունը երկու մեծ բաժանմունք ունի. առաջինն այն է, երբ 6—9 թվերը կազմվում են հինգի վրա, գումարելով 1—4 միավորները, իսկ 10 ներկայանում է անկախ բառով: Այս ձևը հինգերորդական գրության շարունակությունն է, որ զուտ հինգերորդական պիտի կոչեինք, եթե 10 թիվը անկախ չլիներ, այլ կազմված լիներ 2×5 թվերից, ինչպես ասեսանք վերևում:

Այս կարգի լեզուներ շատ կան թե Աֆրիկայում և թե Ամերիկայում: Օրինակ՝ աֆրիկյան բակոլ (bakole) լեզուն ունի՝

- 1 yiwata, 2 biba, 3 bilali, 4 binai, 5 bitani
- 6 bitani na yiwata (yiwoto)
- 7 " " biba
- 8 " " bilali
- 9 " " binai
- 10 diom

Մի ուրիշ աֆրիկյան լեզվում (ազանդե կամ նիամ-նիամ) գտնում ենք՝

- 1 sa, 2 uwe, 3 biyata, 4 biyama, 5 biswe
- 6 biswe            beti            sa

7 biswe	beti	uwe
8 „	„	biyata
9 „	„	biyama
10 bawe		

Աֆրիկյան վեյ կամ վայ լեզվի մեջ էլ դրությունը նույնն է, թեև այստեղ 5 (sōru) բառի կրճատմամբ կարծես թե ստացվել են նոր ձևեր 6—9 թվականների համար: Այսպես՝ 1 dondo, 2 fera, 3 sagba, 4 nani, 5 sōru, որից 6 sūndondo, 7 sūm-fera, 8 sūnsagba, 9 sūnnani, իսկ 10 tan:

Մի օրինակ էլ ամերիկյան լեզուներից տալու համար հիշենք առաջին հերթին էսկիմոսների լեզուն: Այս լեզվով առաջին հինգ թվերն են՝

1 atauseq, 2 mardluk, 3 pingasut, 4 sisamat, 5 tatdlimat, որից հետո գալիս է 6 arfineq.—հաջորդ 7—9 թվերը անվանելու համար՝ կրկնում են նախորդ միավորները մենակ կամ դնելով նաև arfineq այսպես՝

7 arfineq mardluk	կամ պարզապես	mardluk
8 „ pingasut	կամ „	pingasut
9 „ sisamat	„ „	sisamat
իսկ 10 կոչվում է	qulit:	

Երկրորդ հերթին հիշում ենք նշանավոր նահուատլ լեզուն, որի առաջին հինգ թվերն են՝

1 ce, 2 ome, 3 ei, 4 naïi, 5 ma-cuilli, իսկ հաջորդ 6—9 թվերն են՝

6 chiqua-cen, 7 chic-ome, 8 chicu-ei, 9 chico-naúi. այս բոլորը կազմված են հինգ միավորներից, որոնք կցված են chiqua բառին: Այս բառը ծագած է համարվում chiqua Վոտորակա ձևից, ի նկատի ունենալով մատները կոտրելը մյուս ձեռքի վրա:

Այս երկու օրինակների վրա պիտի ավելացնեմ երկու օրինակ ևս ամերիկյան լեզուներից՝ կարաիբ և մակուչի. առաջինում առաջին հինգ թվերն են՝

1 abana, 2 biama, 3 eloua, 4 biambouri, 5 ouacabo-apourcou, սրանից հետո՝ վեցը լինում է aban laoyagon ouacabo-apourcou, որ նշանակում է ժմեկ վրայով մյուս ձեռքի: այս ոճով շարունակում են մյուս թվերը՝ 7 և այլն:

Մակուչի լեզվի առաջին հինգ թվերն են 1 tiwin, 2 asa-

gane, 3 eserewa, 4 asakurabana, 5 moiya etaikin.—Վեցը կոչվում է tiwin miya pona tamotai, որ պետք է նշանակի Բևեկ մյուս ձեռքի վրա. և այս անգիրն թվարկումը շարունակվում է նաև մինչև 9. այսպես՝

- |               |      |      |         |
|---------------|------|------|---------|
| 7 asagane     | miya | pona | tamotai |
| 8 eserewa     | "    | "    | "       |
| 9 asakurabana | "    | "    | "       |

Այսպիսի մի դրություն էլ ներկայացնում է ամերիկյան խոլոնա լեզուն, որի թվերն են.

- |         |          |       |
|---------|----------|-------|
| 1 an    | 2 ip,    | 3 is  |
| 4 minip | 5 quioc  |       |
| 6 ipzoc | 7 quillp | 8 pac |
| 9 ocon  | 10 alec  |       |

Մրանցից min-ip = 4 անշուշտ ip 2 բառից է և նշանակում է զգույզ 2. 6-ը՝ ipzoc  $2 \times 3$  է, 7-ը՝ quillp =  $5 + 2$ . Իսկ 8—10 անկախ են:

Սուսերերենի թվականները հետևյալներն են.

- |    |                           |
|----|---------------------------|
| 1  | aš, gie, dieš, diiš, dili |
| 2  | min, maan, mena           |
| 3  | e-eš                      |
| 4  | limmu, lammu              |
| 5  | i, ia                     |
| 6  | a-aš (=5+1)               |
| 7  | imtin, umuum (=5+2)       |
| 8  | ussu                      |
| 9  | ilimmu (=5+4)             |
| 10 | u, a, huu haa             |

Տասնյակները անկախ ձևեր են երևում. ինչպես՝

- |    |                |
|----|----------------|
| 20 | meš, nliš      |
| 30 | ušu            |
| 40 | nimitin, nin   |
| 50 | ninuu, niinnuu |
| 60 | gi- eš, giš:   |

Տասնորդական դրության ավելի բնական և սովորական ձևն այն է, որ բոլոր թվերը (նաև՝ 6—10) ունեն բոլորովին անկախ անուններ և իրարից հորինված չեն:

Տասնորդական դրության կազմութիւնը անխառն ձևի տակ երևում է միավանկային լեզուներում. օրինակ՝ չինարենում ունենք 1—10 թվերի համար առանձին անուններ.

1 i <sup>1</sup> , yi <sup>1</sup>	2 örl <sup>1</sup>	3 san <sup>1</sup>	4 sə <sup>4</sup>	5 wu <sup>3</sup>
6 lēo <sup>4</sup>	7 çī <sup>1</sup>	8 pa <sup>1</sup>	9 çiu <sup>3</sup>	10 ši <sup>2</sup>

11—19 կազմվում են պարզ հարադրությամբ.

11 ši <sup>2</sup> -yi <sup>1</sup>	12 ši <sup>2</sup> -örl <sup>4</sup>	13 ši <sup>2</sup> -san <sup>1</sup> ....
-------------------------------------	--------------------------------------	---

Տասնյակները կազմվում են բազմապատկությամբ.

20 örl <sup>4</sup> -ši <sup>2</sup> ,	30 san <sup>1</sup> -ši <sup>2</sup> ,	40 sə <sup>4</sup> -ši <sup>2</sup>
41 sə <sup>4</sup> -ši <sup>2</sup> -yi <sup>1</sup>	88 pa <sup>1</sup> -ši <sup>2</sup> -pa <sup>1</sup>	
	100 pai <sup>3</sup>	
	1000 çien <sup>1</sup> .	

Գրեթե նույն պարզ կազմութիւնն է ներկայացնում աֆրիկյան զուլու լեզուն, թեև այստեղ չինարենի բառերը համեմատությամբ շատ երկար են. այսպես՝

1 nye,	2 bili,	3 t'a't'u,	4 ne,	5 hlanu,
6 isit'up'a,	7 isik'ombisa,	8 isišiyagalombili,	9 isišiyagalolunye	
10 amašumi				
20	"	amabili		
30	"	amat'ut'i		
40	"	amane		
50	"	amablanu		
60	"	asit'up'a		
70	"	asikombisa		
80	"	asiyagalombili		
90	"	asiyagalolunye		
99	amašumi	ayisišiyagalolunye	nesišiyagalolunye.	
100	ikuli			
1000	inkulungwane			

Այս դրության ծագման, կազմության և հնդեվրոպական թվականների ստուգաբանության մասին ավելի ընդարձակ պիտի տեսնենք հաջորդ հատվածում.

### 11. ՔՄԱՆՈՐԳԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարդ երկու ձեռքի տաս մատները հաշվելուց հետո հաշիվը շարունակելու համար ուրիշ միջոց չունի, եթե ոչ կամ

վերստին սկսել ձեռքերի վրա հաշվել և կամ անցնել ոտքի տասր մատներին՝ նրանցով թվերը նշանակելու համար: Այստեղ սկսվում է քսանորդական դրությունը:

Տասնորդական դրությունից հետո աշխարհում ամենատարածված հաշվական դրությունը քսանորդականն է:

Դրա ամենանախնակտն վիճակից մի օրինակ տալու համար ունենք ամերիկյան արավակ լեզուն. այս լեզուն ունի նախ առաջին չորս թվերը, այն է՝

- 1 abba
- 2 biama
- 3 kabbuhin
- 4 bibitti

Այնուհետև սկսվում է ձեռքի մատների հաշիվը.

- 5 abbatekabbe մի ձեռք
- 6 abbatiman մի մատ մյուս ձեռքից
- 7 biamattiman երկու մատ մյուս ձեռքից
- 8 kabбуhintiman 3 » » »
- 9 bibititiman 4 » » »
- 10 biamantekabbe 2 ձեռքի մատները
- 11 ասելու համար ունեն՝

biamantekabbe abbakuttihibenna tupakuttan, որ նշանակում է՝ երկու ձեռքի մատները (10) և մի մատ ոտքից ավելի (11). այս բոլորը ասելու հետ նաև ցույց են տալիս: Բայց որովհետև այս բոլորը շատ երկար է, ուստի կրճատ ասում են՝ abbakuttihibenna (մի մատ-ոտքից). այս ոճով շարունակվում է՝

- 12 biamakuttibibenna (երկու մատ ոտից)
- 13 kabuhinkuttihibenna
- 14 biđitikuttihibenna
- 15 abbamariakuttihibenna (մատները մի ամբողջ ոտքի ավելի)
- 16 biamantekabbe-abbamariakuttihibenna-abbatupakuttan (որ է՝ երկու ձեռքի մատները—մի ամբողջ ոտքի մատները—մի մատ ավելի), կրճատ ձևով՝ abbatimankuttihibenna
- 20 abbalukku կամ abbalukkubumatti (մի մարդու ձեռքերն ու ոտքերը).

40 biama lukku  
60 kabbuhin lukku

(բոլորը քսանորդական դրությամբ, նաև՝ հարյուրը):

Այժմ առենք Աֆրիկայի ազանդե կամ նիամ-նիամ կոչված լեզուն. այդ լեզվով խոսողները հաշվում էին ոչ թե մասվորապես, այլ մատների վրա և գետնին դրած փայտիկներով:

Սկսում էին մի ձեռքից և հաշվում 1 sa, 2 uwe, 3 biyata, 4 biyama, 5 biswe: Անցնում էին մյուս ձեռքին և շարունակում նրա վրա՝ կրկնելով նույն բառերը.

6 biswe betisa, որ նշանակում է՝ 5, վրան 1, կամ bisweali he sa, որ նշանակում է՝ 5 սրա վրա 1.

7 biswe beti uwe կամ biswe ali he uwe  
8 » » biyata » » » biyata  
9 » » biyoma » » » biyoma  
10 bawe, որս երկու ձեռքը վերջանում է:

Հետո սկսում էին ոտքի մատները հաշվել՝

11 bawe beti sende yo sa, որ նշանակում է՝ 10, վրան հողինը 1  
12 » » » » uwe  
13 » » » » biyata  
14 » » » » biyama  
15 hira, որով մի ոտքը վերջանում է:

Այժմ սկսում էին հաշվել մյուս ոտքի մատները.

16 hira yeli ku bəni sa, որ նշանակում է՝ 15, կողքից անցավ 1՝  
17 » » » » uwe  
18 » » » » biyata  
19 » » » » biyama  
20 boro sa, որ նշանակում է մարդ մի. որ և՛  
20 » lu he sa, որ նշանակում է՝ մի մարդ հավասար:

Շարունակութունը նորից լինում էր ձեռքի վրա:

21 boro lu he sa, zi be sa, որ նշանակում է՝ մի մարդ հավասար, ձեռքից վերցրու մեկ

22 boro lu he sa, zi be uwe  
29 » » » » » biswe beti biyama  
30 » » » » » bawe

40 aboro hō uwe, որ նշանակում է՝ մարդիկ աստ 2...

Ոտքով ու ձեռքով հաշվելու հետքը պահում է ամերիկյան կոզդարա լեզուն: Այս լեզվի թվականները 1-ից մինչև 10 բոլորն ունեն սա վերջավորությունը, որ ugua «տասը» բառի կրճատումն է (ըստ Celedon, էջ 12). ըստ այսմ eizua 1 նշանակում է բուն տասը մասից մեկ», maužua 2, նշանակում է «տասից երկու» և այլն: Այս բացատրությունը հաստատվում է նրանով, որ տասնյակները (11-ից մինչև 19) կազմվում են ոչ թե ugua 10 բառից, այլ kaza «ոտք» բառից: այսպես՝

kazaizua	11	kazataizuna	16
kazamaužua	12	kazakagua	17
kazamaigua	13	kazabikua	18
kazamakeuña	14	kazaeitakua	19
kazaxiuna	15		

Քսանորդական գրության տիպական ներկայացուցիչն է կովկասյան լեզվախումբը: Այս գրության մեջ միությունը 20 է. այսինքն՝ 1-ից մինչև 29 հնդեվրոպականներին նման հաշվելուց հետո, քսանորդականը շարունակում են այսպես. 20+10 (30), 20+10+1 (31), 20+10+2 (32), 2×20 (40), 2×20+5 (45), 2×20+10 (50), 2×20+10+9 (59) և այլն:

Օրինակ՝ լազերեն լեզուն, որ վրացական ճյուղի լեզուներից մեկն է, հաշվում է հետևյալ եղանակով.

- 1 առ օր
- 2 ժուռ յոր
- 3 շում Յոմ
- 4 օթխ օտե
- 5 խութ ետ
- 6 անշ անջ
- 7 շքուլթ Յվլետ
- 8 օրվօ օրցո
- 9 չխորո հեօրո
- 10 ուիթ յոտ
- 11 ուիթ-դօ-առ յոտ-լո-օր
- 12 ուիթ-դօ-ժուռ յոտ-լո-յոր
- 19 ուիթ-դօ-չխորո յոտ-լո հեօրո
- 20 էչ ցի
- 29 էչ-դօ-չխորո ցի-լո-հեօրո
- 30 էչ-դօ-ուիթ ցի-լո-յոտ



- 35 էչ-դօ-ուլիթ-դօ-խուլթ ցի-ըտ-շուտ-ըտ-նշուտ  
 39 էչ-դօ-ուլիթ-դօ-չխորո ցի-ըտ-շուտ-ըտ-հնորո  
 40 ժուռ-են-էչ շըր-ըն-ցի  
 49 ժուռ-են-էչ-դօ-չխորո շըր-ըն-ցի-ըտ-հնորո  
 50 ժուռ-են-էչ-դօ-ուլիթ շըր-ըն-ցի-ըտ-շուտ  
 59 ժուռ-են-էչ-դօ-ուլիթ-դօ-չխորո շըր-ըն-ցի-ըտ-շուտ-ըտ-  
 հնորո  
 99 օթխ-են-էչ-դօ-ուլիթ-դօ-չխորո:<sup>1</sup> օտն-ըն-ցի-ըտ-շուտ-ըտ-  
 հնորո:

Այս բոլորի մեջ, ինչպես տեսնում ենք, թվաբանական դոր-  
 ծողությունները կատարված են շատ կանոնավոր ձևով. օրինակ՝  
 լազերենում դո գործածվում է իբրև գումարման նշան և էն իբր  
 բազմապատկության նշան. միևնույն ժամանակ 1—10 և 20  
 բառերը, որոնք բոլոր թվականների արմատներն են, իրենց  
 ձևական ճշտությունը անաղարտորեն պահել են: Այսպես չէ սա-  
 կայն վրացերենը, որ թեև բոլորովին նույն ոճին է հետևում,  
 բայց ավելի հետո ձայնական փոփոխությունների ու ողունների  
 պատճառով՝ արմատների կերպարանքը փոփոխել է: Ահա վրա-  
 ցերենի թվականների պատկերը.

- 1 ցրտո էրթի  
 2 օրո օրի  
 3 սամո սամի  
 4 օտնո օթխի  
 5 նշուտ խուլի  
 6 ցիցսո էջվսի  
 7 շիցլո շվիդի  
 8 ճցո ճվա  
 9 լնո ճխրա  
 10 օտո աթի  
 11 օրտմցո թերթմետի  
 12 օրոմցո թորմետի  
 13 լամցո ցամետի  
 14 օրտնմցո թոթխմետի  
 15 տնշուտմցո թխուլթմետի  
 16 օրցցսմցո թնջվամետի

<sup>1</sup> Լազերեն օրինակները առնված են մեր Etude sur la langue laze աշ-  
 խատությունից, հրատ. Փարիզ, 1899, էջ 72—74:

- 17 հջոճմցո չվիրմետի
- 18 տցրամցո թվրամետի
- 19 ցնրամցո ցխրամետի
- 20 ուո օցի
- 30 ուոլաատի օցդասթի (20+10)
- 31 ուոլատցրտմցո օցդաթեթթետի
- 40 ուոմուո օրմոցի (20+20)
- 41 ուոմուոլոնցո օրմոցդաէրթի
- 50 ուոմուոլաատի օրմոցդասթի (2×20+10)
- 60 սամուո սամոցի (3×20)
- 70 սամուոլաատի սամոցդասթի (3×20+10)
- 80 ոտնմուո օթխմոցի (4×20)
- 90 ոտնմուոլաատի օթխմոցդասթի (4×20+10)
- 100 սևո սսի
- 1000 ստսևո աթասի (10×100):

Տասից մինչ 19 թվականների մեջ գումարումը կատարվում է վերջում գնելով մետի, որ նշանակում է ռավելիձ. բայց այս միջոցին 10 (աթի) բառը սղվելով դառնում է միայն ք. այսպես՝ 11=թերթմետի=\*աթի-էրթի-մետի, 12=թոթմետի,=\*աթի-օրի-մետի և այլն. 13=\*աթի-սամի-մետի>թսամ-մետի բառի մեջ ք և ս միանալով դառել են ց, որով առաջացել է ցամետի. վերջապես 17, 19 բառերի մեջ աթի>թ բառը շ և ց բաղաձայնների մոտ բուրբուղին ջնջվելով առաջացել է շվիրմետի, ցխրամետի, որոնք իրապես նշանակում են ոչ թե 17, 19, այլ միայն 7, 9 ռավելիձ:

Առնենք և մի ուրիշ կովկասյան լեզու, այն է՝ լեզգերենը.

- 1 sad
- 2 γ'ued
- 3 bud
- 4 γ'ud
- 5 uad
- 6 rgud
- 7 erid
- 8 mžid
- 9 žud
- 10 çad
- 11 çəsad

- 20 Կ'ad  
 21 Կ'annəsad ( $20+1$ )  
 30 Կ'annəçəd ( $20+10$ )  
 31 Կ'annəçəsad ( $20+10+1$ )  
 35 Կ'annəçəuad ( $20+10+5$ )  
 40 yaxçər  
 50 yaxçərnəçəd  
 60 budԿ'ad ( $3\times 20$ )  
 70 budԿ'annəçəd ( $3\times 20\times 10$ )  
 80 Կ'udԿ'ad ( $4\times 20$ )  
 90 Կ'udԿ'annəçəd ( $4\times 20+10$ )  
 100 uiš:

*Բնականաբար կան լեզուներ, որոնք գտնվում են միջին Հանապարհի վրա, այսինքն՝ ներկայացնում են տասնորդական ու քսանորդական դրուժյունների մի տեսակ խառնուրդ: Այսպես է, օրինակ, հյուսիսային կովկասյան լեզուներից կաբարդիներենը: Ահա այս լեզվի թվականները.*

- 1 zza  
 2 t'ū  
 3 ʃə  
 4 p'tlə  
 5 txʷu  
 6 xə  
 7 blə  
 8 yyi  
 9 byu  
 10 pʃə  
 11 pʃə-k'u-z  
 12 pʃə-ku-t'  
 20 t'os ( $2\times 10$ )  
 21 t'os-re-zə+re ( $2\times 10+1$ )  
 30 t'os-re-p'ʃə-re ( $2\times 10+10$ )  
 31 t'os-re-pʃə-ku-z-re ( $2\times 10+10+1$ )  
 40 t'os-ə-t' ( $2\times 10+2$ ) կամ ptləʃ ( $4\times 10$ )  
 50 t'os-ə-t'-pʃə-re ( $2\times 10\times 2+10$ ) կամ ʃənəko (կես 100)  
 60 t'os-ə-ʃ ( $2\times 10\times 3$ ) կամ xəʃ ( $6\times 10$ )  
 70 t'os-ə-ʃ-re-pʃə-re ( $2\times 10\times 3+10$ ) կամ pʃə-re-xəʃ-re  
 ( $10\times 6+10$ )

80. t'os-ə-p'ti ( $2 \times 10 \times 4$ ) կամ pšen! ( $1 \times 2$ )  
 90. t'os-ə-p'ti-re-pšə-re ( $2 \times 10 \times 4 + 10$ ) կամ pšey-re-pšəre  
 ( $10 \times 8 + 10$ ).

Ինչպես տեսնում ենք, բոլոր քսանորդական լեզուների մեջ 11-ից մինչև 19 եղած թվերը կազմվում են տասնորդական դրությամբ: Չկա մի լեզու, որտեղ 11—19 թվերն էլ առանձին առանձին արմատներով նշանակվեին, ինչպես 1-ից 10.

Միայն կովկասյան լեզուները չեն, որ դործ են ածում քսանորդական դրությունը, այլ կովկասից դուրս աշխարհիս զանազան մասերում կան շատ լեզուներ, որոնք հետևում են նույն դրության: Այսպես են Հեռավոր Արևելքի այնու լեզուն, բասկերենը, ֆիններենը, աֆրիկյան հոուսա, վեյ լեզուները, ամերիկյան մոսկիտո, նահուատլ (Մեքսիկա), տարասկ, կահիտա լեզուները:

Այսպես՝ այնու լեզվով ունենք՝

2 tu, 3 re, 4 ine, 5 ašikne, 20 hotne, որոնցից՝

40 tu hotne

80 ine hotne

60 re hotne

100 ašikne hotne և այլն.

Նահուատլ լեզվով ունենք՝

1 ce, 2 ome, 3 ye, ci, 4 naut և սրանցից՝

cem-poalli 20 (=մեկ քսան), om-poalli 40 (=երկու քսան), e-poalli 60 (=3×20), nap-poalli 80 (=4×20), իսկ հարյուրը կոչվում է ma-cuil-poalli, որ կազմված է ma cuili 5 և poalli 20 բառերից:

Ամերիկյան կահիտա լեզվով ասվում է 1 senu, 2 uoi, 3 vahi, 4 naequi, 5 mamni, որոնցից էլ՝ 20 senutacaua ( $1 \times 20$ ), 40 uoitacaua ( $2 \times 20$ ), 60 vahitacaua ( $3 \times 20$ ), 80 naequitacaua ( $4 \times 20$ ), 100 mamnitacaua ( $5 \times 20$ ), իսկ 200 լինում է uomamnitacaua ( $2 \times 5 \times 20$ ).

Բասկերեն՝

1 bat

5 bost

9 bederatzi

2 bi

6 seu

10 amar

3 iru

7 zazpi

11 amaika

4 lau

8 zortzi

12 amabi

13 amairu	19 emeretzi	50 berrogeitamar
14 amalau	20 ogei	60 irurogei
15 amabost	21 ogeitabat	70 irurogeitamar
16 amazei	22 ogeitabi	80 laurogei
17 amazazpi	30 ogeitamar	90 laurogeitamar
18 amazortzi	40 berrogei	100 eun,

**Աֆրիկյան հասուսա լեզվով՝**

2 biu, 3 oku, 4 fodu  
 10 goma  
 20 hauya  
 40 hauya biu  
 50 hauya biu da goma  
 60 hauya oku  
 70 hauya oku da goma  
 80 hauya fodu  
 90 hauya fodu da goma:

**Աֆրիկյան վեյ լեզվով tan 10, bande 20 և fera 2 բա-  
 րերից կազմվում են՝**

30 mo bande ako tan  
 40 mo fera bande  
 50 mo fera bande ako tan,

**Կովկասյան բացբերեն լեզուն այնքան է առաջ տանում  
 քսանորդական գրությունը, որ հարյուրավորներն էլ նրանով է  
 հաշվում. ինչպես՝**

pxi 5, it 10, tqa 20  
 p'xauztq  $100 = 5 \times 20$   
 icatq  $200 = 10 \times 20$   
 p'xiicatq  $300 = 15 \times 20$   
 tqauztq  $400 = 20 \times 20$   
 tqauztqa p'xauztqa  $500 = 20 \times 20 + (5 \times 20)$

**Հնդ-իրանական սահմանի պարաչի լեզվով թվերը  
 թեև պարսկերեն, բայց 20-ից մինչև 100 թվակարգությունը  
 քսանորդական է. այսպես՝ 20 yušt (որ է պրս. bist), 30 šuš  
 կամ yuštd u dōs (20 և 10)**

40 čhel (պրս. čahl)  
 50 pinja (պրս. panjāh)

- 60 šī ɣuštak (=3×20)  
 70 šī nīm ɣuštak (3 1/2×26)  
 80 cōr ɣuštak (4×20)  
 90 čōr nīm ɣuštak (4 1/2×20)  
 100 so (պրս. sād) կամ ponj ɣuštak (5×20),

Նմանապես Պամիրի յիդդահ լեզվով 10 los, 20 wisto, 30 yūwistolos (1×20+10), 40 luwist (3×20), 50 lubistolos (2×20+10), 60 xuroiwist, 100 pānžwist (5×20) կամ sad.

Աֆրիկյան իբր լեզվի (ոչ-բանասու) թվակարգութունը հետևյալ ձևով է.

- 1 ofu, 2 iboa, 3 ito, 4 ino, 5 ise, 6 isi,  
 7 isa, 8 isato, 9 itenani, 10 ili, 20 oru կամ ogu  
 30 oru na ili (20+10)  
 40 ogu na bo (20×2)  
 60 ogu ito (20×3)  
 80 ogu ino (20×4)  
 100 ogu ise (20×5)  
 110 ogu ise na ili (20×5+10)  
 120 ogu isi (20×6)  
 130 " " na ili  
 140 " isa (20×7)  
 150 " isa na ili  
 160 " isato (20×8)  
 180 " itenani (20×9)  
 200 " ili (20×10) կամ iruli (=oru ili)  
 300 " mīse կամ ogu ili na ise  
 400 nnú  
 500 " na ogu ise  
 600 " " iruli  
 700 " " ogu mise  
 800 " na-bo (400×2)  
 1000 " " na iruli (400×2+200)  
 2000 " ise (400×5)  
 3000 " na iruli  
 4000 " ili (400×10)  
 5000 " maboa na iruli  
 6000 " mise

7000 nnú ili na isa na iruli

8000 ulannu կամ. ijeli

Մրանից ավելի մեծ թիվ չգիտեն:

Խոշոր թիվ ցույց տալու համար ասում են nnu kwulu nnu (400×400) կամ otutu և կամ imelime, որոնք նշանակում են բազմաթիվ:

Բայց քսանորդական դրուժյունը ծայրագույն աստիճանին է հասցրել ամերիկյան մայա լեզուն, որ գիտի հաշվել 20 թվի մինչև վեց աստիճանը և այսպիսով հասնում է սարսափելի թվերի:

Ահա այս լեզվի թվականների կազմությունը.

1-ից մինչև 10 ունեն հետևյալ ձևով.

1 hun, 2 ka, 3 oš, 4 kan, 5 ho, 6 wak, 7 wuk, 8 wašak, 9 bolon, 10 la hun.

Ըստ երևույթին այս բոլորը անկախ արմատներ են. վերջինը նշանակում է բուն շտասն(մի):

Քսանը կոչվում է hun qal, որ է՝ «մի քսան», որից կազմում են՝

30 hun qal yete la hun ( $1 \times 20 + 10$ )

40 ka qal ( $2 \times 20$ )

50 ka qal yete la hun ( $2 \times 20 + 10 \cdot 1$ )

60 oš qal ( $3 \times 20$ )

80 kan qal ( $4 \times 20$ )

100 ho qal ( $5 \times 20$ )

120 wak qal ( $6 \times 20$ )

140 wuk qal ( $7 \times 20$ )

200 la hun qal ( $10 \times 1 \times 20$ )

300 la ho qal ( $10 + 5 \times 20$ )

380 la bolon qal ( $10 + 9 \times 20$ )

20-ի երկրորդ աստիճանն է՝ baq, որ է  $20 \times 20 = 400$

$20^3$  pik, որ է  $20 \times 20 \times 20 = 8000$

$20^4$  kalab, որ է  $20 \times 20 \times 20 \times 20 = 160,000$

$20^5$  qinčil, որ է  $20 \times 20 \times 20 \times 20 \times 20 = 3,200,000$

$2^6$  alaw, որ է  $20 \times 20 \times 20 \times 20 \times 20 \times 20 = 64,000,000$

Բայց այսպիսի խոշոր թվեր այժմ այլևս չեն գործածում: Քսանորդական դրուժյունը գտնում ենք նաև հնդեվրոպա-

կան լեզուներում, հատկապես կելտականում, որ անշուշտ նախարնիկների լեզվից մնացած մի հետք է.

Հիուլ.	20 fiche	
	40 da fichit	
	60 tri fichit	
Ալբան.	20 né-zét	
	40 dü-zét	
	60 tre-zet	
	80 katre-zet	
Ֆրանս.	70 soixante-dix (septante)	
	80 quatre-vingts octante	
	90 (no ante) quatre-vingt-dix	
	(սրանք կատալան լեզվով լինում են՝ setanta, vustanta, noranta)	
Բրլտոն՝	20 uéguend	
	40 deu	uéguend
	60 tri	"
	70 dec ha tri	"
	80 piar	"
	90 dec ha piar	"
	120 huèh	" (6×20)
	140 hseih	" (7×20)
	150 decha hseih	" (10+7×20)
	160 eih	" (8×20)
	170 dec ha eih	" (10+8×20)
	180 na'ū	" (9×20)
	190 dec ha nāu	" (10+9×20)
	220 unec	" (11×20)
	240 deuzec	" (12×20)
	250 dec ha deuzec	" (10+12×20)
	260 trizec	" (13×20)
	270 dec ha trizec	" (10+13×20)
	280 piarzec	" (14×20)
	290 dec ha piarzec	" (10+14×20)
	300 pembzec	" (15×20)

Դանիերենը թեև հնդեվրոպական լեզու է և ժառանգ դերմանականի, բայց 50-ից սկսած մինչև 90 դիմում է քսանորդական դրության. այսպես՝ tyve (20).



50 halv-tred-sinds-tyve կես—3—անգամ 20, որ և halv hundrede=կես 100

60 tre-sinds-tyve 3 անգամ 20

70 halv fjerds-sinds-tyve կես 4 անգամ 20

80 fir-sinds-tyve 4 անգամ 20

90 halv-fem-sinds-tyve կես 5 անգամ 20

Կան և սրանց կրճատ ձևերը՝

40 fyrre 70 halv-fjerds

50 halvtreds 80 firs

60 tres 90 halvlæms

(հմմտ. հյ. եռ., քառ., վաթ.)

Օսերենը նույնպես թեև հնդեվրոպական իրանյան լեզու է, բայց ունի 20-ական դրություն. օրինակ՝

20 ssäj

30 däs ämä ssäj

40 duvjssäj

50 däs ämä duvjssäj

60 artjssäj

70 däs ämä artjssäj

80 cjpparjssäj

90 däs ämä cjpparjssäj

100 fonjssäj (5×20)

200 duvä fonjssäj

1000 däs fonjssäj

Բելուջերենը, իբրև իրանական լեզու, հետևում է տասնորդական դրության. բայց միաժամանակ շատ է ընդունված նաև հաշվել 20-ով. ինչպես՝

60 šast կամ sai gīst (3×20)

79 haftād կամ sai gist o dah (3×20+10)

80 haštād կամ čīār gist (4×20)

90 ասվում է միայն čiar gist o dah, նույնիսկ՝

dwāzdah gist 240, nuh kam dwāzdah gist 231 և այլն.

Այն բոլոր թվերի մեջ, որոնց կազմությունը տեսանք տասնյակների բազմապատկությունը ամենամեծ մասամբ կատարվում է փոքր թիվը առաջ և տասնավորը ետ դնելով. այսպես՝ յոթանասուն 7×10, ութսուն 8×10 և այլն. բայց կան մի

քանի լեզուներ էլ, որոնք տասնյակը դնում են առաջ միավորը հետո. վերը տեսանք աֆրիկյան իբո լեզուն. այստեղ կհիշենք նաև Կոնգոի չիլուբա լեզուն, որ ունի՝

2 bidi, 3 satu, 4 naya, 10 kumi, (հգ. makumi), որից՝

makumi abidi 20

makumi anayi 40

asatu 30

և այլն:

Այլ և այլ պատճառները քսանորդական դրությունը վերածում են տասնորդականի. այսպես, թեև կովկասյան բուրբ լեզուների մեջ էլ սովորական է քսանորդական դրությունը, բայց մի քանիսը անցել են տասնորդականի. օրինակ՝ կապուչի լեզվով հին ժամանակ թվականը քսանորդական էր, այժմ գլխավորապես տասնորդական է. օրինակ՝ 30 qona acona (20+10), բայց և lânaig, որ lâna 3 բառից է, նմանապես տինգի, ճամալալ, թլազուլալ, կարատա, գոգոբերի, բոտլիխ և անդի լեզուները տասնորդական են: Քսանորդականից տասնորդականի անցման միջոցին, առաջին թիվը, որ ձևը փոխում է, 30 թիֆն է. այսպես՝ կովկասյան աթվախ լեզուն, թեև քսանորդական է, բայց 30 թիվը (lâmoloda) 10-որդական է, կազմված lâbda 3 բառից. այսպես և ավարերենը քսանորդական է, բայց 30 lebèr տասնորդական է և ծագում է lâb 3 բառից: Կուբաչի լեզուն տասնորդական է, բայց 20 բառը (չա) անկախ ձև է, որը ցույց է տալիս, որ նախապես 20-որդական էր: Հնդեվրոպական լեզուներից բոլորները քսանորդական է, բայց 30 tregond 10-որդական է:

Աֆրիկյան մանդինգ լեզուն ուշագրավ է նրանով, որ միաժամանակ թե՛ տասնորդական է, և թե՛ քսանորդական. քսանից հետո եկող բոլոր թվերը երկու ձև ունեն: Իհարկե, նախնական վիճակում լեզուն այդ երկու դրություններից մեկն ուներ, բայց հետո շրջապատից ազդվելով վերցրեց նաև մյուսը: Այսօր թեև երկու ձևերն էլ կան, բայց 20-ով հաշվողները ավելի շատ են: Տալիս ենք այստեղ երկու ձևով մի քանի թիվ.

քսանորդական

տասնորդական

20 muḡa

tə fila 10×2

30 muḡa ni tə 20 և 10

tə saba 10×3

40 moro fila

tə nāni 10×4

մարդ երկու

(Բայց և de be, որ նշանակում է պառակելու խտիր), ուր այր ու կին միասին պառակում են. ունի 40 մատ լայնություն).

50 debe ni ta խտիր և 10

կամ

moro fila ni ta ta lulu 10×5  
մարդ երկու և 10

60-ը մանդինդ լեզվում կոչվում էր keme, որ հին մարդկանց գործածած բառն է և ծագում է հին եգիպտական լեզվից: Բայց արդի զանազան բարբառներ այս բառով հասկանում են 60, 80 կամ 100, ըստ այսմ էլ ամբողջ հաշիվը 60-ից վեր փոխվում է և ըստ տեղի տարբեր է լինում: Սա, իհարկե, պատճառ է քսանորդական ձևը ջնջելու և տասնորդականը տարածելու:

## 12. ԽԱՌՆ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն բոլոր դրությունները, որ նկարագրեցինք մինչև այստեղ, առհասարակ հիմնված են թվերի վրա և իբրև հիմք ընդունում են միայն մի միություն, այն է՝ 2, 5, 10 կամ 20. Արևմտյան Աֆրիկայում կան մի խումբ լեզուներ, որոնց մեջ միությունը սչ թե մեկ, այլ մի քանի հատ է. այսպես՝ 5, 10 և 20: Ուրիշները իբրև միության հիմք ընդունում են սչ թե թվերը, այլ զանազան առարկաներ, ինչպես մարմնի մասերը, կրոնական ըմբռնումները համեմատ զանազան աստվածություններ և կամ տնտեսական կյանքի մեջ գործածական առարկաներ: Այսպես, օրինակ, Դահումեի էվե բարբառի մեջ ունենք՝

10 wo

15 afotɔ «երեք ոտք», ի նկատի ունենալով յուրաքանչյուր ոտքի 5 մատը.

20 Ko «մատների համբանքը վերջացնել».

40 kaɖe «թելի վրա շարված 40 խեցի», որոնք իբրև դրամ գործածական էին նրանց մոտ.

52 kaɖe wewe «մեկ թել + 10 + 2»

82 kaive «2 թել»

100 kawe ko «2 թել + մատների համբանքը վերջացնել»:

Ըստ այսմ վերջինները լինում են 40-որդական դրությամբ: Նույն տեղում անհո բարբառի մեջ՝

- 1 de            2 we  
 10 ewó  
 20 ewi  
 40 eka «մի թել խեցի»:

Սկսած 40-ից՝ մեկ թվանշանի համար գործ է ածվում ոչ թե de, այլ agiga, որ նշանակում է «մի հատ խեցի»։ սրա համեմատ կազմվում են հետևյալ ձևերը.

- 61 ka-takpo-giga «մի թել+կես թել+մի խեցի».  
 79 agiga-tole-ka-we-me «մի խեցի պակաս երկու թելից».  
 100 ka-we-takpo «2 թել ու կես»:

Կորեական լեզվով թվերի մեջ նախապես եղել է առարկայական սիստեմ, որ ապա ջնջվել է, սակայն նրա մնացորդները ապրում են դեռ բարբառներում. օրինակ՝ durəm «20 ձկան մի կապոց»:

Նախորդ հատվածում տեսանք, որ մանդինգ լեզուն debe լիսիթ բառը թվի համար իբր նշան է վերցրել: Առարկայական դրության հետքեր կամ նրա նման երևույթներ գտնում ենք շատ ուրիշ ժողովուրդների լեզուների մեջ էլ. օրինակ՝ անգլ. score, որ նշանակում է «նշան անել, իբր նշան խազ քաշել», անցնելով հաշվեփայտի վրա քաշված խազ» իմաստից՝ հասել է «քսան» նշանակության. այնպես որ այժմ էլ անգլ. three score «երեք խազ» նշանակում է «60», four score «չորս խազ» նշանակում է «80»:

Գերմ. stiege=20 հատ

Հոլլ. snees 20 (բուն նշանակում է «շարք»):

Թվականների այսպիսի կազմություններ շատ կարևոր են մեզ առհասարակ թվականների ծագման ուսումնասիրության համար:

Ռուսերեն сорок 40 նույնպես առարկայական դրությամբ է և նշանակում է 40 հատ վերցնող ինչ որ մի աման կամ չափ:

Ամերիկյան սալինան լեզվով առաջին տասը թվերն են՝

1 tol, 2 kak'cu, 3 klapai, 4 k'ica, 5 ol't'au, 6 paianel, 7 te, 8 caanel, 9 totet'oe (t'oe 10. 9 թիվը անշուշտ նշանակում է 10—1:

**Սկսած 11-ից ունենք՝**

- 11 t'oetaxtol
- 12 lapaikca
- 13 lapaikcataxtol
- 14 wococo
- 15 lapaiolf'au
- 16 k'pec,

Սրանցից 11 մեկնում եմ  $10+1$ , 12 մեկնում եմ  $3 \times 4$ , 13 մեկնում եմ  $3 \times 4+1$ , և 15= $3 \times 5$ , իսկ 14 wococo և 16 k'pec, որոնք անմեկնելի են, կարող են լինել զանազան առարկաների անուններ:

Ֆիննական չերեմիս լեզվի մեջ թվական անունները երկու ձև ունեն՝ կարճ ու երկար.

1 ik, ikte	iktut
2 kok	koktut
3 kum	kumut
4 nil	nilüt
5 vič	vizüt
6 kud	kudut
7 šim	šimut:

Կարճ ձևերը գործածվում են գոյականի հետ, իսկ երկար ձևերը՝ գործածվում են, երբ թվականը մենակ է: Սրանից հետևեցընում եմ, որ այս -ut կամ -tut վերջավորութունը՝ «հատ» նշանակող բառն է:

8-ից սկսած՝ թվականը միայն մի ձև ունի:

Աֆրիկյան չիչեվա լեզվում (բանտու ընտանիքից) թվականները հինգ և տասը թվերի խառնուրդով են կազմվում. այսպես՝ կան առանձին թվեր 1—5.

- 1 imòdzi
- 2 ziβiri
- 3 zitátu
- 4 zináyi
- 5 zisanu

Իսկ 6—9 կազմվում են հինգից.

6 zisanu ni imodzi 5 և 1

կամ                   mkati imodzi 5 միջում 1

- 7 " " ni zibiri 3 և 5  
 8 " " " zitatu 5 և 3  
 9 " " " zinayi 5 և 4

10 k'umi

20 makumi βaβiri կամ k'umi ni ku mwendo

տասներ երկու տասն և դեպի ոտքը:

Հետո շարունակվում է բազմապատկությամբ մինչև 50.  
 այսպես՝

30 makumi batatu

40 " βanayi

50 " βasanu

Մնացածը՝ մինչև 90՝ կազմվում է 50-ից.

60 makumi βasanu ni limodzi 10×5 և 1

70 " " " βaβiri 10×5 և 2

80 " " " βatatu 10×5 և 3

90 " " " βanayi 10×5 և 4.

Մելանեզյան լեզուների մեջ, ուր կա հինգերորդական դրու-  
 թյունը, բարձր թվերը հետևյալ ձևով են կազմում.

0=3+3 կամ 5+1

7=5+2 կամ 6+1

8=5+3 կամ 10-2

9=5+4 կամ 8+1 կամ 10-1

10=2×5 (օր. relima 2×5)

20 relima rua (2×5×2-ով):

Օրինաց (Hoyalty) կղզում՝ 20 կոչվում է «մի մարդ», այ-  
 սինքն 4×5 մատ ձեռքերի և ոտքերի»

30=մարդ (20)+2 շարք 5 մատ

40=2 մարդ և այլն:

Հարավ-աֆրիկյան օթյիհերերո լեզվով, որ հինգերորդական  
 և տասնորդական է միաժամանակ, հաշվում են այսպես.

1 umue

2 mbari

3 ndatu

4 ine

5 ndano

6 hamboùmue (?+1)

- 7 hambombari (?+2)  
 8 hambondatu (?+3)  
 9 imūviu  
 10 omirongo  
 11—19 գնում են սովորական ձևով՝ 10+1, 10+6 և այլն.  
 20 omirongo vivari  
 30       ,       vitatu  
 77       ,       hambobari na hambombari  
 100 omirongorongoo...:

*Մեկանեղյան մոտա լեզվի մեջ 1—5 թվականներն են՝*  
 1 tuwale, 2 rua, 3 tol, 4 vat, 5 tarelima, *իսկ 6-ից սկսած նույն թվերը կրկնում են մյուս ձևերի վրա. այսպես՝*

- 6 lavea-tea       7 lavea-rua  
 8 lavea-tol       9 lavea-vat

*Մարկիզյան կղզիների լեզվի թվականները միաժամանակ թե՛ տասնորդական են, և թե՛ քսանորդական. օրինակ՝*

- 20 tehau (*անկախ բառ է*), *որ և ասվում է ua onohuu*  
 (2×10).  
 30 tahi tehau me te onohuu (*1×20+10*), *որ և՛ tou onohu*  
 (3×10).

*Ամերիկյան սիուսլավան լեզվի թվականները միաժամանակ թե՛ երկրորդական, թե՛ հինգերորդական, և թե՛ տասնորդական են, նույնպես և հանման դրությամբ. ինչպես՝*

- 1 aḷaq               6 qátimx  
 2 xātsū             7 xātsū qtāmax  
 3 cīnax             8 čīnax qtāmax  
 4 xātsūn           9 āḷaqxaut  
 5 zxiḗpis           10 kīxəḥs.

*Այստեղ 1, 2, 3, 5 առանձին բառեր են. չորսը «երկու» թվի հոգնակին է. 7 և 8 կազմված են 2 և 3 թվերից+qtāmax, որ պիտի նշանակի «վերև» (մատը տնկած վերև), ուստի 6 թիվը էլ (qátimx), որ այնքան նման է այս qtāmax բառին, պիտի նշանակի «(մեկ)+վերև»: 9 թիվը (āḷaqxaut) հայտնի կերպով կազմված է aḷaq «մեկ» բառից. ուստի պետք է նշանակի «մեկ պակաս տասից»: Բայց 10 թիվը կոչվում է kīxəḥs, ուստի կամ*

պետք է կարծել, թե առաջ եղել է մի բան՝ xaut «տասը» ձևով, և կամ ավելի հավանական է՝ xaut նշանակում է «պակաս»: Ըստ այսմ օթաքաութ նշանակում է «մեկ պակաս» (զորությամբ իմանալով՝ տասից) այն է օթաքաութիւն:

Հետաքրքրական կազմութիւն ունեն թվերը հիպերբորյան յուկագիր լեզվում.

- 1 irklei
- 2 átaxloi
- 3 yáloi
- 4 yáloxloi
- 5 inganboi
- 6 málgiyaloí
- 7 purkioi
- 8 málgiyeloxloi
- 9 kunérkilejeoi
- 10 kunel'.

Սրանցից մի քանիսը ունի lei, loi վերջավորութիւնը, որ պիտի լինի դասանիշ կամ մասնիկ: Հատկապես 6 malgiyaloi և 8 málgiyeloxloi նման են 3 yáloi և 4 yaloxloi բառերին, որոնց համեմատութիւնից երևում է, որ málgí պիտի նշանակի «զույգ»: 9 kunirkilejeoi հիշեցնում է 10 kunel' թիվը, ուստի կարող է լինել 10—1. Իսկ 7 purkioi թվի մեջ երևում է 1 irklei, ուստի՝ «ձեռք+1»:

Ըստ Fluck, (Die Spr. der arm. Zig. 3AH, 1907) համրանքը միաժամանակ երկրորդական, չորրորդական, հինգերորդական և տասնորդական է. հմմտ. հետևյալ ձևերը.

- 1 աք
- 2 լուի
- 3 լուի աք
- 4 չթար
- 5 աթ մը (ձեռք մը)
- 6 աթ մը աք մը
- 7 աթ մը լուի
- 8 լուի չթար
- 9 լասեն աք մը նաթ (10—1)
- 10 լասը
- 11 լաս մը աք կամ լաս մը աք մը



- 12 լաս մը լուի  
 13 լաս մը լուի աք  
 14 լաս մը չթար  
 15 լաս մը աթ մը  
 16 լաս մը աթ մը աք մը  
 17 լասը աթ մը լուի  
 18 լասը լուի չթար  
 19 լասը լուի չթար աք մը  
 20 լուի լաս  
 21 լուի լաս մը աք  
 22 լուի լասը լուի և այլն  
 30 լուի աք լաս  
 40 չթար լասը  
 50 աթ մը լասը  
 60 աթ մը աք մը լասը  
 70 աթ մը լուի լասը  
 80 լուի չթար լասը  
 90 լուի չթար աք մը լասը

1000 լասը պահելիչ, որից երևում է, որ պահելիչ=100: Նոր հնդկական լեզուներում կա արք «ձեռք» բառը:

Խառն գրության են պատկանում նաև սույններենն ու ակ-կադերենը, որոնց մեջ ունենք առաջին հիմնական թվերը՝ հինգերորդական գրությամբ, մյուսները՝ տասնորդական, քսանորդական և վացունորդական:

Այսպես՝

- 1 ge, aš  
 2 min  
 3 eš  
 4 lim  
 5 ia  
 6 aš (5+1)  
 7 imin (5+2)  
 8 uš (5+3)  
 9 ilim (5+4):

Տասը բառի համար ունենք ցու բառը. մյուսները՝ nin 20, 30 ušū, 40 nimir, 50 ninnu, 60 šuš կամ muš տասնորդական կամ քսանորդական գրությամբ են հարկավ. այսպես՝ 20 nin,

հիշեցնում է min երկու, 30 ušu հիշեցնում է eš երեք, nîmin 40 = nin 20×2 min (կամ՝ նվազ հավանական՝ nin 20+min 2), šuš 60 = uš+uš 30+30, ինչպես որ muš 60 = min 2×uš 30: 60 թիվը (>հյ. սոս) համարվում է մի միութունն և այլևս 70, 80, 90 չեն գործածվում. այս թվերը, ինչպես և 20, 40, 50 կազմվում են 60-ի վրա (60 իբր միութունն առնել և նրա վրա թվեր կազմել գիտի նաև ասուրերենը, որ առած պիտի լինի սումերերենից): Ավելի բարձր թվերի համար ունենք 100 me փոխ. Բաբելոնից, 600 ner (հյ. ներ), որ թվում է նույնպես փոխառյալ և 3600 sar, որ նշանակում է՝ «բազմութուն» (հյ. շատ): Վերջին երկուսն էլ 60 թվի բազմապատիկներ են:

Հնդկական մարաթի լեզվում, որ սանսկրիտի շարունակութունն է, թվարկումը շատ խառն է. մեկից մինչև 20 առանձին դրության է հետևում, 30-ից սկսած դրությունը փոխվում է, հետո նորից այլ ձև ստանում. այնպես որ սովորողը 1-ից մինչև 100 բոլոր դրությունները պիտի ուսումնասիրի:

Խառնուրդ դրություն ներկայացնում է նաև ամերիկյան հաիդա լեզուն:

Ահա սրա թվականները.

- 1 sgoānsiñ
- 2 stiñ
- 3 ḡgunut
- 4 stansīñ
- 5 l°ēi
- 6 l°ganu
- 7 ḡguagā
- 8 stansanxa
- 9 l°aalingisgoansingo
- 10 l°aa
- 11 l°aa waigi sgoansīñ
- 20 laguat sgoansīñ
- 30 laguat sgonsīngo waigi l°aa
- 40 l°aguat stiñ
- 50 l°agua siñ waigi l°aa
- 60 laguat ḡgunu
- 100 laguat l°ēi
- 200 „ l°aa
- 300 „ „ waigi laguat l°ēi

400	laguat	l°aalē	stīñ
1000	"	"	l°eīł
2000	"	"	l°aal.

Նախ տեսնում ենք՝ 6-ը կազմված է 3-ից ներքին փոփո-  
փությամբ և ոչ որևէ գումարման կամ բազմապատկության  
ձևով, ինչ որ տարօրինակ ձև է, ուրեմն հիմքն է երեք: Տասը  
կազմված է 5-ից նույն ոճով: Ուրեմն հիմքը հինգն է, 8 կազմը-  
ված է 4-ից՝ ներքին փոփոխությամբ և չա մասնիկով՝ որ եր-  
կակիի դերն է կատարում: 9 նշանակում է 10—1, Քսան բառն է  
logual sgoanstñ, այն է՝ 20, 1, որ ոչ թե պետք է հասկանալ  
20+1 (այս դեպքում պիտի լիներ laguat waigī sgonstñ, ինչ-  
պես ցույց է տալիս 11-ը), այլ  $20 \times 1$ , այն է՝ մի հատ քսան:  
Մնացյալն է  $30 = 20 \times 1 + 10$ ,  $40 = 20 \times 2$ ,  $50 = 20 \times 2 + 10$ ,  $60 =$   
 $20 \times 3$ ,  $100 = 20 \times 5$ ,  $200 = 20 \times 10$ ,  $300 = 20 \times 10 + 20 \times 5$ ,  $400 =$   
 $20 \times 10 \times 2$ ,  $1000 = 20 \times 10 \times 5$ ,  $2000 = 20 \times 10 \times 10$ . այս բոլորը  
քսանորդական են: Մնում են 4, որ 2 բառի ներքին փոփոխու-  
թյամբ է կազմված, ուրեմն հիմքն է երկու, և 7, որ բոլորովին  
առանձին է:

Այսպիսի խառն և առարկայական մի սիստեմ էլ հիշում է  
Շմիդտը (Die Spachfam., էջ 362) Ավստրալիայի լեզուներից.  
այստեղ սկսում են հաշվել ձախ ձեռքի ձկուլթից, հաշվում են  
բոլոր 5 մատները, հետո բարձրանում են դաստակը, արմունկը,  
ուսը, ախանջը, աչքը և քթի կամ բերնի վրայով դառնում են  
աջ կողմը, և այս ձևով գնում ծայրը: Բայց Շմիդտը լավ չի բա-  
ցատրում, թե այս ձևով մինչև քանի՞ են հաշվում, ինչ ձևով և  
ինչ գրությամբ:

Խառն կազմության հետքեր է ցույց տալիս նաև ամերի-  
կյան սահապտին լեզուն, որ թեև տասնորդական է, բայց 4  
(pinipt) և 8 (paxatumad) բառերը հետևում են երկրորդական և  
հինգերորդական դրության. 4 (pinipt) կազմված է 2 (nipt) բա-  
ռից, իսկ 8 (paxatumad) կազմված է 5 (paxad)+3 (mæxad) բա-  
ռերից:

Չարմանալի խառն կազմություն ունի թվակարգությունը  
աֆրիկյան յորուբա լեզվում, ուր մերթ գտնում ենք քսանոր-  
դական դրություն, մերթ առարկայական, մերթ խառն և մերթ  
այնպիսի մի բան, որ մեզ անհասկանալի է: Օրինակ՝ ինչպես  
կարելի է կապել իրար հետ eji 2, eje 7 և ejo 8, oji 40: Ինչպես  
կարելի է բացատրել adoje 130 և adojo 150, կամ ogoje 140 և

ogojō 160, որոնք միայն մի վերջին ձայնավորով են զանա-  
զանվում, բայց իբարից 20 միություն ավելի կամ պակաս են:

Ի նկատի ունենալով այս անիմանալի գրությունը, լավա-  
զույն եմ համարում տալ ամբողջ թվակարգությունը՝ իբրև աշ-  
խատանքի նյութ մաթեմատիկոսների համար.

1 eni	90 adurun
2 eji	100 ogorun
3 etta	110 adoffa
4 erin	120 ogoffa
5 arun	130 adoje
6 effa	140 ogoje
7 eje	150 adojo
8 ejo	160 ogojo
9 essan	170 adossan
10 ewa	180 ogossan
11 okanla	190 ewadinigba
12 ejila	(200-ից 10 պակաս)
13 ettala	200 igba կամ igbiwa
14 erinla	300 odun
15 edogun	400 irinwo
16 erindilogun	500 edegbeta
17 ettadilogun	600 egbeta
18 ejidilogun	700 edegberin
19 okandilogun	800 egberin
20 ogun	900 edegberun
21 okanlelogun	1000 egberun
22 ejilelogun	1100 edegbeffa
23 ettalelogun	1200 egbeffa
24 erinlelogun	1300 edegbeje
25 edogbon	1400 egbejo
30 ogbon	1500 edegbejo
35 arundilogoji	1600 egbejo
40 oji	1700 edegbessan
50 adotta	1800 egbessan
60 ogotta	1900 edegba(wa)
70 adarin	2000 egba(wa)
80 ogorin	3000 egbedogun
	4000 egbaji

5000	edegbatta	
6000	egbatta	
7000	edegbarin	
8000	egbarin	
9000	edegbarun	
10,000	egbarun	
11,000	edegbaffa	
12,000	egbaffa	
13,000	edegbaje	
14,000	egbaje	
15,000	edegbajo	
16,000	egbajo	
17,000	edegbassan	
18,000	egbassan	
19,000	edegbawa	
20,000	{	egbawa
		կամ
		okkekan

Մրանից բարձր հաշիվը ձևափոխվում է հետևյալ ձևով. bag, որ նշանակում է «տոպրակ», որն ունի 20,000 ծրար. bag-ին հոմանիշ է okkekan, որից հետո՝

okkemejo = 2 bag

okkemerin = 4 bag

okkemetta = 3 bag

okkemarun = 5 bag, որ է 100,000

### 13. ՀԱՆՄԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Այն բոլոր գրությունները, որ նկարագրեցինք վերևում, հիմնված են թվաբանական երկու գործողութայինների վրա, գումարման և բազմապատկության: Իայց անկախ հինգերորդական, տասնորդական և քսանորդական գրություններից, լեզուների մեջ կան նաև հանմամբ հաշիվներ: Այսպես՝ այնու լեզուն, որ քսանորդական ճյուղին է պատկանում, 6—10 թվերը կազմում է հանումով: Ահա այս լեզվի թվերը.

1 šine, 2 tu, 3 re, 4 ine, 5 ašikne (վերջին երկուսի, ինչպես 1 թվի մեջ ne-ն մասնիկ է), wan (կամ pesan) տասը.

6=iwan (10—4), 7=arawan (10—3), 8=tupesan (10—2):  
9=šinepesan (10—1):

Այնու լեզվի մեջ, որ քսանորդական է, թեև 40, 60, 80, 100 բազմապատկությամբ են կազմվում, բայց 30, 50, 70, 90 հանմամբ են կազմվում (և ոչ թե գումարումով, ինչպես ընդունված է վրացերենում և ուրիշ քսանորդական լեզուներում), Այսպես՝

20 hot-ne	30 wane tu hot-ne
40 tu-hot-ne	50 " re-hot-ne
60 re hot-ne	70 " ine " "
80 ine-hot-ne	90 " ašikne
100 ašikne-hot-ne	

որոնց մեջ wane նշանակում է—10.

Մոնղոլերենում թվականները ունեն նաև իրենց նվազական ձևերը, որոնք կազմվում են առանձին մասնիկով, ճիշտ ինչպես հյ. մեկիկ, երկուքիկ, որոնցից հետո գալիս են երեք հաաիկ, չորս հատիկ... հարյուր հատիկ և այլն, որոնք թարգմանում ենք ամիսյն մի հաա և ոչ ավելի» և այլն:

Հնդկական նազա լեզվում առաջին 10 թվերը հետևյալներն են՝

1 ekha	3 etham	5 mungo	7 tiing	9 tōkū
2 ēni	4 mežū	6 tīrok	8 tīza	10 tāro

սրանցից կազմված ունենք՝

16 taro-si-tirok (որ է՝ 10 և 6). բայց ասվում է նաև me-zana mekwi mpen որ է՝ 4 և 20 (=20-4), 17 taro-si-tiing (10 և 7) կամ etham-na mekwi mpen (3 և 20-).

18 taro-si-tīza (10 և 8) կամ eni-na mekwi mpen (2 և 20-)

19 taro-si-toku (10 և 9) կամ ekha-na mekwi mpen (1 և 20-)

մնացյալ թվերն են.

20 mekwi, 21 mekwi-si ekha և այլն.

30 thâmdro (որ է՝ etham tāro (3×10)

40 zūro (որ է՝ mezu tāro (4×10)

50 tiingya

60 rokro (որ է՝ tīrok tāro (6×10)

Մրանցից հետո գալիս են՝

70 ekha tiing

80 " tīza

90 " toku

100 " taro

որոնք նշանակում են  $1 \times 7$ ,  $1 \times 8$ ,  $1 \times 9$  և  $1 \times 10$ . այսինքն՝ 1 տասնյակ 7 անգամ, 1 տասնյակ 8 անգամ և այլն:

Հնդկական մաթեմատիկայում 19-ից մինչև 89 բոլոր տասնյակները, որոնք ունեն 9 միավորը, կազմվում են հանումով և ստանում են ekuṇa բառը, որ է «մեկ պակաս» հաջորդ տասնյակից: Օրինակ tisa լինելով 30, ekuṇatīsa նշանակում է 30—1, որ է՝ 29:

Այս ոճով է նաև կովկասյան դարգվա լեզուն, ուր բոլոր 9 միավորով հանգող թվերը պետք է հաշվել պակաս մեկ՝ օրինակ՝ 69 չա qamli werḥ-cali — «մեկ պակաս 70»:

Ռուսաստանի ցիգաններն լեզվով (որ հնդկերենի ճյուղն է) հանման դրությամբ են կազմվում 17, 18, 19 թվերը՝ հանելով biš «քսան» բառից. այսպես՝

17 bitrinengiro-biš

18 biduengiro-biš

19 biyksesiro-biš:

Այսպես են նաև մյուս տասնյակներով կազմված թվերը, ինչպես 40-ով, 50-ով և այլն. նույնիսկ 95 թիվը ասվում է bipanṅengiro-šel, որ է՝ 100-ից 5 պակաս:

Հանման դրությամբ է նույնիսկ դասականը, որի մասին տես ստորև:

Նկատելի է, որ այս բոլորի մեջ հանված թիվը (փոքրագույնը) դրվում է միշտ առաջ և երկուսի միջև հանման գործողությունը ցույց տվող որևէ նշան չկա:

Ուգրո-ֆիննական լեզուների մեջ 8 և 9 կազմված են 10 բառից հանումով. ինչպես՝ զիրյ. kykja-mys 8, ok-mys 9, ֆինն. kahreksa 8, uhreksä 9 և այլն: Հայ բոշաների լեզվով՝ las-en ak mē nat՝ «9», այն է՝ տասից մեկ պակաս nat՝ նշանակում է՝ պակաս չկա և առաջանում է սնս. naasti=nāsti չէ, չկա ձևից: Թարասարան (Կովկաս) լեզվով՝ 9 vuruču որ jicu 10 բառն է ur «ոչ» բացասականով:

Աֆրիկյան հաուսա լեզվով

18 iširin bia babu (20 երկու պակաս)

išerin gara bia ( » պակաս երկու)

որ ավելի շատ գործածական է, քան իսկական goma ša tokos «տաս և ութ» ձևը:

90 daribabu goma հարյուր պակաս 10  
 900 dubbu gara dari հազար » 100

Հանման դրութեամբ են նաև զուլուսերենի մեջ՝

8 šiyangalombili և 9 šiyangalolunye, որոնք հայտնապես կազմված են bili 2 և nye 1 բառերի բարդութեամբ. այսպես նաև սրանց հոմանիշները tobaminwembili 8 և tobaminwemunye 9. բայց կրճատելով այս ձևերից bili և nye բառերը, ֆնացածը չի նշանակում 10, այլ առաջինը նշանակում է բաց թող, երկրորդը՝ ծածախ: Հետ այսմ հանման դրութեանը այստեղ ստանում է ավելի նախնական բացատրություն. զուլուսները հաշվում են այսպես. նախ ծալում են ձախ ձեռքը, հետո ճկույթից սկսելով մատները մեկ մեկ բաց են անում. վեցի համար բաց են անում աջ ձեռքի բթամատը և այսպես հաջորդաբար, որով 8 կամ 9 լինում են երկու կամ մեկ մատ ծալած կամ բաց թողած:

Ամերիկյան յուրակար լեզվով առաջին հինգ թվերն են՝

1 lecta, 2 lasie, 3 livi, 4 lapsa, 5 četi որից կազմված է՝ 6 čičeti. այնուհետև գալիս են՝

7 livi tese (3—), 8 lasie tese (2—), 9 lecta tese (1—), որոնք անշուշտ կազմված են tese «պակաս» բառով, սակայն զորութեամբ է հասկացվում 10 tibanti բառը, որ, ի հարկե, նախապես կցված էր նրանց:

Հանմամբ թվարկություն գիտե նաև սոնսկրիտը, ուր պակաս թվի համար դրվում է ūna «պակաս» բառը և հատկապես «մեկ» բառի հետ՝ ստանալու համար 9 միավորով տասնյակներ. ինչպես՝ ekonaviṅcati 1—20=19, ուր հետո éka «մեկ» բառի էլ կորչելով եղել է unaviṅcati 19: այսպես և մյուսները:

Այսպիսի հանումներ կազմելու համար éka «մեկ» բառի հետ կարելի է գնել նաև na «ոչ», որով կունենանք այսպիսի ձևեր.

ékayā nā trinçāt 1—30=29

ékasmān nā pančaçāt 1—50=49

ékān nā çatam 1—100=99

Կարելի է կատարել նաև ուրիշ թվերով հանումներ. ինչպես՝

tryūnaṣaṣṭi 3—60=57

pakṣonain çatam 5—100=95



Բայց այս ձևերը սովորական չեն:

Սանսկրիտին հետևում է հինդուստանին, որ 9 միավորով տասնյակները կազմում է հանմամբ, իբրև հանման նշան դնելով un (որ է սանս. ūna «պակաս»): Այսպես՝

20	bīs	19	unīs
30	tīs	29	untīs
44	čalīs	39	unčalīs
50	pačās	49	unčās
60	sāṭh	59	unsāṭh
70	sattar	69	unhattar
80	assī	79	unāssī.

Հատիներենում սովորական են undeviginti 1—20=19, duodeviginti 18, duodetriginta 28, duodequadraginta 38, duodeoctoginta 78, duodenonaginta 88 և այլն.

Ամերիկյան կարրիեր լեզվի մեջ, որ հինգերորդական գրություն ունի, 9 բառը նշանակում է «մեկ պակաս» (ihlo hulerch զորությամբ՝ երկու ձեռքից).

Գերմաներեն հանման գրությամբ ունենք halb «կես» բառով՝

dritthalb	=	2½
vierthalb	=	3½ և այլն
որ. vierthalb meter		3½ մետր
zwanzigstehalb	=	19½.

Լեթթերենում սովորական է մեծ ամբողջական թվերի մոտ հանման գրությունը. ինչպես՝ diwidesmit bes weena 20—1=19, trihsdesmit bes trihs 30—3=27, seschdesmit bes tschetri sirgu 60—4 ձի=56 ձի. .

Լեհ. ½ հանման գրությամբ է մեկից մինչև 20, իսկ հետո մեկ նման. ինչպես՝

19 ½	połdwudziesta
20 ½	dwadziesta i pół
4 ½	połpiąta և այլն.

Աֆրիկյան դազոմբա (բանտու) լեզվով 18 և 19 թվերը 20-ից հանվելով, ասվում են՝

18	piši áyi ka (20, 2 չկա)
19	„ yini „ (20, 1 »).

Նենեց լեզվով 9 թիվը կոչվում է xasu-yu, իսկ 10 կոչվում է yu (Терещенко, էջ 34—35). (անշուշտ այստեղ xasu ապակաս նշանակող մի բառ է. իսկ հեղինակը անգիտանալով՝ մեկնում է xasava մեր, իբր թե մեր (նենեցների) 9 ճիշտ ինն է, իսկ luc-yu (ռուսաց ю=yu) տասն է):

Նենեց լեզվին ցեղակից սերկուլ լեզուն ավելի պարզ կերպով ցույց է տալիս նույնը, 8 կոչվում է sittä-čängätäl-köt, որ բուն նշանակում է երկու պակաս 10, իսկ 9 կոչվում է ukkär-čängätäl-köt, որ է՝ 1 պակաս 10:

Ոչ միայն 8 և 9, այլ և բոլոր տասնյակները (18, 19, 28, 29, 38, 39 և այլն) կազմվում են այս լեզվում այսպիսի հանման դրությամբ:

14. ՀԱՎԵԼՄԱՆ ԵՎ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹՅԱՆ ԱՆՍՈՎՈՐ ՁԵՎԵՐ

Ինչպես կա հանման դրությունը, նույնպես կան նաև հավելման և բազմապատկության ձևեր թվարկության մեջ, բայց սրանք արդեն ոչ իբր սովորական կամ հաճախակի գործածական դրություններ, այլ իբր մաքի խաղ՝ ավելի մեծ թվերի համար: Այսպես՝ սանսկրիտ լեզվի մեջ ունենք adhika «հավելյալ» բառով կազմված՝

ekadhiani çatam  $1+100=101$

pançadhika çatam  $5+100=105$

aşadhikanavati  $8+90=98$

Կարելի է անկախ թվերը գումարել չա «և» շաղկապով. ինչպես՝

nava ça navatiç ça  $9+90=99$

dvāü ça vinçatiç ça  $2+20=22$

Բազմապատկությամբ ստացված ձևերից հիշենք իբր օրինակ՝

trişapta  $3 \times 7 = 21$

triñavá  $3 \times 9 = 27$

açitibhis fisrbhis  $80 \times 3 = 240$

pāñca pançāçátas  $5 \times 50 = 250$

náva navatáyas  $9 \times 90 = 810$ .

Բազմապատկության ավելի սովորական ձևն է հազարները հարյուրով հաշվել. օրինակ՝

aştaðaçaçati  $18 \times 100 = 1800$ ,

ինչ որ շատ գործածական է ֆրանսերենի մեջ էլ. ինչպես՝

quinze cents  $15 \times 100 = 1500$

նույնպես և գերմ. achtzehnhundert  $18 \times 100 = 1800$

Վերջապես կա նաև կեռով հաշվելու ձևը. ինչպես՝

սանս. daçardha 5 (=10-ի կեսը):

Պարսկերենում (բանաստեղծական լեզվի մեջ) սիրելի է «երկու» թվով բազմապատիկներ կազմել. ինչպես՝

14 du haft

60 du sī

80 du çil

100 du panjah

120 du s̄ast.

Բրբրոն լեզվի մեջ ընդունված ամենասովորական ձևեր են 18 trihuèh ( $3 \times 6$ ) և huntér-hand 50 ( $\frac{1}{2}$  100) և այս գաղափարների համար ուրիշ որևէ ձև գոյություն չունի:

Հայերենի մեջ նման ձևեր ընդհանրապես չկան. բացառիկ ձևեր են եօթնասնեկից եօթն  $70 \times 7$  (Մն. դ. 20. Մտթ. ԺԸ, 22) և քառեռակ ( $3 \times 4$ ) Շիր. երկու ամք պակաս յերից տասներեկաց ( $3 \times 10 - 2$ ) Կղկնտ.: Ժամանակակից հայերենում շատ սակավ դեպքերում այդպիսի ձևեր գործածվում են բանաստեղծների մոտ. օրինակ՝ չորս քսան տարի (Հ. Թումանյան):

Լեհահայոց բարբառով 18 ասելու մի ուրիշ ձևն է հանման գրությամբ՝ քսան բազաս էրգու ( $20 - 2$ ):

### 15. ՉԱՆԱՉԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄ Ը

Այժմ եթե ուզենանք մի հետադարձ հայացք ձգել այս բոլոր գրությունների վրա և նրանց ընդհանուր ծագումը փնտրել, կտեսնենք, որ մեծագույն մասը ծագում է ձեռքի մատների հաշվից: Բացառություն է կազմում երկրորդական գրությունը, որ հիմնված է ոչ թե մատնահաշվի, այլ զույգ գաղափարի վրա: Մյուսներից երկրորդական գրությունը ծագում է նկատի ունենալով մի ձեռքի չորս մատների ստորին միջոցները: Այսպես են հաշվում հատկապես Բրազիլիայի կորոադո ցեղի մարդիկ (տես էջ 136): Չորրորդական գրությունը ծագում է կամ մի ձեռքի չորս մատից (բթամատը ծալած) և կամ հաշվելով հինգ մատների ստորին միջոցները: Հինգերորդական գրությունը արդեն հայտնի կերպով ներկայացնում է ձեռքի կամ ոտքի հինգ

մատները, վեցերորդական դրությունը երկու ձեռքի երեք ստորին միջոցների հաշվով է, բացառաբար նաև վեցմատնյանների վեց մատների վրա: Տասնորդական դրությունը՝ երկու ձեռքի տասը մատների հաշիվն է, իսկ քսանորդական դրությունը՝ երկու ձեռքի և երկու ոտքի մատների հաշիվը:

Առարկայական դրությունը ծագում է իբր տիպար ընդունված այս կամ այն առարկայից, որ ներկայացնում է որոշ մի թիվ. ինչպես թել, խեցի, մորթի և այլն:

16. ՏԱՍՆՅԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Տասնորդական դրության հետևող լեզուների մեջ տասնյակները կազմվում են 2—9 միավորների և 10 բառի միացումով, ինչպես որ քսանորդական լեզուների մեջ էլ քսանյակները կազմվում են 2, 3, 4 միավորների և քսան բառի միացումով:

Թվաբանորեն  $2 \times 10$  և  $10 \times 2$  հավասարապես տալիս են քսան. ուստի տասնյակները կազմելու համար կարելի էր միավորը տասը թվից թե առաջ դնել, և թե հետո, սակայն լեզուների մեջ ընդհանրապես սովորութուն է դարձել բազմապատկության դեպքում միավորը առաջ դնել, իսկ գումարման դեպքում՝ միավորը հետո:

Այսպես՝ չինարեն ի-örl 12, ի-örl 13, իսկ örl'-ի 20, san-ի 30 (տես վերը էջ 152):

Այսպես նաև աննամերենում hai «երկու» և müöi 10 բառերից կազմում են müöi hai 12, hai müöi 20, hai müöi hai 22 և այլն:

Սրանց մեջ ոչ մի բազմապատկիչ կամ գումարման նշան չկա:

Հիպերբորյան կորյակ լեզվի մեջ տասնյակները կազմվում են միավորի և «տասը» բառի պարզ հարադրությամբ. այսպես՝ 3,10=30, 4,10=40 և այլն:

Հոսենդհոյան նամա լեզվի մեջ güi 1, gäm 2, nona 3, disi 10 բառերից կազմում են՝

lgam disi 20, nona-disi 30...

disi-lgui-la 11, disi-lgam-la 12, disi-nona-la 13, առաջինները առանց բազմապատկիչ նշանի, երկրորդները գումարման համար դնելով la շաղկապը:

Լեզգիերենում, որ քսանորդական դրությամբ մի լեզու է, բուդ 3 և դադ 20 բառերից կազմվում են բուդ դադ 60 ( $3 \times 20$ )

և զաննլըուդ 23, առաջինը առանց բազմապատկիչ նշանի, երկրորդը՝ եր շաղկապով՝ իբր գումարման նշան:

Լազերենի մեջ, որ նույնպես քսանորդական դրությամբ լեզու է, չսի 4 և eč 20 բառերից կազմվում են eč-do-չսի 24 և չսի-en-eč 40, որոնց մեջ do գումարման նշան է, en բազմապատկության նշան:

Նույնիսկ այն լեզուների մեջ, ուր գումարման դեպքում միավորը տասնավորից առաջ է գրվում, տասնյակներ կազմելու ժամանակ էլ դարձյալ միավորը «տասը» բառից առաջ է անցնում: Այս դեպքում գումարումն ու բազմապատկությունը պիտի շփոթվեն իրար հետ, բայց լեզուն այլ միջոցներով դրա առաջն առնում է. հմմտ., օրինակ՝ ուս. двенадцать 12 և двадцать 20. գերմ. fünfzig 50 և fünfzehn 15, անգլ. fifteen 15 և fifty հիսուն, հայերեն էլ վեշառասն 16 և վաքսուն 60:

Լեզուների նախնական շրջանում տասնյակների կազմության մեջ միավորները և «տասը» բառը այնպես որոշ են, որ նրանց կապը իսկույն հասկանալի է դառնում: Ժամանակի ընթացքում այդ երկուսը այնպես են մաշվում ու խառնվում իրար, որ այլևս բառի կազմությունը կորցնում է իր պատկերը: Օրինակ՝ քսան բառը ամենևին հայտնի չէ, թե երկու և տասն բառերից է կազմված: Այդ դեպքում երբեմն լեզուները ետ են դառնում, և նորից վերակազմում տասնյակները վերլուծական ոճով: Այսպես՝ թրք. ունենք qərg 40, elli 50, altmış 60, yetmiş 70, seksen 80, doqsan 90, որոնց մեջ տասնյակի գաղափարը անորոշ է: Ուստի սրանց դեմ մյուս ալթայական լեզուների մեջ կազմվել են՝ յակուտ. tū ört uon 40, biäs uon 50, altauon 60, sättä uon 70, aqəs uon 80, to qus uon 90 (հմմտ. չուվաշ. 80 sak-ārvan, 90 taxārvan):

Ալթայ. (ըստ Канаев, էջ 41) 30-ից հետո՝ tört-on 40, beš-on- 50, altə-on 60, dʷ eti-on 70, segis-on 80, togus-on 90. իսկ օյրոտերեն լեզվով՝ törtö 40, bežen 50, altan 60 dʷ eten 70, segisen 80, toguzon 90.

Ույգուրերեն (Չինաստան)՝ iškön 20, ücön 30, tʷ rtʷön 40, pʷison 50, altʷon 60, žetʷon 70, sagyson 80 tʷoqyson 90.

Նման երևույթ կա նաև հնդեվրոպական լեզուների մեջ, որի լավագույն օրինակը տալիս է շվեդերենը: Այստեղ հնդեվրոպական նախկին տասնյակները բոլորը ջնջվելով՝ վերակազմվել են՝

tre 3, fyra 4, fem 5, sex 6, sju 7, åtta 8, nio 9 և tio 10  
բառերի վրայից՝ trettio 30, firatio 40, femtio 50, sextio 60,  
sjuttio 70, åttio 80, nittio 90.

Թվերի քայքայման և առարկայական դրության մի քանի  
դեպքեր էլ կան սլավոնական պոլարերեն լեզվում, ինչպես՝ 20 կոչ-  
վում է desātnōcte, որ ծագում է desatъ. na desate տասնի  
վրա տասը՝ ձևից (փխ. двадцать).—երեսուն pūl k<sup>o</sup> py, որ է՝  
«կես schock չափը».—հարյուրն է pātstige, որ է՝ 5 stiege (գերմ.  
մի stiege=20 խուրձի).—հազարը կոչվում desāt pātstiege, որ է  
10×100:

Կլինեն դեպքեր, երբ մի որևէ թվական կորչում է մի լեզ-  
վից, բայց նրա հետքը պահված է լինում ուրիշ թվականների  
մեջ: Այսպես, օրինակ՝ աֆրիկյան բիլին լեզվով թեև 10 կոչվում  
է šikā, բայց որովհետև ունենք 20 laḡaraḡin, 30 saguaraḡin,  
40 saḡaraḡin 50, ankuaraḡin, և այլն, ուստի հետևում է, թե եղել  
է նախապես raḡin տասը՝ բառը:

Սեմական լեզուների մեջ, որոնք հետևում են տասնորդա-  
կան դրության, տասնյակները կազմվում են միավորներից ոչ  
թե տասնի բազմապատկությամբ, այլ հոգնակիով. այսպես.

ասոր.	3 tēlata	5 xamšā	7 šab‘a
	30 tēlatim	50 xamšim	70 šab‘im

եբր.	3 šēlšā	5 xəmiššā	7 šib‘ā
	30 šēlšim	50 xəmiššim	70 šib‘im

ասամար.	3 šelaš	5 ammeš	7 šava
	30 šelašem	50 ammiššem	70 šavim

ասուր.	3 šalaš	5 ḡanšu	siba
	30 šelašā	50 ḡanšā	šibā (ասուր. հոգ-

նակիի նշանն է վերջին երկար ձայնավորը):

Իսկ 11—19 կազմվում են ‘ašr բառով, բայց ժողովրդական  
լեզվի մեջ ր կրճատվելով եղել է aš. iḡdaš 11, itnaš 12, talattaš  
13 և այլն.

Կան վերջապես լեզուներ, որոնք տասնյակները կազմում  
են ոչ թե միավորներից՝ բազմապատկությամբ, այլ բոլորովին  
առանձին բառերով. այսպես, է օրինակ՝ ռուս. сорок 40, որի  
գեմ բուլղարերենը ունի четърисе(т) կամ четъридесет:

Սրանց մասին ավելի ընդարձակ տես «Հավաքական թվեր» հոդվածում:

Աֆրիկյան ջոնդ (բանտու) լեզվի մեջ տասնյակները կազմելու ժամանակ բազմապատկիչ միավորը հետո է դրվում. այսպես՝ awom 10 (հզ. mevom) բառից՝

20 mevom-be	60 mevom-saman
30 mevom-la	70 mewo-zangba
40 mevom-nye	80 mewo-miam
50 mevom-tan	90 mewo-ebu.

Նմանապես և ուոնգա (բանտու) լեզվում միավորը ետադաս է 20, 30 թվերի մեջ, իսկ 40-ից սկսած՝ սովորական կարգով. այսպես՝

2 biri, 3 raru, 4 mune, 5 ntlhanu և 10 khume բառերից ստացվում են՝

20 mkume mabiri
30 „ mararu
40 mune wa makume
50 ntlhanuwa makume.

Աֆրիկյան կինյամուեսի (բանտու) լեզվով էլ տասնյակները կազմության ժամանակ բազմապատկիչ միավորը ետադաս է. ինչպես՝ 2 wiri, 3 datu, 4 une, 5 tanu և 10 ikumi բառերից՝ 20 makumi awiri, 30 makumiadatu, 40 makumi anne, 50 makumi atanu. Ճիշտ նույնպես նաև բանտու նյանջա լեզվով:

Աֆրիկյան սարա լեզվի մեջ էլ տասնյակների կազմության ժամանակ միավոր բազմապատկիչը ետադաս է դրվում. օրինակ՝ duk 10 բառից՝

duk-keme	$(10 \times 1) = 10$
duk-sib	$(10 \times 2) = 20$
duk-muta	$(10 \times 3) = 30$
duk-so	$(10 \times 4) = 40$ և այլն.

Նույն դրությունն ունի նաև աֆրիկյան անյի (agni) լեզուն. այսպես՝ buru 10 բառից՝

20 abura—nyo
30 „ —sa

40 " —նֆ

50 " —նս

Իսկ buru ne nyօ 12

" " նֆ 14 և այլն:

Միկրոնեզյան տրուկ լեզվում տասնավորները միավորներից չնչին փոփոխությամբ են տարբերվում. այսպես՝

1 eu	իսկ
2 run	20 rue
3 unfunat	30 ilik
4 ruanu	40 feik
5 limu	40 lime
6 wonu	60 wone
7 tasu	60 fik
8 walu	80 walik
9 tau	00 tue
10 enol	

30, 40, 70 բոլորովին նոր բառեր են, թերևս առարկայական դրությամբ:

Եթովպական կաֆա լեզվի տասնավորները հետևյալներն են.

20 hiyō	30 šāšō	40 ābbā
50 áčō	60 šīšō	70 sābō
80 šinnō	90 yitānō	

սրանք չեն հիշեցնում բնավ ažerā կամ ašerō «տասը» բառը, ոչ էլ իրենց համապատասխան միավորները: Միայն 60—90 տասնավորներն են, որ իրենց առաջին վանկով նման են համապատասխան միավորին:

100 ballō և 1000 hūmo բառերն էլ արաբական փոխառությունն չեն. սրանք բոլորը նույն են եթովպական բնիկ լեզուների հետ:

Տասնյակների կազմությունից շատ ավելի հեշտ է հարյուրավորների և հազարավորների կազմությունը, որ նույնպես միավորների բազմապատկությամբ է ձևանում: Այստեղ սակայն, որովհետև հարյուրավորները և հազարավորները շատ ավելի քիչ են գործածվում կյանքում, քան տասնյակները, տեղի չեն ունեցել այնպիսի մաշուֆներ, ինչպես տասնյակների մեջ, և հե-



տևաբար ամեն բան շատ ավելի անաղարա վիճակի մեջ է փնացել:

Աֆրիկյան նզրիմա (nzima) լեզվում միավորները հետևյալ ձևով են.

1 ekū, 2 nwiō, 3 nsā, 4 unā, 5 nnu, 6 nsiā, 7 nsū, 8 moče, 9 ngwanla, 10 buru.

Տասնյակները կազմվում են տասից հետո դնելով միավորը, սկիզբն էլ ավելացնում են a, ինչպես՝ aburanwiō 20, aburansā 30, aburanla 40, aburanlu 50 և այլն. իսկ միավորները միանում են ni (+) մասնիկով. ինչպես՝ 12 buruninwiō, 13 burunināsā, 14 buruninna և այլն:

Հստ ալում էլ՝ հարյուրավորները, ինչպես՝ eya 100, eya nwiō 200, eya nsā 300, eya nā 400 և այլն, և ոչ թե 101, 102 և այլն, որոնք պիտի ստանային ni գումարման մասնիկը. ինչպես՝

eya nā ni      aburasā ni nsu=437  
100×4+      30 × 7

Զարմանալի է միայն, որ

apinli 1000, apinli nwiō 2000, apinli buru 10,000, իսկ

apinli apinli apinli aburanwiō 20,000  
"      "      "      eya      100,000  
"      "      "      apinli      միլիոն.

Կան լեզուներ, որոնք սիրում են գլխավոր թվերից առաջ ավելացնել նաև «մի» բառը. օրինակ՝ աննամերենում չեն ասում պարզապես «հարյուր», «հազար» և այլն, այլ՝ մի հարյուր, մի հազար և այլն: Նույնպես ջավայերեն փոխանակ ասելու պարզապես՝ puluh 10, lawé 25, he'kət 50, widak 60, katus 100, héwu 1000, ləksā 10,000, kəti 100,000, yutā միլիոն, անպատճառ ասում են sa «մի» բառով՝

sa-puluh մի հատ տասը, sa-lawé մի 25, sékət մի 50, sa-widak մի 60, safus մի 100, séwu մի հազար, sa-ləksā մի բյուր, sa.kəti մի 100,000, sa-yutā մի միլիոն:

Բայց այս սովորությունը շփոթություն է գցում հաշվի հասկացողության մեջ, որովհետև ջավայերենում տասնավորների մեջ միավորը տասից առաջ է դրվում, ուստի «մեկ տասը» և «տասը մեկ» խառնում են իրար հետ: Նույնը պիտի լիներ հայերենի մեջ էլ, եթե, օրինակ, փոխանակ ասելու «հարյուր մեկ»

(101), ասերնք մեկ հարյուր, որով մի հարյուր և 101 շփոթվելու էին իրար հետ:

Ջավայերենը այս շփոթութեան առաջն առնելու համար՝ բացի սովորական puluh «տասը» բառից, հնարել է մի ուրիշ տասը (wə-las):—Առանձին «տասը» պսելու համար գործ են ածում puluh մէք, իսկ 11—19 թվերը կազմելու ժամանակ wə-las մէք, որ առանձին չի գործածվում: Այսպես՝ ստացվում է sa-puluh 10 (մի տասը), sa-wəlas 11, ro-las 12 և այլն: Այսպես նաև «քսան» rong-puluh (2×10), բայց 21=salikur, 22=ro-likur... որոնց մեջ «քսան» բառի համար հնարված է առանձին բառ (likur): Այսպիսով, տասնյակները ունենում են երկու տարբեր բառ:

30-ից սկսած, միավորները գրվում են տասնավորից հետո, ուստի և նոր տասնյակներ հնարելու կարիք չի լինում և ամեն տեղ էլ գործածվում է միևնույն տասնավորը. ինչպես՝ təlung-pulh (3×10)30, təlung-puluh-siji 31 (3×10×1), wo-lung-puluh 80, (8×10) և այլն:

Աննամերենում môt նշանակում է հավասարապես 10, 100, 1000 և այլն, նայած այն բանին, թե նա գրված է հարյուրավորի՞ց, հազարավորի՞ց, թե բյուրավորից հետո և այլն: Օրինակ՝

mot	tram	môt=110
1	100	10

այստեղ môt նշանակում է «տասը», որովհետև գրված է հարյուրից հետո. բայց môt yin môt=1100

1	1000	100
---	------	-----

այստեղ môt նշանակում է «հարյուր», որովհետև գրված է հազարից հետո.

և mot	van	môt=11,000
1	բյուր	1000

այստեղ môt նշանակում է 1000, որովհետև գրված է 10,000-ից հետո:

Ճիշտ նույն ոճով tu նշանակում է հավասարապես 40, 400, 4000 և այլն, rađi նշանակում է 50, 500, 5000 և այլն:

Եվրոպական լեզուների մեջ էլ կա բարձր թվերի վրա «մեկ» միավորն ավելացնելու սովորութիւնը. օրինակ՝ ռուս. одна тысяча, գերմ. ein tausend acht hundert 1800, անգլ. a hundred մի 100,

a thousand մի հազար, a million մեկ միլիոն, բայց նաև գերմ.  
im Jahre tausend acht hundert «1800 թվին»:

Հայերենի մեջ հարյուր և հազար բառերի վրա մի չի դըր-  
վում, բայց միլիոն և միլիարդ բառերի վրա դրվում է: Այժմ  
ռուսերենի ազդեցությամբ ոմանք ասում են նաև մի հազար, մի  
հարյուր (ավելի առևտրական գործարքներում և հաշվապահու-  
թյան մեջ):

Սրանց հակառակ իսլանդերենում, երբ տասնավորի հետ կա  
1 թիվը, այս «մեկ» թիվը չի ասվում, հետևյալ ձևով.

bó ar fhíhchit կով ի վերայ 20=21 կով  
bliadhain ar fhíhchit տարի ի վերայ 20=21 տարի:

### 17. ՏԱՍՆՅԱԿՆԵՐԸ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Տասնյակների և միավորների շարադրությունը բնականաբար  
կարելի էր երկու ձևով կատարել, նախադասելով կամ միավորը և  
կամ տասնավորը: Երկու դրություններն էլ կան լեզուների մեջ.  
օրինակ՝ չինարենը, աննամերենը, թուրքական լեզուները, կով-  
կասյանները, հոտենդոտյան նամա լեզուն և շատ ուրիշ լեզուներ  
տասնյակները դնում են առաջ, միավորները հետո. ինչպես՝ չին.  
ši-yi 11, ši-ōrl 12, ši-san 13, վրաց. თერთმეტი թերթմետի  
11=սոս-ցոտո-մցո, ცამეტი ցամետի 12=սոս-սամ-մցո, լեզգ.  
ծըսադ 11, դանըսադ 21, թրք. он-бир 11, он-ики 12, հոտենդ.  
disi-lgui-la 11, disi-lgam-la 12, և այլն: Ջավայերենը  
11—29 նախ միավորն է դնում, հետո տասնավորը, իսկ  
31-ից սկսած՝ նախ տասնավորն է դնում, հետո՝ միավորը: Սե-  
մական լեզուները զանազան ձևով են. ասորերենը նախ տասնա-  
վորն է դնում, հետո միավորը (ինչպես՝ 'esrīn va xad 20 և 1),  
արաբերենը, ընդհակառակը, միշտ նախ միավորն է դնում, հետո  
տասնավորը (ինչպես՝ telatašar 13, telata we 'arba'im 43), իսկ  
եբրայերենը 11—19 միավորն է առաջ դնում, 21-ից սկսած  
կարելի է միավորը թե՛ առաջ դնել, և թե՛ հետո:

Հնդկական մարաթի լեզվի մեջ թվերի անունները այնքան  
են փոփոխված, որ նրանց կազմությունը անճանաչելի է դարձել.  
այդպես են թե՛ տասնյակները և թե՛ նրանց դումարը միավոր-  
ների հետ, ինչ որ բավական դժվարություն է հարուցանում  
ուսման միջոցին. օրինակ՝ akarā 11, bārā 12, terā 13, čavadā

14 և այլն: Սրանք ըստ ձևի և իրենց կրճատության նման են ֆրանս. treize 13, seize 16 և այլն բառերին:

Հնդեվրոպական հին լեզուներում, ինչպես և մասամբ գրաբարում, առաջ դրվում էր միավորը, հետո ասանավորը (մետասան, երկոտասան և այլն):

Օրինակ՝ հն. πεντε-και-δεκα 15, πεντε-και-εικοσι 25, πεντε-και-πεντεχοντα 55, έκ-και-δεκα 16.

լատ. undecim 11, duodecim 12, tredecim 13, quattuordecim 14, quindecim 15...

Ավելի հետո լեզուները անցնում են երկրորդ ձևին (միավորը դնում են հետո) կամ թե, եթե առաջին տասնյակի համար պահում են հին ձևը (միավորն առաջ), երկրորդ տասնյակից սկսած ընդունում են երկրորդ ձևը (միավորը հետո), Գերմաներենը, սրա հետ և դանիերենը, սկզբից մինչև 99 պահել է առաջին ձևը, օրինակ՝ fünfzehn 15, einundzwanzig 21, դան. to og tredive 32 և այլն, իսկ շվեդերենը 11—19 պահել է առաջին ձևը (tretton 13, femton 15 և այլն), իսկ 21-ից մինչև 99՝ երկրորդ ձևը: Պահլավերենը մինչև 19 միավորը առաջ է դնում, իսկ 20-ից հետո՝ միավորը հետո է դնում. այսպես՝ yazdah 11, duvāzdah 12, seždah 13, čahārdah 14, panždah 15, šaždah 16, haftdah 17, haštah 18, noždah 19, բայց vīstudō 22, panjāhu čahār 54 և այլն:

Օսերենը միավորը միշտ առաջ է դնում, ոչ միայն ասանո՞ր բառի հետ, այլև բոլոր տասնյակների հետ. և որովհետև օսերենում հաշվական գրությունը քսանորդական է, ուստի 30, 50, 70, 90 ձևերի հետ էլ ասանո՞ր բառը իր միավորով առաջ է անցնում. այսպես՝ yuāndās 11, duvādās 12, nudās 19, ya āmā ssāj 21, yuāndās āmā ssāj 31=11+20, nudās āmā ssāj 39=19+20: Իրանյան մյուս լեզուներից կովկասյան դարգվա լեզվի թվականները 2-ից մինչև 10 ունեն —al վերջավորությունը. այսպես՝ 2 kwel, 3 ḥabal, 4 aval և այլն. երբ հաշվում են մեկից մինչև 10, այս al-ը մնում է, նույնպես նաև երբ նրանց կողքին մի գոյական է դրվում. բայց երբ բարդ թվեր են կազմում և միավորները մտնում են այդ բարդերի մեջ, al-ը ջնջվում է:

Պարսկերենը 11—19 դնում է միավորը առաջ, իսկ 21-ից մինչև 99 միավորը հետո. իսկ աֆղաներենը գերմանականի նման միավորը դնում է միշտ տասնավորից առաջ, ինչպես՝ dva-las 12, dva-višť 22, cvār-las 14, nu-las 19, cvār-višť 24,

novišt 29 և այլն. Ռուսերենը նույնպես մինչև 19 միավորը առաջ է դնում, իսկ 21-ից սկսած մինչև 99 միավորը հետո. իսկ չեխերենը թեև մինչև 19 միավորը նախադաս է դնում և տասնավորի հետ միասին մի բառ է կազմում, բայց 21-ից սկսած միավորը կարող է թե՛ առաջ դնել, և թե՛ հետո և կազմում է երկու առանձին բառ:

Լատիներենում մինչև 15 փոքր թիվը առաջ է դրվում և մի բառ է կազմվում, 16-ից սկսած փոքր թիվը կարող է թե՛ առաջ դրվել, և թե՛ հետո. ինչպես՝ sexdecim կամ decemet sex 16, unus et viginti կամ viginti unus 21: Ռոմանական լեզուներում այս դրությունը քայքայվել է. իսպաներենում և պորտուգալերենում 11-ից մինչև 15 միավորը առաջ է դրվում և տասնավորի հետ միացած մի բառ է կազմում. 16-ից սկսած մինչև 99 միավորը վերջն է դրվում, իսկ ֆրանսերենում և իտալերենում մի թիվ էլ առաջ գնալով՝ 16-ի էլ միավորը առաջ է դրվում:

#### Այսպես.

Ֆր.	իտալ.	պորտ.	իսպան.	կատալան
11 onze	undici	onze	once	onze
12 douze	dodici	doze	doce	dotze
13 treize	tredici	treze	trece	tretze
14 quatorze	quattordici	quatorze	catorce	catorze
15 quinze	quindici	quinze	quince	quinze
16 seize	sedici	dezaseis	diezyséis	setze
17 dix-sept	diciassepte	dezasete	diezysiete	disset
18 dix-huit	diciotto	dezoito	diezyocho	divuit
19 dix-neuf	diciannove	decanove	diezynueve	dionu.

Ռետոտոման լեզվով՝ 11 undiš, 12 dodiš, 13 trediš, 14 quatordiš, 15 quindiš, 16 sediš, 17 dišset, 18 šoitg, 19 šenif-

Պրովանսալ՝ 11 vounge, 12 douge, 13 trege, 14 quatorge, 15 quinge, 16 sege, 17 dès-e-set, 18 dès-e-vue, 19 dès-e-nou (ge կարգացվում է ձ, ուստի՝ վուսձ, դուձ և այլն):

Լիվերեն (ֆիննական) լեզվում թվերը կարելի է հաշվել երկու ձևով. նախ մեր սովորական ձևով, այն է՝ տասնավորի վրա դնելով իր միավորը (12, 14, 15 և այլն) և երկրորդ՝ միավորին կցելով հաջորդ տասնյակի դասականը. օրինակ՝

- 21 ukš—kuolmont (իմն 1 երրորդ)  
 22 kakš— " ( " 2 " )  
 43 kuolm vidont ( " 3 հինգերորդ)  
 65 viž seismont ( " 5 յոթներորդ) և այլն.

Այս լեզվի մի բարբառը ավելի կրճատելով այս ձևը՝ ասում է լոկ թվերով՝

- 63 kuolm seis (իմն 3—7)  
 85 viž undoks (իմն 5—9)  
 96 kūž kum (իմն 6—10) և այլն:

Հետաքրքրական է թոսարերենի տասնյակները միացումը միավորների հետ, որ կատարվում է հետևյալ ձևով.

- 11 sāk šapi  
 12 " wepi  
 13 " taryāp  
 18 " okātpi  
 32 taryak wepi  
 39 " pānp̄t և այլն:

Մրանք բոլորը կազմված են pi մասնիկով, որ է հնդեզ. épi, սանս. āpi, հն. épi, ռև., հյ. և.

Տասնյակների և միավորների միացումը կարող է լինել պարզ հարադրությամբ և կամ որևէ միացուցիչ բառով. այսպես՝ աննամերեն, չինարեն, թուրքերեն և այլն, պարզ հարադրությամբ են. օրինակ՝ չին. šī-yi և թրք. on-bir «11», չին. šī-san և թրք. on-<sup>11</sup>ç 13, այսպես նաև ֆրանս. dix-huit 18 և իտալ. diciotto 18 կամ ֆրանս. trente-deux և իտալ. trente-duo 32, ռուս. двадцать три 23 և այլն:

Միացուցիչ բառերի մեջ ամենից սովորական է ռև. շաղկապը. այսպես՝ ռևենեք՝ արաբերեն ue, ասորերեն vā, պարսկերեն u, հունարենն xai, լատիներեն et, հոտենդոտերեն la ռև. օրինակ՝

- ասոր. ésrin vā xad 20 և 1.  
 արաբ. telāta we ārbaʿin 3 և 40  
 պրս. bist u penj 20 և 5  
 հն. πεντε-και-εκοσι 5 և 20  
 լատ. unus et viginti 1 և 20, կամ viginti unus  
 գերմ. ein und zwanzig 1 և 20.  
 ֆրանս. trente-et-un 30 և 1.

Շվեդերենում, լատիներենի նման, երկու ձևերն էլ միասին գործածական են. երբ փասնավորը առաջ և միավորը հետո է, «և» շաղկապը չի դրվում. իսկ եթե միավորը առաջ է, տասնավորը հետո, դրվում է «և». ինչպես՝ femtio två 52 կամ två och femtio (երկրորդ ձևը հազվագյուտ է):

Հարյուրից վերև այլևս «և» չի դրվում:

Շաղկապից դուրս կան զանազան նվազ սովորական ձևեր. օրինակ՝

Սլավոնականում և Վրաս բառով. ինչպես՝ հւլ. jedinu na desete, ռուս. одиннадцать 11, հւլ. dūvana desete, ռուս. двенадцать 12, тринадцать 13, четырнадцать 14, пятнадцать 15, шестнадцать 16, семнадцать 17, восемнадцать 18, (բայց սլովեններնր դարձյալ in «և» շաղկապով ասում է՝ dva in dvajset 22, tri in dvajset 23 և այլն):

Վրացերենը՝ ձրժո մետի «ավելի» բառով՝ տրոժմրժո «թերթմետի» 11, տոժմրժո «թորմետի» 12, լսմրժո «ցամետի» 13 և այլն:

Ավելի հետաքրքիր են ալթայական լեզուները, ուր ունենք շաղկապի տեղ «մնացորդ» բառը. այսպես է ալթայերեն artukə «մնացորդ» և նրա նման յակուաերեն՝ orduga «մնացորդ», օրինակ՝

ալթայ. kærk artukə sākis=48

յակուա. tuōrt uon orduq aqəs=48, որ է թրք. qərğ sekiz.

Ամերիկյան հուպա (hupa) լեզվով միավորը տասնավորի հետ միանում է mu wa na ձևով, որ նշանակում է «իր կողմից կրկին». ինչպես՝ min lûn 10 բառով՝ 11 min lûn mû wa na, 12 min lûn mû wa na nax և այլն:

Ֆիլիպինյան տագալոգ լեզուն էլ միացումների ժամանակ դնում է «ավելի» (labi) բառը:

Նախ այս լեզվում 10 կոչվում է sangpowò, որի բուն մասն է powò (10), իսկ sang կազմված է isa «մեկ» թվականից՝ ng հոդակապով: Հետ այսմ sangpo'wò նշանակում է «մեկ տասը»: Բարդությունների (կամ միացումների) ժամանակ դրվում է po'wò. 11—19 թվերը կազմելու համար՝ միավորի վրա դնում են labi «ավելի» բառը ng հոդակապով. այսպես՝ labing isa 11, lading dalawa 12 և այլն:

Պետք է նկատել, որ սրանց մեջ «տասը» բառը չկա և այս ձևերը նշանակում են «+1, +2» և այլն (հմտ. վրացերեն ձևերը):

Իսկ dalawang po'wò (2×10) 20  
 tallong po'wò (3×10) 30  
 apat na po'wò (4×10) 40.

Սըանց մեջտեղերը մտցնում են at «և» շաղկապը՝  
 dalawáng po'wò't isa 21  
 " " " dalawá 22 և այլն:

Աֆրիկյան դինկա լեզվով 10 կոչվում է wtyer, որ կազմված է wdy-eč 5 բառից, իբր wty 5×ro'ú 2, սըանից էլ՝  
 wtyer-ko-ro'ú 12, wtyer-ro'ú 20  
 " " dyak 13, " dyak 30 և այլն:

Մեկանեզյան տանգոա և տասիրիկի լեզուները տասից վերև գտնված տասնյակները հաշվելու ժամանակ միավորը առնում են հաջորդ տասնյակից: Օրինակ՝ 21 ասելու համար՝ տանգոա լեզվով ասում են.

mo gavulurua gavulutoluna ma tea  
 20 30 1

(այսինքն՝ 20. և 30-ից էլ 1, որ եղավ 21).

35 ասելու համար տասիրիկի լեզվով ասում են.

mo navulutolu nayuluvatina mo lima  
 30 40 5

(այսինքն՝ 30, և 40-ից էլ 5, որ է՝ 35).

Մեկանեզյան մուլու լեզվով tafulu «տասը» թվականից հետո միավորը միանում է ma շաղկապով և գոյականն էլ կրկնվում է. օրինակ՝

tee tafulu fa nali ma rofanali

1 10 տարի և 2 տարի, որ է՝ 12 տարի:

Ամերիկյան ալգոնկին լեզվում տասնյակները միավորի հետ կցված ժամանակ՝ կարելի է միավորի վրա դնել nesiw՝ հավելվածը և կամ պահել առանց այդ հավելվածի. օրինակ՝

11 ասվում է medāswinegat՝

կամ medāswinegutinesiw՝

12 ասվում է medāswinišw՝

կամ medāswinišwinesiw՝

և այսպես մինչև 99. Այս հավելվածը՝ nesi—«մաս» բառից է. բայց այս բառը իբր իմաստը կորցրել և այնպես է միացել թվա-



կանին, որ նույնիսկ դասականների մեջ—təṣṣonəmeg<sup>1</sup> «երրորդ» մասնիկը ավելացնելու ժամանակ ասվում է.

medāswinegutilosəṣonəmeg<sup>1</sup> կամ  
medaswinegutinesiwitəṣonəmeg<sup>1</sup>  
«11-րդ», իբր թե ասեինք «11 մասն-երրորդ»:

Ամերիկյան տակելմա լեզվով տասնավորը միավորի հետ միանում է gadak բառով, որ նշանակում է «ծայրին»։ օրինակ՝

ixdil misga gadak  
10 1 ծայրին =11:

Այնու լեզուն միացումը կատարում է ikašima «ավելաց-նել» բառով. ինչպես՝

šine	ikašima	hotne=21
1	+	20
tu	ikašima hotne	=22.
2	+	20

Աֆրիկյան մենդ (mende) լեզուն միացումների ժամանակ դնում է mahū «վրա» բառը. օրինակ՝ pu mahūyela— 10 վրա 1=11, pumahū fele=12, nu gboyoggo mahū yela—21, nu gboyoggomahū pu mahū yela—20 վրան 10 վրան 1=31:

Մեկանեզյան տասնիկո լեզվով տասնյակները միավորին միացնելու համար երկուսի միջև դնում են taga «միայն» և peno «գնա» բառերը. ինչպես՝

lualima	taga	peno	lua
10	միայն	գնա	2=12.

Աֆրիկյան բարի լեզվում միավորների միացումը տասնյակների հետ այսպիսի ձև ունի. նախ և առաջ 1, 2, 3, և 5 թվերը երկուական ձև ունեն. 1 tu(geleng), 2 ḍri(murek), 3 ʒala (muʒala), 5 kanat(mukanat).— մեկից մինչև 10 հաշվելու ժամանակ գործածում են առաջին ձևերը (որ փակադժից դուրս են). իսկ 11..., այսինքն տասնավորներն էլ միասին հաշվելու ժամանակ դնում են երկրորդ ձևերը (որ փակադժի-մեջ են): Միացումը կատարվում է wod բառով, որ woʒet «ավելի» բառի կրճատ ձևն է. այսպես՝

puḍk-wod-geleng 11  
" " murek 12  
" " muʒala 13  
" " unguan 14 և այլն:

Թուրքական ամենահին հաշվարկութեամբ տասնյակները և միավորները կցման ժամանակ 11—89 միացումները տեղի են ունենում առաջընթաց (anticipation) ձևով, այն է՝ տասնյակները վրայի միավորը դնելով հաջորդ տասնյակի հաշվին. այսպես՝ 11 ասելու անդ ասում են 21, այսինքն՝ «երկրորդ տասնյակից (20) միայն մեկը վերցրած», որ է 11: Այսպես նաև 22 > 32, 48 > 58 և այլն.

Այս դրությունը դեռ կենդանի ենք գտնում դեղին ույղուրների (Չինաստան) լեզվի մեջ, ինչպես՝

բ'օր յյչյրմա 11 (բուն 1—20)

տիտ ծյչյրմա 14 (բուն 4—20)

բ'օր օտ'յս 21 (բուն 1—30).

Երկուսից հետո սկսվում է սովորական ձևը.

Այս հաշիվը մոտավորապես նույնն է, ինչ որ կովկասում՝ 2 ½ > երեքի կես:

Ամերիկյան ալգոնկին լեզվի մեջ թվականները այն զարմանալի հատկութունն ունեն, որ ասանավորը՝ 11-ից մինչև 99, կարելի է դեն գցել, եթե ինքնին հասկանալի է. օրինակ՝ փոխանակ ասելու medaswinegutinesīwi 11, որ կազմված է medasw' «10» + negut' : «1», nesi-«մաս» բառերից, կարելի է ասել negutinesīwi. Փոխանակ ասելու՝ nišwābitəginēgutinesīw' 21, կարելի է ասել նույնպես negutinesīw'. Բայց այսպիսով բառս նշանակում է ոչ միայն 11, այլ և՛ 21, 31, 41, 51, մինչև 91.

Այսպես նաև մյուս թվականները մինչև 99: Հայերենով եթե ասեինք, իբր թե պիտի լիներ տասնմեկ, քսանմեկ ասելու փոխարեն և մեկ=11, 21, 31» և այլն:

Նույն բանը գտնում ենք նաև հոտենգոտյան նամա լեզվի մեջ. այստեղ հաշվարկությունը տասնորդական դրությամբ է. գումարման մեջ տասնավորը առաջ է դրվում, միավորը հետո և ավելացվում է 1a շաղկապը. օրինակ՝ disi 10 բառից ունենք՝ disi-igui-la 11, disi-igam-la 12, disi-nona'-la 13. Բայց զարմանալին այն է, որ կարելի է այս բոլորի մեջ «10» բառը ջնջել, որով 11 կդառնա «1 և», 12 կդառնա «2 և», 15 կդառնա «5 և» և այլն մինչև 19:

Այսպես է նաև Չիլիի բնիկների աուկա (auca) լեզվով. այստեղ 10 կոչվում է mari, իսկ միավորներն են quitnye 1, epu 2,

kūla 3 և այլն. կազմելու համար 11, 12, 13 և այլն թվերը՝ ասում են. 11 quinya huante, 12 epu huente, 13 kūla huente և այլն, որոնց մեջ huente նշանակում է «վրա», այսինքն՝ quinye huente mari «մեկ վրա տասի» և այլն, որոնց մեջ 10 բառը գորությամբ է հասկացվում:

Նույնը գտնում ենք նաև ամերիկյան գաղտա լեզվի մեջ: Այստեղ 10-ից վեր մինչև 19 հաշվելու ժամանակ միավորը տասնավորի հետ կապվում է երկու ձևով. կամ դնում են ake, որ նշանակում է «նորից» և կամ sanpa, որ է «ավելի». բայց առաջին դեպքում «10» բառը զանց է առնվում. օրինակ՝

wikčemna 10+noňpa 2

12 ake noňpa («նորից երկու». չկա 10) և կամ wikčemna sanpa noňpa (12).

### 18. ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹՎԵՐ

Նախնական լեզուների հատկութունն է որոշ առարկաների համար տալ առանձին բառ. օրինակ՝ Ֆիլի կղզում.

uduudu	նշանակում է	«10 նավակ»
buru	»	«տասը կոկոս»
bolas	»	«100 նավակ»
selavo	»	«հազար կոկոս»
Ֆլորիդայում՝	gobi	«10 նավակ»
	pigu	«10 կոկոս»
	kua	«10 ձու»
	pana	«10 խոզ, թռչուն կամ ձուկ»:

Մալդիվյան կղզիների լեզվով, ուր իբրև դրամ գործ է ածվում ինչ որ ծովային խեցի, ունենք՝

syāh	«100 խեցի»
xāl	«700 խեցի»
kotta	«12,000 խեցի»
bostu	«100,000 խեցի»:

Նույնիսկ բարձր կուլտուրայի հասած լեզուների մեջ կան այդպիսի ձևեր. օրինակ՝

դանիերեն deger, շվեդերեն decker և գերմ. Decher նշանակում են «10 հատ կաշի կամ մորթի», շվեդ. timmer (որի բուն իմաստն է «սենյակ») նշանակում է «40 հատ կաշի», և շվեդ. frā «200 հատ խեցգետին»:

Ավելի հետո այս մասնավորումները մոռացվում են և այն ժամանակ հիշյալ բառերը հատկացվում են ոչ թե միայն այդ- շափ թվով այս ինչ առարկային, այլ ընդհանրապես ամեն մի բանի: Այսպիսով, կազմվում են հավաքական թվեր, այսինքն՝ այնպիսի թվեր, որոնք չեն կազմված 1—10 թվականներից, այլ նրանցից բոլորովին անկախ են և ցույց են տալիս բավական մեծ միություններ, կլոր թվեր:

Այսպիսի հավաքական թվեր են, օրինակ՝

լեթթերեն	pahris	2	հաս
	kahis	30	"
	schaks	60	"
	duzis	12	"
	meteens	3	"
գերմ.	paar	2	"
	du trend	12	"
	schock	60	"
	vall	80	"
	grosz	144	"
դանիերեն՝	snes	20	"
	skok	60	"
	ol	80	"
	par	2	"
չվեդերեն՝	par	2	"
	kast	4	"
	dussin)	12	»
	toift }		
	tjog	20	"
	skokk	60	"
	val	80	"
	gross	144	"
սանսկրիտ	rada	32	"

(ծագում է rada «տամ» բառից):

Այս կարգի բառերը երբեմն այնքան առաջ են գնում, որ մինչև անգամ մոռացության են մատնում եղած իրական թվերը և նրանց տեղն են բռնում. այսպես՝ ուսու. сорок 40 բռնել է իրական թվի տեղը, օրի դեմ ունենք բուլղարերեն четирицетъ, սերբ. четрдесет, լեհ. cztyrdzieści հոմանիշները. պրս. mar 50,

ինչպես. yak mar 50, du mar 100 և այլն. Ջավայերենում կան՝ lawé 25, həkət 50, widak 60, hafus 100.

Հայերենի մեջ նման ձևերով ունենք՝

ձեռք ԵՏ հատ» (օրինակ՝ ընկույզ)

բարդ Ե30 հատ» (ձու, կամ 30 խուրճ շոտ)

Առարկայական գրութայան հետևող լեզուների մեջ թվերը սրանց վրա են կազմված:

### 19. ՄԵԾԱՄԵԾ ԹՎԵՐ

Սովորական կյանքի մեջ գործածված թվերը պտտվում են հարյուրի և հազարի շուրջը. Մի ժամանակ աֆրիկյան յաո լեզվում (բանտու) մեծագույն թիվն էր  $10 \times 10$ , որ է հարյուր. սրանից ավելի բարձր թիվ չգիտեին. կար mwanda, որ եվրոպացիք թարգմանում են հարյուր, բայց սխալ է. դա նշանակում է «մեծ խոշոր թիվ»: Հասարակութայան զարգացման ավելի բարձր աստիճանում մարդիկ կարիք են զգում հնարելու ավելի խոշոր թվեր:

Օրինակ՝ չինարենն ունի՝ wan<sup>4</sup> «բյուր», չao<sup>4</sup> «միլիոն». ան-նամերեն՝ muon «բյուր», veo 100,000, frieu «միլիոն»:

Ջավայերենն ունի՝

héwu հազար, ləksá բյուր

kəti 100,000, yutā միլիոն.

Պարսկերենն ունի՝

bivar 10,000

lak 100,000

kurur 500,000

Ռուս. ТЫ́СЯ նշանակում է «10,000» ըստ հին լեզվի, իսկ այժմ նշանակում է ժողովրդական լեզվով՝ անորոշ մեծ թիվ. ճիշտ այսպես է նաև հայերենը, ուր բյուր (<պրս. bivar) նշանակում է նախ 10,000, ապա շատ, բազմաթիվ:

Սումերերենը իր մեծ թվերը կազմում է 60-ի բազմապատիկներով.

60 gi-eš.giš

600 geš-u (60 geš×10 u),

1200 geš-u mena (600×mena 2).

1800 geš-u eš (600×3e-eš)

2400 geš-u limmu (600×4 limmu)

3000 geš-u i-a (600×5 ia)  
 3600 šar (60<sup>2</sup>)  
 36,000 šar-u (3600×10)  
 216,000 šar-geš (36,000×60)  
 2,160,000 šar-geš-u (60<sup>2</sup>×60×10)  
 12,960,000 šar-gal (60<sup>4</sup>):

*Եզրկատարյինների խոշոր թվերն են՝*

hə 1000, db' բյուր  
 hfn 100-000, hē միլիոն:

*Տիրեթերենում մեծամեծ թվերն են՝*

ktī ֆո 10,000  
 hbum, hbum ֆո 100,000  
 sa ya 1 միլիոն  
 če va 10 միլիոն

*Հինդուստանի լեզուներն ունի՝*

lākh 100,000  
 karor 10 միլիոն (մինչդեռ՝ պրս. kūrur «կես միլիոն»)  
 arb 1000 »  
 kharb 100,000 միլիոն:

*Հին սլավոներենն ունի նաև*

nesūvēda «բյուր, 10,000», որ նշանակում է բուն «անի-մանալիություն»:

*Դրավիդյան թամիլ լեզվով 10 միլ. koti, որ քննիչը համարում է սանսկրիտից փոխառյալ:*

*Աֆրիկյան հաուսա նեգրական լեզվով՝ ունենք*  
 10,000 din gim:

*Ամերիկյան մայա լեզվով pik 800, kalab 160,000, quin-čil 3,200,100, alaw 64 միլիոն:*

*Աֆրիկյան ջոնա (բանտու) լեզուներ գիտե*

100 zana, հազար maranagumi, 10,000 mazanazana (100×100),  
 26,000 mazana mazava maviri:

*Աֆրիկյան կարանգա լեզվով (բանտու).*

100 zana  
 1000 ma-zana gumi (100×10)  
 10,000 zana-zana (100×100)

100,000 ma-zanazana-gumi  
 միլիոն zana-za-ma-zanazana  
 10 » ma „ gumia „ „  
 100 » zanazanara „ „

Բիրմաներեն լեզվով՝  
 tat<sup>c</sup> ien 100,000  
 tat<sup>c</sup> an մի միլիոն  
 takuđe 10 միլիոն.

Պերուի ունևա սիմիկամ կեշուա լեզուն ունի «միլիոն» թիվը, որ կոչվում է hunu.

Մոնղոլերենում մեծ թվերն են՝

1 միլիոն, 10 միլիոն, 100 միլիոն, 10,000 միլիոն, բյուր միլիոն, 100,000 միլիոն, մի բիլիոն, 10 բիլիոն, 100 բիլիոն, 1000 բիլիոն, բյուր բիլիոն, 100,000 բիլիոն և այլն:

Ֆիլիպպինյան աագալոգ լեզվով մեծ թվերն են՝

laksâ 10,000, yútâ 100,000  
 angawangaw մի միլիոն:

Սիամերենի մեծագույն թվերն են՝ p<sup>c</sup> an հազար. mən բյուր (որ է թրք. bin, min, հազար), san 100,000, lan միլիոն, kot տասը միլիոն, ավելի բարձրը առել են պալի լեզվից, որից կամինչև 168 (հարյուր վաթսուև ութ) զերոյով մի թիվ, որ կոչվում է asongkay:

Այս 168 զերոյով թիվը, որ գրվում է կարճ ձևով 10<sup>168</sup>, պարունակում է 56 հատ եռյակ զերո և կարդացվում է մեկ 56 իլիոն:

Նոր եվրոպական լեզուները ստեղծել են միլիոնից հետո billion կամ milliard «հազար միլիոն», trillion հազար միլիարդ կամ միլիոն անգամ միլիոն, quadrillion հազար տրիլիոն և այլն: Սրանց համար էլ կազմվել էին հայերեն՝

երկիլիոն—հազար միլիոն

եռիլիոն—հազար երկիլիոն

քառալիոն—հազար եռիլիոն

հինգիլիոն—հազար քառալիոն

վեցիլիոն—հազար հինգիլիոն և այլն, որոնք, սակայն, գործածության մեջ չմտան և մոռացվեցին:

Հների մեջ ամենամեծ թվարանական հաշիվը եղել է շախմատի հաշիվը, որ հավասար է 9.223.372.036.854.775.808=9 կվիլիոնիլիոն, 223 կվադրիլիոն, 372 տրիլիոն, 36 միլիարդ, 854 միլիոն, 775, հազար, 808:

Արդի աստղաբաշխները իրենց միությունը համարում են լույսի մի տարվա ընթացած տարածությունը,<sup>1</sup> որ

հաշվելով մի վայրկյանում 300,000 անում է՝  
 մի ըրպեում  $300,000 \times 60 = 18,000,000$  կմ  
 մի ժամում  $18,000,000 \times 60 = 1,080,000,000$  կմ  
 մի օրում  $1,080,000,000 \times 24 = 25,920,000,000$  կմ  
 մի տարում  $25,920,000,000 \times 365 = 9,460, 800,000,000$ :

Այս վերջին թիվը (որ է շուրջ 9,5 տրիլիոն) կոչվում է «լույսի տարի», որ մի բառով կոչում են լուսամյակ:

Այսպիսի խոշոր թվեր ոչ մի ժողովրդի առօրյա կյանքի մեջ գործածական չեն. բայց զարմանալի է, որ զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող մի շարք ժողովուրդներ ունեն շատ մեծ թվեր: Օրինակ՝ Մարտենը, որ գրել է օվկիանյան տոնգա լեզվի քերականությունը, ասում է, թե ինքը՝ տոնգայի ժողովուրդը 3000-ից ավելի հաշվելու բան չունեն, բայց ունեն խոշոր թվեր. ինչպես՝

mano 10,000, gilū 100,000  
 nanu մի միլիոն.

Լարիարդիեր գիտնականը քննել է այս լեզուն և գտել՝

10 միլիոն laoalai  
 100 « laounoua.  
 1000 « liagi  
 10,000 « tolo tafai

միլիոն անգամ միլիոն linga

ավելի բարձրերը nava և ապա kaimau մինչև 1,000,000,-000,000,000:

Բայց Մարտենը գտնում է, որ միլիոնից վեր թվերը կեղծ են. laoalai նշանակում է «լա. praeputium», nava «glans penis». մյուսները՝ ավելի խայտառակ բաներ, որով բնիկները ձեռք են առել եվրոպացի քննիչին:

<sup>1</sup> Հոփհ. Ստեփանյան, Երկրագնդի մասին, Երևան, 1945, էջ 81:



## 20. ԹՎԵՐԻ ՓՈՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ներածութունից գիտենք արդեն, թե լեզվի ամենից ավելի զորեղ, օտար ազդեցութուններին ամենից ավելի դիմադրող տարրերից մեկը ներկայացնում են թվականները: Շատ բառեր կարող են տեղի տալ օտար լեզուների և կորչել, բայց թվականները կօտարանան միմիայն այն ժամանակ, երբ լեզուն արդեն ամբողջովին օտարանում է: Օրինակ՝ անգլերենը, որի բնիկ բառերը օտար, մանավանդ ֆրանսիական փոխառութունների առատության մեջ ընկղմված են, թվականները մնում են բնիկ անգլո-սաքսոնական: Թուրքերենը, որի բառարանի 2—3-ը արաբական և պարսկական տարրերով խճողված է, թվականները մնում են բնիկ ավթայական: Նույնպես նաև արևմտահայ այն հեռավոր բարբառները, որոնք ենթարկվել են տիրող լեզուներին, 1—10 թվականները միշտ և ամեն տեղ հայերեն են պահել: Հարավային Աֆրիկայի բերգգամա ժողովուրդը այժմ ընդունել է նամաների լեզուն, բայց ծերունիները դեռ թվերը պահում են իրենց բնիկ ձևով:

Թվականները լեզվից լեզու փոխ են առնում այն դեպքում.

1) Երբ լեզուն գտնվում է նախնական դրության մեջ և հաշվական զարգացման տեսակետից շատ հետամնաց է: Այս կողմից բնորոշ է Մելանեզյան Murray Island-ի լեզուն (տես էջ 138), որ միայն երկու թիվ ունի netat 1 և neis 2, ուստի ավելի բարձր թվերը Ավետարանի թարգմանության մեջ, վերցրել են անգլերենից thri 3, toa 4, faif 5, sifes 6, seten 7, eit 8, nain 9, ten 10, elefen 11 և այլն:

Դրավիդյան գոնդի լեզուն 8—10 թվերը փոխ է առել հընդ-կականից, բայց բնիկ ձևերն էլ դեռ գործածական են. այսպես՝ 8 āh, armur, 9 nau, numāk, 10 das, pad:

Դրավիդյան բրահուի լեզվում՝ 4000 տարի իրանցիների հետ շփման մեջ լինելով՝ միայն 1—3 թվերը բնիկ է պահել (asit 1, irat 2, musit 3), իսկ մնացյալը (4-ից սկսած) բոլորը փոխառյալ է պարսկերենից: Այսպես նաև Դրավիդյան օրանոն լեզուն: Նոր Գվինեայի մերավրե լեզուն, որ գիտե միայն 1—5 թվերը հաշվել, 6-ից 10 փոխ է առել մալայերենից:

Բերբերական սյուահ (syuah) բարբառը իր թվականները փոխ է առել արաբերենից, բայց այնուամենայնիվ բնիկ են ejin 1 և sin 2:

2) Երբ լեզուն, թեև ունի իր սեփական հաշվական դրու-  
թյունը, բայց մինչև մի որոշ սահման, և պակասում են իրեն-  
խոշոր թվերը: Այս թվերը փոխ է առնում իրենից ավելի զար-  
գացած լեզուներից: Այսօր բոլոր ազգերն էլ գործածում են հու-  
նարեն միլիոնը, բիլիոնը և միլիարդը: Հյուսիսային Կովկասի  
բոլոր լեզուներն էլ, ինչպես և հայերենը, հազար թիվը փոխ են  
առել պարսկերենից: Լազերենը փոխ է առել «հազար» թվի հա-  
մար մի կողմից հն. շիլյա և մյուս կողմից թրք. բիհի, թեև ունի  
իր բնիկ ձևը՝ վիթ-օշ «հազար, բուն՝ տասը հարյուր»: Կարաբաղի  
լեզուն հազարը (min) փոխ է առել թուրքերենից: Բասկերենը  
ունի իր բոլոր թվերը քսանորդական դրությամբ. միայն mil-  
la «հազար» փոխ է առել լատիներենից: Աֆրիկյան գանգ լեզուն  
ունի իր սեփական թվերը, բայց «հարյուր» չունենալով փոխ է  
առել արար. miya:

3) Երբեմն լեզուները ունեն իրենց թվերը կանոնավոր կեր-  
պով, բայց այնպես բարդ ու երկար ձևերով, որ գերադասում  
են փոխ առնել հարևան մի լեզվի ավելի կարճ ու գործնական  
համապատասխան ձևը: Այսպես՝ ամերիկյան կարրիբեր լեզուն  
թեև հարյուրի համար ունի բնիկ hwonizyat hwonizyai (10×10)  
բառը, բայց այժմ գործ են ածվում անգլերենի hounded «հարյուր»,  
ինչպես և t'auzaz «հազար»: Երևի նույնպիսի պատճառներից է  
դրդված եղել ամերիկյան արավակ լեզուն (Գվինեա), որ 100 և  
1000 փոխ է առել եվրոպականից: Օսերեն լեզվով «հազարը» կոչ-  
վում է բնիկ ձևով dās fonjissai և dās sadi, որոնց բուն նշա-  
նակութունն է 10×5×20 և 10×100. ձևերի անհարմարության  
պատճառով փոխ են առել թուրքերենից min բառը, ինչպես և՛  
min mini (1000×1000) բառի փոխարեն՝ milion բառը:

Ամերիկյան խիվարո լեզուն 6—10 թվերի համար ուներ՝

- 6 intimatu «մյուս ձեռքի բութը»
- 7 tannituna «մյուս ձեռքի ցուցամատը»
- 8 tannituna cobiasu «ցուցամատի կողքի մատը»
- 9 bitin òteglā cobiasu
- 10 catōgladu «երկու ձեռքը վերջացավ»:

Բայց իրենք էլ տեսան այդ երկարաբան ձևերի անդամա-  
զննական անպատեհութունը և կեչուա լեզվից փոխ առան՝ 6 sok-  
ta, 7 gančis, 8 pusac, 9 iskon, 10 čunka երկվանկ հարմարա-  
վոր ձևերը:

Ֆիլիպպինյան տազալոգ լեզուն ունի իր կանոնավոր դեկարճ թվականները. բայց (ըստ Blake, էջ 24) սպաներեն ձևերն են գործածում: Այս և նման դեպքերում անշուշտ եվրոպացի գաղութարարների քաղաքականության արդյունքն ունենք:

Աֆրիկյան ցվա (բանտու) լեզվի թվականները տասից հետո շատ բարդ լինելու պատճառով՝ խոսողները պահել են 1-ից մինչև 10, փսի դժվարները փոխ են առել պորտուգալերենից. ինչպես, օրինակ՝ quarenta e cinco 45:

Բանտու նյանջա լեզվի մեջ 100-ը բնիկ ձևով ասվում է makumi khumi (10×10), բայց որովհետև երկար է, փոխ են առել հարևան ջիկուսդա լեզվից zana կարճ հոմանիշը:

Մելանեզյան յարեմ լեզուն իր թվերը կազմում էր հետևյալ ձևով.

1 teɟ, 2 luagéc, 3 tɛléac, 4 acîê, 5 lemeɔteɔ (որ նշանակում է «մեր ձեռքը» + 1, ուրեմն՝ «մեր մի ձեռքը»).

6 lemeɔteɔ ɔanò (որ նշանակում է «մեր ձեռքից պտուղ մեկ»)

7 lemeɔteɔ tanò luagéc (5+2)

8 « « tɛîêac (5+3)

9 « « acîê (5+4)

10 lemeɔlu (մեր ձեռք 2)

11 lemeɔlu nanò ta

15 « ɔalemeɔteɔ (10+5), որ նշանակում է «մեր ձեռք 2, մեր ձեռք մի»:

20 ɔacsamuc (=ամբողջ մարդ):

Այս բոլորը այժմ վերացվել է և նրա տեղ մտցված են անգլերեն թվերը:

Մելանեզյան պամա լեզվում փոխ են առել անգլ. 10 բառը և իրենց ոճով բարդելով կազմել են tendentai 11 tendenelu 12, tendenehat 14, tendemolim 15 և այլն, փոխ են առել նաև twente, vivti, seventy, handered, tousand:

Աֆրիկյան գանգ լեզուն արաբերենից փոխ է առել elafa 100 (<արաբ. alf հազար), որից նաև աֆրիկյան էվե լեզվով՝ alafa «հարյուր»:

Մելանեզյան իաի լեզուն դժվար և երկար բառեր ունի թվականների համար. օրինակ՝ lipenyita 10 «նշ. մեր երկու ձեռքերը»:

libenyita ke nua thabung 50

« « « « ke nua wak 90

Այս բոլորի փոխարեն այժմ գործածվում են անգլերեն թվերը, որոնք հնչվում են հետևյալ ձևով. wan, tu, theri, foa, faiv, siks մինչև haded 100, thauzan 1000.

Այսպես նաև մեկանեղյան լիֆու լեզվով.  
handed 100, Ծausane 1000.

Մեկանեղյան կուլիվիու լեզվով ասում էին sagavur pisan sagavur (10×10)=100, որ դեն գցելով այժմ, վերջրել են անգլ. andred բառը:

Մեկանեղյան սինեսիպ լեզվով՝ ilagabul ilagabul 100, ilagabul ilagabul, ivalagabul iru նշանակում է 10×10×10×2, որ է 2000, այժմ փոխ են առել tausani բառը.

Հիպերբորյան յուկագիր լեզուն 100 թվի համար ուներ künel'—künel', որ բուն նշանակում է 10×10. բայց այժմ այդ ձևը այլևս չի գործածվում և ուսերենից փոխառությամբ կազմել են ičtox 100 և tisyաճа 1000: Այսպես նաև հարևան կորյակ լեզուն, որ չունի 100 և 1000, և այդ թվերը փոխ է առել ուսերենից:

Աֆրիկյան մենդ (mende) լեզվով 100 կոչվում էր nu lolu gboyonggo, որ նշանակում է Ե5×20, և բուն ծագումն է Ե5 մարդը վերջացավ. այժմ այս ձևը վերացել է և նրա տեղ վերցրել են անգլերենից hondo:

Պոլինեզյան հավաի լեզուն անգլերենից փոխ է առել haneri 100, tausani հազար և miliona միլիոն:

Աֆրիկյան կպելե (kpelle) լեզուն 100 բառի համար ուներ pu pu, որ է 10×10. այժմ փոխ է առել անգլերենից hondo (որ է hundred).

Նուբիերեն լեզուն ունի սեփական թվերը. բայց այնպես բարդ են, որ 30-ից մինչև 100 բնիկ նուբիական ձևերի հետ գործածում են նաև արաբերեն ձևերը. բնիկ ձևերն են՝

30 bure bure todun (10×0×3)

33 bure bure toduno twēni toduno

10 10 3 + 3

41 bure bure kemihēd twēni beo  
 10 10 4 + 1  
 1000 bure bure buren ( $10 \times 10 \times 10$ ), որի փոխարեն ասում  
 են արար. mien  
 1000 mie mie mien:

Այսպիսի հանգամանքների մեջ անշուշտ տեղականը ի վերջո տեղի պիտի տա և արաբերենը պետք է հաղթանակի.

Բերբերական կաբիլ լեզուն իր բոլոր թվերը փոխ է առել արաբերենից, բայց պահել է դարձյալ երկու թիվ (šun մեկ, իգ. iituth, և sin 2, իգ. senath). սրանք գտնում ենք պահված տուարեգ լեզվում, որի ամբողջ թվակարգությունը բնիկ է:

Նմանապես Մարոկկոյի բերբերական լեզվով բնիկ թվերից մնում են միայն idj մեկ, sin երկու, šard երեք, իսկ մնացածը ամբողջ արաբերեն է, նույնիսկ 21, 22, 23, 41, 42, 43 և այլն թվերի մեջ 1, 2, 3 դառնում են արաբերեն.

Դասականներն էլ կարող են փոխ առնվել. մանավանդ «առաջին» թիվը. արաբերեն avval «առաջին» բառը փոխ է առնրված պարսկերենում և թուրքերենում. գնչուների լեզուն ուսսերենից է վերցրել pervo «առաջին» և drugo 2-րդ <дpyгoй>. շատ տեղ տարածված է լտ. bis «երկրորդ» բառը:

Ամերիկյան տականա լեզուն ունի իր սեփական թվերը 1—10, որոնք երկարաբան ձևեր էլ չեն. բայց 6 sucuta ձևից հետո 7, 8, 9 փոխ է առել իսպաներենից siete, ocho, nueve. իսկ 10 մնում է tunca. պետք է ենթադրել, թե 7—9 թվերը 6-ից կազմված բարդ ձևեր էին, ինչպես, օրինակ՝ ամերիկյան մոսկիտո լեզվում:

Բրազիլիայի մերրիմ լեզուն ունի անկախ թվեր. այսպես pūfire, 2 iaklūde, 3 inklēte, 6 tsunare, 7 rorōtō և այլն, բայց 4 kuadro և 5 singo առնված են իսպաներենից. պատճառը ինձ թվում է այն, որ 4 և 5 նմանահնչյուն ձևեր էին, ինչպես 2 iaklūde և 3 ināktē.

4. Թվականների փոխառություն կատարվում է նաև այն դեպքում, երբ հաշվական սխտեմն է փոխվում. այսպես՝ բելուջերենը ունի քսանորդական դրություն, ինչպես 20 gīst, որից՝ sai-gīst ( $3 \times 20$ ) 60, čyār-gīst ( $4 \times 20$ ) 80, sai-gīst-ō-dah 70, čyār-gīst-ō-dah 90, բայց երբ փոխել է այս սխտեմը և ընդունել տաս-

նորդական սիստեմը՝ պարսից միջոցով, փոխ է առել նաև բոլոր թվականները պարսկերենից, փոխելով նույնիսկ gīst բնիկ բառը և դարձնելով bist.

Աֆրիկյան հաուսա լեզուն ունի կատարյալ թվակարգություն և գիտի մինչև անգամ dubu հազար և dingin 10,000, բայց որովհետև գրությունը քսանորդական է, ապա՝ հրաժարվելով այդ գրությունից՝ փոխ է առել արաբերենից տասնորդական սիստեմը, ուստի առել է նաև նրանցից արաբերենի տասնյակները, որոնք ավելի սովորական են այժմ, քան բնիկ ձևերը՝ ալապեո՝

Արաբերեն	Հաուսա
10 —	goma
20 iširin	hauya
30 telatin	
40 arbaïn	hauya biu
50 hamsin	hauya biu da goma
60 settin	” oku
70 sebaïn	” ” dagoma
80 tamanin	” fodu
90 tissaïn	” ” da goma

Հնդկական մուսուլման լեզվում թվերը քսանորդականի են, ուստի հետզհետե փոխ են առնում հինդի լեզվի թվերը, որոնք տասնորդական են.

5. Երբեմն փոխառությունը պարզապես ուժեղի և կամ քաղաքակիրթ լեզվի ազդեցության արդյունք է, բայց այս դեպքում էլ փոխառությունը կաժարվում է միայն մեծ թվերի սահմանում. օրինակ՝ հիմնդուստանի լեզուն, իբր սանսկրիտի զավակ, ունի իր բոլոր թվերը, բայց պարսկերենից փոխ է առել haÿār «հազար» բառը: Սերբերենն ու բուլղարերենը, իբր սլավոնական լեզու, 1000-ի համար ունեն իրենց բնիկ բառը, բայց հունարենից փոխ են առել хиля’да. Սլովեներենն էլ ունի tisoč «հազար» բառը, բայց սրա հետ գերմանականից փոխառությամբ գործ է ածում նաև tavžent: Աֆրիկյան սվահիլի լեզուն ունի կատարյալ տասնորդական գրությամբ թվեր. բայց միաժամանակ գործ է ածում նաև արաբերեն թվերը՝ սկսած մեկից մինչև վերջ: Այնուամենայնիվ 1—5, 8, 10 թվերի արաբերեն Աճառյան — 14

ձեռք է գործածվում. 6 և 7 միշտ արաբերեն են. 9 հավասարապես թե՛ սվահիլի ձևով է և թե՛ արաբերեն, իսկ 100, 1000, 10,000 միշտ արաբերեն են: Ճապոնացիք բոլոր թվերը սկսած մեկից, փոխ են առել չինարենից. բայց 1—10 թվերը դեռ զուտ ճապոնական ձևով գործ են ածում որոշ դեպքերում:

6. Երբ ասում ենք, թե թվերի մեջ փոխառություն լինում է միայն խոշոր գումարների համար, բնականաբար չենք կարող որոշել, թե որ թիֆն է մեծ և որը փոքր: Սա շատ հարաբերական մի հասկացողություն է. Այս պարագային տարօրինակ չպիտի երևա նույնիսկ փոքր (մեզ համար փոքր համարված) թվերի փոխառությունը: Այսպես՝ ուզո-Ֆիննական լեզուները հնդեվրոպականներից փոխ են առել 7 թիվը (հունգ. hét և այլն) և 10 թիվը (գերմ. վոււյ. das, հունգ. tíz), արիականներից փոխ են առել Վարյուրա բառը (Ֆինն. sata, հունգ. száz որ է պրոս. sad), իսկ բալթյան լեզուներից Վազարա բառը (Ֆինն. tuhat, իսկ հունգ. ázer Վազարա իրանյաններից): Այսօր էլ աֆրիկյան վեի լեզուն 100-ը փոխ է առել անգլիերենից hondōro ձևով և իր քսանորդական ձևով ասում է, օրինակ՝ hondōro dondo ako mō fera banda 140 և այլն:

7. Բացառիկ դեպք է այն, երբ փոխառությունը կատարվում է նախապաշարույնների պատճառով, օրինակ՝ իրանական ադրբ. 13 թիվը համարվում է Վարամա, ուստի ջնջելով այն, հասարակ մարդիկ գործ են ածում արաբերեն ziyāde Վավելիս բառը:

8. Թվականի փոխառություն կատարվում է նաև խաղերի և չափերի մեջ. օրինակ՝ նարդի խաղում, որ պարսկական գյուտ է և Պարսկաստանից տարածվել է դեպի Արևմուտք, թե՛ հայերի, և թե՛ թուրքերի մեջ 1—6 թվերը պարսկերեն են (եք, դու, սե, չեհար, փանջ, շեշ). տենիս խաղի մեջ թվերը անգլիերեն են. մետրական դրություն ընդունած երկրներում ազատորեն գործածվում են՝ սեմետր, սեմետրետր, դեցիմետր, միլիմետր, կիլոմետր, հեկտար: Հատինական ձև է ցեմետր, որի հետ նույն են նաև հյ. կեմդիետր, արաբ. qantar, թրք. դանթար: Ճաշարաններում՝ պերվիյ, վտարոյ (իբրև կերակրի տեսակներ) ընդունված են ամբողջ կովկասում: Ֆրանս. douzaine «12 հատ» (ռուս. дюжина) աստորական շրջանում համաշխարհային բառ է դարձել (թրք. duzina առնված է իտալերենից):

21. ՀԱՄԱՆՈՒՆ ԹՎԵՐ

Համանուն բառերի մասին ընդարձակ պիտի խոսենք բառաքննությանս մեջ: Այստեղ մի քանի նկատողություն պիտի անենք թվականների մասին:

Ջանազան լեզուների մեջ պատահում են երբեմն այնպիսի թվականներ, որոնք այլ սովորական բառերի հետ համանուն են: Այսպես՝

Հյ. մի (մեկ) թվանունը համանուն է կազմում հյ. մի արգելական մակբայի հետ:

Ռուս. шесть համանուն է шесть «ձող» բառի հետ, որից տարբերվում է վերջաձայնի փոփոխությամբ:

Թուրք. altā (6) նույն է altā «տակը» և yedi (7) նույն է yedi «կերպով» բառի հետ:

Անգլ. two «երկու» միայն գրությամբ է տարբեր too «շատ, չափազանց, նաև» բառից:

Ֆրանս. neuf «9» նույնպես նման է neuf «նոր» բառի հետ, որ ինչ բառարանի մեջ էլ որ հիշված լինի, անհրաժեշտաբար nombre «թվանշան» կամ nouveau «նոր» և կամ ուրիշ որևէ հայտարար բառով պիտի նշանակվի:

Համանունները զգուշալի են ընդհանրապես լեզուների մեջ. ուստի այստեղ էլ սպասելի էին որոշ փոփոխություններ՝ խուսափելու համար բացարձակ համանուն ձևերից:

Ըստ այսմ հյ. մի միջին հայերենում դարձել է միակ > մեկ, որից էլ աշխ. մեկ: Արևմտյան բարբառներում իսպառ վերացված է գրք. մի ձևը, որ սակայն դեռ կենդանի է արևելյան գրականում և արևելյան բարբառներում:

Այստեղ էլ սակայն, սկսվեց մի թվականի փոխարեն մի հատ ձևի գործածությունը միայն այս վերջին տարիներում: Այսպես՝ մի գեա տես, մի սասա գա և այլն ձևերի փոխարեն այժմ երբեմն կարելի է լսել՝ մի հատ գեա տես, մի հատ աոա գա՛:

Արևմտյան բարբառներում չկա այդ ձևը, որովհետև «մեյ մը գնա տես, մեյ մը ըսե գա» ձևերը բնավ առիթ չեն աալիս շփոթելու մի գեա, մի աոա արգելականների հետ:

Համանուն թվականների դրությունը ավելի է ծանրանում, երբ մի թվական համանուն է կազմում մի ուրիշ թվականի հետ միևնույն լեզվում: Ուրիշ խոսքով, երբ թվականները ներկայաց-



նուժ են իրար շատ նման ձևեր: Վերը Բրազիլիայի մերրիեմ լեզվի մեջ տեսանք 2 iaklûde և 3 inkletê ձևերը: Հրո երկրի օնասեղինամ լեզվի մեջ գտնում ենք 2 soke, 3 sauke, 4 koni-soke (զույգ 2) և նորակազմ 6 koni-šauken, 7 karreik wiwai šouke, 8 karreik wiwai šauke միայն մի ձայնի տարբերությամբ: Ամերիկյան մազատեկան (mazatecan) լեզվի թվերն են՝ 1 go, 2 ho, 3 ha, 4 nihu, 5 u, 6 hu, 8 hi, բոլորն էլ իրար նման ձայներ: Նմանապես ամերիկյան չինանտեկ լեզվով թվականներն են 3 nne, 5 nya, 6 ñiu, 7nyaa, 8 ñna, 9 nyu, 10 nya. Չուքչի լեզվով չափազանց նման են իրար հետ 2 ñirâq, 3 ñîrôq, 4 ñîrâq. Աֆրիկյան գբանյե կամ սալագա լեզվով՝ 2 ahu, 4 ana, 5 anu.

Աֆրիկյան նտա (գոնջա) լեզվով՝ 2 ahu, 4 ana, 5 anu, ինչպես և 3 asa, 6 asi միևնույն բաներն են:

Աֆրիկյան գանգ լեզվով՝ dueno 12, duena 14, duenu 15. Ինչպես կարող էին մարդիկ զանազանել այս բոլոր նման ձայները, եթե սովորություն չունենային բառի հետ նաև մատները ցույց տալու: Բնականաբար, եթե այս վերջին պարագան չլիներ, ստիպված պիտի լինեին փոխել այդ բառերը այնպես, որ անշփոթ բառեր ձևացնեին:

## 22. ԴԱՍԱՆԻՇՆԵՐԸ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՑ

Ներածությունից գիտենք, թե ինչ է դասանիշը. զանազան լեզուներ գոյականները վերածում են դասերի և յուրաքանչյուր դասին հատկացնում են մի մասնիկ (դասանիշ), որ իբրև նախամասնիկ կցվում է նույն դասին պատկանող բոլոր գոյականներին և նախադասության մեջ նրան հարաբերող ածականին, դերանվան ու բային: Լեզուների հետագա զարգացման ընթացքում այդ դասերը հետզհետե վերանում և, վերջապես, ջնջվում են, Այդ ժամանակ այդ նախամասնիկները դառնում են կամ բառաձև, կամ որոշիչ հոդ, կամ արականի ու իգականի մասնիկ և այլն: Այս նոր առաջացած պաշտոնների մեջ թերևս ամենից երկարակյացն է այն, որ գործածվում է թվականների հետ՝ իբրև օժանդակ բառ:

Ամեն մի լեզու միևնույն ձևով չի դասակարգում գոյականները:

Կովկասյան արխագերեն լեզվում թվականները ստանում են երկու ձևի վերջավորութուն. բանականների մոտ -ծօ, իսկ անբանների մոտ -ba. ինչպես՝

3 = xp'a (= xba) և xöօ

4 = p'sba և p'söօ և այլն:

Դյումեզիլը (Dumézil, Et. comp. էջ 123) շատ լավ ցույց է տալիս, որ այս ծօ ծագում է օծօ «մարդ» բառից:

Թաթերենում (որ իրանական լեզու է) բացարձակ թվականները ունեն երկու ձև: առաջինը պարզական ձևն է, երկրորդը նրա վրա ավելացնում է to հանգը, որ պլս. tã կամ tãy «հատ» բառն է. այսպես՝

1 ye, yetö

2 du, duto

3 sa, sato

4 čor, čorto և այլն:

Ահա մի քանի լեզուների ընդունած դասային բաժանումները.

Աֆրիկյան լեզուներում.

1. Մարդկային էակներ.

2. Ձուր, հեզուկներ և լուծելի մարմիններ.

3. Փայտ և ծառեր.

4. Խոտ և խոտաբույսեր.

5. Երկիրը, իր մասերը, իր արդյունքները.

6. Տարվա եղանակներ և այլն:

Ինդոնեզյան լեզուներում.

1. Մարդիկ և հրեշտակներ—դասային մասնիկն է oran «անձ».

2. Անասուններ—ikor «պոչ» (այս բառը գնում են, եթե նույնիսկ անասունը պոչ չունենա).

3. Պտուղներ, տներ, քաղաքներ, նավեր, կղզիներ և լճեր—buah «պտուղ».

4. Հատեղեններ և կտրելի փոքրիկ առարկաներ—bijl «հատիկ»

5. Երկուր բաներ—batan «ցողուն».

6. Տափակ իրեր, ինչպես՝ տախտակ, դրամ, կերպաս, տերև և այլն—kəpın «տափակ».

Զինարենում.

ko<sup>4</sup> հատ (մարդկանց և ուրիշ ամեն բանի համար).

wei<sup>4</sup> (նիստ) հարգելի անձանց համար.

- p'i<sup>3</sup> (զույգ)—ձի, ուղտ.  
 t'ou<sup>2</sup> (գլուխ)—էջ, ջրբի և ամեն տեսակ անասուն.  
 k'ou<sup>6</sup> (բերան)—թուր, դանակ, զանգակ, խարիսխ, մարդիկ  
 pa<sup>3</sup> (կոթ, բուռ)—աթոռ, դանակ, գդալ, պատառաքաղ.  
 ting<sup>3</sup> (կոճակ)—գահավորակ, գլխարկ, հովանոց.  
 tao<sup>4</sup> (ճամբա)—հրամանագիր, գետ.  
 tsun<sup>1</sup> (սրբություն)—Բուզգա և կանոններ  
 t'iao<sup>3</sup> (ճյուղ)—փողոց, տափաստ.  
 fang<sup>1</sup> (կնիք)—նամակ, կապոց, ծրար.  
 liang<sup>3</sup>—տաել (չինական դրամ).  
 yən<sup>3</sup> (աչք)—ջրհոր, զենք.  
 tu (պատ)—պատ, ցանկապատ.  
 p'u<sup>1</sup> (շարք)—անկողին.  
 či<sup>1</sup>—արկղ, նավ, կոշիկ, ձեռք, ոտք, հավ, շուն և այլն.  
 mien<sup>4</sup> (հարթություն)—թմբուկ, հայելի.  
 liang<sup>4</sup>—կառքեր.  
 čang<sup>1</sup> (բացվածք)—սեղան, աթոռ.  
 čien<sup>4</sup> (բան)—գործ, առարկա, շորեր.  
 kuan<sup>3</sup> (խողովակ)—վրձին, սրինգ.  
 kən<sup>1</sup> (արմատ)—ձող, ցից, կայմ.  
 tien<sup>1</sup> (կաթիլ, կետ)—ժամերի համար.  
 wei<sup>3</sup> (պոչ)—ձկներ  
 tso<sup>4</sup> (նիստ)—տաճար, շիրիմ, բլուր, ջրհոր, պանդոկ  
 k'o<sup>1</sup> (գլխիկ)—մարգարիտ  
 k'uai<sup>4</sup> (կտոր)—աղյուս, պարտեզ, դուլարներ.  
 čien<sup>1</sup> (միջոց)—սենյակ:

Այսպիսի դասանիշներ ունի նաև ճապոներենը (մոտ 30), որոնցից ամենամեծ մասը չինարենից է առնված, մի քանիսը բուն ճապոներեն են:

Աննամերենում.

1. Կլոր և տափակ բաներ, հաց, անիվ և այլն—ban «հաց».
2. Մի ամբողջ սարք կազմող իրեր. ինչպես՝ անկողին, խաղեր, թեյի և սուրճի սպաս և այլն—bo «զույգ»:
3. Ծաղիկներ—boց «ծաղիկ».
4. Ծառեր, տունկեր և այլ գլանաձև իրեր—kay «ծառ»:
5. Մի զույգից կազմված իրեր (գինդ, օղ), նավի զանազան տեսակներ—tčiek.

6. Գնդաձև իրեր—ku.
7. Գրքեր—kuon «հատոր».
8. Հողի բաժանմունքներ, սովորություններ, ծեսեր—dam.
9. Գլանիկ, ձիափող, ծխախոտ, աֆիոն—dieu «ծխափող».
10. Դրամ—dog.
11. Երեխաներ, ծառաներ և ցածր աստիճանի մարդիկ—  
dña կամ t'ag.
12. Փափուկ բաներ—mieց «կտոր».
13. Եղեգ, ծխափող, գիտակ—oց «եղեգ».
14. Թնդանոթի, հրացանի հարվածներ—fat.
15. Պահակներ—fien «անգամ».
16. Պառուղներ—kva «պտուղ».
17. Չվան, թել, պարան—söi.
18. Կտրած հարթ իրեր, ինչպես՝ թուղթ, տախտակ—tam  
«կտոր»:

Ամերիկյան վիյոտ լեզվի մեջ թվական անունները առան-  
ձին չեն գործածվում, այլ միշտ դասանիշների հետ, որոնք կըց-  
վում են թվերի վերջին և հարադրական լեզուների ձևով միա-  
նում են ամբողջ նախադասության:

Ընդամենը 17 դասանիշ կա, որոնցից հիշում եմ մի քա-  
նիսը.

- ա) մարդկային իրեր, անասուններ—ar.
- բ) կտոր, տափակ իրեր—ätk.
- գ) լայն գնդաձև իրեր—atk.
- դ) փոքր » » —açk.
- ե) երկար » » —ak:

Ըստ այսմ օրինակ՝ goç 1, rīd 2, rīk 3 բառերը դաս-  
նում են՝

goçar, rīdar, rīkar...

goçätk, rīdätk, rīkätk...

Դասանիշները բիրմաներենում.

u «ստվածներ, թագավոր, իշխան, քահանա».

ç'ü (ց'ու) «պաշտելի առարկաներ».

ba հարգելի բաներ, հրեշտակ, բրահմաններ, ոգի, հոգի,  
զաղափար.

youk «անձ».

- goung անբան էակներ, կենդանի, ձուկ, թռչուն.  
 pya ոչ խոր բաներ (շողար, ուռփի, երկիր, պարտեզ, վեր-  
 ժակ).  
 lun կլոր բաներ (ձու, շիշ, բաժակ, ոտք, ձեռք, մատ, պը-  
 տուկ, պտուղ).  
 t'we նույնպես կլոր բաներ.  
 tseng { երկար բաներ (շղթա, նավ, մազ, գետ).  
 tan {  
 tsi հետը ապրող բաներ, պարազիտ, ճճի, ձի, փիղ, եզ, նավ.  
 bhet զույգ բաներ (ձեռք, աչք, ոտք, ականջ).  
 gyoung գետ, ջրորդան, ճամբա, շավիղ.  
 t'i շորեղեն.  
 tshoung իր մեջ պարունակող բան (տուն, վանդակ, վանք,  
 պալատ, սենյակ, արկղ).  
 tsoung գիրք, թուղթ.  
 k'yat տափակ բարակ բան (տերե, ապակի).  
 hlwa մասերի բաժանված բան, տերե, թերթ.  
 rat հաստատուն բան, տեղ, լեզու, սովորույթ, հագուստ,  
 կրոն, ձես.  
 tan ժամանակի և տարածության մեջ բաժանվող բաներ  
 (վարձատրույթուն, մեղք, տաղանդ, ճամբա, դուռ).  
 peng աճող, արմատ ունեցող բաներ, ծառ, բույս, մազ.  
 k'won ձայն ունեցող բան (տառ, բառ, ձայն).  
 k'young մետաղե սրածայր բաներ (գնդասեղ, փուշ, գրիչ,  
 գրչածայր).  
 let ձեռքով բռնելու կամ ձեռքով գործածելու բաներ.  
 t'way արմատ ունեցող երկար բաներ (գետ, հոսանք).  
 k'eng փռված բաներ.  
 k'yet առանցքի շուրջ շարժվող բաներ (հովանոց, անիվ).  
 kweng շրջանակաձև բաներ (օղակ, մատանի).  
 kun շարովի բան (մանյակ).  
 k'wet գոգավոր բան (գրպանի ժամացույց).  
 koh մարմնի պատկեր, նկար, արձան.  
 k'u անշունչ իրեր (բանալի, սեղան, շիշ).  
 t'at բերդ, ամրոց, խրամ, դարպաս.  
 rwa մարդիկ, ըրահմաններ.  
 Բիրմայի պեզու լեզուն էլ ունի դասանիշներ, բայց բիր-  
 մաներենի չափ շատ չէ:

Սրամերենը ունի 22 դասանիշ:

Դասանիշները պարսկերենում

- تا tā կտոր—զանազան իրեր.  
 نافر nafar անձ—մարդ կամ նաև մեծ անասուններ.  
 راس ras գլուխ—չորքոտանիներ.  
 زوچ zavj զույգ—եզներ և զույգ բաներ.  
 قلادة qelāde (վզնոց)—շուն հաշվելու համար.  
 دست dast ձեռք—բազե.  
 قطار qatār շարք—ուղտ, ջորի.  
 زنجير zanjīr շղթա—փիղ.  
 مربوط mirbat կապ—փիղ.  
 كامند kamand օղակ—ջորի.  
 ميار mihar սանձ—ուղտ.  
 باهله bahle բազեի ձեռնոց—բազե.  
 دانه dāne հատիկ—փոքր անասուն, մարգարիտ և այլն.  
 قاتا qatā' կտոր—զանազան իրեր.  
 جلد jild հատոր—գիրք.  
 بازو bāzū բազուկ—բազեակալ.  
 اداد 'adad թիվ—գրամ և այլն.  
 دaste daste բուռ—թուղթ, բաժակ և այլն.  
 تاپ top կտոր—կտոր, կտավ.  
 طاقة tāqe խավ, ծալք, կտավ և այլն.  
 ارادة 'arrāde պատվանդան թնդանոթի—թնդանոթ.  
 ميل mil թնդանոթի obelisk—թնդանոթ.  
 لولة lūle խողովակ »  
 قابضة qabze երախակալ »  
 تاخت tachta աախակալ—թաղիք.  
 پاره pāre կտոր—գլուղ, տուն, սար.  
 رسته rište թել—ջրանցք, փոս և այլն.  
 فرد fard (անհատ)—գորգ.  
 پارچه pārče կտոր—տուն, գլուղ, սար:

Մեկանեզյան մոտա լեզվի դասանիշներն են՝

- pul—ցույց է տալիս անձ.  
 sage—նավի վրա եղած անձերին հաշվելու համար.  
 sogo—փունջով կամ ողկույզով պտուղ հաշվելու համար.

tur, tira—նետ, նավակ հաշվելու համար.		
taqa—տուն	»	»
tal—դրամ, փող	»	»
sorako—անգամ, քանի՞	»	»
pepe—ձուկ	»	»
rowo—մազլցող բույսեր	»	»
raka—հատվածների թիվը հաշվելու համար:		

*Մալայան դայակ լեզվում թվականների դասանիշներն են՝*

btti—մարդկանց համար.
kongan—անասունների համար.
kabawak—կլորակ բաներ.
kapating—բույս է ցույց տալիս. օրինակ՝ idjā karating
kambang մի հատ ծաղիկ:

*Ամերիկյան նահուատլ (Մեքսիկա) լեզվի մեջ դասանիշները շատ են կրճատվել. ընդամենը կա 8 դասանիշ, որոնք են.*

teti—կլոր բաների համար. ձու, պտուղ և այլն.
tlamantli—զույգ բաների համար.
olotl—եգիպտացորենի հատիկների համար.
platanep—ցողուն և այլն.
pantli—շարք, ակոս, պատ, մարդկանց և իրերի շարք.
ipalti—շոր, սփռոց, թուղթ.
quimilli—հազուստ.
tecpantli—անձ, մարդ:

*Ամերիկյան յուրով լեզվի մեջ դասանիշները կցվում են թվականներին՝ իբրև հետամասնիկ. օրինակ՝ նավի կամ վագոնի դասանիշն է -ixteli, ժամանակ, տարի, առիթ ցույց տալու դասանիշն է -emi և այլն.*

*Դասանիշները շատ ավելի սակավաթիվ են Օվկիանյան կարոլինյան լեզվի մեջ, որ այն հատկությունն էլ ունի, որ դասանիշը ոչ թե կապում է հաջորդ գոյականին իբրև անկախ բառ, այլ կցում է իբրև մասնիկ նախորդ թվականի հետ: Այսպես՝*

շնչավորների համար—šai, man
անշունչների » —ou
փող, քար, խեցի » —fai
ծառերի » —faš

մարմնի մասերի համար զանազան ձևեր. օրինակ՝

- 7 füs թվով ասում են՝
- 7 շնչավոր էակ—füsuman
- 7 դրամ և այլն—füsifai
- 7 անշունչ իր—füsou
- 7 ծառ—füsifaš.

Նույն գրութայան է հետևում միկրոնեգյան արուկ լեզուն, որի մեջ թվականները իրենց վերջից ստանում են զանազան մասնիկներ, որոնք առարկաների դասանիշներն են, Այսպես՝ կենդանի էակների համար գրվում է -men; երկար իրերի համար՝ -fot և այլն. ըստ այսմ run (շ) բառը դառնում է ruemen, rufot և այլն. «մի» թիվը ստանում է մինչև 50 ձև. իսկ ընդհանրապես թվականները ունենում են վեց ձև:

Դասանիշների գործածութայան մեջ առանձնապես հարուստ է լաուերենը, որ սիամերենի նման մի լեզու է: Հոսպիտալիեն իր լաուերեն քերականութայան մեջ 132—147 էջերում խոսում է թվական անունների հետ գործածվող դասանիշների մասին, և թվում է նրանցից գլխավորները, որոնք թվով 58 հատ են. մինչև անգամ «հովանոցը» ունի իրեն հատուկ դասանիշը, որ է khan.

Երբ դասանիշը գործածվում է իբրև թվականների օժանդակ, գրվում է թվականի ու նրա գոյականի միջև. ահա մի քանի օրինակ աննամերեն լեզվից.

An <sup>y</sup>	ko	may	dua	kon?
Դուք	ուներք	քանի՞	(դասանիշ)	երեխա.
Toi	ko	nam	dua	hai
Ես	ուներմ	5	(դասանիշ)	2
		ba	dua	gai.
		3	(դասանիշ)	աղջիկ:

Դասային մասնիկների նման գործածություն գիտի նաև տանկերենը, ուր ունենք՝

- nefer (անձ)—շնչավորի համար. aded—անշունչ իրեր.
- bab (դուռ)—շենքերի համար. qəta—նամակ և այլն.
- res (գլուխ)—անասունների համար.
- pare (կտոր)—թնդանոթների համար.
- dane (հատ)—անշունչների համար:



Գերմ. ասվում է 100 Mann Soldaten, 10 stück Rindvieh  
և այլն:

Վերջապես նույնի հետքերը կան արդի հայերենի, մանա-  
վանդ ժողովրդական լեզվի մեջ. ինչպես, օրինակ՝

Ձեռք—շորերի, անկողնի համար (նախապես մի հնգյակի, այս  
իմաստը պահում է դեռ Գնձ. մի ձեռք ճղողուր Վհինգ ընկույզ)։

Գլուխ—անասունների համար.

Կտոր—անշունչ իրերի համար:

Օրինակ՝ հինգ զլուխ ոչխար ունեմ, երեք ձեռք անկողին  
և այլն:

Այս բոլոր դասային բառերի տեղ մենք կարող ենք դնել  
«հատ» ընդհանուր բառը:

Դասանիշները գոյություն ունեն նաև Համշենի բարբա-  
ռում:

Առարկաների հատը թվելու ժամանակ գործածված բա-  
ռերն են՝

Կլեօխ < գլուխ, փոքր և մեծ անասունների համար (այծ,  
ոչխար, եզ, գոմեշ)։

Բէշ < պոչ. մեծատավար (մալ)։

Գողէշ < կոտոշ (ծաղրի համար է ասվում՝ տավարի մասին  
խոսելիս)։

Ուրիշ առարկաների համար ասվում է միայն հատ < հադ,  
փաղաքշարար՝ հադիգ. օրինակ՝ քօնի՛ հադիգ մալ ունիս:

Ասացինք վերը, որ դասանիշները ընդհանրապես և թվա-  
կանների վրայից մասնավորապես վերանում են հետզհետե,  
մինչև հասնում են մինիմումի և ապա. ջնջվում: Այս մասին  
գեղեցիկ օրինակ է տալիս ամերիկյան մայա լեզուն, որ առաջ  
ուրեքն է 81 տեսակ դասանիշ: Մրանց ցանկը տես Tozzer,  
էջ 290—3: Բայց այժմ այդ բոլորից մնացել են միայն երկուսը,  
մեկը՝ շնչավոր, մյուսը՝ անշունչ առարկաների համար: Օրինակ՝

oš tul winik

oš p'el na

3 հատ մարդ

3 հատ տուն:

Մայա լեզվի պատկերն է ցույց տալիս նաև ամերիկյան  
սահապտին լեզուն, ուր դասանիշները բոլորովին վերջանալով,  
պահել են միայն մի հետք, այդ այն է, որ 2, 3, 4, 5 և 10  
թվերը երկուսական ձև ունեն. մեկը՝ շնչավորների, և մյուսը՝

անշունչների համար. շնչավորների ձևը վերջանում է u ձայնավորով, անշունչների ձևը՝ d կամ t բաղաձայնով: Այսպես՝

շնչ.	անշ.
2 napu	napt
3 mətau	mətađ
4 pinapu	pinipt և այլն:

Շատ կրճատված է դասանիշների թիվը՝ նաև այնու լեզվի մեջ, ուր հասել է մեկի. այստեղ անասուններ և երբեմն էլ իրեր հաշվելու ժամանակ թվականից հետո դնում են piš. ինչպես՝ seta «շուն» բառով՝

seta	šinep	շուն	մի
»	tup piš	»	2
»	rep piš	»	3
»	inep »	»	4:

Թեև այնուի հարևան լեզուները (ճապոներեն և չինարեն) ունեն բազմատեսակ դասանիշներ, բայց այնուն չունի. այս մեկը հին դասանիշների վերջին մնացորդն է:

Անշունչ դասանշավոր թվականի արդյունք է այն, որ ամերիկյան կարրիեր լեզվի մեջ թվականը փոխվում է հինգ ձևով՝ ըստ առարկայի դասի, օրինակ՝ t'a «երեք» թիվը ստանում է հետևյալ ձևերը.

1. t'a—անկախ.
2. t'ane (ընտանի անասունների և անձերի համար).
3. t'at (հաջորդական բաների համար, ինչպես՝ 3 օր, 3 գիշեր, 3 ձմեռ, 3 տարի, ինչպես նաև բայանուններից առաջացած գոյականների համար).
4. t'aten (տեղ ցույց տվող բառերի համար. ինչպես՝ տուն, դյուղ, դաշտ և այլն).
5. t'auh (տեսակ, զույգ, գույն, կերպ և այլն). մնացյալի համար դրվում է ա ձևը:

Նույնպես և ամերիկյան ցիմշիան լեզվի մեջ ըստ առարկայի տեսակի տարբեր թվեր են գործածվում, որոնք մինչև ութ տեսակ փոխվում են. օրինակ՝ 3 ասելու համար հասարակ և ընդհանուր բառն է gwant, կլոր առարկաների համար՝ k'ule, երկար առարկաների համար՝ galegan, մարդկանց համար gulián, նավերի համար՝ galgantk, չափերի համար՝ k'ul'ôn: Այս տար-

օրինակ երևույթը անշուշտ առաջացել է նախկին դասանիշներով թվարկությունից. բայց այժմ դասանիշները մի դասի կամ մասնիկի վերածվելով կպել են թվականին, կամ ձևափոխել են այն. կան և բոլորովին տարբեր բառեր. օրինակ՝ 8 թվի համար ունենք qandâ<sup>o</sup>it, yukdait (որոնց արմատներ են qan և yuk), 2 թվի համար ունենք t'epxad, guop<sup>o</sup>ei, ga<sup>o</sup>psxan, galba<sup>o</sup>ltk.

Դասանիշների վերջին հետքերը երևում են հյուս. կովկասյան լեզուների մեջ. օրինակ՝ լեզգիերենում բոլոր թվականների ծայրին դրվում է դ. օրինակ՝ սադ ամեկ», ծըդ «10». իսկ 11 լինում է ծըսադ, որից երևում է, թե դ մասնիկ է: Սա անշուշտ հնապես ճհատա նշանակող մի բառի վերջին ֆուսցորգն է, նախապես ծառայել է իբր դասանիշ, իսկ այժմ վերածվել է աննշանակ մասնիկի: Նմանապես արխագերենում թվականները 2—10 համբելիս ստանում են ba p'a մասնիկը (տես էջ 213):

### 23. ԹՎԵՐԻ ՇԱՐՔԸ

Վերը տեսանք, թե լեզուները ինչ շարք են ընդունում, երբ թիվը բաղկացած է մի միավորից և մի տասնավորից:

Այստեղ պիտի խոսենք ավելի մեծ թվերի շարքի մասին, երբ ունենք բոլոր, հազար, հարյուր, տասնավոր և միավոր:

Ընդհանուր ընդունված կարգը այն է, որ ամենամեծ թիվը անցնում է առաջ, ավելի փոքրերը գալիս են հետո, ճիշտ ինչպես թվաբանական արտահայտության մեջ. օրինակ՝

Հարյուր քսան երեք հազար, չորս հարյուր հիսուն և վեց Նույնը չինարենումն էլ լինում է.

i <sup>4</sup> —pai <sup>3</sup>	örj <sup>4</sup> —ši <sup>3</sup>	san <sup>1</sup>	çien <sup>1</sup>	sə <sup>4</sup> -pai <sup>3</sup>	wa <sup>3</sup> —ši <sup>2</sup>	lëo <sup>4</sup>
1×100	2×10	3×1000	4×100	5×10	6	

Այս շարքը ընդունված է նաև արդի եվրոպական լեզուներում. օրինակ՝

Ֆրանս. cent vingt trois mille quatre cent cinquante six

Նույնը և մեր հարևան լեզուների մեջ.

ռուս. двадцать три тысячи четыреста пятьдесят шесть.

վրաց. ას ოცდაცდასამი ათასი, ოთხას ოცდახუთი ათასი.

ադրբեջ. йүз иғирми үч мин дәрд йүз әлли алты

Քրք. yūz yigirmi uč bin dōrt yūz elli altə

պրս. sad u bist u se hazār čahār sad panjān u šaš:

Կան լեզուներ, որոնք այս ընդհանուր շարքից մասամբ շեղվում են և թվերի մեջ մի ուրիշ շարք են մտցնում, օրինակ՝ արաբերենում ճիշտ վերջիններին հակառակ ձևով սկսում են փոքրից և գնում են դեպի մեծը. օրինակ՝ 1896=sittatun va tis'ūna na Թamānumiāetin (որ է 6. 90. 800. 1000) բայց կարելի է ժողովրդական ձևով ասել՝ alfun va Թamānumiāetin vā sittatun va tis'ūna:

Մալդաշերեն լեզվում էլ թվերի շարքի ժամանակ սկսում են փոքրից և հետզհետե գնում են դեպի մեծը. այսպես՝ նախ միավորը, ապա՝ տասնավորը, ապա՝ հարյուրավորը և այլն. միավորը տասնավորին կցվում է amby բառով, որ նշանակում է ռավելիք. իսկ մյուսները (տասնավորը հարյուրավորին և հարյուրավորը հազարավորին) կցվում են sy «և» բառով: Օրինակ՝ 2467՝

fito	amby	enim—	polo	sy	efa	dzato
7	+	6	10	և	4	100
sy	roa	arivo				
և	2	հազար:				

Տարորինակ շարք է ներկայացնում հին իսլանդերենը, ուր հարափոփոխ ետևառաջությամբ ունենք՝ օրինակ՝

292=a	dáu	nochat	ar	dib	cetaib
	2	90	(նախդիր)	2	100
185,000—coic	mili	ochtmogat	ar	chét	
	5	1000	80	100	

Չինարենը, որ թեև թվերի շարքը պահում է սովորական ձևով, ինչպես տեսանք, բայց բազմանդամ մի թվարկության մեջ, ուր որ հազարավորներից, հարյուրավորներից կամ տասնավորներից մեկը պակասում է, նրա աեղ գնում է liŋ<sup>2</sup>, որ համապատասխանում է մեր զերոյին. Օրինակ՝

107=i <sup>4</sup> —pai <sup>8</sup>	liŋ <sup>2</sup>	չi <sup>1</sup>
1	100	—
		7

(այսինքն՝ մի հարյուր՝ չիք տասը և յոթ).

$$1207 = i^4 - \xi i e n^1 \quad \delta r l^4 - p a i^3 \quad l i g^2 \quad \xi i^1$$

$$1 \quad 1000 \quad 2 \quad 100 \quad - \quad 7$$

(այսինքն՝ մի հազար, երկու հարյուր, չիք տասը և յոթ)։

$$1027 = i^4 \quad \xi i e n^1 \quad l i g^2 \quad \delta r l^4 - \delta i^3 \quad \xi i^1$$

$$1 \quad 1000 \quad - \quad 2 \quad 10 \quad 7$$

(այսինքն՝ մի հազար, չիք հարյուր, քսան և յոթ)։

$$10,007 = i^1 - w a n^4 \quad - \quad l i g^2 \quad \xi i^1$$

$$1 \quad 10000 \quad - \quad 7$$

(այսինքն՝ մի բյուր, չիք հազար, հարյուր, տասը, և յոթ)։

Երբ թվի վերջում կան զերոներ, չեն գործածում  $l i g^2$  բառը-  
օրինակ՝  $250 = \delta r l^4 - p a i^3 \quad w u^3$

$$2 \quad 100 \quad 5$$

այսինքն՝ երկու հարյուր, հինգ (տասը կրճատված)։

Բայց սա չի կարող հասկացվել 205, որովհետև 205-ը պիտի  
լիներ՝

$$\delta r l^4 - p a i^3 \quad l i g^2 \quad w u$$

$$2 \quad 100 \quad - \quad 5$$

(այսինքն՝ երկու հարյուր, չիք տասը և հինգ)։

Նմանապես  $2500 = \delta r l^4 - \xi i e n^1 \quad w u$

(այսինքն երկու հազար հինգ (հարյուր կրճատված)։

Բայց սա չի կարող հասկացվել 2005, որովհետև 2005-ը  
պիտի լիներ՝  $\delta r l^4 - \xi i e n^1 \quad l i g^2 \quad w u$

$$2 \quad 1000 \quad - \quad 5$$

(այսինքն՝ երկու հազար, չիք հարյուր, տասը, և հինգ)։

Վերջացնելու համար այս ենթաբաժինը, պետք է խոսել  
այն մասին, թե մեծ թվերի շարքի մեջ ինչ կապակցություններ  
կարող են լինել։

Հին հայերենից գիտենք, որ միավորը տասնավորի հետ  
միանում է այնպես, որ կազմում է մի ամբողջական բառ և եր-  
կու բառերը չեն կարող գրվել անջատ։ Այսպես՝ մետասան, եր-  
կոտասան, երեքասան և այլն, մի-մի ամբողջական բառեր են  
և անկարելի է գրել մե տասան, երկո տասան և այլն։

Նմանապես հարյուրավորներից առաջ գրված միավորը ան-  
անջատ միանում է բառին։ Ըստ որում ասում ենք երկերիւր-

(այն է երկու հարյուր), Սրա նման էլ երեքհարյուր բառը ՆՀԲ գրվում է իբրև մի բառ: Գործածութեան ժամանակ էլ տեսնում ենք որ երեք եզրը անփոփոխ մնում է և չի հոլովվում. օրինակ՝ Յերեքհարիւր կանգնոյ զերկայնութիւն տապանին (Ծն. զ 15), և ոչ թէ յերից...

Ետ երեքհարիւր դահեկան (Ծն. թե. 22), և ոչ թէ երիս...

Եւ նա կանգնեաց զնիզակն իւր ի վերայ երեքհարիւրոց վիրաւորացն (Բ. թգ, իգ. 18): Սրա հետ հմմտ. Ա. ֆնաց. Ժա. 11 ի վերայ երեքհարիւր վիրավորացն: Երեկուսի մեջ էլ երեք անհոլով է և չի ասվում երից հարիւրոց...

Տրված բոլոր այս օրինակներում ՆՀԲ գրում է անանջատ երեքհարիւր, թեև Պոլսի 1895 թվականի հրատարակութեան մեջ գտնում ենք անջատ երեք հարևր:

ՆՀԲ գրում է նաև անանջատ հիմգհարիւր, հիեգհազար, չորեքհարիւր, վեցհազար, վեցհարիւր, իմնհարիւր: Սակայն մեջբերած վկայութիւնների մեջ հաճախ գրում է անջատ: Նույնիսկ եօթն հազար և եօթն հարիւր բառերի համար ասում է, թե քոչ այնչափ բարդ համարին, որչափ կրկին բառք յայտնիք. նոյն և ումկ.՝:

Արդի գրականում թեև միավորը տասնավորի հետ անանջատ ենք գրում, բայց հարյուր և հազար բառերի հետ եղած միացումները գրում ենք անջատ: Այսպես՝

Երեք հարյուր, երեք հազար, հինգ հարյուր հիսուն, քառասունևութ, տասնհինգ և այլն:

Սովորութեան հակառակ է գրել հարյուրթանասունութ, ինչպես գտնում ենք, օրինակ՝ Մկրտչյանի մոտ, Նովբեր և ակնարկներ, Երևան, 1945, էջ 179:

## ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ

## 1. ԲԱՑԱՐՁԱԿ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

Հաջվական կարողութայան զարգացումը և լեզուների զանազան թվական սխտեմները ուսումնասիրելուց հետո, անցնենք ուսումնասիրելու հնդեվրոպական լեզուների թվականները, այդ թվականների բառական ծագումը, նրանց ստուգաբանական մեկնությունը և զանազան լեզուների մեջ կրած ձևափոխությունը:

Հնդեվրոպական լեզվում թվականները հետևում են տասնորդական դրություն. մեկից մինչև 10 բոլոր թվերը նշանակվում են առանձին անուններով, տասնյակները կազմվում են բազմապատկումով և միջոցները լրացվում են միավորների գումարով. վերջապես կա «հարյուր» թիվը, իսկ հազարը անհայտ է հնդեվրոպական լեզվին:

Առաջին տասը թվերը հետևյալ ձևով են.

1. հնդեվր. ար. *sems* իգ. *smia* չեզ. *sem*, որից են թոլար. ար. *sas*, իգ. *sām*, հն. ար. *elē* իգ. *μῆ* չեզ. *šēn*, քուչ. *šeme* և հյ. մի: Բոլորի արմատն է հնդեվր. *sem* «մի, միակ» ածականը, որ ստորին ձայնադարձի *sm* ձևով երևում է զանազան բարդությունների մեջ. ինչպես՝ սանս. *sakr't*, զնդ. *ha-kəṛət*, լատ. *sem-el*, հն. *ἄ-πᾶξ*, *ἄ-πᾶσο* «մի անգամ», լատ. *sim-plex* «պարզ», հիււ. *samail* «հավասարություն» և այլն: Եվ, վերջապես, միևնույն արմատն է, որ ստանում է հետևյալ նշանակությունները. 1. Շնույն, միևնույն, հավասար, երկուսն էլ մեկ (սանս. *samās*, հայրս. *hama-*, հն. *δμοτος*, որից՝ համ, համ մասնիկը), 2. Շնույնը, նույնինքն, ինքը (գոթ. *sama* «այս», հբգ. *samo* «նույն այս», հիււ. *som* «ինքը», հսլ. *samu* «ինքը»), 3. «միասին, կից մեկտեղ» հն. *δμου*, սանս. *sa-*, զնդ. *ha-*, գերմ. *zu-sammen*, հսլ. *sa*, ռուս. *c, co-* «կից, միասին» մասնիկը և նախդիրը), 4. Շքոլոր, ամեն (գերմ. *sammeln*, զնդ. *hama-* որից հյ. համայն):

Այս ձևի հետ կար նաև հնդեվր. *oi-*, որ բնապես նշանակում էր «մենակ» և որից սաստկություն համար զանազան

ածանցներով կազմվեցին «մեկ» նշանակող ձևերը՝ oi-no, oi-vo, oi-ko- ինչպես՝ հն. οἷκοσ «մեհնակ», սանս. ē-ka (պրս. yak), հարս. aiva, զնդ. aēvō, լատ. oinos > unus, հիուլ. ōen, գոթ. aius, հրգ. ein, հարուս. ainan, հուլ. i-nū, լիթ. v-ē-nas, հն. օկնի գլանի մեկ թիւը:— նման մի սաստկական ձև է նաև հուլ. jedin-ū, ռուս. един-ый:

2. Հնդեվր. ար. dwō, dwōu, իգ. dwai չեզ. dwoi, որից՝ թոխար. ար. wu, իգ. we, վեդ. dvā, d<sup>u</sup> vā, duvau, dvau իգ. և չեզ. duvé, զնդ. duva, dva, duyē, հուլ. dūva, dūvē, dve, հն. dōo, հոմեր. dōo, լատ. duo, duae, լիթ. du, dvī, հիուլ. dau, dā, dī, հյ. երկու, գոթ. tvai, tvos, tva, հրգ. գերմ. zwei և այլն: Մրա հետ կա նաև մի ուրիշ բառ, որ նշանակում է «երկոքեան», հմմտ. սանս. ubhau, ubhe, հզնդ. ubē, հուլ. oba, obe, լիթ. abū, abi, հն. օմփո, լատ. ambo, թոխար. āmpi, գոթ. bai և այլն:

3. Հնդեվր. ար. treies, իգ. tisres, չեզ. trī, որից սանս. trāyas, tistrās, trī, հն. τρεῖς, τρία, թոխար. ար. tre, իգ. trī, զնդ. θri, tisharo, լատ. trēs, tria, հուլ. trīje, tri, լիթ. try's գոթ. θreis, θria, հիուլ. trī, teoir, հրգ. drī, քուչ. traiy և այլն (իդական ձևի մեջ -sr- «կին» բառն է, որից նաև swe-sōr «քույր»):

4. Հնդեվր. k<sup>w</sup>etwor, k<sup>w</sup>etwer, k<sup>w</sup>etur- և այլն, որից՝ սանս. čatvāras, čatūras, իգ. čātasras, չեզ. čatvāri, զնդ. čawar, թոխար. čtwar, քուչ. čtwār, čtwer, լատ. quattuor, հուլ. četyre, լիթ. keturi, գոթ. fidwor, հրգ. fior, հիուլ. cethir, cetheora, հն. դոր. τέτορες, առա. τέτταρες, բեովտ. πέτταρες, գալլ. pedwar, հյ. շորք և այլն:

5. Հնդեվր. penk<sup>w</sup>e, որից սանս. pāñča, զնդ. pañča, հն. πέντε, լիւր. πέμπε, թոխար. pān, քուչ. piš, pič, լատ. quinque, (<<sup>\*</sup>penque), հուլ. pęti, լիթ. penki, գոթ. հրգ. fimf, հիուլ. cōic, ալբան. pese, pęse և այլն:

6. Հնդեվր. k'sveks, որ և svek's, k'sek's, sek's, k'vek's, vek's ձևերով է երևում. սրանցից՝ սանս. šat, šaš, զնդ. xšvaš, հն. ἑξή, ἕξ, լատ. sex, հուլ. šesti, լիթ. šeši, հրգ. sehs, գոթ. sahs, հսաքս. sehs, հիուլ. sē, գալլ. chwech, թոխար. šāk, ալբան. g'ašts և այլն:

7. Հնդեվր. septm, որից՝ սանս. saptā, զնդ. hapta, պրս. haft, հն. ἑπτά, լատ. septem, հուլ. sedmi, լիթ. septyni, գոթ. հրգ. sibun, հիուլ. seeht, թոխար. špāt, ալբան. štate և այլն:

8. Հնդեվր. ok'tō, ok'tōu, որից՝ սանս. aṣṭā, aṣṭāu, զնդ. aṣṭa, թոխար. okāt, քուչ. okt, հն. ὀκτώ, լատ. octo, հրգ. ahto,



գոթ. ahtau, հիւլ. ochtn-, հսլ. osmi, լիթ. aštū-ni, կիմբ. wyth, ալբան. tets և այլն:

9. Հնդեվր. névū, որից՝ սանս. և զնդ. nava, հն. ἐννέα, լատ. novem, գոթ. niun, հրգ. niun, գերմ. neun, հիւլ. nōin, թոխար. և քուչ nū, հսլ. devēti, լիթ. devyni, ալբան. nendë և այլն.— օստերե- նում կազմվել է farast, որ բուն նշ. «այսինկոյս ութ»:

10. Հնդեվր. dék'ip, որից՝ սանս. dāśa, զնդ. dasa, հն. δέκα, լատ. decem, հսլ. deçeti, լիթ. dēšimt, գոթ. taihun, հրգ. zehan, գերմ. zehn, հիւլ. deichn-, ալբան. djete, թոխար. çak կամ sāk:

Քերականորեն այս տասը թվականները բաժանվում են երկու տիպի. 1, 2, 3, 4 թե՛ սեռ ունեն, և թե՛ հոլովվում են («մի» բնականաբար միայն եզակի է, երկու երկակի է, 3 և 4 հոգնակի և այլն). սկսած հինգից մինչև 10 ոչ հոլովվում են և ոչ էլ սեռ ունեն. միայն 8 (ok'tōu) նախապես երկակի էր, որ հետո երկակիի նշանից զրկվելով՝ դարձավ ok'tō:

Ուրիշ լեզուներից հիշատակելի է այս դեպքում բերբերական տամաշեկ լեզուն, ուր բոլոր թվականները ար. և իգ. ունեն առանձին ձևեր, սկսած 1-ից մինչև 10 և 100-ից վեր՝ մինչև վերջ:

Հր. արարական ընտանիքի լեզուներից մեհրի լեզուն այսօր էլ 1—10 թվականների համար ունի ար. և իգ. առանձին ձևեր. իգականները հանգում են ըստ օրինի միշտ ի վերջավորությամբ: Ջարմանալի կերպով սրա ճիշտ հակառակն է շխաուրի լեզուն, որ ի հանգը դնում է արականների ծայրին-օրինակ՝

ար.	իգ.
7 šbe't	šo'
8 tinit	tūni
9 tsāy't	tiš
10 'ašerit	'ās'er

Ուրիշ ընտանիքներից էլ, օրինակ՝ Հիմալայան վայու լեզուն գիտի սեռերով զանազանել առաջին չորս թվերը միայն, իսկ 5-ից սկսած զանազանութուն չկա. այսպես՝

ար.	իգ.	անշունչ
1 kom-pu	kwo-mi	ko-lu
2 nāk-pu	nāng-mi	nā-yung

ար.	Իգ.	անշունչ
3 chhuk-pu	chhung-mi	chhu-yung
4 blik-pu	blig-mi	bli-ning
5 ū-ning	բոլոր սեռերի համար:	

Տասնյակները կազմվում են բարդությամբ, որի առաջին եզրը միավորն է և երկրորդը հնդեվր. dek'ը «տասը» բառի մի ածանցը՝ dék'nti, որ նշանակում է «տասնյակ»: Այս բառը, սակայն, բարդության ժամանակ կրճատվելով դառնում է k'omt, k'omt, առնվում է չեզոք սեռով, երկակի լինում է k'omt-ī, հոգնակին՝ k'omta կամ k'omta (օ երկար կամ կարճ): Ըստ այսմ միավորն էլ դրվում է չեզոք սեռով: Այսպես՝ dwoi «երկու», որ կրճատվելով լինում է wi, tri «երեք», penk՝ «հինգ» և այլն: Ըստ այսմ կազմվում են՝

Հնդեվր. wi-k'nti > սանս. vimṣati, զնդ. visaiti, քուչ. ikam, թոխար. wiki, հն. είκοσι, դոր. fixati, լատ. viginti, հյ. քսան, բրբատ. ugent.

Հնդեվր. tri-k'omta > սանս. trimṣat, հն. τριῶκοντα, զնդ. θρισat, թոխար. taryak, լատ. triginta, հյ. երեսուն, բրբատ. tregant. հնդեվր. k'etwr-komta > սանս. ṣatvāriṣat, զնդ. չաθwarəsat, հն. դոր. τετραῶκοντα, լատ. quadrāgintā. հնդեվր. penk՝ ē-kōmta > սանս. pañcāṣat, զնդ. pañcasat, հն. πεντήκοντα, լատ. quinquaginta, հյ. հիսուն, թոխար. pñak և այլն:

Տասնյակների կազմության այս եղանակը պահված է հնդ. իրանականի, հունականի, հայերենի, լատինականի և կելտականի մեջ. մյուս խմբերից գերմանականը և բալթիկ-սլավոնականը, k'nt շատ ձևափոխված և այլևս անճանաչելի դարձած լինելու պատճառով, կազմել են մի նոր ձև՝ միավորների և ամբողջական «տասն» բառի հարադրությամբ, արական սեռով, այսպես՝

20—հսլ. dūva dešēti	լիթ. dvidešimt
30—հսլ. tri dešēti	լիթ. trys dešimtys
40—հսլ. četyredesete	լիթ. ketūrios dešimtys
50—հսլ. peṭi dešēti	լիթ. penktos dešimtys

20—գոթ. twaitigjus	հբգ. zweinzug
30—գոթ. θreis tigjus,	հբգ. drīzzug
40—գոթ. fidwor tigjus,	հբգ. fīorzug
50—գոթ. fimf tigjus	հբգ. fīnfzug և այլն:

Գոթականի այս tigjus ձևը առաջանում է նախավոր tigus- բառից, որ նշանակում է «տասնյակ» և ապա գերմաներենում դարձել է -zig:

Թոխարերենն էլ 60-ից սկսած ասում է՝

60 säksäk  
70 šāptuk  
80 oktuk  
90 nmuk.

Հրգ. 60-ից վեր հաշվում էին

60 sēhszug      70 sibunzo  
80 ahtozo      90 \*niunzo.  
100 zehanzo

Բայց սկսած Թ 20-ի տեղ էլ սկսեցին դնել zog «տասնյակ» և բոլոր թվականները միաձև դարձան.

Zehanzug 10<sup>0</sup> ձևը շատ գործածական դարձավ, այնպես որ մինչև իսկ 200 zwiro zehanzug, 500 finstunt cēnzog, 1000 zēnstunt zēnzech 1200 zwelif stunt zenzeg գրված են, որոնցից հետո եկավ hunt 100, dūsunt, thūsunt 1000.

Սկսած 60-ից հնդ-իրանական լեզուները կազմում են վերացական ձևով. այսպես՝

60—սանս. śaṣṭi	գնդ. xšvašti
70— » saptati	» haptaiti
80— » aṣṭi	» aštāiti
90— » navati	» navaiti.

Նմանապես հունարենում սկսած 70-ից թվականները կազմվում են դասական ձևերից (ἑβδομήκοντα, ὀγδοήκοντα, ἐνετήκοντα), իսկ գերմանականում սկսում է մի նոր ձև, որ է՝

գոթ.	հուարս
70 sibun tēhund	antsibunta
80 ahtau tēhund	antahtōda
90 niun tēhund	nigonda.

Տասնյակների միջոցները կազմվում են միավորների հարդրությամբ «տասն» բառի վրա, որ ցեղակից լեզուներից ոմանց մեջ պահում է իր սկզբնական ձևը, մյուսների մեջ փոխվում, ինչպես՝

սանս.	հն.	լիթ.
11 ékādāṣa	էնձեա.	vėnūlika
12 dvādaṣa	ծածեա	dvýlika
13 trāyodaṣa	տրե՛Ն ևս ձեա	trylika
14 čaturdaṣa	տէտարեճ ևս ձեա	keturiolika

գոթ.	հրգ.	լատ.
11 ainlif	ainlif	undecim
12 twalif	zwelif	duodecim
13	drizehan	trēdecim
14 fidvōrtaihun	fiorzehan	quattuordecim.

Գերմանական ձևը կազմված է -libi բառով, որ նշանակում է «մնաց»։ Իբր թե 11=(10-ի վրա) մեկ մնաց, 12=(10-ի վրա) 2 մնաց. այս libi նույն է b-leiben «մնալ» բառի հետ։ Նույնպես և լիթ. -lika (=հյ. լիթ) «մնալ» արմատից։

«Հարյուր» բառի հնդեվր. ձևն է k'ṛto'-, որ կազմված է համարվում dek'm 10 բառից՝ to մասնիկով—dk'm-to'—որից սանս. çatām, զնդ. satəm, հն. 𐎧-𐎠𐎫𐎠𐎡𐎢𐎣 (բառացի «մի հարյուր»), լատ. centum, հուլ. sūto, լիթ. šimtas, գոթ. hund, հրգ. hunt, գալլ. cant, թոխար. kant, քուչ. kante (գոթականն ունի նաև նորահնար taihun tēhund 10×10)։ Գերմանականում rað «հաշիվ» բառի բարդությամբ կազմվեց գերմ. hund-ert, անգլ. hund-red բառացի՝ «100 հաշիվ»։

«Հազար» բառի համար ընդհանուր հնդեվրոպական ձև չկա. ցեղակից լեզուներն ունեն՝ սանս. sahāsrām, զնդ. hazarām, հն. 𐎧𐎠𐎫𐎠𐎡𐎢𐎣𐎠𐎡𐎢𐎣, գոթ. θūsundi, հրգ. dūsunt, հուլ. tysōsta, հպրուս. tūsimtons, լիթ. tukstantis, թոխար. wāltis, քուչ. yaltse, լատ. mille։

Բրուգմանը «հազար» բառի նախաձևը դնում է g'héslo, որից sa «մեկ» հավելվածով՝ սանս. sa-hasra, լեւոր. 𐎧𐎠𐎫𐎠𐎡𐎢𐎣𐎠𐎡𐎢𐎣, իսկ g'zhli ձևից smi «մեկ» հավելվածով՝ լատ. mille։

## 2. ԹՎԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Այժմ կարևոր է մի քանի խոսք ասել թվերի անվան նշանակութայն մասին։ Անկարելի է, որ այս անունները (մեկ, երկու, տաս և այլն) առանց մտածութայն և առանց նպատակի դրված լինեն։ Պետք է, որ այս բառերը որևէ նշանակութուն ունեցած

լինեն: Լեզվաբանության համար ամենադժվար (չափ անգամ անլուծելի) խնդիրներից մեկն էլ այս նախավոր նշանակութունները գտնել, երևան հանելն է: Սակայն, որքանի որ ծանոթ մեկնություններից տեսնվում է, սրանք ընդհանրապես առնված են մարմնի անդամների անուններից:

Վերևում մի քանի տեղ տեսանք ճիցքը իբր «ձեռք, թաթ»․ այսպես՝ Մուրրեի բնիկների լեզվով ճիցքը կոչվում է *ryup mur-nangin*, որ նշանակում է «մեկ ձեռք»․ տասը կոչվում է *politi murnangin*, որ է՝ «երկու ձեռք»:

Ամերիկյան կատ լեզուն թվականները հաշվում է այսպես․

1 la ha

2 nak ka

3 tak

4 nak ka nak ka, որ է 2 հաս 2

5 la sa ni

6 yī ban la ha նշանակում է «մյուս կողմը մեկ»,

այսինքն՝ մյուս ձեռքի վրա․

7—9 շարունակվում է նույն ձևով՝

7 yī ban nak ka                    «մյուս կողմը երկու»

8 " " tak "                    «մյուս » երեք»

9 " " nak ka nak ka            «մյուս » 2.2»:

Լաբրադորում հինգն է *tallek* («ձեռք», իսկ քսանը լինում է «ձեռք և ոտք միասին»: Մալայան և ամբողջ պոլինեզյան լեզուների մեջ 5 կոչվում է *ima*, *rīma*, *lima*, որ նշանակում է «ձեռք»: Հայ բողայերեն հինգը կոչվում է *աք մը*, որ նշանակում է «ձեռք մը»: Այնու լեզվով հինգը կոչվում է *ašikne*, որ գալիս է *aške* («ձեռք» բառից: Թուրքերեն *elli* «հիսուն» գալիս է *el* («ձեռք» բառից՝ իբր «կնարկություն հինգ մատերի (յուրաքանչյուրը մի տասնյակ առնելով), իսկ զթղ Քառասուն» ծագում է զթ-րձ զկոտրած» բառից (իբր թե բութ մատը ծալած): Էսկիմոսների լեզվով քսանը կոչվում է «մարդ» (այսինքն՝ մարդու ձեռքի և ոտքի մատների գումարը), իսկ հարյուրը՝ հինգ մարդ:

Ամերիկյան տակելոմա լեզվով քսանը կոչվում է *yap'amis*, որ նշանակում է «մարդ մի» (*yap'a* «մարդ» + *mis* «մեկ»): Դահոմեի էվե բարբառով *afoto* «15» նշանակում է «երեք ոտք»:

Այստեղ թերևս կարելի է ավելացնել նաև թրք. yüz «հարյուր», այսինքն՝ «երես, դեմք»: Ձեռքի և ոտքի կապակցությամբ զանազան արտահայտություններ էլ շատ կան:

Աֆրիկյան հերերո լեզվով hambouwwe 6 առաջանում է hamba «վրայից ցատկել» + umwe «մեկ» բառերից և ցույց է տալիս հաշվի ժամանակ մի ձեռքից մյուսին անցնելը: Այս ձևով կազմված են նաև hambombari 7 (imbari 2 բառից), hambon-datu 8 (indatu 3 բառից):

Աֆրիկյան դահոմե կամ ֆոնգհե լեզվով առաջին 1—10 թվերն են.

1 dokpo, de, 2 we, 3 ato, 4 enè, 5 ato', 6 aize, 7 tewe, 8 tato, 9 tene, 10 wo:

Սրանցից 7—9 առաջանում են 5 բառից, այսպես՝ 7 tewe (5+2), 8 tato (5+3), 9 tene (5+4). afoto 15 կազմված է afo «ոտք» + ato 3 բառերից. սրանից էլ կազմվում են.

afoto nuku do kpo	16	(15 և 1)
"    "    we	17	(15 և 2)
"    "    ato	18	(15 և 3)
"    "    ne	19	(15 և 4)

ko «քսան» (թերևս նշանակում է մատները հաշվի վերջացնել)

30 gba, 35 gbato, 36 gbato nuku dokpo

40 kade (նշանակում է «մի կապ»)

41 kade nuku dokpo և այլն

45 kade ato, 46 kade aize

50 kade wo, 51 kade wo dokpo

60 " ko (40. 20)

70 " gba (40. 30)

80 kawè (2 կապ)

90 kawè we

100 kawè ko (80. 20)

120 kato, 150 kane, 200 afode, 1000 afato, որ է՝  $5 \times 200$ :

Ջուլու լեզվի թվերը տեսանք վերևում. մեկից սկսած մինչև հինգ ծագումը անհայտ է. այնուհետև զալիս են՝ 6 isit'up'a նշանակում է «բթամատ» (որովհետև մի ձեռքը հաշվելուց հետո, անցնելով մյուս ձեռքին, սկսում են բթամատից):

7 isik'ombisa (նշանակում է ցուցամատ). կա նաև kombile, որ բուն նշանակում է ցույց տվեց (ակնարկելով աջ ձեռքի ցուցամատը, որ 7-րդ մատն է).

8 isišiyagalombili (նշանակում է isi դասանիշն է 4-րդ դասի, šiya Ետևը գտնվել, galo Եմատ, mbili 2=2 մատի ետևը եղածը).

9 isišiyagalolunye (նշանակում է մի մատի Ետևը գտնված. nye 1 բառից):

Հստ Сверхъев-ի զուլուսերեն 6 isitupa նշանակում է Երթամատ, 7 isikombisa ցույց տալ բառից է. 10 išumi հավանաբար նշանակում է Երուր մատները, 100 ikulu նշանակում է Եշատ:

Նոր-Հիբրիդյան (Մեղանեղյան) վեասիսի (veasisi) լեզվով հինգը կոչվում է karilum, որ կազմված պետք է լինի kadi 1+ մեղանեղյան lum Եձեռք բառից:

Հիպերբորյան չուքչի լեզվով Եհաշվել կոչվում է rilhirkin, որի արմատն է rilh Եմատ, իսկ 10 mingitkên կազմված է ming Եձեռք բառից:

Աֆրիկյան ոլոֆ լեզվով nit 20 նշանակում է Եմարդ, 40 mete իմաստն անհայտ է, իսկ 30 fan-wèz նշանակում է Ելուսնի օրեր:

Աֆրիկյան բանդա լեզվով 20 zazu ծագում է zu Եմարդ բառից:

Աֆրիկյան Եվե լեզվով 20 blaवे առաջանում է bla Եկապել բառից, որից և՛ blaṭō 30, blane 40 և այլն, բայց կան նաև amenu 20, որ ame Եմարդ բառից է և նշանակում է Եմարդու արտաքինը=մատները:

Էսկիմոսների լեզվով (Արևմտյան Գրենլանդիա) հինգը կոչվում է tatdlimat, որ նշանակում է Եբազուկ: Վեցը կոչվում է arfineq, որ նշանակում է Եծայրը: Երբ մի ձեռքի հինգ մատերը հաշվեն վերջացնեն, մյուս ձեռքի Եծայրի մատը կլինի Եվեց. տասը կլինի gulit, որ նշանակում է Եբարձրագույն, այսինքն՝ երկու ձեռքերի բարձրագույն թիվը:

Ամերիկյան նահուատլ լեզվով հինգը կոչվում է ma-cuilli, որ կազմված է mait Եձեռք +cui Եառնել բառերից. իսկ տասն է ma-tlactli, որ նույնպես կազմված է ma Եձեռք արմատից (իսկ Grasserie, Le nahuatl, էջ 30 հանում է tlactli Եիրան բառից): Նույն լեզվով poalli Ե20 բառը կազմված է poa Եհաշվել բայից:

Հիմալայան վայու լեզուն, որ քսանորդական է, 5, 10, 15, 20 և այլն թվերը հետևյալ ձևով է հաշվում.

5 kolu got' khulup = մի ձեռք ամբողջ  
 10 nāyung got' khulup. 2 ձեռք ամբողջ  
 15 " " " hā kolu got' khulup = 2 ձեռք ամբողջ և 1 ձեռք ամբողջ.

20 le got' khulup ոտքեր ձեռքեր ամբողջ

80 bli-ning cholōk = 4 քսանյակ

100 uning cholōk կամ kolu got' cholok ամի ձեռք քսանյակ:

Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզվով վեց կոչվում է ho-  
 želela, որ նշանակում է «խաչաձևել», որովհետև հաշվելու ժա-  
 մանակ վեց ասելիս մատը ձախ ձեռքից անցնում է աջիս-  
 նմանապես յոթը կոչվում է ho supa, որ նշանակում է «մատ-  
 նանշել», որովհետև յոթը նշանակվում է մյուս ձեռքի ցուցա-  
 մատով: Ութը և ինը կոչվում են ho roba «կոտորել» բայով, որից  
 հետո դրվում է meno'ē lē meli 2 մատ կամ mono ō lē mong  
 ամի հատ, որովհետև 8 հաշվելիս աջ ձեռքի 3 մատը կանգնած է  
 և 2-ը ծալած, իսկ 9 հաշվելիս՝ 4 մատը կանգնած է և 1 մատը  
 ծալած:

Ամերիկյան հուպա լեզվում 10 minlun նշանակում է բա-  
 վական է նրա համար:

Մալայան էնգգանո լեզվով՝ ինն կոչվում է abai kahai'i,  
 որ նշանակում է «գալիս է մեկը» (երբ 9 մատները ցույց տանք,  
 տասը լրանալու համար կմնա մեկը), իսկ 10 կոչվում է kipa'au'a,  
 որ նշանակում է «մատների ծայրերը իրար միացնել»:

Աֆրիկյան բիրա (բանտու) լեզվով 8 կոչվում է lolō, որ  
 նշանակում է «չուճի»: նույն 8-ի համար ասում են նաև.

dua kibako ball

Թող մատ երկու

այսինքն՝ երկու ձեռքի 10 մատերից երկուսը թող, որով կստաց-  
 վի եռթիվ: բայց սա ցույց է տալիս, որ lalo 8 = «չուճի», նույն-  
 պես նշանակում է «2 մատ չուճի»: նմանապես 9 կոչվում է  
 sobya, որի մի ուրիշ ձևն էլ է

dua kiboko ngilini

Թող մատ մի

որ իրոք լինում է «ինքն». բայց sobya ձևը սրանից չի առա-  
 ջանում. նա ուրիշ ծագում պիտի ունենա:



Ամերիկյան բոր (baure) լեզվով՝

apinan—ամիջամատա—apina 2

mopanan ամատանեմատա—moponan 3

canega «ճկուլթ»—canekeca 4 և caneneguega 90:

Արդարև, բթամատը չհաշված՝ միջամատը երկրորդ մատն է, մատանեմատը՝ երրորդ. իրական հաշվով էլ ճկուլթը հինգերորդ մատն է: Երևի 90 թվանշանն էլ մի ուրիշ հաշվով սրանից է ծագում:

Ամերիկյան խիվարո լեզվով՝ 1 ala, 2 cata, 3 cala (այսինքն՝ catu+ala=(2+1), 4 encatu (զույգ 2), 5 alacōtegladu (ala 1, òteglā ձեռք, du վերջանալ, այն է՝ մի ձեռքը վերջացավ), 6 intimutu (մյուս ձեռքի բութը), 7 tannituna (մյուս ձեռքի ցուցամատը), 8 tannituna cabiasu (ցուցամատի կողքի մատը), 9 bitin òteglā cabiasu, 10 catōgladu (2 ձեռք վերջանալ):

Ամերիկյան կիրիբի լեզվով 20 կոչվում է

mýcribā mis a ideho ibý sai որ բուն նշանակում է «2 ձեռք ոտքերով միասին»:

Իսկ աֆրիկյան մենդ լեզվով 20=nu gboyongō, որ նշանակում է ամարդը վերջացավ:

Զամուկա և մույսկա կոչված ամերիկյան ցեղերի լեզվով հինգը կոչվում է «վերջացած ձեռք»։ 6-ը՝ ամյուս ձեռքից մեկ, 10-ը՝ ճերկու ձեռք վերջացած՝ կամ quicha «ոտք», 11-ը՝ «ոտք մեկ», 12-ը՝ «ոտք երկու», 13-ը՝ «ոտք երեք», 20-ը՝ «ոտքերը վերջացած կամ ամարդ»։ Ցարուրոյե (Jaruroe) ցեղի մեջ 40-ը կոչվում է noenipume, որ նշանակում է «2 մարդ» (noeni ճերկու և canipune ամարդ ըստերից)։ Գվինեայի արավակ լեզվով 5-ը կոչվում է abar-dakabo «մի ձեռք», 10-ը՝ biamdakabo ճերկու ձեռք, որից հետո հաշվում են ոտքերի (kuti) վրա. 11-ը լինում է abar-kuti-banan, «մի ոտքի մատ», 12-ը՝ biam-kuti-bana ճերկու ոտքի մատ և այլն։ 20-ը կոչվում է abar loko «մի մարդ կամ պարզապես loko ամարդ», որով և կազմվում են հաջորդ թվերը. այսպես՝ 45 լինում է biam-loko-abar-dakabo-tajeago ճերկու մարդ, մի ձեռք ավելի: Կարաիբների մոտ 10 կոչվում է chonnoucabo raim ճերկու ձեռքի մատները, 20-ը՝ chonnougouci raim «ձեռքերի և ոտների մատները»: Աբիպոն ցեղի լեզվով՝ inítara «մեկ», ññoaka ճերկու, ññoaka yekaini ճերեք, ավելի բարձր թվերի համար կան հետևյալ անունները. geyenk ñaté «չորս», որ է էմու

կոչված կենդանու մատները (այս կենդանին իրոք չորս մատ ունի), neēnhalek հինգ, որ է սքանչելի մի մուշտակ՝ հինգ տարբեր գույներով, նաև hanāmbegem հինգ, որ է մի ձեռքի մատները, lanām riheugem տասը, որ է երկու ձեռքերի մատները, lanam rihegem, cat gracherhaka anamichirihegem քսան, որ է երկու ձեռքի և երկու ոտքի մատները: Զուլունների մոտ վեցը կոչվում է talitisupa, որ է Երթամատը բռնել, այսինքն՝ մի ձեռքի հինգ մատները հաշվելուց հետո, մյուս ձեռքի Երթամատը բռնել: Անդաման կղզիների լեզվով 10 ասվում է ordura, որ նշանակում է Եամբողջ՝ իբր երկու ձեռք ամբողջ:

Շթովպական կունուումա լեզվով հաշվը կատարում են հետևյալ ձևով.— աջ ձեռքով ձախի վրա հաշվում են մատները՝ սկսելով ձկույթից. երբ ձախ ձեռքը վերջացավ, սկսած վեցից՝ ձախ ձեռքով հաշվում են աջը: Երբ 10 լրացավ, երկու ձեռքերը՝ բացած մատներով պահում են խոսողի ուղիղ դեմքի առջևը

10 kōllakada < kōn-lakada (իբր lakā-ske Ես կանգնած է) + kōna ձեռք կամ մատ). ella Եմեկ = ella Եգագաթ, ծայր. bāre 2 = bara Եիբար ետևից շարք) կամ Եկրկնություն) բառից. kusume 5 < kōn sū me, kona ձեռք կամ մատ + su ma ասել?:

Քսանորդական լեզուների մեջ տասից հետո թվարկության սովորական ձևը հետևյալն է.

Փոխանակ ասելու 11, ասում են Եմեկ՝ ոտքին) (այսինքն՝ երկու ձեռքի 10 մատ վերջացած և մեկ մատ էլ ոտքինը):

Փոխանակ ասելու 15, ասում են Եմի ոտք) (այսինքն՝ երկու ձեռքը վերջացած և հետո էլ ամբողջ մի ոտք լրացած):

Փոխանակ ասելու 20, ասում են Եզույգ ոտք) (այսինքն՝ երկու ձեռքի մատները լրացած և հետո զույգ ոտքերի մատները ամբողջ) և կամ Եարզապես Եմի մարգ) (այսինքն մի մարդու երկու ձեռքերն ու երկու ոտքերը):

Ամերիկյան պիոքս լեզվով, որ գիտի հաշվել միայն 5 թիվ, մեկն է moño, որ նշանակում է Եմատ): Իսկ տամա լեզվով 1 tego, 2 cayapa, 3 čo-teyo, որ է 2+1, 4 cayapa-ria (որ է 2 նորից) և 5 cia-xen te, որ է՝ Եմի ձեռք):

Ամերիկյան կարբիեր լեզվի մեջ երկու (nagk'e) բառի մեջ արմատն է na, որ նշանակում է Եկրկնություն). երեք (t'a) նշանակում է Եմեջտեղ) (երբ մեկ ձեռքի վրա ցույց ես տալիս 3 մատդ, միջամատը ընկնում է երկու մյուս մատների մեջտեղ)...

kwollai (հինգ) թվում է թե hwolla «վերջ» բառից է, այն է՝ մեկ ձեռքի մատերը վերջացան:

Հոտենդոտյան կտրանա բարբառով 6-ը կոչվում է nani, որ նշանակում է «բթամատ»: Աֆրիկացիք հաշվելիս՝ սկսում են ձախ ձեռքի ճկույթից, որով վեցն ընկնում է աջ ձեռքի բթամատը:

Ամերիկյան ալգոնկին լեզվով kwiči տասըն նշանակում է «վերջ», այսինքն՝ երկու ձեռքի մատների հաշիվը վերջացավ:

Բացի մարմնի անդամների անուններից և նրանց հետ կապված բառերից (մատը ծալել, կոտրել, բթամատը բռնել, մատները վերջացան և այլն), գործածվել են նաև նույնքան միություն պարունակող զանազան առարկաներ, ինչպես հիշեցինք, օրինակ՝ մի շարք խեցի, թել, կես թել և այլն:

Ամերիկյան նույն ալգոնկին լեզվով āsepən<sup>e</sup> «չորրորդ» բուն նշանակում է «մի քառորդ դուլար», որ վաճառանոցներում մի հատ raccoon-skin-ի գինն էր: Դարձյալ նույն ամերիկյան ալգոնկին լեզվով հազարն ունի երկու բառ. medaswākwe (որ բուն նշանակում է տասը հարյուր) և negutimakakwe, որ բուն նշանակում է «մեկ արկղ»:

Վերջապես կան թիվ կամ հաշիվ նշանակող բառեր էլ. այսպես՝ ուգրոֆինական լեզուների մեջ տասը բառը նշանակում է «թիվ»։ ինչպես՝ ոգ. lob 10, lobint «հաշվել»։ լափ. čēhkē 10 նշանակում է բուն «ճեղք», որ առաջացել է հաշվեփայտի վրա մի ճեղք քաշելու սովորությունից:

Մալգաշերեն լեզվով alina 10;000 նշանակում է բուն «գիրչեր»:

Նույն լեզվով topitrisa «միլիոն» նշանակում է «վերջացավ» + isa «թիվը»:

Աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզվով 100-ը կոչվում է lekgo, որ նշանակում է՝ «խոշոր թիվ»:

Աֆրիկյան ջոնդ (բանտու) լեզվով lolo, որ է «միլիոն» նշանակում է բուն «մեծ թիվ»:

Աֆրիկյան ռոնդա (բանտու) լեզվով 100 կոչվում է dzama, բայց կան բարբառներ, որ ասում են kulu, որ նշանակում է՝ «մեծ»։ հազարը կոչվում է khume ɖa madzana (100×10), բայց ավելին չգիտեն. ավելին կոչում են nhlulaban konti, որ նշանակում է՝ «նա որ գերազանցում է հաշվողներից»:

Շոտլանդի ուսուսանականը, որ գրել է ամերիկյան բակալրի լեզվի ընդարձակ քննությունը, այս նախնական լեզվի թվականներից 1 tokale բառը բացատրում է tokxa «աղեղ» բառից, որ

նրանց ամենաանհրաժեշտ զենքն է. Իսկ ahaye Ձ բառը հանում է այժ «շատ» բառից, որովհետև երկուսը նրանց թվական սահմանն էր:

Նյութական և շոշափելի բառերից գուրս կան նաև մի քանի կրոնական բառեր. օրինակ՝ հնդկական քաջմիրի լեզվով խոսող մահմեդականների մոտ ամեկն թիվը կոչվում է barkath, որ արաբ. بركات barakat «օրհնյալ, օրհնութուն» բառն է.

Նման ծագում պիտի ունենան թվերի անունները նաև հնդեվրոպական լեզուների մեջ: Այս ուղղությամբ կատարված են շատ փորձեր, բայց մեծ մասամբ ավել են անհավանական արդյունքներ: Հիշենք մի քանիսը ավելի հավանականներից: Հնդեվ. penk<sup>w</sup>e «հինգ» կապվում է գերմ. finger «մատ» բառի հետ և ցույց է տալիս նախավոր մի ձեռքի գաղափարը (նրանից է ծագել հետո պրս. panča «թաթ, ճանկ», իբր պրս. panj «հինգ»): Ութ (ok'tou) բառի նախապես երկակի լինելը ցույց է տալիս, որ հնդեվրոպացիք մի ժամանակ հաշվել են քսանյակներով, դրա համար էլ ութը երկու չորս է. Այս պարագային νέων «ինը» բառը նույնանում է հնդեվ. newo «նոր» բառի հետ, ըստ որում ութի կրկին քառյակներից հետո սկսում էին մոր քառյակ: Հնդեվր. dék'ṛ «տասը» բառը Միշել Բրեալը ուզում էր մեկնել «տեսնել, ցուցնել, մատ» բառով (հմմտ. հն. देख्युमी «ցուցնել»): Ավելի հաջող համեմատություն է կ'ոմt, -komt, որ «տասը» իմաստով մտնում է տասնյակների կազմության մեջ, կցել գոթ. handus, գերմ. hand «ձեռք» բառին. Հնդեվր. k'ṛtó «հարյուր» հայտնապես dék'ṛ «տասը» բառից ածանցված մի ձև է՝ -to-մասնիկով, ինչպես որ ավելի հետո կազմվել է հրգ. zehanzug «տասն տասն», որ է «հարյուր»: «Հազար» նշանակող բառերը զանազան լեզուների մեջ նշանակում են «մեծ, ուժեղ, խոշոր»: Այսպես, օրինակ՝ սանս. sahasram (=զնգ. hazanrəm) ոմանց կարծիքով առաջանում է սանս. sáhas «ուժ» բառից և այլն: Այլ բացատրություն է տվել Բրուզմանը, որ տես վերը, էջ 231.

### 3. ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հին հայերենը ունի չորս տեսակ թվական. բացարձակ, դասակարգ, բաշխական, անձներակային: Բացարձակը թվականի հիմնական ձևն է և ցույց է տալիս, թե առարկան քանի՞ հատ է: Դասակարգը ցույց է տալիս առարկայի կարգը կամ շարքը, այսինքն,

Թե առարկան քանի՞ երորդն է. բաղխակամը ցույց է տալիս, թե ամեն մեկին քանի՞ հատ է ընկնում. վերջապես անձներականը ցույց է տալիս, թե քանի՞սն են մասնակցում գործողության:

Աշխարհաբարում անձներականի առանձին ձևը ջնջված է. բայց այստեղ ավելացել է չափականը, որ գրաբարի մեջ չկա և ցույց է տալիս, թե ձրչափ է առարկայի գինը կամ արժեքը, քաշը կամ ծանրությունը, տարիքը և այլն:

Ջանազան լեզուների մեջ կան նաև ուրիշ տեսակ թվականներ, որոնք կտեսնենք իրենց տեղում:

Հին հայերենում բացարձակ թվականները հետևյալ ձևն ունեն.

Մի, երկու, երեք, չորք, հինգ, վեց, եօթն, ութ, ինն, տասն.

Մետասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեցտասան, եւթնետասան, ութնետասան, իննետասան.

Քսան, երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եւթանասուն, ութսուն, իննսուն.

Հարևր, երկերիւր, երեքհարևր, չորեքհարևր, հինգհարևր, վեցհարևր, եւթնհարևր, ութհարևր, իննհարևր, հազար, քեր:

Այս բառերը հորովվում են հետևյալ ձևով.

Մի	երկու	երեք	չորք
միոյ, միոջ	երկուս	երիս	չորս
միում	երկուց	երից	չորից
ի միոջէ, ի միոյ	յերկուց	յերից	ի չորից
միով	երկուք	երիւք	չորիւք

հինգ	հինգք	վեց	վեցք
հինգ	հինգս	վեց	վեցս
հնգի	հնգից	վեցի	վեցից
հնգէ	հնգից	վեցէ	վեցից
հնգիւ	հնգաւք	վեցիւ	վեցիւք

եւթն	եւթանք	ութ	ութք	ինն	ինունք
«	եւթանս	»	ութս	»	ինունս
եւթան	եւթանց	ութի	ութից	ըննի	ըննից
յեւթանէ	յեւթանց	ութէ	»	ըննէ	»
եւթամբ	եւթամքք	ութիւ	ութիւք	ըննիւ	ըննիւք

տասն	տասունք	մետասան	մետասանք
»	տասունս	»	մետասանս

տասին	ասասանց	մետասանի	մետասանից
տասնէ	»	մետասանէ	»
տասամբ	ասսամբք	մետասանիւ	մետասանիւք

եւթնետասն	եւթնետասնք
»	եւթնետասնս
եւթնետասին	եւթնետասնց
եւթնետասնէ	»
եւթնետասամբ	եւթնետասամբք

քսան	քսանք	հարիւր	հարիւրք
քսան	քսանս	հարիւր	հարիւրս
քսանի	քսանից	հարիւրոյ	հարիւրոց
քսանէ	»	»	»
քսանիւ	քսանիւք	հարիւրով	հարիւրովք

հազար	հազարք	բեր	բերք
»	հազարս	»	բերս
հազարի	հազարաց	բիւրու	բիւրուց
հազարէ	»	բիւրէ	բիւրուց
հազարաւ	հազարաւք	բիւրու	բիւրուք:

Երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան և վեշտասան հոլովվում են մետասան բառի պես (ըստ որում բոլորն էլ վերջանում են -տասան):

Ութնետասն և իննետասն հոլովվում են եւթնետասն բառի պես (ըստ որում բոլորն էլ վերջանում են -տասն):

Բոլոր տասնյակները երեսուն, քառասուն, մինչև իննսուն հոլովվում են քսան բառի պես (ու ձայնավորի սղմամբ), ըստ որում բոլորն էլ վերջանում են -սուն:

Երկերիւր, երեքհարիւր և այլն մինչև իննհարիւր հոլովվում են հարեր բառի պես, ըստ որում միևնույն բառի բարդերն են:

Ըստ այսմ թվականներից երեք, չորք, հինգ, վեց, ութ, ինն, մետասան... վեշտասան, քսան... իննսուն հոլովվում են ի հոլովմամբ. Մի և հարեր հոլովվում են ո հոլովմամբ, երկու և բեր հոլովվում են ու հոլովմամբ, եօթն, տասն, եւթնետասն, ութնետասն, իննետասն հոլովվում են ն հոլովմամբ, իսկ հազար հոլովվում է ի-ա հոլովմամբ:

Մի ունի միայն եզակի, երկու, երեք, չորք միայն հոգնակի, իսկ հինգից սկսած բոլորն էլ թե՛ եզակի, և թե՛ հոգնակի:

Հոլովման ժամանակ նկատելի են հետևյալ մանրամասնությունները.

Մի բառի սեռականներն են միոյ, միոջ. օրինակ՝ Առն միոջ էին երկու որդիք: Բայց միոջ հնապես եղել է նաև տրական, որին ապացույց է այն, որ բացառականն է ի միոջե (բացառականը կազմվում է տրականից). այս հնագույն տրականի հետքերը գտնում ենք մի քանի տեղ 5-րդ տարի I կեսի մատենագրություն մեջ<sup>1</sup>, այսպես՝

Դէպ եղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ (Ղկ. Ժ. 31):

Երևեցաւ և ինձ իբրև անարգի միոջ (Ա. Կոր. ԺԵ. 8):

Պոտահամբարս մթերեալ էր ի տուարածափակի միոջ (տպ. Վենետ. 1862 Դ. էջ 46 ի զուարարական քաղաքորմի միոջ խոտահամբար մթերեալ էր):

Վերջին օրինակը ցույց է տալիս, որ հին ժամանակ ներգոյականը եղել է ի միոջ (և ոչ թե ի միում), որից տարբերելու համար բացառականը՝ ստեղծվել է է հավելվածով ի միոջէ, ճիշտ այնպես, ինչպես ի գեղջէ, ի տեղուջէ և այլն:

Երկու բառը երկակի լինելով՝ չի ստանում ք. բայց մյուս հոլովներում հոգնակիի նշանները երևում են. այսպես՝ երկուց, երկուս, երկուք.— չգ. ուղ. երկուք անսովոր ձև է. բայց կա մի քանի տեղ. ինչպես՝ Ջիմրդ հալածեսցէ մի զհազարս և երկուք շարժեցին զբերս. Բ. օր Լր. 30:

Եւ եթէ բռնասցի մին՝ երկուքն կայցեն ընդդէմ նորա. Ժող. դ. 12.

Եւ ահա երկուք ի նոցանէ երթային. Ղկ. իդ. 13.

Եւ եզիցին երկուքն ի մարմին մի. Մրկ. Ժ. 8.

Եթէ ի լեզուս ոք խօսիցի՝ երկուք և եթէ ևս աւելի՝ երեք. Ա. Կոր. Ժդ, 27.

Լերինքն երկուք, մի դու էիր և մի թաղաւորն Յունաց (Բուզ. էջ 173):

Գործիական ձևն է կանոնավորապես երկուք (հմտ. ծովուք). ինչպես՝

<sup>1</sup> Տես իմ հոդվածը, Բազմ. 1897, էջ 259:

Վեց թևք միոյ և վեց թևք միոյ. երկուքն ծածկէին զերեսս իւրեանց և երկուքն ծածկէին զոտս իւրեանց, և երկուքն թռուցեալ. Սս. 2. 2:

Բայց այս ձևը քիչ է գործածվում և նրա տեղ դրվում է անձներականի հզ. գործ. երկոքումքք ձևը (Չալիս. 31):

Երեք բառի ձայնավորն է Ս, բայց հոլովման ժամանակ լինում է ի (երիս, երից, երիւք), ճիշտ ինչպես չորք (չորից, չորիւք):

Հինգ բառի հզ. գործիականն է հնգաւք, որ չի համապատասխանում հինգ բառի ի հոլովման. կա և հնգիւք (ինչպես՝ Ամօք իննհարիւր երեսուն և հնգիւք. Նևս. քր. ա), բայց ընտրելագուշն է համարվում հնգաւք (Չալիս. 32 և Գրգռ. 32 դնում են միայն հնգաւք ձևը. թեև Այտն. 440 ունի շհնգօք կամ հնգիւքա):

Եօթն բառը թեև հոլովվում է հիմն բառի պես, բայց հզ. ուղ. լինում եւթանք, հյց. եւթանո, ճիշտ ինչպես ունենք կողմանք, սերմանք, ամուսանք, կուսանք ձևերը:

Իմն բառը, որ ըստ ձևի պիտի պատկաներ և հոլովման, իրօք հոգնակիի մեջ հետևում է այդ հոլովման. այսպես՝ ուղ. ինուեք, հյց. ինուես, գրծ. ինամքք (ավանդված կա ինեամքք). հետո պահելով ու ձայնավորը՝ սեռ. տր. ինուեց, բց. յինուեց, գրծ. ինումքք (փխ. ինեաց, յինեաց, \*ինեամքք). սխալմամբ և կրկնելով էլ՝ ինեուեք, ինեուց, ինեամքք. գրծ. կա նաև ինեուք, որ շատ անկանոն ձև է. այնուհետև իմն անցել է ի հոլովման, որին հետևում է ամբողջ եզակին և հոգնակիի էլ բոլոր թեք հոլովները:

Տասն բառը հոլովվում է 6 հոլովման համաձայն, բայց մասն բառի պես՝ եզակիում անաջին տիպարի համաձայն (անձն), հոգնակիում երկրորդ տիպարի համաձայն (հիմն):

Մետասան... մինչև վերջապահ շատ կանոնավոր հոլովմունք ունեն՝ բաց բառի պես. իսկ եթեևտասն, ուրեևտասն և ինեևտասն հոլովվում են 6 հոլովմամբ՝ անձն բառի պես, միայն հզ. ուղ. և հյց. լինում են եւթնևտասանք, եւթնևտասանս և այլն (փխ.-իքք, -իքս), անշուշտ հետևելով մետասանք, մետասանս ձևերին:

Հարիւր հետևում է ո հոլովման, բայց Չալիս. 32 գրծ. դնում է նաև հարիւրիւ, իսկ Այտն. 440 հզ. սեռ. նաև հարիւրից, երկուսն էլ առանց վկայութայն:



## 4. ՀԱՅԵՐԵՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Մի ծագում է հնդեվր. sm-iyō ձևից, որ առաջանում է sem-արմատից. iyō մասնիկով, հմմտ. հն. eic, μῆ, որ է smia: Իբր անորոշ հոդ՝ տես համապատասխան տեղում (III հատոր):

Երկու ծագում է հնդեվր. dwō, dwoū ձևից, որ հատուկ էր արականին. իգականն է dwai և չեզոքը՝ dwoi: Բոլոր հնդեվրոպական լեզուների մեջ ամենից ավելի հայերենն է ձևափոխված. բառակազմում և հավելվածը՝ ր-ի պատճառով է. բուն ձևն է. րկ, որ շրջված գտնում ենք նաև կր-կիմ բառի մեջ: Թե րկ համապատասխանում է dw խմբին՝ իբր ապացույց են ծառայում երկ-իւղ, երկ-այն, երկ-աք բառերը, որոնց բոլորի մեջ և հավելված է, իսկ րկ համապատասխանում է մյուս լեզուների dw ձևին: Հնդեվրոպականը ունեւր նաև dwo (>հն. δῶ, լատ. duo) և dwi (>հն. ڍل-, լատ. bi-) ձևերը. այս երկուսն էլ պահված են հայերենի մեջ երկու և երկի- ձևով. առաջինը գտնում ենք երկոտասան և երկոթին բառերի մեջ, երկրորդը՝ երկեամ, երկերիւր և երկևան բարդերի մեջ, որոնք ծագած են երկի-ամ, երկի(ն)արիւր և երկի(ն)աւան ձևերից:

Երեք ծագում է հնդեվր. tréyes ձևից, որ արականին հատուկ էր (իգականը՝ tisres և չեզոքը՝ tri). ունի նաև երի- և եռ ձևերը: Առաջինը երի- առաջանում է հնդեվր. tri ձևից և գտնւրվում է հոլովման մեջ (կրիս, երից, երիւք). ըստ այսմ՝ երիս-գոթ. θrins, սանս. trin և կամ՝ բարդության ժամանակ. ինչպես՝ երեամ<երի-ամ: Երկրորդը՝ եռ առաջանում է հետնաբար կամ երիք (ածանցման մեջ երք-) բառի կրկին ր-երի գումարից (հմմտ. տարր>տառ) և կամ քառ չչորս> բառի ազդեցությամբ:

Չորք բառի բուն հին ձևն է չորեք, որ պահված է չորեքաթասան և չորեքհարիւր բառերի մեջ. և այս չորեք-ձևն էլ ծագում է հնդեվր. k<sup>w</sup>twores ձևից, որ կրճատված է k<sup>w</sup>etwores բառից (բաղաձայնների խմբի համար հմմտ. գնդ. ā-xtūirīn չչորրորդանգամ, իսկ վերջին մասի համար հմմտ. գոր. τέτορες. եթե նախաձևը լիներ k<sup>w</sup>etwores, պիտի ստանայինք \*քեքորք, որովհետև k<sup>w</sup> ձայնը e-ի մոտ հայերենի մեջ չի քմայնանում). հայցականում լինում է չորս, բայց թեք հոլովներում հոլովվում է ի ձայնավորով (չորից, չորիւք) նմանությամբ երեք բառի: Հնդ. k<sup>w</sup>etwores ձևի կողքին կար նաև երկրորդական k<sup>w</sup>twi ձևը. երկուսը միասին պահել են հնագույն հնդեվրոպական լեզուները:

այսպես՝ սանս. čātvaras և turīya, հն. τέτορες և τρα- (պահված τράπεζα սեպան), իմն քրառոտանիք բառի մեջ)։ հայերենի մեջ էլ այդ kʷtwr ձևը տալիս է նախ twr, որից էլ քառ, որ V դարի առաջին կեսում առանձին չկա, բայց պահված է քառամեայ, քառեամ բառերի մեջ, իսկ հետո, ոչ միայն առանձին գոյություն ունի, այլև տալիս է շատ բազմաթիվ ածանցներ։

Հինգ ծագում է penkʷe ձևից, որի e վերջաձայնը ըստ օրինի ընկած է. բայց պահվում է հեզետասան ձևի մեջ։

Վեց-ի ծագումը անհայտ է՝ նախաձայնի պատճառով. ըստ իս ենթադրելի է kʷsewʷs. հայերենի նախաձևը եղել է ըստ Meillet, Dial. indo-eur (էջ 86) \*վեչ-, որից ծագել են մի կողմից վեչ-, մյուս կողմից՝ վեց։

Եւթմ ծագում է septm ձևից. հնագույն ձևն է եւթմ, հետո դարձած՝ եւթմ, որ է եթմ։

Ութ ծագում է հնդ. ok'tō ձևից, որի մեջ k' դարձել է նախ ր ազդվելով septm բառից և այս opto ձևից էլ կանոնավորապես առաջացել է ութ. հմմտ. ելեական հն. ὀπτώ, որ նույն ձևափոխությունն է ցույց տալիս։

Ինն ծագում է հնդ. néwa բառի énwā ձևափոխությունից. նախաձայն e-ի հավելումը գտնում ենք նաև հն. 'स्यनैः ձևի մեջ։

Տասն ծագում է հնդ. d'k'ap ձևից, որ կրճատված է dōk'ap բառից։

Տասնյակների և միավորների միացումը կատարվում է ճիշտ պահլավերենի և պարսկերենի նման. մինչև 20 միավորը առաջ, տասնավորը հետո, իսկ 20-ից հետո տասնավորը առաջ, միավորը հետո։ Նկատելի է նաև, որ 11-ից 16՝ զուտ բարդ բառի ձևն ունեն՝ տասնավորն էլ դնելով -տասան ձևով. իսկ 17, 18, 19 և շաղկապով՝ միավորն ու տասն բառը միացած։ -Մեռասան առաջանում է միատասան ձևից, ուր իս միացությունը տվել է ըստ օրինի ե (ինչպես՝ բարիարար > բարերար)։

Տասնյակները առաջանում են հետևյալ ձևով.

Քսան ծագում է wi-k'ap̄ti ձևից. որ տալիս է նախ գիսան, անշեշտ ի ձայնավորի սղումով գսան և գ հաջորդ ա-ի մոտ խլանալով՝ քսան։

Երեսուն համապատասխանում է հնդ. tri-k'ontā ձևին. բայց tri-k'ontā չի կարող տալ հյ. երեսուն, այլ \*երիսուն > երսուն. ուստի հայերենի համար կամ պետք է ենթադրել հնդ. trāk'ontā ձևը.

ինչպես որ իրոք էլ ունենք բրըտ. tregont, և կամ երեք բառի ազդեցությամբ երսուն դարձած երեսուն:

Քառասուն ծագում է [k<sup>2</sup>]twr-k'ontə ձևից, որի համապատասխանները տես վերը: Հմմտ. հատկապես սանս. turīyas-«չորրորդ»:

Հիսուն ծագում է հնդ. penk<sup>w</sup>ēkontə ձևից, որ տալիս է նախ \*հինգիսուն, հետո կրճատմամբ՝ հիսուն:

Վարսուն, երեանասուն, ութսուն և իննսուն թվականների համար գիտենք, որ ցեղակից լեզուները իրար համապատասխան չեն և միջոց չեն տալիս վերակազմելու նախաձևը: Հայերենի մեջ բոլոր այս ձևերը վերջանում են -սուն: Ճիշտ նման նախորդներին և ճիշտ նման՝ հն. համապատասխան ձևերի -xovca վերջավորության. ըստ այսմ բոլորի նախաձևն է k'ontə. դժվար է վերականգնել վաթ. իսկ մյուսները ցույց են տալիս բացարձակի ձևերը:

Չարեք բառի ծագումը անծանոթ է (հնդ. k'ṛp̄t̄ə, որ պիտի տար հայերենի մեջ -սան «հարիւր», կորած է): Մյուս հարյուրավորները կազմված են միավորների միացումով և ամբողջական բարդ բառեր են: Ինչպես ցույց են տալիս երկերիւր, երեքհարկ, չորեքհարիւր (առաջինը իբր երկի(հ)արիւր, մյուս երկուսի համար հմմտ. երեքտասան չորեքտասան, վերջինս պահելով չորք բառի հնագույն չորեք ձևը):

Մյուսները թեև կարելի է առնել իբր երկու բառ, բայց ավելի լավ է համարել մեկ բառ. այսպես՝ վեցհարիւր, եօթնհարիւր և ոչ թե վեց հարիւր, եօթն հարիւր և այլն:

Հազար և բեր գոխառյալ են պհլ. hazār և bēvar հոմանիշներից:

Ավելի մեծ թվեր կազմելու համար քիւր բառը առնում են տասնյակներով կամ հարյուրավորներով. օրինակ՝

Եւ էր եկեղեցին միանգամայն՝ չորք բիւրք և երկու հազար և երեք վաթուուն:

Ոսկի դիրքաքմայս վեց բիւր և հազար:

Աւելի քան զերկոտասան բիւր մարդիկ:

Ջութուտասն բիւրուն սատակումն:

Ամենամեծ թիճն է բիւրք բիւրոց:

Հազարք հազարաց պաշտէին զնա և բիւրք բիւրուց կային առաջի նորա:

Ուստի՞ տացէ... հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց (Վիպաս.):

5. ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅՆԵՐՆՈՒՄ

1—10 հետևյալ ձևով են.

մեկ (կամ մէկ), երկու (կամ երկուք), երեք, չորս, հինկ, վեց, իօթն, ութ, ինն, տասն.

Տասնավորներն են՝

քսան, երեսուն, \*քառասուն, յիսուն, վաթսուն, \*իօթնասուն, \*ութսուն, \*իննսուն:

Մեծագույն թվերն են՝ հարոյր, հազար:

Մրանց մեջ նկատելի կետերն են.

Մեկ.—գրաբարի մի բառը իբրև անորոշ հոգ գործածվելով՝ թվականի համար կարիք կար մի նոր ձև ունենալու. ընտրվեց գրաբարի միակ բառը, որ կազմված է մի բառից՝ակ նվազականով, ճիշտ ինչպես ունենք սանս. eka, պարս. yek, պհլ. ēvak (որ կազմված է հպրս. aiva—զնդ. aēva ձևից՝ k—ի հավելումով):

Երկու բառը վաղուց արդեն կորցրել էր երկակիի արժեքը, այնպես որ հետևելով է երեք, չորք բառերին, հեշտությամբ ստացավ ք վերջավորութունը (երկուք): Այսպես էլ գտնում ենք նույնիսկ 5-րդ դարում: Ավելի սովորական դարձավ միջին հայերենում, ուր, երբ գործածվում է գոյականի կից՝ իբր ածական, պահում է երկու ձևը, իսկ առանձին կամ անկախ՝ լինում է երկուք. օրինակ՝

երկու այրիկ (էրիկ), երկու տարի, երկու քոյր, երկու կոյր, երկու դանկ.

Ն տարի ի դուրք կենայ ի յեկեղեցւոյն և ավաշխարէ և երկուք ի ներք.

երկուք ընդ իրար:

Երեք տարանմանությամբ դարձավ իրեք և հոգնակիի արժեքը կորցնելով մյուսների նման՝ դարձավ եզակի. գրաբար ձևով էլ արդեն ունենք՝ Քանզի երեքիւքս այսօքիւք դաստիարակեմք (Լծ. կոչ. էջ 45), ուր հզ. գրծ. երեքիւք ստացել է իւք վերջավորությունը, ըստ որում երեք եզակի է:

Չորս գրաբարի հյց. ձևն է, որ դարձել է ուղղական.

11—19 թվականների մեջ տեղի է ունեցել երկու տեսակ փոփոխություն. առաջինն է շաղկապի փոփոխությունը: Գրաբարում 11-ից սկսած մինչև 16 այնպես է բառի կազմությունը, որ շաղկապի կարիք չի եղել. իսկ սկսած 17-ից մինչև 19 և 21-ից

մինչև 99, բոլոր տասնյակները միավորի հետ միանում են և շաղկապով. այսպես՝ եօթնևտասն, ութևտասն, իննևտասն, քսան և մի, քսան և հիմք և այլն. Բայց զբաբարում կա նաև գրված ու շաղկապով եօթնուտասն, ութնուտասն, իննուտասն և այլն. ինչպես ունենք նաև, անկախ սրանցից, այբեծի կամ այբուծի: Միջին հայերենում հարցը բոլորովին վճռված է. և շաղկապը վերացված է, գրված է ու՝ ամեն դեպքում. այսպես՝ տասնումեկ, տասնուերկու, քսան ու հիմք և այլն: Բայց ինչպե՞ս էին կարգում այս ու շաղկապը. բաղաձայնից տռաջ, իհարկե ու, բայց ձայնավորից առաջ: Ի նկատի ունենալով տասնվիաթեմ, գրչությունը, պետք է ենթադրել, թե այս ու-ն ձայնավորի մոտ հնչվում էր վ:

Երկրորդ փոփոխությունն է միավորի դիրքը տասնավորի մոտ:

Գրաբարի ընդունած ձևն էր, ինչպես տեսանք, 11-ից մինչև 19 միավորը առաջ և տասնավորը հետո, իսկ 21-ից սկսած մինչև 99՝ տասնավորը առաջ և միավորը հետո:

Տեղ տեղ նկատելի է սակայն, որ նույնիսկ հին գրվածքների մեջ 11—19 թվականներն էլ ստանում են երբեմն երկրորդ ձևը, միայն հարիւր և հազար թվականների մոտ: Ահա օրինակներ.

Որդիք Գարիք՝ հարիւր տասն և երկու. նէեմե, է, 24 (տպ. Պոլսոյ 1895 ունի՝ հարևր երկոտասան).

Որդիք երամ՝ հազար տասն և եւթն. անդ՝ 42. (տպ. Պոլսոյ ունի հազար եւթն և տասն).

Ի հարիւրորդ տասներորդ առաջներորդ Սաղմոսէն: Եւթադ. էջ 111 և 122:

Ի հարիւրարդ տասներորդ հինգերորդ Սաղմոսէն (անդ, էջ 122):

Ի հարիւրորդէ տասներորդէ եւթներորդէ Սաղմոսէն (էջ 112):

Ի հարիւրորդէ տասներորդէ վեցերորդէ Սաղմոսէն (էջ 120):<sup>1</sup>

Միջին հայերենը ընդհանրացրել է այս երևույթը և ամեն տեղ էլ տասնյակները գրել է առաջ, միավորները հետո: Այս երևույթը չկա պարսկերենում, չկա նաև արաբերենում. ուստի զուտ հայկական է և առաջացած պետք է լինի ընդհանրացման օրենքով՝ 21—99 թվականների կազմության օրինակով:

<sup>1</sup> Վարդանյան, Եւթադ, էջ 126—7:

Այս տեղափոխութեան մասին խոսուած է Մագիստրոսը արդեն ԺԱ դարում և ասում է իր Գերականութեան մեկնութեան մեջ, էջ 247—8. «Քանզի որք ոչ ուսեալ են թուել յարարարդիւլով ի վերայ տասնեկին իբրու թէ հնգետասան, նախադասելով զհինգն՝ ասեն տասն և ճիւղ: Այսպես և որք ոչն ասեն երկուտասաներորդ, ասեն տասներորդ երկրորդ և ահա զնոյն նշանակէս:

Ըստ այսմ միջին հայերենի 11—19 թվականներն են՝ տասնումեկ, տասնվերկու կամ տասնվերկուք, տասնվերեք, \*տասնուչորս, տասնունիւց, տասնուվեց, տասնվիօթն կամ տասնիօթն,\* տասնուք կամ՝ տասնվուք, տասնըվիցն կամ տասնիցն:

Ուրիշ միացումներից իբրև օրինակ՝ հիշենք.

Քսանուէինկ, քսանուվեց, երկու հարոյր, իրեք հարոյր, չորս հարոյր և այլն:

Աստղանիշով (\*) նշանակված ձևերը ավանդված չեն և միայն ենթադրութեամբ են կազմված. հայտնապես կասկածելի է իօթնասուն ձևը.

Բոլոր թվականները հետևում են առաջին հոլովման և հոլովվում են միայն եզակի. օրինակ՝ մեկի, երկուքին, յերկուքէն, յերեքէն և այլն:

## 6. ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Բարբառների մեջ թվականները ընդհանրապես միայն ձայնական փոխօրոնությունների են ենթարկված:

1—10 թվականներն են զանազան բարբառներով՝

1. Գրաբարի մին կամ միակ ձևի շարունակությունն է. առաջինից են՝ Ղրբ. Մղր. Շմ. Ջղ. մին, Գոր. մրն, Ազլ. մույն, երկրորդից են ընդհանրապես մյուսները՝ մեկ (Ոզմ.), մեկ, մեգ, մեկ, մեյ, մեք (Անտ.), մէք՝ (Խրբ.), միգ (Մվեդ.) ձևերով:

2. Ընդհանրապես երկու կամ էրգու ձևն ունի. ինչպես՝ Ղրբ. Մղր. էրկու. մասնավոր ձևեր են յերկու (Ջղ.), էրգիւ (Ասլ.), յերկո (Ոզմ.), արկիւ (Ազլ.), ըրգէօք (Անտ.), յարկու (Հւր.), իրգու, իյգու, (Ջթ), էյգու (Հճ.), օրկու (Մրդ.), էօրկու (Կրճ.).

3. Ընդհանրապես ունի իրէք ձևը. ինչպես՝ Ղրբ. իրէք. մասնավոր ձևեր են իրեք (Ալւ. Լեհ. Մշ. Մշ.), յիրեք (Ջղ.), իրեք (Մլմ. Վն.), իրէք (Խրբ.), իրիք, իյիք (Ջթ.), իրիք՝ (Ազլ. Մկ. Մղր. Մրդ. Ոզմ.), իրեյն (Մրդ.), յիրիք (Տփ.), մէք (Ննիւ.), մեք (Հճ.), քրք (Անտ.):

4. Գրաբարի ուղ. չորք կամ հյց. չորս ձևի շարունակությունն է.—չորք ձևից են Ազլ. Մղր. չուրք, Ղրբ. չէօրք, Անտ. չուք,

Ջդ. շոք. իսկ շոքս ձևից է մեծագույն մասը՝ շոքս կամ շոքս հնչուժով. միայն Մկ. Սվեդ. Տիգ. Տփ. շուքս, Մրդ. շուքս, Ակն, Սեբ. շէքս, չճ. շոյս, Ջթ. շիյս, շիւքս, չմշ. շէոյս, Խր. շոս, Լեհ. շրքս:

5. Ընդհանրապես հիմզ ձևն ունի. մասնավոր ձևեր են հիմզ (Ախց. Կր.), հիմգ՝ (Մղր. Շմ.), հիմքյ (Խրբ.), հիյ (Ասլ.), խիմգ (Ջդ.), խիմգ (Մկ. Մրդ. Սլմ. Վն), խէնգ՝ (Ոզմ.), հէմզ (Սվեդ.), հէնգը (Գոր.), հէնգ՝ (Ղրբ.), հէնքյ (Անտ.), հոմզ (Ազլ.):

6. Ընդհանրապես վեց կամ վեց ձևն ունի. մասնավոր ձևեր են վեցց (Սլմ.), վեցց (Գոր. Ղրբ.), վից (Անտ. Ջթ. չմշ. Մկ. Տիգ. Տփ.), վիցց (Ազլ. Մրդ. Սվետ.), վրէց (Մղր.):

7. Երևում է երկու ձևով. եօքը և օխար. առաջինից են Խրբ. չճ., յօքը. Ալշ. Մկ. Մշ. Ոզմ. Վն. յօք. Տիգ յօքթ, Անտ. յէօքթ (yōyot'ə), Ջթ. յէօքթ, իսկ երկրորդից՝ Ռ. օխքը, Ախց. Երև. Մղր. Կր. Ջդ. Սլմ. Տփ. Գոր. Լի. Ղրբ. Ննխ, Պլ. օխար, Շմ. օխա, Մրդ. օխաա, Սշ. օխդը, Ակն, չմշ, Սեբ. օխար, Ասլ. օխդը, Ազլ. էխդ. էխար, չւր. յէխար:

8. Ընդհանրապես ութ, ութն կամ ութը ձևն ունի. մասնավոր ձևեր են՝ Սլմ. ութթը, Տիգ. ութթէ, Մրդ. ութթա, Անտ. օթը, Սվեդ. օթթը, Ասլ. իթը, Գոր. Ղրբ. Մղր. օթ, Ազլ. օթթ:

9. Ընդհանրապես՝ ինը կամ ինը ձևով. ինչպես՝ Ղրբ. Մղր. ինը, Պլ. ինը. մյուսներն ունեն՝ Մրդ. Սլմ. իննա, Տիգ. իննէ, Ալշ. Մկ. Մշ. Վն. ին, Ասլ. ինը, վինը (այս վերջինը առաջացել է տասնըվինը, քսանըվինը... ձևերից և անկախ բառ դարձել), Ոզմ. էն, Անտ. էնը, Ազլ. այնը:

10. Ընդհանրապես՝ տասն, տասը, տաս ձևով. մյուսներն ունեն. Գոր. Երև. Կր. Ղրբ. Մղր. Շմ. Սլմ. տասսը, Ազլ. տասը, Մրդ. տասա, չճ. դօսը, Ջթ. դօսը, դօսը, Անտ. տասը, Սվեդ. դուսը:

Տասնավորները հետևյալ ձևով են.

20. Ընդհանրապես՝ քսան ձևն ունեն. ինչպես՝ Պլ. Ղրբ. Երև. քսան, մասնավոր ձևեր են՝ Մրդ. քսան, Մղր. քքսան, չմշ. քսօն, Ջթ. քսօն, քսօն, Սվեդ. քսուն, Ազլ. քսուն, չճ. սօն, Լի. Վն. կսան:

30. Բոլորն էլ ծագում են հոնտուն կամ հոնուն ձևից. այսպես ունենք՝ Երև. յէնտուն, Վն. յէնուն, չճ. էքսուն, Ախց. Ջթ. Կր. չմշ. Ննխ. Պլ. Ռ. Տիգ. էնուն, Մրդ. Սլմ. յէնուն, Ալշ. Մշ. յեռուն, Մկ. հէնուն, Ոզմ. հեռօն, Շմ. յառաուն, Տփ. յարաուն,

յարսուն, *Խրբ.* առսուն, *Սեր.* առսուն, յառսուն, *Ան.* էսսին, *Աս.* էսսին, *Տիայն* և. *Սչ.* էրսուն, *Ղրբ.* քրէսուն, *Գոր.* քրէսուն, *Շմ.* իրէսուն, *Ջղ.* արասուն, յարասուն, *Ազլ.* արասուն, *Մղր.* արասուն, արասուն, *Հւր.* յարսուն *ձկերն են, որ ցույց են տալիս* երեսուն կամ երսուն:

40. *Ծագում* են՝ քառասուն, քառսուն կամ քառասուն, քառասուն *ձկերից.* առաջինից են՝ *Երև. Շմ.* քառասուն, *Երկրորդից են՝ Ալշ. Ախց. Ջթ. Լն. Խրբ. Կր. Հմշ. Մշ. Մրղ. Ննխ. Պլ. Ռ. Սեր. Սչ. Սլմ. Տիգ.* քառսուն, *Հճ. քարսուն, Մկ. Վն. քառսուն, Սվեր.* քառսուն, *Սչ. քառսին, բայց նաև Պլ. Տփ.* քարսուն *երրորդ ձկից են՝ Շմ. քառասուն, Գոր. Ղրբ. քոռասուն, չորրորդից՝ Մղր. քոռասուն, Ազլ. քոռասուն.*—*առանձին է նույն՝ Ջղ. գառասուն:*

50. *Ծագում* են հիսուն, իսուն, հիսսուն, հիքսուն, իցցուն, իծծուն *ձկերից. այսպես՝ Ալշ. Մշ. յիսուն, Մկ. Ննխ. հիսուն, Ոզմ. հէյսոն, Լն. Հճ. Սչ. Սլմ. Վն. Տփ.* իսուն, *Ննխ. իսուն, սուն, սին, Աս. իսին, Ազլ. Հմշ. Ռ. հիսսուն, Տիգ. Մրղ. իսսուն, Կես. իսզուն, Ջթ. իսսոն, իսսոն, Սվեր.* իսսոն, *Ալշ. Ջղ. յիքսուն, Երև. իացուն, Գոր. Ղրբ. Մղր. Սլմ. Մրղ. իցցուն, Ախց. Կր. իցծուն, Սեր. յիծծուն, Պլ. իծծուն, Խրբ. իծուն, Յղ. իցուն:* *Համշենի մահմեդական հայոց մեջ՝ իսրն:*

60. *Ծագում* են վարսուն, վարքուն, վացցուն *ձկերից. այսպես՝ Ալշ. Երև. Լն. Շմ. Ջղ. Վն. Տփ.* վարձուն, *Մկ. վարսուն, Խր. և Ննխ. վասուն, Մշ. վասսուն, Հմշ. Ննխ. վարսուն, Սվեր. վարքուն, Սեր. վարձուն, Ջթ. վարծոն, վարձոն, Գոր. Ղրբ. Մղր. վացցուն, Մշ. վածուն, Աս. վածին, Ազլ. Ախց. Կր. Մրղ. Ռ. վացցուն, Հճ. վածծուն, Խրբ. վածձուն, Պլ. վածձուն, Սլմ. Սչ. վացցուն:*

70. *Ծագում* են յոթանասուն, օխթանասուն, օխթանասուն և օխթանացցուն *ձկերից. այսպես՝ Մկ. յօթանասուն, Մշ. յօտանասուն, Սչ. օխթանասուն, Երև. Լն. Շմ. Սլմ. Ջղ. Տփ. օխտանասուն, Ազլ. օխտանասուն, ըխտանասուն, Ղրբ. օխտանասուն, ոխտանասուն, Մրղ. օխտանացցուն, Մղր. ըխտանասուն, մյուսները գործածում են թրք. yetmiş ձկը:*

80. *Ծագում* են ութսուն, ուրքուն, ուրասուն, ուրանասուն, ուրանացցուն *ձկերից. այսպես ունենք՝ Լն. Մկ. Ջղ. ուրսուն, Ախց. ուցծուն, Սեր. ուրձուն, Սչ. ուցուն, Մղր. քրնասուն, Գոր. Ղրբ. ուրասուն, Ազլ. ուրասուն, օրանասուն, Ազլ. Երև. Մկ. Շմ. ու-*



բանասուն, Մլմ. ուրբանասուն, Մրդ. ուրբանածնուն. մյուսները գործ են ածում թրք. seksen ձևը:

90. Ծագում է հննուն, իննասուն, իննամասուն, իննահացուն ձևերից. այսպես են՝ Ախց. Երև. Ջդ. իննըսուն, Տփ. ինըսուն, Սչ. Մշ. ինուն, Հնդ. Սչ. նըսուն, Լն. նուսուն, Ղրբ. Ազդ. իննասուն, Մզբ. Գոր. իննասուն, Ղրբ. ըննասուն, Տփ. իննասուն, Շմ. Մլմ. իննանասուն, Մրդ. իննանացուն, իննամացուն. մյուսները գործ են ածում թրք. doxsan բառը:

Մեծագույն թվերն են՝

100. Բոլորն էլ ծագում են հարյուր բառից՝ ձայնական զանազան փոփոխություններով. այսպես են՝ Ասլ. հարիւր, Գոր. Ղրբ. հարիւր, Ախց. Ակն. Երև. Լն. Հմշ. Ննխ. Կր. Պլ. Ռ. Սեր. Սչ. Տփ. հարուր, Երև. Խրբ. հարիւր, Հմշ. հաուր, Շմ. հառուռ, Ալշ. Մշ. Տիգ. հարիւր, Մժ. հառիւռ, հառիւ, Մկ. Վն. խարիւր, Մրդ. խարիւր, Ոզմ. խարէր, Սվեդ. հարէր, Մզբ. Կես. ճէրիւր, Ազլ. ճէօրիւր, Ջդ. խէրուր, Մլմ. խոյիւր, Ջթ. ճէյիյ, ճէրիւր, Հճ. ճէյիյ, ճէյի:

1000. Բոլորն էլ ներկայացնում են հազար ձևը՝ զանազան ձայնափոխությամբ. այսպես են (չհիշելով անփոփոխ ձևերը)՝ Ղրբ. հազար, հզէր, Ալշ. Մշ. հազար, Ասլ. Տիգ. հազար, Երև. հզար, Սվեդ. հազարուր, Հճ. հազոյ, Հթ. հազոյ, հազոր, Ազլ. հրզգէօր, Մզբ. հիզէր, հիզզէր, Մկ. Ոզմ. Մլմ. Վն. խազար, Մրդ. խազար, Ջդ. դզար (որ նախկին խզար ձևից է, գ-ի մոտ խ դառնալով թրթռուն):

Իյուր բառը իբրև առանձին թիվ չի գործածվում, բայց կա զանազան ասությունց մեջ՝ իբրև ասնթիվ, անհամարձ, այսպես՝ Սեր. բ'իւր, Ջթ. բ'իւր բ'իւրուց, բիւ բիւուց, Ասլ. բ'իւր հազար, Ախց. Երև. բ'իյուր հազար, Խրբ. բ'իյուր, Ջդ. բ'ուրք բ'ուրուց, Տիգ. Վն. փիյուր, Պլ. փիյուր հազար (անքամ ըսեյ), Ալշ. փուր հազար, Ռ. փիյիւր, Մկ. ճիյուր փիյուր կա նաև Ննխ. համբիւր՝ իբր ճհարյուր բիւր, խիստ շատձ, Հմշ. պիւր-հազար բրիւր հազար, անթիվ անհամարձ:

Այս ընդհանուր ակնարկից հետո տալիս ենք մի քանի կարևոր բարբառների բացարձակների ցուցակը:

Երևանի բարբառ.

1 մէկ, 2 էրկու, 3 իրէք, 4 չորս, 5 հինգ, 6 վէց, 7 օխտը, 8 ութ, 9 իննը, 10 տասը, 20 քսան, 30 յէնտուն, 40 քառասուն, 50 իսցուն, 60 վաթսուն, 70 օխտասուն, 80 ութասուն, 90 իննըսուն, 100 հարուր, 1000 հազար, հզար:

**Պոլսի բարբառով՝**

մէդ, էրգու(ք), իրէք, չօրս, հինգ, վէց, օխտը, ութը, ինը, դասը, քսան, էսսուն, քառասուն, իծծուն, վածծուն, յէթմիշ, սէքսէն, դօխսան, հարուր, հազար:

**Վանի բարբառում՝**

1 մէկ, 2 էրկու, 3 իրեք, 4 չորս, 5 խինգ, 6 վեց, 7 յօթ, 8 ութ, 9 ին, 10 տաս, 20 կսան, 30 յեռսուն, 40 քճասուն, 50 իսուն, 60 վաթսուն, 70 յեթմիշ, 80 սահյսան, 90 դօխսան, 100 խարիր, 1000 խոզոր:

**Ագուլիսի բարբառով.**

մույն, որկիլ, իրիք, չուրք, հանգ, վիցց, էխտ, օթթ, այնը, տօսսը, քսսուն, արասսուն, քառասսուն, հիսսուն, վացցուն, օխտանասուն, օթանասսուն, իննասուն. հէօրիւր, հզգէօր:

**Համշենի բարբառով.**

1 մէդ, 2 էրգու, էրգուս, 3 իրէք, 4 չէօյս, չիւյս, չէյս, չօյս, 5 հինգ, 6 վէց, վից, 7 օխտը, 8 ութը, ուտը, 9 ինը, իննը, 10 դասը, 20 քսօն, սօն, 30 էսսուն, 40 քառասուն, 50 իսուն, հիսսուն, 60 վածծուն, վաթցուն, 70 օխտընասուն, 80 ուծծուն, 90 ընըսուն, 100 հարուր, 1000 հազար:

**Ղարաբաղի բարբառով.**

մին, էրկու, իրէք, չէօրք, հէնգյ, վէցց, օխտը, օթ, իննը, տասսը, քսան, ըրէսուն, քոռասուն, իծցուն, վացցուն, ուխտընասուն, ութասուն, ըննասուն, հարիւր, հազար (հզէր):

**Ջեյթունի և Հաճինի բարբառներով.**

Ջթ.	Հճ.
1 մէդ, մեգ	—
2 իյգու, իյգուք	էյգու
3 իյիք	ժեք
4 չիւյս	չոյս
5 հինգ	հինգ
6 վից	վեց

7	յէօթը	յօթը
8	ութը	ութը
9	ինը	ինը
10	դօսը	դօսը
20	քսսօն	սօն
30	էքսուռն	երսուռն
40	քառսուռն	քարսուռն
50	խսսօն, հիսսօն	իսուռն
60	վաթձօն	վաձձուռն
70	յէթմիշ	ն.
80	սէքսան	»
90	դօխսօն	»
100	հէյիյ	հէյիյ, հէյի
1000	հազօյ	հազօյ

Սվեդիայի բարբառով.

Հաջի Հապիպլի գ.

	մէդ'
2	ըրգէօք
3	ըրք
4	չուրս
5	հէնգ
6	վից
7	յութթը'
8	էօթթը
9	էննը
10	դուսար
20	քսուռն
30	յասսօն
40	քասսօն
50	յիսսօն
60	վտթցօն
70	յիթմիշ
80	ստքսան
90	դօխսան
100	հտըէր
1000	հազդուր

Յողուռն—Օլուգ

մէ
ըրգ'տք
էրք
չիւք
հանգ
վէյց
յօութ
այթ
այնը
դօուս:

**Մեղրու բարբառով**

1 մին	20 քրսսան
2 էրկու	30 արասուն, արասսուն
3 իրիք՛, իրէք՛	40 քոասսուն
4 չուրք	50 հիցցուն, իցցուն
5 հինգ՛	60 վացուն, վացցուն
6 վրէց	70 օխտանասուն, ըխտընասսուն
7 օխտը	80 ըթասսուն
8 օթ	90 իննասսուն
9 իննը	100 հէրիւր
10 տասը	1000 հիզէր, հիզզէր:

Կան թվեր, որ բազմազան ձևեր են ստացել, օրինակ՝ Ազու-  
լիսի բարբառում 80 դառնում է՝ օթանասուն, ութանասուն, ու-  
թասսուն, ըթասսուն, ութուն, ըթընասուն:

90 դառնում է՝ իննասուն, իննանասսուն, ըննանասսուն:

Մարաղայի բարբառում բացարձակները ընդհանրապես 2  
ձև են ստանում. մենակ և առանձին գործածված ժամանակ ու-  
նեն հետևյալ ձևերը.

1 մէկ՛, 2 էրկու, 3 իրիք՛, 4 չուերս, 5 լօինգ՛, 6 վիցց, 7  
օխտա, 8 ութթա, 9 իննա, 10 տաստա:

Սրանք ուրիշ բառերի մոտ գտնված ժամանակ ստանում  
են հետևյալ՝ ձևերը.

1 մեկ՛, բաղաձայնի մոտ ընկած ժամանակ դառնում է մէյ,  
մէ, ինչպես՝ մէյ մարթ, մէ մարթ, մէյն էլ Վմեկն էլ:

2 էրկու. հոլովման մեջ կամ էլ շաղկապի մոտ դառնում է  
էրկուս. ինչպես՝ էրկուսին, էրկուսն էլ:

3 իրիք՛, բաղաձայնի մոտ դառնում է իրիյն. ինչպես՝ իր-  
իյն մարթ «3 մարդ», իրիյնն էլ «երեքն էլ»: Երկու բառի հետ  
հարադրությամբ գործածվելիս կորցնում է նախաձայնը. էրկու քիք:

5 խիցց. բաղաձայնի մոտ խիյ. ինչպես՝ խիյ մարթ: խիյ  
խաց «5 մարդ, 5 հաց»:

6. վիցց, բաղաձայնի մոտ վիս. ինչպես վիս կով «վեց կով»:

7—10. օխտա, ութթա. իննո, տաստա թվականները ձայնա-  
վորների մոտ կորցնում են իրենց վերջին ձայնավորը: Բաղա-  
ձայնների մոտ մնում են անփոփոխ, էլ շաղկապի մոտ կամ վեր-  
ջին ձայնավորը դարձնում են ն և կամ վրան ավելացնում են  
ն. ինչպես՝ օխտա մարթ, օխա ախշիյ, ութթ օց, ինն էծ, ութն էլ

կամ ուրբա՞ն էլ, ին՞ն՞ էլ, ին՞ն էլ: Ուրբ բառը տասի հետ կրկըն-վելու ժամանակ բացառաբար լինում է ութուն-տասսա:

Մ ա ն ո թ թ յ ու ն . — 1. «Երկու» բառը բարբառներում ստանում է բացի մայր ձևից, նաև հգ. ուղ. երկուք և հգ. հյց. երկուս ձևերը: Մրանցից առաջինը (երկուք) գործածական է հը ճյուղի բարբառներում (օրինակ՝ Պոլիս), իսկ երկրորդը (երկուս) Ում ճյուղի բարբառներում (օրինակ՝ Երևան): Բայց այս ձևերը չեն գործածվում գոյականի հետ, այլ միայն առանձին եղած դեպքում, կամ հոլովման ժամանակ. օրինակ՝ երկու մարդ, երկու կնիկ, երկուքը — երկուսը, երկուքն ալ — երկուսն էլ, երկուքեն — երկուսից: Հաշվելու ժամանակ էլ ասվում է Պլ. մեկ, երկուք, իրեք... Երև. մեկ, էրկուս, իրեք...:

Կարևոր է նկատել նաև, որ բոլոր բարբառներում էլ բացարձակ թվականների Ը հանգը՝ հոլովման ժամանակ, կամ ալ, էլ շաղկապի մոտ և կամ էական բայի սահմանականի հետ դառնում են. ինչպես՝ օխտնիս, ութնով, ինն ալ, տասն էլ, տասներկուսն էլ նույնը նաև դասականների, բաշխականների և չափականների կաղաթյան մեջ. ինչպես՝ օխտնում, ութնոց, քսանըինճակամ և այլն.

Տասնավորների և միավորների միացումը կատարվում է բնականաբար ու շաղկապով, որ, սակայն, երբեք չի պահվում անփոփոխ. այլ ըստ բարբառի կամ բոլորովին ջնջվում է, կամ ձայնավորի մոտ է ջնջվում, կամ վերածվում վ-ի և կամ դառնում ք. այսպես՝ Երևանի բարբառում ունենք տասննից, քսանչորս, եռեսուն վեց, ութանասունուր և այլն (առանց շաղկապի):

Պոլսի բարբառում միացումը կատարվում է հետևյալ երեք ձևով.

1. Տասնյակները ստանում են ը վերջավորություն, իսկ միավորը անփոփոխ կցվում է նրան, ինչպես՝ քսանը չորս, իծծունը հինգ, սեքսենը ութը, քառսունը ինը և այլն. 2. Տասն բառը այս դեպքում դառնում է դասեր, նույնիսկ ձայնավորի մոտ. ինչպես՝ դասեր չորս, դասեր օխտը, դասերուրթը, դասեր ինը և այլն: 3. Միայն երկու և երեք թվականները միացման ժամանակ ստանում են վ, որ և (ու) շաղկապի կրճատումն է և այս ժամանակ տասը բառը դառնում է դաս, իսկ մյուս տասնյակները չեն ստանում ը վերջավորությունը. այսպես՝ դասվերգու, դասվիրեք, քսան վերգու, քսան վիրեք, էսսուն վերգու, էսսուն վիրեք, սեքսեն

վէրգու, դոխսան վիրէք և այլն (ըստ Թեոդիկի, Պոլսի հայեվարը, էջ 1722, կա թե՛ դասերութր, և թե՛ դասերվութր):

Նոր-Նախիջևանի բարբառումն էլ տասնավորների և միավորների միացումը կատարվում է մի քանի ձևով. տասն բառը կարող է ստանալ պարզ տասն և կրճատ տաս ձևը, որից էլ՝ տաշ և իր ու միավորի միջև կարող է դրվել ը, վը կամ միացյալ ըվ. կարող է նաև միավորը միանալ պարզ հարադրությամբ: Այսպիսով, կունենանք 6 տարբեր ձև. այն է՝ դաս, դաշ, դասն, տասներ, տասվ և դասերվ:

Եթե քննենք այս բոլորի ծագումը և մեկնությունը, կտեսնենք, որ հնապես եղել է 3 ձև. այն է՝ տասնավորների և միավորների պարզ հարադրություն և կամ նրանց միությունը և, ու շաղկապներով: Պարզ հարադրության մեջ տասն բառը կամ ֆացել է ամբողջությամբ և կամ բաղաձայնների խճողումից խուսափելու համար հապավել է մ ձայնը, որից հետո և ձայնն էլ՝ հաջորդ բաղաձայնների ազդեցությամբ դարձել է շ:

Պարզ և ամբողջական հարադրությամբ ունենք միայն տասներկու, որ՝ աալիս է դասերգու կամ դասեքգուս. մ բաղաձայնի կորուստով ունենք տասերեք և տասչորս, որոնք աալիս են դասմէք, դասչորս. միևնույն բառերում և ձայնը նոր հնչումով դառնալով շ՝ ստանում ենք դաշմէք, դաշչորս: Եւ շաղկապով միանում են երկու, եօթը, ութը, իմը թվականները, որոնց մեջ ե կրճատվելով՝ լինում է ը, որով ունենում ենք՝ դասերվէրգու, դասերվօխար, դասերվութր, դասերվիեր (իբր՝ տասներկու, տասներեօթր, տասներութր, տասներիմր): Միևնույն ձևի մեջ ե և նրա հետ նաև մ ջնջվելով՝ առաջացել է դասվ. այսպես, ունենք՝ դասվէրգու, դասվիրէք:

Ամենից ավելի հաճախ են ու շաղկապով միացած ձևերը, որոնց մեջ ու իբր միջին ձայնավոր կրճատվելով՝ լինում է ը, որով ունենում ենք՝ տասեր-ձևը. այսպես են՝ դասերմէգ, դասերմէք, դասերչորս, դասերհիմգ, դասերվէց, դասերօխար, դասերութր, դասերիեր:

Բնական է սպասել, որ կրկին շաղկապներից և կցված լինելով ձայնավորով սկզվող միավորների հետ, իոկ ու՝ բաղաձայնով սկզվողների հետ, ինչպես է իրոք: Բացառություն են կազմում միայն 7, 8, 9 թվականները, որոնք կարող են ստանալ թե՛ և, և թե՛ ու շաղկապները. սրանցից առաջինը (և) կանոնավոր է, իսկ երկրորդը (ու) անշուշտ 4, 5, 6 միավորների նմանությամբ: Աճառյան — 17

Սկսած 21 թվից մինչև վերջ՝ տասնավորների և միավորների միացումը կատարվում է պարզ հարադրությամբ. ք ձայնը չի կարող ներմուծվել, բայց վ կարող է երբեմն ներմուծվել. այսպես՝ սովորաբար ասում են քսանմեկ, քսաներգու, քսանծեք, հասունջորս, քառունգնից և այլն, երբեմն նաև քսանվերգու, քսանվիրեք, քսանվութը և այլն, բայց ոչ երբեք՝ քսանըմեկ, քսանըջորս, քսանընից և այլն, ինչպես գտնում ենք բոլոր բարբառներում.

Սուչավայի և Լեհաստանի բարբառներում միացումը կատարվում է հետևյալ ձևով. 1. տասնավորի և միավորի միջև դրվում է ք. 2. ձայնավորով սկսվող միավորների մոտ (2, 3, 9) դրվում է վ շաղկապը. 7 և 8 թեև ձայնավորով են սկսվում, բայց նույն շաղկապը չեն ստանում. իսկ 9 կա երկու ձևով էլ. Ըստ այսմ ունենք 11 դասերմեկ, 12 դասվերգու(ս), 13 Լհ. դասվիրեք—Մչ. դասֆիրեք (ֆ ազդված ս-ից), 14 դասըջորս (Լհ. դասըչըբս), 15 դասընից, 16 դասըվից, 17 դասըբոխտը, 18 դասըբութը, 19 դասըբիրը, դասըվիրը, 21 քսանըմեկ, 22 քսանվերգու, 23 քսանվիրեք, 24 քսանըջորս (Լհ. քսանըչըբս), 25. քսանընից, 26 քսանըվից, 27 քսանբոխդ՛ը, 28 քսանբութը, 29 Լհ. քսանվիրը:

Նոր-Ջուղայի բարբառում տասնավորների ու միավորների կցումը կատարվում է 4 ձևով. ձայնավորով սկսվող միավորները ուղղակի կցվում են տասնավորներին՝ առանց շաղկապի. այս դեպքում դրվում է տասն և ոչ բնավ տասը ձևը (տասնոխտը, քսանութը): Բաղաձայնով սկսվող միավորները տասն բառի հետ միանալու ժամանակ՝ կամ ավելացնում են ք ձայնը, կամ առնում են տասը ձևը (տասնըխինգ) և կամ այս վերջինից կրճատելով ք ձայնը դարձնում են տաս (տասըխինգ). այս պարագային ս ձայնը չի մոտ գտնված ժամանակ դառնում է շ՝ տաշըք (14) բառի մեջ: Պսանից սկսած՝ բաղաձայնով սկսվող միավորի մոտ դրվում է պարզ տասնավոր ձևը (քսանըխինգ, վաթսունվեց) կամ երկուսի միջև մտնում է ք ձայնը (քսանըխինգ, վաթսունըվեց):

Հարյուրը միանում է 3 ձևով. պարզ հարադրությամբ, ու շաղկապով, կամ այդ շաղկապը դարձնելով ք. իսկ հազարը միանում է կամ պարզ հարադրությամբ, և կամ ու շաղկապով: Օրինակ՝ խէրուրութսան, խէրութ քսան, խէրութ ու խինգ, խէրութ խինգ, խէրութը խինգ, զգար ու խէրութ, խէրութ ու քսան, զգար ու խէրութը քսան, յերկու զգար խէրութ քսան և այլն:

Պարզ բացարձակներով հաշվելու ժամանակ, պարսիկների նման, շատ անգամ ամեն մեկի վրա դրվում է ու շաղկապը. *ինչպես՝* մին ու, յերկույ ու, յիրեք ու, չոր ու, յսիմզ ու, վեց ու, օխտն ու, ութն ու, ինն ու, տասը:

Ազուլիսի բարբառում, երբ միավորը սկսվում է ձայնավորով, տասնավորին կցված ք (շաղկապը) կարող է կորչել. այսպիսով, ստացվում են բազմազան ձևեր. *ինչպես՝* 11 տըսըմույն, 12 տըսըմաքկի, տըսըմաքկի, 13 տըսըմիրիք՛, տըսըմիրիք՛, 14 տըսըմուրք, տըսըմուրք, տըսըմուրք, 15 տըսըմաքք՛, 16. տըսըմվիցց, տըսըմվից, 21 քսըսըմույն, քըսըմույն, 31 արասըսըմույն, արասըմույն, քըքսըմույն, 32 արասըմաքկի, քըքսըմաքկի:

Մարաղայի բարբառում միացումը շատ պարզ է. եթե միավորը սկսվում է ձայնավորով, տասնավորը ուղղակի կցվում է անփոփոխ. իսկ եթե միավորը բաղաձայնով է սկսվում, նրանց միջև մտնում է ք (շաղկապ). այս դեպքում տաստ բառը ստանում է տասն և տասը ձևերը: *ինչպես՝* տասըմեկ՛, տասնէրկու, տասըմուրք, տասըմիսից, տասըմվիցց, տասնօխտ, տասնութք և այլն: Անավաստիկ մեծ թվի մի օրինակ. ութքա միլյուն յիյ յաբիր յէսունը վիս յազար օխտա յաբիր իսունը չու՛քս:

Ղարարաղի բարբառում էլ միացումը լինում է ք ձայնավորով. միայն 2 և 3 թվականները պետք չունեն այս հավելվածին և ուղղակի կցվում են. տասնավորը առնասարակ մնում է անփոփոխ, բացի տասը թվականից, որ այս դեպքում միավորների հետ իբրև մի ամբողջութուն կազմելով, հետևում է շեշտադրության ընդհանուր օրենքներին և դառնում տըսն. օրինակ՝ տըսըմին, տըսնէրկու, տըսըմիրէք, տըսըմուրք, տըսըմօխտը, քսաըմիներ, ուխտըմասունը օխտը, իննասունը իննը և այլն:

Համշենի բարբառում միացումը կատարվում է այսպես. տասնյակները ստանում են ք վերջավորութունը, իսկ միավորը անփոփոխ կցվում է նրան. *ինչպես՝* սօնը-չէօյա (24), իսունը-հիմզ (55), վաժժունը-վեց (66) և այլն: Ձայնավորով սկսվող միավորները ներմուծում են նաև վ, *ինչպես՝* սօնը-վօխտը (27), սօնը-վուտը (28), սօնը-վիներ (29), քառսունը վօխտը (47), իսունը-վուտը (58), օխտըմասունը-վօխտը (77), ուժժունը-վուտը (88), ըմբսունը-վիներ (99): Բացառաբար հրգու և իրէք միավորները թեև ստանում են վ, բայց տասնավորը չի ստանում ք. այսպես՝ սօն-վէրգու (22), սօն-վիրէք (23), հոսուն-վէրգու, իսուն-վիրէք (53) և այլն:



Այս դեպքում դասը բառը դառնում է դասեր՝ բոլոր միավորների մոտ, բացի երկու և երեք միավորներից, որոնց մոտ լինում է դաս. այսպես՝ դասերմէգ, դասվէրգո, դասվիրէք, դասերչէոյս, դասերնիմգ, դասերվէց, դասերվօխտը, դասերվուտը, դասերվիմը:

Սվեդիայի բարբառում միացումը կատարվում է միշտ տասնավորի և միավորի միջև դնելով ք շաղկապը (բացի 12, 13 թվերից, որոնք ստանում են վ և ասը բառն էլ դարձնում են դրս). այսպես՝

11 դըսնըմէզ՝, 12 գըսվըրգէօք, 13 դըսվըրք, 14 դըսնըչուրս, 15 դըսնըհէնգ, 16 դըսնըվիցց, 17 դըսնըյութթը, 18 դըսնըվէօթթը, 19 դըսնըվէննը, 21 քսուներմէզ՝, 22 քսունը ըրգէօք, 45 քառսունը հէնգ, 106 հորէրը վիցց, 110 հորէրը դուսսը, 145 հորէրը քառսունը հէնգ և այլն:

Ծանոթություն.—Վերի մէջ՝ 1 ձևը գործածական է միայն հաշվի մեջ. ուրիշ դեպքերում ասում են մէգ, մէյ մը:

Վանի բարբառում միացումը կատարվում է հետևյալ ձևով.

1) Տասն թվականը կրճատմամբ ստանում է արմըր ձևը, երբ հաջորդ միավորը սկսվում է բաղաձայնով:

2) Դառնում է արս-երկու և երեք թվականների մոտ, որոնց հետ միանում է վ շաղկապով:

3) Ստանում է արսն- ձևը՝ ձայնավորով սկսվող 7, 8 և 9 թվականների մոտ, որոնց հետ միանում է էվ շաղկապով:

Ըստ այսմ 11—19 թվականները ունեն հետևյալ ձևը.

11 արսնըմէկ, 12 արսվէրկու, 13 արսվիրեք՝, 14 արսնըչուրս, 15 արսնըխինգ՝, 16 արսնըվեց, 17 արսնըյոթ, արսնէվյոթ, 18 արսնէվութ, 19 արսէվին:

Մնացած բոլոր թվականները կցվում են առանց ուրեէ միացման կապի. ինչպես՝ 21 կասն-մէկ, 35 յեռսուն խինգ՝, 46 ք՝առսուն-վեց, 47 ք՝առսուն-յոթ, 59 իսուն-ին, 102 խարիր-էրկու, 103 խարիր-իրեք՝, 108 խարիր-ութ, 109 խարիր-ին, 1019 խոզոր-տասնէվին, 1259 խոզոր-էրկու-խարիր- իսուն-ին.

Չեյթունի բարբառում միացումը կատարվում է հետևյալ ձևով.

1). Տասնյակները ստանում են ք շաղկապը, իսկ միավորը անփոփոխ կցվում է նրան. ինչպես՝ դասնըմէգ, դասնըվից, քասնըվից, էսսունըր մեգ և այլն:

2) Ինչպես երևում է տրված օրինակներից, տասը և քսան բառերը բարդություն ժամանակ վերստանում են իրենց բնիկ ձևը (ա ձայնավորով և ոչ թե օ):

3) Տասը թվականը միավորի հետ միանալիս ստանում է դասեր ձևը ընդհանրապես, իսկ երկու, երեք, յօթը թվականների մոտ ստանում է դաս ձևը:

4) 30, 40, 50 և այլն թվականների ու ձայնավորը կարող է մնալ ու կամ դառնալ ր:

5) 10 և 20 թվականների միջին ձայնավորը, ինչպես նաև տասնյակների և միավորների միացման ր ձայնավորը կարող են փոփոխվել ձայնավորների ներդաշնակություն օրենքի համաձայն:

6) Այն միավորները, որոնք սկսվում են ձայնավորով (2,3,7,8,9), տասնյակների հետ միացման ժամանակ ստանում են վ (և, ու շաղկապների մնացորդը):

Հետ այսմ թվականների շարքը հետևյալն է.

11 դասըմեք, 12 դասվիյգուք, 13 դասվիյիք, 14 դասըչիյս, 15 դասըհինգ, 16 դասըվից, 17 դէօսվէօթը, 18 դէսնէվութը, 19 դէսնէվինը, 20 քօսօն, 21 քսանըմէգ, 22 քսանըվիյգուք, 23 քսանըվիյիք, 24 քսանըչիյս, 25 քսանըհինգ, 26 քսանըվից, 27 քսէնէյէօթը, քսանըյօթը, 28 քսէնէվութը, քսանըվութը, 29 քսէնէվինը, քսանըվինը, 30 էսսուն, 31 էսսունըմէգ, եոսընըմեք, 32 էսսունվիյգուք, էսսընըվիյգուք, 33 էսսունվիյիք, էսսընըվիյիք, 34 էսսընըչիյս, 38 էսսընըվութը, 39 էսսընըվինը, 51 ըսսընըմեք, հիսսօնըմէգ, 52 ըսսընըվիյգուք, հիսսօնըվիյգուք, 58 ըսսընըվութը, ըսսընըվութը, հիսսօնըվութը և այլն:

Համշենի բարբառում հարիւր և հազար բառերը թե՛ միավորների և թե՛ տասնավորների մոտ ստանում են ր, բայց ինչպես տասնավորները, նույնպես և միավորները որևէ հավելված չեն ստանում. օրինակ՝ հարուրը մէգ, հարուրը էրգու, հարուրը իրէք, հարուրը չէօյս, հարուրը օխտը, հազարը իրէք, հազարը հարուրը ինը, հազարը հարուրը քառսունը վօխտը: Հարուր և հազար բառերը միավորի և տասնավորի հետ միացած ժամանակ կարող են ստանալ նաև ու շաղկապ. ինչպես՝ հարուր ու մէգ, հարուր ու չէօյս, հազար ու քառսուն և այլն: Այս ու շաղկապը ամենահին ձևն է, որ ապա դարձել է ր և այնուհետև ջնջվել. Ոմանք հներից պահում են դեռ ու ձևը, ընդհանրապես գործածվում է ր ձևը:

Ղարաբաղի բարբառով ասվում է՝ տըսըմբին, տըսեթկու, տըսմիրեթ, տըսմըշօրթ, տըսըթօխտը, քսամըրինը, ուխտընասունը օխտը, իննասունը ինը և այլն.

Ընդհանրապես այս միացումը (ը) կատարվում է միայն տասնավորի և միավորի միջև. հարյուրավորներն ու հազարավորները կցվում են առանց որևէ միացուցիչ կապի. այսպես՝ Ագլ. հէօրիւր մույն 101, հզզէօր մույն 1001, Մրդ. ութթա միլյուն խինթ՝ խորիբ յէսունը վիսս խտզդոր օխտա խտրիբ իստնը շուիրս:

Պուսի բարբառումն էլ հարյուր և հազար կցվում են մյուս թվականներին առանց որևէ կապի. բայց սրանց մոտ էլ երկու և երեք միավորները դառնում են վերջու, վիրէթ, ինչպես՝ հարուր վերգու, հարուր վիրէթ, հազար վիրէթ. կարելի է ասել նաև՝ հազարը մէգ:

Միայն Ղարաբաղի բարբառն է, որ նաև հարյուրավորները և հազարավորները միացնում է ը-ով. ինչպես՝ հզէրը հենթ՝ հորիւրը ըրէսունը օթ (1538): Այսպես են նաև պարսկերենն ու քրդերենը (բայց ոչ թուրքերենը, որ ոչ մի միացում չգիտե). օրինակ՝

պրս. hazār u nuhsad u bist u panj—1925

քրդ. hezar w'nah-sad w'bist w'peinj—1925

թրք. bin dört yüz yigirmi beş—1425.

Այս բոլոր գավառական ձևերը, որ տեսանք, բացի սովորական ձայնական փոփոխություններից, որոնց մասին հանդամանորեն խոսվում է ձայնաբանության մեջ, ներկայացնում են հետևյալ ձևափոխությունները.

1) Համաբանություն (անալոգիա).—Ընդհանրապես թվականների մեջ շատ հաճախ է երևում համաբանական կազմության՝ ամեն լեզվի մեջ էլ. օրինակ՝ բոլոր բալթիկ-սլավոնական լեզուների մեջ էլ «ինը» բառը որ հնդ. néūṅ ձևն ունի, իր նախաձայն Գ դարձել է d հաջորդ «տասը» dék'ṅ բառի ազդեցությամբ. այսպես՝ հսլ. deveti, լիթ. devyni, ռուս. ДЕВЯТЬ, սլովակ. devät, սլովեն. devêt և այլն.—պրս. nuš «ինն» ստացել է մի ավելորդ վերջաձայն h հաջորդ 10-dah-ի ազդեցությամբ. նույնպես panzdah (15) բառի Z ձայնը ազդել է մյուսների վրա և ստացվել է yāzdah 11, duvāzdah 12, sizdah 13, šanzdah 16, nuvāzdah 19, որոնց բոլորի մեջ Z ավելորդ է:

Նույնիսկ հնագույն հայերենի շրջանում հնդ. ok'tō քոթա՝ ազդեցությամբ նախորդ septu բառի՝ դարձել է optō, որից հյ. ութ, ճիշտ ինչպես որ երեսկան հունարենում առաջացել էր ὀπτω:

Բարբառներում հին հայերենի ութ ձևը դարձել է ութն, ութը՝ ազդեցությամբ եօթն, եօթը և ինն, ինը բառերի. միայն Ազլ. Գոր. Մզր. Ղբբ. պահում են օթ<ութ՝ առանց նույն հավելվածի: Երեվանում նոր սերունդը ավելի առաջ տանելով համաբանությունը շորս, հիմզ, վեց թվերն էլ դարձրել է նույն ոճով շորսը, հիմզը, վեցը, — երեսուն դարձրել է եռեսուն՝ ազդեցությամբ քառասուն բառի. — Լնդհակառակը, Պլ. կա նաև քաքսուն, ուր ո դարձել է ք՝ ազդեցությամբ երեսուն բառի. Այս եռեսուն ձևը այնքան սովորական է դարձել, որ մինչև անգամ երբեմն մտնում է զրական լեզվի մեջ: Այսպես, Ա. Տյումա, Փոզեֆ Պալսամո, Թրգ. Կ. Նազման, Ձմիւռնիա 1872, հտ. Ա՝ զրված է միշտ եռեսուն, կամ եսուն (ինչպես՝ էջ 35 եռեսուն, էջ 91 չորս անգամ եսուն, էջ 147 և այլն):

Նոր-Ջուղայի բարբառում գլառասուն բառի սկիզբը ձևացած զ անշուշտ առաջացել է յարասուն, յիքսուն թվականների նախաձայն թրթոռուն յ-ի ազդեցությամբ:

Ութսուն և ինեսուն բառերը՝ ազդեցությամբ եօթանասուն-ի, դարձել են մերթ ութսուն, ինեսուն և մերթ ութանասուն, ինեսանասուն, որոնց մեջ ավելացել է ավելորդ ա կամ անա: Բայց եօթանասուն, ութսուն, ինեսուն՝ հետևել են նաև վաքսուն բառին, որի մեջ քս ավել է քց կամ ցց, և իրենք էլ դարձել են օխքանացցուն, ուքանացցուն, ինեսանացցուն: Խր. և Ննխ. վասուն 60 ձևը հայտնի չէ, թե առաջացած է վաքսուն ձևից կրճատմամբ, թե հիսուն բառի նմանությամբ. բայց յիսուն շատ տեղ դարձել է յիքսուն, իցցուն, իձձուն, ազդեցությամբ նույն վաքսուն, վացցուն, վաձձուն ձևերի: Այս վացցուն ձևի նմանությամբ Ղարաբաղի բարբառում կազմված է նաև մի նոր թվական՝ քացցուն, որ առանձին գոյություն չունի իբր թիվ, սակայն չափազանցություն ցույց տալու համար գործածվում է 60-ից հետո 70 բառի տեղ, բայց ավելի իբր շատ նշանակությամբ. օրինակ՝ հէյ, իցցուն վացցուն քացցուն տրեկան ա:

2) Կրկնություն.— Շատ թվականներ սաստկության համար կրկնում են իրենց բաղաձայնը. Կրկնությունը շատության նշան է. բայց շատությունն էլ սուբեկտիվ գաղափար է. շատ է

վեցը, եթե տարիները մասին է, բայց շատ փոքր է վեցը, եթե վայրկյանի կամ րոպեների մասին է: Ըստ այնմ, մի խումբ թվեր կրկնել են իրենց բաղաձայնը՝ անշուշտ համարվելով «շատ»։ այսպես են՝ զանազան բարբառներով վեցը, եօթը, ութը, իննը, տասը, քսան, երեսուն, քառասուն, քառասուն, յիսուն, ութասուն կամ ութանասուն, իննասուն: Նման երևույթ նկատում ենք նաև չուվաշերենում, ուր թվականները կրկնակ բաղաձայնով են միշտ, երբ առանձին են գործածվում, և մեկ բաղաձայնով՝ երբ իրենց հետ գոյական ունեն. ինչպես՝ perre՝ մեկ, ikke երկու, visysʹe երեք և այլն. բայց per sʹən, ike sʹən, visʹe eʹən «1, 2, 3 մարդ» և այլն:

3) կրճատում.— Թվականները կյանքի մեջ ամենատարածական գործածություն ունեն. մարդիկ ստիպված են հաճախ ամենակարճ ժամանակի մեջ հարյուրավոր թվեր հաշվել. այս դեպքում բառերի կրճատումը ստիպողական երևույթ է: Մեր մեջ բոլոր միավորները միավանկ լինելով՝ ավելի կրճատվելու պատճառ և հնարավորություն չունեն:

Աֆրիկյան լուգանդա (բանտու) լեզվում թվականները 20-ից սկսած այնպես են կրճատվում, որ գրեթե անճանաչելի են դառնում: Ահա նախ միավորները. biri 2, satu 3, na 4, tano 5, kaga 6, samvu 7, nana 8, mwenda 9 և kumi 10.

Մրանից՝ amakumi-abiri 20, որ շատ երկար լինելով կրճատում են առաջին բառը և ասում են abiri 20. նմանապես 30 amakumi-asatu կամ կրճատ՝ asatu. այսպես մինչև 50. իսկ մնացյալը ուղղակի ասում են 60 nkaga, 70 nsamvu, 80 kinana, 90 kyende, 100 kikumi, որ պետք է հասկանալ kumi-kumi 10×10:

Նման երևույթ ընդհանրապես քիչ է պատահում մեր բարբառներում: Եղած օրինակներն են. ննխ. Հճ. Ժք, Անտ. բքք 3, Անտ. շուք, Զդ. շոք, Խտ. շոս 4, Հճ. սոն 20, ննխ. սուն 50, Հնդ. ՍՁ. սուն 90 (վերջինս Karst, էջ 219, համեմատում է պրս. ուն 9 թվականի հետ, բայց հայերեն ձևը ոչ մի կապ չունի դրա հետ և սովորական կրճատմամբ է առաջացել):

Միավորների սղման զարմանալի օրինակ է ներկայացնում լագերենը, ուր թեև կանոնավոր ձևով ունենք առ «մեկ», ժուռ «երկու», և այլն, բայց որոշ բարբառներում սրանք, ավելի կրճատվելով, դառել են.

Ա «մեկ» (հասել է անգլ. a ձևին).

ժու «երկու»,

խու ճհինգ»,  
 շքի ճեթը»,  
 վի ճտասը»:

Ըստ իս, այս ծայրահեղ սղումը նրանից է, որ լագերը խոսակցության մեջ ընդհանրապես չափազանց արագախոս են.

Հայ բարբառներում նման երևույթ չկա: Բայց կարելի է մեջ բերել Նոր-Նախիջևանցոց (որոնք նույնպես բավական արագախոս են) բարբառով երկու բառը, որ միանալով ճատ բառին, դառնում է էրզվադ ճերկու հատ», դասնէրզվադ ճ12 հատ».

Բայց երբ անցնում ենք տասնավորներին, արագ հաշվելու ժամանակ շատ տեղ կրճատումը սկսվում է: Այսպես՝

երեսուն դառնում է եռ,  
 քառասուն » քառ,  
 վաթսուն » վաթ

ասում են եռ մեկ (31), եռ երկու (32), քառ մեկ (41), քառերկու (42) և այլն: Նոր-Նախիջևանում հարյուր բառն էլ կրճատվելով դառնում է հարու կամ հար. շորս-հիմզ հարու մաներ. հար-տասը, հար-իտուց (110, 150):

Բարբառների մեջ ավելի տարօրինակ երևույթ պետք է համարել 70, 80, 90 թվականների թուրքական ձևերը yedmiş, seksen, doxsan (եթմիշ, սեքսեն, տոխսան). Այսպես են՝ Ասլանրեգ, Ջեյթուն, Հաճին, Խարբերդ, Կարին, Համշեն, Ալաշկերտ, Մուշ, Նոր-Նախիջևան, Կեսարիա, Գուլիս, Ռոտոսթո, Վան (նկատելի է, որ այս շարքում չկան Մուշավա և Լեհաստան): Մենք գիտենք, որ ընդհանրապես թվականները փոխ չեն առնվում, կամ եթե փոխ են առնվում, առնվում են բոլորովին տարբեր պայմաններում, հատկապես հաշվական կարողություն մեջ զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող ժողովուրդը ավելի բարձր աստիճանի վրա գտնվողից և այն էլ մեծ թվերի համար: Արդ՝ ինչպե՞ս է, որ հայերենը գիտե 100,000 և սակայն մի քանի բարբառներ օգտագործում են թուրքական 70, 80, 90 ձևերը, որ կցվում են ուղղակի հայերեն միավորներին. այսպես՝ եթմիշ մեկ կամ եթմիշը մեկ, եթմիշ վերկու, եթմիշ վիրեք, տոխսանը հիմզ և այլն: Ջեյթունի բարբառով ասվում է հէյիյսէքսան (180), իյգու հազոյ յէթմիշ մէգ (2071). Այս բանը բացատրվում է թուրքական բռնակալության այն ասիմիլատորական քաղաքականությունով, որի մասին խոսվել է վերը:

Չարմանալի է այն երևույթը, որ բնիկ հայ բարբառներ մուտք են գործել թուրքերենից 70, 80, 90 թվերը, իսկ թուրքական շրջապատի մեջ ապրող Մարաղայի բարբառը պահել է բնիկ հայ բառերը: Մարաղայի բարբառում թուրքերեն է միայն օնդէօրք շահը, «14 շահի» բառը, որ մի առանձին արծաթյա դրամի անունն լինելով՝ մնացել է (հմմտ. Կովկասում «տասնը-չորս շահի էլ մենք պարտք մնացինք» դարձվածք): Տրապիզոնցոց մեջ թեև գործածական են թրք. ձևերը, բայց բուն համ-շենցոց մեջ գործածական են վերի հայերեն ձևերը:

Մոտավորապես նման մի բան գտնում ենք լեզգիերենում, ուր ըստ օրինի 40 պիտի լիներ \*դ'ուեդդ'ադ (2×20), ինչպես ունենք բուդդ'ադ 60, դ'ուդդ'ադ 80, բայց որովհետև դ'ուեդդ'ադ և դ'ուդդ'ադ շատ նման էին իրար, ուստի դ'ուեդդ'ադ ձևը ջրնջվեց և տեղը դրվեց յախծըր (yaxcəɾ):

Ոչ թե բառի, այլ դրության փոխառություն է այն, որ որոշ բարբառներ իրենց տասնյակները կազմում են քսանորդական դրությամբ. այսպես՝ երկու քսան 40, երկու քսան մի տասը 50, երեք քսան 60, չորս քսան 80: Այսպիսի ձևեր զբանում ենք Թբիլիսիի բարբառում՝ վրացերենի ազդեցությամբ և Ղարաբաղի մի մասում (Հադրութ)՝ հին աղվաներենի ազդեցությամբ:

Կեսարիայումն էլ մամիկները տասնավորները հաշվում էին տասի վրա. այսպես՝ մեկ տասը, երկու տասը, երեք տասը և այլն (Ալպոյաճյան, Պատմ. հայ կես. Բ. 1665):

## 7. ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Մարաղայի բարբառում թվականները հոլովվում են գոյականների պես՝ հոլովման սովորական կանոնների համաձայն. երկու բառը կարող է ստանալ ս կամ յ. 7—10 թվականները կարող են իրենց վերջին ձայնավորը ջնջել կամ պահել. վերջին դեպքում ներդաշնակութային համար ստանում են յ ձայնը, օրինակ՝

Սեռ.—մէկի, էրկուսու կամ էրկույու, իրիքի, չուէրսը կամ չուէրսու, խինքի, վիցցի, օխտայը կամ օխտը, ութթայը կամ ութթը և կամ ութթու, ինտոյի կամ իննի, տասսայը կամ տասսը, քսասնը, յէսսուսու, քասսուսու, խտրիբի, խազարի, միլյունու:

**Բաց.**—մէկէն, էրկուսէն կամ էրկույէն, իրիքէն, չուրսէն, օխտայէն կամ օխտէն, իննայէն կամ իննէն, խորիւրէն և այլն:

**Գործ.**—մէկով, էրկուսով կամ էրկույով, իրիքով, չուրսով, օխտայով կամ օխտով, իննայով կամ իննով, խորիւրով, խողզորով և այլն:

Հարաբաղի բարբառում հորովումը կատարվում է հետևյալ ձևով.

**Սեռ.** Տր. Հայց.—մինին, ըրկունին, ըրէքին, չօրքին կամ չէօրէքին, հէնգին կամ հընգէքին, վէցին կամ վցէքին և այլն:

**Բաց.**—մինան, ըրկունան, ըրէքան, չէօրէքան, չօրսան, վըցըքան, կամ ա հավելվածով՝ մինանա, ըրկունանա, ըրրքանա և այլն, և այլն ըստ օրինի:

**Գործ.**—մինավ, ըրկունավ, ըրկունանավ, ըրէքավ, ըրրքանավ և այլն:

**Ներգ.**—մինում, ըրկունում, ըրկունանամ և այլն:

Բացարձակ թվական ածականները կարող են նաև առանձին գործածվել. այն ժամանակ կարող են ստանալ որոշիչ հոգ և իրրև գոյական հորովվել: Օրինակ՝ Պօլսի բարբառով՝

մէգը, մէգին (թվի համար) կամ մէգուն (անձի համար), մէգէն, մէգով.

էրկուքը, էրկուքին, էրգուքէն, էրգուքով.

էրէքը, իրէքին, իրէքէն, իրէքով.

չօրսը, չօրսին, չօրսէն, չօրսով.

հինգը, հինգին, հինգէն, հինգով.

վէցը, վէցին, վէցէն, վէցով.

օխտը, օխտին, օխտէն, օխտով.

ութը, ութին, ութէն, ութով.

իննը, իննին, իննէն, իննով.

գասը, գասին, գասնէն, գասնով.

քսանը, քսանին, քսանէն, քսանով:

Մնացյալն էլ նույն ձևով:

Ինչպես տեսնվում է և ինչպես վերևում ասացինք, այս դեպքում երկու բառը ստանում է հոգնակիի ք նշանը. իսկ իրրև ածական լինում է էրգու. եօրը, ութը, ինը, աստը պահում են իրենց ը հանգը և չեն ստանում ք հոգը (հոգը ստանում են միայն հորովման ժամանակ և կամ էական բայի և ալ շահկապի մոտ. ինչպես՝ վեցն ալ, օխտն է):



Գոյականաբար գործածվելիս կարող են թվականները նաև հոգնակի գործածվել. ինչպես՝

Իրէքները իստագ քրէ.

հինգերուն թէվերը գարջ էն.

իննեքը խօշօր խօշօր քրէցի.

մինչև անգամ կարելի է ասել՝

մէգէրը հաստ հաստ քրէ և այլն:

Այսպես է նաև Համշենի բարբառում, ուր հորովումը կատարվում է հետևյալ ձևով.

մէգը, մէգին, մէգըն, մէգով.

էրգուսը, էրգուսին, էրգուսըն, էրգուսով.

իւրէքը, իւրէքին, իւրէքըն, իւրէքով.

չէօյսը, չէօյսին, չէօյսըն, չէօյսով.

հինգը, հնգին, հնգըն, հնգով.

վէցը, վէցին, վէցըն, վէցով.

օխտը, օխտին, օխտըն, օխտնով, օխտին, օխտըն, օխտով.

ուտը, ուտին, ուտըն, ուտով.

ինը, ըննին, ըննըն, ըննով.

դասը, դասնին, դասնըն, դասնով, դասին, դասըն, դասով.

սօնը, սօնին, սօնըն, սօնով.

Ի հարկին թվականները կարող են նաև հոգնակի գործածվել. ինչպես՝ իրէքնին, չէօյսէրը, օխտէրը, ուտէրը, ըննէրը, դասէրը և այլն.

Վանի բարբառում ըացարձակ թվականները առանձին գործածվելիս հորովում են հետևյալ ձևով.

մէկ, մէկու, մէկուց, մէկով (անձի համար թեև ասում են մէկում առ շորեւէ մէկին տուր). բայց ժամի համար ասվում է շահաթ մէկին կուկժամ—ժամի մեկին կգամ). բացառական է՝ մէկուց, չկա՝ մեկից):

Երկուս, էրկրսի, էրկրսից, էրկրսով.

իւրէք՛, իւրէք՛ի, իւրէք՛ից, իւրէք՛ով.

չորս, չորսի, չորսից, չորսով.

խինգ՛, խընգ՛ի, խընգ՛ից, խընգ՛ով.

վեց, վեցի, վեցից, վեցով.

յօթ, յօթի, յօթից, յօթով.

ութ, ութի, ութից, ութով.

ին, ինի, ինից, ինով.

տաս, տասնի, տասնից, տասնով.

կսան, կսանի, կսանից, կսանով.

յեռսուն, յեռսնի.

ք'առսուն, ք'առսունի, ք'առսունից, ք'առսունով.

Ինչպես տեսնում ենք, հակառակ ուրիշ բարբառների՝ թվականները հոգ չեն ստանում: Որոշիչ հոգը գալիս է նախ տրականի վերջում (չորսին, խընգին, ինին, կսանին, ք'առսունին) և երկրորդ՝ երբ թվականը դրված է էլ շաղկապի մոտ. ինչպես՝ մէյն էլ, էրկուսն էլ, իրեհյն էլ, չորսն էլ, խիյն էլ, ութն էլ, ին էլ և այլն: Այս բոլորի մեջ նկատելի է, որ 1) մեկ բառի վերջածայնը և բաղաձայնի մոտ վերածված է յ. 2) իրեք՝ բառի վերջածայն ք' ըստ օրինի վերածված է և, հաջորդ բաղաձայնի մոտ. 3) նմանապես խիեք՝ բառի վերջածայնը դարձել է պարզապես յ, իսկ 4) ին թվականը չի ստացել և որոշիչ հոգը՝ խուսափելու համար և բաղաձայնի պատահական կրկնությունից:

Գրաբարից մնացած ձևեր են՝ խոգոր խոգորաց կամ խոգոր խոգորոց և փիւր փիւրոց:

Ոչ միայն բացարձակները, այլև բոլոր տեսակի թվականները կարող են այսպես հոլովվել՝ բոլոր բարբառներով. օրինակ՝ ննխ. քառասունումէն Ե40-րդից, օխանօցով Եյոթանօցով և այլն:

Նոր-Նախիջևանում բացարձակ թվականները հոգնակի գործածվելով ցույց են տալիս մոտավոր մի թիվ. ինչպես՝ էրկու հարուր յիսուննէր ունիմ Եունեմ շուրջ 250 ոուբլի, սահաթը հինգէրու կուգամ Եշուրջ ժամը 5-ին կգամ, էրկուսներու արի Եարթի մոտավորապես ժամի երկուսին: Այս պարագային մինչև իսկ մեկ բառը հոգնակիով է գործածվում. ինչպես՝ մեկերու կուգամ Եշուրջ ժամի մեկին կգամ. տասներմէկէրու արի Եմոտավորապես ժամը 10 մեկին արի. մէկ ամիսներ կա Եշուրջ մեկ ամիս կլինի: Սրա համեմատ են նաև ամսանունները. ինչպես՝ նոյեմբերներու Ենոյեմբերի մոտ ժամանակները:

Բացարձակ թվականների հոգնակին, մանավանդ կրկնությամբ, ցույց է տալիս նաև առատություն, շատություն. օրինակ՝ ննխ. հարուրներով կա Եհարյուրավորներ կան. տասներով, քսաններով կու գտնուս Ետասնյակներ ու քսանավորներ կգտնես:

Ջեյթունի բարբառուճն էլ, երբ թվականները առանձին գործածվեն, ստանում են որոշիչ հոգ և իբրև գոյական՝ հորովվում են հետևյալ ձևով.

մէգը,	իյգուքը	իյիքը	չիւյսը
միգին	իյգուքին	իյիքին	չիւյսին
միգէն	իյգուքէն	իյիքէն	չիւյսէն
միգէօվ	իյգուքէօվ	իյիքէօվ	չիւյսէօվ

հինգը	վիցը	յէօթը	ութը
հինգին	վիցին	յէօթին	ութին, ութան
հինգէն	վիցէն	յէօթեն	ութէն
հինգէօվ	վիցէօվ	յէօթէօվ	ութէօվ

ինը	դօսը
ինին	դասին, դասըն
ինէն	դասեն
ինէօվ	դասէօվ:

8. ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ

Որովհետև աշխարհաբարը իր լբառերի մեծ մասը վերցրել է գրբարից, ուստի թվականներն էլ ընդհանրապես գրբար ձևով են. իսկ ուր որ կա քերականական մի սկզբունք, այդտեղ հետևում է բարբառներին. այսպես՝ 1) թվականների վերջին ն ձայնը, որ աշխարհաբարի մեջ դարձել է ը, 2) տասնյակների և միավորների շարքը, որ կատարվում է բարբառների ձևով, 3) միացուցիչ շաղկապը, որ և լինելու փոխարեն հաճախ լինում է ու կամ ը: Ըստ այսմ աշխարհաբարի թվականներն են՝

Մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը (արեվելյան հյ. ինը), տասը, քսան, երեսուն, քառասուն, հիսուն, վաթսուն, յոթանասուն, ութսուն, ինսուն, հարյուր, հազար, միլիոն: (Վերջինը նոր փոխառություն է ուսերենի միջոցով, որ նաև բարբառներում էլ կա. ինչպես՝ Պլ. միլյօն):

Տասնյակների և միավորների միացումը կատարվում է կամ պարզ հարանդրությամբ, կամ և շաղկապով (հին ձև), կամ ու շաղկապով և կամ ը ձայնավորով, որ ու շաղկապի սղուճն է (այսպես է հատկապես արևմտյան աշխարհաբարում): Օրինակ՝

քանհինգ, քսանհինգ, քսանուհինգ, քսանըհինգ.  
հիսունվեց, հիսունևվեց. հիսունուվեց, հիսունըվեց և այլն:

Հարյուրավորների և հազարավորների միացումը պարզ հարադրությամբ է լինում. օրինակ՝ երկու. հարյուր, վեց հազար, ութ հարյուր, ինը հազար, երկու միլիոն և այլն.

Բոլոր թվականները կարող են հոլովվել. հետևում են առաջին հոլովման, և ինչքան էլ երկար լինի թիվը, հոլովվում է միայն վերջին թվականը. օրինակ՝

հազար երեք հարյուր իննսուն երեքին:

Այսպես նաև վեցի, վեցից (վեցեն), չորսով, քսանի, քսանից, հարյուրով, հազարներից, հազարներով և այլն:

Թվականը կարող է հոլովվել, երբ որևէ գոյականի հետ միացած չէ, այսինքն երբ որոշիչ չէ. այս դեպքում կարող է նաև ստանալ հոդ. ինչպես՝ հինգը, վեցը, հնգին, վեցին և այլն:

Հոլովման կամ հոդ ստանալու ժամանակ երկու դառնում է երկուս (արևմտյան գրականում՝ երկուք). ինչպես՝ երկուսը, երկուքը, երկուսն էլ, երկուքն ալ, երկուսից, երկուքեն, երկուսով, երկուքով, բայց՝ երկու մարդ, երկու հոգով և ոչ թե՛ երկուս մարդ, երկուս հոգի):

Յոթ, ութ, ինը, տասը թվերը էլ-ից առաջ իրենց վերջինը ձայնավորը դարձնում են ն, ինչպես՝ յոթն էլ, ութն էլ, տասն էլ և այլն:

## ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Այն թվականները, որ նկարագրեցինք մինչև այժմ և որոնք քերականության մեջ բացարձակ անունն են կրում, հիմք են կազմում մի խումբ ուրիշ տեսակ թվականների, որոնք կազմվում են բացարձակներից՝ զանազան ածանցական միջոցներով:

Աշխարհիս զանազան լեզուների մեջ բացարձակներից դուրս գտնված թվականները հետևյալ ստորաբաժանումներն ունեն.

- 1) զատակամ, որ ցույց է տալիս առարկայի կարգը, ինչպես առաջին, երկրորդ, երրորդ...
- 2) Բախշտկամ. ցույց է տալիս, թե յուրաքանչյուրին քանի՞ հատ է բաժին ընկնում. օրինակ՝ մեկական, երկուական...
- 3) Բազմապատկակամ. ցույց է տալիս, թե մեկը մյուսի քանի՞ անգամն է. օրինակ՝ երկպատիկ, եռապատիկ կամ երկու անգամը, երեք անգամը...
- 4) Հավաքակամ. ցույց է տալիս մանր ու խոշոր խմբակցություններ. ինչպես՝ մի հնգյակ, երկու տասնյակ...
- 5) Կոտորակայիմ. ցույց է տալիս ամբողջի մասերը. ինչպես՝ կես, քառորդ,  $\frac{1}{5}$ ,  $\frac{1}{6}$  և այլն:
- 6) Կրկնակամ. ցույց է տալիս, թե քանի՞ անգամ է կրկնվում. օրինակ՝ երեք անգամ ասացի, չորս անգամ եկա... (տարբեր է բազմապատկականից):
- 7) Մակբայակամ. միևնույն է, ինչ որ բազմապատկականը, միայն թե առաջինը գործածվում է իբր մակբայ, երկրորդը՝ իբր ածական, օրինակ՝ կրկնակի, եռակի...
- 8) Տեսակակամ. ցույց է, տալիս, թե մի բան քանի՞ տեսակից է բաղկացած:
- 9) Բաղկացակամ. ցույց է տալիս, թե մի բան ոչ թե քանի՞ տեսակից, այլ քանի՞ հատից է բաղկացած:
10. Մերձավորակամ. ցույց է տալիս ոչ ճիշտ, այլ մոտավոր մի թիվ:

11. Անձնեբրական. ցույց է տալիս այնքանը՝ բուրբ միտ-  
սին. հավտքականի մերձավոր նշանակություն ունի:

12. Չափական. ցույց է տալիս արժեք, քաշ, չափ, տարիք:

13. Նվազեցանք:

14. Թվականով բարդություններ:

### 1. ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

Ամեն լեզու դասական թվական չունի. այսպես, օրինակ, հովկասյան լեզուներից արևազերենը դասական թվական չունի. ամերիկյան ցիմշիան լեզուն նույնպես չունի դասական թվա-  
կան. չուվաշերեն լեզուն թեև ունի դասական, բայց մի  
խումբ թվականների համար չունեն և այդ պարագային գործ են  
ածում բացարձակ ձևը: Յակուտերենում դասական թվական  
կա, բայց 20, 30 և 100 թվերը չունեն դասականի ձև:

Երբ լեզվի մեջ գալիս է դասական թվականի գիտակցու-  
թյունը, հնարվում են զանազան ձևեր, որոնք հետո մաշվելով,  
պիտի վերածվեն մասնիկների: Այսպես, չինարենում դասականը  
կազմվում է  $ti^4$  բառով, որ նշանակում է շարքք. օրինակ՝  $yi^1$  ամեկ,  $ti^4-yi^1$  Կառաջին»: Սրա հետ նույն է գալիս լաօսերեն  $thi^1$ , որը դրվե-  
լով բացարձակ թվականից առաջ՝ կազմում է դասական. *ինչպես՝*

$thi^1 s\ddot{o}n$	երկրորդ
$thi^1 sam$	երրորդ
$thi^1 s\ddot{i}$	չորրորդ
$thi^1 h\ddot{a}$	հինգերորդ
$thi^1 t\ddot{y}\ddot{e}t$	յոթներորդ և այլն:

Հոսպիտալիեն իր՝ լաօսերենի քերականության մեջ (էջ 155)  
այս բառի նշանակութունը դնում է Կանգամ», մինչդեռ չինա-  
րենում մեկնվում է իբր շարքք»:

Ամերիկյան անտի լեզուն չունի դասական թվական, *ինչ-*  
*պես* որ Ծ-ից ավելի թիվ էլ չգիտի: Ուստի հետագայում հնա-  
րել են դասական կազմելու մի տարօրինակ ձև. բացարձակ  
թվականի վրա ավելացնում են տեղական *paçhini* բառը, որ  
նշանակում է ամյուս». *ինչպես՝*

2 apite	2-րդ	<i>paçhini</i>	apite
3 mahua	3-րդ	»	mahua

այսպես գնում է մինչև 6-րդ: Եվ որովհետև 7-ից սկսած թիվ չկա, իսպաներենից փոխ առնելով սարքել են՝ *paçhini setimo* 7-րդ, *paçhini octavo* 8-րդ և այլն:

Ճապոներեն լեզուն դասականը կազմում է *me* «աչք», *bamme* «թիվ, աչք» և *dai* «տուն» բառերով, որոնք այժմ արդեն նախամասնիկ և ետամասնիկ են դարձել, և կարելի է միաժամանակ կցել թվականին *dai* նախամասնիկը և *bamme* ետամասնիկը:

Հյուսիսային կովկասյան լեզուներից շատերը դասականը կազմում են «ասել» բայով. այսպես՝ կովկասյան լակերեն լեզվով բացարձակի վրա դրվում է *učinma*, որ *učin* «ասել» բայի ապառնի բայարմատն է. օրինակ՝

<i>ča-činmā</i>	1-ին (1 ասելիք)
<i>kī-činmā</i>	2-րդ (2 ասելիք)
<i>šam-učinmā</i>	3-րդ (3 ասելիք):

Լակերենի հարևան արզի լեզվով՝ դասական թվականի մասնիկն է — *bostu-w*, որ ծագում է *bos* «ասել» բայից. ինչպես՝

<i>qwo</i>	2	<i>qwebostuw</i>	2-րդ
<i>l'iba</i>	3	<i>l'ebosotuw</i>	3-րդ:

Սրանց հարևան թաբասարան լեզվով դասականի մասնիկն է — *p'i*, որ նշանակում է «ասած լինել»։ ինչպես՝ *sarp'i* 1-ին, *qōrp'i* 2-րդ ...

Ավարերենում դասականի մասնիկն է *abileu*, որ «ասել» բայի ապառնին է:

Ագուլերեն լեզվում դասականի մասնիկն է *p'unejraf* կամ *aγaf* «ասած, ասած լինելով»:

Կյուրիներեն լեզվում դասական կազմելու համար գնում են *luhūdaidi* «ասողին», որ ծագում է *uhun* «ասել» բայից. ուղտուկերենում՝ *hustu*, որ ծագում է *uhun* «ասել» բայից. օրինակ՝ *saḥustu* 1-ին, *kwerḥustu* 2-րդ և այլն:

Վերջապես ուտիերեն լեզվում դասականը կազմվում է *ukal* «ասող» բառով. ինչպես՝ *bip-ukal* 4-րդ, բայց այժմ գործ են ածում ագրբեջաներեն — *γΑΨΑ* մասնիկը:

Կովկասյան լեզուներեն լեզվումն էլ դասականը կազմվում է նույն ձևով. լեզուներեն լեզվի ուսումնասիրողը (Жирков, էջ 105) ասում է, թե այս լեզվի մեջ դասական չկա, իսկ երբ հարկ

լինի, ասում են *այսպես ասած...*» միայն *«առաջին»* բառն է, որ լազերի լեզվից փոխառությամբ ասվում է էվելիմբի:

Հնդկական մունդարի լեզուն դասական հունի և նրա փոխարեն գործածում է բացարձակ ձևը: Անձ ցույց տվող բառերի համար այս ձևը անհարմար չէ, որովհետև գոյականի թվի տարբերությունը (եզակի և հոգնակի) կարող է ցույց տալ, թե խոսքը ինչի մասին է. Օրինակ՝

երեք կանայք (3), բայց

երեք կինը (3-րդ):

Բայց այս ձևը անհարմար է անշունչ առարկա ներկայացնող բառերի համար, որովհետև այս լեզվում անշունչները հոգնակի չունեն: Այս պատճառով դասականը արտահայտելու համար շուտ են տալիս խոսքի ձևը և ասում են այսպես. փոխանակ ասելու «կարիք չորրորդ ծառը», ասում են՝

«կտրիր այս մեկը, (որ է) 3 ծառի առջև»:

Փոխանակ ասելու «կանչիր 6-րդ տղային», ասում են՝

«կանչիր այն տղային, որ 5 տղաների առջևն է»:

Եվ կամ թե՛

Թողնելով 9 ծառ, կտրիր մեկը.

կտրիր առաջին 4 ծառերը > այս 3 ծառի հետ կտրիր 4 ծառ.

Այսպես է նաև դրավիդյան կուրի լեզվով, ուր ասում են.

օրինակ՝

«Թողնելով 2 ծառ, կտրիր 3 ծառը» (իմն երրորդ ծառը):

«Ենդու ծառերից հետո կա մի ծառ, կտրիր այդ ծառը»:

Հնդկական նազա լեզվում կանոնավոր դասական թվական չկա. եղածները հետևյալ երեքն են միայն.

ա. *ōvūngōḍi* նշանակում է՝ դեմը եղածը.

բ. *ovungoḍi sīlāmo* (նկատել, որ առաջին բառը նույն է նախորդի հետ, միայն ձայնավորները կարճ են) նշանակում է դիմացինի ետևինը.

գ. *ovungoḍi čito om silamo* նշանակում է դիմացինի և մյուսի ետևը:

Իրմանիայի պեգու լեզվում 1—16 թվերի դասականները փոխառյալ են հնդկական պալի լեզվից.

Թաթերենը (որ իրանական լեզու է) ունի 5 ձևով դասական թվական, որոնցից մեկն էլ կազմվում է *-umgʷi* մասնիկով. ինչպես՝



ävvalimgyi	1-ին
düvvimgyi	2-րդ
čorüimgyi	4-րդ
pänjüimgyi	5-րդ և այլն:

Սա թրք. -inji մասնիկն է, որ խաչաձևով է պրս. -um դասական մասնիկի հետ, միաժամանակ թրք. j ձայնը դարձրել է ց<sup>y</sup>:

Դասական թվականները հետևյալ ձևով են կազմվում աֆրիկյան ազանդե կամ նիամ-նիամ կոչված ժողովուրդի մոտ, որ թեև հաշվական կարողության մեջ թույլ է, բայց դասականները գոնե մինչև 10 հաշվել գիտի:

Առաջին երկու դասականները թվից չեն կազմվում, այլ՝ շարքից. այսպես՝

1. guko du mbatayo նշանակում է՝ նա որ առաջն է.

2. » » twe guko du mbatayo նշանակում է՝ նա, որ ետևն է առաջինի:

3-ից սկսած կազմվում են թվականից. սկզբից գնելով gu «այն» ցուցականը (որ և որոշիչ հոդ է) և ետևից գնելով գ դեմքի անձնական դերանունը.—

3-րդ gu biyata ko, 4-րդ gu biyama ko.

5-րդ gu biswe ko, 6-րդ gu biswe beti sa ko.

7-րդ » » beti uwe ko, 8-րդ gu biswe beti biyata ko

9-րդ » » » biyama ko, 10-րդ gu bawe ko.

Դասականները կազմելու մի երկրորդ ձև էլ կա, որ առաջին և երկրորդ դասականների նման ոչ թե թվից, այլ շարքից է կազմված և նրանց շարունակութունն է ներկայացնում:

3-րդ guko du fwe aguiyo du ku mbatayo uwe նշանակում է՝ նա, որ առջևի երկուսի ետևն է.

4. guko du fwe aguiyo du ku mbatayo biyata նշանակում է՝ առջևի երեքի ետևն է.

5 guko du fwe aguiyo du ku mbatayo biyama

6 " " " " " " " biswe

7 " " " " " " " biswe betisa

8 " " " " " " " " " uwe

9 " " " " " " " " " biyata

10 " " " " " " " " " biyama.

Դասականների այս ձևը ավելի սովորական է այս լեզվի մեջ:  
Աֆրիկյան բոնգու լեզվի մեջ չկա դասական թվական. ու-  
նեն միայն matu առաջին (որ է նախօրին, առաջնածին).  
ambibindi երկրորդ (որ է միջին).

bingu վերջինը:

Աֆրիկյան բո կամ բանկոն լեզվի մեջ դասական թվականը  
կազմվում է yesa «լրացնել, vollmachen» բառով. օրինակ՝

2-րդ nu yesa bua, որ բառացի նշանակում է՝ երկուսը  
լրացնում է՝.

5-րդ nu yesa batan:

Աֆրիկյան էվե լեզվով դասականը կազմվում է le, li բա-  
յով, որ նշանակում է «գոյություն ունի, կա». օրինակ՝

ewelea երկրորդ (այնտեղ երկուսը կա)

etolia երրորդ ( » երեքը » );

Ֆիննական չերեմիս լեզվի մեջ դասական թվական կազմե-  
լու համար բացարձակի վրա ավելացնում են -šO մասնիկը. բայց  
դա գնում է մինչև 7 թիվը՝ šimšo 7-րդ. ավելի բարձր դասա-  
կան թվականներ չկան և նրանց փոխարեն գործածում են բա-  
ցարձակ ձևը. տեղից միայն պետք է իմանալ բացարձակ է, թե  
դասական:

Նուբիերեն լեզվով դասական չկա և բացատրում են հե-  
տևյալ ձևերով.

«առաջին»=te or kondi «նա որ սկիզբն է».

«վերջին»=te kal kondi «նա որ վերջն է».

«երրորդ»=երկուսը թող և այն առ.

«երբորդին կանչիր»=երկուսը թող գնան, ով հետո մնաց,  
նրան կանչիր.

10 քույր ենք, ինձնից առաջ երկուսը կա—նշանակում է՝

10 քույրերից երրորդն եմ:

Մարքիզյան կղզիների լեզվով էլ բացարձակը դրվելով գո-  
յականից հետո, դառնում է դասական. ինչպես՝

e ima moa e moa ima

Տ հավ համը հինգերորդ:

Մուսոդա խմբից կողմ լեզվով դասական ձև ունեն միայն  
առաջինը (sida) և երկրորդը (eta): Իսկ մնացյալ բոլորը նույն են  
բացարձակների հետ. օրինակ՝

apia 3 և 3-րդ  
apun 4 և 4-րդ.

Մալայան դայակ լեզվում բացարձակները դասական դարձ-  
նելու համար դնում են պարզապես գոյականից հետո. օրինակ՝  
talo 2 և djehawan 6 թվերից՝

andau talo                    օր երկրորդ  
djam djehawan            ժամ վեցերորդ:

Ֆիլիպպինյան տագալոզ լեզվով դասական կազմելու համար  
բացարձակների սկիզբը դնում են ika. ինչպես՝

ikatlo 3-րդ, ikapat 4-րդ  
ikapowo 10-րդ և այլն:

Բուրյաթ լեզվով դասականները կազմվում են deki մաս-  
նիկով. ինչպես՝

ա. nigedeki                    դ. durbōdeki.  
բ. xoyerdeki                ե. tabadeki  
գ. gurbadeki                զ. zorgadeki....

Օսայակ լեզվում դասականի մասնիկն է met.

ինչպես՝ 3-րդ xütmet  
6-րդ xūdamet  
10-րդ ar yovmet.

Լեզու կա, որ մեկի տեղ մի քանի դասական ունի. այսպես՝  
սունգուզերենում երեք տեսակ դասական թվական կա, որոնք  
կազմվում են -ki կամ i, -vugda և -tku մասնիկներով. օրինակ՝

3 ilan—3-րդ ilī, ila-vugda, ila-tku  
4 digin—4-րդ digī, digi-vugda, digi-tku.

Հայտնի չէ ոակայն, թե այս երեք տարբեր դասականները  
միևնույն արժեքն ունեն, թե ոչ, և եթե տարբեր են, որը ինչ  
դեպքում է գործածվում: Սկսած 20-ից գործածվում է միայն  
երկրորդ ձևը.

Հնդեվրոպական լեզուները իրենց դասականները կազմում  
են բացարձակներից՝ ավելացնելով զանազան երկրորդական մաս-  
նիկներ. ինչպես՝ -yo-, բայց, գլխավորապես -mo- և -to- (օրի  
սաստկականն է -tho-): Երկու մասնիկներից ավելի հինն ու  
բնիկը համարվում է -mo-, որ հետո զանազան լեզուների մեջ

փոխանակվեց -to- մասնիկով: Մասնիկները դրված միջոցին բացարձակի ձայնավորը փոփոխվում է:

Միայն «առաջին» բառն է, որ ունի մյուսներին տարբեր կազմութուն, ըմբռնվելով ոչ թե իբր թիվ, այլ որակական ածական, իբր «նախնական»: Այսպես է նաև երկրորդը, որ ըմբռնվում է իբրև «մյուսը»: (Մինչև անգամ այնպիսի լեզուներում, որոնց մեջ չկա դասական թվական, գոյութուն ունեն «առաջին» և «երկրորդ» գաղափարները՝ հիշյալ ձևով. այսպես է ամերիկյան ցիմշիան լեզուն, ուր ունենք ksqa<sup>o</sup>x «առաջին» և ania «երկրորդ» բուն՝ «հաջորդ»):

Այս երկուսը բոլոր դասականների մեջ առանձին տեղ են բունում: Արդարև, երբ տրված են մի խումբ առարկաներ և առաջարկվի մեզ վերցնել առաջինը կամ վերջինը, մենք պետք չունենք բնավ հաշվելու այդ առարկաները. իսկույն և եթե կարող ենք վերցնել ուզածը: Գրեթե նույնն է լինում, երբ ասեն՝ տվե՛ք երկրորդը կամ վերջընթերը: Այստեղ էլ հաշիվ չենք անում: Բայց երբ պահանջեն երրորդը, հինգերորդը և կամ որևէ այլ թիվ, պարտավոր ենք հաշվել: Ելնելով, ահա, այս վիճակից, դասականների մեջ առաջին, երկրորդ, վերջընթեր և վերջին բառերը բացարձակներից կազմված թվականներ չեն, այլ առանձին բառեր: Համառ.—

Հն. εἷς—πρῶτος

Լատ. unus—primus

Հիուլ. oen—cétne

Գոթ. ains—fruma

Լիթ. nënas—pirmas

Հսլ. -ino—prvũ

Ռուս. один—первый

Սանս. ékas—purvyás

Ջնդ. aēvo—paoīryō

Ալբան. né-i—pare.

Դուո—ετεροσ, δεύτεροσ

duo—alter, secundus

da—aile

twai—anþar

du—añtras

dāva—vūtoru

два—второй

Նույնիսկ հնդեվրոպականներից դուրս՝

Հոտենդոտ. նամա՝ Igui մեկ, guro առաջին.

Ասուր. ešten մեկ, rištānu «գլխավոր» կամ mahru «առաջին»

Ֆինն. yksi մեկ, ensimäinen «առաջին», kansi 2—toinen «երկրորդ».

Հունգ. egy » első » kettő » masodik »

Ցակուտերեն bastakə և ալթայ. paštangə «առաջին» կազմված baš «գլուխ» բառից և նշանակում են բուն «գլխին գտնվածը,

զլիսավորս: Յակուտ. ասվում է նաև *maɣnaygə* «առաջին», որ ծագում է *maɣnay* «սկիզբ» բառից:

Պերուի ուսնա սիմի կամ կեչուա լեզվով «երկրորդը» կոչվում է *kepaken*, որ ծագում է *kepa* «ետեից» բառից:

Մեծ թվաբանական առաջագիմուծյուն էր ըմբռնել «մեկի» գաղափարը և կազմել նրանից «մեկերորդ», ճիշտ ինչպես որ ավելի մեծ գաղափար էր զերոն իբրև թվանշան ըմբռնելը: Ահա այս պատճառով հնդեվրոպական լեզուների մեջ միշտ առաջին բառը դասական չէ, այլ կազմված է *perə* «առջև», առաջ» բառի զանազան ձայնդարձներով *mo*, *wo*, *to* մասնիկներով. եթե խոսքը միայն երկու առարկաներից առաջինի մասին է, գործ է ասվում բաղդատական *-tero*, *-tro* մասնիկով կազմված ձևը. ինչպես՝ հն. *πρότερος*, զնդ. *fratarō*, հբգ. *fordaro*: Ընդհանրապես «առաջինը» գերադրական դաղափար է. ուստի գերադրական մասնիկով ունենք *սանս. pra-thamás*, զնդ. *fratāma-*, հբգ. *furist*, գոթ. *frumists* և այլն: Այս բոլորը նշանակում են «նախավոր, նախկին» և, ինչպես ասացինք, բուն թվերի հետ կապ չունեն:

Ահա մյուս դասականները հնդեվրոպական լեզվախմբի մեջ:

2-րդ. հնագույն շրջանում նույնպես *-tero*, *-tro* բաղդատական մասնիկով կազմված մի ձև էր և նշանակում էր «մյուսը». հմմտ. գոթ. *anþar*, հբգ. *andar*, լիթ. *añtras*, հսլ. *vūtorū*, լատ. *alter*, որ է *\*ali-teros*. ավելի հետո ձևացան «երկու» թվականից կազմված ձևեր. ինչպես՝ *սանս. devitīyas*, զնդ. *bitiyo*, գերմ. *zweiter*, հյ. երկրորդ, կամ նաև ուրիշ բառեր՝ ինչպես՝ լատ. *secundus*, որ նշանակում է բուն «հետևորդ, հետևյալ» (*sequor* «հետևել» բայից), հն. *δεύτερος*, որ բուն նշանակում է՝ «ավելի հեռու», իուլ. *tanaise* և այլն: Մինչև այժմ սլավոնական լեզուներում կենդանի պահված է հնաձև *ВТОРОЙ* «երկրորդ» և շվեդ. *andre* «երկրորդ», որ բուն նշանակում է՝ «մյուսը»: Սլովեններեն էլ ասվում է *drugi* «երկրորդ» (բուն՝ «մյուսը»):

3-րդ. կազմված է բացարձակի *tri*, *tr*, *tre-* ձևերից, *-yo* մասնիկով. հնդ. *tr-tiyo-s*, թուրար. *trit*, քուչ. *trite*, հյ. երիբ, զնդ. *θριτια-*, հպրո. *θριτια*, գոթ. *θridja*, հբգ. *dritto*, *սանս. trītyas*, հպրուս. *tirtis*, լիթ. *trėčias*, հլս. *tretjīj*, լատ. *tertius*, միայն հույնն ունի *τρίτος*.

4-րդ. հնապես կազմված էր հնդ. *k<sup>w</sup>etwer-* բացարձակի կրճատ *k<sup>w</sup>tur-* կամ *k<sup>w</sup>tr-* ձևից, *-yo-* կամ *-to-* մասնիկով. ինչպես՝

հնդ. k<sup>w</sup>tur-iyō-s և k<sup>w</sup>t̥f-to-s. yō մասնիկով՝ սանս. turīyas, զնդ. tūryō- հն. τεταρτο- (որից τεταρτη-μύριον «քառորդ մասը»), լատ. quartus և-to մասնիկով՝ գվո. Quorta. այնուհետև բացարձակի և ձայնավորը վերականգնելով՝ ձևացան սանս. čaturthás, հն. τεταρτος, հուլ. četvr̥t̥b, լիթ. ketvir-tas, հարուս. kettwirts, թոխար. stāri. առանձին ձև ունի հրգ. fiostro.

5-րդ. նախապես կազմված էր pēnk<sup>w</sup>e բացարձակի կրճատ ձևից, -to մասնիկով, հնդ. \*p̥nk<sup>w</sup>tos, հրգ. funfto. հետո ձայնավորը վերականգնվեց. ինչպես՝ հնդ. penk<sup>w</sup>-to-s, սանս. pañcamás, pañčathás, հն. πεμπτος, լատ. quīntus, լիտ. peñktas, հուլ. pētū, թոխար. pant, լուսա փոխված ձևեր են քուչ. pīnkce, զնդ. puχdō:

6-րդ. հնապես կազմված էր բացարձակի կրճատ ձևից, ինչպես ցույց է տալիս հարուս. uschts, հետո ձայնավորը վերականգնվելով, ունենք՝ սանս. ṣaṣṭhás, հն. ἕκτος, լատ. sextus, sextus, հրգ. sehto, գոթ. saihsta, լիտ. šeštas, հուլ. šestū < հնդ. s(u)ek'tos, թոխար. škāšt:

7—10-րդ. կազմված են խառն ձևով մերթ -mo- և մերթ -to- մասնիկով.

7-րդ	8-րդ	9-րդ	10-րդ
Սանս. saptamas	aṣṭamas	navamas	daçamas
Չնդ. haptaθ	aṣṭama <sup>o</sup>	nāumō	dasəmə
Հն. ἑβδομος	δγδοχος	ἐνιάτος	δέκατος
Լատ. septimus	octavos	nonus	decimus
Լիթ. sėkmas	aštuñtas	deviñtas	dešimtas
septiñtas	āšmas		
Հուլ. sedmū	osmū	devetū	desetū
Գոթ. (չի ավանդված).	ahtuda	niunda	taihunda
Թոխար. šāptānt	?	?	skānt
Հարուս. septmas	asmus	newints	dessimts

Ինչպես տեսնում ենք, հնդեվրոպականը դասականների համար կանոնավոր և միօրինակ կազմություն չունեն. դրվում էր մերթ այս և մերթ այն մասնիկը, իբր արմատ առնվում էր բացարձակի մերթ այս և մերթ այն ձևը: Կանոնավորության համար պետք էր ունենալ սկզբից մինչև վերջը մի մասնիկ և պետք է առնվեին միշտ միևնույն ձևի բացարձակները: Ցեղակից լեզուները հնագույն շրջանից սկսած անցան այս միօրինակացման գործին և անկանոնությունները վերացնելով աշխատե-

ցին միևնույն մասնիկը գործածել։ Շատ լեզուների մեջ առավելություն ստացավ -to- մասնիկը՝ հատկապես հունարենում, որ մինչև 3-րդ ձևի մեջ դրել է -to-, մինչդեռ բոլորը ունեն -yo-:

11-ից 19 դասականները կազմվում են երկու ձևով. կամ համապատասխան բացարձակ թվականի վրա դնելով դասական կազմող մասնիկը և կամ երկու եզրերը առանձին առանձին դասականի վերածելով. իբր թե հայերեն ասեինք 18-րդ՝ տասնևութերորդ (ա ձև) կամ՝ տասներորդ ութերորդ (բ ձև)։ Առաջին ձևից են, օրինակ՝ սանս. eka-daçama-, հն. ἐνδέκατος, լատ. undecimus, հրգ. eilifto, հուլ. πετήνadesētinъ, osmonadesēтъ.

Երկրորդ ձևով են՝ հն. τρίτος καὶ δέκατος, լատ. tertius decimus, գոթ. fimftataihunda և այլն։

Տասնյակների, հարյուրի և հազարի դասականը կազմվում է -sto-, -tamo-, -mo-, -no- մասնիկներով, որոնք երևում են այս կամ այն լեզվի մեջ.

ինչպես՝ հն. εἰκοστός 20-րդ, զնդ. vīṣaṣtama-, լատ. vicesimus 20-րդ, սանս. trimçattama-, հն. τριακοστός, լատ. tricesimus 30-րդ, հուլ. δεῦνα-desētinъ 20-րդ, սանս. cata-tama 100-րդ, լատ. centesimus 100-րդ, սանս. sahasra-tama-, հն. χίλι-οστός, լատ. millesimus 1000-րդ և այլն։

Հատիչերենի մեջ դասական կազմելու մասնիկներն են՝

եզ. ար. -tais	եզ. իզ. -tā
հգ. ար. -tie	հգ. իզ. -tās

Թուսաստանի ցիգաներեն լեզվով, որ հնդկերենի մի ճյուղն է, դասականների մասնիկն է -to. ինչպես՝

trito 3-րդ, štarto 4-րդ, panjto 5-րդ.

Նույնիսկ հանման դրությամբ կազմված թվականները դասականի համար ստանում են -to մասնիկը։ Ինչպես՝

bitrinengiro-dešto	27-րդ
biduengiro-bišto	18-րդ.

Հայերենի մեջ դասականի մասնիկներն են եղել հնագույն շրջանում -p -որդ. առաջինից են կազմված երկիր «երկրորդ», երիր «երրորդ» և չորիր «չորրորդ» ձևերը, իսկ երկրորդից՝ քառորդ, առասնորդ, քառասնորդ, հարիւրորդ։ Ահա սրանց հին վկայությունները. Չերիր մասն գորուն. բ. թգ. ժը. 2; Յերիր աւուր յառնել. Մրկ. բ. 31; Չորիր մասն քո մահու սպառեսցի և չորիր

մասն քո սովով վախճանեսցի ի միջի քում. և զչորիր մասն քո ընդ ամենայն հողմս ցրուեցից և չորիր մասն քո շուրջ դքև ի սուր անկցի. Եզեկ. ե. 12: Հաս տեառն զտասանորդս ի տասանորդէ. Տոկոսիք և հարիւրորդք. Ոսկ. մ. գ. ձ: Յամին հարիւրորդի քառասներորդի. Ա. մկ. ա. 21. բ. 70. գ. 16: Յամին քառասներորդի. ի քառասներորդի. եօթներորդի Ողովպիադին. Եւս. քր. ա:

Այս -ը մասնիկի հին ձևը պիտի լինի -ro-, իգ. -rā-, որ գտնվում է նաև լիթ. penkeri «հնգեակ», devyneri «հինեակ», իռլ. cōicer «հնգեակ», seisser «վեցեակ», ochter «ութնեակ» բառերի մեջ: Հայերենում պատահաբար հոլովյալ ձևով չի ավանդված. բայց ենթադրելի է, որ պիտի լիներ ո հոլովմամբ՝ երկրոյ, երբոյ, չորբոյ և այլն: Պատահական նմանութիւն ունի լագ-eri, որ դասական կազմող մասնիկն է. ինչպես՝ žur-en-eri Ջ-րդ, šum-en-eri Յ-րդ:

Հայերենի դասական -ը ձևին պատահաբար նման է նաև աֆրիկյան բիլին լեզվինը, որ իր դասականները կազմում է -ar մասնիկով. ինչպես՝

liḡar	Ջ-րդ	sīḡuar	Յ-րդ
saḡar	Կ-րդ	ankuar	Ծ-րդ
wāltar	Ե-րդ և այլն:		

Երկու մասնիկներն էլ այնուհետև գործածութիւնից վերացան և նրանց տեղ եկավ -որդ կամ երորդ մասնիկը, որ նույն երկուսի գումարն է. -որդ մասնիկն ստացան միայն երկրորդ, երրորդ, չորրորդ բառերը. այսինքն՝ նրանք, որ ստանում էին -ը մասնիկը. այսպես՝ երկիր-որդ > երկրորդ, երիր-որդ > երրորդ, չորիր-որդ > չորրորդ:

Սկսած Ծ-ից՝ բոլոր թվականները ստանում են -երորդ մասնիկը, նույնիսկ նրանք, որ ստանում էին -որդ մասնիկը. այսպիսով, այս վերջինները ունենում են կրկնակ ձև -որդ և -երորդ:

Ահա հին հայերենի բոլոր դասականների շարքը.

բ+որդ

Երկրորդ, երրորդ, չորրորդ.

-եր+որդ.

հինգերորդ, վեցերորդ, եւթներորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, մետասաներորդ, երկոտասաներորդ, երեքտասաներորդ, չորեքտասաներորդ, հնգեաասաներորդ, վեշտասաներորդ, եւթնև-



տասներորդ, ութևտասներորդ, իննևտասներորդ, քսաներորդ, երեսներորդ, քառասներորդ, հիսներորդ, վաթսներորդ, եւթասաններորդ, ութսներորդ, իննսներորդ, հարիւրերորդ, երկերիւրերորդ, երեքհարիւրերորդ, չորեքհարիւրերորդ... հազարերորդ, բիւրերորդ:

20-ից հետո այն դասականները, որոնք կազմված են տասնյակներին միավորների կցումով, մասնիկը կրկնում են առանձին-առանձին. այսպես նաև ավելի մեծ ու բարդ թվերը. օրինակ՝ քսաներորդ երկրորդ = 22-րդ, քառասներորդ հինգերորդ = 45-րդ, հազարերորդ երկերիւրերորդ երեսներորդ վեցերսրդ = 1236-րդ և այլն:

Կրկին ձև ունեն տասանորդ կամ տասներորդ, հարիւրորդ կամ հարիւրերորդ և քառորդ կամ չորրորդ:

Այս -երորդ մասնիկը ծագել է հետևյալ ձևով.

Դասականի հնագույն բ մասնիկը, ինչպես գիտենք, կցվում էր բառի բնի վրա. այսպես՝ երկի-, երի- չորի- (հմմտ. երկի-ամ, երից, չորից)+ր. նույնը հիմզ բառի վրա գրվելու ժամանակ՝ առավ նրա հնագույն ձևը, որ է հեգե- (<հնդ. penk<sup>w</sup>e, հմմտ. հնգե-տասան), որով առաջացավ դասական \*հեգեր՝ «հնգերորդ» ձևը: Հետագայում, երբ -որդ մասնիկը կցվեց նախորդի վրա և առաջացան երկրորդ, երրորդ, չորրորդ ձևերը, հեգեր ձևից էլ առաջացավ հեգերորդ (արմատի ձայնավորը վերականգնելով՝ հիմզերորդ), որ ոչ միայն իսպառ խափանեց հնագույն հեգեր ձևը, այլև օրինակ ծառայեց մյուս թվականներին և անալոգիայի օրենքով կազմվեցին 6-ից սկսած բոլոր դասականները: Հետք անգամ չմնաց նախկին \*վեցեր կամ \*վեցորդ, \*ուրեր կամ \*ուրորդ և այլն դասականներից, մնացին միայն տասանորդ և հարիւրորդ:

Ըստ այսմ բոլոր դասականներից հնագույն ձևը պահում է \*հեգեր:

Վերը տեսանք, որ հնդեվրոպական լեզուներում դասականները կազմում են -yo-, -mo-, -to- մասնիկներով. «հինգերորդ» դասականի համար որոշ ձև չկա. արդարև, ցեղակից լեզուները իրար հետ համաձայնությամբ ենթադրել են տալիս penk<sup>2</sup>tos ձևը, որ կազմված է -to- մասնիկով, բայց այս՝ հետին ձևափոխության արդյունք է, որ առաջացել է մյուս դասականների նմանությամբ: Պետք է կարծել, թե հնագույն և հարազատ ձևը կազմվում էր -to- մասնիկով. այս մասնիկը ցույց է տալիս երկու առարկաների հակադրությունը և իրոք «հինգերորդը» հա-

կադրական ձև է, իբր՝ մի ձեռք մյուսի դեմ: Այսպիսով, հյ. «հինգեր Վհինգերորդ» նույնանում է գերմ. finger=գոթ. figgrs «մատ» բառի հետ: Սրանից երևում է, որ բոլոր հնդեվրոպական լեզուների մեջ այս կետում միակ հավատարիմ պահպանը հայերենն է որ, սակայն, ընդհանրացնելով այս -го- ձևը, ջնջել է մյուս բոլոր դասական մասնիկները՝ -yo-, -mo-, -to-:

Ինչպես մյուս հնդեվրոպական լեզուների, նույնպես և հայերենի մեջ առաջին բառը չի կազմված մի թվականից, այլ առաջ բառից -իմ մասնիկով, ճիշտ ինչպես վերջին բառը, որ նույնպես դասականների կարգն է դասվում: (Առ+աջ, ուր՝ առ<par բունը հնդ. perā, ինչպես մյուս լեզուների մեջ, հմմտ. հն. παρὰ, περὶ, παρ, παρῶτος «առաջին» և այլն):

Ավելի ուշ այս բառն էլ մյուսների հետևողությամբ ստացավ -երորդ դասական մասնիկը և դարձավ առաջներորդ, որով ձևացան քսաներորդ առաջներորդ կամ քսաներորդ առաջնորդ 21-րդ և այլն: Հստ այսմ առաջներորդ՝ երեք անգամ դասական դարձած մի ձև է:

Հունարան դպրոցի հնարած ձևերից է հինգերիք «հինգերորդ», վեցերիք «վեցերորդ», տասներիք «տասներորդ», որ ունի Թր. քեր. «Չորիք՝ ստուգաբանության գյուտ. հինգերիք՝ համեմատության տեղեկություն», Այս ձևերը կազմված են երկիր, երիք, չորիք բառերի օրինակով, որոնք հայերենի հնագույն դասականներն են: Հունարանները տեսնելով երկրորդ ձևի դեմ երկիր, երորդ ձևի դեմ՝ երիք և չորրորդ ձևի դեմ չորիք, իսկույն հինգերորդ ձևի դեմ հնարեցին հինգերիք, չիմանալով, բնականաբար, որ հնգեր արդեն դասական է և նրա վրա մեկ էլ իր դնել (այսինքն նույն մասնիկը կրկնել) անպատեհ է: Նույն ոճով կազմվեցին վեցերիք, տասներիք:

Բոլոր դասականները հետևում են ի-ա հոլովման, միայն առաջին և վերջին բառերը հետևում են ո հոլովման: Այսպես՝

Առաջին	առաջինք	երկրորդ	երկրորդք
»	առաջինս	»	երկրորդս
առաջնոյ	առաջնոց	երկրորդի	երկրորդաց
{ առաջնոյ	»	երկրորդի	երկրորդաց
{ առաջնում	»	երկրորդում	
{ յառաջնոյ	յառաջնոց	յերկրորդէ	յերկրորդաց
{ յառաջնմէ	»		
առաջնով	առաջնովք	երկրորդաւ	երկրորդաւք:

Նկատելի է, որ տրականը լինում է երկու ձևով. մեկը սովորական, մյուսը դերանվանական հոլովման ձևով, այն է՝ -ում մասնիկով. սրա հետևությամբ էլ ներգոյականը լինում է յառաջնում, յերկրորդում (կամ յերկրորդի) և բացառականը յառաջմէ ձևով (չկա՝ յերկրորդմէ):

Միջին հայերենում, բացի առջի և վերջի ճառաջին, վերջինս բառերից, դասականների -որդ ձևի համար հազիվ օրինակներ կան ավանդված (ինչպես՝ երբորդ): Մրանից հետևցնում եմ, որ միջին հայերենը այսպիսի դասական չուներ. բայց թե ինչպես էր նրա դասականը. կպարզենք քիչ հետո:

Բարբառներում դասականի -բորդ ձևը ընդհանրապես կորել է՝ պահվելով միայն. Նոր-Ջուղայի բարբառում: Դնում եմ այստեղ նախ Նոր-Ջուղայի դասականների այս ձևը.

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1. առջ'ի ավվալին    | 17. տասնօխտներորդ'   |
| 2. յերկուերորդ'     | 18. տասնութներորդ'   |
| 3. յիրեքերորդ'      | 19. տասնիններորդ'    |
| 4. չոքերորդ'        | 20. քսաներորդ'       |
| 5. խինգերորդ'       | 30. արասուններորդ'   |
| 6. վեցերորդ'        | արասըներորդ'         |
| 7. օխտ(ն)երորդ'     | 40. դ'առասուներորդ'  |
| 8. ութներորդ'       | դ'առասըներորդ'       |
| 9. իններորդ'        | 50. յիթսուներորդ'    |
| 10. տասներորդ'      | յիթսըներորդ'         |
| 11. տասնըմիներորդ'  | 60. վաթսուներորդ'    |
| տասմիներորդ'        | վաթսըներորդ'         |
| տասըմիներորդ'       | 70. օխտանասուներորդ' |
| 12. տասներկուերորդ' | օխտանասըներորդ'      |
| 13. տասնիրեքերորդ'  | 80. ութսուներորդ'    |
| 14. տասնըչոքերորդ'  | սւթսըներորդ'         |
| տասըչոքերորդ'       | 90. ինըսուներորդ'    |
| տաչոքերորդ'         | ինըսըներորդ'         |
| 15. տասնըխինգերորդ' | 100. խէրուրերորդ'    |
| տասըխինգերորդ'      | խէրըրերորդ'          |
| տասխինգերորդ'       | 1000. զըզարերորդ'    |
| 16. տասնըվեցերորդ'  |                      |
| տասըվեցերորդ'       |                      |
| տասվեցերորդ'        |                      |

**Ծանոթութիւն.**—Սրանց մեջ նկատելի է, որ ու ձայնավորը անշեշտ լինելով թե՛ կարող է մնալ, և թե՛ ջնջվել:

Բարբառներից մի կարևոր խումբ դասական թվականները կազմում է բացարձակների վրա ավելացնելով -ում մասնիկը, որ հենց առաջին հայացքով նույն է պրս. -um դասական մասնիկի հետ. օրինակ՝ պրս. čahārum «չորրորդ», panjum «հինգերորդ», šašum «վեցերորդ», haftum «յոթներորդ» և այլն: Այն բարբառները, որ դասականը կազմում են այս մասնիկով, հետևյալ ձևով են դասավորվում. ա) Նոր-Ջուղայի բարբառ. բ) Լեհաստանի, Հունգարիայի, Սուլավայի և Ռումինիայի բարբառներ. գ) Ղրիմի և Նոր-Նախիջևանի բարբառը:

Տալիս եմ այստեղ այս երեք կարգի բարբառների դասականների համեմատական ցուցակը.—

Նոր-Ջուղա	Սուլավա	Ն. Նախիջևան
1. ավվալում	առաջին, առջին, առջի.	առջի
2. յերկըքում	էրգուսում	էրգուսում
3. յիրեքում	իրէքում	իրէքում, ժէքում
4. չոքում	չորսում	չորսում
5. խընգում	հինգում	հինգում
6. վեցում	վեցում	վեցում
7. օխտում	օխտում	օխտում
8. ութնում	ութնում	ութնում
9. իննում	իննում	իննում
10. տասնում	դասնում	դասնում
11. տասնըմընում տասմընում տասըմընում		դասնըմէքուսում դասնէրգուսում դասվէրգուսում
12. տասներկըքում		դասվիրէքում դասնըժէքում դասժէքում դաշժէքում
13. տասնիրեքում		դասնըչորսում դասչորսում
14. տասնըչոքում տասըչոքում		

նոր-Ջուղա	Սուչավա	Ն. Նախիջևան
տաշնոքում		դաշնորսում
15. տասնըխորնգում		դասնըհինգում
տասըխորնգում		
տասխորնգում		
16. տասնըվեցում		դասնըվեցում
տասըվեցում		
տասվեցում		
17. տասնօխտնում		դասնըօխտնում
		դասնըօխտնում
18. տասնութնում		դասնըութնում
		դասնըվութնում
19. տասնիննում		դասնըիննում
		դասնըվիննում
20. քսանում	քսանում	քսանում
30. արասունում	էսսունում	էսսունում
արասընում		
40. զ'առասունում	քառսունում	քառսունում
զ'առասընում		
50. յիթսունում	իսընում	(5)իսունում
յիթսընում		սունում
60. վաթսունում	վացընում	վաթցունում
վաթսընում		
70. օխտանասունում	օխթանասունում	յէթմիշում
օխտանասընում		
80. ութսունում	ուցունում	սէքսէնում
ութսընում		
90. իննըսունում	նըսունում	դօխսանում
իննըսնում		
100. խէրըրում	հարուրում	հարուրում
1000. զըզարում	հազարում	հազարում
Ծան.— Լեհահայ	ձեերը ավելացնում	ենը հողը. ինչպես՝
1. առաջի	5. հինգումը	9. իննումը
2. էրգուումը	6. վեցումը	10. դասնումը
3. իրեքումը	7. օխտ'նումը	20. քսանումը
4. չըրսումը	8. ութնումը	100. հարուրումը
		1000. հազարումը:

Ինչպես վերևում ասացինք, հենց առաջին ակնարկով անկարելի է չմտածել, թե դասականի այս-ում ձևը փոխ է առնված պարսկերենից: Նոր-Ջուղայի համար այս ենթադրությունը շատ հնարավոր է: Նոր-Ջուղայեցիք Հին Ջուղայից գաղթելու ժամանակ իրենց հետ բերին դասականի բոլոր ձևը, որ պահել են մինչև այժմ: Եվ պարսիկների հետ շփվելով՝ 300 տարվա մեջ կարող էին փոխ առնել պարսկերենի -um ձևը, որ -բորդ ձևի հետ միասին գործածում են այժմ. բայց ինչպես կարող էին Պարսկաստանից այսքան հեռու բնակվող այլ հայերը (լեհահայերը, հունգարահայերը, Ղրիմի հայերը կամ նաև ուղմինահայերը) փոխ առնել նույն պարսկերենից այս -um մասնիկը, քանի որ մեջները ոչ մի կապ չկար:

Անհնար չէ, որ մի լեզու մի ուրիշ լեզվից դասական մասնիկ վերցնի. դրա օրինակը տեսնում ենք հենց հայերենի մյուս բարբառների մեջ, որոնց մեջ մասել է թրք.— inji դասական մասնիկը, ինչպես պիտի տեսնենք քիչ հետո: Բայց այս բարբառներում եղած թուրքական այդ մասնիկի գործածությունը պատմական պատճառների մասին խոսել ենք վերը: Այդպիսի պատճառների արդյունք համարել նաև այս -um մասնիկի փոխառությունը պարսկերենից չենք կարող, որովհետև Լեհաստանի, Հունգարիայի, Սուլավայի հայերը ո՛չ մի կապ չեն ունեցել պարսիկների հետ: Այս բարբառներում կան արդարև մի խումբ պարսկերեն բառեր, սակայն դրանք փոխառյալ են թուրք և թաթար լեզուներից և ոչ մի ուղղակի կապ չի եղել այս հայերի և պարսիկների միջև:

Ուստի համարձակվում եմ առաջարկել այստեղ մի բոլորովին նոր մեկնություն:

Գրաբարում դասականները հոլովվելիս ստանում են ներգոյականում -ում մասնիկը, որ ապա Ում ճյուղի բարբառներումն էլ ընդհանուր դարձավ: Օրինակ՝ ասում ենք յեթքնբորդում ամսեամն, ի վեցեբորդում ամի, յուքեբորդում ժամու և այլն: Առևաբլրով զբաղվող լեհահայերը, հունգարահայերը և այլն, չէին մոռացել այս ձևերը: Միևնույն ժամանակ գիտենք, թե ինչքան մեծ սղուճների են ենթարկվում թվականները կյանքի մեջ. հն. τεσσαράκοντα դառնում է նոր հն. τερακοντα «40», հայերեն ելեսուն, քառասուն դառնում են եռ, քառ: Ներելի չէ՞ կարծել, որ այս վերի դասականների միջից էլ -բորդ մասնիկը կրճատվեց և Եհալյան—19

այդպիսով եօթներորդ, վեցերորդ և այլն, դարձան եօթնում, վեցում և այլն, որոնք համարվեցին դասական թվականի հատուկ ձև:

Այս բացատրությամբ -ում դասական մասնիկը հեռանում է պարսկերենից և երկուսի նմանությունը դառնում է բոլորովին պատահական:

Այս հարցի մասին որոշ լույս պիտի սփռեր հատկապես Հին-Ջուղայի բարբառը, բայց նրա դասականների կազմության մասին ոչինչ չգիտենք. Սակայն, եթե Հին-Ջուղայի բարբառը մեզ ծանոթ չէ, ընդհակառակը, շատ լավ ծանոթ է մեզ նրան մոտիկ հարևան Մեղրու բարբառը, որի մանրամասն քննությունը հրատարակեց պրոֆ. էդ. Աղայտնը (Երևան, 1942): Այս բարբառում դասականը կազմվում է ադրբեջաներենից փոխառված -իմջի մասնիկով, բայց շոքորդ և հիեգբորդ դասականներն ունեն նաև շուրքամ, հիեգամ ձևերը, որոնք նույն -ում մասնիկով են կազմված: Այս տվյալը կարևոր է նրանով, որ հաստատում է մեր ենթադրությունը ձայնական մի հիանալի օրենքով: Մեղրու բարբառում բառի վերջին փակ վանկի ձայնավորը դառնում է օ, ինչպես՝ գլուխ > գլուխ, պաուղ > պաուղ և այլն: Այդ օրենքին չի ենթարկվում միայն ներգոյականի -ում վերջավորությունը, որ բարբառումս ստացել է -ամ ձևը. ինչպես արտամ (արտում), Արդ, եթե շուրքամ, հիեգամ դասականների մեջ ունենք -ամ, ապա՝ դա, ըստ հիշյալ ձայնական օրենքի, ներգոյականի վերջավորությունն է:

Հետաքրքրական է նաև նկատել այն հանգամանքը, որ Նոր-Ջուղայի բարբառում դասականների առաջին ձևը (-բորդ մասնիկով) սովորական գործածություն ունի, իսկ երկրորդ ձևը (-ում մասնիկով) գործ է ածվում միմիայն լայն ինչերորդ անգամ իմաստով. օրինակ՝ էս խնդուքն ա օր գ'ուլման ամ ու տանը չես յելնում, բայց չի կարելի ասել խեզում տուեր, այլ միայն՝ խիեգբորդ տուեր և այլն:

Վերջապես պետք է հիշել նաև, որ Կիլիկյան հայերենում էլ, ինչպես ասում է Կարսը (էջ 222,) -բորդ մասնիկով դասական չկար. դասականը կազմվում էր -ում ձևով: Եվ իրոք, միջին հայերեն աստղաբաշխական մի գրվածքում գտնում է. բ. ում, գ. ում դ. ում, ե. ում գ. ում, է. ում... ձևերը (անդ, ծան.):

Այս բոլորը ինկատի առնելով՝ թվում է, թե -ում մասնիկի ծագման վերի բացատրությունը ճշմարիտ է:

Բարբառների մի երրորդ և ավելի սովոր շարք, որ փոխած է Ռոտոսթոյից սկսած մինչև Արևմտյան Պարսկաստան, չունի ոչ -երորդ և ոչ էլ -ում մասնիկը և իր դասականները կազմում է օգտագործելով թրք. կամ ադրբեջաներեն ՔՅՄ մասնիկը, որ ըստ բարբառի այլևայլ ձևափոխություններ է ստանում: Պոլսում գործ էածվում իննի (կարդա ինջի) ձևով, ինչպես՝ իրէքինջի, չօրսինջի, ութնինջի, օխանինջի, դասնինջի և այլն:

Ադրբեջաներեն ԵՄ, թրք. ոյի մասնիկի ծագումը պետք է անշուշտ կապել մանջուրերեն Շի մասնիկի հետ, որ կազմում է դասական. ինչպես՝

emuči	առաջին
juweči	երկրորդ
ilači	երրորդ
duiči	չորրորդ և այլն.

Ազուլիսի բարբառը նույն մասնիկը ադրբեջաներենի ձևով ունի մընջի, որի առաջ գտնված թվականը որևէ սղում չի կրում, ինչպես՝ տրիմընջի, իրիքմընջի, չուքքմընջի և այլն: Միայն առաջին բառը լինում է ըռջի, ըռջիմը, առաջի, բայց նաև ըռքչմընջի:—Հոլովման ժամանակ, այս -միջի մասնիկի վրա ավելանում է ն որոշիչ հոդը: Ինչպես՝ տրկիւմինջինի, տրկիւմինջից, տրկիւմինջինում, տրկիւմինջինում և այլն: Այս ն հոդը գտնում ենք նաև բացարձակների որոշյալ ձևի մեջ. ինչպես՝ էխտընը «եօթը հատը», օթընը «8 հատը», այնընը «9 հատը», տօսսընը «10 հատը» և այլն:

Մարագայի բարբառում դասականները կազմվում են թրք. իմջի, ըմջը, ումջը մասնիկներով, որոնք կցվում են բացարձակներին, համաձայն նրանց շեշտյալ ձայնավորի. -իմջի մասնիկը կցվում է այն թվականների վրա, որոնց շեշտյալ ձայնավորն է ա, ի. այսպես են՝ իրիքիմջի, խինգիմջի, վիցցիմջի, իննիմջի, խտրիբիմջի, խտզտրիմջի. -ըմջը կցվում է, երբ շեշտյալ ձայնավորն է ա. այսպես են՝ տասսըմջը, քըսսանըմջը. իսկ -ումջը կցվում է, երբ շեշտյալ ձայնավորն է ու. ինչպես՝ երկումջը, ութթումջը, վացցուեումջը: Այս մասնիկների տեղ կարելի է դնել նաև -իմիջի, -միմջի -ումընջը, -ըմընջը, -մընջը ձևերը. առաջին երկուսը շեշտյալ ի ձայնավորն ունեցող թվականների համար, ումընջը՝ շեշտյալ ու ձայնավորն ունեցողների համար, ըմընջը՝ ա ձայնավորի համար, իսկ մընջը՝ թե՛ ա, և թե՛ ու ձայնավորների համար. ինչպես՝



իբիճ՝միմեջի, իբիճ՝միմեջի, չուրսումընը, չուրսումընը, խիմգ՝միմեջի, խիմգ՝միմեջի, ութթումընը, ութմընը, իմեիմիմեջի, իմեմմիմեջի, տասսամընը, տասմընը, քսասմընը, քսասմընը, քառսումընը, քառսումընը և այլն:

Դասականի մասնիկները կցվելու ժամանակ բացարձակ թվականներից նրանք, որոնք վերջանում են բաղաձայնով, ոչ մի ձայնական փոփոխություն չեն կրում (երկու բառը այս պարագային ստանալով երկուս ձևը, նույնպես դառնում է բաղաձայնահանգ). իսկ ձայնավորով վերջացող թվականները, զբրկվելով իրենց վերջին ձայնավորից, իբրև բաղաձայնահանգ միանում են մասնիկին. այս պարագային, երբ մասնիկը սկսվում է բաղաձայնով, բացարձակի կրկին բաղաձայններից մեկը ջնջվում է, կամ վերջին ձայնավորը մնում է՝ արտասանության գյուղության համար. ինչպես՝ ութմընը, իմեմմիմեջի, տասսամընը, տասմընը:

Կան նաև գրականից փոխառյալ դասական ձևեր, ինչպես՝ տռաչիմ, յէրկրօրթ. յէրթօրթ, խիմգօրթ և այլն, որոնք գործածական են ավելի դպրոցականների լեզվի մեջ և դպրոցի համար: Վերջինների մեջ միջաձայն ե-ն վերջավանկի օ ձայնի ազդեցությամբ դարձել է օ:

Ղարաբաղի բարբառում դասականի մասնիկն է -ըմչի կամ ընչի. ձայնավորով վերջացող բացարձակները ստանում են -նչի մասնիկը. օրինակ՝ միերնչի, էրկունչի, իբէքնչի, ճէնգնչի, իմեքնչի, ուխտընասունը օխտընչի կամ միքնչի, երկունչի, իբէքնչի, ճէնգնչի, իմեքնչի, ուխտամասունը օխտընչի և այլն և այլն: «Առաջին» բառը բացատրվում է նաև առաչքի, ընթկի ձևերով և կամ ավվալըմչի բառով, որ կազմված է արբա. avval «առաջին» բառով և ադրբեջ. ԻՊՁ մասնիկով: Ասվում է, սակայն, տըսնըմիւնըմչի, քըռոսսունըմիւնըմչի և այլն և ոչ ուրիշ կերպով:

Սվեդիայի բարբառում դասականները կազմվում են ընչի մասնիկով՝ առաջին չորսը լինելով զուտ թուրքերեն. այսպես՝

1 բիրընջը (առջը)

2 իքընջը

3 իւչընջը

4 դէօրդընջը

5 հէնգընջը

6 վիցընջը

- 7 յօթթընչը
- 8 էօթթընչը
- 9 էննընչը
- 10 դուսսընչը
- 100 հարըըընչը
- 1000 հազարընչը:

Միայն առաջին բառն է, որ բարբառներում պահում է իբր ինքնուրույնութունը, բայց այստեղ էլ կարող է ստանալ նույն -inji մասնիկը, այսպես՝ Պլ. ննխ. առչի, Ագլ. բռչի, բռչիմը, առաջի, բռչմընչի, Ղրբ. առաջի, բռչկի և այլն:

Դասականների չորրորդ խումբը կազմում են այն բարբառները, որոնք բնավ դասական չունեն: Այսպես, օրինակ՝ Համշենի բարբառը դասական չունի, հարկավոր դեպքում դնում են բացարձակ թվականը: Երբ ես առաջարկեցի այսպիսի մի խոսք թարգմանել Համշենի բարբառով՝

«Ես ունեմ վեց որդի, հինգերորդին չեմ սիրում, բայց վեցերորդին շատ եմ սիրում»:

Պատասխան ստացա՝

«Յէս ունիմ վեց տղա, հինգին չիմ սիրէլ, ամա վեցին շադ սիրիմ դու»:

Երբ ես նկատեցի, թե եղավ 11 որդի, շփոթվեցին, զանազան ձևեր փորձեցին, վերջում հրաժարվեցին, թե մեր լեզվով կարելի չէ այդպես խոսք ասել:

Տրապիզոնի շրջանում կա թրք. inji (ինչի) մասնիկի գործածութունը՝ հայերեն թվականների հետ, բայց Համշենում այդ էլ չկա: Միախոտի որակավորման ժամանակ գործածում են միայն բիրիմչի, իքիմչի, իչիմչի, դէռիմչի ռառաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ ձևերը:

Ջեթունի բարբառումն էլ չկա դասական. երբ նախադասության մեջ դասական պատահի, անհարմար ձևով գործածում են բացարձակը. ինչպես՝

Առչէ ձօռը թուղ, իյգուքն տ թուղ, իյիքը գ'ըդոէ (առաջին ծառը թող, երկրորդն էլ թող, երրորդը կտրիր):

Առչէ գ'օռը չէ, իյգու գ'օռն տ չէ, իյիք գ'օռը գօբու (առաջին դուռը չէ, երկրորդն էլ չէ, երրորդը ծեծիր):

Մինչև անգամ Վանի բարբառը, որ Հայաստանի կենտրոնական բարբառներից է և այնքան հարուստ ժառանգու-

թյուն ունի գրաբարից, չգիտի դասական թվական: Թրք. քի-  
բիճըի «առաջին» բառը գործածվում է այստեղ էլ, ինչպես Պու-  
սում, «առաջնակարգ, գերազանց» իմաստով, իսկ իքիճըի կամ  
երկուքիճըի, իչիճըի կամ իքեքիճըի և այլն թուրքախոսն ձևերը,  
որ գտնում ենք այլ բարբառներում, չեն գործածվում Վանի բար-  
բառում:

Շատ զարմանալի է բարբառներում տեղի ունեցած այս  
կորուստը՝ դասական թվականների մեջ, մանավանդ երբ նկատի  
ուենանք այնպիսի լեզուներ, որոնք թվականի կողմից շատ  
ազքատ են և սակայն ունեն սեփական դասական: Օրինակ՝ Հի-  
պերբորյան կորյակ լեզուն, որ հինգերորդական դրության է  
պատկանում (այսինքն՝ 6, 7, 8, 9 ասելու փոխարեն ասում է  
5—1, 5—2, 7—3 և այլն), որ տասնորդականները կազմում է  
միավորի պարզ հարադրությամբ, որ չունի 100 և 1000 բառերը,  
որոնք փոխ է առել ուսերենից, ունի սակայն դասականի հա-  
մար xevkin մասնիկը:

Որովհետև բարբառների մեծագույն մասում որևէ հայե-  
րեն ձև չկար, ուստի աշխարհաբարը իր կազմավորման ժամա-  
նակ դիմեց գրաբարին և նրա բոլոր դասականները վերցրեց  
անփոփոխ: Այսպես՝ առաջին, երկրորդ, երրորդ, և մինչև անգամ  
ութերորդ, իններորդ... մետասաներորդ, երկոտասաներորդ,  
երեքտասաներորդ, վեշտասաներորդ և այլն: Այս ձևերը ոչ մի-  
այն գործածական էին, այլև նույնիսկ Այտն. 33 թույլատրում  
է գործածել աշխարհաբարի մեջ, «մանավանդ դարերու կամ թա-  
զավորաց և այլն անունները որոշելու համար, այսպես՝ երկո-  
տասաներորդ դարեն մինչև իննևտասաներորդս. Լուգովիկոս վեշ-  
տասաներորդ. Յովհաննես իննևտասաներորդ և այլն»:

Ավելի հետո զուտ գրաբար ձևերը վերացան. աշխարհաբարը  
գրաբարից վերցրեց միայն -րորդ կամ -երորդ մասնիկը, որ  
հարեց իր ընդունած բացարձակ թվականներին. այսպես՝ փո-  
խանակ ասելու ութերորդ, մետասաներորդ, երկոտասաներորդ  
և այլն, ասացին՝ ութերորդ, տասներմեկերորդ, տասներկուերորդ,  
տասնվեցերորդ և այլն: Կան մարդիկ, որ գործ են ածում դեռ  
ութերորդ, տասնչորրորդ, երեսներորդ, յիսներորդ, վաթսներորդ  
և այլն, բայց դրանք հնացած ձևեր են. հմմտ. օրինակ՝ Ա. Տյու-  
մա, Ժողեֆ Պալսամո, թրգմ. Կ. Նազմաճյան, Ջմիւռնիա 1873,  
հտ. Դ, էջ 119՝ Երբ դատավորը իւր քսանևչորրորդ կեղծ ծամբ  
կը փորձէր...

Բայց այս ձևերին պետք չէ հետևել. այժմ ընդունված ձևերն են՝ ութերորդ, տասնչորսերորդ, երեսուներորդ, հիսուներորդ, վաթսուներորդ և այլն, առանց սղման: Սովորական է նաև ասել տասնմեկերորդ, քսանմեկերորդ և այլն, թեև առանձին ասվում է առաջին և ոչ՝ մեկերորդ:

Քանի՞ բառն էլ ունի դասական. ձև, որ է քանիերորդ՝ (հին ձև է քաներո՞րդ):

Բոլոր դասականներն էլ հոլովվում են ի հոլովմամբ՝ առանց որևէ շեղման. նույնիսկ առաջին և վերջին, որոնք գրաբարում ենթարկվում էին ու հոլովման, ժամանակակից հայերենում փոխել են հոլովումը և կանոնավոր կերպով հոլովվում են ի հոլովմամբ:

## 2. ԲԱՇԽԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

Բաշխական թվականը ցույց է տալիս, թե յուրաքանչյուրին քանի՞ հատ բաժին է ընկնում. օրինակ՝ մեկպիսիս, երկուպիսիս և այլն:

Քիչ լեզուներ կան, որոնք բաշխականի համար առանձին ձև ունեն. ընդհանրապես դիմում են կամ սովորական դարձվածների և կամ նախդիրների օգնությամբ. օրինակ՝ Ֆրանս. *cinq pour chacun* «հինգ առ յուրաքանչյուրն», *dix à dix* «տասն առ տասն», *dix par dix* «տասը տասը», ռուս. *по два* «երկուական, ամեն մեկին երկու», գերմ. *je zwei* «յուրաքանչյուրին երկու» և այլն:

Ուրիշ լեզուներ բաշխականը կազմում են կրկնությամբ. այսպես են իրանական լեզուները, սեմականները, կովկասյանները, ինչպես նաև զանազան եվրոպական լեզուներ: Այսպես՝

Իրանական լեզուներից՝

պարս. *yak yak* «մեկական», *du du* «երկուական», *se-se* «երեքական». պհլ. *evak evak* «մեկ մեկ», քրդ. *yak yak* «մեկական», *se-se* «երեքական», *sad-sad* «100-ական».

աֆգ. *calōr-calōr* 4-ական.

Այսպես նաև հինդուստանի լեզվով՝ *ek-ek* «մեկական», *do-do* «երկուական», *tin-tin* «երեքական».

Սեմական լեզուներից՝

բբր. *šiša-šiša* «վեցական».

ասոր. *xad-xad* «մեկ մեկ».

արար. Թալաթաթան va Թալաթաթան «երեք-երեք»։ օրինակ՝ vamaratti  
l'asakiru Թալաթաթան va Թալաթաթան «և անցան զինվորները 3—3»։

Կովկասյան լեզուներին՝

վրաց. Թոտ-Թոտո օթխ-օթխի «4 ական», ևսմ-ևսմո սամ-սամի  
«3 ական»։

լակերեն caca «մեկ-մեկ», k'ik'iva «երկու-երկու», šanšama «երեք  
երեք» և այլն։

Եվրոպական լեզուներին՝

անգլ. two and two «երկուական»։

իտալ. ad uno ad uno «մեկ-մեկ», a due a due «երկերկու»,  
a tre a tre «երեքական»։

Շվեդերեն tva<sup>0</sup> och tva<sup>0</sup> «երկուական» (կրկնությամբ և և  
շաղկապով, ինչպես անգլերենն է)։

Բիչ լեզուներ կան, որ բաշխականի համար ունեն առան-  
ձին մասնիկ, այսպես են՝

լատ. bini «երկուական», terni «երեքական», quaterni «չոր-  
սական»։

Սանսկրիտում բաշխականը կազմվում է ka մասնիկով, որ  
միաժամանակ թրումբ է նշանակում. ինչպես՝

ekakam	«մեկ-մեկ»
dvake	«երկու-երկու»
trikā	«երեք-երեք»
ṣātuṣka	«չորս-չորս»
saptaka	«յոթ-յոթ»
aṣṭaka	«ութ-ութ»։

Ամերիկյան արավակ լեզվում բաշխականի համար կազմը-  
ված են չափազանց երկար ձևեր. ինչպես՝

abbatekabbe 5, abbatekabunumakanniman «5 ական»  
biamattiman 7, biamattimaninumakanniman «7 ական»  
kabbuhintiman 8, kabbuhintimaninumakanniman «8 ական»։

Պրս. բացի կրկնականին՝ կան նաև -gān կամ -gāna մասնի-  
կով կազմված ձևեր, որ կարելի է նաև կրկնաբար գործածել,  
ինչպես՝ yagāna «մեկական», dūgān կամ dūgān dūgān կամ  
dūgāna «երկուական, երկու երկու», sagāna «երեքական», čabār-  
gana «չորսական», haftgāna կամ haftgana haftgāna «յոթա-

կան», *duvistgān* «200 ական» և այլն: Մրանք ծագում են պհլ. *-kānak* ձևից. *ինչպես՝ dukanak* 2—2, *sikanak* 3—3 և այլն:

Հնդեվրոպական լեզուներում բաշխականի հնագույն ձևը համարվում է կրկնականը. օրինակ՝ սանս. *pañca-pañca* «հինգ հինգ», *pūrvas-pūrvas* «յուրաքանչյուր առաջինը», հյ. «հինգ հինգ»: Այնուհետև կար մի նոր ձև, որ կազմվում էր բազմապատկականի վրա ավելացնելով *-no-* մասնիկը. *ինչպես՝ dvis-noi* > լտ. *bīnī*. «երկուական», *tris-noi* > լտ. *trīnī*, *ternī* «երեքական», հիսլ. *tuenner*, գոթ. *tweihnai* «երկուական», հրգ. *zwirnen* «ոլորելով կրկնել»: հիսլ. *θrennr* «երեքական», լտ. *quaterni* «չորս չորս» և այլն:

Մի երրորդ ձև էլ կազմվում էր *-go,-lo* նվազական մասնիկներով. *ինչպես՝* լտ. *sin-guli* «մեկ մեկ», գոթ. *aina-kls* «միակ»:

Թուրքերենում բաշխականը կազմվում է բացարձակի վրա ավելացնելով *ar, er* մասնիկը, եթե բացարձակը վերջանում է բաղաձայնով, և *šar, šer* մասնիկը, եթե բացարձակը վերջանում է ձայնավորով. *ինչպես՝*

*birer* «մեկական», *ikišer* «2-ական», *üčer* «3-ական», *dörter* «4-ական», *bešer* «5 ական», *altəšar* «6 ական», *onar* «տասական»:

Կարելի է և կրկնությամբ ասել՝

*birer-birer* մեկիկ մեկիկ  
*altəšar altəšar* վեցական:

Թուրքական շոռ լեզվում բաշխականը կազմվում է բացարձակի բացառական հոլովից. *ինչպես՝ iygiden* «2-ական», *ušten* «3-ական»:

Ֆիննական ոգուլ լեզվում բաշխական կազմելու համար թվականը կրկնում են և գոյականը դնում են գործիական հոլովով. *ինչպես՝*

*kit-kit kopeikäl*  
*5 5 կոպեկ(ով)*  
*ät - ät puntl*  
*10—10 ֆունտով*

Մուսոգա խմբից կոհլ լեզվով բաշխականը կազմվում է բացարձակների կրճատ կրկնությամբ. *ինչպես՝*

*apiapi* երեքական  
*upunupun* չորսական

momorex հինգական  
turturia վեցական:

Մեկանեղյան յարեմ լեզվում բաշխականը կազմվում է բացարձակի պարզ կրկնությամբ:

Աֆրիկյան էվե լեզվով բաշխականը կազմվում է կրկնությամբ. ինչպես՝ ewe-ewe երկուական:

Բուրյաթական լեզվում բաշխականը երկու ձև ունի. կամ դնում են gat, got, get, göt մասնիկները և կամ թվականը կրկնում են (վերջին դեպքում երկրորդ բառը գործ. հոլովով).

1—1 nužeget	3—3 gurbagam
2—2 xošogot	4—4 durbögöt

կամ

1—1 nigen-niger	3—3 gurban-gurbar
2—2 xoyer-xoyeror	4—4 durbön-durbör.

Օստյակ լեզվում էլ բաշխականը կազմվում է բացարձակը դնելով գործիական հոլով. ինչպես՝

kādenat (=2-ով) «երկուական»  
xūdat (=6-ով) «վեցական»:

Թուրքմեններենում՝ բացարձակի կրկնությամբ և բացառական հոլովով. ինչպես՝ iki-ikiden 2—2, baş-bāšden 5—5:

Հնդկական սանտալի լեզվում բաշխականը կազմվում է կ' միջամասնիկով. օրինակ

ḡāe 7 -ek'āe «7-ական»  
irāl 8 -ik'ral «8-ական»:

Դրավիդյան թամիլ լեզվում բաշխականը կազմվում է բացարձակների նախավանկի կրկնությամբ. ինչպես՝

1	oḡṛu-ovvovṛu
2	irapṭu-ivvirapṭu
3	mūḡṛu-mummūḡṛu
4	ṇālu, ṇāṅku-naṅṅāṅku
5	aiṅtu-aiyaiṅtu
6	āru-avvāṛu
7	ēlu-evvēlu
8	eṭṭu-evvetṭu

9 onpatu  
10 pattu-pappattu:

Հնդկական մոնոգարի լեզվով բաշխականները կազմվում են բացարձակների կրճատ կրկնությամբ. ինչպես՝ mi-mid1—1, ba-baria 2—2, ap-apia, 3—3, up-upunia 4—4, mon-monrea 5—5, gegelea 10—10:

Աֆրիկյան դագոմբա լեզվով (բանտու) բաշխականը կազմվում է կրկնությամբ, բայց կրկնության ժամանակ կատարվում են մեծ հապավումներ. ինչպես՝

anahe	4 ananahe	«4-ական»
ayobu	6 ayoyobu	«6-ական»
ayupoi	7 ayopómpoe	«7-ական»
pia	10 pipia	«10-ական»
pine yini	11 pine yini yini	«11-ական»
pisi ayi ka	18 pisi ayi ka ko	«18-ական»:

Հայերենի մեջ՝ գրաբարի բաշխականի առանձին ձև չկա. բաշխականը արտահայտվում է կրկնությամբ. օրինակ՝

Եվ յամենայն անասնոց սրբոց մոյժ ընդ քեզ Խթն եւրն արու և էգ, և յամենայն անասնոց որ ոչ են սուրբ՝ երկուս երկուս արու և էգ. Ծն. է. 2.

Եւ սերովքէք կային շուրջ զնովաւ. վեց թեք միոյ և վեց թեք միոյ. Ես. գ. 2.

Տանէին մի մի ի նոցանէ մարս երկուս և երիս. Յհ. բ. 6:  
Բարբառներում և աշխարհաբարում կարելի է արտահայտել բաշխականը՝

1) Սովորական բացարձակ թվականով. ինչպես՝ ամեն մեկից (յուրաքանչյուրին) մի ուրիշ տվեց. ամեն մեկը հինգ կուպեկ արժե:

2) Կրկնությամբ. ինչպես՝ ամեն մեկին հինգ հինգ ուրբլի տվեց. բոլորիս երեք երեք անգամ կանչեց. երեսուն հոգի էինք, տասը տասը բաժանվեցինք, եղանք երեք խումբ:

3) Ական մասնիկով. մեկական, երկուական, երեքական, չորսական, հինգական, վեցական, յոթական, ութական, իննական, տասական, քսանական, երեսունական, քառասունական, հիսունական, վաթսունական, յոթանասնական, ութսունական, ինսունական, հարյուրական, հազարական, միլիոնական:



Ընդհանուր կանոնով կրկնությամբ կազմությունը հատուկ է փոքր թվերին, իսկ -ական մասնիկը՝ մեծ թվերին: Այսույան, էջ 31, 33 դնում է մինչև վեց վեց կրկնակ ձևով, առանց մերժելու միաժամանակ երկուքական, երեքական, չորսական, հինգական և վեցական ձևերի գոյությունը: Չգիտե մեկական ձևը: Թերևս այսպես էր անցյալ դարում, բայց արդի հայերենի, ինչպես և բարբառների մեջ կրկնական ձևը ընդունված է մինչև տասը, իսկ -ական մասնիկը ընդհանուր է բոլորին: Ժողովրդական ձևով կա նաև երկուսի խառնուրդը. ինչպես՝ մեկ-մեկական, երկ երկուքական, երեք-երեքական, չորս-չորսական և այլն, բայց գրական լեզվի մեջ խորթ կամ ավելորդ է համարվում այդ երկուսի միացումը:

Կրկնական ձևերը կազմելու ժամանակ՝ 1—10 թվերը ընդհանրապես մնում են անփոփոխ. մանավանդ ժամանակակից գրական լեզվի մեջ, բայց բարբառներում նկատելի են մեյմեկ, մեմեկ, երկ երկու, յոթ յոթը, տաս տասը: Սրանց մեջ, ինչպես տեսնում ենք, կրճատվում է երկու բառի ու հանգը և 7—10 բառերի ք վերջավորությունը:

Ական մասնիկը կցելու ժամանակ ի, ու ձայնավորների սղումը երբեմն կատարվում է, երբեմն ոչ. ինչպես՝ հինգական կամ հնգական, երեսունական կամ երեսնական, հիսունական կամ հիսնական, յոթնասունական կամ յոթանասնական և այլն: Սղյալ ձևերը հատուկ են հին աշխարհաբարին (այդպես է նաև Այսույանի մոտ), բայց այժմ էլ կարելի է հանդիպել ժամանակակից գրական լեզվում:

Հարյուրավորներն ու հազարավորները -ական մասնիկը ստանում են կամ ամբողջի վրա և կամ միայն առաջին թվի վրա. ինչպես՝ յոթնաբյուրական կամ յոթնական հարյուր, հինգհազարական կամ հինգական հազար, տասը հազարական կամ տասնական հազար և այլն: Բայց այս բոլորը կարելի է նաև կազմել առաջին մասի կրկնությամբ. ինչպես՝ յոթ-յոթ հարյուր. հինգ-հինգ հազար, տասը-տասը հազար և այլն: Երբ թիվը բաղկացած է տասնավորից ու միավորից, -ական մասնիկը դրվում է միայն միավորի վրա. ինչպես՝ տասներեքական, հիսունվեցական, յոթանասուն և հինգական և այլն:

Քանի՞ հարցականն էլ կարող է ստանալ բաշխական ձև. քանի՞ քանի հատ բաժանելիք. քանիական (քանիսական):

Բոլորն էլ կարող են հոլովվել առաջին հոլովմամբ. ինչպես՝ յոթը հատը հինգականով քանի՛ կլինի, երեք երեքից կամ երեքականից լինում է 21:

Կարոտը միջին հայերենում հաստատ է համարում կրկնական ձևով բաղխականի գոյությունը. ընդունում է նաև -ալիան ձևով բաղխականների գոյությունը, թեև պատահաբար օրինակներ չեն ավանդված. իր ապացույցն այն է, որ այս ձևը բոլոր բարբառների մեջ էլ գոյություն ունի, հատկապես լեհահայ բարբառում:

Ավելի հին գրաբարում էլ կան ավանդված -ալիան ձևով մի քանի բառեր, որոնք են՝ միտկան, երկաղան, հեգալան, քսաթական. նույնիսկ Ծ-րդ դարի առաջին կեսից ունենք հեգեղան (ընդ հնգեղան կամարար կուսանացն, Ագաթ.), որ կազմված է հին \*հեգե ձևից. բայց այո բոլորի մեջ էլ բաղխականի գաղափար չկա, այլ ավելի նշանակում են ռմեկհատիկ, հինգհատիկ և այլն: Այսպես է նաև յոթեղան. Երգն.:

Հայերեն բարբառներում էլ ընդհանրապես բաղխականները կազմվում են, ինչպես ասացինք, կամ կրկնությամբ, կամ -ալիան մասնիկով: Ուրույն ձև ունի նոր-Ջուղայի բարբառը, որի մասին կխոսվի ստորև:

Վանի բարբառում բաղխականը կազմվում է երկու ձևով. կրկնությամբ կամ -ալիան մասնիկով: Առաջին ձևով ունենք մէյմեկ, էրկու-էրկու, իրեք-իրեք, շորս-շորս, խիյ-խիեք՝ և այլն:

Երկրորդ ձևով ունենք՝ մէկական, էրկուական, իրեքական, չորսական, խընգական, վեցական, յոթական, ութական, ինական, տասական և այլն:

Այս երկրորդ ձևի բաղխականները սովորական չեն. ավելի լավ են համարվում կրկնականները:

Լեհաստանի և Սուչավայի բարբառում բաղխականի -ալիան մասնիկը կամ պահվում է ամբողջությամբ, և կամ սղվելով զրկվում է իր առաջին ա ձայնավորից, որի հետևանքով կ>գ գտնվելով ուրիշ բաղաձայնների մոտ՝ հարմարվում է նրանց աստիճանին և մինչև անգամ հապավվում: Այսպես, ունենք՝

2 Սչ. էրգուսգան, լեհ. էրգուսգ՛ան.

3 Սչ. իրեքան. լհ. իրեգ՛ան.

11 Սչ. դասնը մէգագան. լհ. դասնը մէկգ՛ան.

13 Սչ. դասֆիրեքան

20 լհ. քսանազան  
1000 լհ. հազարազան  
լհ. քանդզմն:

Նոր-Ջուղայի բարբառում բաշխականի համար գործածվում են բացարձակ թվականները պարզ կամ կրկնական ձևով. ինչպես՝ Հառմնին (ամեն մեկին) խինգ զոան տվի. Գ'նա էն կժերը չոք չոք (4—4) վե առ բ'եր: Ուրիշ բարբառներում սովորական-ալիպան ձևը այստեղ չի գործածվում:

Նոր-Ջուղայի բարբառը բաշխականի համար ունի նաև ինքնահատուկ մի ձև, որ կազմվում է ֆի (ռուս. ո, օ, գերմ. je) նախդիրով: Այս բառը արար. Յ ի ձևն է, որ նշանակում է ամեջ, ի, իւրաքանչիւրն ի գինձև պարսկերենում ստանալով վերի նշանակութունը, անցել է նաև Նոր-Ջուղայի բարբառին, և կարող է կցվել ամեն մի թվականի. օրինակ՝ Ֆի միքը Եամեն մեկը... գնով: Ֆի խինգ թուման Եամեն մեկը 5 թումանով: Ֆի վեց ուրլի Եամեն մեկը 6 ուրլով: Ֆի տասը և այլն: Նաև Ֆի շիշի խմար Եամեն մեկ շիշի համար: Գիլանենցու ժամանակագրության մեջ էլ ունենք (էջ 101) Եթորենն Ֆի դիդրն ք թուման. բրինձն Ֆի դիդրն Ժ թուման, ուղն Ֆի դիդրն Ժր թուման. շաքարն Ֆի դիդրն Ժր թուման. խավե ձուն Ֆի դանէն (հատը) Բճ գիան:

Ազուլիսի բարբառում էլ բացարձակները կրկնվում են, միայն հաճախ առաջինը կրճատելով. ինչպես՝ մույն-մույն, տրկ-տրկիւ, հանգ-հանգ, էխտ-էխտ, այն-այնը, տօս-տօսսը և այլն: Ալիպան մասնիկը գործածական չէ:

Մարաղայի բարբառում բաշխականը կազմվում է նույնպես կրկնութամբ. այս կրկնության ժամանակ առաջին բացարձակ թվականը կրում է օրինական ձայնափոխութունը, սակայն կարող է նաև մնալ անփոփոխ. ինչպես՝ մէյմէկ, էրկէրկու կամ էրկու-էրկու, իրիք-իրիք, խիյ-խինգ կամ խինգ-խինգ, օխտ-օխտա կամ օխտա-օխտա, ութթ-ուրթթա կամ ութթա-ուրթթա, ինն-իննտ կամ իննտ-իննտ և այլն:

Ինչպես Ազուլիսի բարբառում, նույնպես և այստեղ -ալիպան մասնիկով ձևեր չկան:

Սվեդիայի բարբառում էլ -ալիպան ձևը ջնջված է և բաշխականի համար մնում է միայն կրկնականը. ինչպես՝ չուրս-չուրս, վիցց-վիցց, գուսսը-գուսսը, հորէր-հորէր և այլն:

Ղարաբաղի բարբառում բաշխականը կազմվում է պարզ կրկնությամբ. ինչպես՝ մին-մին, էրկու-էրկու, հէնգ-հէնգ, օթ-օթ, քոռասուն-քոռասուն և այլն: Փոխանակ ասելու մին մին, կարելի է ասել նաև կրնտ-կրնտակ, որ է սկենտ, անգույգձ. հմմտ. վրաց. კნტო կէնտի: Իսկ -ական մասնիկի գործածությունը սակավագեպ է. ինչպես՝ իրէքական և այլն (տես և չափականների մեջ):

Համշենի բարբառում էլ բաշխականները կազմվում են բացարձակներից՝ կրկնությամբ կամ ավելացնելով ազօն, մազօն կամ կօն մասնիկը. ինչպես՝

մէյմէգ, մէգմէգ, մէգագօն, մէգկօն.

էրկուս էրգուս, էրգու էրգու, էրգըսագօն, էրգըսնագօն, էրգըսկօն.

իրէք-իրէք, իրէկկօն, իրէքագօն, իրէքնագօն.

չէօյս-չէօյս, չէօյսագօն, չէօյսնագօն, չէօյսկօն.

հինգ-հինգ, հընգկօն, հընգակօն, հընգնագօն.

վէց-վէց, վէցագօն, վէցկօն, վէցնագօն.

օխտը-օխտը, օխտագօն, օխտնագօն, օխտկօն.

ութ-ութ, ութագօն, ութնագօն, ութկօն.

ինը-ինը, ինագօն, իննագօն, ըննագօն.

դասը-դասը, դասնագօն, դասագօն, դասկօն.

Ջեյթունի բարբառում էլ բաշխականը կազմվում է բացարձակի կրկնությամբ. ինչպես՝ մէգ-մէգ-իյգու (կամ իյգ-իյգու), իյիք-իյիք և այլն: -Ական մասնիկի գործածությունը չկա:

### 3. ԲԱՉՄԱՊԱՏԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

Ձանազան լեզուներ ունեն արտահայտության տարրեր եղանակներ՝ ցույց տալու համար, թե մի բան մի ուրիշ բանից այսքան անգամ մեծ է:

Հնդեվրոպական լեզվում բազմապատկականը կազմվում էր -s մասնիկով՝ երկուսից չորս թվերի համար. այսպես, ունենք՝

\*dwis, dis > սանս. dvis, հն. ճի՞, լտ. bis, զնդ. biš

\*tris > սանս. tris, հն. տի՞, լտ. ter, զնդ. ֆրի՞

\*k<sup>w</sup> etrus > սանս. čatur, լտ. quater, զնդ. չաֆրւ՞

սրանց հետ հմմտ. նաև հրգ. zwis-ki «կրկնակի», dris-ki «երեք անգամը» և այլն:

Սրանցից դուրս կան նաև ուրիշ բազմապատկական ձևեր, որոնք երևում են այս ու այն լեզուների մեջ. ահա սրանցից կարևորները.

1)-կր՛տ ձևով. հմմտ. սանս. sakr't շմի անգամ, pañča kr'tvas ճհինգ անգամ, հսլ. duva kraty ճերկու անգամ, ոուս. однократно շմի անգամ, многократно բազմապատիկ, և թերևս օսկ. petiro-pert ճչորիցս:

2) Pel-ճընկնել՝ արմատից՝ զանազան ձևերով (walde-Pokorny, II, էջ 55—56), ինչպես՝ հն. á-πχός պարզ, մետակ, ծի-πλόճ ճիրկին, կրկնակ, լտ. sim- plus, պարզ, du-plus ճիրկնակ, triplus ճեռապատիկ, գոթ. zwei-fis=հրգ. zwīfal, գերմ. zweifel ճերկմտութուն, կասկած. հն. ծի-πλαξ ճիրկին, լտ. simplex պարզ, du-plex ճիրկին, հն. ծի-παλτος, ծի-πλασιος, գոթ. ain-falθs, հրգ. einfald, հիսլ. einfaldr, գերմ. einfältig պարզամիտ, hundertfältig ճարյուրապատիկ, անգլ. sixtyfold ճվեցպատիկ, thertyfold ճերեսնապատիկ, hundredfold ճարյուրապատիկ և այլն:

3) -gha մասնիկով. ինչպես՝ սանս. vičva-ha ճամեն անգամ, միշտ, զնդ. bi-ža-vať ճերկիցս, θρι-ζαť ճերիցս, հն. σι-κα ճիրկնակի, τρι-κα ճեռյակ, τέτρακα ճքառյակ և այլն:

Ուրիշ լեզուներից հիշենք հետևյալները.

Պարսկերենում բազմապատկականը կազմվում է lā, tā, vey մասնիկներով. ինչպես՝ dulā ճերկու անգամ, setā ճերեք անգամ, dehvey ճտասն անգամ (սրանցից առաջինը՝ lā նշանակում է ճծալք, երկրորդը՝ tā ճհատ <պհլ. tāk ճճուղ> բառն է, հյ. տակ, երրորդը vey ճնա կամ ինքք):

Գերմաներեն՝ բացի վերի ձևերից, կարելի է գործածել նաև fach բառամոտնք, մասս բառով կազմված ձևեր. ինչպես՝ ein-fach պարզ, zweifach ճիրկնապատիկ, dreifach ճեռապատիկ և այլն:

Չեխերենում և սլովակերենում ունենք -násobny ճնրա այսքան անգամք. ինչպես, trojnásobny ճնրա երեք անգամք, štvornásobny ճչորս անգամք և այլն. սլովեներենում՝ dvojen կամ dvojnati, trojen կամ trojnati, čveteren կամ čveternati, peteren կամ peternati և այլն. սերբերենում բազմապատկականը կազմվում է put ճճամբա> բառով, որ կարող է անջատ մնալ կամ կցվել թվականին. ինչպես՝ dvá-puta, triputa ճերկու անգամ, երեք անգամ և այլն:

Չբանսերենում բազմապատկականը կազմվում է լատինե-րենի համեմատ՝ -ple վերջավորութամբ (իտալ. -plo-plice): օրինակ՝ double «կրկինը», triple «երեքս», quadruple «չորեքս» (իտալ. doppio, triplo կամ triplice, quadruplo) և այլն:

Բուրյաթ լեզվով՝

- nigen dapxar «մեկ անգամ»
- xoyer » «կրկնակի»
- gurban » «եռակի, եռապատիկ»:

Կումուխ լեզվի մեջ մոտավոր թիվ ցույց տալու համար դնում են lap, lep մասնիկը. ինչպես՝ on lap «մոտ 10», beš lep «շուրջ 5»:

Բազմապատկական կազմելու համար կումուխ լեզվի մեջ դնում են lay մասնիկը, որ գործածվում է նաև դասականի հետ. ինչպես birnji lay «առաջին անգամ», altənji lay «6-րդ անգամ» (օսմաներենը ջնջել է այս ձևը և արարերենից փոխ է առել defa՝ «անգամ» բառը, ինչպես՝ ǰč defa՝ «3 անգամ», ǰcǰnji defa «երրորդ անգամ»):

Հայերենի մեջ բազմապատկականը կազմվում է -պատիկ բառի բարդութամբ (հոդակապով կամ առանց հոդակապի). ինչպես՝ միապատիկ, կրկնապատիկ, երկպատիկ, երեքպատիկ կամ եռապատիկ, չորեքպատիկ կամ քառապատիկ, ճիճգպատիկ կամ ճնգպատիկ, յոթնապատիկ կամ յոթնապատիկ, ութնապատիկ, իննապատիկ (այժմ իննապատիկ), ասոնապատիկ կամ տասնապատիկ, հիսնապատիկ, հարյուրապատիկ, հազարապատիկ և այլն (ստորագծվածները վկայված են հինգերորդ դարի առաջին կեսից, մյուսները թեև չեն վկայված ըստ ՆՀԲ, բայց դրոթյունը հարազատ է):

Ժամանակակից հայերենում էլ սովորական է այս ձևը: Գործածական է նաև նկարագրական ձևը. ինչպես՝ սա նրա երեք անգամն է. երկու այնքան և այլն, ճիշտ ինչպես ուրիշ լեզուներով. օրինակ՝ Ֆրանս. trois fois autant, պրս. se čand «երեք այնքան» և այլն: Մի քանի թվականներ ունեն նաև -ակի մասնիկով ձևը. ինչպես՝ եռակի, քառակի, երկակի:

Գրաբարում -պատիկ ձևի հետ կա նաև -կից. ինչպես՝ մեկին (իմա՝ \*մի-ա-կին, որ թեև ավանդված է, բայց հետին է), կրկին (այն է՝ \*երկ-կին, արմատը կը<բկ, որ ստացել է ե՝ բ-ի պատճառով), երեքկին, չորեքկին, հնգեկին, կամ հինգկին, վե-

ցեկին կամ վեցկին, եօթնեկին, տասնեկին, քառասնեկին, հիսնեկին, յոթանասնեկին: միջոցները չեն ավանդված պատահաբար, Կան նաև սրանց տեղ՝ վեցեկի, յոթնեկի, տասնեկի և այլն ձեվերը, որոնք հետին են:

Բարբառներում պահված կա վեցկի, բայց արդեն ինքնուրույնութունը կորցրած. աշխարհաբարը պահում է միայն կըրկի՛ճ՝ նույնպես ինքնուրույնութունը կորցրած. մյուսները բոլորը ջնջված են:

Միջին հայերենի մեջ բազմապատկականի համար ունենք 4 ձև.

1) տակ բառի բարդությամբ կազմված ձևեր. ինչպես՝ միատակ, չորստակ:

2) պատիկ բառով, որ երևի ավելի բարձր թվերին էր հատուկ. ինչպես՝ հինգ պատիկ, է պատիկ (յոթն պատիկ):

3) ընդ մեկե Վեկի Վեմ, մեկի փոխարեն՝ դարձվածով կազմված ձևեր. ինչպես՝ չորք ընդ մեկե «չորսպատիկ», հինգ ընդ մեկե «հինգ անգամը»:

4) հաճաք «այնքան» բառով կազմված ձևեր. ինչպես՝ երկու հանգաք շաքար, երկու հանգաք յիսակած մեղր. հանգաք մի այլ, հանգաք չորս ի դարպասն տուգանք առնուլ յիրմէ:

Վերջապես կա Ֆրանսերենից փոխառությամբ դուպլ (<doubl) բառը՝ «կրկին» նշանակությամբ. օրինակ՝ հիմք տուպլ «հինգ անգամ կրկին»:

Հետին շրջանի հայերենից է նաև բազմապատկականի մի ուրիշ ձև, որ կազմվում է կրկին բառի բարդությամբ. այսպես, ունենք՝ երեքկրկին, չորեքկրկին, հիմգկրկին, բոլորն էլ գործածված կամբրոնացու մոտ: Դարձյալ կան մեկնակ և երեքկնակ, որոնցից առաջինը 5-րդ դարի առաջին կեսից է, երկրորդը՝ հետին:

Բարբառներում ամենատարածված ձևն է տակ բառի բարդությունը. ինչպես՝ չուրք տակ, հէնգ՝ տակ, իրիք տակ և այլն: Մեղրու բարբառում գործածվում է նաև պատիկ բառը, որ կըրճատվել դարձել է մասնիկ՝ պատ ձևով, ինչպես՝ չուրքպատ, իրիք՝պատ, հէնգ՝պատ, վըէցպատ և այլն:

#### 4. ԿՐԿՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

Գրեթե նույն է բազմապատկականի հետ. տարբերությունը հայտնի պիտի երևա, եթե համեմատենք հետևյալ երկու արտահայտությունները.

1) երեքը մեկի եռապատիկն է. 2) փոխանակ երեք կիրժ մի անգամից կշոնելու, երեք անգամ մի մի կիրժ կշոնեց,

Առաջինի մեջ երեքը միասին մի ամբողջութունն է կազմում, երկրորդի մեջ առանձին առանձին են, թեև գումարը նույն է:

Ամեն լեզու չունի կրկնականի և բազմապատկականի համար առանձին ձև. հաճախ երկուսը միանում են.

Ռուսերենում կրկնական ձևերը կազմվում են կամ -ЖДЫ մասնիկով և կամ նկարագրական ձևով. առաջինը միայն առաջին 4 թվերի համար է. այսպես՝ однажды «մի անգամ», дважды «երկիցս», трижды «երրիցս», четырежды «չորիցս», ավելին չկա. ավելին, ինչպես նաև նախորդները՝ կազմվում են раз «անգամ» բառով. ինչպես՝ один раз «մի անգամ», два раза «երկու անգամ», десять раз «տասն անգամ»... Բայց այս վերջինը կարող է ներկայանալ նաև մի ուրիշ նրբութամբ. կարող է նախադաս լինել և այն ժամանակ նշանակում է «մոտավորապես». ինչպես՝ раза два «մոտավորապես երկու անգամ», раза пять «մոտավորապես հինգ անգամ»:

Գերմաներենում կրկնականը արտահայտվում է mal «անգամ» բառով. օրինակ՝ einmal «մի անգամ», zweimal «երկու անգամ», dreimal «երեք անգամ» և այլն:

Ֆրանսերենում՝ fois «անգամ» բառով. ինչպես՝ une fois «մի անգամ», deu fois «երկու անգամ» և այլն:

Սլովեներենում կազմվում է krat «անգամ» բառի բարդութամբ. ինչպես՝ enkrat «մի անգամ», dvakrat «երկիցս», petkrat «հնգիցս»: Նույնպես էլ սլովակերեն՝ jedenkrat «մի անգամ», dvakrat «երկիցս» և այլն:

Առանձին ձև ունի վրացերենը, որ կազմվում է լսեր բառով. ինչպես՝ ოცხეც ოქსեր «երկու անգամ», ოთხხეც ოქსլսեր «չորս անգամ» և այլն:

Բուրյաթ լեզվով կրկնական են՝

nigen udâ	կամ	dakin	մի	անգամ
xoyer	»	»	2	»
gurban	»	»	3	»
durböñ	»	»	4	»

Նոր հնդկական սինդհի լեզվով «անգամ» ցույց տվող ձևը կազմվում է ան օրինակ՝ hækūñō «մի անգամ», biñō «երկիցս», trīñō «երրիցս», saññō «հարյուր անգամ»:



Ճիւղապահինյան տազալոզ լեզուն ճանգամ» ցույց տալու համար թվականի սկզբից դնում է maka. *ինչպես՝ makaápat* «չորս անգամ», *makalimá* «հինգ անգամ», *makasangpónò* «տասն անգամ» և այլն:

Առանձին ձև ունի նաև հայերենը, որ կազմում է -իցս մասնիկով. *ինչպես՝* *երկիցս, երիցս, չորիցս, հնգիցս, վեցիցս, եօթնիցս, ութիցս, ութուտասնիցս, տասնիցս, երեսնիցս...* քանիցս:

Հաճախ կարելի է գնել նաև անգամ բառը. *ինչպես՝* *երկիցրս անգամ, երիցս անգամ, չորիցս անգամ, քանիցս անգամ* և այլն:

Միայն մի կամ մեկ բառն է, որ չի ստանում այս մասնիկը և լինում է մի անգամ-երկիցս բառի հետ կա նաև միւս-անգամ:

*Օրինակներ հին հայերենից.*

*Քանիցս անգամ թողից նմա.*

*Այս երկիցս խարեաց զիս.*

*Արդ երկիցս իսկ դարձեալ էր այսրէն.*

*Միանգամ և երկիցս.*

*Եհար զվէմն երկիցս անգամ.*

*Վասն կրկնելոյ երազոյն Փարաւոնի երկիցս անգամ.*

*Ջի ասաց ցնա երիցս.*

*Երկիր եզանգ նմա երիցս անգամ.*

*Մինչև հաւու խօսեալ իցէ երիցս ուրասցիս զիս.*

Մրկ. Մդ. 30.

Հաջորդ հատվածի մեջ տեսնվում է -իցս, -եկիմ և անգամ ձևերի փոփոխակի գործածությունը:

Տեր, քանիցս անգամ թէ մեղիցէ ինձ եղբայր իմ թողից նմա. մինչև յեւթն անգամ: Ասէ ցնա Յիսուս. Ոչ ասեմ քեզ թէ մինչև յեւթն անգամ, այլ մինչև յեւթանասնեկին եւթն. Մտթ. Ժբ. 21:

Չկան հարիւրիցս, հազարիցս ձևերը, բայց կա բիրիցս:

Ըստ գործածության այս մասնիկին նման է գալիս գրական նոր հն. -akis մասնիկը, որ կարող է դրվել բոլոր թվականների վրա. *ինչպես՝*

*τρισκα:δεκάκις*

13 անգամ

*δεκάκις και τετράκις*

14 անգամ

*διακοσάκις*

200 անգամ և այլն:

Բայց խոսակցական հունարենում այս ձևերը չեն գործածվում, և դրվում է միայն փոքր ճանգամ՝ բառը, ինչպես է նաև արդի հայերենում. մի անգամ, երկու անգամ, հարյուր անգամ և այլն. Չկան չորիցս, հնգիցս, վեցիցս և այլն ձևերը: Կարելի է, սակայն, գործածել քանիցս, քանիցս անգամ, ինչպես և սովորական ձևով քանի անգամ, քանի-քանի անգամ: Երկիցս և երիցս գործածվում են որպես քարացած ձևեր:

Ժամանակակից հայերենը ստեղծել է նաև բազմիցս ձևը, որ կազմված է նույն -իցս մասնիկով, թեև բազում բառը թվական չէ:

Այս -իցս մասնիկը հնդեվրոպական ծագում ունի. վերջածայնն ս նույնն է, ինչ որ մակբայների ս վերջավորութունը. օրինակ՝ անհնարինս, յանհուսնս և այլն, իսկ ց, որ ծագում է հնդեվր. sk ձայնից, կապվում է գերմանական ski մասնիկի հետ. հմմտ. հրգ. zwiski «երկին»:

Միջին հայերենում անհետ կորել են թե՛ իցս ձևը, և թե՛ անգամ մակբայով գործածութունը. սրանց փոխարեն եկել են ճիտ և տարպայ բառերը, որոնք հավասարապես նշանակում են ճանգամ. (վերջինը, որ Ղրիմի բարբառում էլ կա տապրա ձևով, փոխառյալ է արաբ. ٤ ڤاڤ ڤاڤ «զարկ» ձևից): Օրինակ՝ հեա մի այլ ժմի անգամ էլ», երկու ու երեք հետ, մեկ հետ, երեք չորս հետ.—տարպայ մի, առջի տարպայն, երկու կամ երեք տարպայ, հետ երեք տարպային:

Բարբառներում կան հետ=խետ, տարպայ և հեղ ձևերը. օրինակ՝ իբեք հետ, խինգ խետ, ժեք տարպա, չորս հեղ և այլն:

Ժամանակակից գրական լեզուն, ինչպես ասացինք վերը, ընդունել է միայն անգամ բառը:

### 5. ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

Հավաքական թվականը ներկայացնում է մի խումբ անձերի կամ առարկաների գումարը.

Ձանազան լեզուներ ունեն հավաքական թվականի առանձին ձևեր. այսպես, օրինակ՝ ոռուսերենում ունենք՝

двойка	երկու, երկյակ.
тройка	երեք, երեք ձի լծված կառք.
четверка	խաղաթղթի մեջ չորս նշանը.
четверня	չորս ձի լծված կառք.

пятерня	հինգ մատը միասին.
пятерка	խաղաթղթի մեջ հինգը.
десяток	մի տասնյակ, տասը հատ միասին.

Սերերենում բոլոր թվերով (բացի մեկից) կարելի է կազմել հավաքական ձև. ինչպես՝ dvōje, trōje, četvoro, pětoro, šestoro, ... stōtero և այլն:

Ռուսերենի մեջ կա նաև сам «ինքը» բառով բարդված մի ձև, որ կազմում է մի տեսակ հավաքական. ինչպես՝ сам-три «ինքն էլ հետը՝ երեք», сам-пять «ինքն էլ հետը՝ հինգ» ... նույնը նաև սլովեներենում. ինչպես՝ samopeti «չորս ուրիշի հետ» և այլն:

Նման ձևեր կան նաև գերմաներենի և դանիերենի մեջ. այսպես՝ գերմ. selbstdrei կամ selbdritt, դան. selvtredje «երկու ուրիշի հետ՝ որով ինքը լինում է երրորդը».

գերմ. selvstvier, selvviert, դան. selvjerde «երեք ուրիշի հետ, որով ինքը լինում է չորրորդը».

գերմ. selbstfünf, selbfünf, դան. selvfemte «չորս ուրիշի հետ միասին, որով ինքը լինում է հինգերորդը» և այլն.

Ֆրանսերենի մեջ էլ կա -aine վերջավորությամբ հավաքական թվական, որին համապատասխանում է իտալ. -ina. ինչպես՝

Ֆրանս. dizaine,	իտալ. decina	տասնյակ
douzaine	dozzina	տասներկու, երկոտասնյակ
		—ռուս. ДЮЖИНА
vingtaine	ventina	քսանյակ
quarantaine	quarantina	քառասնյակ
centaine	centina	հարյուրյակ:

Սակայն այս ձևերը ոչ միայն հավաքական են, այլև մերձավորական. ֆրանս. dizaine նշանակում է ոչ միայն ճիշտ տասը հոգու կամ առարկայի մի խմբակցություն, այլև «մոտավորապես 10 հոգի կամ առարկա»: Սյուպես և մյուսները:

Հնդեվրոպական լեզուն էլ ունենր հավաքական թվական, որ կազմվում էր երկու ձևով.— առաջինը i, yi մասնիկով, օրինակ սանս. dvayá-, հն. doioi, հսլ. dūvoji, լիտ. dveji երկյակ.

սանս. traya, հսլ. troji, լիտ. treji եռյակ.  
սանս. čatvarām, հսլ. četvori, լիտ. keteri քառյակ և այլն.

Երկրորդը կազմվում է -ti կամ -t մասնիկով և ներկայացնում է թվականի գոյականը, մինչդեռ մյուս սովորական ձևերը ածական են: Այսպիսի հավաքականները հնդեվրոպականում սկսում էին 5-ից և իբր գոյական՝ բնականաբար գործածվում էին հոգնակի սեռականի հետ. այսպես՝ \*penk<sup>w</sup>ti-, \*k<sup>ʷ</sup>svek<sup>ʷ</sup>s-ti-, septm-ti, newnti-, dek<sup>ʷ</sup>nti-, սանս pañkti- śaṣṭi-, saptati, açi-ti-, navati-, daçati- կամ daçat-, հն. ἑπτὰς, ἔννεας, δεκάς (5- հոլովմամբ՝ սեռ.—άδος):

Հիւլ. fimt, sétt, siaund, niund, tiund  
հւլ. pęti, šesti-,devęti, desęt կամ desęti:

Այս ձևերը իրապես նշանակում էին «հնգյակ, վեցյակ, յոթնյակ, ութնյակ, իննյակ, տասնյակ» և իբրև գոյական գործածվում էին հզ. սեռ. գոյականի հետ. ինչպես՝

հն. πεντάς ἄρθων—հւլ. pęti<sup>ch</sup>lebu «հինգ հաց»  
(իմա՝ հնգյակ՝ հացից):

հն. ἑκατοντάς βῶν—սանս. çatām gāvām «հարյուր եզ»  
(իմա՝ հարյուրյակ եզանց):

Ավելի հետո այս ձևերը իրար խառնվեցին, և, օրինակ, հւլ. հավաքականները եկան անցան սովորական թվականների տեղը. սրա համար էլ ունենք հյ. հինգ, պրս. šēš, հյ, իմն, տաւն, իսկ ռուս. ПЯТЬ, ШЕСТЬ, ДЕВЯТЬ, ДЕСЯТЬ, բոլորն էլ t-ով:

Բուրյաթ լեզվում նույնպես կա հավաքականը, ինչպես՝

xoyūlan	երկուսը միասին
gurbūlan	երեքը »
đurbūlan	չորսը »
tabulan	հինգը »

Հայերենի մեջ հավաքական ձևերը կազմվում են -եակ մասնիկով. այսպես՝ երկեակ, երեակ կամ եոեակ, քաոեակ, հնգեակ, վեցեակ, յոթնեակ, ութեակ (այժմ՝ ութնեակ), իննեակ, տասնեակ, հնգետասնեակ, քաոասնեակ, հիսնեակ, իննսնեակ, վաթսնեակ, հարյուրեակ, հազարեակ, վեցհազարեակ... ինն տասնեակ: Հստ ՆՀԲ-ի տվյալների, ոչ մեկը 5-րդ դարի առաջին կեսում գործածված չէ:

Բնականաբար, գլխավոր թվերն են, որ ունենում են իրենց հավաքականը. ըստ այսմ, եթե միավորները և տասնավորները հավաքական ունեն, նրանց միջոցները չունեն. կարելի է ասել

երկոտասնյակ, որովհետև առևտուրի մեջ ընդունված թիվ է 12-ը, բայց չկան՝ տասներեքյակ կամ երեքտասնյակ, քառասունվեցյակ, ինեսունեկեցյակ և այլ նման ձևեր:

Ուշ ժամանակի գրաբարում կան նաև երկյակ, քառյակ, վեցյակ, հիսնյակ, հիսգհարիքյակ, վեցհազարյակ, որոնք երևի նույն արժեքն ունեն նախորդների հետ և կազմված են պարզ-անվաստանիկով: Կա նաև չորքյակ ձևը, որ ցույց է տալիս չորիք չչորրորդ դասականը՝ -յակ մասնիկով:

Հետմետրոսյան շրջանի գրաբարում կա դարձյալ -երճակ վերջավորությամբ թվականի մի ձև, որի իսկական արժեքը դժվար է պարզել: Սրանք ունեն երբեմն հավաքական արժեք, երբեմն դասական են, երբեմն էլ բացարձակ թվականի դեր են կատարում: Այսպես, [օրինակ՝ իններեակ մեկնված է շինը թիվը. 2. իններորդ, հիսներեակ ճիսներորդ. 2. պենտեկոստե. 3. հոբելյան. 4. հիսուն մը], տասներեակ աստաներորդը, 2. մի տասնյակ և այլն: Բայց բոլորի մեջ ամենից կարևորն է տոմարական նշանակությունը:

Այստեղ դնում ենք -երեակ վերջավորությամբ բոլոր թվականների ցանկը.— հնգերեակ, վեցերեակ, եօթներեակ, ութերեակ, իններեակ, տասներեակ, իննևտասներեակ, երեսներեակ, քառասներեակ, յսներեակ, եօթանասներեակ, ինսներեակ:

Այս բոլորը կազմված են -եակ մասնիկով՝ հնգեր, վեցեր, եօթեր և այլն ձևերի վրայից, որոնց մասին տես վերը: Կա նաև -եր-իք ձևից՝ եօթերրեակ, ութերրեակ, օրինակ՝ փոխել յեօթերրեակէն ի նոր ութերրեակն հոռոմի (Արշ.):

Ժամանակակից հայերենում հավաքականը կազմվում է -յակ մասնիկով. երկյակ, հնգյակ, տասնյակ և այլն: Հարյուր բառն ստանում է նաև -անկ. հարյուրակ, հինգհարյուրակ և այլն:

Գավառական բարբառներում ունենք նաև չորոց կամ չորոցք, վեցկի, հինգազք և նման ձևեր, որոնք նույնպես հավաքական են:

### 6. ԿՈՏՈՐԱԿԱՅԻՆ ԹՎԱԿԱՆ.

Կոտորակային թվականը ցույց է տալիս մի ամբողջի մասերը. օրինակ՝ կես, քառորդ,  $\frac{1}{3}$ ,  $\frac{1}{6}$  և այլն:

Միայն կեսն է, որ ամեն լեզվի մեջ էլ առանձին բառով է որոշվում (օրինակ՝ ռուս. половина, գերմ. halb, ֆրանս. demi կամ moitié, թրք. yarım կամ buçuk, անգլ. half, պրս. نیم < գնդ. naēma, իտալ. mezzo, meta, արաբ. nisf):

Մյուս կոտորակները կազմվում են բացարձակներից, զանազան եղանակներով:

Սումերերենի մեջ կոտորակային ձևը կազմելու համար բացարձակի սկիզբը դնում են ի մասնիկը. ինչպես՝ *ši-eš*  $\frac{1}{3}$ , *ši-lim*  $\frac{1}{4}$ , *ši-iā*  $\frac{1}{5}$ , *ši-ās*,  $\frac{1}{6}$ , *ši-gu*  $\frac{1}{10}$  և այլն:

Արաբերենի մեջ կոտորակը կազմվում է արմատական *fuʿl* կամ *fuʿul* ձևով. ինչպես՝

Փսլթ	rub'	xums	suds	sub'
կամ				
Փսլսթ $\frac{1}{2}$	rubu' $\frac{1}{4}$ ,	xumus $\frac{1}{5}$	sudus $\frac{1}{6}$	subu' $\frac{1}{7}$
	Փսմն	tus'	'ušr	
	Փսմն $\frac{1}{8}$ ,	tusu' $\frac{1}{9}$ ,	ušur $\frac{1}{10}$	

Չենդերենում կոտորակային մասնիկն է *va*. ինչպես՝ *trišva*  $\frac{1}{4}$ , *čathrušva*  $\frac{1}{2}$ , *paŋgtašva*  $\frac{1}{5}$ ...

Պահլավերենում մասնիկն է *tak*, որից ունենք *sriš tak*  $\frac{1}{3}$ , *čatruš tak*  $\frac{1}{4}$ , *panštak*  $\frac{1}{5}$ ...

Պարսկերենում կոտորակը կազմվում է *yak* «մեկ» բառի բարդությամբ. *այսպես*, սկսած երեքից՝ *seyak*  $\frac{1}{3}$ , *čaryak*  $\frac{1}{4}$ , *penjyak*  $\frac{1}{5}$ , *dehyak*  $\frac{1}{10}$  (երկուսը չունի կոտորակային ձև):

Գերմաներենում կոտորակային թվական կազմելու համար դասականին ավելացնում են 1, որ համառոտությունն է *theil* «մաս, բաժին» բառի. *այսպես*՝ *drittel*  $\frac{1}{3}$  (այն է *dritter theil*), *viertel*  $\frac{1}{4}$ , *funftel*  $\frac{1}{5}$ , *zehntel*  $\frac{1}{10}$ , *achtel*  $\frac{1}{8}$ , *neuntel*  $\frac{1}{9}$ , *zwanzigstel*  $\frac{1}{10}$ , *tausendtel*  $\frac{1}{1000}$  և այլն. նույնը կա նաև դանիերեն լեզվում *del* ձևով. ինչպես՝ *tredjedel*  $\frac{1}{3}$ , *tusindedel*  $\frac{1}{1000}$  և այլն:

Պոլովեկ լեզվի մեջ կոտորակային թվականը կազմվում է *-ine* մասնիկով, ինչպես՝ *dve tretjini*  $\frac{2}{3}$ , *tri petine*  $\frac{3}{5}$  և այլն:

Նույնպես և սլովակերենում՝ *tretina*  $\frac{1}{3}$ , *štvrtina*  $\frac{1}{4}$ , *pätina*  $\frac{1}{6}$  և այլն:

Այն լեզուները, որոնք չունեն կոտորակային թվականի համար առանձին ձև, սովորաբար գործ են ածում դասականի ձևը. *այսպես*՝ ֆրանս. *la dixième partie*. անգլ. *the tenth part*, ռուս. *десятая часть* «տասներորդ մասը» և այլն: Այսպես և տունգուզ. *ilšene*  $\frac{1}{3}$ , *այսինքն* «երրորդ մաս»: Վրացերենում կոտորակը կազմվում է բացարձակի վրա ավելացնելով մե- նախա-մասնիկը և -եթի ետամասնիկը. ինչպես՝ սամի 3 մեսամեդի  $\frac{1}{3}$ , խուլթի 5, մեխուլթեդի  $\frac{1}{5}$  և այլն: Այս -եթ մասնիկը հին վրացե-

ընենում դասականի մասնիկն էր, որից երևում է, որ վրացերենում էլ կոտորակային թվականը ծագում է դասականից:

Թուրքերենը, քրդերենը, ինչպես և պարսկերենը, վերը հիշված ձևին զուգընթաց կոտորակային թվականը կազմում են բացարձակ թվականի բացառական հղովով. օրինակ՝ թրք. üçden bir  $\frac{1}{3}$  (երեքից մեկ), beşden iki  $\frac{2}{5}$  (հինգից երկու), պրս. du az se  $\frac{3}{6}$  (երեքից երկու), se az penj  $\frac{3}{5}$  (հինգից երեք), քրդ. yek ži si  $\frac{1}{6}$ , yek že çar  $\frac{1}{4}$  և այլն:

Հայերենում կոտորակային առանձին ձև չկա. գրաբարում և աշխարհաբարում նրա տեղ գործ էածվում դասական թվականը, ինչպես՝ փոխանակ երրորդաց սերմանն. Ա. մկ. Ժ. 29. Չափն էր տասներորդ երկից գրուած. Տասներորդն գրուի եղիցի կապիճ. Աշխ. Սա նրա մի հինգերորդն է. Տասներորդ մասը. երկու իններորդ և այլն:

Առանձին ձևեր են տառաճորդ, հարյուրորդ և քառորդ, օրինակ՝ նաշիհ՝ երկու տասանորդս առ զուարակ մի, և երկուս տասանորդս առ խոյ մի, և տասանորդս տասանորդս առ գառն մի. Թուրք. Իբ. իթ. Տոկոսիք և հարիւրորդք. Ոսկ. մ. գ. 3, որոնք, ինչպես տեսանք, հին հայերենի դասականներն են:

Հին հայերենում գործածված կա նաև հնգեակ բառը՝ կոտորակային իմաստով ( $\frac{1}{5}$ ). սրա հին և միակ վկայութունն է Նխ. Թուրք (տպ. Պոլիս 1895, էջ 139ա). Չի զգրկանս, զգլուխն և զհընգեակն հատուցեն ի տկարսն կամ ի քահանայսն:

Մենք գիտենք, որ եակ մասնիկը կազմում է հավաքական ուստի զարմանալի է բառիս այսպիսի գործածութունը և այն էլ Ս. Գրքում:

Նախ ստուգենք, թե որքան հարազատ է այս վկայութունը. առհասարակ Ծ-րդ դարի առաջին կեսում-եակ ձևով թվական չկա. «Թուրք գրքի» համապատասխան տեղում (Ն. 7) գործածված է ոչ թե հնգեակ, ինչպես է Նախադրության մեջ, այլ հիմնգորդը, որ հայերենի սովորական կոտորակային ձևն է. Նև հատուցե է ընդ յանցանցն զգլուխն, և զհինգերորդ ևս մասն նորա յաւելցէ ի նոյն: Կոտորակային իմաստով հնգեակ բառը գործածված է երկու անգամ ևս շատ ուշ ժամանակի մատենագրության մեջ. Յամենայն վաստակաց իւրոց հնգեակ տացին ի դրունս արքունի. Նոքա պարտին մեզ զգինս գլխոց իւրեանց բաց ի հնգեկէն. Թղթ. դաշ.:

Այս շատ հետին գործածութունը կասկած է ներշնչում բա-

ուիս նշանակութեան հարազատութեան վրա, հետևյալ պատճառով.

Միջին հայերենում կա կոտորակային մի ձև -ակ մասնիկով. ինչպես՝ երեքակ  $\frac{1}{3}$ , հնկակ  $\frac{1}{5}$ , տասնակ  $\frac{1}{10}$  և այլն: Ինչ ծագում ունեն այս բառերը:

Պարսկերենում, ինչպես տեսանք (էջ 313), կա կոտորակային մի ձև, որ կազմվում է yak «մեկ» բառի հարադրութեամբ. ինչպես՝ seyak  $\frac{1}{3}$ , čaryak  $\frac{1}{4}$ , panjyak  $\frac{1}{5}$  և այլն: Արդյոք հայերենի վերոհիշյալ -ակ ձևով կոտորակային թվականները հիշյալ պարսկական ձևից կազմված չէն թարգմանաբար: Եթե այո, ապա վերոհիշյալ ճնգեակ ձևը կապ չի ունեցել հյ.-եակ հավաքական մասնիկի հետ, այլ ներկայացրել է պրս. yak ձևը:

Շիրակացու խնդիրների ժողովածուի մեջ ԺԱ հարցումը պարունակում է երևոք բառը  $\frac{1}{3}$  իմաստով.—Այր մի վաճառական էանց ընդ երիս քաղաքս և բաժ արարին յառաջնուսնս և հանին զկէս և զերևոր երացն ( $\frac{1}{2} + \frac{1}{3} = \frac{5}{6}$ ). այսպես կրկնվում է երեք անգամ (Աշ. Աբրահամյան, Անան. Շիր. մատեն. 229). Նույն հեղինակը ունի նաև շոբևոք ձևը՝  $\frac{1}{4}$  նշանակութեամբ. «Գողեան մտին և գողացան զկէս և զչորևոր գանձունն» (անդ, էջ 228).

Միջին հայերենում երեք ձև կա կոտորակային թվական արտահայտելու համար.

1. Առանձին բառեր.—այսպես են կէս և շարեկ «քառորդ», որ փոխառյալ է պրս. čaryak բառից.

2.—Ակ մասնիկով կազմված ձևեր.—ինչպես՝ երեքակ  $\frac{1}{3}$ , հնկակ  $\frac{1}{5}$ , տասնակ  $\frac{1}{10}$ , որոնց մասին խոսեցինք:

3. Վերլուծական կամ նկարագրական ձևեր.—օրինակ՝ յերեք բաժնէն մեկն  $\frac{1}{3}$ , յերեք բաժնէն զերկուքն  $\frac{2}{3}$ , ի չորս բաժնէն մէկն  $\frac{1}{4}$ , ի վեց բաժնէն մեկ բաժին  $\frac{1}{9}$ , կամ առանց բաժնի բառը գործածելու՝ յերեքէն մէկն  $\frac{1}{3}$ , ի հինկն մէկ  $\frac{1}{5}$ , ի տասն մէկ  $\frac{1}{10}$ , այսինքն՝ բացառական կամ ներգոյական հոլովով.

Մեր բարբառները չունեն կոտորակային առանձին ձև և միջին հայերենի վերջին ձևը շարունակելով գործ են ածում բացառական ձևը. ինչպես՝ հինգից մեկը  $\frac{1}{5}$ , տասնից ութը  $\frac{8}{10}$ , չորսէն մեկը  $\frac{1}{4}$  և այլն:

Նոր-նախիջևանի բարբառում դասական ձևը, որ կազմվում է -ում մասնիկով, գործածվում է նաև իբր կոտորակային.



ինչպես՝ դասնում փայր ճմեկ տասներորդը. սա նարա հինգում փայն է սա նրա մի հինգերորդն է:

Մարադայի բարբառում կոտորակավոր թվականների համար առանձին մասնիկ չկա. այստեղ էլ գործածվում է բացառական հոլովը. ինչպես՝ իրիքէն մէկ ա  $\frac{1}{2}$ , չուիրսէն մէկ ա  $\frac{1}{2}$  և այլն: Հետաքրքրական է երկու օր մէ կօսօր բացատրությունը՝ փոխանակ ասելու 2 և  $\frac{1}{2}$  օր:

Աշխարհաբարում կոտորակային ձևը դասականն է միշտ:

Այստեղ հետաքրքրական է հիշել «կէս» բառի գործածությունը.— թուրքերենում այս իմաստով երկու տարրեր բառ կա. yarəm մի ամբողջի կեսն է, իսկ buçuq մի որևէ ամբողջի հետ միասին եղած կեսն է. օրինակ՝ uç buçuq  $3\frac{1}{2}$ , iki buçuq  $2\frac{1}{2}$  և այլն, բայց yarəm saat կես ժամ, yarəm ekmek կես հաց. Ֆրանսերենում էլ կա երկու բառ. demi և moitié, բայց սրանք նույն ձևով չեն գործածվում: Ազրբեջաներենը չուների այգպիսի խտրություն և վերացնելով бучук բառը, հավասարապես ասում է ярым, ինչպես՝ ики ярым «երկու և կես», үч ярым «երեք և կես»: Մինչդեռ տաճկերենում iki yarəm նշանակում է ճմեկ ամբողջի երկու կեսերը (որ լինում է դարձյալ մի ամբողջ):

Արևելյան Նվրոպայի լեզուներում կես հաշվելու մի տարօրինակ ձև կա. փոխանակ կեսը ավելացնելու ամբողջի վրա, հանում են հաջորդ ամբողջական թվից. այսպես՝ գերմաներեն halb zwei նշանակում է ոչ թե երկու և կես, այլ ճմեկ և կես (երկուսից կես պակաս.) այսպես և halb drei  $2\frac{1}{2}$  և այլն: Լեթթերենում հաջորդ թվի վրա դնում են pus «կես» բառը. ինչպես՝ pus-trescha  $2\frac{1}{2}$  բառացի՝  $1\frac{1}{2}$ , diwidesmit puspeekta  $24\frac{1}{2}$  բառացի՝  $20\frac{1}{2}$  5. Ռուսերենում полтора= $1\frac{1}{2}$  (բուն՝ երկրորդի կես), полтораста 150 (բուն՝ երկրորդ հարյուրի կեսը). այսպես են նշանակվում հատկապես ժամերը. ինչպես՝ пол կամ половина пятого  $4\frac{1}{2}$ , пол кամ половина шестого  $5\frac{1}{2}$ , половина двенадцатого  $11\frac{1}{2}$  և այլն, որոնք բառացի նշանակում են. հինգի կես, վեցի կես, տասներկուսի կես. Ռուսերենի ազդեցությամբ ժամանակակից հայերենում էլ այդ ձևը գործածվում է ժամերի համար, որոշիչ հոդով, ինչպես՝ երկուսի կեսը  $1\frac{1}{2}$ , երեքի կեսը  $2\frac{1}{2}$ , տասի կեսը  $9\frac{1}{2}$ , տասնեկուսի կեսը  $11\frac{1}{2}$  և այլն. Արևմտահայերը այսպիսի ձև չգիտեն բնավ և հաշվում են երկու և կես  $2\frac{1}{2}$ , երեք և կես  $3\frac{1}{2}$  և այլն ձևով:

7. ՄԱԿՔԱՅԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

Թվականների այն ձևերն են, որոնք իբրև մակբայ են գործածվում. այսպես, օրինակ՝

Ֆրանս. premièrement կամ en premier lieu, «առաջին հերթին, նախ», deuxième en deuxième lieu «երկրորդաբար, երկրորդ հերթին»:

Գերմ. erstens կամ erstlich, zweitens, drittens և այլն:

Անգլ. firstly կամ in the first place, secondly կամ in the second place և այլն:

Ռուս. во-первых, во-вторых, в четвертых և այլն:

Մրանք ցույց են տալիս կարգ, հերթ կամ աստիճան և, ինչպես օրինակներից երևում է, կազմվում են դասական թվականներից՝ զանազան մասնիկների հավելումով:

Գրաբարում առանձին մասնիկ չկա մակբայական թվականը կազմելու համար. գործ են ածում դասական ձևը պարզ կամ անգամ բառի հավելումով. միայն առաջին բառը կարող է ստանալ զառաջինն ձևը: Օրինակ՝

Իջաք զառաջինն գնել կերակուրս. Ծն. Խգ. 20.

Եւ զորս եդն Աստուած յեկեզեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս, ապա զօրութիւնս, Ա. կոր. Ժբ. 28:

Նախ, ... երկրորդ անգամ... Եզն.

Երրորդ անգամ՝ զի... չորրորդ անգամ՝ զի... Ոսկ. մ. ա. 6. Հեաին շրջանում գործածվել են -ակի կամ -եկի և -աբար մասնիկները, որոնք նշանակում են «այնքան կերպով, այնքան եղանակով», և մակբայական արժեք ունեն. այսպես են՝ միակի, երկակի, քառակի, հնգակի կամ հնգեկի, վեցեկի կամ վեցակի, յոթնակի, իննակի, տասնեկի, քառասնեկի, հիսնեկի. ունենք նաև երեքկնակի և չորեքկնակի (կիրն + ակի) ձևերը. հմմտ. երեքկնակի և չորեքկնակի պատեալ պաշարեալ զնոսս՝ հանեն ընդ սուր զամենեսեան (Փարպ.). միարար, վեցաբար, քառակաբար, իննաբար, սրանց հինն է՝ մեկնակի:

Աշխարհաբարում գործածվում էր արքար մասնիկով ձևը. ինչպես՝ երկրորդաբար, երրորդաբար և այլն, բայց այժմ ավելի գործածական է «հերթին» բառը դասականի հետ, կամ ուղղակի մենակ դասականը. ինչպես՝ երկրորդ կամ երկրորդ հերթին, երրորդ կամ երրորդ հերթին և այլն:

Ֆիլիպպինյան տազալոգ լեզուն ունի մի տեսակ մակբայ, որ արտահայտում է այնքան օր առաջ իմաստը: Կազմվում է կրկնական թվականի ձևի վրա ավելացնելով ka նախամասնիկը. այսպես՝

ka-makatlo	3 օր առաջ
ka-makapat	4 օր առաջ
ka-makalima	5 օր առաջ.

### 8. ՏԵՍԱԿԻԿԱՆ ԹՎԱԿԱՆ

Յույց է տալիս, թե մի բան քանի տեսակից է բաղկացած. գերմաներենում կազմվում է-*lei* մասնիկով. օրինակ՝ *einerlei* «միատեսակ» *zweiterlei* «երկու տեսակից», *dreierlei* «երեք տեսակից», *viererlei* «չորս տեսակից», *zehnerlei* «10 տեսակից», *vielerlei* «շատ տեսակից». այսպես նաև ռուս. *двойкий, тройкий* և այլն. սլովակ. *jednaký, dvojaky, trojaky* և այլն. չեխ. *dvoje* «երկու տեսակից բաղկացած», սլովեն լեզվով՝ *dvoji*, կամ *oboji, troji, čveteri, peteri, šesteri, sedmeri* և այլն, որոնք նաև բաշխական են:

Հայերենի մեջ այսպիսի ձև չկա. հարկավոր դեպքում կամ վերլուծական ձևով պիտի ասենք երկու տեսակ, երեք տեսակի և այլն, և կամ բարդությամբ՝ երկտեսակ, երկազգի և այլն:

Նույնպես են նաև ուրիշ լեզուներ. ինչպես՝ ֆրանս. *de trois sortes* 3 տեսակից, *de deux sortes* 2 տեսակից և այլն, անգլ. *of two kinds, of three kinds* և այլն.

### 9. ԲԱՂԿԱՑԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

Եթե հայերենը չի ճանաչում տեսակտկան թվականի համար առանձին ձև, գիտե սակայն բաղկացական թվականը, որ նախորդից փոքր տարբերությամբ է միայն զանազանվում:

Բաղկացական թվականը կազմվում է զրաբարում—աւոր մասնիկով. լավագույն վկայութունը գտնում ենք Մատթ. Ժգ. 8. «Եւ այլն անկաւ յերկիր բարի և տայր պտուղ՝ էր որ հարիւրաւոր, և էր որ վաթսնաւոր, և էր որ երեսնաւոր»: Իհարկե այս հատվածում հարյուրավոր, վաթսնավոր և երեսնավոր չեն ցույց տալիս մեկ հասկի ճիշտ հատերի թիվը, այլ հարյուր և մի քանի հատ ավելի, վաթսուն և մի քանի հատ ավելի, երեսուն և մի քանի հատ ավելի: Այս պարագային բաղկացական այս թվերը մոտենում են մերձավորական թվականներին, առանց, սակայն,

Նույնանալու նրանց հետ: Թարգմանիչները շատ լավ ըմբռնել են բնագրի ոգին և ըստ այնմ գրել են բաղկացական թվականը. մյուս ավետարանների համապատասխան հատվածներում չկա սակայն նույն ճշտությունը. այսպես, Մրկ. դ. 8, ճիշտ թվերով ասվում է՝ Եւ բերէր ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարևր. Իսկ Ղուկ. Ը. 8, բազմապատկական ձևով՝ Եւ բուսեալ արար պտուղ հարիւրապատիկ:

ՆՋԲ-ի մեջ բաղկացական թվականի բոլոր օրինակները հետևյալներն են.

Միավոր, երկուոր, երեսնաւոր, եօթնաւոր, յիսնավոր, վաթսնաւոր, հարիւրաւոր, հազարաւոր, ըիւրաւոր (բոլորն էլ վկայված 5-րդ դարի առաջին կեսից, բացի երկուոր բառից)։

Կարելի է այս-աւոր մասնիկի վրա ավելացնել-եակ կամ ի, որով ածականի ձևը վերածվում է՝ գոյականի. այսպես, ունենք երկուորեակ, երկուորիք, երկուորեակ, երկուորիք, որոնք նշանակում են 1. ջուխտակ. 2. ամուլաղիւ. 3. ամորձիք»։

Աշխարհաբարում (թվաբանական լեզվով) շատ սովորական են միավոր, տասնավոր, հարյուրավոր, հազարավոր, տասնհազարավոր, հարյուրհազարավոր, միլիոնավոր և այլն, որոնք ներկայացնում են թվերի որոշ խումբ. այսպես, տասնավոր են՝ 10, 20, 30, 40, 50, 60, 70, 80, 90, բայց ոչ սրանց միջոցները, որոնք տասնավորից ու միավորից բաղկացած խմբեր են. մինչդեռ հին գրաբարում, ինչպես տեսանք, տասնուոր պիտի նշանակեր տասր և մի քանի հատ ավելի։

Հաճախ զուտ ածականի պես՝ «շատ, բազմաթիվ» իմաստով են գործածվում հարյուրավոր, հազարավոր, բյուրավոր, միլիոնավոր ձևերը։

Ժամանակակից գրականում գրաբարի իմաստով (մի ամբողջ թիվ և մի քանի հատ ավելի) ունենք թվականների համար-ական ձևը. օրինակ՝ 1830-ական թվականներին (այն է՝ 1830—39 թվերին մերձավորապես) և այլն: Անշուշտ սա ուղեներենի ազդեցություն է (հմմտ. в тридцатых годах «երեսնական թվերին»)։

Բաղկացական թվականի մի տեսակն է այն, որ գտնում ենք տիրեթերեն լեզվում. այս լեզվով թվականից հետո դնելով քօ, ստացվում է «այդքան մասից բաղկացած» նշանակությունը. օրինակ՝

gčig րօ	մի մասից բաղկացած
gnis րօ	2 » »
sum ճւրօ	30 մասից բաղկացած.

Ճիշտ թիվը նշանակելու համար գրաբարում կան -եան մասնիկով մի քանի բառեր. այսպես են՝ եօթնեան, տասնեան, հարարեան, երեքհարեան, հինգհարեան, վեցհարեան:

Ահա եւ վկայություններ.

Երեքհարեան և հինգհարեան ժողովքն. Ոսկ. մ. ա. 21 (քննագրում «երեք հարարքն և հինգ հարարքն», ուրեմն 3000 կամ 5000 անդամից բաղկացած):

Վեցհարեան դարքն. Ազաթ. (այսինքն 6000 տարուց բաղկացած),

Երկուց վիմատիպ տասնեան տառ պատգամաց. Միոն. տաղ. (տախտակները պարունակում էին ճիշտ 10 պատվերան):

Արդի գրականուսմն էլ գործ ենք ածում երկլեզվյան արձանագրություն, երեքլեզվյան, չորեքլեզվյան կամ վեցլեզվյան բառարան և այլն, ճիշտ նույն թվերով:

#### 10. ՄԵՐՁԱՎՈՐԱԿԱՆ ՔՎԱԿԱՆ

Ցույց է տալիս ոչ ճիշտ, այլ մերձավոր մի թիվ. օրինակ՝ եթե ասենք «մոտավորապես տասը հոգի էին»:

Մերձավորական թվականի առանձին ձև ունի վրացերենը, որ կազմում է նույնը ոչ կամ ողբ մասնիկով. օրինակ՝ սամի «երեք», սամիոդ, սամիոդե «մոտավորապես երեք», խուրի «հինգ», խուրիոդ «մոտավորապես հինգ»:

Յակութերենում գործածվում ե ճա, ճե մասնիկը նույն իմաստով. ինչպես՝

bies-uonča	մոտավորապես հիսուն
sūŋrbečče	մոտավորապես քսան
otučča	մոտավորապես երեսուն
sūŋsčē	մոտավորապես հարյուր.

Կա նաև բաշխականի մերձավորականը. օրինակ՝ uončalə «համարյա տասնական, մոտավորապես տասը տասը հատ», sūŋrbeččli «մոտավորապես 20 ական հատ, sūŋsčeli «գրեթե հարյուրական» և այլն, կամ նաև՝ բազմապատկականի մերձավորականը, ինչպես՝ uončata «մոտ 10 անգամ» sūŋrbeččete «մոտ 20 անգամ», otuččata «մոտ 30 անգամ» և այլն:

Ուրիշ լեզուներ մերձավորական թվականի համար մասնավոր ձև չունեն և այն արտահայտում են վերլուծական ձևով՝ զանազան դարձվածներով. Օրինակ՝

լա. circa շուրջը, չորս կողմը»։ Ինչպես՝ oppida circa septuaginta ճմոտ 70 բերդ»։

ռուս. около «մոտ», почти «գրեթե», приблизительно «մոտավորապես»։

ֆրանս. environ «շուրջը», à peu près «քիչ մոտ», presque «գրեթե», approximativement «մոտավորապես»։

գերմ. etwa, ungefähr, um (շուրջ)։

Ֆրանսերենի մեջ մերձավորական թվական կազմելու համար կա նաև aine մասնիկը. բայց այս մասնիկը ունի միաժամանակ նաև հավաքական իմաստ։ Այսպես՝

douzaine երկոտասնյակ, 12 հատ միասին, կամ մոտավորապես 12 հատ.

trentaine երեսնյակ, 30 հատ միասին, կամ մոտավորապես 30 հատ.

centaine հարյուրյակ, 100 հատ միասին կամ մոտավորապես 100 հատ։

Հայերենի մեջ էլ մերձավորական թվականի առանձին ձև չկա. գործ են ածվում՝

1. Ջանազան դարձվածներ (վերլուծական ձև). Ինչպես՝ մոտավորապես, շուրջ, մոտ, գրեթե, համարյա, իբր բառերը. օրինակ՝ մոտավորապես տասը հոգի էին. շուրջ ժամը հինգին կգամ. մոտ չորս տարի կլինի. գրեթե 300 տարի է անցել. համարյա հարյուր ուռըլի է ստանում։ Իբր ութ ժամ։

2. Բացարձակ թվականի հետ դնում են նախորդ կամ հաջորդ թիվը. օրինակ՝ 2—3 օրից կգամ. 4—5 հոգի էինք. 10—20 տարի կլինի. մեր գյուղը 4—500 տուն է. բառարանը 5—6000 բառ է պարունակում. 5—6 միլիոն անգամ մեծ է։ Ինչպես նկատելի է, կրկնվող թիվը լինում է միայն միավոր կամ տասնավոր։ Երբ հարկ լինի հարյուրավորների, հազարավորների և այլնի մասին խոսել՝ բավական է միայն միավորը կամ տասնավորը կրկնել. այսպես՝ 10—20,000 և ոչ թե 10,000—20,000.

Այս ձևը գործ են ածում, օրինակ՝ թուրքերը, պարսիկները, ասորիները և այլն և կարող ենք ասել, որ ընդհանուր արևելյան է։ Ուրիշ լեզուներում երկու հավանական թվերը կարող են

միանալ նաև «կամ» շաղկապով. օրինակ՝ ոռւս. три или пять: ֆրանս. sing ou sis personnes, գերմ. zwei oder drei, անգլ. ten or twenty:

Հայերենում էլ կարելի է դնել կամ շաղկապը: Բայց այս բոլորի մեջ մերձավոր թիվը շատ ավելի ճշտվում է. այսպես, երբ ասենք «10—20 հոգի», հասկանում ենք 10-ից մինչև 20 եղած որևէ թիվ. իսկ երբ ասենք «10 կամ 20 հոգի», հասկանում ենք ճիշտ 10 կամ ճիշտ 20. Նկատելի է, որ այս պարագային կարելի է մեծ թվերի մեջ թե՛ միավորով ու տասնավորով խոսել և թե՛ հենց հարյուրավորով, հազարավորով և այլն. Այսպես՝ 500 կամ 600 (5—6 հարյուր). 10,000 կամ 20,000 (10 կամ 20,000):

3. Հավանական թվի վրա գնում են մի (մը) անորոշ հոգը. ինչպես՝ Մի հինգ հոգի կլինեինք (հինգ հոգի մը կըլլայինք). Մեր գյուղը մի հարյուր տուն կլինի (հարյուր տուն մը կա). Մի հազար հոգի կլինի:

4. Գրաբարի մեջ հավանական թիվ ցույց տալու համար գրվում է իբրև. օրինակ՝ Եւ որք կերանն՝ էին արք իբրև հինգ հազար. Մտթ. ԺԴ. 21. Եւ էին որք կերանն իբրև արք հինգ հազար. Մրկ. գ: 44. Եւ յաւելուն յաւուր յայնմիկ ոգիք իբրև երեք հազարք. Գծ. Բ 41: Ժամանակակից գրականում իբր ձևը համարվում է հնացած:

5. Մոտավոր ժամը ցույց տալու համար գրաբարում գործածվում է պատմական հոլով. ինչպես՝ Եւ զինն ժաման գոչեաց. Մաթ. Իե. 46. Կարելի է գործածել նաև իբրև ձևը. ինչպես. Եւ էր իբրև վեցերորդ ժամ. Ղկ. Իգ. 44. Աշխարհաբարում գործ է ածվում մոտ, գրեթե, կողմերը և այլն. Գրեթե հինգին. Մոտավորապես երեքին, հինգի կողմերը և այլն. Ղրիմի և Նոր-Նախիջևանի բարբառում այս դեպքում թվականը գրվում է հոգնակի. ինչպես՝ Հինգերու կուգամ: Վեցերու արի (մոտ ժամը վեցին արի): Պոլսի ուսմիկ լեզվով հին ժամանակ գործ էր ածված ջրերը. ինչպես՝ Հինգին ջրերը (մոտ հինգին): Այո ձևը առաջանում է թրք. sularənda հոմանիշից, հետևյալ ձևով. պրս. sū նշանակում է «կողմ». որով sularənda դառնում է «կողմերը» (այն է մոտերը). բայց թուրքերը սխալմամբ բառը կարծել են թրք. su «ջուր» բառից և գրում են sularənda որով և թարգմանաբար առաջացել է հյ. ջրերը:

Կան լեզուներ, որոնք օգտագործելով այն հանգամանքը, որ թվականը կարող է գոյականից առաջ կամ ետ դրվել, մի դեպ-

քում դրել են ճիշտ հասկացողություն, մյուս դեպքում մոտավոր նշանակություն: Այսպես՝ ոռու. և պրս. թվականը առաջ դրվելով հասկացվում է ճիշտ թիվ, վերջը դրվելով՝ մոտավոր թիվ. օրինակ՝ ոռու. два года «2 տարի», три года «3 տարի», բայց тогда два «մոտ երկու տարի», часа три «մոտ երեք ժամ»:

Պրս. du sai «երկու տարի», salī du «մոտ երկու տարի»:

Հնդհակառակը, ջավայերենով, ուր թվականը սովորաբար առաջ է դրվում գոյականից, վերջը դրվելով ցույց է տալիս բացարձակ ճիշտ թիվ. ինչպես՝

rong rupiyah      2 ոռուփի  
rupiyah loro      ճիշտ 2 ոռուփի:

ՄԱՆ.— Նոր-Ջուզայի բարբառում 4—5 մերձավորական ձևը կազմելու ժամանակ չորս բառի կրճատվելով ստացվում է չովսից:

### 11. ԱՆՁՆԵՐԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

Ձանազան լեզուներում անձներականը կազմվում է «բոլոր, ամեն» բառով. օրինակ՝ ոռու. все три, ֆրանս. tous les trois, գերմ. alle drei, անգլ. all the three, պրս. hame se, իտալ. tutti e tre, ադր. həp yəy (կամ yəy də երեքն էլ):

Վրացերենում կա առանձին ձև անձներականի համար և կազմվում է 30 վե վերջավորությամբ. օրինակ՝ ოცოვე ორქვე կամ ოცდოვე ორქვე «բոլոր երկուսը, երկուսն էլ», სამოვე სამქვე «բոլոր երեքն էլ» և այլն:

Ռուսերենում էլ пятеро, шестеро, семеро «5 հոգով, 6 հոգով, 7 հոգով» և այլն:

Անձներականի ձև ունի հնդկական սանտալի լեզուն, որ բացարձակների մեջ դնում է 0 միջամասնիկը, կրկնելով միջի ձայնավորը. ինչպես՝

bar 2, banar      «երկուքեան»  
pā 3, pānā      «երեքեան»  
pon 4, ponon      «չորեքեան»:

Անձներական թվական ունի նաև նոր հնդկական սինդհի լեզուն, որ այդ ձևերը կազմում է -i մասնիկով. ինչպես՝

bhāi, bhēi      երկուսն էլ  
trēi,              երեքն էլ և այլն:



Շոռ լեզվում անձներականը կազմվում է ala, ele, la, le մասնիկով. ինչպես՝ iygeie երկուսով, uzele երեքով:

Սա անշուշտ գործիականի ձևն է:

Հին հայերենն էլ ունի անձներական թվականի առանձին ձև, որ կազմվում է բացարձակի վրա ավելացնելով -եքին կամ -եքեան. այսպես՝

երկոքեան, երկոքին	վեցեքեան, վեցեքին
երեքեան, երեքին	եօթնեքեան, եօթնեքին
	եւթանեքեան, եւթանեքին
չորեքեան, չորեքին	ութեքեան, ութեքին
	իննեքեան, իննեքին
հնգեքեան, հնգեքին	տասնեքեան, տասնեքին.

Սրանց համեմատ՝ մետառանքեան, երկոտասանեքեան կամ երկոտասանեքին, քսանեքեան կամ քսանեքին, քառասանեքեան կամ քառասանեքին և այլն:

Այսպես է նաև ամենեքեան կամ ամենեքին և բոլորեքեան կամ բոլորեքին. հմմտ. Եզն. Ի մարմնի ամենեքեան էին, այլ ի գործս մարմնոյ և հոգւոյ ոչ բոլորեքեան:

Այս բառերը հոլովվում են հետևյալ ձևով.

Ո. երկոքեան	երկոքին
Հ. երկոսեան	երկոսին
Ս. երկոցուն	երկոցունց
Գ. երկոքումբք:	

Այսպես նաև՝ ամենեսեան, երեցունց, չորեցունց, չորեսին, տասնեցունց, ամենեքումբք և այլն. բոլորն էլ անեզական, մի-այն հոգնակի թվով՝ ըստ իմաստի:

Անձներական թվականները ոմանց կողմից համեմատվում են պրս. 𐭪 gān ձևի հետ. ինչպես՝

dugān	երկոքեան
segān	երեքեան
dehgān	տասնեքեան:

Հայ և պարսիկ բառերի նմանութունը շատ խաբուսիկ է մանավանդ, եթե 𐭪 կարդանք kān. տարբերութունը անմիջապես երևան կգա, երբ նկատենք, որ երկոքեան և այլն, հոլովվելու ժամանակ դառնում է երկոսեան, երկոցուն և այլն, որից հասկացվում է, որ քեան վերջավորության մեջ ք հոգնակիի նշանն

է և բնավ կապ չունի պրս. ց=k-ի հետ: Պրս. մասնիկը առաջանում է պհլ. ak+an հոգնակերտից, ուստի նմանութունը պատահական է դառնում:

Ինչպես միջին հայերենում, նույնպես և բարբառներում, բացի Ղարաբաղի և Մեղրու բարբառներից (տես ստորև), իսպառ ջնջված է անձներականի այս ձևը: Դրա համար էլ ժամանակակից հայերենը չի ճանաչում անձներական թվական և հարկավոր դեպքում ասում է *եբեքն էլ*, *չորսն էլ*, *հինգն էլ*, *բութրն էլ* և այլն: Միջին հյ. երկուքն այլ:

Արևմտյան գրականում, ինչպես և բարբառներում, շաղկապը դառնալով ալ, ստացվում է երկուքն ալ, երեքն ալ, չորսն ալ, ամենքն ալ...: Բարբառներում շաղկապի վերջածայնը կործաավելով ստացվում է նաև երկուքն ա, երեքն ա, և այլն. Այսպես՝ Պլ. էրգուքն ա, Սչ. էրգուսն ա, Պլ. Սչ. իրեքն ա, չորսն ա, դասն ա և այլն, որոնք նշանակում են *եբկուսն էլ*, *երեքն էլ* և այլն.

Մարաղայի բարբառում էլ անձներական թվականների համար առանձին ձև չկա. գործ են ածում բացարձակները էլ շաղկապով. ինչպես՝ *երկուսն էլ*, *իրիյն էլ*, *ութթան էլ* կամ *ութն էլ*, *իննտն էլ* կամ *ինն էլ*, *ասասն էլ* կամ *տասն էլ* և այլն:

Բարբառներից միայն Ղարաբաղի ու Մեղրու բարբառներն են, որ ամենայն հավատարմութամբ պահում են զբարբառի անձներական թվականը. այսպես՝ Ղբբ. *ըրկօքան*, *ըրէքան*, *իրէքան*, *չիրէքան*, *չուրսէքան*, *հընգէքան*, *վցէքան*, *ուխտէքան*, *ութէքան*, *ըննէքան*, *տըսսէքան* և այլն: Սրանք հղովվում են հետևյալ ձևով.

Սեռ. Տր. Հայց.— *ըրկուքանին*, *ըրկուքանուց*, *ըրբքանին*, *ըրբքանուց*, *չըրսքանուց*, *չըրբքանուց*, *հընգէքանին*, *հընգէքանուց*, *հընգըքանուց*, *վըցէքանին*, *վըցէքանուց*, *վցըքանունց* և այլն:

Բաց.— *բազմաթիվ ճոխ ձևերով*. *ըրկուքանուցան*, *ըրկուքանուցանա*, *ըրկուքունունան*, *ըրկուքունունանա*, *ըրկուքունունանանցան*, *ըրկուքունունանցանա*, *ըրկուքունունցան*, *ըրկուքունունցանա* (*երկուսից էլ*), *ըրբքանուցան*, *ըրբքանուցանա*, *ըրբքանունան*, *ըրբքանունանա*, *ըրբքանունանանցան*, *ըրբքանունանցանա*, *ըրբքունունցան*, *ըրբքունունցանա* (*երեքիցն էլ*) և այլն.

Գործ.— *ըրկուքանուցավ*, *ըրկուքանուցանավ*, *ըրկուքունունավ*, *ըրկուքունունանավ*, *ըրկուքունունանցավ*, *ըրկուքունունանցանավ*, *ըրկուքունունանցանավ*, *ըրկուքունունանցանավ*, *ըրկուքունունանցանավ*

նունանցանավ, ըրկուքունունցավ, ըրկուքունունցանավ (երկուսով էլ) և այլն:

«Յրկուքեան» ասելու տեղ կարելի է նաև ասել շուխեքյան:

Ներգ.— ըրկուքանուցում, ըրկուքանուցանում, ըրկուքանունում, ըրկուքունանում, ըրկուքունունանցում, ըրկուքունունանցում, ըրկուքունունանցում (երկուսի մեջն էլ) և այլն: Անձներականները բնականորեն հոգնակի չունեն:

Մեղրու բարբառում անձներականները պահված են հետևյալ ձևերով. ըրկուքէն, իրիքէն կամ իբիքէն, չըքէքէն, չըքէքէն կամ չրէքէն, հինքէքէն, վըցցէքէն, ըխտէքէն, ըթթէքէն, իննէքէն, աըստէքէն և այլն: Հորովումը նույնպիսի բազմազանություն ունի, ինչպես զրբ. բարբառում. օրինակ՝ ըրկուքէն, սեռ. ըրկուցուն կամ ըրկուքէնու, բաց. ըրկուքէնէ կամ ըրկուցուն էնից, գործ. ըրկուքէնավ կամ ըրկուցուն էնավ, ներգ. ըրկուքէնում կամ ըրկուցուն էնամ և այլն:

### 12. ՉԱՓԱԿԱՆ ԹՎԱԿԱՆ

Ձանազան լեզուների մեջ կան թվականի այնպիսի ձևեր, որոնք ցույց են տալիս որոշ չափ կամ արժեք. օրինակ՝ ուս-пятак, հինգ կոպեկանոցն է, пятерка, шестерка, семерка ցույց են տալիս խաղաթղթի մեջ հնգանոցը, վեցանոցը, եոթանոցը և այլն:

Թուրքերենն ունի երկու տեսակ չափական, որոնք կազմվում են լօզ, լօ կամ lik, li մասնիկներով:

Դրամական արժեք կամ մարդու տարիք ցույց տալու համար գործածում են lik, լօզ մասնիկը, ինչպես՝ ikilik երկուսանոց, onlօզ տասանոց, oqqalօզ մի օխա քառ ունեցող, seksen lik 80 տարեկան:

Իսկ իբրև նիշ ունեցող գործածվում է li, լօ, օրինակ՝ bešli հինգանոց (խաղաթղթում), on numerolօ ev 10 համարով տուն:

